Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

490

808
9-27

8

9

2011

ՏԱՐԵՐՔ

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ

2003

808
Գ-27

ՏԱՐԵՐՔ

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ

ԱՐՈՒԵՍՏԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. Կ. ԳԱՆԹԱՐԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷ

1001
1313

ՎԵՆԵՏԻԿ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1875

94

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հռետորական արուեստին կամ Հարտասանութեան կարևոր ուսումը աւանդող այլ և այլ ընտիր երկասիրութիւնք երևցած են արդէն աղգիս մէջ, և արժանաւոր ընդունելութեամբ մեծարուած։ — Այս նոր հրատարակութեամբս մեր դիտմունքն ու ջանքը եղած է՝ անոնց ամենուն կատարելութեանց հետևելով, պակասին ալ՝ եթէ ունէին, լրացընել և դպրոցաց կիրառութեան համար նոր և ընդարձակ դասագիրք մը ընծայել։

Այս նպատակին հասնելու վախճանաւ՝ եւրոպական, և մանաւանդ գաղղիացի դասագրանաց համար՝ իրենց ուսումնական ժողովոց քննութեամբ վաւերացած այլև այլ գրուած-

ներ ունէինք առջևնիս. ու մեր ազգայնոց աւելի հաճոյական և օգտակար ընելու համար՝ բաւական չսեպեցինք հին և նոր օտար մատենագիրներէ առնուած օրինակաց ճոխութիւնը, այլ ազգային հեղինակներէ ալ շատ օրինակներ քաղեցինք ու դրինք։ Հարկ չէ ըսելը թէ անոնց ամենուն սերտողութեամբը աշակերտաց յիշողութիւնը ծանրաբեռնելն աւելորդ է. և թէ ուսուցչին վոյթը պիտի ըլլայ՝ իր բացատրութեամբը անոնց մէջ եղած ոճոյ և զուրցուածքի գեղեցկութիւնը տպաւորել տղոց թարմ մտքին մէջ։

ՏԱՐԵՐՔ
ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Սահման և բաժանումն հռետորական արուեստին.

Եթէ մէկն իր նմանեաց քանի մը անտարբեր խմասաններ վոխադարձ հաղորդելու համար միայն խօսքը պիտի գործածէ, անոր իր ազգային քերականութիւնն կազմող կանոնաց հետևիլը բաւական է։ Բայց ով որ ստէպ ուրիշ մարդկանց հետ յարաբերութեան մէջ պիտի գտնուի և անոնց կարծեացը վրայ պիտի աղդէ. ով որ ատեաններու, հասարակաց ժողովոց և տաճարաց մէջ ձայն բարձրացնելու սահմանուած է, կամ իր գարուն կրթութեան կամ անոր զուարճութեանցը ծառայող գրուածներ պիտի շարադրէ, կամ վերջապէս կը ցանկայ իր չորս կողմն եղող անձանց հաճոյանալ, և իր ամենապարզ խօսակցութեանցը համոզիչ զօրութիւն մը և զանոնք սիրցընել տուող շնորհք մը տալ, անոր համար լեզուի ուղղախօսութիւնն բաւական չէ. և քերականութենէն դուրս ուրիշ առաջնորդ մը պէտք է իրեն։ Հոն կը սկսի հռետորականին կամ լաւ խօսելուն արուեստը։

Ինչ բան որ մարդիկ արուեստի վերածեր են, անոր առաջին սկիզբը բնազդմամբ եղած է։ Այսպէս ճարտասանութիւնն արդէն իսկ կարյառաջ.բան զհռետորական արուեստն։ Երբոր լեզուն շատ մը իրարու հետ կապուած խմաստներ բացատրելու չափ ձեւացաւ, դըստնուեցան մարդիկ որ ուրիշներէն աւելի կարող եղան այդ գործիքը գործածել, և կենդանի, ճարտարագիծ և բարեյարմար բացատրութիւններ գտնել. «Աստիկ կիրք մը, կ'ըսէ Վոլդէռ, տագնապող վտանգ մը, յանկարծ զերեւակայութիւն կը զարթուցանեն. այսպէս նախնի ամիրապետաց հրամանատար մը՝ Տաճկաց փախուստն տեսնելով պոռաց. Ո՞ւր կը փախչիք. հոն չէն թշնամիք։ Ոտղի, Մեհեմմէտի ժամանակակից տաճիկ հրամանատար մը, կը տեսնէ Արաբացիներն որ սարսափած կը կանչէն թէ Դեբար՝ իրենց զօրավարն սպաննուեցաւ. «Ի՞նչ փոյթ՝ թէ Դեբար մեռաւ, կ'ըսէ, կենդանի է Աստուած և առ ձեզ կը նայի, առաջ քալեցէք»։

Յիշեալ հեղինակն վրայ կը բերէ թէ ուրեմն ճարտարախօսութեան աղբիւրը բնութիւնն է, բայց սոսկ բնութիւնն՝ բուռն յուզմանց միջոցով միայն պերճախօս է։ Բնական բերմամբ պերճախօս մարդկանցմէ ետև եկան ճարտարախօսք, որք աշխատութեամբ եղան պերճախօսք, իսկ ճարտարախօսներէն ետև եկան մարդիկ, որոնք հաւաքեցին ու կարգի դրին այն զանազան ոճերն ու կերպերն՝ որոնցմով մարդիկ զպերճախօսութիւն ստացեր էին։ Այս վերջիններն՝ հռետոր անուամբ զանազանուեցան, և իրենց ստեղծած արուեստն կոչուեցաւ Արուեստ հռետորական։

Սովորաբար ճարտասանական արուեստն երեք այլ և այլ գործնական մասանց կը վերածուի. երբ մարդիկ քաղաքական ժողովդուսմարելով, իրենց երկրին ընդհանուր շահուց վրայ կը հակաճառին, իրենց ճառախօսութիւնքն բաղխոհական տեսակին կը պատկանին. երբ այլ և

այլ շահերով իրարմէ բաժանեալ անձինք՝ զիրենք դատելու համար սահմանեալ մարդկանց առջև իրենց անձնական իրաւունքը կը պաշտպանեն, իրենց ճառախօսութիւնքն պէնական տեսակին մէջ կ'երթան. իսկ երբորդ տեսակի մը մէջ, որ կոչդեան կ'ըսուի, կը բովանդակին ամենայն ճառախօսութիւնք, որոնց վրայ որոշըզութիւն կամ դատաստան մը չըլլար. ինչպէս են ներբողք, ճառք շնորհակալութեան և ակադեմական բանախօսութիւնք և այլն։ Հռետորական արուեստին այս երեք մասերն որչափ ալ մտնաւորապէս մարդկանց իրարու մէջ ունեցած հասարակաց յարաբերութեանց կը ծառայեն, սակայն կրնան նաև առանձնական յարաբերութեանց ալ ծառայել։ Կրնայ մէկը լաւ խօսիլ, առանց խօսքը ժողովրդական ակումբի մը, ատեանի մը կամ ճեմարանի մը ուղղելու. կրնայ մէկը պերճախօս ըլլալ, ինչպէս ատենախօսութեան մը մէջ, նոյնպէս նաև պատմական գրութեան մը, փիլիսոփայական ճառի մը, նամակի մը և նոյն իսկ խօսակցութեան մը մէջ։ «Ոչ թէ, կ'ըսէ Կիկերոն, հրապարակին, ատենակալաց ժողովարանին և ատենական բեմին սեփհական բան մըն է ատիկայ. այլ որ և իցէ մարդու համար դեղեցիկ և մաքուր ոճով խօսակցութիւնն ամենէն աւելի ախորժական և վայելուչ բանն է»։ Ուրեմն հռետորական արուեստն միայն հասարակաց առջև խօսելու արուեստ մը չէ. լաւ խօսելու արուեստն է, որ և իցէ պարագայի մէջ ալ որ ըլլայ։

Ըստ սահմանին Արիստոտելի, լաւ խօսիլը՝ ինչպիսի և իցէ նիւթոյ մէջ՝ հաւանեցընելու ամենայն կարելի միջոցներն գտնելն է։ Հին այլաբանութիւն մը ճարտասանութիւնը Հերակլէսի կը նմանցընէ, որ ոսկի թելով մը զմարդիկ կ'առնէ կը տանի։ Եւ իրաւցընէ ճարտասանութիւնն այնպիսի անդիմադարձ զօրութիւն մըն է, որ հոգիներն կը յափշտակէ, զանոնք զմայլեցընելով՝ ուզածին պէս կը կառավարէ։

Լաւ խօսիլ կարենալու համար՝ երեք գործողութիւնք հարկաւոր են. նիւթոյ մը բոլոր պարունակածը մէկ երագ տեսութեամբ մը ըմբռնել, անոր զանազան մասունքն ոճով մը կարգադրել, վերջը զանոնք բացատրել և անոնց զարդ տուող բառեր գտնել: Ասկից յառաջ կու գայ հռետորական արուեստին երեք մասով բաժանումը. Գիւտ, Դասաւորութիւն և Ճոխաբանութիւն: Այս երեք մասանցմէ վերջը սովորաբար կու գայ ուրիշ չորրորդ մ'ալ, Արտասանութիւնն, որ անոնց երբեմն լրումն է: Այս վերջին մասը, ձառ մը աղէկ արտադրել կը սորվեցընէ, արուեստին արտաքին կերպարանքն է. և ինչպէս նախնիք կ'ըսէին, մարմնոյ Ճարտասանութիւնն է: Ինչ որ է դերասանին տաղանդը՝ թատերական բանաստեղծին համար, նոյնն է արտասանութիւնն ձառին համար:

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Գիւտի.

Խօսելէն կամ գրելէն առաջ, պէտք է լաւ մը խօսուելիք նիւթն ըմբռնել, այսինքն անոր ամենայն մասունքն քննել, և ինչ աղբիւրներ որ կրնայ ընծայել՝ զանոնք բոլորն ալ մտքին առջևն ունենալ. գիւտն յայսմ կը կայանայ:

Կիկերոն զՃարտասանն կամ զմատենագիրն կը նմանցընէ որսորդի մը՝ որ պէտք է նախ լաւ մը ճանչնայ այն դաշտը, ուր որ պիտի պտըտի:

« Երբոր մտքով բովանդակ ասպարէզն կ'ըմբռնես, և անոր տարածութիւնն ու սահմաններն կը չափես, այն ատեն աչքէդ բան մը չփախչիր, և ինչ որ նիւթոյն խորը

ծածկուած կար, ինքնիրեն առջևդ կը ներկայանայ »: (Յաղագս Ճարտարախօսի:)

Հռովմայեցի Ճարտարախօսն, որ այնպէս լաւ գիտէր սահմանել արուեստին կանոններն, յորում ինքն իսկ կը գերազանցէր, կ'աւելցընէ թէ գիւտի համար երեք բան հարկաւոր է, այս է հանճար, մտադրութիւն և կանոնաւոր ոճ:

Հանճարն, մէկ տեսութեամբ մը նիւթոյ մը խորն թափանցելու և անոր մէջ պարունակուած բարձրագոյն և ներքագոյն մասերն դուրս հանելու տեսակ մը դուշակողութիւն ու բնական կարողութիւն է, որ քիչերու տրուած է: Անոնք որ այդպիսի առանձնաշնորհութիւն մը ընդունած են, պէտք չունին հռետորաց դպրոցն երթալու. բայց սակայն՝ ինչպէս որ շատ անդամ զուրցուած է, ամենէն աւելի յաջողակ հանճարն ալ պէտք չէ աշխատութիւնն արհամարհէ: Մտադրութիւնն՝ թմբրութենէ ազատ կը պահէ զայն, իսկ կանոնաւոր ոճն չթողուր որ ուղիղ ճամբէն խոտորի:

Մտադրութիւնն՝ նիւթոյ մը վրայ մեր մտաց բոլոր զօրութիւնն բանեցնելու կարողութիւնն է. մարդուս կամքն յայսմ մասին շատ մեծ ազդեցութիւն ունի: Մատենագրական աշխատութեանց, ինչպէս ուրիշ ամէն բանի մէջ, պէտք է մէկն փափաքի ինչ որ կրնայ, բայց ոչ անկէց աւելին, տպա թէ ոչ կրնայ անկարողութեան և վհատութեան մէջ իյնալ: Կուինտիլիանոս կը պատմէ թէ իր աշակերտաց մէկուն նիւթ մը տուեր էր շարադրութեան: Պատանին, երկայն ժամեր մտածելէ ետև, իր տախտակաց վրայ դեռ բան մը չէր գրած: Վարժապետը քովը կ'երթայ և կը տեսնէ որ շուարած և աչքերն սևեռած նոյն տեղն մնացեր է, և ձեռքերը գլուխը զարնելով կ'խմացընէ որ բացարձակապէս չկրնար այդպիսի նիւթոյ մը վրայ գրել: « Զըլլայ թէ, կ'ըսէ Կուինտիլիանոս, կրցածէդ աւելի լաւագոյն բան մը գրել ուզած ըլլաս »: Այս խօսքս աշակերտին համար լուսոյ

փայլ մը կ'ըլլայ. կը սկսի աշխատութեան, կ'ամփոփէ այն խմաստներն որ առաջ մոքէն կը փախչէին, կը զարմանայ որ երբեն ցամաք երևցած նիւթ մը յանկարծ բեղնաւոր եղաւ, և քիչ վերջը՝ 'ի վարձ իւր երկասիրութեանն, Կոնստիլիանոսի գովութեան մրցանակն կ'ընդունի:

Կանոնաւոր ոճն կամ արուեստն կը սորվեցընէ մեղի թէ նիւթ մը ամբողջ մոքերնուս մէջ բովանդակելու և անոր կարևոր մասերէն և ոչ մէկը դուրս ձգելու համար ինչ կերպ պէտք է բռնել: «Ճարտասանութեան նպատակն է, կ'ըսէ Ֆենելոն, նկարագրել, սիրտ շարժել, և ապացուցանել. ամենայն փայլուն խմաստք որ այս երեք պայմաններէն մէկը չունին, մոռաց խաղ են միայն»: Ասկից բնականապէս կը հետևի որ նիւթ մը հետազօտելու և անոր մէջի պարունակածն ընդլայնելու երեք կերպ կայ. առաջինն է առարկայներն նկարագրել, և առ երևակայութիւն խօսիլ. երկրորդն՝ կիրքերն յուզել, և առ սիրտն խօսիլ. երրորդն՝ բան մը ապացուցանել, և մոռաց հետ խօսիլ, որ մարդկային բնութեան ազնուականագոյն մասն է:

Ա.

Յաղագս իրաց.

Ընդլայնման առաջին կերպն է՝ նիւթոյ մը պարփակած իսկական բաներն, այսինքն զայն կազմող մասունքն և անոր վերաբերեալ կարևոր կամ երկրորդական իրերն փնտռել:

Ճարտասանն իրաց մէջ ձեռնարկութեան միջոցներ միայն կը ջանայ գտնել, և զանոնք առաջ բերելու կերպին մէջ մասնաւորապէս իր խնդրոյն շահը կը դիտէ:

Իսկ պատմաբանն ու խմաստասէրն իրերն ինչպէս որ են՝ այնպէս կը նկատեն, և զանոնք հաւատարմութեամբ պատմել կը ջանան:

Յաղագս Սահմանի.

Յառաջ քան զամենայն պէտք է ինչ բանի վրայ որ խօսիլ կ'ուզենք՝ անոր իսկութիւնն լաւ մը որոշել. պէտք է սահմանել զայն, այսինքն անոր յատուկ հանգամանքն համառօտ և ճշգրիտ կերպով մը բացատրել: Այսպէս Վոլդէռ հանճարաբանութեան վրայ խօսել ուզելով, նախ և առաջ կը հարցընէ ինքն իրեն. Ի՞նչ է հանճարաբանութիւն, և շատ հանճարեղ կերպով այդ հարցման կը պատասխանէ.

«Զոր կոչեմքն հանճարաբանութիւն՝ է ուրեք նոր իմն բաղդատութիւն և ուրեք նրբահայեաց ակնարկութիւն. ասա՝ անսովոր կիրառութիւն բառի, զոր այլով մոռք առաջի արարեալ, թողուցեալ այլազգ իմանալ զայն, անդ՝ ընդ մէջ երկուց անսովոր մտածութեանց անօսր իմն կցորդութիւն. նորանշան իմն փոխաբերութիւն, և հետազօտութիւն հանգամանաց, որ թէպէտ արդեամբք գտանիցին յիմիք, բայց ոչ անդէն 'ի սկզբանն յանդիման երևին. արուեստ իմն զոգելոյ զերկու ինչ զատեալս յիրերաց, և զատանելոյ զորս ընդ միմեանս զոգելթուիցին, և կամ զնոսին դէմ ընդ դէմ հակառակս իրերաց կացուցանելոյ, արուեստ յայտնելոյ զմիտն կիսամտանեայ, այլոց թողեալ դուշակել զայն: Վերջապէս ճառէի առ քեզ զհամօրէն զանազան տեսակաց 'ի հանդէս ածելոյ զհանճար խօսից նրբութեան, թէ դոյրյիս առաւէն քան զայն»:

Լաֆոնդէն կծու և ճշգրիտ ոճով մը արքունեաց նկարագրական սահմանն ասանկ կուտայ.

Սահմանեմ զարքունիս իբրև զաշխարհ՝ ուր մարդիկ
Թախծագինք, խընդալիցք, կաղմք յամենայն, անխրտիրք,
Կեան ըստ կամս իշխանին, կամ եթէ կեալ չըմարթի,
Գէթ տալ ջանան ցոյցս այնպիսի,
Խուժան գիւրափոփոխ, տեառն ընդ ձեռամբ աղդ կապկի:

Ըստ այսմ Սարգիս վարդապետ ուղեղով ցուցընել թէ կռապաշտութիւնն ու արծաթասիրութիւնն իրարմէ տարբերութիւն չունին, նախ երկուքն ալ զատ զատ կը սահմանէ, որպէս զի եաքէն իր խօսքին հաստատութիւնն յառաջ բերէ.

« Աղէ տեսցուք եթէ զինչ էն կուռքն, եթէ ոչ յոսկւոյ և յարծաթոյ ուրուական պատկերս կանգնել. և զինչ այլ է պաշտօն նոցա, եթէ ոչ սիրելն զնոսա և երկիր պագանելն իբրև աստուծոյ: Եւ ոչ միայն յոսկւոյ և յարծաթոյ գոլ զկուռն՝ի պայծառագոյն նիւթոցն և՝ի զարմանալեաց ոգեմարդկանն, այլ և յայլ ինչ վատթարագոյն նիւթոց, պղնձոյ ասեմ և երկաթոյ, ՝ի քարանց և՝ի փայտից, ուստի զմեռելոցի պատկերսն քանդակեալ՝ պաշտօն նոցա մատուցանէին: Արդ ո՞չ ապաքէն նկարագիրք ոսկիք էին, որոց նոքա զերկրպագութիւն մատուցանէին: Զի՞նչ այլ ինչ է ոսկին՝ որ՝ի մէնջ պատուի և պահի, քան զպատկեր թագաւորական՝ որում մեքն կամք՝ի ծառայութեան, և զհեմք՝ ոչ զուստերս և զդստերս, այլ զհոգի և զմարմին: Զմին՝ի հոգս և՝ի ծուփս մաշելով, իսկ զմիւսն՝ի չարաչար ծառայութիւնս մեռուցանելով: Հոգովքն վարակեալք անհանգիստ՝ի տուէ և՝ի գիշերի, ամենեցունց ատելի գոլով և թշնամի. և քան զդաղան մի չար և անընտել ագահութեամբն երևի: Տեսէ՞ր զագահութեանն կռապաշտութիւն, քանզի որ ունին զնա՝ զԱստուած ընդ մամոնային փոխանակեն, որպէս յայնժամ ապերախտն Իսրայէլընդ որթուն յանապատին »:

Կիկերոն այսպէս կը սահմանէ մեծատուն ու աղքատը.« Ո՞վ իցէ մեծատուն, կամ զո՞ արժան իցէ կոչել: Ինձ մեծատուն թուի, այն որումէ ճոխութիւն բաւական յազնուական վայելս կենաց, որ ոչ ինչ աւելի խնդրէ, ոչ իմիք փափաքէ, և ոչ ըղձանայ իմիք: Միտքդ զքեզ մեծատուն համարեսցին, և ոչ բանք մարդկան, և ոչ ստացուածքդ. մի ինչքեզ պակաս գրեսցի, և մի առաւելագունիցն գնիցես: Եթէ իցեն քեզ ինչք բաւական և լցցին պէտքդ, շատ է և մեծատուն ես. ապա թէ առ անյադ ցանկութեան ընչից՝ ոչ ինչ՝ի շահից խոտան համարիս, և հանապազօր նենգես, պատրես, պահանջես, դաշնս կռես, կորզես և յափշտակես, եթէ զընկերդ մերկես, թէ զդանձն կողոպտես, թէ բարեկամացդ կտակի ակնկալեալ մնաս, այդ ամենայն ոչ մեծատան՝ այլ կարօտելոյ նշանակք են: Զսիրտ մարդոյ մեծատուն անուանեմք, և ոչ զարկեղս նորա. զի թէ և արկեղք լցեալ իցեն քո, այլ յորժամ զքեզ դատարկ տեսանեմ, ոչ ևս մեծատուն կոչեցից զքեզ, զի դովին որչափ շատ իցէ առն իւրաքանչիւր՝ չափի ճոխութեան պայման: Ո՛վ անմահ աստուած. ոչ իմանան մարդիկ՝ եթէ որպէս չափաւորութիւն գիտէ առաւելուլ զեկամուտս: Շահի ոմն՝ի կալուածոց իւրոց վեցհարիւր դահեկանս. իսկ եսյիմոցն հարիւր: Նմա՝ որ ոսկեձեղուն յարկս կանգնէ՝ի գիւղս, և յատակս կձեայս, նկարս, արձանագիրս, և որ կարասեաց ընու զտուն, և անբաւութեան զգեստուց փափաքող է, ոչ միայն ամենայն ծախքն անհամեմատք են ընդ մոլոց կալուածոցն, այլ և ընդ տոկոսին: Իսկ յիմոց դոյզն մոլոց՝ի բաց հանեալ զծախս փափաքանաց իմոց, տակաւին յաւելու: Արդ ո՞յերկուցս մեծատուն իցէ, որում պակասէ՞ն, թէ որում առաւելու. ո՞վ է որ կարօտն իցէ, և ո՞վ որ յղփացեալն՝ն, որոյ որչափ յորդեն ստացուածք՝ զաւելին խնդրէ. թէ նա՝ որ իւրովքն լնացեալ է: Ոչ թուով համարոյ, այլ՝ի սեղանոյն և՝ի հանդերձանացն սահմանի հարըս-

ութեան չափ. չցանկալն՝ մեծութիւն է. չծախելն՝ է կամուտք են, բաւականութիւն՝ մեծ և հաւատի ճոխութիւն է: Ապաքէն եթէ քաջածանօթք երաց երաց՝ մեծագին համարին զմարդս և զանդաստանս, զի ստացուածքն այն ոչ բնաւ ապականին, ապա քանի՞ առաւել համարեսցի առաքինութիւն՝ որ ոչ յափշտակի և ոչ յաղարտ վարի, ոչ նաւաբեկութեամբ ծախի և ոչ հրկիզութեամբ, ոչ մրրկաց և ոչ ժամանակաց այլայլութեամբ ապականի. որովք որ միանդամ ճոխացանն՝ նոքա միայն եղեն մեծատունք, զի նոքա միայն 'ի ձեռին ունին զպտղաբերսն և զյաւերժականս. միայն նոքա շատանան որովք 'ի ձեռին ունին, զի այս սեփական է հարստութեան: Շատ համարին զոր ժառանգեն, փափաքեն և ոչ իմիք, անկարօտք են, և պակասէ ինչ ոչ նոցա, և բնաւ ինչ ոչ խնդրեն: Այլ յանմոռացն և յընչաքաղցից, որոց կեղակարծ և ըստ դիպուածոյ միայն է ճոխութիւն, և միշտ առաւելագունեն 'ի խնդիր են, ոչ ոք է 'ի նոցանէ որ շատանայ 'ի ստացեալն: Զնոսա ոչ միայն թափուրս կոչել արժան է 'ի մեծութենէ և 'ի ճոխութենէ, այլ մանաւանդ տնանկս և աղքատս »:

Ոսկեբերան այսպէս կը ստորագրէ արծաթասէրը. « Զիք և չիք ինչ անիմաստնագոյն քան զընչիցն ծառայ. Թուի թէ իշխեսցէ և իշխան 'ի գլուխս ունի. Թուի թէ տէր լցէ, և ծառայութիւն հարկանէ, կապանս վարակէ զանձամբ, և ուրախ է. դրդէ զդաղանն, և բերկրի. 'ի գերութեան վարեալ, ցնծայ և խայտայ, շուն կատաղի տեսանէ 'ի վերայ դիմեալ ոգւոցն, և յանհոգս է. զոր պարտ էր խառանել և սովամահ առնել, առատացեալ յանինայ՝ չանի առ կուրծն կուտէ, զի ևս քան զևս 'ի վերայ խաղայցէ և ահագինս լինիցի»:

Յաղագս թուարկութեան մասանց.

Երբոր նիւթ մը պարզ է, սահմանը կրնայ բաւական ըլլալ՝ անոր վրայ ընդհանուր գաղափար մը տալու համար. իսկ երբ բաղմամասն է, հարկ է զայն բաղկացընող մասանց թուարկութիւն ընել, անոր ինչ ըլլալն լաւ իմանալու համար: Պլուտոն, Ապառաժն Արաբիոյ վրայ գաղափար մը տալու համար, այն երկրին յատուկ հանգամանքներն մէկիկ մէկիկ մանրամասնաբար կը դնէ.

«Նկարեսցէ ոք 'ի մտի զերկիր մի ապալեր և անջրդի, զարեգակն կիզանուտ, զերկին միշտ երաշտացեալ, դաշտավայրս աւազուտս և լերինս առաւել իմն չորանուտս, ընդ որս ակն ձգեալ տարածանի և հայեցուածք կորնչին, ոչ ունելով դադարել 'ի նիւթ ինչ կենդանական. երկիր մի մեռեալ, և զի այսպէս ասացից, կեղեքեալ 'ի հողմոց, որ միայն ոսկերոտիս և քարինս շեղջկուտեալս և ժայռս կանգուն կամ տապալեալս յանդիման կացուցանէ. անապատ ամայի ամենևին, ուր ուղևորն չհանդեսաւ երբեք ընդ հովանեաւ, ուր չիք ոք ընկեր, և ոչ որ զկենդանի բնութիւն առաջի արասցէ նմա »:

Մարպիրոսայ հեղինակն ուզելով հասկրցնել թէ ինչ էր Հռովմ, աշխարհիս մայրաքաղաքն, մէջը գտնուած բաղմախուռն սքանչելիքներն կը համրէ.

« Ի հրապարակէ անտի ցԿապիտոլ՝ և 'ի փողոցէն Կարենայ ցդաշտն Արիսի անդադար յածէի մոլորական. դէմ եդեալ ընթանայի 'ի թէատրոնն Գերմանիկոսի և յամբարտակն Ադրիանոսի, 'ի կրկէս անդր Ներոնի, և յամենադից մեհեանն Ադրիպպայ: Ոչ յագէի տեսանելով զերթևեկ ժողովրդեանն յամենայն ազգաց երկրի,

և զբու դնդացն Հռովմայեցւոց, Կեղտաց, Գերմանացւոց, Յունաց, Ափրիկեցւոց, յորոց իւրաքանչիւր այլատարազ քան զայլն վառեալ էր և զգեցեալ։ Թէր ոք սաբինացի, կեղևով ցարասւոյ տրեխաւորեալ, անցանէր մեռ առ առն ատենակալի ծածկելոյ ծիրանեաւ. կառք վատանշան կնոջ խափանէր զգահաւորակ առն հիւպատոսի. եղինք Կլեոպատրայ յաղթանդամք՝ 'ի հրապարակ անդր զհին սայն Վոլսկեանց քարշեալ տանէին, կաղմածք որսոց ասպետի հռովմայեցւոյ զնուիրական Ճանապարհն արգելեալ ունէին. քուրմք կանխէին մատուցանել խունկս ասատուածոց իւրեանց, և հռետորք 'ի բանալ զվարժարանս իւրեանց։

« Քանիցս յայց եղև ջերմկացն զարգարելոց մատենադարանօք, և ապարանից, որոց կէսք խարխարեալք, և այլք կիսաւեր կործանեալք, 'ի կառուցումն այլոց շինուածոց պահեալք։ Մեծութիւն հռովմական ոլորտից՝ զուգախառնեալ ընդ մեծամեծ յօրինուածոց հռովմական Ճարտարապետութեան. ջրմուղքն, որք հանդոյն Ճառագայթից 'ի մի կենդրոն ձգելոց, ընդ կամարսն յաղթականս ածեն զջուր առ ժողովուրդն արքայական, աղբերացն կարկաջումն անսպառելի, անդրիք անհամարք, որք 'ի միջի անդ ամբոխին տարաբերելոյ՝ զանշարժական ժողովրդեան բերեին զնմանութիւն. յիշատակարանք ամենայն դարուց և ամենայն աշխարհաց. վաստակք թագաւորաց, բդեշխաց և կայսերաց, կոթողք Յեգիպտոսի կողոպտեալք, դամբարանք կապտեալք 'ի Յունաց աշխարհէն չգիտեմ որպիսի 'ի լոյն գեղեցկութիւն. դոլորշի և պատկեր լերանց, և նոյն ինքն Տիբերիսի ընթացիցն անհաթութիւն, երամակք մատակ ձիոց անընտանեաց, որք դան ըմպել 'ի ջուրս նորին. դաշտորայքն՝ զորոց քաղաքացին Հռովմայ անպէտ ինչ վարկանի զմշակութիւն, միտ եդեալ ամ ըստ ամէ ծանուցանել ազգացն նուաճելոց եթէ որուամ կողման երկրի վիճակեսցի պա-

տիւ մնուցանելոյ զնա. և զինչ ևս ասացից. ամենայն ինչ 'ի Հռովմ զտիրապետութեան և զտևականութեան բերէ զնշանակ։ Տեսի զծրագիր տախտակ յաւերժական քաղաքին՝ ծրագրեալ յարձանս քարեղէնս 'ի Կապիտոլ, որպէս զի պատկերի իսկ նորին անհնար լեցի եղծանել»։

Նարեկացին իր հոգին նաւու նմանցընելով, այլաբանութեամբ անոր կրած ալեկոծութեան վտանգներն կը համրէ. «Մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյս վստահութեամբ, դոյզն կասկած արկածից 'ի միտ բերելով՝ առ խորոց փոքր միջոցին, որ 'ի մէջ հանգըստեանն և աշխատութեան, իբր այն թէ հասեալ եցէ ձմեռն յամարայնի, բաբաբեր հողմով ժամանեալ երեքաբլեանն դիմակցութեամբ, ամբոխեաց զհանդարտութիւն։ Ուստի նաւն 'ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ։ Թէոց ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման 'ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ. շինուածոցն շուք անզարդեցաւ, առասանք ձգողականացն խզեցաւ, տեսարան դլնոյն դիտակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան կտրեցաւ, ապաւինութիւն խարսխին լուծաւ. լուծք ստուարք ամրոցն կցորդութեան բաժանեցան, սամիք ուղղչացն հետոց գալարեցան, լաստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ, զեկացն կառուցմունք անդրէն սուզան. չուոցն յարմարութիւն պակասեցան, ողնափայտին պատսպարան խկոյն բեկաւ, կասլարանք զստին հաստուածոյ յօշոտեցաւ, գոդք ամիոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան, խելք շրթանցն եղերաց խախտեալ ոստեաւ, պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ, վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ, գահաւորակին հանգստարանն շփոթեցաւ, մածմունք տախտակաշարք 'ի միաբանութեանց միմեանց անջատեցան, հեղոյսք պնդման բևեռացն քարշեցան։ Արդասիք իրին՝ յիշատակարան

ողբոց ինձ նմանեցաւ։ Նաւուղիղն հանդէպ նաւին դէ-
գերեալ ողբայ, ձեռն 'ի ծնօտի եդեալ՝ արտասուաց
դէտս իջուցանէ »։

Նոյն ինքն Նարեկացին դարձեալ համբերելով թէ որո՞ւ
կրնար դիմել Մանասէ՝ մեղանչելէն ետև, կը ցուցընէ
թէ անկարելի էր իրեն մէկու մը ապաւինիլ. որով և
զուրկ էր ամենայն ակնկալութենէ. « Առ Աստուած ոչ
դոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զԱբրահամ ոչ էր
յիշէլ, զի խորթացեալ էր 'ի նմանէ. Իսրայելիս ոչ էր
պարծել զի տարագիր էր անուան կոչմանն մեծախոր-
հուրդն չնորհի։ Զդաւթեան երդ ոչ էր նուագել, զի
կշտամբիչ էր նորին, 'ի բաւարանն ոչ էր մերձենալ, զի
պղծեալ էր զնա. 'ի տապանակն աստուածագիծ ոչ էր
ապաւինել, զի ընդ դարշութեան ձուլածուին էր փոխա-
նակեալ. առ Ահարոն ոչ էր աղաչել, զի վնասապարտ
էր առ նա, առ մերձաւոր մարգարէին գուշդ ոչ էր
դիմել, զի սպանող էր նոցա »։ Վերջը վրայ կը բերէ թէ
այսպիսի մեղաւորի մը, որուն տեղէ մը դարման չկար,
ողորմեցաւ Աստուած։

Ըստ այմ և Յովհան Կաթողիկոս ուղղելով խմացնել
թէ բոլոր ազգն գերութեան տակ ընկաւ, ամէն կարգի
մարդկանց աստիճանն կը համբէ. « Եւ միանգամայն խակ
աղատն և անազատ, զօրաւորն և պատերազմողն, յիսնա-
պետն և դատաւորն, խորհրդականն և քննիչն, խմաս-
տունն և հանճարեղն, ծերն և տղայն, մեծն և փոքրն
մատնեցան 'ի ձեռս բռնադատ գերչայն։» Ուսկից զօրու-
թեամբ կը հետևցընէ, թէ ուրեմն և բոլոր Հայաստան։

Նոյնպէս և Սարգիս բարկութեան բոլոր չար հետե-
ւանքներն հարցմամբ համբերելով, զօրութեամբ կը հետև-
ցընէ թէ ուրեմն ամենայն քաղաքական վրդովմանց պատ-
ճառ բարկութիւն է. « Ուստի՞ կռիւք, ուստի՞ գրդռու-
թիւնք, ուստի՞ հարուածք, ուստի՞ վէրք, ուստի՞ սպանու-
թիւնք զկնոջն, եթէ ոչ 'ի բարկութենէ։ Նաև ատե-
լութիւն, ոխակալութիւն և քինախնդրութիւն, և չա-

լայուշութիւն և նախանձ և անողորմութիւն, և որք
միանգամ այսպիսիքն են, բարկութեան են ծնունդ »։

Իտալացի հռչակաւոր մատենագիր մը իր բարեկամին
գրած թղթի մէջ ինքզինքը անկարող երևցընելով զօ-
բագլխի մը քաջութիւններն պատմելու, որ պատերազմի
մէջ բան մը ըրած չէր, կ'ըսէ հենգնելով. « Ի քանի՞ պա-
տերազմունս գտաւ նա, քանի՞ գունդս ճակատեցոյց,
զո՞յս 'ի փախստականաց քաջալերեաց, զքանի՞ թշնամեաց
վատթարեաց զղօրս, զո՞յս զոմանս գերի վարեաց, քանի՞
աւարս, անկածս, կապուտս, դրօշս զինուորականս յա-
ռաջոյ խաղացոյց, քանի՞ բանակս առ զթշնամեաց, քանի՞
գաւառս նուաճեաց, դու ինքն ասա՛. ասա՛ դէթ զմին,
զի իմ և ոչ զմին լուեալ է. իսկ զո՞ն գրեցից »։

Յաղագս Հանգամանաց.

Գործ մը պատմելու առեն պէտք է անոր յարակից
հանգամանքներն ճշգրիտ հաւատարմութեամբ յիշատա-
կել. որո՞ւ ձեռքով, ինչպէս, ինչ պատճառաւ, ինչ կեր-
պով, ո՞ր ժամանակ, ո՞ր տեղ այդ գործը կատարուե-
ցաւ։

Տիկին Սեվինեէ սաստիկ սիրտ կը շարժէ, երբ գողոր
պարզութեամբ մը Դիւրենի մահուան յարակից հանգա-
մանքներն մեկտեղ կը բերէ. « Հեծաւ նա յերիվար
յաւուր շաբաթու, յերկրորդ ժամու, զկնի ճաշելոյն.
և զի գոյր բազմութիւն արանց ընդ նմա, եթող զնոսին
երեսուն քայլս հեռի 'ի բարձրաւանդակէն ուր կամէրն
երթալ. և ասաց ցմանուկն Էլպէօֆ. « Եղբօրորդիդ
իմ, այդր կաց. շուրջ զինև յածիս անդադար. մի գուցէ
տացես զիս ճանաչել »։ Համիլդոն, որ դիպեցաւ մօտ 'ի
տեղւոջն ուր գնայր նա, ասէ առ նա. « Տէր, այսր եկ.
ընդ կողմն ընդ որ գնաս՝ արձակեսցին հրաշէնք։ — Տէր,
ասէ նա, ուղիղ խօսեցար. ոչ կամիմ ամենևին եթէ

ոք ոպանցէ զնս յաւուրս յայսմիկ. և լեցի ինձ այդ մեծագոյն քան զամենայն »: Այն ինչ զերիվարն 'ի բաց գարձուցեալ, եառս նա զՍենդիլէր, որ գլխարկն 'ի ձեռին, ասաց առ նա. Տէր, արկ զակն 'ի մարակոց այդր զոր եառս զետեղել անդանօր: Դիւրէն դարձաւ այս. ուրէն և իսկոյն եառ ընդ եառ ջախջախեցան բաղուկք իւր և մարմին, նովին հարուածով որ 'ի բաց տարաւ զբաղուկ և զձեռն որով Սենդիլէր զգլխարկն ուներ: Իշխանն ա. զատաղարմ որ գիտէր զնա անդադար, ոչ տեսանէ զան. կանել նորին. երիվարն առեալ տանի զնա ուր Թողեալ էր նորա զպատանեակն Էլպէօֆ. և կայր նա ռնդամբն խոնարհեալ զթամբաւ: Յայնժամ երիվարն զկայ առեալ դադարէ. և դիւցազն 'ի բաղուկս իւրոց արանցն ան. կանի. բանայ երկիցս աչս մեծամեծս և զբերան, և ասա դադարէ հանդարտեալ մինչ խսպառ: Իմանաս անշուշտ զի մեռեալ էր նա, և մասն ինչ սրտի 'ի բաց տարեալ:

«Անդ յայնժամ հնչէն աղաղակք և կոծք արտասուաց. Համիլտոն լուեցուցանէ զաղմուկն, և տայ 'ի բաց տանել զպատանեակն Էլպէօֆ, որ անկեալ զմարմնոքն՝ չկամէր Թողուլ, և աղաղակէն Թալանայր: Ծածկեն զմարմնն վերարկուաւ, և տարեալ 'ի տեղի ուրեք, պահեն զդու. շութեամբ: Դեսպակ մի հասանէ. և բարձեալ տանին զնա 'ի վրան իւր. անդ Լորժ և Ռուայ և այլք բաղումք գոգցես մահացու ցաւօք հարեալ վարակեցան. այլ հարկ եղև բուռն առնել անձանց, և խորհել 'ի մեծամեծ գործառնութիւնսն մեռալոյս հասեալս 'ի վերայ: Կա. տարեցին 'ի վերայ նորա զսպաս զինուորական հանդիսի անդէն 'ի բանակին, ուր զոհիրապէս սուգն զարդարէին ճիչք և արտասուք. համօրէն սպայից ուսընդանութ կամարքն սգատեսակք էին, ամենայն թմբուկք քօղար. կեալք, մէն մի ևեթ բախելով դափիւն, և զտեգան գեա. նաքարչս և զհրաշէնսն գլխիվայրեալս ունելով: Եւ զնարդ կարիցէ ոք զձայն գոչման համագունդ բանակի միոյ ածել զմուաւ և ոչ 'ի գութ խանդաղատել »:

Տուղղիոս Կիկերոն յարակից հանդամանքներէ ձեռն. արկութիւններ կը հանէ ցուցընելու համար թէ Կղոդիոս է դաւաճանը: Իր անձէն. Վասն զի միշտ անդադար եղած է Կղոդիոս, և առ հասարակ զամէնքը կ'ատէր և կը նեղէր: Իր գործէն. Վասն զի զէնքով ամենուն աչքին առջև ըրաւ այն յարձակումը, զոր Միլոն բնաւ մտքէն չէր անցուներ: Տեղէն. Վասն զի անոր առջևը եւաւ նեղ ճամբու մը վրայ, ուր չորս կողմը բարձր ու դարուվար տեղեր էին, և դիւրաւ կրնար անոր ելաս հասցընել: Գործակիցներէն. Վասն զի քարաժայռներու վրայ զինեալ մարդիկ կեցուցեր էր, որոնք Միլոնի ծա. ռաները զարկին. և ինքն ալ հեռն ուրիշ մարդիկ ու. նէր, որոնք կառքին չորս կողմն առին: Խորհրդոյն կը. կնութենէն. Վասն զի շատ անգամ դարաներ էր, և Միլոնի մահ սպառնացեր էր, և անոր գալու ժամանա. կը՝ ճամբան փոխել ձեւացուց: Պատճառէն. Վասն զի Միլոն միշտ դէմ կը կենար Կղոդիոսի անօրէն խորհուրդ. ներուն. և անոր համար միշտ ատելի էր անոր: Եղանա. կէն. Վասն զի Կղոդիոս իր սովորութեան հակառակ. ճամբուն վրայ Միլոնի դէմն ելաւ, որ բոլոր ընտանիքովն կառքին մէջ փակուած նստեր էր: Ժամանակէն. Վասն զի ուրիշ պատճառ մը չկար որ Կղոդիոս նոյն ճամբուն վրայ հանդիպէր այնպիսի ժամանակ և այնպիսի տեղ, եթէ ոչ իր ատելոյն դարանեալ սպասելու համար:

Իմաստութեան գրոց մէջ Եգիպտացւոց անդրանկա. ծաս պատուհասը յարակից հանդամանքք գեղեցիկ նկա՝ բագրուած է: Ե՞ՔԷ. «Մինչդեռ խաղաղութեանն պա. տեալ էր զամենայն, և այն ինչ գիշերն իւրով արագու. թեամբն ընդմիջէր: Ո՞Վ. Ամենազօր բան քո յերկնից յաթոռոց արքունեաց սաստիկ պատերազմող 'ի մէջ սատակման երկրին հասանէր: Զի՞նչ. Սուսեր պողովա. տիկ՝ զանաչառ հրամանդ քո բերեալ, և 'ի մէջ անցեալ՝ զամենեսին ընդոյր մահուամբ. անդ առ երկինս քերեր, և այսր յերկիր հասանէր: Զի՞ՐԴ. Յայնժամ վաղվա.

1001
1313
Հ. Ս. Խ. Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Р. А. Публичная Библиотека
7/XI—1922
Հանձն Հ. Մելիքյանի
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

զակի ցնորք անհնարին երազոց խռովեցուցանէին զնոսա, և արհաւիրք անկարծք 'ի վերայ հասանէին։ Եւ այլ ոք այլուր անկեալ կիսամահ, վասն որոյ պատճառանաց մեռանէրն՝ յայտ առնէր։ Ընդէր. Զի երազոցն խռովեցուցեալ զնոսա, զնոյն յառաջագոյն գուշակէին. զի մի յանգէտս, վասն որոյ չարաչարն տանջէին, կորընչեցին »։

Պօղոս առաքեալ յարակից հանգամանքներով կը ձեռնարկէ քնդդէմ Հրէից, ըսելով. « Եթէ դու հրէայ անուանեալ ես, և յենցեալ ես յօրէնսն, և պարծիս յԱստուած, և գիտես զկամն նորա, և ընտրես զլաւն, և խրատեալ ես յօրէնացն. վստահ ես յանձնքո առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց . . . . Իսկ արդ՝ որ ուսուցանես զընկերն. զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես չգողանալ, գողանաս. . . . որ օրինօք պարծիս, յանցանել ըստ օրէնսն՝ զԱստուած անարգես »։ Ուսկից զօրութեամբ կը հետևցնէ, թէ ուրեմն մեծամեծ յանցանաց մէջ ես։

Հոս տեղն է նշանակելու որ դատաստանական ատենախօսութեան մը մէջ երկու տեսակ հանգամանք կը նկատուին. հանգամանք թեթևացուցիչք և հանգամանք ծանրացուցիչք. այսինքն այն հանգամանքներն որ դատի մը ծանրութիւնն կը նուազեցընեն կամ կը սաստկացընեն։

Յաղագս Նախընթացից և Հետևորդաց.

Իր մը բոլորովին պարզելու համար, անոր յարակից հանգամանքներէն զատ, կարևոր է երբեմն յիշատակել նաև անկէց առաջ կամ վերջը եղած բաներն, կամ թէ ըսենք, անոր նախընթացներն և հետևորդներն։ Այսպէս Պուալոյ ուզելով նկարագրել այն ժամանակն, երբ

բանաստեղծութիւնն առաջին անգամ երկրիս վրայ երևցաւ, կը սկսի առաջ նախընթաց ժամանակաց պատկերն առջևնիս դնել, ետքն ալ անկէց վերջը եղածներուն նկարագիրը կ'ընէ.

Մինչ չէ դեռ մշտաց պարզեալ 'ի ձայն բարբառոյն՝
Մարզեալ էր ըզմարդիկ, և ուսուցեալ էր զօրէնս,
Ամենայն ոք ըզհետ գրնայր անհարթ բընութեան,
Եւ ցերուեալք ընդ անտառս ընթանային 'ի ճարակ.
Զիրաւունս և զողորմութիւն փոխանակէր զօրութիւն,
Եւ ոճիր ըսպանութեան անպատուհաս կատարէր։

Ահաւասիկ նախընթացներն. իսկ բուն իրն այս է.

Այլ խօսից հուսկ ապա ճարտարութիւն հեշտալուր,
Ըզվայրագ բարոյեցն ըզբրտութիւն քաղցրացոյց.
Ժողովեաց ըզմարդիկ ըզվայրատեալս 'ի մայրիս.
Պատուարօք և պարըսպօք շուրջ ըզքաղաքսըն փակեաց, (կեցոյց.
Եւ տեսլեամբ պատուհասին ըզժըպրհութիւն երՏրկար անմեղութեան կացոյց զօրէնս 'ի սատար։
Տաղքն ասեն առաջինք կացին կարգացրս պատճառք։

Հոս երը կը լմննայ, վերջը կուգան հետևորդներն.

Անտի հնարեցան համբաւքն յրսփիւռս ընկալեալք
Թէ երգովքն Որփէի, իւ հընչեցին Թրակեան սաղք,
Վագերցն ամրեալոց գազանութիւն փարատէր.
Եւ նուագօքն Ամփիոնի քարինքն ինքնին խըլըրտեալք,
Կարգաւ ամբառնային ըզպարըսպօք Թեբացւոց։
Նորածին երգոց քաղցունց ըսքանչելիք են սոքա։
Ըզպատգամս յապայսնախնիք 'ի չափ տաղից խօսեցան։

Ուսին ուզելով Գոռնէյլի հանճարոյն բովանդակ մեծութիւնն հասկըցնել, կը սկսի նախ այդ մեծ բանաստեղծին փայլելէն առաջ դաղղիական Թատեր վիճակն յիշատակել.

« Գիտես յո՞ր վիճակ գտանէր ցայնժամ տեսլարանն Գաղղիացւոց, յորժամ նա ձեռն արկ յաշխատասիրել։

Քանի անկարգութիւն, որպիսի խառնակութիւն: Ոչ ուրեք ճաշակ ինչ ախորժակի, և ոչ ծանօթութիւն տիրապէս թատերական գեղեցկութեանց. մատենագրողք իբրև զհանդիսատեսան ոգէտք. բազմագոյնք 'ի նիւթոցն անհեդեդք և ոչ իւրեք ճշմարտանմանք. ոչ մի նկարագիր բարոյից և ընաւորութեանց. եղանակ ասացուածոցն առաւել քան զեւան թերակատար, և որոց գլխաւոր զարդք՝ պլասացութեամբք էին և խաղք բառից անպիտանք: Հակիրճ ասել, ամենայն կանոնք աբուրեսոին, ևս և կանոնք պատշաճից և վայելչութեան առ հասարակ առ ոան հարեալք: Յայդմ մանկութեան, կամ լաւ ևս ասել, յայդ անկերպարան վիճակ թատերական քերդութեանն առ մեզ, եղբայր քո քաջանուն, յետ ժամանակս ինչ 'ի թնդիր ուղիղ ճանապարհին անկանելոյ, և եթէ իշխեցեմ ասել՝ յետ մաքառելոյ ընդ վատթար ախորժակի իւրումն դարու, յետոյ ուրեմն նորաբանչ ելեն հանճարով զխանդ մոացն վառեալ, և 'ի նախնեացն ընթերցուածոց նպաստեալ, 'ի հանդէս էած 'ի տեսլարանն զառողջ մտածութիւնս, հանդերձ ամենայն պերճութեամբք ոճոյ և համօրէն զարդուք՝ զորս բարբառ մեր կարող է տանել, յաջողութեամբ ելեն զճշմարտանմանսն ընդ զարմանալիսն կցորդեալ, և զորս ունէր զնախանձորդսն զամենայն՝ քաջ 'ի բաց զինեն իւր թողեալ»: (Ճառ 'ի Ժողովն Կաճառորդաց յաղագս ընդունելութեան Թովմասու Գոռնէյլի:)

Քաջն Վարդան իր առեղախօսութեան մէջ այս նախընթացներով կը հետևցնէ թէ հարկ է առ Աստուած աղաչելիք. «Յերկուս և յերիս կուսս տէրն ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ. որպէս զի զանուն քաջութեան ժառանգեցաք, զզօրն ալքունի չարաչար հարաք, և զմոգսն անողորմ սատակեցաք. զանօրէն հրաման թագաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք. լեառնացեալ ալիքն դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառեցաւ, գազանացեալ

սրտմտութիւնն դադարեաց: Որ 'ի վերայ ամպոց որոտայր, նկուն եղեալ քան զսովորական բնութիւնն 'ի վայր գտաւ ընդ մեզ խօսելով»:

Նոյնպէս Լամբրոնացին նախընթաց և հետևորդ հանգամանքներով կը ցուցընէ թէ քրիստոնէից մէջ եղած բազմապատիկ չարիքներն անոնց իրարմէ պառակտելէն յառաջ եկած են. «Բայց յորժամ միութիւն տիեզերաց պատառեցաւ, պատահումն ոՐպէս. յորժամ 'ի վերայ զանազան վիմի կարծեցաք զհաւատս մեր շինել, և ընդ միմեանս սկսաք մարտնչել, կործանումն ոՐքան. յորժամ մարմինն Քրիստոսի քակտեցաւ 'ի միմեանց, վերն անտանելի. յորժամ անդամքն միմեանց թշնամիք դարձան, վերաւորեալքն անչափ. յորժամ զմիջնորդն խաղաղութեան զտէր մեր Յիսուս Քրիստոս թշնամութեան առաքնիւթ, պտուղնորին փոխանակ սիրոյն՝ ատելութիւնն. յորժամ փոխանակ երկնից մեզ բերեալ նոր օրինաց վարդապետին՝ զաշխարհակալս առաքզօրէնն, վատթարացեալ բթեցաք յամենայն առաքինութեանց»:

Նոյն ինքն դարձեալ նախընթացներն ընդլայնելով՝ կը ցուցընէ թէ նոյն պառակտումը պատճառ եղաւ քրիստոնէից վրայ եկած շատ տեսակ չարիքներուն. «Դարձաք միմեանց թշնամիք, ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ. ատեցաք զիրեարս, ոչ վասն առ միմեանս դժբեղոյն, այլ վասն զԱստուած կարծելոյ սիրել. չոչեցաք զառիթ խաղաղութեանն զՔրիստոս՝ հակառակութեան մերոյ պատճառ. ծանուցաք աշակերտք նորա, ոչ զմիմեանս սիրելովն, այլ ատելութեամբն. եդաք հիմն խմաստից մեր՝ ոչ զհաշտութեանն Հօր պատարագ, այլ զնախանձն որ 'ի Կայենէ սերմանեալ. դարձաք հոգեկիրքս 'ի լինելոյ հոգևորս. և ախտացեալք ըստ մարմնոյ, գտաք զնչաւորս: Յաղագս որոյ և զօրէնս կենաց քեալ որ 'ի Հոգւոյն, հպատակեմք օրինաց մարմնոյ փոխանակ նորա»: Վերջը հետևութիւնն կը դնէ, ըսելով. «Արդ քանզի մեղաք օրինաց սիրոյն, և յանցեաք ընդ խա-

զաղուիթեանն պատուէր, և ոչ զղջացաք. յաղթեցաւ ողորմութիւնն յարդարութենէն. և եբարձ 'ի խռովելոցս հոգւով՝ իրաւունքն և զմարմնոց խաղաղութիւնն »:

Յովհաննէս կաթուղիկոս այսպէս կ'ընդլայնէ ասպատակներէն Հայաստանի վրայ եկած աղէտքներն. « Եւ այսպէս (երկիրս մեր) անմարդացեալ և անզաւակացեալ, խոպանացեալ և անչքեղացեալ, այնուհետև անդաստանք մեր եղեն իբրև զանդաստան մացառախիտ, և ցամաքեցան բողբոջք բուսոց արտավարաց և արօտից. և քաղաքք մեր կործանեցան առ'ի չգոյէ բնակչաց. և երկրագործք մեր սպառեցան, և սուգ զգեցան: Եւ այսպէս ծածկեցին զմեզ անարգանք մեր. և 'ի մեզ բովանդակեալ լցաւ մարգարէութիւնն Եսայեայ, եթէ երկիր ձեր աւերակ, քաղաքք ձեր հրձիգք. զաշխարհս ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, աւերեալ և կործանեալ յազգաց օտարաց »:

Կիկերոն մէկու մը մարդասպան ըլլալն այսպէս կը ցուցընէ 'ի հետևորդաց. « Զի թէ նա սրով սպանաւ, և դու թշնամիդ նորա ըմբռնեցար անդէն առ տեղեաւն՝ արիւնամած սուր 'ի ձեռին, և ոչ այլ ոք բաց 'ի քէն գտաւ անդ, և դատաստանս 'ի վերայ քո է, և դու միշտ ըմբոստ կաս, զինչ այլ ևս երկբայելի ելցէ զքէն վասն եղեռնաւոր գործոյդ »:

Զափով պէտք է գործածել նախընթացներն ու հետևորդներն. վասն զի թէ որ մտադրութիւն չըլլուի, այս ձևս ընդլայնմանց անսպառ աղբիւր մը կը դառնայ: Ովղատիոս, Տրոյիոյ առումը երգել ուզող բանաստեղծից կը յանձնէ. Հելենեայ ծնընդեանէն չիսկսիլ: Նախընթաց կամ հետևորդ հանգամանաց մէջ զանոնք միայն պէտք է առնուլ, որոնք իրաւցընէ կարևոր են՝ իրն ըմբռնելու համար:

Ցաղագս Պատճառաց և Գործոց.

Կրնայ նաև ինչ բանի վրայ որ կը խօսուի՝ զայն յառաջ բերող պատճառն, կամ անկից յառաջ եկող գործերէն ընդլայնմունքներ հանուիլ: Պայի այսպէս կը պարզէ արշալուսոյն վարդապետութիւնն, անոր պատճառն և գործքերն.

« Ճառագայթք որք կորանան առ'ի գալ մերձենալ առ մեզ, չև առ մեզ ժամանեալք՝ 'ի վերուստ մերոց գլխոցս անցանեն. և ապա զթանձրաձև մասամբք օգոյն ցոլացեալ, յարդարեն նախ զնշոյլ ինչ աղօտածագ, որ ա-ճեալ անդադար, և աւելտաբեր այդուն եղեալ, ապա լինի ինքն իսկ այգն առաւօտին: Լոյսն լուծեալ և բաժանեալ, նկարէ զամպս և զփայլուն երանգսն կերպաւորէ՝ որք արեգականն ելից յառաջընթացք լինին: Յայդ երևոյթ բեկբեկման ճառագայթից զդիցուհին առաւօտու տեսին բանաստեղծք, վարդագեղ մատամբքն բանալով զդրուանս այգուն, և դուստրն այն օդոց և արեգական ունի զգահ իւր'ի համատարած եթերին »:

Հեղինակն ինչուան հոս ցուցուց երևոյթն և զայն յառաջ բերող պատճառն, հիմա կը սկսի անոր գործերն նկարագրել.

« Եթէ այդ համատարած եթերդ չլինէր, եթէ ճառագայթքն հասանէին առ մեզ ուղղաձիգ, երևուն և անհետանալ արեգականն վայրկենականք լինէին. խոր գիշերոյ յաջորդէր մեծազարդ պայծառութիւն տըւընջեան, և խաւար թանձրախիտ փոխանակէր զլոյս գեղածիծաղ: Ուրեմն օգտակար է երկրի բեկբեկումն ճառագայթից, ոչ միայն զի տայ մեզ վայրկենաս ինչ կանխագոյն 'ի տեսիլ արեգականն վայելել, այլ զի երևեցուցեալ մեզ զարշալոյս, զտևողութիւն լուսոյն եր-

կարաձգէ։ Բնութիւնն կարգեաց ասոիճանս՝ որովք հայթայթէ առ մեզ զբերկրանս զուարճութեանց և զվիչտ անձկութեանս նուաղեցուցանէ։ Ցեսանեմք ծաղեալ զայգն իբրև զոյս ակար, և ապա յանդգաստս խուսափեալ. և լոյսն նուաղի. որպէս և զօրութիւն մեր և առողջութիւն, և հաճոյք և կեանքն իսկ ինքնին, առանց մեր իրազգած ինչ լինելոյ »։ (Աբդի ասպէ. զագիպուրնէ։)

Մոնդեսքիէօ ուզելով Աղեքսանդրի աշխարհակալութեանց հին աշխարհի վրայ ըրած ազդեցութեանն գաղափար մը տալ, կը սկսի վնտռել թէ որո՞նք եղած են այդ աշխարհակալութեանց պատճառներն. վերջը համառօտ կերպով մը զանոնք կը բովանդակէ, և անոնց գլխաւոր գործերն կը դնէ.

« Մեկնեցաւ նա, յապահովի կացուցեալ նախ զՄակեդոնիա յերեսաց դրացի ազգացն բարբարոսաց և վճարեալ զՅունան նուաճել. և 'ի գործ արկ զնուաճութիւնն զայն 'ի կատարումն իւրոյ ձեռնարկութեանն. զնախանձ լակեդեմոնացւոցն տկարացոյց. յարձակեցաւ 'ի գաւառսն Ծովեղերեայս. զբանակ իւր ցամաքային գնացոյց առ եղերքք Ծովու, զի մի 'ի նաւատորմէն զատանիցի. ընդդէմ բազմութեան 'ի գործ վարեաց սքանչելապէս զկարգաւորն կրթութիւն. պաշարոյ չկարօտացաւ երբեք. և եթէ ճշմարիտ է զի զամենայն եւ նմա յաղթութիւն, այլ և արար նա զամենայն առ 'ի ձեռս բերել զյաղթութիւն . . . :

« Աղեքսանդր անցեալ ընդ Գրանիկէ, տէր եղև գաղթականացն Յունաց. ճակատամարտն Իսոսի եւ նմա զՏիւրոս և զԵգիպտոս. պատերազմն Արբելայ եւ նմա զերկիր ամենայն : Յետ ճակատամարտին որ յԻսոս, թողու փախչել զԴարեհ, ուշ եգեալ 'ի հաստատել և և 'ի կարգաւորել զաշխարհակալութիւնս իւր. յետ կռուոյն Արբելայ՝ զհետնորա պնդի այնպէս 'ի մօտուստ, զի բնաւ չթողու նմա ապաւէն յիւրումն տէրութեան։

Դարեհ յիւր քաղաքն և 'ի նահանգս մոեալ և 'ի բաց ելանէ. արշաւանք Աղեքսանդրի այնպէս հին են երագընթացք, զի կարծիցես նկատել մանաւանդ զինքնակալութիւն տիեզերաց իբրև վարձս ինչ ընթացիցն, որպէս 'ի խաղս անդ Հելլենաց, քան եթէ պարգևս յաղթութեան։

« Այսպէս նա զաշխարհակալութիւնսն արար. տեսցուք այժմ զնարդ 'ի պահպանութիւն նոցին վարեցաւ։

« Ընդդէմ եկաց այնոցիկ որք կամէին զի իբրև ընդ տեարս ընդ Յոյնսն վարիցի, և ընդ Պարսիկսն իբրև ընդ գերիս. խորհեցաւ միացուցանել զազգսն զերկոսին, և զնստիրն որ ընդ ազգն յաղթող և ընդ յաղթեալ՝ բառնալ 'ի միջոց. զինի տիրապետութեանն 'ի բաց եթող զկանխակալ կարծիսն՝ յորոց դրդեցաւ ձեռն առ այն արկանել. եբերյանձին զբարս Պարսից, զի մի սոիսելոնն զնոսա 'ի նմանութիւն բարուցն Հելլենաց, զնոցա աղէտսն զայրացուցցէ։ Սոյն այս յորդորեաց զնա բաղում մեծարանս առ կինն և առ մայրն Դարեհի ցուցանելոյ։ Եւ զի՞նչ ոք աշխարհակալդ ելցէ, զոր աշխարեն ամենայն ազգք առ 'ի նմանէ նուաճեալք։ Ո՞վ ոք է այրդ յարիշտակող, ընդ որոյ մահն հեղու արտասուս ընտանիքն այն՝ նորին ձեռամբն յաթոռոյն 'ի վայր կործանեալ։ Այս նորա կենացն հանգամանք հին են այնպիսի, ընդ որ չասեն մեզ պատմաբանք թէ այլ ոք յաշխարհակալաց պանծալ կարիցէ» ։ (Յաղագս ոգեոյ օրինաց։)

Եղիչէ, Վարդանանց պատերազմին մէջ լինող նախարարաց տիկնացը վրայ պանծալի ներբող կը յօրինէ, գեղեցիկ կերպով անոնց առաքինական գործերն ընդլայնելով.

« Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և 'ի գահաւորակս, հանապազ բոկ և հեսկ երթային 'ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք զի

համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ 'ի մանկութենէ իւրեանց մնեալք էին ուղղովք զուարակաց և ամՃովք երեց, խոտաբուտ կենաց իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն։ Սևաչեալ ներկան մորթք մարմնոց նոցա. վասն զի ցերեկ արևակէզք էին, զամենայն գիշերսն գետնաբեկք։ Աղմոսք էին մշտնջենաւոր մրմունջք 'ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէից։ Միաբանեցին երկու երկու իբրև ամուք հաւանք և հաւասարք ուղիղ տանելով զակօսն արքայութեանն. զի առանց վրիպելոյ հասցեն 'ի նաւահանգիստն խաղաղութեան։ Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արք առաքինիք 'ի հոգևոր պատերազմին. մարտ եդեալ կռուեցան ընդ մեղն կարևորս. հատին, կորեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա. միամտութեամբ յաղթեցին խորամանկութեանն, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա։ Խոնարհութեամբ կոփեցին զամբարտաւանութիւն, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն։ Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք խլուցին զհրեշտակս 'ի փրկութիւն. լուան աւետիս 'ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱստուած 'ի բարձունս։ Այրիք որ 'ի նոսա էին, եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն։ . . . Անարիւն Ճիպոտանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան. և կենդանի են միայն զօդն ծասքելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն »։

Այսպէս և Սարգիս ագահութեան եղեռնական գործերն շարելով՝ ախտը կը պարսաւէ.

« Սակայն արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւնն է, ըստ առաքելոյն, և ագահութիւն. վասն զի չիք և ինչ չարիք որ ոչ 'ի սոցանէ ծնանին. ատելութիւն մարդկան, խռովութիւն, և պատերազմաց աղդակիցս, գողութիւն և սպանութիւնք, և այլ ևս անթիւ ինչք՝ զորս ո՞վ կարէ թուել։ Զի եթէ զտէրն տիեզերաց և զարարիչն արարածոց 'ի վաՃառ էած այս ախտ և եռսպանանել, զի՞նչ այլ ինչ մեայ 'ի չարեաց՝ զոր ոչ կարիցէ գործել։ Եւ եթէ զառաքեալն՝ զՔրիստոսի ընտրութեանն արժանաւոր՝ այնպէս վաղվաղակի գերի առեալ տարաւ, և զթիւն պակասեցոյց, և յահաւորսն զնայանդնեցոյց. ապա ո՞վ կարէ կալ առաջի բուռն զօրութեան նորա »։

Իմաստունն՝ 'ի գործոց առ պատՃառն ձեռնարկելով, հեթանոսաց անմտութիւնը կը յանդիմանէ.

« Ընդ որոց թէ ընդ գեղն զուարՃացեալք՝ զնոսա աստուածս կարծիցեն, գիտասցեն՝ թէ որչափ ևս նոցա տերն առաւել լաւ է. զի որ գեղեցկութեան արարչապետն է՝ նա հաստատեաց զնոսա։ Ապա թէ ընդ զօրութիւնս և ընդ աղդեցութիւնս զարմանայցեն, իմասցին 'ի նոցանէ՝ որչափ ևս որ կազմեացն զնոսա առաւել զօրաւոր է։ Զի 'ի մեծութենէ և 'ի գեղեցկութենէ արարածոցն՝ ըստ նմին համեմատութեան և արարչագործն նոցա երևի »։

Կիկերոն՝, Մանիլեան Ճառին մէջ զՊոմպէոս իր գործերէն կը գրուատէ, անոր լաւութիւնը կշռագատելով.

« Վկայ է Իտալիա, զորոյ զազատութիւնն և ինքն իսկ քաջայաղթն Սիլլա խոստովան եղև՝ թէ սորուն քաջութեամբ եղ 'ի գլուխ։ Վկայ է Սիկիլիա, որ 'ի շուրջ պաշարեալն բազմադէմ վտանգաց, ոչ ահարկութեամբ պատերազմի ազատեցաւ, այլ արագամիտ հանՃարով նորա։ Վկայ է Ափրիկէ, զի որ նկուն լեալն էր 'ի բազմութենէ թշնամեաց՝ 'ի նոցին Ճապաղիս աբեանցն ներկաւ։ . . . Արդ զանց զբազմաց արարեալ,

և ոչ օտարացն յարացուցիւ հաւաստեալ՝ թէ ո՛րչափ զօրեսցէ 'ի պատերազմի սորայս առաջնորդութիւն, 'ի նմին իսկ 'ի Պոմպէոսէ ուսանել արժան է զօրինակս ա-մենայն քաջափառութեանց նորա։ Զի յորժամ զօրա-գլուխ կարգեալ նա 'ի ձէնջ մեծի պատերազմին, համ-բաւքն ցորենոյ՝ որ սակաւն էր և ծանրագին՝ յորդեաց առաւելութեամբ, միոյ միայնոյ առնն համբաւով. զոր հազիւ ուրեմն կարող էր առնել մշնջենաւոր խաղա-ղութիւն արդաւանդ քաջաբերութեամբ »։

Յաղագս Նշանաւորեանց.

Կան նաև եկամուտ ընդլայնմունք, որոնք առանց ուղ-ղակի նիւթոյն հետ կապակցութիւն ունենալոյ, անոր վրայ աւելի որոշ, աւելի ճիշդ և աւելի կատարեալ գա-ղափար մը տալու կ'օգնեն։ Ասանկ են բազդաբերութիւնք, օրինակք, յիշատակութիւնք և վայրութիւնք, զորոնք սրբազան պերճախօսն կ'առնու սուրբ գրքէն, ժողովոց վճիռնե-րէն, եկեղեցական պատմութենէ կամ՝ 'ի հարց եկեղե-ցւոյ. ատենական ճարտարախօսն՝ վկայից խօսքերէն, օրէնքներէն, սովորութիւններէն, վճիռներէն և կար-գադրութիւններէն. մատենագիրն, խմաստասէրն, պատ-մագիրն և ամէն տեսակ գրաւոր մարդիկ, յիշատա-կարաններէն, աւանդութիւններէն, և իրենց խօսած նիւթոյն վերաբերեալ հին ու նոր գրուածքներէն։ Ֆլէշիէ այսպէս կը սկսի Դիւրեանի դամբանական ճառը.

« Տխուր ենյոյժ ճառքս, ո՛վ տեարք, զորմէ բուռն հարեալս եմ, և զոր չկարեմ ասել 'ի սկզբանս այլով իւրք ճշդրտագոյնս յանդիման կացուցանել, բայց եթէ քաղելով զաղդոյ և զայսպարար բանսն, որովք վարին սուրբ գիրք առ 'ի գովել զկեանս և յողբալ զմահ և մասանոյն և քաջին Մակաբեայ։ . . .

« Այրն այն որ պաշտպանէր զքաղաքս Յուդայ, որ զհպարտութիւն որդւոցն Ամոնայ և Եսաւայ խոնարհե-ցուցանէր, որ գայրն ծանրացեալ աւարօք Սամարիայ, յետ զաստուածս ազգացն օտարաց զբաղնօք նոցա այ-րելոյ. այրն այն, զոր Աստուծոյ կարգեալ էր զԻսրա-յէլիս երբև զպատուար պղնձի, զորով այնքան նուագս խորտակեցան ամենայն զօրութիւնք Ասիոյ, և որ յետ զբաղմաձեռն բանակս պարտելոյ, և զխրոխտագոյն և զճարտարագոյն զօրավարս Ասորւոց յամօթ առնելոյ, գայր ամի ամի՝ երբև զդուշնաքեայ ոք այր քան զամե-նայն խրայելացիս, նորոգել յաղթող ձեռօքն զաւե-րակս սրբութեան, և բաց 'ի պատուոյ ծառայելոյն՝ չկամէր այլ վարձս ծառայութեանցն զոր մատուցանէր հայրենեաց. այրն այն քաջակորով՝ վանեալ յետոյ ուրեմն անյաղթ արութեամբ զԹշնամիս, զորս արկեալ էր 'ի փախուստ ամօթալից, ընկալաւ զհարուածն մահաւոր, և եկաց երբ թաղեալ յիւրումն յաղթութեան։ . . .

« Քրիստոնեայք, զորս հանդէս տխրական պաշտա-մանս ժողովէ աստանօր, ածիցէք արդեօք 'ի յուշ ձե-ռոցդ յիշատակաց զոր ինչ յառաջ քան զամիսս հինգ տեսէքդ և խմացարուք. ո՞չ զձեզ ինքն նկատիցէք յայլ-կածս անդ թշուառութեանն՝ զոր նկարագրեցի, և փո-խանակ քաջին՝ զորմէ խօսին գիրք, ո՞չ 'ի միտս ձեր տե-սանիցէք զայրն՝ զորմէ կայ ինձ ճառել։ Հանգուցա-տիպք են իրերաց երկոցունցն առաքինութիւնք և ա-ղէտք տառապանաց. և ոչ այլ ինչ այսօր պակասէ վերջ-նոյս՝ բայց եթէ ըստ արժանի նմին գովասանութիւն »։

Բեղիսսոն իւր 'ի ջատագովութիւն Քուգէի գրուա-ծոց մեկուն մէջ կ'ուզէ ապացուցանել թէ պէտք է միտ դատաստանական կարգերն երկիւղածութեամբ պա-հուին. և նախ կը յիշեցնէ Փոկիոնի դատաստանը, ինչ կերպով որ Պլուտարքոսի մէջ պատմուած է.

« Ո՛վ Աթենացիք, երաւմ՞քք արդեօք թէ յանիրաւի կամիցիք զմեզ մեռուցանել »։ Այսպէս սկսանէր զիւր և

զիւրոց բարեկամացն զպաշտպանութիւն այրն այն պատուաւոր քան զամենեսին յիւրումն ժամանակի և նախանձաւոր իւրոցն հայրենեաց, զոր դատապարտարարելին իբրև զմատնիչ, բայց յետ մահուանն անդրիս կանգնեցին նմա հրապարակաւ։ Այո՛ իրաւամբք, պատասխանեաց Ժողովն խռովայոյզ։ «Եթէ իրաւամբք վարել կամիցիք, կրկնեաց Փոկիոն, ապա չկարէք առնել ինչ առանց օրինաւոր կարգաց և առանց զմեր բանքս լսելոյ »։

« Այր ոք քաջալաւ համարձակեցաւ յոտն կալ և ասել՝ եթէ չէ արժան առնել ինչ՝ եթէ ոչ ըստ հանդիսական և սովորական կարգաց, և պարտ է զի որ բուն բնակքն իցեն՝ նոքա միայն թողցին 'ի տեսլարանին, և 'ի բաց հանցին օտարականքն և ստրուկք մուծեալք հակառակ օրինաց առ 'ի տալ զիւրեանցն վճիռ. այլ սակայն այրն այն բարի և Փոկիոն ինքնին չէղեն ինչ լսելի, և արդարութեան անուամբն 'ի բերանի, հատաւ վճիռ դատապարտութեանն՝ անիրաւ քան զամենայն »։

Եղիշէ այսպէս կը նմանաբանէ Ցազկերտ թագաւորին Հայոց նախարարներուն վրայ ունեցած սաստիկ բարկութիւնը.

« Իբրև զչարագէտ մի ոչ ևս դադարէր յուզել և շարժել զբուք ձմերայնոյն. որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալեկոծ խռովութեան. և ոչ դուշնաքեայ վեր 'ի վերոյ, այլ անդստին յանդընդոց բարձրանալ փրփրել կուտակել՝ վիշապաձայն որոտալով, գազանաբար գոչելով, առ հասարակ դողացուցանէր զտիեզերական իշխանութիւնն. որպէս փլեալ տարածանիցի համատարած ամենայն 'ի վերայ լերանց, խորոց, ձորոց, ապականել միանգամայն զայնութիւն դաշտացն վայելչութեան »։

Գեղեցիկ և բանաստեղծական կ'ըլլայ նմանութիւնը՝ նկարագրելով առաջ օրինակը Ճարտար ստորագրութեամբ, և վերջը նմանութեան նիւթը վրայ բերելով։

Ըստ այսմ Գրիգոր Նիւսացի մայրենի խնամարկութիւնը օրինակ կը բերէ Քրիստոսի առ ազգ մարդկան խնամարկութեանը.

«Որպէս մայր գիւեցուցանելով զտղայն, մինչդեռ տղայն է՝ փափկիկ և գիջին բերանոյն զկաթն պտկոնէ'ի ներքս 'ի բերանն դնէ. և ատամնաւորին և աճեցելոյն մատուցանէ զհացն. ոչ խիստ և անկազմ, զի մի քանցեսցի քերեալ խստաւ կերակրոնէ ընդացն փափկութիւն և անկրթութիւն. այլ իւրովք ատամամբքն մանեալ և ծաստեալ, չափաւոր և կշիռ զօրութեանն այնմ որ մատուցանէն արար։ Եւ ապա ըստ յաւելուածի զօրութեանն աճեցելոյ ընդելեալ'ի փափկագոյնսն հանդարտ հանդարտ տղայոյն, մատուցանէ զհաստատագոյն կերակուր։ Այսպէս զմարդկային զփոքրոգութիւնն՝ տէրն իբրև զտղայ ինն անկատար 'ի ձեռն հրաշիցն կերակրելով և դիւեցուցանելով »։

Ոսկեբերան շատ տեղ Ճարտար կը գործածէ այս ձևս. զոր օրինակ երբ Դաւթի անկմանէն ետև ըրած զղջումը նմանութեամբ կը ստորագրէ.

« Որպէս որ 'ի Ճակատու ուրեք և 'ի պատերազմի յախոյանէ սուր արդեանց 'ի սիրտ առնուցու, և կամ թէ 'ի լեարդն նետիւ խոցիցի, և 'ի վերայ առաջնոյն միւս ևս այլ ազդոյ վերս առնուցու, և յարեան և յապաժոյժ ամենևին իրացն կայցէ, և պատսպարիցի վաղվաղակի, նիզակ առեալ, և զայն որ նետիւ խոցեաց սպանանիցէ, և մեռեալ'ի դաշտի ուրեք ընկենուցու, նոյնպէս և այրն. որչափ և սաստիկ զվերքն ասիցեն, նոյնչափ զարմանալի զոգիս վիրաւորին ցուցանեն. զի խրախուսեաց յետ սաստիկ մեղայն յառնել՝ և կալ ընդդէմ Ճակատուն, պատսպարել, և ընկենուլ զախոյեանն՝ յորմէ խոցեցաւ »։

Դարձեալ ուրիշ տեղ ասանկ նմանութիւն մը կ'ընէ.

« Զտեսանեն և զմարմնոց խսկ զաչս. յորժամ հանապազ ընդ ծուխս գայցեն, արտօսր բերեն. և յորժամ'ի

խաղաղ օդս և 'ի մարդս և յաղբիւրս և 'ի դրախտս զբօսնուցուն, առողջագոյնք և քաջատեսք։ Նոյնպէս և մնացն ակն եթէ յեղուիւրս հոգևոր բանիցն Ճարակիցի, սուրբ, յստակ և քաջատես լինի. իսկ եթէ ընդ ծուխս ինչ աշխարհի իրացս գայցէ, բժաբեր արտօսրալից լինիցի, և զազգի ազգի լալիւնս լայցէ, և ասա և անդ »։

Դարձեալ Յոսկեբերանէ.

« Եւ արդ ազէ ասա. Ճարտարախօսն ոչ զվերջին բանն փուրթայ առաւել յօրինել, զի գովեալ դրուատեալ մեկնիցի։ Եւ սպասաւորն վերջին նուագաց կարի պատկառ կայ, զի մի պարսաւ լիցի։ Եւ նահատակն եթէ ոչ զվերջին մարտն առաքինագոյն ցուցանիցէ, ոչ ապաքէն ամենայն աշխատութիւնն անօգուտ է։ Եւ նաւավարն եթէ յամենայն ծովուն զգուշանայցէ, և մօտ 'ի նաւահանգիստն խրիցէ զնաւն կամ բախիցէ, ոչ ապաքէն զառաջին վաստակն կորոյս։ Եւ բժիշկն եթէ թեթևացուցանիցէ զցաւ հիւանդին, և յորժամ մօտ 'ի կատարեալ առողջութիւն ածիցէ, յայնժամ զեղծցի, ոչ ապաքէն զամենայն ջանն կորոյս։ Այնպէս և որ զառաքինութեան կատարումն ընդ սկզբանն ոչ միաբանեն, եղծանին և կորուսանեն զամենայն։ Նոյն և 'ի կառամարտիկսն, որք 'ի գլխոյ ասպարիզացն սնդաւկազմ զերիվարսն արձակեն, և յետոյ մեղկիցին ինչ և ծուլանայցեն, ոչ պարգևացն հասանեն, և ոչ 'ի տերանցն Ճանաչին »։

Սարգիս պէս պէս բաղդատութեամբք այս աշխարհիս փառաց ունայնութիւնը կը ցուցնէ այսպէս.

« Եւ արդ մեք զայսոսիկ տիրապէս գիտելով, մի զարմացուք ընդ փառս ծաղկընկէցս, և մի երանեսցուք մեծատանցն. զի ոչ միայն քան զծաղիկ խոտոյ դիւրաթառամ են փառք նոցա, այլ քան զսարդի ոստայն և անարգագոյն, իբրև զստուեր, և իբրև զերազ են կեանք նոցա. զի գոյ հաւատալ հրոյ 'ի վերայ ջուրց, քան նոցա 'ի վերայ նոցին։ Այնքան արագավախճանք են և

դիւրաքնքնելիք, մինչ զի և քան զսղղակս անձրևի արագագոյնս պատառին և անյայտին »։

Համբրոնացին այսպէս կը ձեռնարկէ ընդդէմ աբեղայից Զորոյ գեղոյն.

« Ոչ է այս արութիւն զինուորի՝ յիւր ապարանս թուր շողացուցանել և զօդ հարկանել, այլ որ 'ի հանդիսի տեղին ինքնէ և ընդդէմ ախոյանին կայ։ Նոյնպէս իմա, զի չէ ուղիղ մարտ հոգևոր, որ 'ի Զորոյ գեղեղեստի և զիս 'ի Կիլիկիա յաչաղէ »։

Ասանկ նմանութեամբ մը կը ցուցընէ Սարգիս մեղաւորին անմտութիւնը որ իր մեղացը վրայ չողբար.

« Ո՞վ ոք այնպէս անագորոյն լիցէ, որ զմերձաւոր ապրեան իւրոյ զհարազատ եղբայր կամ զորդի կամ զհայր տեսանիցէ մեռեալ, և ոչ ձիչ բառնայցէ և ընդ արտասուս ցնդիցի, ոչ զհերս խլիցէ և զձակատ հարկանիցէ և 'ի թուխս համակիցի։ Իսկ մեք ոչ զեղբարս կամ զորդիս կամ զհայր տեսանեմք մեռեալ, այլ զանձինս մեր, որ քան զամենեսեան զնոսա մերձաւոր է մեր, ոչ աղաղակեմք և ոչ արտասուեմք, ոչ զհերս խլեմք և ոչ զձակատ հարկանեմք և ոչ 'ի թուխս համակիմք »։

Յաղագս Ներհակութեանց.

Ընդլայնման մէկ վերջին հնարք մ'ալ է, այն իրին հակառակ, որուն վրայ որ կը խօսուի, այնպիսի բաներ գտնել՝ որ անկէց շատ կամ նուազ կը տարբերին։ Այսպէս շատ անգամ օտար հանգամանքներով իրի մը սահմանն տալով, անոր ինչ ըլլալը կը հասկցնենք, կամ գէթ մոքերը բուն իսկ սահմանն ըմբռնելու կը պատրաստենք։ Ցլէշիէ, ուզելով Դեկլեի բնաւորութիւնն Ճշդիւն կերպով նկարագրել, ոչ այնչափ գիւանա-

դպրին սեփհական կատարելութեանցն, որչափ անոր չունեցած թերութեանցը վրայ կը խօսի.

« Զվարուցն քաղաքավարութիւն և զկարգ գործառնութեանցն ոչ ինչ այլայլեցին զուարճութիւնք։ Ի դեղմոացն և 'ի նախանձն արդարութեան յաւել նա զհանապազորդութիւն 'ի վաստակս, և խոտեաց զդատարկանձն ոգիս, որք ոչ այլով պատրաստութեամբ 'ի պաշտամունսն հասանեն՝ բայց թէ միայն ցանկութեամբն առ նոսին. որք զիւրեանց փառս հաստատեն 'ի ժառանգել և ոչ 'ի կատարել զնոսին. որք առանց ինչ ընտրողութեան յայնս զինքեանս արկանեն, և կան մնան 'ի նոսին առանց ինչ արժանեաց, և գնոց առնուն զընդունայն պատիւս զբաղմանց և աւագութեան, 'ի հաճել ևեթ զհպարտութիւն իւրեանց և մեծարդի զիւրեանց ծուլութիւնն կացուցանել»։

Ինչ մը անդին՝ ճարտարախօսն նոյն հնարքը կը բանեցընէ, Դելիլի բախտին արագ յաջողութեանն դաղափար մը տալու համար.

« Աստանօր ոչ է տեսանել զեղակարծ բարձրութիւնսն յորս է երբեք զի հպատակացն յաջողաբախտ պատուասիրութիւն և կամ իշխանացն զաչացու պարգևքն ամբառնան զմարդիկ. 'ի բաց տար և զանխորհուրդն անհամբերութիւն բազմաց 'ի պատանեաց, որք 'ի պաշտամունսն զորս չունին քան յորս ունին՝ պատաղին առաւել, որք 'ի կարգէ ժամանակին և յուղղադատ մըտաց 'ի բաց վազեն, զի խուճապաւ յառաջին ասպիճանս առեալ վերանալ կարիցեն, որպէս այն թէ զպատիւ առանց աշխատութեան և զիմաստութիւն առանց փորձոյ ստանալ մտրթիցի »։

Այս ձեւով կը ձեռնարկէ Եղիշէ 'ի խրատն Մանձանց.

« Եւ արդ ես տեսանեմ 'ի մերում աշխարհիս և ոչ զրք ազատեալ յայսպիսի աղէտից. յետս ընդդէմ ընթերցաք զդէղեցիկ գրեալսն. 'ի պատճառս ուխտաւորութեան հեռացաք 'ի սուրբ ծնողացն, և արարաք

քաղաքամ հարս օտարոտիս. զորս պատուէլոյ արժանի էր՝ անարգեցաք, և յորս ոչն ունէաք իշխանութիւն դնել մեծարանս, զխատ աղէտից մերոց յոյժ ծախեցաք։ Աղաւոցաք 'ի հարկաց արքունի՝ զորս առանց մեղաց էր հարկիչն, և մոաք ընդ հարկաւ ստացուածոց՝ որ լի են անառակ ագահութեամբ։ . . . Կոչիկք ոտից մերոց յանդիմանեն զմեզ՝ եթէ ոչ են սուրբք ճանապարհք մեր։ Հանդերձք մեր աղաղակեն զգործոց ձեռաց մերոց՝ եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուցն։ Երիվարք մեր ցուցանեն զմեզ եթէ ոչ եմք յափշտակելոց ընդ առաջ Տեառն 'ի վերայ օդոց։ Շենուածք ապարանից մերոց յայտ առնեն՝ եթէ ոչ ունիմք մեք տաճար առանց ձեռագործի յերկինս, յոր մտանելոց են ամենայն դաք սոսկացելոցն յերկրաւոր ախտից։ Կալուածք անդաստանաց մերոց կշտամբեն զմեզ՝ եթէ չիք մեր բաժին 'ի վիճակս երկնաւորս։ Մրդուղք անյագք եղաք 'ի կերակուրս, և առանց չափոյ արբաք գինի պղտորիչ խորհրդոց և մտաց։ Խոր 'ի քուն ննջեմք ամենեքեան, և երազ թուի մեզ ճշմարտութիւնն։ Կափուցեալ են աչք մտաց մերոց 'ի տեսական խորհրդոց, և անյագ պագչտեալ՝ հայեմք 'ի կեանս աշխարհիս։ Արդեւեալ զլսելիս 'ի սուրբ ընթերցուածոց, և ունկնդիր եմք բառաչման խաչանց մերոց։ Ոչ եկն մեզ հոտ անոյշ 'ի Հոգւոյն սրբոյ, վասն զի սիրեցաք մեք զիւղ ախտալից աշխարհիս։ Ոչ ճաշակեցին քիմք ոգւոց մերոց զկերակուր երկնային, վասն զի պարարեցաք զանձինս մեր 'ի զանազան խորտիկս։ Մուրթ է գոյն դիմաց մերոց, վասն զի ոչ զուարթացան երեսք մեր 'ի խորհուրդս սրբութեան։ Ցաւալից են անդամք մարմնոց մերոց, վասն զի յառաջ քան զմարմինս՝ զոգիս ախտացուցաք։ Գերեզմանաց բուելոց նմանեցաք յանձինս մեր, վասն զի ունայն եմք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն։ Վասն այսորիկ և ամենայն չարիք եկին հասին յաւուրս մեր »։

Ըստ այսմ և Լամբրոնացին կը հեռացընէ թէ սէր չունին անոնք որ սիրոյ հակառակ գործեր կը ցուցընեն.

«Եւ ահա զի սէր ոչ նախանձի, ամենալութեան օրէնքք վարժեալքս նախանձեցաք. սէրն ոչ դրդռի, մեք զօրհանապազ երկնեցաք և երկնեմք առ միմեանս զչարութիւն. սէր ոչ նախանձի, մեք նախանձելով յաչաղեմք զորս առ միմեանս ուղղութիւն. սէր ոչ խնդրէ զիւրն, իսկ մեք ոչ թէ միայն խնդրեմք, այլ անիրաւութեամբ զընկենումք զիրաւունս իրերաց և զմերն կացուցանեմք. վերջացեալք 'ի խաղաղութենէ, ոչ ջանամք զյանցանս միմեանց բժշկել, այլ վերս 'ի վերայ վիրաց կուտեալ, և իւրաքանչիւրոց յաղթօղ և արդար երևեալ»:

Ընդլայնման այլ և այլ կերպերն՝ որոնց վրայ որ խօսեցանք, հին հռետորք ընդհանուր պեղիւ կամ պարզապէս պեղիւ կը կոչեն, և երկու մասն կը բաժնեն. որ են՝ նէրֆին պեղիւ և արդարին պեղիւ. առաջիններն՝ նիւթոյն մէջ կը գտնուին. իսկ երկրորդներն՝ նիւթէն դուրս են և անոր հետքէն շատ ուղղակի յարաբերութիւն ունին:

Բ.

Կիրք.

Նիւթոյ մը մէջ ինչ որ սահմանելու, ստորագրելու կամ պատմելու բաներ կան՝ զանոնք գտնելէն ետև, պէտք է կիրք շարժող մասերն փնտռել:

Կիրքերն՝ զգացմունքներ են, որոնք առանց մեր ուզելուն մեր հոգւոյն վրայ կը ներգործեն: Եթէ անոր առջևն եկող առարկայքն իրեն ախորժելի կամ օգտակար երևան, անոնց կը յարուի, ետևնէն կ'երթայ և կը սիրէ զանոնք. ասկից յառաջ կուգայ փափաքն, յոյսն

ու սէրն, իսկ եթէ առարկայքն իրեն անախորժ ու վնասակար երևան, կը հեռանայ անոնցմէ, կը փախչի և կ'ատէ զանոնք. ասկից յառաջ կուգայ խորշումն, երկիւղ ու ատելութիւն: Ամենայն կիրք այս տարբերքներով կը ձևանան, որոնք շատ մը զանազան կերպեր կ'առնուն:

Բուռն կրից յուզմունքն որ մեր վրայ գրեթէ անդիմադրելի ազդեցութիւն մը կ'ընեն և երբեմն մեր կամացը դէմ զմեզ կը յափշտակեն, յայտնի է որ խօսող կամ գրող անձանց ձեռքը զօրաւոր միջոց մը կուտան՝ մարդկանց վրայ ներգործելու. բայց որչափ այդ միջոցը զօրաւոր է, նոյնչափ ալ պէտք է գիտնալ անոր գործածութիւնն կանոնաւորել:

Կիրքերն, որ ուրիշ բան չեն բայց եթէ սէր ախորժելեաց և ատելութիւն անախորժ իրաց, անդադար զմեզ կը մղեն առաջիններն փնտռտելու և երկրորդներն փախչելու. բայց շատ անգամ արդելքի մը կը հանդիպին, և այս արդելքն՝ արդարութեան զգացումն և պարտուց օրէնքն է: Կիրքերն միշտ չեն հպատակիր այս սրբազան ձայնին. և շատ անգամ զմեզ կը դրդեն մեր նմանեաց շահն մեր առանձնական շահուն զոհելու. այն ատեն մեղանչական կերպարանք կ'առնուն, և յանցաւոր կ'ըլլայ այն Ճարտարախօսն կամ մատենագիրն որ զանոնք իրեն թիկունք կ'առնու:

Ամեն անգամ որ անձնական շահն և պարտքն իրարու հետ կը պատերազմին, մարդ իր ազատութեամբն այս երկու կողմէն հաւասարապէս դրդող կրկին ազդեցութեանց մէջ կեցած, պարտաւորութիւն մը կը զգայ իր շահն զոհելով՝ պարտուց հնազանդելու: Բայց երբեմն նաև այս երկու պատճառներն կը միանան, և իրր միատեղ ներգործելով, մեր հոգւոյն մէջ օրինաւոր խղճեր և վեհանձն կրքեր կը զարթուցանեն, որոնց կրնանք հետևել առանց խղճելու: Այս կրից կարգէն են մեր մէջ իւր որդւոցն համար զգացած սէրն, այն մեծարանաց

խանդաղատանքն՝ որ մեզի կեանք տուող անձանց հա-
մար կ'ունենանք, այն սիրալիր գորովը որ նոյն արիւնէ
յառաջ եկած և նոյն կաթամբ սնած տղայքն սրտով կը
միացնէ, բարեկամութիւնն՝ որ զմեզ ցկեանս կապող
սրբազան դաշինք մըն է. արդար բարկութիւնն՝ որ ա-
նարգ և շահախնդիր գործ մը տեսնելով՝ սրտերնուս
մէջ կը վառի. մարդասիրական գթութիւնն, զոր թշուա-
ռութիւնն մեզի կ'ազդէ, և այն եռանդեան բորբոքումն
որով սրտերնիս կը բաբախէ, երբ մեծ անձնանուիրա-
կան կամ դիւցազնական գործ մը կը լսենք: Այն ատեն
բովանդակ մեր էութեան մասանցը մէջ կատարեալ հա-
մաձայնութիւն մը կը տիրէ, և եթէ ուզենանք քննել
թէ արդեօք ուղիղ բանն է որ մեզի կը խօսի, թէ կիրքն
զմեզ կը յափշտակէ կը տանի, կը տեսնենք որ կրից
նման աղդոյ և արծարծուն՝ ուղիղ բանն, և ուղիղ բանին
նման հանդարտ և յստակ կիրքն միանդամայն կը ներգոր-
ծեն, և մեր ամենէն սրբազան պարտքերն, մեզի համար
ամենէն քաղցր վայելքն կ'ըլլան, և բովանդակ մեր անձն
կանոնաւոր վիճակի մէջ կ'ըլլայ: Երանի՜ այն ճարտա-
րախօսին կամ մտաւորին որ այս ուղիղ բանին վրայ
հիմնեալ զգացմանց տէր կ'ըլլայ: Իւր խօսքերն, զորոնք
անձնասիրութենէ առաջ եկող կրից դէմ իբրև զէնք
պիտի գործածէ, պէտք է որ բարոյական օրինաց ար-
դար սեպած կրիւքն արծարծեալ ըլլան, որոնցմով կըր-
նայ կայծակնահար ընել ինչ որ իրեն դէմ կը կենայ, և
ուզած բանին կը համոզէ զմարդիկ, և այն հաղարաւոր
անձինքն, որ լռութեամբ իւր չորս կողմը կը խունին,
կամ աչքերնին անոր դրած էջերուն վրայ կը դարձնեն,
իրմով միայն կ'ապրին, և միայն անոր հոգին կը զգենուն:

Պէտք է որ պատանիք սովորին այսպիսի յստակ և
արդասաւոր աղբերէ մը իրենց մտաց սնունդն մատա-
կարարելու: Իրենց հոգին, քանի որ թշուառութեան
դատնութիւնն դեռ չէ զգացած, և քանի որ անձնասի-
րութեան ինչոլին դեռ չէ թառամած, բնականապէս

բաց է ամէն ազնուական և անշահասէր զգացմանց, զո-
րոնք պէտք է առաջին շարագրածներնուն մէջ երևցնեն,
և իրենց մանկական հանճարոյն ճաշակացը մէջ ցուցը-
նեն թէ ինչպէս հօրերնուն վրայ սէր ունին, և թէ ինչ-
պէս օր մը զաւակին պիտի սիրեն: Իրենց դեռ անկա-
տար գրուածքներն կարդացողն պէտք է նշմարէ թէ
սրտերնին սկսած է զգալ մտերմական անբակտելի սէրն,
որ վարժատանց մէջ կը սկսի և մահուամբ միայն կը վեր-
ջանայ: Պէտք է որ շատ անգամ վերհանձն սրտի եռան-
դագին խօսքեր մը, և ոչ թէ իրենց կարդացած գրքե-
րէն, այլ բուն սրտերնէն բխած զուրցուածք մը իրենց
վարժապետին աչքէն արցունք կաթեցնեն: Որչափ որ
ալ փաստից հաստատութեան և ոճոյ կատարելութեան
ուշ դնելու են, սակայն պէտք չէ ալ երբեք մոռնան որ
ուղիղ դատման հետ միացած և անով ոյժ առած սրտա-
շարժ խօսուածքն ամենէն աւելի համոզիչ լեզուն և յա-
փշտակիչ ճարտասանութիւնն է:

Դրած սկզբունքներս օրինակով մը հաստատելու, և
ճառի մը մէջ կրից բովանդակ կարևորութիւնն զգալի
ընել տալու համար, Աւլոս Գելլոս անունով հին հեղի-
նակէ մը հատուած մը յառաջ բերենք որուն մէջ հե-
տաքրքրական բաղդատութիւն մը կայ ընդ մէջ Կ.
Գրակքոսի և Կիկերոնի, որոնք նման նիւթոյ մը վրայ
իրարմէ շատ տարբեր կերպով խօսած են.

« Կայիոս Գրակքոս համարի ճարտարախօս հզօր յոյժ
և կորովաբան. ոչ ոք զձիրսդ զայդ զանայ նմա. իսկ թէ
նորայն ճարտարախօսութիւն առաւել առնացի և ե-
ռանդուն և ճոխագոյն քան զԿիկերոնին յաչս ոմանց
գտանիցի, զայդ ոչ ոք տանել կարասցէ: Ոչ սակաւ ժա-
մանակք են զի ընթեռնուի զճառն Կ. Գրակքոսի որ
յաղագս օրինացն հրապարակելոյ: Հնարի ճարտարա-
խօսն գրդռեալ զցասումն ամբոխին ընդ պատուհաս Մ.
Մարիոսի և այլոց նշանաւոր քաղաքացւոց դաւաղա-
նաւ հարելոց 'ի հրամանէ պաշտօնեիցն հռովմայեցւոց:
Աւասիկ զնարդ զգործն առաջի առնէ.

« Ի վերջին աւուրսն եկն բդեաշխն 'ի Տէտանոմ։ Կին նորա ասաց թէ կամիր գնալ 'ի բաղանիս արանց։ Մարիոս յանձն արար դանձապետի քաղաքին՝ տալ հանել 'ի բաղանեացն զամենեսին որք անդն գտանէին։ Կին բդեշխին բողոք առ այր իւր կալաւ թէ դանդաղեցան արքն բանալնմա զմուտս բաղանեացն և թէ չեգիտ զայն քաջ մաքրեալ։ Զոզ մի կանգնեցաւ 'ի հասարակաց հրապարակին, և ածաւ անդր Մարիոս, այրն աղնուական քան զամենայն արս քաղաքին։ Հանդերձք իւր 'ի բաց առան 'ի նմանէ, և հարաւնա գաւազանօք։ Ի լուր համբաւին, ընակիչք Կալեսի արգելին յայտնապէս չերթալ ուստիք 'ի բաղանիս, յորժամ ատենապետն հռովմայեցի 'ի քաղաքին լինիցի։ Ի սոյն իսկ պատճառս կուսակալն մեր եւ հրաման ձերբակալ առնել զերկոսին դանձապետսն Փերենտինոսի, յորոց մին էարկ զանձն 'ի բարձուէ որմոյ, միւսն ըմբռնեցաւ և ձաղեցաւ գաւազանօք »։

« Ո՞ւր իցեն 'ի Ճառադ, յորում զանազորոյն ոճրագործութիւնքն են բանք, և յորում առաջի կայր Ճարտարապետն առնել աւ ժողովուրդն զախուր և զցաւագին յայտնութիւն հրապարակատեսս եղերան. ո՞ւր իցեն աշխոյժ ասացուածք պերճախօսութեան՝ որոց իրաւամբք, ակն ունել արժան էր մեզ։ Ո՞ւր ատելութիւնն այն զոր պարտն էր յարուցանել ընդդէմ այնորիկ որ գործեաց զանգթութիւնսն զայնոսիկ։ Ո՞ւր են ուրեմն սրտառուչ հեծութիւնք և կսկծեցուցիչ ձայնք կարեկցութեան, որոց պարտ էր թափ 'ի հոգիս մեր անցանել։ Տեսանեմ 'ի դմա զհամառօտութիւն և զլռութիւն, և զաղդ իմն վայելչազարդ խօսիցս։ այդոքիկ և 'ի զուարթ զրուցատրութիւնս կատակերգութեանց գտանին։

« Նոյն ինքն Գրակքոս ասէ այլուր։ « Օրինակ մի ցուցէք քեզ յոր անչափութիւն զուռածանին այժմիկ երիտասարդք։ Քանի մի ամք են զի տեղակալութեան պաշտամամբ առաքեցաւ Ասիա այր ոմն երիտասարդ, որ

'ի ժամանակի ուղեղնացութեանն չև էր առեալ տակաւին զպատուոյն իշխանութիւն։ Տանէին զնա դեսպակաւ. անդէորդ ոք 'ի Վենուսեայ դիսկեցաւ յանցս նորա, և ոչ գիտելով թէ զնա ինքն այդպէս բարձեալ տանէին, եհարց ընդ կատակս թէ արդեօք մեռեա՞լ էր զոր տանէին։ Լուաւ երիտասարդն զհարցումն. կացոյց զդեսպակ իւր և ետ հարկանել զանդէորդն սամտեօքն որով 'ի վեր զդեսպակն ունէին, մինչև անշնչանալնմա 'ի հարուածոց անտի »։ Յայդոսիկ բանսդ որ յաղագս այնպիսի անագորոյն բռնութեան՝ չիք ինչ խօսիր 'ի հանապազորդեան խօսից։

« Բայց լուր Կիկերոնի, յորժամ քաղաքացիք Հռովմայ, յորժամ անպարտ քաղաքացիք, ընդդէմ իրաւանց ազգաց և օրինաց հարկանիցին գաւազանօք կամ վերջին պատուհասսն մատնիցին, զորպիսի ոգբս հարկանէ. որպէս զգաղանութիւնսն զայնոսիկ գիտէ աշխարել։ Ի՛բր զբովանդակ տեսարանն ողջոյն առաջի աչաց մերոց արկանէ, որպիսի զայրոյթ և ատելութիւն 'ի խորս սրտից զարթուցանէ։ Յայդ ընթերցումն՝ պատկեր տանջանացն պաշարէ զիս յամենուստ, և յողբական ձայնիցն և յաշխարանաց ականջք իմ ընուն։ Ա՛յդպիսի ներգործէ յիս ազդեցութիւն առաջիկայդ դրուագ, զոր նշանագրեցի որպէս ինչ մարթէրն 'ի պահուս. և որքանյիշատակ մոռացս գիտաց ինձ հայթայթել։

« Վերբէս, ասէ, 'ի հրապարակ անդր եկն անձամբ, շամբշեալ մոլեգնութեամբ և զոճիր չարութեան 'ի դէմսն բերեալ։ Յաչացն կայծակունք հատանէին, և 'ի բովանդակ կերպարանսն նկարեալ էր անգթութիւն։ Ամենայն ոք սպասեալ մեայր լռութեամբ թէ ընդ ո՞ր ուրեք զքայլսն տանիցի նա, կամ զինչ գործեսցէ։ . . . Հրաման տայ, և անդէն զայր ոմն ընդ քարշածեն 'ի հրապարակն հասարակաց, մերկացուցանեն և կապեն զնա, և գաւազանքն պատրաստին »։ Ի վերջին բանքս այնպիսի իմն է ազդեցութիւն, և արկանեն սոս-

կուն այնպիսի, զի ոչ թէ զպատմութիւն ասէ ոք, այլ հանդիսի իրիք տեսլեան լինի ականատես։

Իսկ Գրակքոս չոայ ինչ ցոյցս բողոք հարկանելոյ, և զզայրոյթ ամբոխին 'ի նպաստ կարդալոյ, այլ պատմէ միայն։ «Զող մի, ասէ, կանգնեցաւ 'ի հասարակաց հրապարակին, և դատապարտեալն 'ի հանդերձից իւրոց մերկացեալ, ձաղեցաւ գաւազանօք։» Զասէ Կիկերոն. «Ձաղեցաւ գաւազանօք», այլ զտանջանս պատուհասի եղկելոյն առաջի աչաց մերոց յերկարեալ, այսպէս գոչէ. «Հարկանէին գաւազանօք 'ի հրապարակի անդ Մեսինայ զքաղաքացի զոք Հռովմայեցի։ Զուառականն 'ի խոշտանգանս անդ զորս կրէր, և 'ի հարուածսն որ զմարմնոյն Թնդային, ոչ զայլ աղաղակ արձակէր և ոչ զայլ հարկանէր բողոք, բայց զայս միայն. Քաղաքացի եմ Հռովմայ։ Կարծէր նա զի զանունն զայն յիշեցուցեալ 'ի բաց զհարուածսն դարձուցանիցէ, և 'ի բոլոր տանջանացն զերծանիցէ։» Այլ տես քանի սաստկութեամբ Ճարտարախօսն անողորմ գազանութեանն յառնէ հակառակ. քանի ոխս ատելութեան կուտէ 'ի գլուխ Վէրրեսի. որպէս դարշութեան Հռովմայեցւոցն զհրեշն մատնէ, յորժամ գոչէ. «Ո՛վ քաղցր անուն ազատութեան. ո՛վ Հռովմայ քաղաքին օրէնք Նուիրականք, օրէնք Պորկեայ, և օրէնք Սեմպրոնեայ. ռամկապետական զօրութիւն, այնքան կարօտանօք ըղձացեալ, և յետոյ ուրեմն ժողովրդեանն այսրէն դարձուցեալ, արդ զի՞ եղև ձեզ։ Քաղաքացի ոք Հռովմայ, 'ի հռովմայական նահանգի, 'ի միջի անդ դաշնաւոր քաղաքի, հրամանաւ առն՝ որ Հռովմայ պարտականն էր զտապարսն և զնուրբս զորս տայր տանել առաջի, քաղաքացի ոք Հռովմայ կապեցաւ և ձաղեցաւ գաւազանօք 'ի հասարակաց հրապարակին։ Իսկ ո՞ւր թողից զկարոյկսն, զերկաթսն բոցակիզս և զբիւր տանջանսն հանապազօր 'ի տեսիլ ածեալս։ Այլ, եթէ աղիողորմ ձայն և սրտառուչ աղաղակք եղկելոյն չածէին զքեզ 'ի գութ, էիր

արժան հռովմայեցւոցն ամենեցուն որք պատուհասի նորա ականատեսքն էին, և լային ընդ նմա և հեծծէին՝ կրկին և սաղնոգ գալարել»։ (Գիշէր Ապրէնէանց, Գիրք Ժ)։

Հին հռետորք կը պատուիրէին Ճարտարախօսին իւր Ճառիցը կիրք տալ. կը յորդորէին նաև բարուց կամ բնաւորութեանց վրայօք խոր ուսումն ընել, համոզելու զօրաւոր միջոց մը համարելով զայն։ Արիստոտէլ ասոր վրայ խօսելու ատեն այն զանազան հասակաց աքանչելի նկարագրութիւնն ըրած է, որուն Որատիոս և Պուալոյ հետևեցան, բայց չի կրցան հաւասարիլ։

Մոլիէր իրեն անձինքներէն մէկուն ասանկ ըսել կուտայ։

Տեսանի յամենայն ինչ ձեր Էնոն և Բաֆոս։

Այս երկուքյունական բառերն կը նշանակեն Բարի և Չարի. երկրորդն նուազաս մտքով կը գործածուի, և կ'ըսուի այնպիսի ուռուցիկ զուրցուածքի մը համար, որով կը կարծեն ամենք սիրտ շարժել, բայց ըսածնին դժուարաւ կը հասկըցուի։

Գ.

Յաղագս Պատճառաբանութեան.

Ընդլայնման երրորդ եղանակն, որ է պատճառաբանութիւնն, ինչպիսի ոչ երևակայութիւնն զուարճացնել և ոչ կիրքերն գրգռել. իւր նպատակն է լուսաւորել և համոզել։ Արիստոտէլ իւր հռետորական գրոց մէջ՝ համոզելու արուեստին հիմն կը դնէ զարամաբանութիւն. և ըստ կարծեաց նոյն փիլիսոփային, պերճախօս ըլլալն՝ ապացուցանել գիտնալն է։ Եթէ տրամաբանութիւնն՝ բովանդակ ճարտասանութիւնն չէ,

չենք կրնար ժխտել որ անոր կարևոր մասերէն մէկն է. և շարադրութենէ առաջ նախապատրաստութիւն ընելու ժամանակ, պէտք է պատանիք մեծագոյն խնամքով խորունկ փնտռեն այն ամեն միջոցներն զոր երբենց նիւթն կրնայ պատճառաբանութեան ձեռքով երբենց հայթայթել:

Յաղագս Հաւաքաբանութեան.

Պատճառաբանութեան գլխաւոր հիմն պիտի ըլլայ առ հասարակ ամենուն ընդունելի եղած բանաւոր ճշմարտութիւն մը, կամ փորձով ճշմարտեալ առած մը, և կամ ներքին զգացմամբ կամ մարդկանց վկայութեամբն հաստատեալ մասնաւոր գործ մը: Այս գլխուն առաջին մասին մէջ իր մը ընդլայնելու ինչ զանազան միջոցներ որ յառաջ բերենք՝ կրնան ծառայել երբև հիմն պատճառաբանութեան: Այսպէս առենական ճարտարախօսն կրնայ 'ի նպաստ իւր դատին գործածել զթուարկութիւն մասանց, զհանգամանս, զնմանութիւնս, զներհականս, և այլն:

Պատճառաբանութեան սկզբունքն մէյմը դնելէն ետև, կ'աւելցուի երկրորդ առաջարկութիւն մ'ալ, որ նոյնպէս պէտք է ծանուցեալ ճշմարտութիւն մը կամ անժխտելի իր մը ըլլայ. և այս երկրորդ առաջարկութիւնս երբև միջոց մը կ'ըլլայ, որով դրուած սկզբունքէն երրորդ առաջարկութիւն մը կը հանուի: Օրինակի համար եթէ ուզենանք պատճառաբանութեամբ հաստատել այս ճշմարտութիւնս թէ « պէտք է մարդ գիտութեան ետևէ ըլլայ », կ'սկսինք այս սկզբունքն դնելով. « մարդս պէտք է իրեն օգտակար եղած բանին ետևէ ըլլայ ». վերջը կը հաստատենք այս երկրորդ առաջարկութիւնս. « գիտութիւնն օգտակար է մարդ-

դուն ». և այս երկրորդ առաջարկութիւնս կ'ըլլայ երբև միջնորդ մը որով այս ընդհանուր առածիս թէ « մարդս պէտք է իրեն օգտակար եղած բանին ետևէ ըլլայ », կ'անցնինք այս մասնական առածիս. « մարդս պէտք է գիտութեան ետևէ ըլլայ »: Այս երեք առաջարկութիւններէն առաջինն որ երբև գլխաւոր կէտ մըն է, կ'ըսուի մեծագոյն. երկրորդն, որ կը ծառայէ երբև միջնորդ, կ'ըսուի փոքրագոյն, և երրորդն՝ հետևութիւն. իսկ ամբողջն մէկտեղ, հաւաքաբանութիւն:

Այս սկզբունքս թէ, ինչ որ կենսաւոր է՝ կը մեռնի. Իսկ կրակն կենսաւոր չէ, Ուրեմն չմեռնիր, Եղիշէ այսպէս կը ձեռնարկէ ճարտասանական ձևով.

« Մեռանի այն՝ որ շնչէն և շարժի և գնայ և ուտէ և ըմպէ.

Ե՞րբ տեսեր դու զկրակ գնայուն կամ խօսուն կամ գիտուն.

Արդ զոր կենդանի քո չէ տեսեալ, մեռեա՞լ խոստովանիս »:

Ոսկեբերան՝ այս հաւաքաբանութիւնս, թէ Կեղծաւոր է այն՝ որուն գործերն իր խօսքերուն հակառակ են. Իսկ արդ դու ուրախութեան ամէն նշաններն կը կրես վրադ, մինչ Աստուծոյ առջև սգոյ ու տրամութեան մէջ ես՝ կ'ըսես.

Ուրեմն կեղծաւոր ես և կը ջանաս խաբել զԱստուած, — այսպէս կը կազմէ ճարտասանական ձևով.

« Զի՞նչ գործես. մատուցեալ Աստուծոյ աղօթս մատուցանես, և շուրջանակի կուռ յոսկի համակիս, 'ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով: Մի թէ 'ի կաքա՞ւ ենջանես, 'ի պա՞ռ անցանիցես, մի թէ 'ի հարսանի՞ս խնծղայցես, մի թէ 'ի գեղո՞ն յառնիցես և 'ի ցո՞յց շպարիցիս. անդ պիտոյ է ոսկին և մարգարիտն ընդելուզեալ, անդ հանդերձքն պաճուճեալք. անդէն զարդուցն ռայք և ժամանակ մենթանաց. անդ սեթևեթել, և անդէն պերևեթել. աստ չէ այնմ ժամանակ, և

ոչ պէտք ինչ այնպիսիք։ Պաղատել Եկիր, խնդրուածս մատուցանել, աղերս վասն մեղաց արկանել, ընդ յանցանացն եղծանալ, 'ի հաշտութիւն ածել զոտերն. զի՞ զարդարիցես զանձնդ, չէն այդպիսի կերպարանք խընդրուածոց։ Զի՞մրդ կարիցես հեծել, կամ՞ որպէս յոդւոց հանել և արտասուս արկանել, զի՞մրդ հաչելով հառաչելով զաղօթսն մատուցանիցես։ Յորժամ այդպիսի կերպարանս ունիցիս և արտասուիցես, ծաղը կայցես բազմաց և կատականք տեսողաց։ Զմարթի՛ յոսկի համակեալ և արտասուս արկանել. խաբէութիւն դործես, կեղծաւորութիւն ցուցանես։ Յորժամ 'ի նոյն մտաց, ուստի այնչափ պաճուճանք և զարդարանք ծնանին, և արտասուք ևս վիժիցեն, չէ՞ 'ի դեպ, չէ հաւատալի։ Ի բաց առ զայն կեղծաւորութիւն, քանզի չկարես զԱստուած խաբել. վարձակացն և կաքաւչացն են այնպիսի կերպարանք »։

Յաղագս Ապացուցուրեան.

Ո՛ր և իցէ պատճառաբանութեան մէջ հաւաքաբանութիւն կը մտնէ, բայց հաւաքաբանութեան կազմուածքն քիչ կամ շատ ծածկեալ է։ Իմաստասէրքը, որոնք միայն ապացուցանել կը նային, գրեթէ միշտ կը գործածեն զայն՝ առանց անոր բնական կազմութիւնն այլայլելու. իսկ ճարտարախօսք, որք կ'ուզեն ախորժելի ըլլալ փոփոխութեամբ և իրենց նպատակին հասնելու համար գործածած հնարքներն չերևցնել, շատ անգամ իրենց զարդարուն ղուրցուածքովն հաւաքաբանութիւնը կը ծածկեն. այսպիսի է Մասիլլեոնի՝ հոգւոյ անմահութեան վրայ գրած հետևեալ հատուածն.

« Այլ ամենայն էակք, գոհք ընդ պայմանն իւրեանց, երևին երջանիկք՝ ըստ իւրեանցն օրինի, 'ի վիճակին

յորում կարգեաց զնոսա հաստիչն բնութեան. աստեղք՝ անշարժք 'ի հաստատութեան, չթողուն ամենևին ըզկայս իւրեանց, զի երթեալ լուսաւորեսցեն զայլ իմն երկիր։ Երկիրս, կարգաւոր 'ի շարժմունս իւր, ոչ 'ի վեր 'ի բարձունս ձգտի՝ երթալ ունել զտեղի նոցա. կենդանիք ընդ դաշտս սողան, առանց ինչ բերելոյ նախանձ ընդ վիճակ մարդոյն՝ որ 'ի մեծապայծառ քաղաքս և յասպարանս բնակէ. թռչունք ընդ օդս զուարճանան, առանց ինչ ընդ միտ ածելոյ եթէ կայցեն 'ի վերայ երկրի արարածք երջանկագոյնք քան զնոսա։ Երանելի է ամենայն, թէ այդպէս ասել օրէն ինչ իցէ. ամենայն ինչ 'ի բնութեան՝ 'ի կարգի իւրում գտանի. մարդն միայն անհանգիստ է և դժգոհ. մարդն միայն նշաւակ կայ իւրոցն տենչանաց. քանզի զանձն 'ի շարակսկիծ կասկածանս երկիւղի. յակնկալութիւնսն անդ՝ զիւր զտանջանսն գտանէ. և 'ի ժամ վայելիցն կայ թախծեալ ողորմելի. մարդն միայն չգտանէ ինչ յերկրի, ուր սիրտ իւր բևեռեալ կայցէ։ Եւ ուստի՞ լինիցի այդ, ով մարդ. ոչ ապաքէն զի չես ստեղծեալ, զի վասն երկնից ես հաստատեալ, զի երկիր չէ հայրենիք քո, և քեզ ոչինչ է ամենայն որ չիցէ Աստուած »։

Այս գեղայարմար ընդլայնմունքս իր պարզ իմաստին վերածելով, հետագայ երեք նախադասութեանց մէջ կրնայ ամփոփուիլ. « Ամենայն արարածք կարգեալ են յերանութիւն. մարդն միայն չգտանէ զայն աստէն. ապա ուրեմն պարտի խնդրել զայն այլուր »։ Բայց ասկկայ փիլիսոփայական ձեռնարկութիւն մը միայն կ'ըլլայ. մինչդեռ Մասիլլեոն ճարտասանական ձեռնարկութիւն մը կը կազմէ յորում հաւասարապէս երեք նախադասութիւնքն ալ ընդլայնմամբ կը պարզէ։

Յաղագս Հնարից.

Շատ անգամ բանաստեղծն կամ ճարտասանն փոխանակ հաւաքաբանութիւնն ընդլայնելու, կը համառօտէ զայն և անոր առաջին կամ երկրորդ մասն կը զեղչէ։ Այսպիսի է Եղիշէի գործածած այս հնարքն.

« Մի է մայր մեր եկեղեցի, որ երկնեայն զմեզ, և մի է մայր մեր սուրբ Հոգին, որ ծնաւն զմեզ. զնաւրդ համահաւք և միոյ մօր որդիք՝ երկպառակք լինիցին և ոչ միաբանք »։ Փոխանակ ըսելու. Համահայր և համամայր որդիք եմք. ապա չէ պարտ մեզ հակառակ լինել միմեանց։

Դարձեալ. « Քարոզք էիք առաքելական զօրութեանն՝ արդ զտարբերս աստուածք խոստովանիք ». իբր թէ ըսէր. Ով որ արարչին քարոզ է՝ կ'երկրպագէ Աստուծոյ. արդ դուք արարչին քարոզք էիք, ինչո՞ւ ուրեմն զտարբերս աստուածք կը համարիք։

Տուղղիոս այսպիսի հնարիւք կը ձեռնարկէ առ Անտոնինոս. « Խաղաղութիւն խնդրէ Անտոնինոս. 'ի բաց գիցէ զզէնսն »։ Որպէս թէ ըսէր. Ո՛չ 'ի բաց դնէ Անտոնինոս զզէնսն. ապա ոչ խնդրէ զխաղաղութիւն։

Ոսկեբերան այս խմաստս՝ թէ 'ի Տէր ննջեցեալքն կը հանդչին, մանաւանդ թէ կը պակին. ապա ուրեմն պէտք չէ անոնց մահուանն համար տրամիլ, այսպէս ճարտասանաբար կը ձեռնարկէ.

« Այլ հեծէն միշտ միտք դառնապէս, եթէ յո՛ Եհան զմեզ Քրիստոս, և յո՛ ի՞ջուցաք մեք զանձինս, յորժամ տեսանիցեմք զկոծողս 'ի հրապարակս և զՃիչ և զաշխարանս 'ի վերայ մեռելոց, զիարդ խայտառակեն զանձինս ողբովք և կական բառնալով։ Թէ հաւատայք, ամաչեմ՝ 'ի հեթանոսաց և 'ի Հրեից և յայլ ազանդոց, և

յամենեցունց իսկ առ հասարակ. որ զայն տեսանեն, զմեզ ծաղր առնեն։ Եւ որչափ ասիցեմ այնուհետև, ընդ վայր ասեմ վասն յարութեան. և որչափ ճարտարիցեմ ինչ, ոչ ընդ իմ բանն հայեն հեթանոսք, այլ ընդ ձեր գործսն, և անդէն վազվազակի ասիցեն. Ո՞վ ոք 'ի սոցանէ կարիցէ զմահ արհամարհել, որ ոչ և զայլոց մահ կարիցէ տեսանել։ Բարւոք են բանքն որ 'ի Պաւղոսէ ասացան, բարւոք և երկնից արժանի և Աստուծոյ մարգասիրութեանն. Որ ապրեցուսցէ զայնոսիկ՝ որ հանապազ մահուն երկիւղիւ էին, և 'ի վտարանդի էին 'ի ծառայութեան։ Այլ չտոպք այնմ հաւատարիմ լինել դուք, որ գործովքդ մարանիք ընդ բանն. Թէպէտև Աստուած բազում անգամ արգել 'ի մարդկանէ, զի բառնայցէ 'ի միջոյ զայնպիսի չար սովորութիւնն։ Եւ արդ աղէ ասա. զի՞նչ յայտ առնիցեն կանթեղքն և մոմեղէնք լուցեալք. ո՞չ ապաքէն իբրև զնահատակս յուզարկեմք։ Զի՞նչ ինչ յայտ և օրհնութիւնքն առնիցեն. ո՞չ ապաքէն զԱստուած փառաւորեմք և գոհանամք՝ թէ այսուհետև պակեաց զշնացեալսն, և ազատեաց յաշխատութեանց, և հան յանյայտ աշխարհէ, առ իւր պահել զետեղ և անարատ։ Ոչ վասն այսորիկ են օրհնութիւնքն և սաղմոսիցն պէսպէս նուագքն. և այն ամենայն յուրախութենէ սրտիցն յայտ առնին. Ուրախ ոք լիցէ, ասէ, սաղմոս ասիցէ »։

Ասելի ողբերգութեան մէջ Աքիլլէս ուզելով Իփիգենեայ գլխուն գալիք վտանգին առջևն առնուլ, կ'ըսէ առ Ագամեմնոն.

« Ո՛հ, գիտակ եմ յոյժ բաղդին՝ զոր քո պահեալ է նըմա »։ Իսկ Ագամեմնոն կը պատասխանէ.

« Եւ ընդէ՞ր հարցանիցես, քանզի հըմուտ ես այնմիկ »։ Կատարեալ հաւաքաբանութիւն մը կազմելու համար՝ հարկ էր ըսել.

« Յորժամ գիտէ ինչ ոք, չհարցանէ զայն. արդ դու գիտակ ես իրացդ, ապա չպարտիս հարցանել զայն »։

Բայց Ագամեմնոն սաստիկ խռովեալ ըլլալով չի կրնար ըստ կարգի պատճառաբանել, և տրամաբանիչ հնարք կոչած ձեռնարկութիւնն կը գործածէ, այսինքն այնպիսի ձեռնարկութիւն մը որուն մէկ մասն զօրութեամբ կ'իմացուի։

Արիստոտէլ հնարքն՝ ճարտասանական հաւաքաբանութիւն կ'անուանէ. և այս ձևովս՝ ոչ թէ ճշգրիտ հետևութեան մը, այլ պարզ հաւանականութեան վրայ հիմնեալ պատճառաբանութիւն մը կ'իմանայ։

Ցաղագս Մակածութեան.

Երբոր շատ մը մասնաւոր հանդամանքներ մէկտեղ բերելու ըլլանք, անոնցմէ ընդհանուր հետևութիւն մը յառաջ բերելու համար, այդ պատճառաբանութիւնը կը կոչուի մակածութիւն։

Սարգիս՝ մակածութեամբ պէսպէս նմանութեանց՝ որբոյն Պետրոսի օգնութեանն կարօտ ըլլալն կը ցուցնէ, այսպէս.

« Սակայն որ հիւանդն է՝ զբժիշկն խնդրէ, և որ խաւարեալ՝ զլոյսն, մեռեալն՝ զկենդանութիւն. ծարաւին՝ զաղբիւր, և քաղցեալն՝ զկենացն հաց. աղքատն՝ զմեծութիւն, մերկն՝ զծածկոյթն, կապեալն՝ զարձակիչն, և գերին զգերեդարձն. մոլորեալն՝ զհովիւն, և կորուսեալն՝ զկնդրօղն. բեկեալն՝ զպատիչն, և վիրաւորն՝ զսպեղանին. նմանապէս և ես ամենայն ախտիւ ծիւրեալ, և ամենայն չարեօք մաշեալ, և ամենայն ցաւօք հիւծեալ, խնդրեմ զառաջնորդ, և աղաչեմ զսուրբդ Աստուծոյ »։

Նարեկացին փոխանակ ըսելու թէ չկայ մէկը որ կարենայ առանց առաջնորդի և օգնութեան բան մը գործել, ապա և ոչ ես առանց կամացն Աստուծոյ, ասանկ կը դարձընէ խօսքը.

« Զի ոչ երբեք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի, և ոչ նաև համբառնալ հանդէսս՝ առանց ուղղչի. և ոչ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի, և ոչ երկուորեակք լծոցն 'ի ճահ ճեմեսցեն՝ առանց եղողի. ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին կամ գումարին առանց ժամանակի, ոչ արեգակն փոխաբերեալ շրջանակի՝ առանց տարբրական օդոյ. և ոչ ես նոքօք հանդերձ, առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան»։

Ոսկեբերան Քրիստոսի ամենայն կանխասացութեանց լրմանէն զհետ կը բերէ և աշխարհիս կատարածին կանխասացութեան հանդերձեալ լրումը.

« Բաղումք ինչ յառաջագոյն ասաց Քրիստոս. և եթէ չէլ այն ամենայն 'ի գլուխ, մի հաւատայցես այլոցն ևս բանից. և եթէ ելին 'ի գլուխ և կատարեցան, ընդէր երկմտիցես 'ի մնացելոցն։ . . . Ասաց Քրիստոս եթէ Երուսաղէմ առցի, և այսպիսի աւերածով աւերեսցի. և ել 'ի գլուխ կանխասացութիւնն։ Ասաց եթէ եղիցի նեղութիւն մեծ, և եղև։ Ասաց թէ որպէս մանանիս սերմանի, այնպէս տարածեսցի քարոզութիւնն. և զնոյն տեսանեմք հանապազ ընդ ամենայն աշխարհ ընթացեալ։ Ասաց՝ եթէ ոք թողուցուն զհայր և զմայր կամ զեղբարս կամ զքոյր, ունիցին հարս և մարս. և զայն արդեամբք խսկ տեսանեմք կատարեալ։ Ասաց եթէ յաշխարհի ասա նեղութիւն հասանիցէ ձեզ, այլ քաջալերեցարուք, ես յաղթեցի աշխարհի, այսինքն է՝ թէ ոչ ոք իցէ որ ձեզ յաղթիցէ. և զայս արդեամբք խսկ տեսանեմք եղեալ 'ի գլուխ։ Ասաց եթէ դրունք դժոխոց ոչ յաղթահարիցեն զեկեղեցի, և այն զի 'ի հալածանս կայցէ, և ոչ ոք իցէ որ շինիցանիցէ զքարոզութիւն. վկայեաց և այսմ կանխասացութեան փորձ խսկ իրացն, թէպէտ և կարի առանց հաւանութեան երյորժամ զայս ասէր։ Ընդէր. զի ամենայն բանք էին, և չէ ևս հանդէս ցուցանէր բա-

նիցն. որպէս զի կարի խիստ հաւատալի եղև այժմ։ Ա-սաց՝ եթէ յորժամ քարոզէսցի աւետարանս ընդ ամենայն հեթանոսս, ապա եկեսցէ կատարած։ Ահաւասիկ այսուհետև մատ 'ի վախճան եկաք հասաք, քանզի 'ի մեծ մասն աշխարհիս քարոզեցաւ աւետարանն. այսուհետև ելն ելհաս կատարած, երկիցուք սիրելիք »։

Պիւֆոն կ'ուզէ ցուցընել թէ պէտք չէ վախնալ մահուընէ, երբ մէկն այնպէս լաւ ապրած է որ անկից ետև վախնալու բան մը չունի. կը սկսի նախ մասնաւոր դիտողութիւններէ առաջ եկած շատ մը հանգամանք մէջ բերել.« Ի բաց թողեալ զսակաւաթիւ ախտս սաստկակիցս, յորս տագնապն 'ի վերս երևեալ 'ի սարսռալից շարժմանց՝ յայտ իմն առնէ զցաւս ախտացելոցն, յայլսն յամենեսին մեռանի մարդ հանդարտաբար, հանգըստեամբ և առանց ցաւոց։ Յոլովագոյնք 'ի մարդկանէ վախճանին առանց այնմ զդաստ ինչ լինելոյ, և յոյժ սակաւք են որք մինչև ցշունչն յետին՝ զարթնութիւն մտացն պահիցեն։ Ի սակաւսն յայնոսիկ թերևս չիք և ոչ ոք՝ որ ոչ տածիցէ զյոյս, ոչ ակն ունիցի առ 'ի կեանս վերադարձի։ Ա՛ մարդոյն երջանկութիւն՝ սահմանեցաւ 'ի բնութենէ լինել աղդմանդ քան զբանն զօրաւորագոյն »։ Պիւֆոն այս հանգամանքներս դնելէ ետև, հետևեալ հաստատութիւնն յառաջ կը բերէ. « Ուրեմն ոչ այնքան ահաւոր ինչ է մահ, որքան նկատիցեմքս, և չէ ուղիղ դատաստանն արարեալ զայնմանէ 'ի հեռուստ. ցնորք իմն է այն, որ 'ի բացեայ կալով դողումն զմեզ արկանէ, և անհետ լինի՝ յորժամ մատագոյնս մերձենայցեմք առ նա »։

Յաղագս Յարացուցի.

Եթէ ժողովրդեան մը կամ հեղինակութիւն ունեցող անձի մը սեփհական մէկ կամ շատ մը մասնաւոր հանգամանքներ իբրև հաստատութիւն առնունք, այն ձեռնարկութիւնն կ'ըսուի Յարացոյց։ Ըստ այսմ Կիկերոն կը ցուցընէ թէ Միլոն իրաւամբք սպաննեց զԿլոդիոս, որ խռովայոյզ մարդ մըն էր. վասն զի նաև Սկիպիոն Նարկիսեան իրաւամբք սպաննեց զՏիբերիոս Գրակքոս, որ անոր պէս խռովայոյզ անձ մըն էր։

Նոյնպէս և Լամբրոնացին 'ի Յարացուցէ ձեռնարկելով՝ կը ցուցընէ թէ պէտք չէ չարի չար հատուցանել.

« Պողոս բամբասելոյն ընդդէմ՝ օրհնեաց. զհալածիչն յանձն առ, 'ի հայհոյելն՝ աղաչեաց, և այնպիսի մաղթանօք զոխերգերս աշակերտեաց. զքեզ հետևող նորին ո՞ ուսցոյց չարին չար հատուցանել »։

Այսպիսի է և Յարգսի այն յարացոյցն, որով Փրկչին զարմանալի մարդասիրութիւնն ընդլայնմամբ ցուցընելով, կը յորդորէ որ մենք ալ անոր նմանինք.

« Եւ արդ զի՞նչ է ինձ զծառայիցն 'ի համար բերել զնախատինս. զնորուն ասացից զՏեառն և զԱստուծոյն, եթէ ո՞րքան բարեգործեաց ապերախտ ժողովրդեանն, և նոքա նմա զընդդէմսն հատուցանէին, սամարացի և դիւահար կոչելով զնա, և աստուած հակառակ Աստուծոյ, և զամենայն անպատուութեան անուանս դնելովնմա։ Իսկ նա ոչ բարկանայր, և ոչ սաստէր հանել ընդ կառափն նոցա. և նոքա ևս քան զևս ժպըրհէին, կալեալ կապեալ յատեան ածէին, ընդ երեսն թքանէին, 'ի ծնօտն ապտակէին, առաջի դատաւորին աղաղակէին՝ ասելով. Եթէ չէր չարագործ՝ ոչ մատ-

նեաք զնա քեզ։ Փշովք պսակէին, քղամիդ զգեցուցա-
նէին, եղեգամբ ձաղէին, 'ի խաչն բևեռէին, քացախ
և լեղի արբուցանէին։ Եւ նա յայսքան անարգութիւնս
ոչ զայրանայր, և ոչ հուր ելուցանէր յերկնից այրել
զնոսա, որպէս զսոդովմայեցիսն. և կամ հրաման տալ
երկրի՝ բերան բանալ, և կլանել զնոսա որպէս զԴիադան
և զԱբիրոն. այլ 'ի խաչն պրկեալ կայր, և առ Հայր
վասն նոցա աղօթէր . . . Տեսէ՞ր զանոխակալութեան
օրինակդ. պատկառեա՛ յօրինակէդ։ Եթէ նորին ես ա-
շակերտ, զնորին ճանապարհն պարտիս գնալ, նորին
գթութեան նմանել, նորին քաղցրութեանն հաւասա-
րել, զնորին հեզութիւնն յանձին քում ստանալ օրի-
նակ »։

Այս ձևով Ոսկեբերան՝ Հրէից կրած պատիժներէն,
հաւատացելոց հանդերձեալ պատուհասը կը ցուցընէ.

« Զողայաբարոյն՝ որք ոչ այնչափ ինչ յանցեան՝ այն-
պիսի տանջեաց, և 'ի մեզ խնայիցէ՞. այլ էէ ինչ 'ի դէպ
այս։ Թէպէտև զնոյն մեղս զնոցայն մեղանչեմք, մեծա-
մեծ տանջանաց քան զնոսա արժանի եմք։ Ընդէ՞ր. զի
'ի բազում շնորհս իսկ վայելեալ, յորժամ աւելի ևս
մեծամեծ քան զնոցայն յանցանիցեմք, որպիսի՞ ինչ պա-
տիժս ոչ կրիցեմք։ . . . Կամիս և այլ ևս ինչ լսել, որ-
չափ ինչ վնաս 'ի պաղեստինացւոց աշխարհին կրե-
ցին, սով, սուր, պատերազմունս, գերութիւն, 'ի բա-
բելացւոցն, յասորեստանեացն, 'ի մակեդոնացւոց, և
անհնարին չարիս 'ի Հադրիանոսէ և 'ի Վեսպիսնո-
սէ։ . . . Կամիս և զայլոց ևս չարեաց նոցա ուսանել.
ընդ Յովսեփայ գերսն անց, և անտի ուսանիս զամե-
նայն աղէտս նոցա։ Եւ արդ հաւանեցուցա՞ք արդեօք
զձեզ յայսմ ամենայնի՝ եթէ դոյ դեհեն։ Զմտաւ ած, զի
թէ նոքա տանջեցան, մեք ընդէ՞ր չպատժիցիմք. կամ
զնո՞ւրդ չիցէ 'ի դէպ մեզ պատժել, որ սաստիկ քան զնո-
սա յանցանս յանցանեմք, եթէ յայս իսկ չէ՝ վասն զի
պահեալ կան մեզ պատիժքն »։

Ռուսոյ ուղելով ցուցընել թէ մենամարտութիւնն՝
մարդկային սրտի մէջ արմատ չունեցող թիւր սովորու-
թիւն մըն է, նախ և առաջ հին աղգաց պատմութենէն
օրինակներ յառաջ կը բերէ.

« Մինթէ առաքեաց ինչ Կեսար առ Կատոն, կամ Պոմ-
պէոս առ Կեսար զհրաւէր մենամարտի, յաղագս պէս
պէս առ իրեարս թշնամանաց. և մեծն քան զամենայն
զօրավարս Հելլենաց անարգեցաւ ինչ 'ի պատուոյն՝ զի
տարաւ սպառնալեաց գաւազանի »։ Ռուսոյ այս օրի-
նակներս գնելէն վերջը՝ այսպէս կը հետևցընէ. « Եթէ
քան զբնաւսն բարգաւաճեալ և արիացեալ և առաքի-
նացեալ աղինք ոչ ծանեան ամենևին զմենամարտ, ապա
ասեմ թէ էէ այդ օրէն ինչ պատուոյ, այլ ահագին ի-
մն և խժական նորաձևութիւն, արժանաւոր գազանու-
թեան որուամեկացն սկզբնապատճառք այնորիկ »։

Յաղագս աեձնական Զեռնարկութեան.

Եթէ անձի մը դէմ խօսելով անոր գործերէն, խօս-
քերէն և վնճակէն յարացոյց յառաջ կը բերուի, կ'ըն-
լայ այն անձնական ձեռնարկութիւն։ Երբ Հերմիոն,
Որեստի երեն հնազանդելուն վրայ կատղած, Պիւռոսի
սպանութեանն համար զինքը կը յանդիմանէ, Որեստ
ինքզինքը կ'արդարացընէ, անոր տուած հրամանն յիշե-
ցընելով.

. . . . Զիա՞րդ, ո՞չ դու իսկ ինքնին,
Ասացանոր, խուն մի յառաջ հրամայեցեր ըզմահիւր։

Յաղագս Երկսայրաբանութեան.

Մի և նոյն միտքն ունեցող երկու այլ և այլ ձեռնարկութեանց միաւորութիւն՝ երկսայրաբանութիւն կամ կրկնակի ձեռնարկութիւն մը կը կազմէ, որ իբրև երկսայրի տապար մը երկու կողմէն միանգամայն կը հարուածէ։ Զոր օրինակ. եթէ զնոյնորելու ըլլամ, կամ պատերազմի մէջ պիտի մտնեմ և կամ ոչ. եթէ մտնեմ, ահա յայտնի վտանգի մէջ զիս կը ձգեմ. եթէ չմտնեմ, թշնաւառ կեանք մը պիտի անցընեմ. վասն զի քաղաքաց և բերդից պահպանութեանն համար գիշեր ցորեկ հոս հոն պիտի թափառիմ. և այս ամէն բաներուն վրայ ողորմելի թոշակ մը պիտի առնում, որ հազիւ օրուան հացին համար բաւական պիտի ըլլայ. ուրեմն լաւ է չզինուորիլ։

Հռչակաւոր է Տերտուղիանոսի երկսայրաբանութիւնն առ Տրայիանոս կայսր, որ պատուէր տուած էր չքննել զքրիստոնեայս. իսկ եթէ յայտնուին, պատուհասել զնոսանք.

« Կամ մեղաւորք են քրիստոնեայքդ և կամ արդար. եթէ մեղաւոր, ընդէ՞ր արգելուս 'ի հարցափորձէ. իսկ եթէ արդար, հիմ դատապարտես »։

Այսպիսի երկսայրաբանութեամբ Սարդիս 'ի համբերութիւն կը յորդորէ զբամբասեալս.

« Եթէ որ բամբասեցն զքեզ՝ սուտ ասաց որքան ինչ միանգամ ասաց, զինչ առ քեզ ասացեալքն, ոչ ապաքէն 'ի նորա գլուխն կուտի ամբաստանութիւնն՝ որ բամբասեացն։ Ապա եթէ յիրաւի բամբասեցար, առ քեզ է գայթակղութիւնն՝ որով բամբասեցարն։ Ապա յերկոսին կողմանն չէ պարտ քեզ ընդդէմ ասել ինչ, և ոչ բամբասանացն փոխարէն բամբասել »։

Այսպէս և Ոսկեբերան ընդդէմ մուրողաց եղած բամբասանքն կը հերքէ, ցուցընելով որ թէպէտ մէկն իր հայրենի ժառանգութեամբն կամ իր աշխատութեամբն ապրի, պէտք չէ որ մուրողներն իբրև անգործ արհամարհէ, այլ ողորմի անոնց.

« Եւ երանի՛ թէ այսչափ միայն, այլ վաղվաղակի չարախօսութիւնք և բամբասանք յառաջ մատչին զմուրողէն։ Ընդէ՞ր չգործիցես, ասեն, և ընդէ՞ր դատարկ հաց ուտիցես։ . . . Աղէ ասա, դու՝ 'ի գործոյ ունիս զինչ ունիսդ. ոչ ապաքէն զհայրենի ժառանգութիւնն առեր։ Իսկ եթէ զի գործեսն՝ վասն այնորիկ զայլս նախատիցես, չլսիցես Պաւղոսի, որ ասէրն, զի յետ ասելոյն եթէ Որ ոչն գործիցէ, և կերիցէ մի, ասէ. Բայց դուք զբարիս գործել մի՛ ձանձրանայք »։

Այսպէս և Մաթան, որ Գոթոզիայի բազկին հարուածն Եղիսաբեթ մանկան գլուխն ինչեցնել տալ կ'ուզէ, կը խորհրդածէ որ պէտք է զանիկայ սպաննել՝ եթէ նշանաւոր ազգատոհմէ մէն է, իսկ եթէ նուաստ ցեղէ առաջ եկած է, դարձեալ պէտք է զարնել մեռցնել.

« Յաղնըլաց սերընդենէն եթէ իցէ նա զաւակ,
Տոհմին չընքեղութիւն ձեպեցուսցէ զկորուստ իւր.
Յանընչան եթէ ռամկին վիճակեցոյց բաղդն ընդնա,
Մեզ զի՞ փոյթ՝ թէ արիւն հէք վարկպարազի հեղուցու »։

Ծանօթ է Պիղատոսի զՅիսուս ամբաստանող քահանայապետաց ըսած խօսքն. « Ածէք մատուցէք ինձ զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեանն. և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և ինչս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոյ դուք չարախօսէքդ զդմանէ։ Այլ և ոչ Հերովդէս, քանզի ետուս տանել զդա առ նա. և արդ ոչ ինչ մահու արժանի գործեալ է դորա. խրատեցից զդա, և արձակեցից »։ Կերհարդ անունով գերմանացի իրաւագէտ մը այս հեռևութիւն չունեցող խօսքերուն դէմ այնպիսի երկսայրաբանութիւն՝ մը յառաջ

կը բերէ, զոր անկարելի է հերքել. « Միաբան ընդ անձին քումբերը, ով Պիղատոս. եթէ անպարտ է Քրիստոս ընդէր չարձակես զատ. իսկ եթէ համարիս արժանի դան հարկանելոյ, առ ինչ անպարտ քարոզես »։

Յաղագս Հաւատարդութեան.

Երբեմն շատ մը ձեռնարկութիւններ իրարու հետ կը կապենք՝ անանկ կերպով մը որ առաջնոյն հետևութիւնն կ'ըլլայ երբեմն գլխաւոր մասն երկրորդին, և երկրորդին հետևութիւնն երբեմն գլխաւոր մասն երրորդին, ինչուան որ վերջապէս պատճառաբանութեան սկիզբն դիտած հետևութեանն կը հասնինք։ Այս տեսակ ձեռնարկութիւնն՝ համաբարդութիւն կ'ըսուի։ Զոր օրինակ ուզելով հոգւոյ անմահութիւնն ցուցընել, կ'ըսենք. Հոգին է պարզ, պարզն է առանց մասանց, որ առանց մասանց է՝ անբաժանելի է, անբաժանելին է անապական, անապականն է անմահ 'ի բնէ. ապա հոգին է անմահ 'ի բնէ։

Լամբրոնացին ցուցընելու համար թէ հաւատքն ստանալու և պահպանելու համար կարևոր է մարմնոյ հանգիստն ու փառքն արհամարհել, կ'ըսէ.

« Զի հոգևոր խորհուրդ է և ոչ մարմնաւոր, զհոգւոյ կամս պարտ է սորին հաւատոց հաւանեցուցանել և ոչ զբարբառ բերանոյ, և հոգին ոչ հաւատայ առանց հոգեպէս տեսութեան. և հոգևոր տեսութիւն ոչ լինի առանց խմաստութեան. և խմաստութիւն ոչ հաստատի առանց բանաւորապէս առաքինութեան. և բանաւոր առաքինութիւն ոչ ուղղի առանց մարմնոյս հանգըստեան և փառաց արհամարհութեան »։

Գրեթէ այս ձևով կը ցուցընէ և Ոսկեբերան, թէ խոնարհն ամէն վնասց և բամբասանաց պատրաստ կը գտնուի.

« Վասն այնորիկ միշտ յառաջնմէն յաջորդսն յառաջագոյն հորդէ ճանապարհ պատուիրանացն, երբև շարեմն ոսկի տողեալ մի ըստ միոջէ զպատուիրանսն։ Զի յորժամ խոնարհ ոք եցէ, յայտ է թէ 'ի սուգ է վասն մեղացն. իսկ որ սգաւորն եցէ և հեզ, յայտ է թէ արդար է և ողորմած. իսկ որ ողորմածն է և արդար, յայտ է թէ մտախոհ և սուրբ սրտիւ է։ Իսկ այնպիսւոյն պատշաճ է զի խաղաղարար ևս եցէ։ Իսկ որ զամենայն զուղղութիւնսն յանձին ցուցանիցէ, այնպիսին և առ ճգնութիւնսն պատրաստագոյն գտանի, և ոչ ինչ խռովի՝ յորժամ լսիցէ բանս բամբասանաց, և ոչ ինչ զանդիտէ՝ յորժամ բիւր չարչարանս յանձին կրիցէ »։

Մոնդէնեը կը պատմէ, թէ Թրակացիք իրենց ճամբուն վրայ սառած գետի մը պատահելով, առջևնէն աղուէս մը կ'արձակեն որ գիտնան թէ կրնան անցնիլ ապահովութեամբ. այն ատեն աղուէսն ականջը սառին կը մօտեցընէ, ջրոյն ձայնն լսելով կը կենայ, և երբև թէ ինքնիրեն հետևեալ պատճառաբանութիւնն կ'ընէ, որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ համաբարդութիւն մը. « Որ ինչ արձակէ զթնդիւն, շարժի. որ ինչ շարժի՝ չէ սառուցեալ. որ ինչ չէ սառուցեալ՝ լուծական է, և որ լուծականն է՝ հակի ընդ ծանրութեամբ. իսկ արդ եթէ մօտ ականջացս լսեմ զձայն ջրոյն, չէ այն սառուցեալ, և սառին չիք թանձրութիւն տանելոյ զիս »։

Ձեռնարկութեան գլխաւոր ձևոց վրայ խօսելէ ետև, պէտք է յիշեցնենք որ պատճառաբանութիւն մը լաւ ըլլալու համար երկու պայման կը պահանջուի. մէյմը որ դրած սկզբունքներս ուղիղ մտաց վրայ հիմնեալ ըլլայ, և երկրորդ՝ հետևութիւնն ամենայն ճշդութեամբ հանուի անկից։ Դժուարին է զուրցել թէ այս երկուքէն որն է աւելի կարևորն. վասն զի եթէ առաջնոյն մէջ պակսինք, եթէ դրած սկզբունքներս ուղիղ չէ, ինչպիսի հետևանքներ անկից հանելու ալ ըլլանք, այնչափ աւելի կը հեռանանք ճշմարտութենէն։ Նոյնպէս դարձեալ

որչափ և բարի ըլլայ մեր հաստատած սկզբունքն, եթէ չկարենանք անոր պարունակածն ճշդիւ յառաջ բերել, հակասութեան մէջ կ'իյնանք, և աշխատութիւնիս արդիւնք մը չունենար: Առանց այս երկու պայմաններուն, անօգուտ են մեր գործածած իմաստներն ու բառերն, և չենք ըլլար տրամաբան, այլ իմաստակ:

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Դասաւորութեան.

Իմաստներն գտնելէն ետև, պէտք է նայիլ թէ ինչ կարգաւ պէտք է զանոնք յառաջ բերել: Նիւթն ըմբռնելէն անմիջապէս վերջը մասանց դասաւորութիւնն կուգայ:

Ամենայն իրաց կարևոր հանգամանքներէն մէկը կարգն է, որուն օրինակն ունախագաղափարն բնութեան վրայ կը տեսնենք: Արուեստից գերագոյն օրէնքներէն մէկը՝ բնութիւնն է, և ինչպէս բնութեան՝ նոյնպէս ալ անոնց կեանք տուողը կարգն ու դասաւորութիւնն է: Ինչու համար է որ աչքերնիս չախորժիր նայիլ տեսակ մը պատերազմի պատկերներու, որչափ ալ անոնց մէջ մասանց գեղեցիկ ճշդրտութիւն ու դունոց կենդանութիւն մը երևի. վասն զի կը տեսնենք խառնակութիւն մը մարդկանց, երիվարաց և զէնուց. և այս անձանց խառնաշփոթ բազմութեան և իբրև թէ բոլորն ալ նոյն կաղապարով թափուած կրակոտ դէմքերու մէջ աչքն որոշ առարկայի մը վրայ չհանգչիր, և այնչափ խառնակ առարկաներէ չձևանար մեծ և տիրող գաղափար մը,

որուն հետ երկրորդական մասունքն կապուին, և իբր ամբողջ գործոյն հոգին ըլլայ այն:

Նոյնը կրնայ ըսուիլ նաև մատենագրութեան համար. քերդուած մը այն ատեն ախորժելի կ'ըլլայ, երբ ոճոյն զանազան մասանց մէջ ճարտար ու կարգաւորեալ դասաւորութիւն մը կը տեսնուի: Բանակ Իլիականն, և կը տեսնենք որ այդ ընդարձակ դիւցազներգութեան ամենայն մասունքն իրարմէ որոշ կը զանազանին. հոս իշխաններն իրարու հետ կը կռուին. հոն Յոյնք կը յաղթուին, և Աքիլլէսի վրէժխնդրութիւնն կը կատարուի. անդին դիւցազնն իր վրանին մէջ աննուաճելի խրոխտանօք մը պարգևներն ու աղաչանքները կը մերժէ. Պատրոկլ իր բարեկամին զէնքերն հագած՝ վայրկեան մը յաղթող կը դտնուի. բայց վերջն Հեկտոր զէնքը կը զարնէ դեռն կը տապալէ. վերջապէս Աքիլլէս կը մառնայ իր բարկութիւնն, կ'ելլէ իր անդորձութենէն, Պատրոկլի վրէժը խնդրելու համար. Էլինայ Հեկտոր, և ծերունին Պրիամոս՝ յաղթողին ոտքն ինկած, որդւոյն մարմինը կը խնդրէ: Բոլոր այս տեսարաններս առանց խառնակութեան իրարու կը յաջորդեն. զգալի ասոիճան մը կայ իրարու մէջ, և ամբողջ այդ մեծ շարագրածն՝ քերդողն երգել ուզած մէկ մտածութիւն մը, այսինքն Աքիլլէսի բարկութիւնն միայն կը բացատրէ:

Այսպէս և ողբերգութեան կամ կատակերգութեան մը մէջ կայ արգայպուիխն, այսինքն մուտք'ի նիւթն. հանգոյց, այսինքն կնճռոյն ձևացած վայրկեանը. անակնկալ դէպք, կամ ուրիշ բառերով, այն վայրկեանն ուր գործոյն կարևորութիւնն կը մեծնայ, այլ և այլ կերպարանք կ'առնու և վերջին ծայրն կը հասնի. լուծումն հանգոյցին, որ գործը կ'որոշէ և կը վերջացընէ. ասոնք կարևոր մասունք են, որոնք բոլորն ալ կ'օգնեն մտածութիւն մը ընդլայնելով բացատրելու. ինչպէս Պոլիկտոսի մէջ բացատրուած կը տեսնենք կրօնական եռանդը,

Մերովբեայ մէջ մայրական սէրն և կեղծ բարեպաշտին մէջ՝ կեղծաւորութիւնն։ Թէպէտ ամենայն մատենագրական աշխատութեանց մէջ անհրաժեշտ կարեւոր է կարդն, բայց աւելի Ճարտասանէն իբրև պարտք կը պահանջուի՝ քան բանաստեղծէն. վասն զի խօսքին յստակութիւնն ու զօրութիւնը գլխաւորապէս իմաստից շարակարգութենէ կը կախուի։

Ա.

Յաղագս ճարտասանական դասաւորութեան.

Ճարտասանն իր նիւթոյն վրայ մտածելէն ետև պէտք է խնամով անոր այլ և այլ մասունքն բաժնէ։ Ճառ մը չորս գլխաւոր մասունք կրնայ ունենալ, որոնց վրայ կարգաւ պիտի խօսինք.

Յաղագս Յառաջաբանի.

Որ և իցէ նիւթոյ վրայ խօսելու որ ըլլանք, միշտ նախաշաւիղ մուտքով մը կը սկսինք, և այս կ'ըսուի յառաջաբան. որուն նպատակն է ջանալ որ լսողն ներողամիտ, մտադիր և դիւրալուր ըլլայ, և որով Ճառախօսն կ'աշխատի որ ունկնդիրք իր վրայօք լաւ դաղափար մը առնուն, և անոնց հաՃելի ըլլայ իր ուղղամտութեամբն, անկեղծութեամբն, և չափաւորութեամբ և. հռետորաց էարէ ըսած հանգամանքներով։

Յովհան իմաստասէր պատմական օրինակով մը իր վեմ ատենաբանութեան յառաջաբանը կը սկսի.

« Համբերողացն նախատիպ մեծն Յովբ՝ ասէր երբեմն

յիւրում բանն, նեղեալ 'ի փորձանացն արկածից. Ո՞վ առնէր զիս ըստ աւուրցն առաջնոց. միանգամայն 'ի բաց եդեալ զքաջողջութիւն զընչաւէտութիւն և զբազմորդութիւն։ Զնոյն և ես հանդերձ հառաչմամբ բարբառիմ, 'ի դիպուածոց աստի վտանգեալ. ո՞վ զիս անցելոցն առաջի դնէր ամանակաց, վերստին զմանկական տիոցն զգեցուցանելով զհասակ »։

Կիկերոն՝ Արքիայ քերդողին ատենաբանութիւնն իր անձէն սկսելով՝ ասանկ յառաջաբանութիւն մը կ'ընէ.

« Եթէ դուցէ յիս հանՃար, դատաւորք, որոյ իրագէտ եմ նիւթաղութեանն, կամ թէ խօսից վարժութիւն՝ յորում ոչ ժխտեմ փոքր 'ի շատէ զիս պարապեալ, կամ թէ ինչ այսր երի հմտութիւն՝ 'ի կրթութենէ ազնուական արուեստից և 'ի հրահանգաց, յորոց վկայեմ զիս ոչ երբեք սաստուցեալ եմ՝ 'ի կեանս իմ, զայնր ամենայնի նախ Լիկինիոսս այս յիրաւի պահանջեսցէ յինէն զպատուոյ՝ գրեթէ սեփական ինն իրաւամբք։ Զի որչափ հեռագոյնս զօրեն ակնարկել միտք իմ յելս անցեալ զառանցեալ ժամանակաց, և զմանկութենանս յուշածել խորին յիշատակ, անդուստ 'ի վերուստ առեալ արկեալ՝ 'ի միտ՝ սա տեսանեմ իշխան առաջնորդ ինձ կացեալ 'ի սկսանել և 'ի զարգանալ՝ 'ի կիրթս ուսմանցս այսոցիկ։ Զի եթէ ձայնս այս բարբառոյս, սորա խրախուսանօքն և օրինօքն յարգարեալ, եղև երբեմն ոմանց 'ի փրկութիւն, ապա յորմէ զսոյնս ընկալաք առ 'ի զօրավիգն այլոց լինելոյ և զայլս կեցուցանելոյ, սմին ինքեան ապաքէն, որչափ 'ի կարի մերումէ, և օգնութիւն և փրկութիւն արժան է մատուցանել»։

Գրիգոր Արշարունի այսպէս կը սկսի իր գիրքը, որուն խնդրանօք որ այն գիրքը շարադրած է, խօսքն անոր ուղղելով.

« Զհարկ բանիս՝ զոր պահանջեցեր յինէն փութապէս յաղագս աստուածային ընթերցուածոցն, ո՛վ կամարականդ Վահան պատրիկ, հատուցեալ զամրագոյն,

ոչ 'ի հարուստ մոաց ուրուք ժողովեալ, և ոչ 'ի բարձրագոյն բանից ուսեալ, այլ յաշխատութենէ աղքատ իմոց խորհրդոցս գտեալ նուաստ իմացուածովք: Եւ վասն այսորիկ հեղգ առ այսպիսի փոյթս գտայ յառաջագոյն, զի մի նուազ զպայծառ ջահ իմաստութեան եկեղեցւոյ երևեցուցից, և կամ տխուր զլայելուչ գեղեցկութիւն խորհրդոցս: . . . . Այժմ վերստին հասեալ հրամանիս քո ոչ կարացեալ 'ի դիմի հարկանել, ուստի խուսափէի յառաջագոյն երբև յալեաց ծովու, այժմ 'ի նոյն դարձեալ դիմեցի՝ վստահանալով 'ի շնորհս Հոգւոյն սրբոյ, ոչ գիտեմ՝ հնազանդութեամբ թէ յանդգնութեամբ »:

Սուրբն Իլարիոն՝ Կոստաս ամբարիշտ կայսրը կշտամբելով, այսպէս կը սկսի խօսիլ.

« Առ քեզ առ Կոստասդ են բանք իմ, որպէս թէ ընդ Ներոնի ունէի խօսել, իբր թէ 'ի լուր ականջաց Դիոնոսի և Մաքսիմիանոսի: Հակառակ Աստուծոյ մաքառիս, ընդդէմ եկեղեցւոյ ժպրհիս, զսուրբս հալածես, զքարոզիչս Քրիստոսի Թշնամանես, բառնաս զաստուածպաշտութիւն, և այլն »:

Երանելին Շամունէ ողբական աղաչանքով մը կը սկսի խօսիլ իր ալոսի որդւոյն.

« Ողորմեաց ինձ, որդեակ իմ. յուշ լեցի քեզ, զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, և սնուցի զերիս ամս 'ի գերկս ստեամբք, և հասուցի զքեզ յայդ չափ մեծութեան հասակի: Արդ աղաչեմ զքեզ՝ հայեսցիս դու յերկինս և յերկիր, և որ 'ի նոսա արարածք իցեն: Յուշ լեցի քեզ, զի յոչնչէ արար զնոսա Աստուածասպնպէս և զզմարդկան ստեղծան 'ի նմանէ »:

Շամունէայ երկրորդ որդին բարկութեամբ և կշտամբանօք կը սկսի առ Թագաւորն ուղղած խօսքը.

« Ա՛յ սեգ հպարտ և ամբարտաւան. դու զմեզ յայսց կենաց աշխարհէս կարձել համարիս. իսկ այն՝ որ աշխարհաց Թագաւորն է, Թէպէտև մեռանիմք մեք վասն

օրինաց, 'ի կեանս յաւիտենից միւսանգամ ծննդեանն ժամանակի՝ կենաց 'ի կեանս դարձուցէ »:

Եւ Սարգիս այսպէս կը սկսի խօսիլ առ Աղոս.

« Ո՞ւր անամօթ երեսն. ո՞ւր քրիստոսամարտ լեզուն, որ մերկ գլխով ասէր. Էր երբեմն յորժամ ոչ էր. լուր աւետարանչիս. Ի սկզբանն էր. և եթէ 'ի սկզբանն էր, ապա էրբ ոչ էր: Արդ զամբարշտութիւնս նոցա արտասուեսցուք, եթէ յանբանութենէն դարձեսցուք »:

Վարդան իր զօրացը ըրած քաջալերական հրապարակախօսութիւնն ասանկ պարզ կերպով մը կը սկսի.

« Ի բաղում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդխս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեաց, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին, և բազում այն է՝ որ յաղթօղ գտեալ եմք և ոչ յաղթեալք. և միանգամայն այն ամենայն մարմնոյ էին պարծանք, քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչէաք: Որ փախչէր՝ վատնուն յաշխարհի երևէր, և անողորմ մահ 'ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, և պարգևս մեծամեծս յանցաւոր և 'ի մահկանացու թագաւորէն ընդունէր: . . . . Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արուեցիս կատարեաք, որչափ ևս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց և մեռելոց, և դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց »:

Լամբրոնացին կը սկսի իր գեղեցիկ ատենաբանութիւնն, խօսքն առ ունկնդիրս ուղղելով.

« Ո՛վ հաւք սուրբք և վարդապետք ճշմարտութեան. ո՛վ Քրիստոսի ժողովրդեանն գլուխք և հովիւք. ո՛վ տանն Աստուծոյ վերակացուք և մատակարարք, զոր տեսանեմք այսօր դումարեալ 'ի մի շունչ և 'ի մի մարմին, և առ գլուխս հանուրց պատկանեալ. ո՞վ զձեզ ած 'ի մի 'ի խաղաղս նուաճանգիստ, խաղաղարարք տիեզերաց, բայց թէ որ յերկինից տուաւ մեզ խաղաղութիւն հոգին սուրբ. և ո՞ր աղագաւ, բայց թէ առ սկիզբն առնել

շինութեան քակեալ և կործանեալ տաճարին Աստուծոյ, զոր սկզբնաչարն Նաբուգոդոնոսոր տապալեաց. այն որ Երբեմն 'ի վաղ ժամանակս յաւուր էառ զսորա սրբութիւնն՝ մաքուր և սուրբ սպաս պաշտամանն »։

Շատ անգամ յառաջաբանն լի կ'ըլլայ վայելչաբարդ դարձուածովք և բացատրութեամբք։ Այսպէս Անտրոմաքայ մէջ Որեստ ողբական սկսուածքովմը կը ծածկէ խնդիրք մը՝ որ կրնար անհաճոյ ըլլալ Պիւռոսի.

«Զև հանուրց Հելլէնաց խօսեալ առ քեզ յիմ բարբառ,
Թոյլ տուր ինձ իշխել պարծել աստ ընդ նոցայն ընտրութիւն,
Եւ քեզ, տեր, ակնարև ըղձընդութիւն իմ յայտնել,
Զի տեսի զԱքիլլեսի ձեռն և զպաղթողն Տրոյայ։
Արութիւն նորա և քո հանդէպք ազգեն մեզ զարմանս.
Զի նոքաւ անկաւ Հեկտոր, իսկ քեւ Տրոյա ջընջեցաւ.
Եւ դու գերեցիկ յանդգնութեամբ ցուցեր յայտ
Զի որդին Աքիլլեսի միայն ելից զիւր տեղին »։

Շատ անգամ նաև առանց այնչափ դարձուածոց ճարտարութիւն բանեցընելու, վսեմ և միանգամայն պարզ ոճով մը ճառը կը սկսուի. և այս տեսակ յառաջաբաններն շատ յարմար են բարձր նիւթերու։ Այսպէս է Պոսիւէի Անգղոյ Թագուհւոյն դամբանական ճառին մէջ գործածած յառաջաբանն.

« Որ Թագաւորէն յերկինս՝ հանուրց Թագաւորութեանց տէր, որում միայնոյ են փառք՝ մեծութիւն և իշխանութիւն, նա ինքն միայն է փառաւորեալ'ի դնել օրէնս Թագաւորաց, և տալ նոցա՝ յորժամ հաճեսցի՝ խրատս մեծամեծս և ահագինս։ Թէպէտ բարձր առնիցէ զդահս, Թէպէտ նկուն. Թէ հաղորդս զօրութեան իւրում արասցէ զիշխանս, և Թէ առ ինքն զայն ամենափեալ՝ զհիքութիւն ևեթ նոցին Թողցէ'ի նոսա, զպարտս նոցուն ուսուցանէ նոցա բարձրագոյն օրինակաւ ըստ իւրում արժանին »։

Երբեմն յառաջաբանն յանկարծական ու շտապողական կ'ըլլայ, ինչպէս է Կիկերոնի առաջին Կատիլինեան ճառինը։ Կիկերոն տեսնելով զԿատիլինա, որ յանդգնելը էր գալ նստիլ ատենակալաց մէջ, զրոնք սպանելէ կ'ուզէր, բարկութեան կրքով վառուած կը դուէ.

« Մինչև ցե՞րբ, Կատիլինա, զեղծանիցես երկայնմտութեամբ մերով. մինչև ցե՞րբ խաղ առնիցէ զմեզ այդ քո վայրագութիւն. առ ինչ ձգտեսցի քոյին լրբութիւն անզգամութիւն։ Ոչ շարժեալ մարթացան զքեզ պահապանք ապարանիցս, գիշերապահք քաղաքիս, երկիւղ ժողովրդեանս, խուռն ընթացք ամենայն առաքինեաց, ամրակառոյց ժողովարանս ծերակուտին, ոչ սոցա ամենեցուն բերանք և դէմք։ Ոչ դիտես, զի նշաւակեալ են ամենայն խորհուրդքդ. ոչ տեսանես զի դաւքդ յայտ յանգիման կայ ամենեցուն։ Զո՞'ի մէնք անդիտանալ համարիցիս զոր ինչ գործեցերն յայսմ գիշերի, ուր եղէրն, զոյս ընդ քեզ խմբեցերն, և զինչ խորհուրդ կալար։ Եղուկ ժամանակացն, աւաղ այնր գործոյն։ Ծերակոյան իմանայ զայս, բդեշխն տեսանէ, և դա կեցցէ՞ տակաւին. և զինչ ասեմ թէ կեցցէ, նա և'ի ծերակոյս մտանէ, կցորդի հասարակաց խորհրդոյ, առ մի մի'ի մէնք ակնարկէ։ Մէք, ով քաջք, խնամակալ լինիմք պետութեան՝ թէ անձնապահ լիցուք'ի մեքենայից դորա։ Վաղ ուրեմն զքեզ, Կատիլինա, պարտ էր մահու դատել հրամանաւ բդեշխին. և զառ'ի մեզ'ի քէն սփռեալ ժանտախտդ'ի քեզ դարձուցանել»։ Այս խօսքիս վերայ, դեռ ճարտարախօսն խնդիրը չբացատրած, և դաւաճանութեան մանրամասն հանգամանքն մէջ տեղ չբերած, ծերակոյտը կը համոզուի և Կատիլինա շանթահար կ'ըլլայ։

Այս յառաջ բերած օրինակներէս կը տեսնուի որ յառաջաբանն պէտք է նիւթոյն, տեղւոյն, ունկնդրացն և երբեմն նաև ճառախօսին ասելիքներուն համեմատ յարմարցուի։

Յաղագս Առաջարկութեան, Բաժանման և Պատմութեան.

Ճարտարախօսն իր ունկնդրաց ներողամտութիւնն կամ դէթ ուշադրութիւնն ապահովցընելէ ետեւ, ճառին նիւթն յառաջ կը բերէ. և այս կ'ըսուի առաջարկութիւն։ Մասիլլեոն՝ Լուդովիկոս ԺԵ պալատականաց առջեւ՝ մեծամեծաց օրինակացը վրայ խօսած քարոզին նիւթն այսպէս կը պարզէ.

« Այս վիճակ է թագաւորաց և իշխանաց աշխարհի, զի կան 'ի կորուստ և 'ի փրկութիւն մարդկան. . . : Անմարթ է նոցա միայն առանձինն կորնչել կամ փրկիլ։ Այս ճշմարտութիւն մեծ՝ լինիցի հիմն ճառիս։»

Երբեմն եթէ նիւթն պարզ չէ, ճարտարախօսը զայն դնելէն վերջը, կերպով մը առաջուց անոր գլխաւոր մասունքը կը համառօտէ, և ինչ կերպ բռնելիքը կը յայտնէ. և այս կ'ըսուի բաժանումն, որով առաջարկութիւնն կ'ամբողջանայ։ Այսպէս Մասիլլեոն յաղագս վտանգաց բարեպաշտութեան մեծամեծաց ճառին մէջ երեք մասն կը բաժնէ նիւթը.

« Բարեպաշտութեան մեծամեծաց երբեակ վտանգք են խնթալիք, որ զամենայն լաւութիւնս նոցա 'ի յոռութիւն դիտեն շրջել։ Առաջին՝ բարեպաշտութիւն անգործ և յինքն միայն ամփոփեալ, որ քեցէ զնոսա 'ի խնամոց և 'ի պիտոյից աշխարհին։ Երկրորդ՝ բարեպաշտութիւն անզօր, զանդիտող և խղճադատ, որ զգործս նոցա և զամենայն վարս 'ի վարանի կացուցանէ։ Երրորդ՝ բարեպաշտութիւն դիւրահաւան և կարճոգի, հեշտապատիր 'ի մտահաճութեանց, և անբաւական 'ի թոթափել զպատրանն »։

Կիկերոն իր Փիլիպպեան ճառին մէջ ասանկ բաժանումն կ'ընէ.

« Ընդէ՞ր ոչ կամիմ զնաղաղութիւն. վասն զի անվայելուչ է, վասն զի վտանգաւոր է, և վասն զի անհնար է. և 'ի բացատրել խմբամ զերիս զայսոսիկ, խնդրեմ 'ի ձէնջ, ձերոյին ներողամիտ երկայնմտութեամբդ լսել ինձ »։

Դարձեալ Մասիլլեոն Փրկչին չարչարանաց ճառին բնաբան դնելով այս խօսքս թէ « Ամենայն ինչ կատարեալ է », այսպէս երեք մասն կը բաժնէ. « Քանզի կատարեցաւ արդարութիւն առ 'ի յԱստուծոյ, չարութիւն առ 'ի մարդկանէ, և սէր առ 'ի Քրիստոսէ »։

Կուինտիլիանոս իրաւամբք կը պարսաւէ բաղմամասն բաժանմանց չափազանց գործածութիւնն, որոնք խրթին և մանրամասն կ'ըլլան, ճառին վսեմութիւնը կը նուազեցընեն, կը կարատեն աւելի քան թէ կը բաժնեն, ինչ որ ամբողջ պիտի ըլլար՝ կը զատեն, խառնակութիւն և մթութիւն կը պատճառեն նոյն իսկ այն միջոցով որ անոնց առջեւն առնելու համար եղած է։

Առաջարկութենէն վերջը կը դրուի պատմութիւնն, որ է նիւթոյն հետ յարակցութիւն ունեցող իրաց յիշատակութիւն։ Երբեմն ճարտարախօսն փոխանակ զայն զատ մասն կազմելու, աւելի շահաւոր կը սեպէ ճառին միւս մասանց հետ խառնել։ Իբրև օրինակ ճարտասանական պատմութեան դնենք Պոսիւէէն հատուած մը, յորում պարզ և վսեմ ոճով մը Անգղիոյ թագուհւոյն՝ Հենրիկէի քաղաքական պատերազմի ժամանակ բռնած հաստատուն և արթուն ընթացքը կը պատմ.

« Ապստամբաց կալեալ էր զղենանոցն և զհամբարանոցս. և յետ նշխահելոյ այնչափ հպատակաց և անարժան վտարանջութեան ևս զօրուն, դիւրագոյն էր արքայի գունդ կազմել՝քան զնել զնոսին։ Ու զնուց և համբարոց հայթայթանս ընդ վայր հարկանէ դշխոյս ոչ միայն զղարդս իւր զոսկւոյ և զարկանց, այլ և զկենացն

խնամս։ Ծովամուխ լինի յամենեանն փեսորուարի՝ քամահանս առնելով ձմերայնոյն և մրրկաց. և պատճառանօք 'ի Հոլանդիա ածելոյ զարքայական բամբիշնն՝ զդուստր իւր զերեց, որ խօսեալն էր 'ի կնութիւն Գուլիելմի իշխանին Օրանժայ, երթայ յորդորել զպետութիւնսն 'ի Թիկուանս օգնականութեան արքայի, սպահս լինքն յանկուցանել, և տանել նմա պէտս և կազմս պատերազմի։ Ի մեկնելն յԱնգլիոյ ոչ զարհուրեցոյց զնա ձմեռն. յետ մեռասան ամսոյ ոչ խափանէ զնա ձմեռն՝ մինչ հարկ է դարձ առնելառ արքայ. բայց եկք իրացն ոչ հանդոյն պատահեցին։

« Սարսափեմ՝ 'ի զոյցս ևեթ մոլեգին ծովակոծութեանն, որով տանջեցաւ նաւատորմիղ իւր զաւուրս տասն։ Զահի հարան նաւասոնք մինչև սրտաթափ լինելոյ, և ոմանք 'ի նոցանէ հոսեցին զանձինս 'ի ծովն։ Ինքն, միշտ անվեհեր որչափ խառվեալ էին ալիքն, սըրտապնդէր զամբոխն իւրով պնդութեամբն. զորս ընդ իւր էին քաջալերէր յԱստուած յուսալ 'ի միայն ապաւէն իւր. և առ փարատելոյ 'ի մտաց նոցա զսխրական կասկած մահուն յամենուստ երևելոյ, ասէր լուրջ ելմն երեսօք՝ որ ածել թուէր զկատաղութիւն, թէ թագուհիք ոչ ընկղմին։ Եղուկ, յայլ ինչ առաւել անսովոր պահեցաւ նա. և թէպէտ և ապրեցաւ 'ի նաւաբեկութենէ, ոչ այնու չիցէն աղէտք նորա ապիոդորմք։ Եսեա զկորուստ նաւացն, և դոգ զընաւ իսկ զանկալութեան մեծի օգնականութեանն։ Նաև զօրագլխական յորում ինքն կայր, առաջնորդեալ ձեռամբ Տեառն խորոց անդընդոց ծովուն, որ և զկուտակումն լեռնացեալոց կոհակացն ցածուցանէ, վարեցաւ անդրէն 'ի նաւահանգիստսն Հոլանդիոյ. և ժողովուրդք առ հասարակ հիացան ընդ սքանչելի փրկութիւնն։

« Փրծեալքն 'ի նաւակոծութենէ՝ յաւիտենական բարեաւ մնալ ասեն ծովուն և նաւաց. և որպէս ասէր ոմն 'ի հնոցն օրինակագրաց, և ոչ տեսլեան նոցա հանդուր-

ժել կարէն։ Եւ սակայն՝ յետ աւուրց մեռասանից, ով զարմանալի հաստատութեան մտացն, այն ինչ եղեալ դշխոյիս յահեղ վշտաց ամպրոպացն, առ անձուկ կարօտոյ երեսաց արքային և 'ի Թիկուանս նմա հասանելոյ, իշխէ վերստին հաւատալ զանձն կատաղութեան ովկիանու և դառնաշունչ օդոց ձմերայնոյն։ Ժողովեալ նաւս քանի մի՝ ընու սպահիւք և կազմութեամբ մարտի, և երթայ անցանէ յԱնգլիա։ Այլ ով ոչ զարմացի ընդ անողորմ բախտ դշխոյիս։ Յետ միանգամ ապրելոյ յալեաց, միւս ևս մրրիկ՝ գրեթէ մահահրաւէր եղև նմա. հարիւր անօթք ռմբաձիգք որոտացին 'ի վերայ նորա 'ի հասանել իւր, և տունն յոր եմուտ՝ ծակոտեցաւ 'ի գնդակաց նոցին. մեծ եղև արութիւն նորա յահագին վտանգին, բայց մեծ եղև և գթութիւն նորա առ առաջնորդ գժոխային վիրագութեանն։ Սուղ ինչ յետոյ գերի վարեալ ածաւ այրն. ներեաց նա նմա զոճիրն, և փոխանակ ամենայն պատուհասի՝ մատնեաց զնա խղճին իւրում և ամօթոյ ձեռս արկանելոյն յարև այնպիսի բարւոյ և մեծանձն բամբչան. այսչափ գեր 'ի վերոյ կայր նա վրէժխնդրութեան, որպէս և երկիւղն։

« Իսկ ապա չտեսանիցեմք զնա առ արքայի՝ եռանդնալից ցանկացելոյն դարձի նորա։ Եւ նա ինքն նովին տենչանօք տոչորի, և ահա տեսանեմ զնա նորանչան հանդերձանօք երևեալ։ Իբրև զօրավար ընթանայ 'ի դլուխ արքայագունդ բանակի, խաղալ անցանել ընդդաւառս՝ գրեթէ առհասարակ նուաճեալս յապստամբացն. պատնէշ պաշարմամբ գրոհ տուեալ առնու զբերդաքաղաք մի ամուր՝ որ ընդդէմ կայր իւրում արշաւանին. նշան յաղթութեան կանգնէ, թողութիւն շնորհէ, և ապա դայ հասանէ արքայ ընդունել զնա 'ի դաշտի ուրեք՝ ուր ամաւ յառաջ յաղթութիւն մեծ տարեալ էր նորա 'ի վերայ զօրագլխին Իսէքսի։ Յետ ժամու լուեզև յաղթանակ ահեղ ելմն ճակատամարտի։ Ամենայն

ինչ յաջողել Թուէր առաջի երեսաց նորա. քամակա-
բեկ կային ասպտամբք. և եթէ անսային դշխոյս,
եթէ փոխանակ զօրահատոյց առնելոյ յաքքայախումբ
բանակացն, և հակառակ խորհրդոց իւրոց՝ զբօսեցու-
ցանելոյ զնոսա 'ի Թշուառ պաշարումն Հըլայ և Կը-
սըդրի՝ արշաւեալ էին դէպ ուղիղ 'ի Լոնդոն, յաջողեալ
լինէր կռիւն, և այս գուպարած վճար առնէր պատե-
բազմին: Բայց կորուսաւ ժամն դիպօղ, մերձենալը ո-
ղորմ վախճան կատարածին. և երկինք՝ որ 'ի շնորհս
բարեպաշտութեան դշխոյս յապաղել Թուէր զերկ-
նեալ վրէժխնդրութիւնն, սկսաւ յայտնել զանձն: «Դի-
տես յաղթել, ասէր ափրիկեցի ոմն քաջ ցղօրավարն
խորամանդ քան զբնաւս, այլ ոչ դիտես 'ի կիր արկա-
նել զյաղթութիւնդ: Հռովմ՝ զոր ըմբռնեալ էիր, զեր-
ծանի 'ի ձեռացդ. և բախտն ոխերիմ բարձ 'ի քէն մերթ
զհնարս և մերթ զխորհուրդս հասու այնմ լինելոյ»:
Յետ այնր չուառական ժամու, ամենայն ինչ ակնարև
յեղծումն և յապականութիւն գնաց, և գործեանն
արքունի անյոյս մնացին»:

Ղաղարայ Փարպեցւոյ գրքին մէջ Արշաւիր կամա-
բականին Պարսից հրապարակին մէջ ուրացելոյն Վա-
սակայ դատաստանին առթով ըրած պատմութիւնն
օրինակ է առենական պատմութեան, յորում կարդաւ-
կը համառօտէ Պարսից զՀայս ստիպելն որ քրիստո-
նէութիւնն ուրանան, և անոնց առ երեսս ուրացու-
թիւնն, Վասակայ Պարսից և Հայոց դէմ բանեցուցած
պէս պէս նենգութիւններն, ամէն բանի պատճառ ու-
րացեալը դնելով: Այս ամէնն քաջայայտ ապացոյցնե-
րով այսպէս կը հաստատէ.

«Իսկզբան իսկ երացդ այդոցիկ, յորժամ 'ի ձեր թա-
գաւորացդ 'ի միոս ծնեալ յայտնեցաւ մեզ բանն, և զի-
բացդ բուռն հարիք՝ որում մեզ ծառայել հրամայէիք, և
օրէնս նմն հարկաւորէիք ունել մեզ, զոր ոչ մեք և ոչ
նախնիք նախնեաց մերոց գիտեն, բազում անգամ բողո-

քեցաք թէ անհնար է մեզ յանձն առնուլ և ծառայել
օրինաց՝ որոց նախնիքն մեր ոչ ծառայեցին, որ և մոռց
մերոց ծանր թուի և արհամարհանք. և այսպիսի 'ի մէնք
բողոքելոյ՝ ձերոյն իսկ վկայէ անսուտ հրապարակդ: Եւ
իբրև ոչ կամեցաք լսել, ըստ բնաւորոր կամացդ ձերոց և
հարկաւորութեամբ յանձն ետուք առնուլ զպաշտօնն,
զոր շրթամբք առ երկիւղի մեծարեցաք սուտ, կամ-
ցեալ դողանալ վայր մի խաբէութեամբ զերկիւղ ձեր, և
սրտիւք գարշելի համարեցաք զգործն, և առեալք, եղեալ
'ի մոլ զերծանել հնարիւք և երթալ յաշխարհ մեր, և
թողուլ զաշխարհն, և գնալ կնաւ և որդւովք, երթալ
կորնչել յօտար երկիր. զոր նախքան զամենեսեան ըստ
ամենեցուն խորհրդոցն՝ երևելին ըստ աշխարհին իշխա-
նաց՝ ծառայն ձեր Վարդան արար. զոր գիտեն և վկա-
յեն բանից իմոց արք պարսիկք յաւագ տոհմաց, որ այժմ
ողջ են և աստ են առ ձեզ: Առաւել լոկ զիւր կին և զըն-
տանիս իւր՝ դէմ եղեալ գնաց փախստեայ 'ի ձերոյ եր-
կիւղէ յերկիրն Յունաց: Եւ զգացեալ զայս տեառնդ
Սիւնեաց Վասակայ, փութով զհետ դեսպանս արար զա-
ւագ տանուտեարսն և զեպսուհան և զսուրբ քահա-
նայսն, և զսուրբ գիրս օրինաց մերոց կնքեալ իւրով
մատանւով՝ որով և երդուան իսկ, ետ տանել առ նա:
Ընդ որս յղեաց և զիս. և գրեաց 'ի նամակին առ նա այս-
պէս թէ «Զի՞ ես փախուցեալ, և կամ զի՞նչ է երկիւղդ
քո յորմէ դուդ երկնչիս, և ինձ ոչ յայտնեցեր. արդ
մի փախչիր և մի երկնչիր յումեքէ: Զի թէ յարեաց
տեառնէն և 'ի նորին ուժոյ զարհուրեալ ես, մի երկնչիր.
գարձիր, և նամակ առնեմք առ կայսր, և զանձինս մեր
նմա 'ի ծառայութիւն տամք. և նա եթէ հաւատայ թէ
զայսպիսի մեծ աշխարհ նմա մեր կամաւ 'ի ծառայու-
թիւն տամք, խնդութեամբ և կամաւ յանձն առնու և
զօրս տայ մեզ. և նոքա և մեք միաբանեալք՝ աշխատ ու-
նիմք զտէրն Արեաց և զԱրիս: Ապա թէ կայսրն այլազ-
գագոյնս ինչ խորհի և չճանաչէ զիւր օգուտն, ես մինչ

Վրաց մարզպանն էր, և դուռն Աղուանից յիմուամ ձեռին էր, բազում զօրագլուխք Յունաց ընդ իս բարեկամացան ուխտիւ և երդմամբ. և այսօր նովին երդմամբ երթևեկեն առ իս. և հարկաւ ամենայն աշխարհիս Հայոց առ իս են, և գործակալք ամենայն յիմուամ ձեռին են, և այլ ևս բազում կարասի՝ զոր 'ի պարսիկ գործակալացն հանի, որ ասա՛ի Հայս էին, և յիմուամ գանձի կայ. յորմէ թէ զմի մասն Յունաց տամ տանել, անտի այնչափ սաստիկ հանեմ Յոյնս, որչափ զի հողն Պարսից չբաւիցէ նոցա յաւարի: Եւ գրեալ զայս ամենայն երդմամբ Վասակայ Սիւնեաց տեառն, դարձոյց բռնի զՎարդան, որ էր մնեալ օտար իշխանաց՝ որք ոչ են հնազանդեալ ձերում իշխանութեանդ. և նամակն զոր գրեաց առ Վարդան՝ Սիւնեաց տէրդ՝ ողջ է, և կնքեն ասա առ մեզ է, տեսանել հրամայեցէք:

« Եւ յաղագս որդւոցն Իւրոց այսպէս ասէր. « Եթէ ոք 'ի Հայս պարսիկ է, զամենեսեան կապանօք յամուր բերդս դնեմ, մինչև հարկաւ արքայն զնմ որդիսն 'ի բաց արձակիցէ »: Յորս կալաւ արս սակաւս 'ի Պարսկաց, առ վայր մի կապեաց, և յորժամ ինքն նենգաւորութեամբ զմերոյ կորստեան խորհուրդ 'ի միտ արկեալ տարաւ 'ի գլուխս, ապա զնոսա 'ի բաց արձակեաց: Նամականի արարեալ առ կայսրն, և առ այլ աւագանի դրանն, և առ սպարապետն Անտիոքայ, և զՎահան ամատունի և առ զայլս 'ի նախարարացն յիւրաքանչիւր տոհմէ 'ի Հռոմն արձակեաց. և զՎարդան և զմեզ գնդաւ Աղուանս 'ի կռիւ գումարեաց. և ինքն յանզգայս զմեզ նենգեալ յայս չար մղեաց, և զայնպիսի պիտանի զձեր ծառայսպան, և այնչափ բազմութեան Պարսից և Հայոց կոտորածի և աշխարհին կորստեան եղև պատճառ: Եւ արդ ինքն զարդարեալ աւագիկ որպէս բարեգործ նստի 'ի միջի ձերում անհոգութեամբ: Բայց դուք զնամանին զամենայն, զոր գրեալ և կնքեալ է առ կայսր և առ ամենայն աշխարհն Հռոմոց, և կամ առ այլս բազում, տեսանել հրամայեցէք զայն. և որպէս ձեզ Արեաց կամ է, հրաման տուեալ կատարեցէք 'ի վերայ մեր: Զի ուր գրեալք և կնքեալք 'ի միջի են, որպէս ձեր արդարութիւնդ, աւելորդ բանից և շատխօսութեան պէտք անդ ոչ են »:

Յաղագս Հաստատութեան և Հերքման.

Նիւթոյն առաջարկութենէն և անոր հետ կապակցեալ իրաց պատմութենէն ետև՝ հաստատութիւնն, այսինքն փաստից բացատրութիւնն կուգայ: Յայտմ է ճառին բոլոր ոյժն, և կերպով մը անոր բովանդակ իսկութիւնն:

Կուինտիլիանոս կը պատուիրէր ճարտարախօսաց, փաստից շարակարգութեան մէջ նմանիլ այն խոհական զօրավարին որ իր քաջ և կորովի զինուորներն առաջնեկ կարգը կը դնէ, մէջ տեղը կը կեցընէ զանոնք որոնց քաջասրտութեանը վրայ վստահութիւն չունի, իսկ վերջին կարգին կը պահէ քանի մը ընտիր գնդեր, որոնցմով ապահովէ յաղթութիւնն: Ճարտարախօսն պէտք է այնպիսի հաստատուն փաստերով սկսի, որոնցմով կարենայ իր խնդրոյն վրայօք լաւ գաղափար մը առնել տալ, որկար փաստերն ճառին մէջ տեղերը ապդին անդին ցրուելու է. իսկ վերջին հարուածն տալու համար, պէտք է համոզիչ և զօրաւոր ապացոյցներ պահել: Պիրոն սպարապետն իմանալով որ Հենրիկոս երրորդի մահուընէն ետև՝ ոմանք Հենրիկոս չորրորդին Անդղիա քաշուելու խորհուրդ կուտան, քիչ խօսքի մէջ թագաւորն այսպիսի որոշողութենէ մը ետ կեցընելու ամենայն կարևոր փաստերն կը բովանդակէ.

« Զինչ աղէ, տէր արքայ. խորհուրդ տան քեզ ելանել 'ի ծով, որպէս այն թէ չգոյր այլ հնար պահպանու-

թեան տէրութեանդ՝ բայց թէ 'ի բաց գնալով անտի։ Նա թէ և չէիր 'ի Գաղղիա, հարկ իսկ էր ընդ ամենայն վտանգս և ընդ խոչ և խութ անցանել, առ 'ի գալ այսր հասանել. և մինչ ասա կայցես, կամին զի 'ի բաց ելանիցես. և զոր մեծամեծ ճգանց թշնամեաց քոց չէր մարթ տալ քեզ գործել, ըստ խորհրդոյ բարեկամացն քոց՝ քոյո�վ կամքդ արասցես։ Ի վերնակին յոր գտանիսդ՝ եթէ միայն առ քսան և չորս ժամս ելանիցես արտաքս քան զԳաղղիա, տարագիր անտի զանձնդ արասցես անդարձաբար։

« Նա և վտանգն իսկ չէ այնքան մեծ ինչ որքան ցուցանեն առ քեզ։ Որ զմեզ պաշարեալն խորհին, այնոքիկ են զորս արգելեալ կալաք անարգանօք 'ի Բարիզ, և կամ արք՝ որք ոչ աւելի ինչ արժեն, և ընդ միմեանս մանաւանդ ելցէ նոցա գործ՝ քան եթէ մեզ հակառակ։ Ի վախճանի, 'ի Գաղղիա եմք, տէր արքայ. և հարկ է զի թաղցիմք աստանօր. յաղագս պետութեան է խնդիր. պարտ է ժառանգել զայն կամ զկիսանս կորուսանել։ Նա թէ և նուիրական անձինդ բաց 'ի փախստականէ չգոյր այլ ապահովութիւն, գիտեմ աներկբայ, թէ քան զայդպիսի փախուստ առաւել ընտրեսցես զմահ անվրկանդ արուեստամբ։ Ոչ հանդուրժեսցէ տէրդ վերափառ զի ասիցեն թէ մանուկ ոք 'ի տանէն Լուդովիկայ լռեցոյց ինչ զքեզ, որչափ և առաւել ծանր լիցի քեզ լսել թէ մուրացար առ դրունս օտար իշխանի։

« Ոչ, տէր արքայ, անդր ըստ ծոմն չէք քեզ թագ և պատիւ։ Ընդ կանխելդ խնդրել յԱնգղիացւոց օգնականութիւն, նոքա յետս կասեսցին. և եթէ իբրև զայր փախստական 'ի նաւակայս անդր Ռոշելայ երևիցիս, կշտամբանս և քամահանս ևեթ գտանիցես։ Զկարեմ հաւանել զի ունիցիս հաւատալ զանձնդ յողողդութեան ալեաց և 'ի շնորհս կամաց օտարին քան քաջացն այնոցիկ ազատաց և հինաւուրց զօրականին, որ պատրաստք են լինել քեզ 'ի պատուար և 'ի վահան։ Եւ

քանզի տեառնդ ծառայ եմ կամակատար, չկարեմ թաքուցանել 'ի քէն զի եթէ այլուր քեզ խնդրեսցես ապաստան՝ և ոչ 'ի նոցա քաջութեանն, հարկեսցին նոքա զատանել, և այլուր զիւրեանցն գտանել»։ (Մէզրէյ, Պապ. Մոնրիէն Գաղղիոյ։)

Ճշմարտութիւն մը յաղթօղ կերպով հաստատող փաստերն մէկ տեղ բերելէն ետև, պէտք է մէկդի ձգել այն թեթև պատճառները, որոնք ճառին ընդհանուր ազդեցութիւնը կը տկարացընեն։ Ամենական Ճարտարախօսք միշտ չեն պահեր այդ չափաւորութիւնն։ Անուանի Գոշէն օր մը իր սովորական յաջողութեամբը խորհրդարանին մէջ գատ մը կը պաշտպանէր։ Երբ խօսքը լմնցուց, նախագահն, դեռ քուէներն չժողված, ցած ձայնով հարցուց փաստաբանին թէ ինչո՞ւ համար 'ի նպաստ իր պաշտպանելոյն այնպիսի լաւ պատճառներ յառաջ բերելէն ետև, կարևորութիւն չունեցող ապացոյցներու վրայ շատ մը խօսեցաւ։ «Վասն զի, պատասխանեց Գոշէն, եթէ խորհրդական մը զօրաւոր փաստերէն բան մը չհասկցաւ, կարելի՞ է որ մանր փաստերն լաւ մը ըմբռնէ»։ Նախագահն առանց պատասխան տալու կ'երթայ քուէներն ժողվելու, և ըստ սովորութեան՝ իւրաքանչիւր դատաւորին իր կարծեաց պատճառն կը հարցնէ. վերջը՝ դեռ իր աթոռը չդարձած, կ'երթայ փաստաբանին քով և կ'ըսէ. «Գոշէն, քու մանր պատճառներդ իրենց նպատակին հասան»։ Բայց այս ալ պէտք է խոստովանիլ որ թէ և այդ տեսակ կերպն փաստաբանին դատին յաջողութեանն ու շահուց համար օգտակար է, բայց ճառին գեղեցկութեանն ու ճառախօսին անուանը մեծ վնաս կը բերէ։

Հերքումը ընականապէս հաստատութեան հետ կապակցեալ է, վասն զի ճշմարտութիւն մը այն ատեն կը հաստատուի, երբ անոր հակառակ առարկութիւններն կ'եղծանին։ Թէ խորհրդարանի բեմին վրայ և թէ ատեանի առջև ճարտարախօսն իր պաշտօնն ամբողջ կատա-

ռած ջըլլար, եթէ իր պատճառներն դնելէն վերջը, հա-
կառակորդացը պատճառներուն չպատասխանէ։ Նոյն
իսկ քարոզի բեմին վրայ, ուր աւետարանի պաշտօնեայն
դիմացէն պատասխան մը առնելու վախ չունի, պէտք է
որ սրտից խորը քննէ, և տապալէ այն ամէն իմաստա-
կութիւններն զոր կրնայ թելադրել մեղաւորին,
աստուածային օրինաց զանցառու ըլլալու համար։ Մա-
սնչլեռն գոհ չըլլար ցուցընելով թէ ողորմութիւնն
պարտք մըն է, այլ նաև մարդկանց անկից ազատ ըլլա-
լու համար յառաջ բերած սովորական պատճառանք-
ներն կը հերքէ.

« Զեմ, ասես, կարի ընչաւէտ, և չունիմ ինչ աւե-
լորդ։ Եւ ընդէ՞ր այս. քանզի թոյլ տաս ցանկութեան
զառանին կարևորայն զլէտս յարդարել։ Կարի իսկ ըն-
չաւէտ ես, յորժամ հասանէ հաճոյակատար կարեացդ
լինել. և ոչ ևս լինիս ընչեղ, յորժամ հարկ լինի զեղ-
բարսդ մսիթարել։ . . . Զախողանս իմն ժամանակին
պատճառիս. այլ ինասիցե՞ն ինչ քոյոցդ կարեաց՝ տա-
ռապանք բազմութեան. հատանիցե՞ն ինչ 'ի քոյոցդ վա-
յելից։ Եթէ այդ կարձել զծախսդ հարկեցուցանէ, կար-
ձեսջիր նախ զամենայն զոր դատապարտ առնեն կրօնք
յընչից դործածութիւն. չափ դիր սեղանոց քոց, պա-
ճուճանաց, խաղուց, սերձութեանց և շինուածոց, ըստ
աւետարանական վարդապետութեանն. գոնեայ վեր-
ջին քան զամենայն անխայութիւնս՝ ողորմածութեանն
լինիցի. յառաջ քան զպարտս, զմեզս քո 'ի բաց հատա-
նիջիր։ . . . Բազումք յոյժ են, ասես, աղքատք՝ կա-
րօտեալք օգնութեան. այլ ուստի՞ իցէ, աղաչեմ, այդ-
քան բազմութիւն աղքատաց, զորոց 'ի տրտունջ հա-
տանիս. ո՞չ ապաքէն յամենածախ զեխութենէ անտի,
որ անծանօթ իմն էր առ հարսն մեր. ո՞չ 'ի քոյոցդ ան-
չափ և 'ի ծայրայեղ ծախուց, որ զհետ իւրեանց ածեալ
բերեն զնուազումն սիրոյ ողորմածութեան։ Անչափու-
թիւնք մեր, եղբարք իմ, և կարծրասիրտ խստութիւն

յաճախեն զթիւս տառապելոց։ Մի ուրեմն այդպէս
զնուազութիւն տրոցդ անբասիր կացուցանէք. զի այդ
անմեղադիր առնել է զձեզ նովին իսկ ձերովքդ մեղօք։
Ո՛հ, տրտնջէք զի նեղեն զձեզ աղքատք, բայց և նոքին
իսկ յաւուր միում թերևս բողոքեսցեն զայնմանէ. մի
ուրեմն դրէք նոցա 'ի մեղս զձերդ անզգայութիւն, և
մի յերեսս հարկանէք նոցա զայն՝ ընդ որ անշուշտ յա-
ւուր միում յանդիմանեսցեն զձեզ առաջի աստենին Քրիս-
տոսի »։

Այսպէս հայրապետն Գիւտ 'ի դերև կը հանէր Մա-
խաղու Գադիշոյ ամբաստանութիւնն 'ի դուռն Պարսից.

« Ամենայն ասացեալքդ Մախաղու . . . են՝ որ արդ-
դար են, և են՝ որ ոչ են ստոյգ արդար։ Քանզի սիրել
զքրիստոնէութիւն և որ ոք քրիստոնեայ է, զայդ ոչ
ընտրեալ պահեմ յանձին իմում, այլ 'ի մանկութենէ
իմմէ. և զամենայն մարդ որ վրիպեալ է 'ի ճշմարտու-
թենէ՝ առեմ. և կամիմ թէ ամենայն որ 'ի ճշմարտու-
թենէն մոլորել կամիր, և գնալ զճանապարհ՝ որ ոչ է
ուղիղ, և դայր հնար բռնութեամբ և կամ աղաչելով, այլ
թէ և կարասուով կարէի հաւանեցուցանել, ջանայի
անվնասիր մոգք, և ոչ տայի կորնչել այնպիսւոյն զան-
գիւտ կորուստն։ Այլ որ ասէնդ՝ թէ երթևեկք նորա 'ի
Հռոմն, ոչ ըստ կարծեաց դորա և խօսիցն այդպէս են
իրքն, քանզի սուտ է։ Այլ վասն զի զդպրութիւն դի-
տութեանս մերոյ և զիմաստ բանաւոր ուսմանց յաշխարհ
հէն Հռոմոյ ուսեալ եմ, և են իմ անդ ծանօթք բա-
զում և ուսումնակիցք։ . . . Այլ զհնազանդութիւն
ծառայութեան օրէնքն իսկ մեր պատուիրեն հատու-
ցանել տերանց զդիպողն և զարժանաւորս »։ (Փար-
պեզի)։

Սարգիս վարդապետ այսպէս կը հերքէ քահանայից
դէմ եղած բամբասանքն.

« Զայր վարդապետ եթէ տեսանեն որ 'ի կերակրիկ
ինչ մտաբերիցէ, և բարեբիկ հանդերձիկ ագանիցի, և

զմի ոք արբանեակ ունիցի՝ որ զկարևոր պէտս նորա վճարէ, զի մի անձամբ ջրբեր լինիցի և փայտակոտոր և հրավառ, և 'ի կարևորսն դոյաւոր եցէ, բամբասեն երդիծանեն. մեծատուն է, ասեն, զիաՀրդ զայլս կարիցէ յանդիմանել: Եւ արդարև մեծատուն եմք 'ի սակաւուն, քան նոքա 'ի բազմին. զայս և նոքա ակամայ խոստովանին: Զի մեք թէպէտ և սակաւ ունիմք, մեծանամք. և նոքա թէպէտև զամենայն աղխաղեսին, աղքատանան: Մինչև ցերբ անմտանամք, աղէ ասացէք. չեցէ՞ բաւական մեր կարիքն մեզ'ի տանջանս, այլև 'ի բամբասանացն յաւելումք մեք վնասս: Եթէ.քո ինչ մի տուեալ է զոր ունի նա, ո՞չ զվարձն կորուսանես բամբասանքն: Եւ եթէ.քո խակ տուեալ է, բնաւ ընդէր բամբասես. նախ քեզէն վկայեիր՝ եթէ զոր ունէրն աղքատաց էտ, և ասա էտուր նմա. և արդ քեզէն բամբասես: Եթէ գիտէիր եթէ աւելաստացու է, զի՞ բնաւ էտուր և դարձեալ բամբասես: Իսկ եթէ այլոց տուեալ է, և դու զայդ առնիցես, և ամենարին աղէտք են. զի չէտուր ինչ, և բամբասես զայն ինչ՝ զոր այլքն բարի արարին: Ո՞րչափ ինչ կարծիցես նոցա վարձս, որք այդպիսի բանս 'ի քէն լսիցեն, և վասն Աստուծոյ տանիցին վրէժս »:

Հայք առ Միհրներսեհ Ժողովական նամակին մէջ առանց պատասխանելու այն խօսքին թէ՝ մահը չար աստուածն ըրաւ, ուրիշ խօսքերով անոր ըսածը կը հերքեն.

« Եթէ զմահ չար աստուածն արար, զինչ դոյացուցիւն երևի մահու 'ի միջի. և ոչ ինչ. բայց զի զբարի աստուածոյ զարարածսն խանգարեաց: Եթէ այդպէս է, նմա և բարի խակ ասել ո՞չ մարթի, այլ կիսագործ ապականացու: Եւ որոյ աստուածոյ արարածքն ապականելիք են և եղծանելիք, նմա անեղծ աստուած չմարթի ասել: Տի օն անդր թողէք զչմարուութեան զբարբանջմունսդ: Միոյ աշխարհի երկու դեհապետք ոչ լինին, և ոչ միոյ արարածոյ երկու աստուածք »:

Յաղագս հաւատարեան, բովանդակութեան և վերջաբանի.

Ճառ մը վերջացնելու երբէք կերպ կայ. երբ նիւթն քիչ ընդլայնմունք կը վերցնէ, և Ճարտարախօսն կիրք գործածելու պէտք մը չունի, բաւական կը սեպէ հետևութիւն մը յառաջ բերել: Տելեմաք Ելիսեան դաշտաց մէջ Ճանապարհորդելով, Արկեսիոսի ստուերն Թագաւորութեան պարտքերն և անպիտան Թագաւորաց պատիժն երևոյթաստարդ իշխանին յիշեցնելէն ետև, այս պարզ խօսքերով կը լմնցնէ իր խօսքը. « Երկիր ապա, որդեակ իմ, երկիր 'ի վտանգաց աթոռոյ՝ սպառազինեալ արիութեամբ ընդդէմ անձին, ընդդէմ կրից քոց, և ընդդէմ մարդահաճութեան »:

Ճարտարախօսն շատ մը պատճառներ հաստատելէ ետև, սովորաբար լմընցնելու առեն զանոնք կը համառօտէ. այս է բովանդակութիւն ըսուածը: Այսպէս Որեստ բովանդակութիւն կ'ընէ այն պատճառներուն՝ որոնցմով Պիւռոս ստիպեալ է Հեկտորի որդին իր ձեռքը մատնելու.

« Կատարեա ըզՀելլենացն ամենեցուն ըզփափաք.
Ըզվրէժ նոցա լոյծ, յապահովեա ըզքոյ կեանս.
Կորուսջիր ըզթըշնամին բազմավրտանգ չարաչար,
Որ քեզ հնարեսցի պատերազմել ընդ նոսա »:

Իսկ երբ նիւթը ծանր է, և Ճարտարախօսն ալ զգացուած է, կը վերջացնէ խօսքը՝ ունկնդրաց կիրքն յուզելով, և անոնց սրտին մէջ խոր տպաւորութիւն մը ձգել կը ջանայ. այս է յատկապէս վերջաբան ըսուածն. Զենք կրնար վերջաբանի աւելի գեղեցիկ օրինակ մը տալ քան զայն շատ անգամ յիշատակեալ հատուածն՝ որով Պոսիւէ Գոնտէի իշխանին դամբանական Ճառը կը վերջացնէ.

Եկայք, Ժողովուրդք, ՝ն եկայք այժմիկ. այլ մանաւանդ եկայք իշխանք և տեարք, և որ դատիք զերկիր, և որ զդրունս երկնից բանայք մարդկան, և առաւել քան զբնաւս՝ դուք արքայք և տիկնայք, աղնուական շառաւիղք թագաւորաց բազմաց, լուսաւորք Գալիլեոյ, այլ՝ այսօր նսեմացեալք և 'ի Թուխս համակեալք ցաւոցդ՝ իբրև մառախլապատք, եկայք տեսէք զդոյզն ինչ որ մնայ մեզ յայնչափ 'ի մեծաշուք սերնդենէ, յայնչափ մեծութենէ, յայնչափ փառաց. ակն արկէք շուրջանակի յամենայն կողմանս: Աւադիկ է զոր կարող դառաւ առնել փառաւորութիւն և բարեպաշտութիւն 'ի պատիւ դիւցազնին. շքեղ անուանք, արձանագիրք, մնոտի նշանակք այնք՝ որ ոչ ևս է 'ի միջի, պատկերք յարտօսրաթոր կերպարանս շուրջ զչիրմաւ, և անցաւոր օրինակք ցաւոց՝ զոր ամենայնիւ հանդերձ՝ վարէ տանի ժամանակ. սիւնք՝ որ մինչև յերկինս ամբառնալ թուին զբարձրանման վայրութիւն չքութեան մերոյ. և յամենայն պատիւս յայս՝ չէք ինչ որ 'ի միջոյ պակաս իցէ, բայց այն ևեթ՝ որում լինին: Լացէք արդ 'ի վերայ ողորմ մնացուածոց մարդկեղէն կենաց, ՝ողբս առէք 'ի վերայ եղուկ անմահութեանն՝ զոր ընծայեմք դիւցազանց:

« Այլ՝ մնա մատիք մանաւանդ ՝ով դուք՝ որ հրաբորբոք ընթանայք յասպարիսին, հոգիք պատերազմականք և ամենիք. ՝ով ոք արժանագոյն դառաւ հրամանատար ձեզ կալոյ. այլ յո՞ւմ ումեք պարկեշտագոյն գտէք զհրամանատարութիւն: Աշխարեցէք ուրեմն զմեծ զօրավարն, և ասացէք հեծեծելով. Աւասիկ որ առաջնորդէրն մեզ՝ 'ի վտանգս. ընդ սովաւ վարժեալ կրթեցան այնքան անուանի զօրապետք, զորս օրինակք իւր բարձրացուցին յառաջին պատիւս պատերազմի. կարող էր ուրուն իւր տակաւին վանել զմարտս, և աւասիկ 'ի լռութեան աստ իւրում՝ անուանն անդամ խրախոյս մեզ հարկանէ, և միանդամայն ազդեցութիւն առնէ մեզ, թէ առ 'ի դառանելոյ 'ի մահու զնշմար ինչ մնացեալ 'ի վաստա-

կոցս, և չերթալոյ ամենևին անյոյս 'ի յաւիտենից յարկս՝ ընդ երկրաւոր արքային պարտ է պաշտել և զարքայն երկնից: Տարայք ուրեմն պաշտօն թագաւորին այնմիկ անմահի, որ լին է ողորմութեամբ, և զմի ևեթ հեծութիւն անդամ թուեսցէ զձեր, և զբաժակ մի ջուր մատուցեալ յանուն իւր, քան թէ այլք բնաւ զարիւն ձեր հեղեալ բովանդակ. և սկիզբն հաշուելոյ ըզժամանակ պիտանի ծառայութեանցդ՝ առէք յօրէ յորմէ ընծայիցէք զանձինս ձեր Տեառն բարեբարի:

« Իսկ դուք ՝ոչ դայցէք յայս տխուր մահարձան, դուք՝ ասեմ, զորս հաճեցաւ նա հանել 'ի կարգ բարեկամաց: Ամենեքին միահամուռ, յոր չափս մտերմութեան իւրոյ և ընկալեալ իցէ զձեզ, փարեցարուք զչիրմաւս, հեղէք արտասուս հանդերձ պաղատանօք, և սիրացեալք ընդ իշխանին մեծի դիւրահեշտ բարեկամութիւն և ընդ անուշակ կենացն հաղորդութիւն, պահեցէք զսիշատակ դիւցազնին՝ որոյ հաւասար էր բարութիւն իւր ընդ սրտին արութեան: Ո՜տայր թէ սիրելի լինէին ձեզ միշտ խօսք զնմանէ, ո՜տայր թէ շահեցէք յառաքինութեանց նորա, և մահ նորա զոր արտասուէք՝ լինէր ձեզ 'ի մխիթարութիւն, համայն և յօրինակ բարի:

« Իսկ ինձ, եթէ ներեսցի յետ այլոց ամենեցուն գալ և ինձ հատուցանել զյետին պարտս առ այս դամբարան, ՝ով իշխան, այր արժանաւոր գովութեանց մերոց և ցաւոց, յաւիտեան կեցցես յուշ յիշատակիս. պատկեր քո կենդանի նկարեալ կացցէ անդ, ոչ անվեհեր քաջութեամբդ որ զյաղթութիւն աւետեր, ոչ. չկամիմ տեսանել ինչ 'ի քեզ զոր եղծանէ 'ի նմա մահ. այլ 'ի պատկերի անդ կերպարանք իցեն քեզ անմահականք. տեսից զքեզ անդ՝ որպիսի էիր յաւուրն յետնումն ընդ ձեռամբն Աստուծոյ, յորժամ փառք նորա սկսան իմն երևել քեզ: Անդ տեսից զքեզ առաւել յաղթական քան 'ի Փրիպուրկ և 'ի Ռոքռուա. և հիացեալ ընդ չքնաղ յաղթանակդ՝ 'ի խոստովանութիւն գոհութեան գոչեցից զդեղեցիկն

բարբառ աշակերտին սիրայնոյ. «Եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր»։ Ճշմարիտ յաղթութիւն, որ կոխան դնէ ոսկից մերոց զընաւ աշխարհ, հաւատքն մեր են։ Վայելեա՛ արդ, իշխանդ՝ի յաղթութիւնդ յայդ, վայելեա՛ յաւիտեան՝ անմահ զօրութեամբ պատարագիս. հաճեաց ընդ յեռին ճիգն ծանօթ քեզ ձայնի. դու վախճան առնիցես ամենայն ճառիցս այսոցիկ։ Յայսմ հետէ՝ փոխանակ զայլոց մահ ողբալոյ, մեծդ իշխան, կամիս ուսանել՝ի քէն՝ սուրբ առնել զիմս. երանի՛ թէ՝ ի սպիտակ ալեաց ասսի խրատեալ զհամարոյն՝ զոր կայ ինձ տալ ընդ պաշտաման սպասաւորութեանս, պահեցից հօտիս՝ զոր պարտիմ մնուցանել բանիւն կենաց՝ զնշխարեալ մնացորդս ձայնիս որ նուաղի, և զեռանդանս՝ որ շիջանի»։

Խորենացին, Հռիփսիմեայ նեբբողին այսպիսի վերջաբան մը կ՚ընէ.

«Այսոքիկ քեզ յիմոց բանիցս պտուղ, երջանիկդ՝ի կանայս, նահատակ յաղթող և հարսն սուրբ, ոչ պսակ ձիթենւոյ ոլոմբիական մարտից յաղթանակ, և ոչ թագ ոսկիակուռ ակամբք փայլեալ՝ի զարդ արքայական հարսանեաց. այլ մաքուր ընտանեդոյն ընծայ սիրողաց բանին, և ծաղիկ խմաստութեան՝ի Քրիստոս, արեամբ աւոդեալ բուրաստան, և համահաւաքեալ՝ի զարդ քում հարսնութեանդ, որպիսեօք պսակիս ծաղիկք. առաջին քրտունք իմոյ նորաբոյս հոգւոյս, որ զքեզ սիրէ սիրեցեալդ յիսկապէս բարւոյն։ Որ և ընկալցիս գթութեամբ որպէս է՝ արդարև մայր գորովագութի, և յիս դարձուսցես զգթութիւն սիրոյնն զքեզ փեսայացեալ բանին. զի ես ցնծացայց ընդ քեզ յերևեալ լուսոյ փառաց նորա։ Եւ զամենեսեան զմեզ՝ զորս արեամբ քո ծնար յորդեգրութիւն բանին, մշտահայց աղօթիւք յանձն արասցես նմա՝ ծածկեալդ ընդ հովանեաւ թևոց նորա։ Որպէս զի առաջնորդեալք լուսով աւետարանին, ընդ անգոյս անցանելով յաւիտենից, ՝ի հանգերձեալն ժամանեսցուք հասանել՝ի կեանս»։

Լամբրոնացին իր Համբարձման Ճառին մէջ վերջաբանի մը դրեթէ ամենայն կարևոր կանոններն կը բովանդակէ.

«Ո՞վ մեծի շնորհիս, ո՛վ անճառ երախտեաց. ո՛վ անկշռելի երախտեաց որուս՝ արժանի գտար, եկեղեցի, ՝ի համբառնալս Քրիստոսի։ Զի Աստուած՝ի մեր կոյս է, և ոչ ոք է մեր հակառակ։ Հայր արդարացոյց զքեզ միածնին արեամբ ձրի շնորհօք. և նովաւ հանդերձ այսօր զերկինս ամենայն երկնային փառօքն շնորհեաց քեզ։ Ո՞վ դատապարտե՞ զքեզ, կոյս սուրբ, որ խօսեցար հարսն Քրիստոսի, և յանդիման կացեր նմին հաւատով, յորժամ Աստուած զքեզ արդարացոյց, և ընդ նմին յարուցեալ յերկինս նստոյց։ Յիսուս Քրիստոս մեռաւ վասն սիրոյ քո, և յարուցեալ եղ այսօր յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր բարեխօս վասն մեր. զի՞նչ է յերկրային հեշտութեանց որ կարէ մեկնել զմեզ՝ի սիրոյ նորա։ Բա՛ց զաչս քո, և տես թագաւորին քո զփառս, և՝ի նոյն փութացեալ երագեա։ Արի՛ ՝ի բաց զքօղ տգեղութեան երկրաւոր սահեցման, և մտա՛ ընդ յոյսն քո՝ի նեբբոյ վարագուրին տարածման։ Խարիսխ քո յերկինս, դու ընդէ՞ր՝ի ստորինս կորանաս։ Թագաւորն քո յաթոռն փառաց և շնորհաց, դու ընդէ՞ր մատչել առաջի նորա հեղգանաս։ Կարապետն Յիսուս զերկնից դուռնն այսօր մտեալ քեզ երաց, դու ժողովուրդ նորա և հօտ՝ ընդէ՞ր ճշմարիտ ճանապարհաւն առ նա հանդչել յուլանաս։ Աստի՛ն հրաւիրեցար գնալ՝ի յերկրէ՝ ի յերկինս, յապականութենէ յանապականութիւն, ՝ի միջոց կարճաց՝ի հրեշտակաց դասակցութիւն։ Դարձիր յունայնութեանց, և կացո՛ զոտս քո յուղիղ պողոտայն. զի գնացեալ ընդ նոյն այժմ հաւատով, արժանի լիցուք՝ յետ եկեցն աստի՝ երկնային տանն օթեւանացն հոգւով, և յաւիտենական կենացն՝ի հանդերձեալ դալուստն մարմնով»։

Եղիշէ այսպէս կը վերջաբանէ Միանձանց խրատն.

« ԵԹԷ եկեսցես զհետ գեղեցիկ վարդապետութեան հարցն՝ զորս վերագոյնն դծագրեցի քեզ զվարս սուրբ միայնակեցացն, յայնժամ կարասցես համբառնալ զաչս մտացդ առանց ախտից չարչարանաց, հայել և տեսանել զքեզ գէր 'ի վերոյ քան զամենայն երկինս. երանի տայցես անձինդ՝ քաջապէս ճողոպրեալ 'ի վշտալից կենաց աշխարհիս։ . . . Դու ես այնուհետև մարգարէն, որ ոչ պատրեցար 'ի մարմնական աշխարհիս. այլ թեւածեալ թռուցար յանմարմին աշխարհն, և հանգուցեալ դադարեցեր յանապական ուրախութիւնն »։

Կիկերոն ջատագովելով զԼիգարիոս, որ Կեսարու առջև դատաստանի կանչուած էր, իբրև անոր թշնամի և որդւոցը հակառակորդ, այսպէս կը վերջացնէ խօսքը.

« ԵԹԷ կարօղ էիր 'ի խոր նկատել զԼիգարեանցն միաբանութիւն, զեղբարն զամենայն ընդ քեզ լեալ վարկանէիր։ Իցէ՞ ինչ ումեք յերկմիտս լինել, զի եԹԷ Լիգարիոս Յիտալիա գտանէր, 'ի նոյն միտս և 'ի խորհուրդս լինելոց էր՝ յորում և եղբարքն։ Ո՞է որ զսոցա համաշունչ և զմիախոհ մտերմութիւն յայսմ գոգցես եղբայրական հարԹ հաւասարութեան ոչ գիտիցէ. ո՞ ոչ 'ի միա առնուցու, ԹԷ ամենայնի մարԹէր լինել՝ և ոչ հարազատացս այսոցիկ յայլ և այլ միտս և 'ի բախտս աստանդել։ Ամենեքեան ուրեմն ընդ քեզ եղեն կամք սրտիցն. մին մրրկաւ յափշտակեցաւ. որ եԹԷ և կամաւ էր զայն արարեալ, նման այնոցիկ լինէր՝ զորս համայն դու և այնպէս ապրեցուցանել հաճեցար։ Բայց լեցի երԹեալ 'ի պատերազմ, օգտեալ՝ ոչ 'ի քէն միայն, այլ և յեղբարցն։ Սոքա քոյդ պաղատին առ քեզ։ . . Բայց փոքր ինչ էյիշէլս իմ զայս. ակն ունիմ ԹԷ և դու ինքնին, որ ոչինչ սովոր ես մոռանալ բայց միայն զառ քեզ անկիրաւութիւնս, զի այս մտացդ է, զի և հանճարոյդ, դու ինքնին 'ի խորհելդ ինչ զսորա գանձաւորութեանէն և զայլոց ոմանց գանձապետաց՝ ուշ 'ի կուրծս արկեալ յիշատակեսցես։ Արդ սա այս Լիգարիոս, այժմ

յողոք առ քեզ անկեալ աղերսէ զեղբօրն փրկութիւն։ Զոր եԹԷ սորա միջնորդելով յորդորեալ շնորհեսցես երկոցունց սոցա, եղբարս երիս ամենալաւս և անարատս, ոչ ինքեանց միայն և ոչ այսչափ և այսպիսի ապանց և ոչ մեզ սիրելեաց նոցա, այլ և ընկերհաշտութեանս լեցի քո պարգևեալ։ Արդ զոր փոքր մի յառաջ 'ի տաճարին խորհրդոյ ցուցեր 'ի Մարկելլոս յայրն աղնուական և հոյակապ, աղէ ցոյց զնոյն յատենի աստ և առ եղբարսն ընտրականս և գովելիս համօրէն այսմ բազմութեանս։ Զոր օրինակ շնորհեցեր զնա աւագանւոյն, տուր նոյնպէս և զսա ժողովրդեան, զորոյ զկամսն սիրեցեր միշտ յոյժ։ Եւ եԹԷ օրն այն քեզ 'ի մեծ փառս, ժողովրդեան Հռովմայ 'ի խնդութիւն եղև, մի ինչ՝ աղաչեմ՝ յերկբայս վարանիր, Կեսար, զնմանօրինակ գովութիւն այնր փառաց յաձախ և ստէպ խնդրել։ Զի էիք ինչ հաճոյ ժողովրդեան քան զբաղցրութիւն, և ոչ մի ինչ յառաքինութեանց քոց 'ի բազմաց՝ ոչ յաւէտ սիրալի, և ոչ առաւել սիրելի քան զողորմածութիւն։ Զի ոչ այլով իւիք առաւել հուպ մատչին մարդիկ առ աստուածն, որպէս փրկութիւն գործելով մարդկան։ Զիք ինչ 'ի բախտին քում այլ ինչ մեծ՝ բայց զի կարօղ էցես, և ոչ 'ի բնութեան քում այլ ինչ լաւ՝ բայց զի յողովագունից լցես կամեցօղ փրկութեան։ Ճառս իմն երկայնագոյնս պահանջէր թերևս դատն, այլ քո բնութիւնդ հաւաստեաւ զկարճագոյն։ Արդ քանզի առաւել շահ համարիմ՝ քեզ ինքնին ընդ քեզ խօսել, քան ԹԷ ինձ կամ այլում ումեք, աստանօր վախճան արարից. զայս ևեԹ քեզ յուշ արկեալ, զի եԹԷ հեռաւորին այնմիկ շնորհեսցես զկեանսն, պարգևելոց ես ամենեցուն սոցա աստ եղելոցս »։

Այս վերջաբանս, արտասանեալ 'ի Կիկերոնէ, խախտեց Կեսարու անդրդուելի պնդութիւնը, որ այլայլած՝ ձգեց ձեռքէն ամբաստանութեան գիրն, և կամակար ներուն շնորհեց Լիգարիոսի։

Բ.

Յաղագս կանոնաց դասաւորութեան պատկանելոց ամենայն ազգի նիւթոց.

Ինչ սկզբունքներ որ ինչուան հիմա սահմանեցինք՝միայն ճարտասանական դասաւորութեան կը պատշաճին. բայց դասագրքիս համար գրած սահմաններս լսացընելու համար, այս ըսածներէս զատ՝ ուրիշ ամէն տեսակ շարագրութեան վերաբերեալ քանի մը ընդհանուր կանոններ ալ աւելցընենք :

Նիւթ մը որչափ ալ պարզ ըլլայ, կրնայ միշտ զանազան մասն բաժնուիլ: Այս մասանց առաջին յատկութիւնն է՝ գլխաւոր իմաստէն չխոտորիլ, անոր հետ կապակցութիւն ունենալ, և ամէնքն ալ մի ինչ ակնարկել: Դարձեալ որչափ ալ նիւթոյ միութեամբ պէտք է մասունքն իրարու հետ կապուին, սակայն պէտք է նաև իրարմէ որոշեալ ըլլան, և իրարու մէջ չխառնուին: Վերջապէս այնպիսի կարգաւ մը պէտք է իրարու յաջորդեն, որ ազդեցութիւնն երթալով սաստկանայ: Ասկից յառաջ կուգան լաւ դասաւորութեան մը համար սահմանեալ երեք ընդհանուր պայմանք.

ա. Միութիւն նիւթոյ.

բ. Բաժանումն մասանց.

գ. Աստիճանաւորութիւն:

Այս սկզբունքներն որ և իցէ տեսակ գրութեան մէջ ալ պէտք է պահուին: Հասարակ գրուածոյ մէջ անգամ կայ արուեստ մը մասունքներն յարմարցնելու, որով ամբողջութիւնն աւելի դուրս կը ցատքէ. և գրեթէ շատ անգամ եղերերգի մը, տաղի մը, վերտառութեան մը, և ամենէն թեթեւ շարագրութեան բովանդակ դեղեցկութիւնն հանճարեղ դասաւորութենէն կը կախուի:

Գրածնիս պարզ նամակ մ'ալ ըլլայ, դարձեալ պէտք է խնամքով աշխատիլ, զանիկայ դասաւորելու համար: Գործոց վերաբերեալ նամակ մը պէտք է ըլլայ յստակ, կանոնաւոր և ճիշդ. և յստակութեան ու ճշդութեան հասնելու համար, պէտք է իւրաքանչիւր իմաստին գրուելիք տեղը մտածել: Բարեկամի մը գրուած նամակ մը, որուն մէջ տեսածնիս ու զգացածնիս կը բացատրենք, տաղտկալի ու ձանձրալի կ'ըլլայ, եթէ գրողն դեռ առաջինն չմընցուցած՝ երկրորդ իմաստ մը կը սկսի, վերջը յանկարծ երկրորդը կը ձգէ, առջինին կը դառնայ, ամէն բանի վրայ հարեւանցի մը խօսելով և զանոնք իրարու հետ խառնելով, առանց ուրիշ կանոնի մը հետեւելու բայց եթէ տկար մտաց և անհաստատ երեւակայութեան մը բերմանցը: Իրաւ նամակի մը գեղեցկութիւն առուողն բնականութիւնն և անզարդ կերպն՝ խառնակ ու շփոթ կերպէն: Կրնայ մէկը նամակի մը մէջ նիւթոյ մը վրայօք համառօտ մը անցնիլ, և թողուլ որ կարդացողն զօրութեամբ բան մը հասկընալով զուարճանայ. կրնայ՝ առանց իր մտածութիւններն սաստիկ իրարու հետ կաշկանդելու՝ շուտով նիւթէ նիւթ անցնիլ. բայց թէ ինչ ըսել կ'ուզէ պէտք է գիտնայ. և թէ և դեռ գրիչը ձեռք չառած՝ գրութեանը կարգ մը գրած չըլլայ, պէտք է գէթ միտքն եկած իմաստներն հետզհետէ դասաւորէ, և դարձուածք մը գրած ժամանակ՝ եռեւէն գալիքներն կանխատեսէ: Մեր այս գրած կանոնն կը հաստատեն Սեվինեայ նամակներն, որոնց մէջ դարձուածոց և նիւթոյ շարունակ զանազանութիւն մը կը տիրէ, բայց երբեք խառնակութիւն մը չտեսնուիր. իր պատմած ամենապարզ բաներն զմեզ կը դրաւեն կամ կը զուարճացնեն, վասն զի դեպ-

քերն ասպիճանաւ մը յառաջ կը բերէ, և գեղեցիկ կարգաւ մը կը շարէ։ Նոյն իսկ երբ մեզի անանկ մը կ'երևայ որ իր ըսածը կը կրկնէ, երբ մի և նոյն թղթին մէջ մինչև հինգ անգամ աղջկանը իր վերջին ողջոյնն կուտայ, կերպով մը կ'իմացնէ որ այդ շատ անգամ կրկնած ողջոյնն իր սրտէն առաջ կուգայ, և թէ իր հեռաւոր աղջկան մտածութիւնն այնպէս զինքը գրաւած է՝ որ չի կրնար ոչ ուրիշ բանի վրայ խօսիլ և ոչ գրիչը թողուլ։ Հանդերձ այս շարունակ կրկնութիւններով՝ իւրաքանչիւր իմաստ իր տեղն է, և այդ երևցած խառնակութիւնն ուրիշ բան չէ բայց եթէ յայտնի նշան մը որ կը ցուցընէ թէ ինչ պատճառէ դրդեալ կը գրէ այդ նամակը։

Խօսակցութիւնն անգամ տեսակ մը կարգ և դասաւորութիւն կը պահանջէ։ Հոս խօսակցութիւն ըսելով չենք հասկնար այն հասարակ բացատրութիւններն՝ զորոնք ամէն օր անտարբեր անձանց հետ կը գործածենք, և շրթունքն զանոնք իբրև սովորութիւն ըրած կ'արտաբերէ՝ առանց մեր մտածելուն, այլ կ'իմանանք քաղաքական գործոց, գեղարուեստից, փիլիսոփայութեան և կամ մատենագրութեան վրայօք եղած կարևոր և աշխոյժ խօսակցութիւն մը։ Ի՞նչպէս կրնանք կարծիք մը այնպէս պաշտպանել որ ուրիշներուն հաճելի ըլլայ և համոզուին, եթէ խօսելէն առաջ կամ խօսելու միջոցին մեր մտածութեանց կարգ մը չդնենք։ Առանց կարգի, կրնանք թերևս հանճարեղ խօսք մը գտնել որ այլոց ծիծաղը շարժէ, բայց վիճաբանութիւնը պարզող լոյս մը տուած չենք ըլլար։ Զպահանջուիր որ մէկն առաջուց պատրաստէ խօսակցութիւնն, և տպագրութեան սահմանեալ գրուածոյ մը պէս՝ կանոնաւոր դասաւորութեան տակ ձգէ զայն։ ըսել կ'ուզենք միայն որ նոյն իսկ սակաւաթիւ ընկերութեան մը մէջ չենք կրնար այլոց վրայ ազդել, թէ որ եկածին պէս խօսելու ըլլանք, և թէ որ և իցէ պարագայի մէջ կարգաւորութիւնն ամենակարևոր յատկութիւն մըն է։ Նիւթական բաներու մէջ՝ անկարգութեամբ ու շռայլութեամբ մեծամեծ հարստութիւններն կը փճանան։ իսկ խելքով ու խնայողութեամբ՝ չափաւոր ստացուածք ունեցողներն կը հարստանան։ նոյնը կ'ըլլայ նաև մեր մտածութեանց նկատմամբ, և այն հասակէն՝ յորում մեր ստացած սովորութիւններն յկեանս կը տևեն, պէտք է ջանանք՝ ինչպէս մեր ունեցածն լաւ գործածելու, նոյնպէս նաև մեր մտածութիւններն լաւ դասաւորելու վարժեցնել զմեզ։

Գ.

Յաղագս Ճոխաբանութեան.

Ինչպէս որ պէտք է՝ նիւթոյն վրայ մտածելէ, և անոր մասունքն պատշաճ կարգովմը դասաւորելէ ետև, պէտք է ճոխաբանութեան կամ ոճոյն վրայ աշխատիլ։ «Գրեթէ միշտ՝ զուրցուած բաներէն աւելի, զանոնք զուրցելուն կերպը կ'ազդէ մարդուս, կ'ըսէ անուանի հեղինակ մը։ վասն զի ամէն մարդիկ քիչ շատ նոյն գաղափարներն ունին այն բանին վրայ՝ որ ամենուն սովորական է։ բոլոր տարբերութիւնն՝ բացատրութեան կամ ոճոյն մէջն է։ Թատերական քերթուածոց մեծագոյն մասն նախանձով, իրարու հետ գժտելներով և հաշտուելներով կը ձևանան, բայց ուրչափ քիչ հանճարներ կրցած են բացատրել այդ մանր հանգամանքներն՝ զոր ամենայն հեղինակք նկարագրել ուզած են։ Զուրցուածքի ոճն՝ ամենէն սովորական բաներն ալանսովոր կ'ընէ, ամենէն տկար բաներն կ'ուժովցնէ, և ամենէն

պարզ բանեբուն վսեմութիւն մը կուտայ »։ Ռասինի մտածած խմաստ մը ուրիշ հասարակ բանաստեղծից աշ մտքէն անցած է. ինչպէս Բրատոն իր Փեդրային մէջ Իպպոլիտայ ըսել կուտայ առ Արիկիա.

« Ընդքեզ տեսանելով լը քանեմ ղորս երկոց.
Իմ այն էր երբեմն հաճոյագոյն ըղբօսանք.
Արդ միայն առ'ի խորհել ևեթ 'ի քեզ՝ երթամ յայն»։

Տեսնենք հիմա նոյն խմաստն Ռասինի գրչին տակ.

« Պատկեր քո ըզկնի իմ գայ 'ի խորս անտառաց.
Նեղէ զիս ամենայն, աղեղն և սլաքք և դեսպակ.
Հրահանգք Պոսիդոնի 'ի մուռացօնս ինձ եղեն.
Միայն հեծութեամբ հառաչանացս հընչեն մայրք.
Ընդ ձայն բարբառոյս նըժոյգքս անգործք մուռացան»։

Ի՜նչ տարբերութիւն։ Ինքն իսկ Ռասին կ'ըսէր իր բարեկամացը. « Բրատոնէն և Գորասէն աւելի լաւ չեմ մտածեր, բայց անոնցմէ լաւ կը գրեմ »։ Հոս զբանաստեղծն՝ հետևակ քերթողէն և ընդհանրապէս ընտիր ախորժակի տէր եղող հասարակ գրողէն զանազանողն այն է՝ որ առաջինն իր մտածութիւնը մէկէն ամբողջ առջևնիս կը դնէ, մինչդեռ երկրորդը գիտէ պարզել զայն, այսինքն զայն կազմող առանձին խմաստներն բացատրել։

Ուրեմն ոճոյն կատարելութիւնն ոչ միայն բառից՝ այլ նաև խօսքին հիւսուածքն ձևացընող երկրորդական խմաստից ընտրութենէ և շարակարգութենէ կրկախուն։ Երբ կ'ըսենք թէ Ռասինի ոճը գերազանց է, անոր համար է վասն զի մէկ կողմանէ կը մտածենք թէ ինչպէս բանաստեղծն այն ճիշդ խմաստներն այնպիսի պարզութեամբ մտքին մէջ ստեղծեր և այնպիսի կատարեալ կարգաւ մի շարեր է, որ իրարու ոյժը կ'աւելցնեն, մէկալ կողմանէ կը նկատենք այն յատուկ զուրցուածքներն, զորոնք թերևս հեղինակն աշխատած ու փընտռած է, բայց մեզի իր գրչին տակ իբրև բնական եկած կ'երևան. այն բացատրութիւններն՝ որոնց մէջ պարբերութեան մէջէ մէջ դարձուածքներն ամենևին խմաստին պարզութեան վնաս մը չեն բերեր, և այն բառից դէղեցիկ շարուածքն՝ որով Ռասինի տողերն կրնային առանց իսկ այն սիրտ յափշտակող սքանչելի լեզուն պարունակելու, ամենէն աւելի ականջ զուարճացնող ներդաշնակաւոր երաժշտութիւնն ըլլալ։ Բաւական է բանանք միայն այն բանաստեղծին խաղերն, և հոն այս երկու կատարելութեանց աշ օրինակն կը գտնենք։ Առնենք օրինակի համար Արտաշիսի զսասանեալ Եսթերն քաջալերելու համար զուրցած խօսքերն.

« Զգիտեմ զոր գեղոյ շընորհ 'ի քեզ միայն գրատանեմ,
Որ ինձ քաղցր է հանապազ և երբեք ոչ ձանձրանամ։
Ո՛վ ցանկալի ազնուութեան հեշտ և ազգոյ զօրութիւն։
Ամենայնն անմեղութիւն և քաղցրութիւն է յԵսթեր.
Մըռայլք սեաւ դառնութեան նովաւ 'ի բաց փարատին.
Եւ աւուրք իմ մընթազդածք՝ փոխին 'ի տիւ գեղապայլ »։

Անշուշտ ինչ ախորժ որ կը զգանք այս տողերս կարդալով միայն բառից ընտրութենէն ու քաղցրաձայնութենէն չէ, այլ նաև անոնց բացատրած զգացմունքներէն ու խմաստներէն։ Եթէ այն կարգն որով հեղինակն իր խմաստներն յառաջ բերած է խառնակելու ըլլանք, ոչ միայն աշ բառերը նոյն մնան, նոյնպէս ճիշդ և դաշնակաւոր ըլլան, աշ այն տողերուն մէջ զմեզ յափշտակող գեղեցկութիւնն չենք գտներ։ Նոյնպէս նաև ենթադրելով որ Արտաշէս նոյն խմաստներն մի և նոյն կարգաւ բացատրէ, բայց բառերն իր սրտին զգացմանն համեմատ չըլլան, և այնպէս անյարմար շարուած ըլլան, որ ոչ պարզութիւն ըլլայ և ոչ ներդաշնակութիւն, դարձեալ մեզի համար նոյն ախորժն չմնար։ Ասկից կրնանք հետևցնել որ ոճն երկու զանազան տարերքներէ կը բաղկանայ. մէյմը խմաստից կարգաւորութենէն ու աշխուժութենէն, մէյմ՛աշ բառերն ըն-

տրելու և խօսքին մէջ անոնց յարմար տեղն դնելու կերթ ախորժակէն.

Տարակոյս չկայ որ դժուարին է խմաստ մը և զայն կազմող բացատրութիւններն իրարմէ զատել. բայց որով հետև կ'ուզենք քննել թէ լաւ խօսիլն ինչով կ'ըլլայ, պէտք է շփոթենք երկու նիւթ՝ որ իրենց միութեամբն հանդերձ իրարմէ զատ են: Ուրեմն նախ խմաստին վրայ խօսինք, և ետքը բառից վրայ. վասն զի խմաստը պէտք է բառերէն առաջ անցնի, և ինչպէս Մոնդեսքիեը կ'ըսէ, խօսքին կ'իյնայ ծառայել և ետևէն գալ:

Ա.

Յաղագս Իմաստից.

Խմաստից մէջ քննելու երեք բան կայ. ա. Խմաստից ընդհանուր յատկութիւնքն՝ զիրենք առանձինն առնելով. բ. Խմաստից իրարու հետ ունեցած յարաբերութիւնքն. գ. Իւրաքանչիւր մասնաւոր մասնաւորածքն, այսինքն անոր տրուած կերպն, կամ յատ իմաստից ըսուածն:

Ա. Յաղագս առանձինն իմաստից.

Իւրաքանչիւր խմաստ, զատելով իր քովի խմաստներէն, և նկատելով միայն իրրև որ և է իրի մը պատկեր կամ բացատրութիւն, անփոփոխ օրինաց տակ կ'իյնայ:

Յաղագս յատակռաբևան իմաստից.

Խմաստի մը առաջին յատկութիւնը՝ յատակութիւնն է: Բաւական չէ ընդհանուր դասաւորութեան ժամանակ՝ նիւթոյն ամբողջութիւնն լաւ ըմբռնած ըլլալն. պէտք է նաև բոլորին իւրաքանչիւր մասունքն բացայայտ կերպով մտքին մէջ ունենալ: Մ. Ռուսոյ հիւանդութեան մը վրայ խօսելով, որ իր մարմնոյն կէսն անդամալուծութեան վիճակի մէջ ձգած էր, այսպէս կը բացատրէ իր միտքը.

« Սապէս մինչ հասան ամուր մոյթ,
Յոր իմ մարմնոյ յեցեալ կայր,
Թողու արեանցս ջերմոտ
Տածել ըզկէսն իմ տրկար.
Նուաղեալ կիսոյն երկրորդի՝
Ի գայթ և գլոր անկանի.
Ըզգայ զն ճնչանց բազմահնար՝
Զոր զօրութիւն իւր թափէ,
Տիրէ միշտ կողմն տրկար.
Եւ զուժգնագոյնսն պարտէ »:

Այս ոտանաւորիս առջի տողերէն բան մը կը հասկըցուի, որչափ ալ բացատրութեանց մէջ ճշդութիւն չկայ. Ռուսոյ իրեն իրրև նեցուկ ծառայող գաւազանէն զուրկ մնալով, մարմնոյն անդամալուծեալ մասը կ'իյնայ, և մէկալ առողջ մասն իրեն հետ մէկտեղ կը գլորէ. բայց վերջին չորս տողերն կատարեալ միութեան մը մէջ են. և այս միութիւնն չէ թէ միայն բառից, այլ և խմաստին մէջն է:

Յաղագս ճշգրտութեան իմաստից.

Յստակութեան հաւասար՝ կարեւոր յատկութիւն մ'ալ ճշգրտութիւնն է։ Խմաստ մը ճշգրիտ է, երբ իրական բան մը կ'արտայայտէ, և կ'արտայայտէ ինչպէս որ է, զոր օրինակ երբ կ'ըսեմ. « Կամիմ, խորհիմ, նեղիմ, զուարճանամ » , այս գործողութիւններս կ'իմացընեմ այն ժամանակը որ կը կատարուին։ Թարձեալ խմաստ մը ճշգրիտ է, երբ երկու իրաց մէջ որոշ յարաբերութիւն մը կը հաստատէ. ինչպէս երբ կ'ըսեմ թէ՝ Զար է ստութիւն, ջարին և ստութեան գաղափարին մէջ յարաբերութիւն մը կը հաստատեմ, որուն ճշմարիտ ըլլալը մոքովս կը վկայեմ։

Կարելի չէ ամենայն խմաստից մէջ չափաբերական ճշդութիւն մը պահանջել։ Բաց 'ի այն անթերի ճշգրտութենէն՝ որ գիտողութեանց արդասիք մըն է, և բաց 'ի այն ճշմարտութենէն՝ զոր իմացականութիւնն և կատարեալ դատողութիւնն մեզի կը յայտնեն, կայ տեսակ մը երկրորդական ճշգրտութիւն զոր սիրտն և երեւակայութիւնն իրենց համար բաւական կը համարին։ Երբ Գոռնէյլ իր անձինքներէն մէկուն՝ արդար բարկութեան մը կրից մէջ ըսել կուտայ.

« Զըկայ ինչ անհնարին որում ըզվրէժ հօր խընդրէ». ըստ ինքեան չըուրցեր կատարեալ ճշմարտութիւն մը. վասն զի բնութիւնն ու մարդիկ կրնան ամենէն աւելի օրինաւոր կրից դէմ ալ անյաղթելի արդելքներ դնել. բայց սիրտն կ'ընդունի այդ սկզբունքն և կը հաւատայ անոր, վասն զի իր զգացածը կը բացատրէ, թերեւս լաւքան զարամաբանական ձեռնարկութիւն մը. և այս կ'ըսուի ճշգրտութիւն զգացողական։ Բանաստեղծ մը խօսելով Գոլինեիի վրայ, որ իր պատկառելի կերպոնքն ու անխռով խօսքերուն իր մարդասպանները զինաթափ ըրած էր, կ'ըսէ.

« Մեծն այն այր, շուրջանակի 'ի սպանողացըն պատեալ,
Իբր արքայ թըւէր հըզօր՝ զոր ժողովուրդ իւր պաշտէ ».

հոս ալ դարձեալ բանաստեղծն չըսեր այնպէս յայտնի և այնպէս բացարձակ կերպով ճշմարիտ բան մը ինչպէս երկու՝ երկու ալ չորս կ'ընեն. բայց բորբոքեալ երեւակայութիւնն պէտք ունի իրականէն դուրս ելլելու, և զուտ ու պարզապէս ճշմարիտն իրեն ցուրտ և անբաւական կ'երեւի. մոտացածին բան մը պէտք է իրեն, և բանաստեղծին հնարած բացատրութիւնն իրեն աւելի ճիշդ կ'երեւի, ճշմարտութենէն քիչ մը անդին անցած ըլլալուն համար. և է այս՝ ճշգրտութիւն երեւակայական։

Սենլամպեր այսպիսի առակաւոր վէպ մը գրած է. « Պալատական մը պատժուած ըլլալով կ'անիծանէր իր թագաւորը։ — Ի՞նչ կ'ըսէ ատիկայ, հարցուց թագաւորը։ — Կ'ըսէ թէ, պատասխանեց խմաստուն մը, Աստուած ներուսն պարգևէ ողորմած խշխանաց։ — Կը խաբէ զքեզ, ըսաւ չար մարդ մը. եղկելին կ'անիծանէ զքեզ։ — Լսուռ կեցիր, կրկնեց թագաւորը. և խմաստնոյն կողմը դառնալով, « Բարեկամ, ըսաւ, քու խօսքդ ճշմարիտ է միշտ »։ Ժուպէր այս վէպս յառաջ բերելով, հանձարեղ կերպով մը մեկնէ զայն. « Խմաստունն, կ'ըսէ, զգործն այլափոխելով, կը զուրցեր ճշմարտութիւն մը որ երբեք պէտք չէ մոքերնէս ելլէ. իսկ չարասիրտն բուն իրը զուրցելով, ճշմարտութիւնն մոռցընել տալ կը ջանար »։

Մտածութիւն մը կրնայ ըլլալ ճիշդ, բայց և հաստատակայ մոտց հակառակ ըլլալ. և այս կը կոչուի անսովոր ասացուածք։ Բայց շատ անգամ այսպիսի անսովոր ասացուածն սխալ կ'ըլլայ. վասն զի շատ քիչ անգամ կը

հանդիպի որ բազմութեան կարծիքն, կամ հասարակաց միտքն ուղիղ սկզբան մը վրայ հիմնեալ չըլլայ: Ուստի պէտք է զգուշանալ անսովոր մտածութիւններ փնտռելէ, ինչպէս որ շատ մտաւորականներ կ'ընեն, կարծելով թէ անով սեփհական ոճ մը ստացած կ'ըլլան: Բուն սեփհական ոճն՝ ամենուն հասարակաց եղած մտածութիւններն մեղի յատուկ կերպով մը բացատրելուն մէջն է:

Մտածութիւն մը, ուղիղ ըլլայ կամ ոչ, երբ առանց քննութեան ընդունելի եղած է, կանխակալ կարծիք կ'ըսուի: Իւրաքանչիւր դար և իւրաքանչիւր երկիր ունի իրեն կանխակալ կարծիքներն, որոնք երբեմն խիստ հիմնական են. սակայն ճարտասանն կամ մատենագիրն պէտք չէ գործածէն մտածութիւն մը ինչուան որ իրենց ուղիղ դատման քննութեանը տակ չձգեն զայն:

Բ. Յաղագս ընդ իրևարս յարաբերութեանց խմաստից.

Բաւական չէ որ և է առանձինն խմաստի մը այդ երկու կարևոր յատկութիւններն, այսինքն ճշդութիւն ու յստակութիւն ունենալն. այլ միանգամայն ինչպէս խօսքին հիմնական դլխաւոր խմաստից մէջ, նոյնպէս նաև իւրաքանչիւր դլխաւոր խմաստին հետ միացեալ երկրորդական խմաստից մէջ մանաւոր կապակցութիւններ պէտք է ըլլան:

Յաղագս ընդ միմեանս համաձայնութեան խմաստից.

Պէտք է ամենայն խմաստք իրարու հետ համաձայնին, և մի և նոյն նիւթոյ վերաբերին: Այս կանոնս նոյն իսկ մարդկային մտաց բնութիւնն կը պահանջէ, որ մի և

նոյն ժամանակ մէկ բան մը միայն կրնայ ըմբռնել: Անոր համար խմաստներն շարելու միջոց պէտք է նայիլ որ անոնց շարքին մէջ հետևութիւն մը ըլլայ, և ամենևին հակասութիւն մը չերևնայ. մէկ ամբողջութիւն մը ձևացընեն, և մտաց վրայ մէկ տպաւորութիւն մը միայն աղդեն:

Մասիլլեոն այս խմաստն թէ՝ առանձնականաց վարքէն աւելի՝ իշխանաց վարմունքն ժողովրդեան բարուցը վրայ աղդեցութիւն ունին, այսպէս կ'ընդլայնէ.

« Դուշնաքեայ մարդիկ՝ անձանց ևեթ ծնեալ թուին. յոռութիւնք նոցա կամ լաւութիւնք՝ իբրև զբախտ նոցին նսեմ են. խառն ընդ խուռն խուժանին, թէ անկցին, թէ հաստատուն կացցեն, անծանօթ մնան յաշխարհէն. կորուստ նոցին կամ փրկութիւն անձամբք չափ իւրեանց սահմանի. կամ դէթ օրինակ նոցա, թէ և հրապուրեալ ստերիւրեսցէ երբեմն յառաքինութենէ, սակայն հարկ առնել և համարձակել զչարութիւն ոչ ունի: Իսկ իշխանք և մեծամեծք՝ վասն այլոց թուին ծնեալք: Աշխարհն՝ որ 'ի տեսիլ և յերևանի կացուցանէ զնոսա, նոյն և կաղապար զնոսին արկանէ. բարք նոցա անդէն վաղվաղակի փոխին 'ի բարս հասարակաց. համարեալ թմն այնպէս, թէ արժանաւորքն մեծարանացս՝ չեցեն անարժան նմանութեան մերում. խառնազանձին չէք այլ ինչ օրէնք քան զօրինակս իշխեցողացն. վարք նոցա՝ որպէս թէ բուսեալ բողբոջեն 'ի ժողովրդեան. և թէ ախտք նոցին դատնիցեն ինչ պարսաւադէտս, բազումք այն են՝ որ 'ի նմանելոց նոցա իսկ իցեն»:

Հոս կը տեսնենք թէ ինչպէս բոլոր խմաստներն մէկ ընդհանուր կապով մը իրարու հետ միացած են. ինչպէս ընդլայնման ամենայն մասունքն կը յայտնեն այս մէկ մտածութիւնս, թէ ռամիկն մեծամեծաց օրինակին հետևող է: Այն խմաստն, որ այդպէս կանոնաւոր ամբողջութիւն մը կը կազմէ, մաս մըն է մեծագոյն ամբողջութեան մը՝ ուր դարձեալ միութիւն կը տիրէ. հա-

տուած մէն է Մասիլլեոնի Փոքրիկ Քառասնորդաց առաջին Ճառէն, որուն մէջ ամենայն ինչ իշխանաց օրինակին ըրած աղաչութիւնն ցուցընելու կը ծառայէ: Փոքրիկ Քառասնորդաց բովանդակ Ճառերն մի և նոյն վախճանն ունին. և մէկ մտածութիւն մը միայն կը յայտնեն, այսինքն է հրահանգել զԹագաւորն: Մինութիւնն, արուեստից 'ի բնութենէ առած հիմնական օրէնքներէն մէկն է:

Յաղագս անցման.

Իմաստներն՝ իբրև ամբողջութեան մը մասունք նկատելով, պէտք է իրարու համաձայն ըլլան. բայց կառ մը պէտք է որ իւրաքանչիւր մասն իր նախընթացին ու հետևորդին հետ միացընէ. և մէկէն մէկալն բնական կերպով երթալու համար անցք մը պէտք է. այս կապն և այս անցքն հռետորը կոչած են անցումն: Պուալոյ զուրցած է թէ գրութեան արուեստին մէջ ամենէն դժուարին բանն անցմունքն են. գէթ անոր ամենակարևոր մասերէն մէկն են. վասն զի չկայ բան մը որ այնպէս խօսքին վայելչութիւն և կորով տայ, ինչպէս զայն բաղկացնող իմաստից կատարեալ կապակցութիւնն:

Բեմական և առեղական Ճառից մէջ ընդհանրապէս անցմունքն պարզ են և նոյն իսկ նիւթոյն բաժանմամբն կը ձևանան: Ֆլէշիէ երեք մասն բաժնած է Մոնդոզիէի նեբբոն. և ջանացած է իր դիւցազնին վարուցը երեք առաքինութիւնքն գովասանել, որք են սէր Ճշմարտութեան, նախանձ արդարութեան և հոգի ուղղութեան: Ճառախօսն՝ որ այնչափ խնամքով պերճախօսութեան մանր մասանցն ուշ կը դնէ, Ճառին առաջին մասն լմընցընելէն ետև՝ շատ հեռու չերթար երկրորդ մասին անցնելու համար զուրցուածք մը գտնելու, այլ բաւական

կը սեպէ ըսել. « Ահա այսպիսի էր սէր նորա առ Ճշմարտութիւն. տեսցուք որպիսի ինչ էր նախանձ նորին վասն արդարութեան»: Նոյնը կ'ընէ նաև երկրորդ մասէն երրորդ անցնելու համար. « Աւասիկ, տեսաք, արդարութիւն նորա. արդ ոչ այլ ինչ մնայ ինձ բայց զոգի ուղղութեան նորա ցուցանել առ ձեզ »: Կիկերոն իր ջատագովութեանց և քաղաքական հրապարակախօսութեանց մէջ շատ անգամ այս կերպս բանեցուցած է: Եւ իրօք ալ այս տեսակ անցումն կրնայ բաւական ըլլալ երբ բաղմութեան առջև խօսելու առեն հարկ կ'ըլլայ կտոր մը հանդչիլ, կամ Ճառին այլ և այլ մասանցը մէջ քանի մը վայրկեան ընդհատութիւն ընել:

Սակայն բանաստեղծն, բանասիրական Ճարտարախօսն և ընդհանրապէս ամենայն մատենագիրք՝ որոնց ջանքն է աւելի հաճոյ ըլլալ քան թէ համոզել, աւելի հանճարեղ և անակնկալ անցմունք կը փնտռեն: Ասոր շատ օրինակներ կը գտնուին Ֆոնդընելի գովասանական Ճառերը մէջ: Պուալոյ, Ֆիերդոշէան արուեստին մէջ ուղղելով բանաստեղծութեան այլ և այլ ճիւղերուն կանոններն աւանդել, առանց ընդհատման և առանց անհարթութեան մէկէն մէկալն անցնելու համար՝ ճարտարութեամբ անցման կերպերն կը փոփոխէ: Հովուերգութեան կանոններն այս կերպով համառօտելէն վերջը.

« Այս ահա աղդեցութիւն և վայելուչ շնորհ քերթածոյս »,

Այսպէս եռեւէն կը բերէ եղերերգութիւնը.

« Բարձրագոյն ասացուածով, այլ ոչ յոխորտ յանդգնութեամբ

Եղերերգն ողբանքուէր », և այլն:

Վերջը, եղերերգութենէ 'ի քնարերգութիւն անցնելու համար այսպիսի դարձուածք մը կը բանեցընէ.

« Յեղերական երգս ողբոց անկ է սրբոյն Լեթ խօսել.

Սակայն տաղն՝ առաւել պերճ և ոչ ընդհատ աղդողական,

Մինչ յերկինքս թռուցեալ ըղխրոխտ քնթացսըն Ճա-
խրասլաց, » Լայն։

Գրուածքի մը ամենայն մասունքն այս կերպով շաղ-
կապելու և անոնց կցուածքն ընթերցողին յայտնի ջը-
նելու համար, պէտք է իրարու հետ աւելի յարակցու-
թիւն ունեցող մասերն խնամքով իրարու քով դնել.
ինչպէս որ վերը յիշատակած քերթուածնուս մէջ
Պուալոյ հովուերգութենէ վերջը եղերերգութիւնն
կը դնէ, եղերերգութենէ վերջը տաղերգութիւնն, եր-
գիծաբանութենէն վերջը գուսանական երգն, և ող-
բերգութենէ վերջը գիւցազներգութիւնն։ Պէտք է
նաև այս զանազան մասերն բնական կապերով իրարու
հետ միացընել։

Անտրոմաքայ ողբերգութեան մէջ անցման ձև մը
կայ՝ որ իբրև նախատիպ օրինակ կրնայ համարուիլ։
Որեստեայ խօսակցութիւնն, որուն արդէն սկզբնաւո-
րութիւնն ու վերջին մասն յիշատակեցինք, կը սկսի նախ
գովեստով զիշխանն՝ առ որ Ճարտարախօսն իր խօսքը
կ'ուղղէ. բայց այս մեծարանաց զուրցուածքներէն վերջը
հարկ է բուն խօսքին նիւթն անցնիլ, և ահաւասիկ ինչ
հնարք կը բանեցընէ Որեստ. Պիւռռոսի հօրն՝ Ա.քիլլէսի
փառքն յիշեցէն վերջը, կ'ըսէ.

« Արութիւն նորա և քոյ հանդէպք ազգէն մեզ զարմանս.
Զի նովաւ անկաւ Հեկտոր, իսկ քեզ Տրոյա ջընջեցաւ.
Եւ դու բարեբախտ յանդգնութեամբ յուցեր յայտ
Զի որդիդ Ա.քիլ'լիսի միայն լըցեր զնւր տեղն։
Այլ ըզնոր զայդ ըզքոյ գործ դաւն է Յունաց տեսանել՝
Զի զաղգին Տրովացւոց զողորմ աղէտսըն բառնաս,
Եւ զնչեալ մըտադիւր յաղխտաբեր գրթութիւն,
Զերկար պատերազմի ըզմընացորդըն պահես »։

Օրինակք անցման 'ի նախնեաց. « Եւ արդ վասն զի
ծանուցաւ փոքր 'ի շատէ որքան միանգամ յաստուա-

ծազգեստիցն տուաւ յաղագս երկնայնոցն կարգաւո-
րութեան, բէր այսուհետև զընտանեգոյնն մեր գիցուք
առաջի առ 'ի քննութիւն »։ (Շնորհ.)

« Այլ այսոքիկ քեզ բաւականացեալ, ես 'ի կարգ
պատմութեանն դարձայց «։ (Յովհ. Խոր.)

« Բայց մեք զայսոսիկ 'ի տեսօղս անդր թողացուցեալ,
և զորս աչօք իսկ տեսեալ է մեր՝ ոչ դանդաղեսցուք
պատմել »։ (Նոյն.)

« Այլ էգիտեմ զիարդ վայրապար ընդ խաբս Եկի
յայսպիսի բանս. զայլս խրատէի հեզութեամբ ուսու-
ցանել, և ես ինձէն 'ի ցասումն զառածայ։ Թէ այնպէս
լցէ, դարձցուք անդրէն 'ի մեր խրատն, և հոգ տաբ-
ցուք ամենայն թերութեան կենաց մերոց, զի ուղղես-
ցուք զոր կամիցիմք »։ (Ոսկէբ.)

« Ահաւասիկ երեք Ճառք, և զսկզբանս բան ոչ ես կա-
ցացաք լուծանել. մի թէ վայրապար ինչ ասէի՝ եթէ
խորք անդնդոց են միաք Ճառիցս։ Օն առեալ այսօր զմնա-
ցեալսն արկանիցեմք 'ի հաթց և 'ի փորձ »։ (Ոսկէբ.)

Յաղագս աստիճանաց իմաստից.

Շատ մը մեկտեղ ժողվուած իմաստից մէջ հաստա-
տելու երրորդ կապակցութիւն մ'ալ աստիճանաց կա-
պակցութիւնն է։ Իմաստներն պէտք է անանկ շարուած
ըլլան, որ երկրորդն առջինէն աւելի և երրորդն եր-
կրորդէն աւելի զօրաւոր ըլլան, և այսպէս հետզհետէ
սաստկանան ինչուան որ վերջինին հասցուի, որ քան
զամէնքն աւելի ուժով պէտք է ըլլայ, կամ զամէնքն իր
մէջը բովանդակէ։ Լսելու արժանի է Բասքալի այն
խօսքն՝ որով կ'ուզէ ցուցընել թէ փառաց սէրն ամէն
մարդու համար սովորական է. դիտելու բան է ինչպէս
իր կարծեացն հաստատութեան համար յառաջ բերած

ամենայն պատճառներն դեղեցիկ աստիճանաւ մը կը շարէ.

« Այնպէս թէն խարսխեալ կայ 'ի սիրտ մարդոյ մնա-
վառութիւն, զի և ռամիկսպան, և ծառայն խոհակե-
ցոյն և բեռնակիրն պարծի, և փափաքէ ունել իւր
զարմացողս. զնոյն ցանկան և խմաստասէրքն: Որք ընդ-
դէմ վառաց գրիս գրեն, զքաջ գրութեան զվառան
կամին, և ընթերցողքն նոցին՝ զվառս ընթերցանութեանն
խնդրեն. այլ՝ և ես իսկ որ գրեմս զայս՝ Թերևս զնոյն
բաղձանս յանձին կրեցեմ, և գուցէ նոյն տենչեցէ որոց
զայսն ընթեռնուցուն »:

Այսպիսի է և Սարգսի այս խօսքը. « Իսկ առաքեալքն
ոչ միայն առաքեալք, այլ և սպասաւորք, այլ և ակա-
նատեսք բանին. և ոչ միայն ականատեսք, այլ և սիրե-
լիք, և բարեկամք, և որդիք և ժառանգք, և ժառան-
գակիցք »:

Նոյնն դարձեալ այս կերպով ընկերն խրատելու և
յանդիմանելու կը յորդորէ.

« Թէպէտ լեր, աղաչեա, զամենայն հնարս հնա-
րեցիր. Թերևս կարասցես զոմանս ապրեցուցանել. և
եթէ զոմանս ոչ, սակայն կէս մի. և եթէ կէս մի ոչ,
սակայն զերիր մասն մի, սակայն տասներորդ մի: Եւ
եթէ ոչ այսպէս, գոնեայ զմի ոք 'ի բաղմաց: Եւ եթէ
ոչ զմի ոք, սակայն զքո անձնդ ապրեցուսցես 'ի տան-
ջանաց »:

Կիկերոն, միլոնեան ճառին մէջ յիշեցընելով թէ ինչպէս
կը մտածէր Կղոդիոս, որ Պոմպէոսի դէմ կը դարանէր,
կ'ըսէ.

« Եթէ էր ինչ գործ կամ այր կամ ժամանակ՝ արժա-
նի նորոդ քննութեան, անշուշտ գիպուածն Պոմպէի
էր: Դաւաճանն դարանեալ կայր 'ի հրապարակամիջի,
և ես և 'ի վայրագութիւն տաճարին խորհրդոյ, և այնպի-
սումառն մահ նիւթէր՝ զորոյ զկենացն կախեալ կային
կեանք քաղաքին. և այս յայնմ ժամանակի պետուս-

թեանն՝ յորում թէ նա միայն անկանէր, ոչ այս միայն
քաղաք, այլ և ազգք ամենայն տապալեալ կործանէին »:

Գ. Յաղագս ձևոց իմաստից.

Անկարելի է համրել ինչ ձևերս որ իմաստ մը կընայ
առնուլ. և չկրնար մեկը նախատեսել քանի կերպերով
միտքն, կիրքն և երևակայութիւնն կրնան ձև տալ ի-
մաստից. և որչափ ալ անոնց երկայն շարք մը շինուի,
անկատար է միշտ: Սակայն հաւատարք գիտած են որ
տեսակ մը ձևերս ամէն անգամ որ կը գործածուին, միշտ
սաստիկ և խոր տպաւորութիւն մը կ'ազդեն մտաց վը-
րայ. այս մասնաւոր ձևերն ընդհանուր անուամբ կոչած
են յԽոսոպիոյ, և անոնց իւրաքանչիւրին առանձինն ա-
նուններ տուած են: Դնենք անոնց դլխաւորներն, ջա-
նալով ըստ կարգի դասաւորել զանոնք:

Ա. Նկարագրական ձևք.

Ձևոց առաջին տեսակն է նկարագրութիւն իրաց.
և իր մը կը նկարագրուի ուղղակի կամ անուղղակի.
ուղղակի, երբ կը ներկայացընենք զայն ինչպէս որ է.
անուղղակի, երբ անոր նման իրաց հետ կը բաղդատենք,
կամ անկից տարբեր իրաց հակառակ կը դնենք:

Յաղագս նկարագրուրեան.

Ուղղակի նկարագրութիւնն՝ բան մը իր սեփհական
յատկութեամբքն և յարակից հանգամանքներովն մեր
առջևը կը դնէ: Այս ձևովս այնպիսի կերպով մը պէտք

է իր մը նկարել, որ զայն գրեթէ աչքով տեսածի պէս ըլլանք։

« Յուրտ պատմագիր մը, կ'ըսէ Ֆենելոն, Դիդոնի մահը պատմել ուզելով, բաւական կը սեպէ ըսել.— Ենէասայ մեկնելէն ետև անանկ սաստիկ ցաւ զգաց Թագուհին, որ կեանքն իրեն համար անտանելի եղաւ. ուստի եղաւ տանը ծայրը, և խարուկի մը վրայ կեցած՝ ինքզինքն սպաննեց— ։ Այս խօսքերս լսելով, կ'իմանանք եղածն, բայց չենք տեսներ զայն։ Իսկ Վիրգիլիոս աչքերնուս առջև կը դնէ զայն. և երբ Դիդոնի յուսահատութեան ամենայն պարագաներն մէկ տեղ կը բերէ, երբ կը ցուցնէ մեզի զինքը կատաղի և այնպիսի դէմքով մը՝ ուր արդէն մահն նկարուած է, և երբ անոր խօսել կուտայ, այն տեսարանն ու սուրն տեսնելով՝ մեր երևակայութիւնն զմեզ 'ի Կարբեգոն կը փոխադրէ. և կարծես թէ Տրոյացւոց նաւատորմիղն ծովեզերքէն փախչելն, և Թագուհւոյն անմխիթար վիճակն աչքերնուս առջև կը տեսնենք։ Այլ մեզի համար Վիրգիլիոս չէ խօսողն. ուշ չենք դներ անոր ըսածին, մոքերնիս բոլորովին Թշուառ Դիդոնի վերջին խօսքերուն գացած ըլլալով։ Բանաստեղծն աներևոյթ կ'ըլլայ. և ուրիշ բան չենք տեսներ՝ բայց եթէ ինչ որ ինքը կը ցուցնէ, և ուրիշ անձի խօսելը չենք լսեր բայց եթէ զով որ ինքը կը խօսեցընէ» ։ (Զբուցասարքութիւնք յաղագս ճարտարախօսութեան ։)

Եղիշէ՝ գեղեցիկ նկարագրութեամբ մը Վարդանանց պատերազմը կը պատմէ.

« Եւ իբրև այսպէս պատրաստեցան երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանալն, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան. և ամբոխ աղաղակին յերկոցունց կողմանցն՝ իբրև 'ի մէջ ամպոց շփոթելոց՝ ձայնմունս դորձեր և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտիցն և 'ի փայլուն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արե-

գական հատանէին։ Նա և 'ի բազում սուսերացն շողալ, և 'ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային։ Քանզի ով իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ձայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։ Այդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ 'ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելովքանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին։ Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգեան 'ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից 'ի դժուարութենէ գեռոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան։ Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի 'ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ։ Սաստկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային »։

Գեղեցիկ կը սորագրէ նաև նախարարաց կանանցը նեղութեան վիճակը.

« Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գըրգեալք և դգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և 'ի գահաւորակս, հանապազ բոկ և հեսկ երթային 'ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ 'ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամ ճովք երէոց, խոտաբուսա կենաք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական խորտիկն։ Սկացեալ ներկան մորթք մարմնոց նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին, և զամենայն գիշերն գետնաբեկք։ Սաղմոսք էին մշանջենաւոր մրմունքք 'ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէիցն։ Միաբանեցին երկու երկու իբրև ամոլք հաւանք և հա-

ւասարք՝ ուղիղ տանելով զսկսան արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն 'ի նաւահանգիստն խաղաղութեան »։

Ճարտար կը նկարագրէ և ուրացեալ Վասակայ մահը.

« Եւ երբեմն այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտս դժնդակս անդէն 'ի կապանսն։ Ջեռաւ փոր նորա. և հարան և տրորեցան դոդք նորա, և քամեալ մղեցաւ թանձրամսութիւն նորա։ Եռացին որդունք ընդ աչս նորա և 'ի վայր սորեցին ընդ ունգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար շրթունք նորա. լուծան ջիղք բաղկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոսկից նորա։ Բղխեաց 'ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն 'ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կենդանի 'ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն 'ի շրթունս նորա։ Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ 'ի դժոխս անհնարին դառնութեամբ։ Ոանհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովքն ամենայն թշնամիք նորա »։

Ընտիր օրինակ է և Յազկերտ Թագաւորին նախարարաց դէմ ցուցցած բարկութեան նկարագիրն.

« Յայնժամ դառնացեալ քան զլերդ Թագաւորն, փլուզանէր անդէն 'ի փորին զծով կամաւոր մաղձոյն իւրոյ. և ընդ քեթն և ընդ բերանն առհասարակ գոլորշի ջերմախառն ելանէր, իբրև 'ի սաստիկ հնոցէ ծուխ թանձրացեալ։ Եւ առ չհանդարտել սրտին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւն մարմնոյն, և ծակոտէր ըզբազմամթեր ամսան խորհրդոցն. ցրուէր և վանէր զամենայն խորհուրդն նենգութեան։ Եւ զոր ոչ երբեք կամէր իւրոց սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծառայից Քրիստոսի մերկանայր. . . . : Եւ ինքն զառաջեալ անդրէն դառնայր անմխիթար տրամութեամբ զօթևանս ագանէր »։

Խորենացին՝ Ճարտար կը նկարագրէ Վանայ քաղաքին տեղն.

« Տեսեալ Շամիրամայ առ երբեք ծովուն՝ երկայնաձև բլրոյ մի, որոյ նիստ երկայնութեանն 'ի մուտս կոյս արեգականդ, սակաւ ինչ առ կողեալ հիւսիսոյ. իսկ 'ի միջօրէ կողմանէ դէպ ուղիղ առ երկին հայելով քարանձաւ կանգուն անչէղ. և 'ի սմանէ զհարաւով բացագոյն հովիտ ելեն դաշտաձև երկայնաձիգ յարևելից կողմանէ լերինն ելանելով յերդ ծովուն՝ ընդարձակ և գեղեցիկ ձորաձև. որոց ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց 'ի լեռնէն ելանելով 'ի ծործորոց և 'ի հովտաց ծորեալք, և 'ի հիմանց փեղկից լերանց գետոց պերճանային, և շէնք ոչ սակաւք 'ի հովտաձև ձորակին յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք. 'ի յարևելից կողմանէ հաճեցեալ բլրոյն՝ լեառն մի փոքրագոյն »։

Գեղեցիկ կը սորագրէ և զԵրուանդակերտ.

« Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի ընդ մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ակն բիւր. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբոլոն՝ զայլ բոլորակութիւն ակն։ Իսկ զբազմութիւն այգեստանաց՝ երբ զարուեստաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն գիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարեանգաց համեմատ. իսկ 'ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ դարաւանդաց ափանց՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեցկութեան գիր, անքթթելի ելեն գոգցես 'ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի »։

Ընտիր է դարձեալ Հայկայ պատերազմին նկարագրութիւնն։

« Երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխին Բելայ, ցան և ցիր յանդուգն յարձակմամբ

ընդ երեսս երկրին սուրալով։ Իսկ Բել հեղ և հանդարտ
ամբոխիս մեծաւ 'ի ձախմէ ջուրցն 'ի վերայ ոստոյ միոյ
իբրև 'ի դիտանոցի։ Ծանեաւ Հայկ զնուամբ վառելոյ
ջոկատին, յորում Բել առաջի ամբոխին եկեալ հասեալ
ընտրիւք և վառելովք ոմամբք, և երկար միջոց ճանա-
պարհին ընդ նա և ընդ ամբոխն. և ինքն դլխանոց ա-
գուցեալ երկաթի նշանաւորաց վերջաց, և տախտակս
պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և
բազկաց. գօտեւորեալ զմէջն, և յահեկէ զոտինն՝ երկ-
սայրի. և նիզակն արի 'ի ձեռին իւրում աջոյ, և յահե-
կումն վահան, և ընտիրքյաջմէ և 'ի ձախմէ։ Եւ տե-
սեալ Հայկին զտիտանեանն կուռ վառեալ, և արս ըն-
տիրս ընդ նմա աջինս և ահեկինս, կարգէ զԱրմենակ
երկու եղբարքք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս
յորդւոց իւրոց 'ի ձախմէ, զի արք կորովիք էին յա-
ղերն և 'ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին
զինի իւր կարգեաց, երեքանկիւնի իմն կարգեաց ձևով,
հանդարտ յառաջ մատուցանելով։ Եւ հասեալ երկո-
ցունց կողմանց սկայիցն 'ի միմեանս, ահագին դղրդիւն
'ի վերայ երկրի առնէին շահատակելովն, և ահս պա-
կուցանօղս տարաղուք յարձակմանցն զմիմեանս արկա-
նէին։ Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն,
արք յաղթանդամք, բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ
յերկիր կործանէին. և մարտն յերկոցունց կողմանց
մնայր անպարտելի։ Զայսպիսի անակնուանելի դիպուած
տարակուսանաց տեսեալ արքայն սիտանեան զարհու-
րեցաւ, և 'ի նոյն բլուր ուսակ էջն՝ վերջոնանեալ ելա-
նէ. քանզի խորհէր 'ի միջոցի ամրանալ ամբոխին, մին-
չև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատս յօ-
րինեսցէ։ Զայս իմացեալ աղէնաւորին Հայկայ՝ յառաջ
վարէ զինքն, մտ հասանէ յարքայն, լի քաջիւ սկնդ
զլայնալնձն, դիպուցանէ զերեքթեւեանն կրծից տախ-
տակին. և չեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ,
յերկիր անկանի սլաքն։ Եւ այսպէս ճոխացեալն սիտա-

նեան կործանի, յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին »։
Ոսկեբերան այսպէս կը սորագրէ զօրաց պատերազ-
մի ժամանակ զգացած կիրքն.
« Զտեսանիցէս զերեսս պատերազմողացն, զնարդ
արտամագին 'ի խոնարհ կախին. յոնք ահագինք և դէմք խո-
ժոռք. աչք արիւնախառն և սիրտ 'ի թնդոյ 'ի վեր վազեն
և զկուրծս բաղխեն՝ ժողովեալք գումարեալք համօրէն,
զահի հարեալք 'ի մի վայր ժողովեալք և ճակատեալք
բազում կարգօք, առաւել յօրինուածովք »։
Գեղեցիկ կը նկարագրէ և սուրբ միայնակեցաց բնա-
կութեան տեղերն.
« Եթէ դժուարին ինչ թուիցի քեզ այս, էկ երթիցուք
յայն տաղաւարս, զի արդեամբք իսկ ուսանիցիս
զդիւրութիւնն։ Խուզս և էթ չինեցին. և եթէ չուէլ
հասանիցէ, այնպէս թողուն և չուէն, որպէս զօրական-
քըն 'ի խաղաղութեան զբանակն թողուցուն և դնայ-
ցեն. քանզի այնպէս բանակեալ էն. մանաւանդ թէ ևս
աւելի ցանկալի տեսիլ տեսանել իցէ։ Քանզի և ցանկալի
իսկ տեսիլ է տեսանել զանասպատն լի վանականօք, վարկ-
պարազի խորանօք խիտ առ խիտ թև 'ի թև հարեալ՝ ճիգն
'ի ճիգն զապատրմանցն թեւակս խառնեալ. քան զզօրակա-
նացն բանակի, ուր սրահակք ձգիցին, և զտեգս և զգե-
զարդունս կանգնեսցին, և զընկցն դեղարդեանցն զա-
զեղնակապարձս կախիցին, պղնձապատս զգլուխսն առնի-
ցեն, և մեծապայծառ ելն կմբեայ վահանացն փայլիցեն,
և կողնաւորքք և զրահապատ շողայցեն, թագաւորին
սպաս առնիցեն 'ի դաշտի ուրեք՝ 'ի հարթ և յողորկ
վայրի, և ճաշք զճաշս մղիցեն, և ընթրիք զընթրեօք
անցանիցեն, գուսանք երգիցեն, փողերք զձայն փողոցն
նուագիցեն. սակայն և այնպէս չիցէ գեղեցիկ տեսիլն
քան զայն, զորմէ այժմ ես պատմեմ։ Եթէ երթիցուք
յանապատն, և տեսանեմք զՔրիստոսի զօրականացն
զխորանս, ոչ սրահակս ձգեալս տեսանեմք անդ, և ոչ
շողունս գեղարդանց, և ոչ խորանս ոսկեզօծս արքու-

նկս, այլ այնպիսի ինչ՝ եթէ ոք յերկրի, և՝ առաւել և այնչափ երկայնագոյն այլ երկիր գործէր, և՝ ի վերայ բաղում երկինս ձգէր, ոչ ապաքէն նոր լոյն և ջնաղ տեսիլ ցուցանէր. նոյնպէս և անդ է տեսանել: Զի ինչ ընդհատ յերկնից՝ բնակութիւնն նոցա. քանզի և առ նոսա հրեշտակք լինանեն և հրեշտակապետացն տէրն: Զի թէ առ Աբրահամ՝ եկն, որ կին ունէր և որդիս մնուցանէր, քանզի եռես եթէ հիւրասէր է, յորժամ՝ էս առաւել առաքինութիւն ուրեք գտանիցէ, զմարդն աղատեալ յերկրէ, և՝ ի մարմնի զմարմինն արհամարհեալ, ոչ՝ էս առաւել և անդ բնակեսցէ, և պար առեալ շրջիցին՝ ի միջի նոցա դուռնդ հրեշտակաց. քանզի և նոքա այնպէս կազմեցին զանձինս, որպէս և նմա հաճոյ է »:

Յովհաննէս կաթողիկոս այսպէս կը նկարագրէ զմեծն Աշոտ.

« Քաջահասակ էր նա և անձնեայ և թիկնաւէտ և զուարթերես և մրայն, նկարէն լոյն և նիշ արեան յաչս ունելով, որպէս զյակինտ կարմիր՝ ի մէջ մարգարտի ծագեալ, և վայելչացեալ դեղեցկութեանն ալեօք, մեծխմաստ և քաղցրաբան, և առ կերակուրս խրախճանաց ոչ խնդացեալ նորա ընդ լաւագոյնսն, և ոչ արհամարհեալ զնուաստագոյնսն : . . . Մինդամայն իսկ ասել, եթէ որ ինչ մարդկութեանս է պիտանի՝ ոչ ինչ կասեցուցանէր »:

Իսկ Սարգիս այսպէս կը նկարագրէ զբարկացողն.

« Յօնքն անկեալք և խոնարհեալք, երեսքն դեղինք և ապականեալք, շրթունքն սեաւք և երկնեցեալք, ունչք երկայն և սուր, ձայն խոշոր և թիւր, աչք հրատեսակք, բանք ընդդիմադրեալք և անախորժելիք, և բոլորովին դժնեայ և ահարկու տեսողաց »:

Վերդիլեոս աղուոր կը նկարագրէ Ենէականին մէջ զԲրայսն դիակիր, որ մեռելները գետէն նաւակով կ'անցընէր.

« Թանձր Ախերոն տրղմայորդեալ անդընդապտոյտ,
Յուզեալ թափէ՝ ի Կոկիտոն զաւազն կոյտ.
Պահակ՝ ի ջուրսն անդ և դեռոյն այն նաւավար
Ի մռայլն ահեղ կացեալ Քարոն սոսկալիթիթար,
Ոյր՝ ի ծնօտին կախին խըռուեալ ալեաց գիսակք.
Աչքն հրացայտ, պընդէ զուսովք գրձուած գըրգլեակ:
Թիավարէ պարզեալ հողմոց և առագաստ,
Կրեալով ըղթուխ գիականց շեղջ բարձեալ՝ ի լաստ,
Ծեր հինաւուրց՝ այլ դիցն՝ ի տիպ հուժկու և ժիր:
Անդր՝ ի դեռոտիքն խառնամբոխ խրոնի ջուիր,
Ակք և կանայք և դռռ մարտկաց դի անկենդան,
Տըղայք ուղիկունք դեռ անմատոյցք՝ ի սըրսկապան.
Եւ պատանեաց՝ ի փայտակոյտ անդր՝ ի խարոյկ
Հանդէպ աչաց ծնողացն եգեալ մարմինքն առոյգ:
Իբր՝ ի նախկին սարսուռ աշնան՝ ի յանտառին
Թափին սաղարթք, կամ որպէս հաւք երամովին
Վարեալք՝ ի խիստ ձըմերայնոյ յափն՝ ի ջերմեռակ,
Մինչ ծովէն խըռնին՝ ի յայն կոյս՝ ի ցամաք.
Հանդիպակաց ափանն անձկով բազկատարած,
Պաղատէին կանխել՝ ի չու ընդ գետն՝ ի յանց.
Այլ ոխերիմն առեալ նաւաստ մերթ զայս մերթ զայն,
Զայլս՝ ի յափնէ անտի մերժէ՝ ի հեռաստան »:

Կարծես թէ առաւօտեան թռչկին զարնելը կը լսենք և բանակի մը արթընալուն ներկայ կ'ըլլանք, երբ Մարդիրոսոյ այս կտորն կը կարդանք.

« Մինչ իսկ պատերազմասէր լոյն հրճուանօք լսեն ականջք զբարբառ փողոցն՝ յարձագանգաց քարանձաւացն անդէն կրկնելոյ, և զառաջին խրխինջս երիվարաց՝ ոլոր զարշալոյսն ողջունելին: Սիրելի էր ինձ տեսանել զբանակն ընկղմեալ՝ ի քուն, զվրանսն փակեալս տակաւին, յորոց ելանէին զօրականք կիսովին զգեցեալք, զհարիւրապետն՝ առ խրճամբք զնուցն զգնալով և զբուն որթոյն ճոճելով, զպահակերն ոտնակառեալ՝ ի վեր ունելով զմատն՝ ի ձև լռութեան, առ՝ ի

ժուժկալել ընդդէմ քնոյն, զհեծեալն՝ անցանելով ընդ դեան դունագեղեալ 'ի ճառանչից այգուն. զզոհասպան՝ հանելով ջուր վասն զոհին, և յաճախ զհովիւն՝ որ 'ի ցուպ իւր յեցեալ՝ զարբուն խաչանցն դիտեր»։

Դնենք նաև Ֆոնդանայ այս կենդանագիծ տողերն որ Մոնդանվերայ և Արվեյրոնի աղբեր վրայ գրած է.

«Զի՞նչ լսեմ ձայն յանձաւդ այդ լուրթ սառնապատ.
Արվեյրոնի խոխոջք, թաւալքն են և ցայտ,
Որ ոստուցեալ և վայրանկեալ՝ ըսպառնայ
Որոց մատչենն անհարթ բարձանցն 'ի վերայ։
Վերուստ կայ բոյն արծուոյն, և շանթ փայլակէ.
Գոռան հողմունք, մռընչեն որոտք 'ի բացէ»։

Գոթողիայի ողբերգութեան մէջ Յովսափեթի ըրած պատմութիւնն նկարագրութեան սքանչելի օրինակ մըն է.

«Արախողխող ալքայորդւովք սենեակն ողջոյն Թաթաւուչ,
Անողորմ Գոթողիա սպանող դաշոյն 'ի ձեռին՝
Ըզդաշոյն զնոր սրիկայս սըրտապընդէր 'ի նախճիրս,
Եւ յառաջ ըմբկատեալ կոտորածին վարէր կարգ։
Յանկարծուստ յաչս իմ դիպաւ Յովաս Թողեալ երբ անշունչ.
Տեսանել դեռ ևս թըւիմ զդայեակ նորա սըրտաթափ՝
Որ 'ի զուր ընդդէմ դահճացն ողորմագին կայր անկեալ,
Եւ նուաղեալ, ըզնա յորսայս ունէր 'ի ծոց անդ իւրում։
Բարձի զինքն արիւնեռանդ. և 'ի Թանալ զերեսս իւր՝
Արտասուք իմ դարձուցին 'ի նա զաղդումն շընչոյն.
Եւ դեռ ևս յահէն, կամ առ 'ի զնս գըգուելոյ՝
Ըզդացի՝ խաղապատեր զինև ամենեծ իւր ծըղեօքն»։

Յաղագս մակդրաց.

Վերոյիշեալ նկարագրութեան օրինակներէն կը տեսնուի որ այս ձևոյս մէջ մակդրի գործածութիւնն մեծ կարևորութիւն ունի. և իրօք առարկայներն նկարագրելու լաւագոյն միջոցներէն մէկը՝ անոնց սեփհական յատկութիւններն նշանակելն է։ Մակդիրք խիստ շատ կը գործածուին բանաստեղծութեան մէջ, և անխափար կը բանեցուին, միայն թէ առարկայ մը ներկայացնեն և ականջի անուշ հնչեն։ Իսկ արձակի մէջ պէտք է որ խօսքին խմաստին պահանջած տեղը դրուին, ինչպէս որ Պլուֆիոն ճարտար կերպով զանոնք կը գործածէ։ Տեսնենք օրինակի համար իր վայրի ձիոց վրայ ըրած նկարագրութիւնն.

«Թափառին նոքա և վազվազեն աղատաբար ընդ մարգս անսահմանս, ուր յարաժամ ղմշտանորոգ դարնայնոյ զնորահաս արդիւնսն քաղեն. և ոչ ունելով հաստատուն բնակութիւն, և ոչ այլ յարկ ապաստանի՝ բայց զերկնից զպարզութիւն, ընչին զոգ սրբագոյն քան զկամարակապ պալատանց, յորս արդելեալ փակեմք զնոսա, անձկացուցեալ զտեղիս կայարանին. վասն որոյ երկվարքն այնոքիկ վայրագասունք՝ քան զբազումս յընտանի երկվարաց առաւել ուժեղք են և թեթևընթացք և ջղուաք»։

Մակդիր մը եթէ իր տեղը դրուած չըլլայ, խօսքը կը ծանրաբեռնէ և կը տկարացնէ։ Պուալոյ իրաւամբք ծաղր ըրած է Վերսայլի մեծ սրահին մէջ Լըսլրէօնի պատկերներուն տակ գրուած ուռուցիկ ոճով արձանագրութիւններն։ «Իր մը զարմանալի ընել տալու համար, կ'ըսէ, բաւական է զայն պարզ կերպով ծանուցանելը։ Անդ Հերկուլէսի շատ աւելի բան կը զուրցէ քան եթէ

Զարմանալի անոյշ Հռէնոսի։ Հոս տեղս զարմանալի մանկդիրն փոխանակ երկին առաւելութիւն մը տալու՝ կը նուազեցնէ զայն, և յայտնի կ'ընէ թէ ատոր հեղինակն ամէն պզտի բան խոշորցնել ուզող անձ մը պիտի ըլլայ »։
(Ճառ յաղագս ոճոյ արձանագրութեանց։)

Յաղագս բաղդատութեան կամ նմանութեան.

Անուղղակի նկարագրութիւնն՝ մերձեցուցմամբ կամ ընդդիմադրութեամբ կ'ըլլայ։ Կրնանք բան մը հասկըցնել, ուրիշ անոր նման բանի մը մերձեցնելով զայն. և ասիկայ կ'ըսուի բաղդատութիւն կամ նմանութիւն։ Այսպէս Գաղղիացի հեղինակ մը գաղափար մը տալ ուզելով Մոնթէյի բնաւորութեանը, որ արքունեաց զուարճութեանց և ապականութեան մէջ անարատ կեանք մը անցուցած էր, կը բաղդատէ զինքն Արեթուսայ աղբեր հետ, որուն ջուրն բնաւ ծովու ջրոյն հետ չխառնուիր.

Սապէս պերճ ջուրք Արեթուսայդ գեղապանծ
Թափեն 'ի ծոց բուռն Ամֆիտրիտի 'ի զարմաց
Ըզքինչ բիւրեղ և ըզպայծառ միշտ կոհակ,
Զոր չեղծանեն երբեք ծովուց դառն յորձանք »։

Դնենք նաև Լամարտինի Տաճար անուամբ ոտանաւորէն այս բաղդատութեան օրինակս ալ.

« Ո՛վ լուռ գիշեր. 'ի տաճարին անդ խորոյ
Աչաց հազիւ դայ 'ի տեսիլ ցոյս դողդոջ
Սա սեղանովք սրբոյվք վառեալ կանթեղին,
Ոչ վառ կայ սոսկ՝ մինչ տիեզերք կան 'ի քուն.
Մընխթարիչ ցոյցք բարութեանն՝ է արթուն,
Ոչ ժողովէ ըզհեծութիւն մահացուին »։

Բաղդատութիւնն՝ բանաստեղծք ստէպ կը գործածեն իրենց նկարագրական բացատրութեանց զարդ

և փոփոխութիւն տալու համար. իսկ արձակին մէջ՝, որ աւելի ծանր է, այս ձևս միայն խմաստ մը պարզելու և ուժովցնելու համար կը գործածուի։ Բասքալ չկարենալով միջոցն սահմանել, անոր գաղափար մը կուտայ այսպիսի բաղդատութեամբ. « Է բոլորակ մին՝ որոյ կենդրոնն է ամենայն ուրեք, իսկ շրջանակն՝ և ոչ ուրեք »։ Մոնդեսքիէօ հանճարեղ մերձեցուցմամբ մը կը հասկրցնէ թէ օրչափ բռնաւորութիւնն ինքն իրեն կը վնասէ. « Յորժամ վայրենիք Լուիսիանայ միրգս ուներ կամիցին, հատանեն զծառն առ արմին և այնպէս զմիրգն ժողովեն. այս աւասիկ է բռնաւորութիւն »։

Յաղագս ակնարկութեան.

Երբեմն բաղդատութիւնն բացայայտ դրուած չըլլար. և խօսքը բաղդատութենէ բոլորովին օտար խմաստ մը կ'ունենայ. բայց մէկ որոշակի և ուրիշ կէս մը անորոշ բացատրուած խօսքի մը մէջ այնպիսի ծածուկ կապակցութիւն մը կ'ըլլայ՝ որ խմաստին աւելի սաստկութեան կերպ մը կուտայ. այս ձևս կ'ըսուի ակնարկութիւն։

« Իբր այն Հոմեր ուսեալ ազգմամբքն բնութեան՝
Զայլս 'ի հաճել՝ ղգօտի շորթեաց զԱստղկան.
Մատեան նորին քաղցր հաճոյից է գանձ լի.
Յոր մերձենայն՝ դառնայ փոխի այն յոսկի »։

Պուալոյ ակնարկութիւն կ'ընէ այն փուլգացոց թագաւորին՝ որ Բաքոսին իշխանութիւն առած էր ինչ բանի որ կը դպչէր ոսկի դարձընելու։

Ակնարկութիւնն միշտ պատրուակեալ բաղդատութիւն մը չէ, այլ կ'ըլլայ նաև ծանօթ խօսք մը կամ գործ մը յիշատակելով, ինչպէս է Պիւֆֆոնի այս խօսքին մէջ.

« Մարմին իւր նրբենի, գնացքն ծանրաքայլ, փետուրք մաքուրք և գեղեցկափայլք, բնութիւնն ընկերա-

սէր՝ որով և գիւրամէտ 'ի սերտ ընտանութիւն, և երկարայուշ 'ի սէր երախտեաց, և ապա արքունութիւն նորա 'ի վաղ ժամանակաց հաստատեալ, ամենայն ինչ կրթել ցուցանել զսագն 'ի կարևորագոյն և յօգտակարագոյն անասնոցն ընտանեաց լինել »։

Միրապոյ Ժողովրդեան վրայ ունեցած ազդեցութեանը տկարանալն իմանալով, ազգային Ժողովոյն բերանն այսպէս կ'ասէր. « Գիտեմ որ Կապիտոլէն ինչուան Տարպէեան Ժայռն մէկ քայլ է միայն »։ Եւ ունկնդրաց վրայ խոր տպաւորութիւն մը կ'ընէին այս խօսքերս, որ անանկ գեղեցիկ կերպով Մանլիոսի յաղթանակն ու մահը կը յիշեցնէին։

Շագոսլրեան Ոգի քրիստոնէութեան գրոց մէջ այսպէս կը բացատրէ յանցաւոր մարդուն խղճի խայթերն ու անհանգստութիւնը. « Խնդրէ զլայրս ամայիս, այլ միայնութիւնն երկեցուցանէ զնա. յածի զգերեզմանօք, և սակայն ահ արկանէն նմա գերեզմանք։ Աչք նորա անհանգարտք են և յողդողդք. և ինչպէս ախոբիկեայրն սրահի խրախճանացն, զի մի յանկարծ փառս ինչ արգելուսցէ 'ի նմա գեսանդիցն »։ Այս վերջին խօսքերն Հին կտակարանի ծանօթ կտոր մը կ'ակնարկեն։

Ակնարկութիւնն երբեմն թեթև կերպով մը հեգնութեան հետ խառնուած կ'ըլլայ։ Սելինեէ՝ հաշտութեան մը համար աշխատած ըլլալուն վրայ խօսելով կ'ասէ թէ Յանոսի փաճարը քաղցր։

Յաղագս սենեկանուրբեան.

Շատ անգամ բան մը աւելի լաւ հասկցնելու, կամ պարզապէս խօսքին զանազանութիւն տալու համար, բաղդատութեան բոլորովին հակառակ հնարք մը կը բանեցուի, ինչ բանի վրայ որ կը խօսուի՝ անոր և ուրիշ

մասնաւոր բանի մը մէջ ամենեին նմանութիւն մը չըլլալը ցուցընելով. և այս կ'ըլլայ անմանութիւն։

Ժամանակիս մատենագրաց մէկն Մոնդէսքիէոյի երիտասարդութեան առեն բաւական ազատութեամբ գրած աշխատութեան մը վրայ խօսել ուզելով, այսպէս իր միտքը կը բացատրէ.

« Վարժապետն Պլատոնի, նախնեաց իմաստութեանն առաջնորդ, չև զմարդկան մոլորութիւնս ուղղեալ, ձեռն էարկ նախ 'ի զարգացումն արուեստից. սակայն նախնիքն զգօնամիտք միշտ 'ի կէս քաղաքակեալս տեսին զերեսին Շնորհն գրոշմեալս գրչաւ Սոկրատայ 'ի տիս պատանութեանն. այսմ պարկեշտութեան ոչ պատկառեկաց Մոնդէսքիէս ». (Վիլլեն. գովեսք Մոնդէսքիէոյ։)

Ահաւասիկ անմանութեան ուրիշ օրինակ մ'ալ, ուր միայն խօսքին զանազանութիւն տալու համար գործածուած է այս ձևս. Շագոսլրեան՝ պատերազմներ պատմելու միջոց յանկարծ խօսքը կ'ընդհատէ, և ընթերցողին առջև մեռելոց ու վիրաւորաց շեղջեր դնելէն ետև, անոր հանգիստ տալու համար՝ բոլորովին տարբեր տեսարան մը կը ներկայացնէ։

« Ուշ այսպէս 'ի մարդ գեղաճիծաղ, ընդ մէջ առուակաց և անուշակ հովանեաց բարձրանան գեղք դալարեաց և ծաղկանց՝ անկելոց ընդ գերանդեաւ հողագործին. Փլորա, տրմուխ 'ի ձեռին, հրաւէր կարգայ հովուաց 'ի կայթս ոտնից գարնայնոյ. և աղջկունք մատաղք խառն ընդ ընկերս իւրեանց՝ 'ի բարձանց շեղջից անուշաբոյր խոտոցն 'ի վայր հոլովին խաղալով »։

Յաղագս հակադրութեան.

Շատ անգամ կ'ըլլայ որ երկու բան իրարու հակառակ կը դրուին. և այս կ'ըսուի հակադրութիւն։ Բնութեան և արուեստից մէջ ամենայն ինչ մեզի ներհականութեան օրինակն կուտայ։ Գիշերուան մթութիւնն

մեղի աւելի զգալի կ'ընէ լուսոյն օգտակարութիւնը, և մարդուս կեանքն ուրիշ բան չէ բայց եթէ վչտաց և հաճոյից անընդհատ յաջորդութիւն մը։ Նկարչութիւնն մասամբ մը լոյսերն ու ստուերներն դասաւորելու արուեստն է, և երաժշտական ներդաշնակութիւնն ներհակ մասամբք կը ձևանայ։ Միտքն ալ իր մտածութիւններն ստեղծելու միջոց այս օրինաց կը հետևի։ Գորովագութեն Եսթեր, արքունեաց պերճութեանցը մէջ, և այլակրօն թագաւորի մը հետ միատեղ դահլին վրայ նըստած՝ իր Աստուածը, հայրենիքն ու տառապեալ եղբարքը կը յիշէ.

« Ո՛հ Եղո՛ւկ. յուրախութեան և խընձոյից անդ ա-
ւուրս
Որպիսի ամեթ և ցաւ զիս տագնապէր 'ի ծածուկ։
Եսթեր, ասէի, 'ի ծիրանիս կայ Եսթեր.
Կէս երկրի՝ դաւազանի նորա եղեալ է ծառայ,
Մինչ խոռոք զԵրուսաղէմ և ըզպատուաբանսն ծածկեն։
Սիոն, սոսկալի խրշտի սողնոցն պըղծոց,
Ըզսրբոյ տաճարին քարինս անկեալ տեսանէ.
Եւ տոնք Աստուծոյն Իսրայէլի կան լըռեալք »։

Ախորժելի է տեսնել այսպէս երկու նիւթ՝ որ իրարու հակառակ ըլլալով, զիրար աւելի դուրս կը ցատկեցընեն։ Եւ այս ձևս ամենևին միութեան օրինաց դէմ չէլլեր. վասն զի հակադրութեան ձևով մտածութիւնս նիս յառաջ բերած ժամանակ՝ նպատակնիս է բան մը աւելի զգալի ընել, անոր հակառակ բանի մը քով դնելով զայն։

Նարեկացին՝ մարդկային բնութեան 'ի բարւոյն 'ի չարն դիւրաւ փոխուիլն հակադրութեամբ իր վրայ յարմարցընելով կը ցուցընէ.

« Մտանեմ 'ի բոյնն աղաւնի և անտուստ ագռաւ ելանեմ. դամ սակաւ մի սպիտակ, և սրանամ դառնամ բնաւին սևացեալ. շրթամբք ճնմարտեմ, և ստեմ երիկամամբք. աջովս մատակարարեմ, և ահեակ կողմամբս ա-

ւերեմ. դատիմ 'ի պարս հեղոց, և ընդ այսս կաքաւեմ. հաճոյանամ յեսին ռամկին, և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ. զատեան դատաւորիդ թողեալ, խառնակրօնեցն աղերսեմ. մարմնովս արտաքուստ պճնիմ, և անձամբս երփնիւ ճային ճանաչիմ. հպաւորիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ. այսօր մաքուր հոգեկիր, վաղիւ մոլի խելագար »։

Ոսկեբերան այս ձևով ախտից վնասակարութիւնը կը ցուցընէ.

« Զեկաց դահլիճ առընթեր՝ զկոլս քերել առ 'ի զոհս մատուցանելոյ 'ի հարկէ. այլ հասեալ կայ 'ի վերայ սաստիկ ցանկութիւն ընչից և ագահութիւն, և փորէ զաչս։ Ոչ ոք 'ի զօրականաց արկ զմեզ 'ի խարոյկ և կացոյց 'ի վերայ կասկարայից. այլ մարմնոյ բոցն բորբոքեալ առաւել քան զայս այրէ զոգիս։ Զկայ մեզ թագաւոր՝ բաղում պարգևս խոստացեալ առ 'ի զեղծուցանել. 'ի մեզ կան մոլեկան փառք, որ ևս չար քան զայն խոտղեն »։

Արդի մատենագիր մը, մեծ քաղքի մը մէջ մեծատան զուարճութեանց և ազքատին խեղճութեան ընծայած ներհակութենէն զգացուած՝ ասանկ կը խորհրդածէ.

« Ի քաղաքիս՝ ուր ամենայն ինչ լցեալ է յղփութեամբ, 'ի ցրտաշունչ գիշերս ձմերայնոյ՝ ամբոխք տառապելոց ննջեն 'ի բացի, 'ի վէմ ինչ կամ 'ի սեամն ուրեք ապաստանից եդեալ զգլուխ։ Ասա խումբք մանկանց տղայոց դէմ ընդ դէմ առ միմեանս կծկեալք կան և ամփոփեալք՝ զի մի մեռանիցին 'ի ցրտոյ. անդ կին մի սարսաղից, որ և ոչ կարող է 'ի տրտունջս ողբոց հատանիլ։ Գան և գնան անցաւորք անկարեկիրք ընդ տեսիլն սոսկալի առ նոսա։ Է երբեք զի շանչն կառաց, և բարբառք շուայտութեան և հեշտալուր հնչմունք արուեստական նուագաց՝ ընդ ձայն աղաղակի տառապելոցն խառնեալք, սոսկալի ևն յօրինեն չարաձայնութիւն »։ (Քառանդ Տրմոդոր։)

Հոս դիտելու է որ հակադրութեանց յաճախութիւնն, մանաւանդ երբ մոածութեանց մէջ եղած ներհակութիւնն խիստ բարակ ըլլայ, խօսքին ոճոյն սեթեւեթեալ և պարտասեցուցիչ կերպ մը կուտայ: Աչխատութեամբ փնտռուած հակադրութեամբք խոկեալ ճառ մը մոացընել կուտայ նիւթը և ճառախօսին վրայ մոածել կուտայ: Այս մասամբ պարտաւուած են հնոց մէջ Սենեկա, և նորոց մէջ Ֆլեշիէ որուն գրուածոցը մէջ այս ոճով ամբողջ էջեր կը գտնուին. ինչպէս այս կտորս. « Տեսաք զբամբիշն Էկիլոն 'ի վնչոս նեղութեան, այլ չլուաւ ոք զարտունջ նորին. ուխտիւք խընդրեաց զփրկութիւն իւր, այլ ոչ և զառողջութիւն: Պատրաստ առ 'ի կեանս, 'ի լրումն ապաշխարութեանն. պատրաստ առ 'ի մահ, 'ի կատարումն ինքնանուէր զոհին: Ի հանդիստ հայրենի բնակութեանն տենչայեալ, և վշտայ տարագրութեան համբերութեամբ ժուժկալեալ, և վարեալ զկեանսն ընդ ցաւս և ընդ բերկրութիւն, ընդ վայելս և ընդ յոյս... »:

Լաւագոյն հակադրութիւնքն անոնք են որ բուն իսկ նիւթէն յառաջ կուգան, առանց դրսոյն զանոնք մասնաւոր փնտռելու: Սուրբն Պօղոս առաքեալ միտք մը ջունէր հակադրութիւն մը կազմելու, երբ քրիստոնէից վրայ խօսելով կ'ըսէր. « Բամբասէին զմեզ՝ օրհնէաք. հալածէին՝ յանձն առնուաք, հայհոյէին՝ աղաչէաք »:

Լամարտին ճարտար կերպով մարդկային բնութիւնն կը սահմանէ հակադրութեամբ մը՝ որ Բասքալի Մտածութիւնքն կը յիշեցընէ.

« Փակչիւր բնութեան, անհուն 'ի սէր բաղձանաց,
Զերկինս յիշէ մարդն՝ որ երբեմն էր աստուած »:

Յաղագս ընդդիմախօսութեան.

Երբեմն բաւական չէնք սեպեր երկու բան իրարու հակառակ դնել, այլ նաև երկու հակառակ իմաստքովք կը դնենք: Պոսիւէ խօսելով Անգղիոյ թագուհւոյն վրայ, որ ստիպուեր էր իր տերութեան երկիրը թողլու՝ Գաղղիոյ մէջ ապաստանարան մը գտնելու համար, ասանկ կ'ըսէ. « Դշխոյ մի փախստեայ, որոյ՝ աշխարհ խակ իւր հայրենի՝ տեղի աքսորանաց միայն լեալ նմա այնուհետեւ »: Այս ձեւս կ'ըսուի ընդդիմախօսութիւն:

Կիննայի ողբերգութեան մէջ Օգոստոս՝ ձանձրացած մեծութիւններէն որ իրեն այնչափ հոգ պատճառեր էին, դարձեալ առանձնական կենաց դառնալու զգացած փափաքն այսպէս կը բացատրէ.

« Փառաց տենչ ածէ զտաղտուկ՝ երբ յափրանայ ոք նոցաւ,
Եւ զի միտքն որ 'ի մեզ՝ մինչև ցըշտունչ մեր վերջին
Զիրաց ինչ հանապազ տածէ զկարօտ բաղձանաց,
Զունելով յոր բերիցի՝ անդրէն առ ինքն դառնայ,
Եւ 'ի ծայրըն ժամանեալ ցանկայ 'ի վայր ինչանել »:

Յայտնի է որ ընդդիմախօսութիւնն գործածելու ժամանակ՝ պէտք է ուղիղ մտաց ցըցուցածին համեմատ տեսակ մը չափ մը պահել. պէտք է որ երկու մտածութեանց մէջ յարակցութիւն մը ըլլայ, թէպէտև արտաքուստ զիրար բաժնող հակասութիւն մը երևնայ: Պոսիւէի Անգղիոյ թագուհւոյն համար զուրցած խօսքին մէջ այդ իշխանուհին՝ գաղղիայի ըլլալովն հանդերձ 'ի Գաղղիա աքսորուած կը համարուի, որովհետև Անգղիա հաստատուած էր, և այն երկիրն՝ ուր թագուհի էր, իր հայրենիքն կը սեպուի: Գոռնէյլի տողերուն մէջ Օգոստոսի համար առանձնական կենաց հան-

գարտուԹիւնն ու երջանկուԹիւնն իր ունեցած գեղագոյն իշխանուԹենէն վեր բան մը կը սեպուին. իրեն առջև իբր մրրկաց անմատոյց գաւառ մըն է այն, որուն կարծես ԹԷ կարօտ մը կը ցուցընէ. բայց մեկալ կողմանէ սոսկական անձ մը ըլլալու համար պէտք է վար իջնել. ուրեմն կրնայ ըսուիլ իրաւցընէ որ իջնելու կը փափաքի:

Ժիլպերը նոյն ոճոյ հնարքը բանեցուցած է՝ խօսելով Լահարբի վրայ այն երգիծաբանուԹեան մէջ, ուր ուԹևառանեերորդ դարուն նշանաւոր անձինքն այնպէս չարաչար կերպով վար զարկած է.

« Բանադիրդ այդ դուշնաքեայ, մըրցանակօք փըքացեալ,
Ա՛յպանեալ'ի տաղն երգոց, այսն և յարձակ բանսն եղեալ,
ԿոչկոՃեալ դայԹոտ քայլիւք ողբերգական մուսային,
Ի գլոր և'ի Թաւալ անկաւ յաԹոռ կաՃառոյն »:

Կրնանք յառաջ բերել նաև Գաղլմիր Տըլավինեի Գալիլէոսի վրայ գրած այս տողերն.

« Զայրագին Գալիլէոս զերկնից ըզկարգսըն խախտեալ
Ա՛նիրնայ ըստ կեդրոնն'ի բաց զերկիր արկանէ,
Հարկատու արեգականն ըզնա յընԹացսըն կարգեալ:
Ո՞էքաւեաց երեքամեայ ըզնդանարգել լինելով
Ըզյոյժ վաղ իրաւանց իւրոց յանցանս ա հագին »:

Բ. Կիրք շարժող ձևք.

Կան տեսակ մը իմաստից ձևեր որ աւելի կրից կը պատշաՃին քան երևակայուԹեան. ասոնց գործն է՝ ոչ ԹԷ առարկայքն նկարագրել, այլ զգացմանց սաստկուԹիւնն այլոց հաղորդել:

Յաղագս բացագանչութեան.

Երբեմն Ճարտասանն իր խօսքն ընդհատելով և դաշնակաւոր պարբերուԹենէ մը եռևյանկարծական ձայնարկուԹեամբ մը ունկնդրաց սրտին խորը ուրախուԹիւն կամ ցաւ, եռանդն կամ քարկուԹիւն կ'ազդէ: Պոսիւէ այսպէս կը սկսի Օռլէանու դշխոյին դամբանական Ճառն.

« Ինձ ուրեմն պահեալ կայր և զայս հարկ սգաւոր պաշտաման հատուցանել բարձրապատիւ և հզօր բամբշանս Հենրիկէի Աննայի Անգլոյ, տիկնոջ իշխանին Օռլէանայ: Այն՝ որ տեսանէի այնպէս մտադիր ուշակալ'ի հարկանելս իմ զսոյն սպաս մոր իւրում դշխոյի, այսպէս ուրեմն վաղվաղակի էր լինելոց պատՃառ նոյնօրինակ Ճառի, և իմոյ ցաւագին ձայնիս մնայր այս աղիողորմ սպասաւորուԹիւն: Ո՛վ ունայնուԹիւն, ո՛վ ոչինչ, ո՛վ անգէտք բախտին իւրեանց մահկանացուք »:

Այս ձևս կ'ըսուի բացագանչուԹիւն: Նոյն դամբանական Ճառին մէջ ուրիշ օրինակ մ'ալ կայ, այն տեղն ուր Ճարտասանն Օռլէանու դշխոյին անակնկալ մահը կը յիշատակէ.

« Պարտ էր հաստատ գիտել զոչնչուԹիւն մեր. բայց եԹէ անակնկալ հարուածք պակուցիչք պիտոյ լցեն սըրտիցս կախարդելոց'ի սէր աշխարհի, շատ իսկ մեծ է այս և կարի ահագին: Ո՛վ գիշեր աղետաբեր, ո՛վ գիշեր ահաւոր, յորում հնչեաց յանկարծահաս իբրև ըզշունդն ՃայԹելոյ որոտման այս բօԹ սոսկալի. Տիկինն ահա մեռանի, տիկինն մեռաւ »:

Լամբրոնացին՝ հոգւոյն սրբոյ՝ իր գալատեան մէջոց մարգկանց ըրած մեծամեծ շնորհաց վրայ սքանչացած կը կանչէ.

« Ո՛վ մեծի տուրեւառութեան շնորհի երկնայնոցն և երկրայնոցս. սոքա եւոուն մարմին, և 'ի նոցանէ առին զՀոգին »:

Ուրիշ տեղ մ'ալ այսպէս կ'ըսէ.

« Ո վանբերելի տգիտութեանս և ապառուամբարուցս. եկ Երեմիա ցաւակից մարգարէ, և վշտակցելով ողբա զբեկումն իմ և ժողովրդեան իմոյ »:

Խորհնացին յիշատակելով Տօրք նահապետին առաստպելատատում քաջութիւններն, անոնց վրայ զարմացած կը բացագանչէ.

« Ո՜հ կարի է առաստպէլս, այլ և առաստպէլաց առաստպէլ. բայց քեզ զի է. քանզի էր արդարև սասստիկ հզօր, և այսպիսեաց զրուցաց արժանի »:

Շարականն՝ Յուդայի մատնութիւնն յիշելէն վերջը կ'աւելցընէ.

« Ո՛վ համբոյր՝ նենդութեան նշան, և առիթ մահու »:

Յաղագս բացադարձուրեան.

Երբ Ճարտասանն իր Ճառին ընթացքն ընդհատելով՝ յանկարծ ներկայ անձի մը, կամ երկնային զօրութեանց, հեռաւորաց, մեռելոց, կամ նոյն իսկ անշունչ իրաց կ'ուղղէ խօսքը, ասիկայ կ'ըսուի բացադարձութիւն: Ինչպէս Եսայի մարգարէն իր մարգարէութեանց սկիզբը երկնից ու երկրի խօսելով կ'ըսէ.

« Լսուր երկին, և ունկն դիր երկիր, զի տէր խօսեցաւ. որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին »:

Խորենացին իր ողբոցը մէջ խօսքը Երեմիա մարգարէին կը դարձընէ ըսելով.

« Զարթիր, Երեմիա, զարթիր և ողբա հանդերձ մարգարէութեամբ զոր ինչ թշուառացաքս և զոր ինչ

թշուառանալոցս եմք. դուշակեա զյառնել հովուացն տգիտաց, որպէս երբեմն Զաքարիա Յիսրայելին »:

Այս ձեւով Եղիշէ իր պատմութեան կարգին մէջ յանկարծ կը սկսի Պարսից թագաւորին հետ խօսիլ.

« Զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ շնչանիս, զի՞ կոչես 'ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիսն ձեր 'ի ձէնջ քաղեալ, հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմնդ գիշաքարշ արարեալ՝ երբև զաղիր մեռելոտի 'ի բաց ընկեցեալ: Ապաքէն զայդ կամիս, զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսջիր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զի՞ զիս կատարածի դորա »:

Բացադարձութեան դեղեցիկ և բանաստեղծական օրինակ է Շնորհալւոյն երգն 'ի խորհուրդ Քրիստոսի արդարոց տեղն ի՞նչ եղանելուն և զերեզք ազատելուն.

« Ծանեաւ Ադամ զնոր զալոյն տեառն 'ի դժոխս,
Ծանր ամօթով կայր հիացեալ երկեղապին.
Կարկառ նրմա Յիսուս ըզձեռս իւր բեւեռեալ.
Կոչէր ձեռամբ, քաջալերէր. Մի՛ երկնչիր.
Հայեաց 'ի ձեռս յոտս և 'ի կողս որ վասն քո,
Հայեաց 'ի դլուխս բարձեալ զանէծս 'ի փշոց երկրի:
Զաղէ եղեգան հարին դըլխոյս իմ մեղաւորիդ,
Զաղէեալ ապտակ և թուք 'ի ծնօտս ինձ մատուցին:
Ղեղն էառուն ինձ կերակուր ընդ քացախոյ,
Ղեղոյ մեղաց քոց փոխանակ որ 'ի դրախտին:
Ճանապարհաւ մահու ընդ քեզ հեւեցի,
Ճանապարհիս կենաց ընդ իս եկ յարութեամբ:
Մաքուր հոգիք սրբոց, և ձեզ մեծ աւետիս.
Մատիք տեսէք մարմնով եկեալ՝ ում ցանկայիք,
Յառաջագոյն դուշակելով զիմ ըզգալուստ
Յայս ահագին խոր խաւարին՝ ուր էք կացեալ:
Նովին մարմնով զոր 'ի կուսէն իմ ըզգեցեալ,
Նախ 'ի դժոխս ելի փրկել ըզկորուսեալս »:

Պոսիւէ՝ պատմելէն վերջը թէ Անգղիոյ թագուհին

ամենածանր պարագայից մէջ եշխանուհի մը աշխարհք բերաւ, նոր ծնած աղջկան կ'ուղղէ խօսքը.

« Ո՛վ օրիորդ որոյ այնչափ մեծ է և փառաւոր բախտն, եկէ՞ արժան ծնանել քեզ'ի տէրութեան Թշնամեայ տան քոյ: Յաւիտենականդ, աչք քո բաց եկեն 'ի վերայ նորա. զուարթունք սուրբք, բոլորեցէք շուրջ զանեւ ուրոյթ գումարտակդ, արկէք պահ զորրոցաւ մեծի և անտէրունչ օրիորդին »:

Անտրոմաք իր դերութեան տեղէն դէպ 'ի Իլիոնի պատուարներն կը տանի միտքը, և անոնց կը խօսի, երբև թէ իր բարեկամներն ըլլային և կարող ըլլային իր ողբերն ըմբռնել և ցաւոցը կարեկից ըլլալ.

« Ո՛չ, մի՛ այլ ևս յուսայք անդրէն ըզմեզ տեսանել,
Որմունք սուրբք, զոր չեղև կարօղ պահել իմն
Հեկտոր »:

Պոսիւէ՝ Թագուհւոյ մը մահուան վրայ խօսելով կը կանչէ.

« Ո՛վ սուր տեառն, զինչ է հարուածն զոր գործեցեր »:

Դնենք բացագարձութեան ուրիշ օրինակ մ'ալ Պեռնարտէն Տրսէնբիէրի Ներդաշնակութիւններէն.

« Շրջունչ մարդայ և սօսափիւն անտառաց ունին զաղդումն յանկուցիչ, զոր առաւել ընտրեմ քան զպերճ նուագս երգոց արուեստականաց. հոգի իմ Թողեալ բերի առ նոսա. ընդ երերուն տերևս ծառոց տարուբերեալ տատանի. ընդ կատարած նոցին յերկինս 'ի վեր ամբառնայ, և փոխադրի 'ի ժամանակն՝ որ զծնունդ նոցա տեսին, և յորս զվախճան նոցին տեսանիցեն: Զսահմանաւոր և զանկայուն էութիւնս իմ ընդ անսահման վայրսն ձգեալ տարածանեն, և հանգոյն Դոդովնեան անտառաց Թուին խօսել առ իս զբարբառ խորհրդաւոր, ընկղմեալ զիս յանպատում ցնորս խորհրդոց՝ յորոց 'ի պատճառս բաղում անգամ 'ի ձեռացս անկան մատեանք իմաստասիրաց: Շքեղաշուք անտառք. անդորը միայնութիւնք, որք առաւելքան զմի անգամ ըզկիրս իմ խաղաղեցէք, եկէ՞ թէ գոչիւն պատերազմի 'ի հնչող բացավայրս ձեր չարկաներ զվրդով: Վէհ՝ մերմունջք ձեր ձայնակիցք լեցին միայն ընդ երգս թռչնոց և ընդ քաղցր զրոյցս մտերմաց՝ որ ընդ հովանեօք ձերովք հանդչել կամիցին »:

Յաղագս դիմառնութեան.

Կիրքն կրնայ դեռ աւելի հեռու երթալ. կրնայ հեռաւոր անձինքն խօսեցընել, մեռելները մէջ բերել, և անդգայ էակներն կենդանացընել: Այս ձևս, որ ճարտասանութեան սահմանէն դուրս կ'ելլէ, և բանաստեղծութեան սահմանը կը մտնէ, կ'ըսուի դիմառնութիւն:

Խորենացին սրբոյն Հռիփսիմեայ ներբողին մէջ այս ձևով խօսել կուտայ սրբուհւոյն առ Հայաստան.

« Զայն աւետեաց 'ի քեզ հնչեաց, Հայաստան աշխարհ. ասպարէզ հանդիսի, և առագաստ իմոյ արեանս հոսանաց... Բերկրեա, Այրարատ, ատուածապարգև աւետեօքս, ահա եղանեմ՝'ի քոյդ Գողգոթա ըմպել ըզբաժակ չարչարանաց արարչին՝ իմոյ կուսութեան բաժակաւ՝ արբուցանել քեզ ծարաւոյդ զկենարար աբրեան զբաժակ անմահութեան և լուսոյ: Եւ քեզ աւետիք, երկնաւոր նահատակ, և քարոզ փրկութեան բաղմափայլ ճառագայթ, որ ծագեալդ ես 'ի գբի ահա հասի քեզ'ի Թիկունս, սլացեալ յարևմտից յարևելս՝ Թեթևընթաց ամպով իմոյ կուսութեանս, զփայլակնաբոլորք ճառագայթ տիեզերածաւալ լուսոյ աւետարանին՝ իմոյ հարց Պետրոսի և Պօղոսի 'ի վայրս քո եկի ծագել, վանել փարատել զմեզ խաւարի, որ զքոյդ արդեալ փակեալ զկենդանի լուսոյդ ճառագայթ: Ծագեա՛, լուսաւորդ մեծ, 'ի խորոց անդնդոց քաղցրանուագ լու-

սովդ՝ զաշխարհարձակ ճառագայթալոյս փայլումն քոյ սրբոյ հարցն աւետարանին Թէոդէոսի և Բարդուղիմէոսի, երկաքանչիւր լուսով վեթեալ զհիւսիսի։ Հար զնորան քո յարևու, և էլ, արեգակին արդարութեան, 'ի գնացս քո ցնծութեամբ յողջոյն արիւնազգեստեալ հարսին »։

Զրօրհնեաց տաղին մէջ քերթողն երբ զարհուրած կ'երևցընէ զՅորդանան, երբ Յիսուս ոտքովն անոր մէջ կը կոխէ.

« Յորդանան լըւեալ փախըստական դառնայր.
Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր.
Գետ, մի զարհուրիր .քո արարիչն եմ ես,
Եկեալ մկրըտիմ, և լըւանամ ըզմեղս »։

Պոսիւէ, Կարողոսի առաջնոյն գովեստն ընելէն վերջը, այս կերպով իր խօսքն Անգղիոյ Թագուհւոյն դաղաղն կ' ուղղէ. և այս կտորս օրինակ է միանգամայն բացագանչութեան և դիմառնութեան.

« Դշխոյ մեծ, 'ի դրուատիս զթագաւորն զայն՝ զգորովասէր ըղձումդ կատարեմ. և սիրոդ այդ՝ որ նմա միայնում եկեաց միշտ, խըստեալ զարթնու, թէպէտ և աճիւն, և թինդս առեալ խանդաղատի՝ ես և ընդ դիապատիկ ծածկութիւդ, յանուն ցանկալի փեսայիդ »։

Գաղղիացի հեղինակ մը 1741ին պատերազմին մէջ մեռած սպայից վրայ գրած գովեստին մէջ ասանկ դիմառնութեան ձև մը կը գործածէ.

« Ո՛վ բարեբաստ ժողովուրդք, դոնեայ հայրենակցացն անկելոց 'ի զոհ այդմ փառաց, կամ որոց զմատն ինչ մարմնոյն իւրեանց կորուսեալ՝ դեռ կայցեն կենդանի, հատուցէք նոցա զվարձս հատուցմանց, զոր աճիւնք կամ վերք նոցին պահանջեն առ 'ի ձէնջ։ Եթէ զայդ զանայք առ նոսա, ծառք և դաշտք Փլանտրիոյ ձայն առնուցուն և ասասցեն առ ձեզ.— Աստ առաքինին և քաջարին Լիւդոյ, ճոխացեալն ամօք և վաստակովք, մինչ խոց կարեվէր կրկին հարուածովք կայրն նուաղեալ և արիւնն պակասէր, ձայն եբարձ գոչելով. Զեն ասա պէտք կենաց պահպանութեան, այլ պարտ է զնշխարեալ մնացորդս նորին յօգուտս 'ի կիր արկանել.— և զգուշդան վայրատեալս անդրէն ածեալ 'ի կռիւ, ընկալաւ զհարուածն մահաւիթ՝ որ էարկ զնա 'ի գերեզման։ Անդ գնդապետն պահպանաց գաղղիացւոց, երթեալ ինքն առաջին 'ի լրտեսել զթշնամիս, զառաջին վերն էառ 'ի մահաբեր ճակատամարտին, և կորոյս զկեանսն, արարեալ մաղթանս վասն արքային և վասն աշխարհին։ Անդ ուրեմն անկաւ և եղբօրորդի հրաշականուն արքեպիսկոպոսին Կամպրեի, ժառանգ լաւութեանց անզուգական առնն՝ որ այնքան սիրելի ընծայեցոյց զառաքինութիւն »։

Մասիլէոնի մէջ շատ ընտիր է աղքատին դիմառնութիւնն, որով կը կշտամբէ զմեծատունն՝ անոր խստութեանն ու արհամարհոտ վարմանցն համար.

« Տառապելոյն այնմիկ անարգելոյ առ 'ի քէն թէ օրէն լինէր պատասխանի տալ առ քեզ, և եթէ նուաստութիւն վիճակին չարկանէր 'ի բերան նորա զկապ ամթոյ և պատկառանաց, ասէր նա առ քեզ. Աղէ զի՞նչ այն ի՞նչ վասն որոյ ստգոտանիմս 'ի քէն. անգո՞ծ կեանք, և գնացք վարուց անպիտան և մոլորական։ Իսկ արդո՞ր այն խնամք զբաղմանց ի՞նչ ես 'ի յոլովութեան անդ քոյին. հոգք փառասիրութեան, վարանական անձկութիւնք մեծութեան, ախտից կարեցոյն տագնապք և հնարագիտութիւնք հեշտութեան։ Իցեմ ես թերևս ծառայ անպիտան. բայց ո՞չ և դու ծառայ ես անհաւատարիմ։ Ո՛հ, եթէ քան զամենեսին առաւել անանկ և տառապեալ լինէին յանցաւորքդ 'ի վերայ երկրի, վիճակ .քո լինէր արդեօք քան զնմա լաւագոյն։ Կշտամբես զնս վասն զի ոչ 'ի գործ զկարողութիւնս իմ արկանեմ. իսկ դուք ի՞նչ զքոյսն վարիցես։ Զեմ արժանի ուտելոյ զհաց, քանզի ոչ աշխատիմ. այլ յօրինաց ասսի աղա՞ս ինչ իցես և դու։ Ո՞չ վասն այն իցես մեծատուն՝ զի կեսաղ

յանարժան մեղկութեան։ Ո՛հ, դատ արասցէ Տէր ընդ
քս և ընդ քեզ. և յայտնի լեցի յանդիման ահեղ ատե-
նին թէ արդեօք հեշտութիւնք քո և զեղխութիւնք ի-
ցեն ներելիք, եթէ իմն անլնաս հնարք՝ զոր 'ի վար ար-
կանեմ, զի դիւր ինչ վշտացս դատանիցեմ»։

Գ. Կնոջիդ ձարտասանական.

Կը մնայ երրորդ տեսակ մը ձևոց, որոնք կերպով մը
իմաստի խաղեր են, կէս մը պատրուակելով զայն, կամ
թէ կամաւ մութ ձգելով, կամ այլևայլ դարձուածք-
ներով երկնցընելով և կամ թողլով որ այլք դուշակեն
զայն։ Այս ձևերս, որոնց մէջ տեսակ մը խորամանդու-
թիւն և արուեստ կը մնանէ, ընդհանուր անուամբ կըր-
նան կոչուիլ Կեղծիք ճարտասանական. գնեցէք ասոնց դլխա-
ւորներն։

Յաղագս հեգնորհան.

Բան մը բացայայտելու ժամանակ՝ կ'ուզենք շատ ան-
գամ անոր բովանդակն հակառակ բան մը հասկընել-
ուսան երբեմն կ'ըլլայ որ դովեստից և մեծարանաց պա-
տուասիրական ձևով ուրիշը կը պարսաւենք։ Պուալոյ
իր ժամանակին անպիտան մտաւորականներն դովել կը
ձևացընէ, և այս կեղծեալ դովեստներով պարսաւն յայտ-
նի եպերանքէ մը շատ աւելի կծու կերպ մը կ'առնու.

« Ի մեր աւուրըս Բրատոն երևեցաւ իբրև զարև.
Բելգիկ գըրէ ճարտար քան ըզԲադրիս և զԱպլան-
դուր.
Զերկիր համբրէն ըզհետ ճառիցն ածեալ Գոդէն,

Զունկընդրաց կոյտս հերձանէ՝ զի 'ի բեմ անդր հա-
սանիցէ »։

Լամբրոնացին այս ձևով տխմարներն կը հեգնէ.

« Ո՛վքո զօրութեանդ. 'ի ծայրն հասեր իմաստից.
փրկեցեր զոգի քո՝ զայդ ասելով »։ Որ պարզաբար կըր-
նար ըսել. Պակասամիտ ես, ապիտութեան խորն ես. և
այս խօսքովդ հոգիդ կը դատապարտես։

Դարձեալ ուրիշ տեղ մը.

« Հարցանեն ոմանք ցիմաստունս մեր, կենդանւոյ
լինի՞ պատարագ թէ ոչ։ Իսկ որ բուն կատարեալքն են՝
պատասխանեն, ոչ բնաւ »։

Եղիա մարգարէն այս կերպով կ'այպանէ Բահաղու
մարգարէներն՝ երբ ողջակէզ կը մատուցանէին.

« Մեծաձայն կարդացէք, զի ատուած է. թերևս
զբօսանք ինչ լցեն նմա, և միանգամայն թերևս առնիցէ
հրաման, կամ թէ 'ի քուն լցեալ և յառնիցէ »։ այսինքն
փուչ տեղ կը կանչէք, վասն զի անիկայ ատուած չէ։

Այս ձևով Գրիգոր կաթողիկոս կը պատանձեցընէ
զՏուտէորդին, որ Հռովմայ եկեղեցին կործանած է
կ'ըսէր.

« Ապա յայտ իսկ է եթէ 'ի զուր աշխատեցաւ Պօղոս,
զուր աշխատեցաւ և Պետրոս, և ոչ ուղղեցան ոտք նո-
րա 'ի գնացս՝ ընդ որ խորհեցաւ և արար։ Ընդունայն
են և քարոզութիւնք նոցա, և սուտ էին խոստմունք
տեառն առ Պետրոս՝ թէ 'ի վերայ այդր վիմի շինեցից
զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարես-
ցեն։ Արդ յաղթահարեցաւ և կորեաւ, զի ոչ է եկե-
ղեցի, այլ այր աւազակաց. ոչ միրտութիւն 'ի թողու-
թիւն մեղաց, այլ միայն լուացումն ջրոյ։ Արդ ուրախ
լեր Պիղատոս, ցնծացէք և դուք դասք քահանայապե-
տաց. վասն զի ոչ սպանիք տէր, այլ մերձորեցուցիք. ոչ
խաչեցիք ատուած, այլ գող և աւազակ և խռովարար.
ոչ հովիւ քաջ, այլ վարատող ոչխարաց. սուտ է որդին
որոտման, և իրաւ է որդին Տուտեայ »։

Տեսակ մը բարակ և խմաստալից ծաղրածութիւն մը կայ՝ որ սոկրատեան հեգնութիւն կ'ըսուի. վասն զի այս տեսակ հեգնութիւնն Սոկրատայ սովորական զէնքն էր։ Այս խմաստասէրս, իր ժամանակին խմաստակաց առջև ինք զինքը տգէտ կը ձևացընէր, և վարպետ հարցմունքներով զիրենք ծաղրական հակասութեանց մէջ կը ձգէր, կամ կը ստիպէր իրենց տգիտութիւնն խոստովանելու։ Այս ձևոյս ընտրելագոյն օրինակներէն մէկն է Թեենոփոնի մէջ Սոկրատայ և Գլաւկոնի խօսակցութիւնն։ Դնենք հանձարեղ մատենագրի մը անոր հետևողութեամբ շինած ոտանաւոր տողերն.

« Էր Գլաւկոն երեւնամեայ, բարեհասակ, գեղաւոր.
Այլ բնութիւն 'ի պարգևան անդ՝ զորքս տրաւեալն էր առ նա,
Մոռացեալ էր ըզձիր դատողութեանցն մտաց.
Կարծէր զանձն Գլաւկոն 'ի վարչութիւն վիճակեալ։
Մըրցանակ երբեմն առեալ հռետորական հանդիսից,
Այր անզուգական համարէր զինքն յաշխարհի։
Իսկ և իսկ յորժամ 'ի բեմն սեւեռեալ մածանէր,
Մարդկեղէն զօրութիւն չբաւէր քեցել զինքն անտի.
Խօսել զամենայնի՝ էր նորա ախտ խօթութեան։
Մատուցեալ առ նա Սոկրատ. « Ուշիւ քննեալ իմ, ասէ,
Ի վերայ հասանեմթէ զինչ քո կէտ է եղեալ։
Գեղեցիկ է զոր խորհիս, այլ և կարի հեշտական։
Յանկարծ վարչութեան, և փափաքես զի Աթէնք
Ի քո ձեռս յաւուր միում տացեն ըզսանձ պետութեան։
— Վըկայեմ։ — Եւ անշուշտ քաղաքակցացըդ քոյոց
Հատուցես ըզգին պատուոյդ, մեծապարգև լինելով։
— Իմ տենչ այդ է բովանդակ։ — Գովելի է. ցանկամ
Զի ըստաս հարկանիցէ զք հայրենեաց և անձին։
Զայդ խորհուրդ 'ի վաղուց անշուշտ եցէ քո խորհեալ։

Արդ ասա, ուստի՞ ուրեմն ըսկըսանել հաշուիցես »։
Լուռ եկաց յայնժամ Գլաւկոն սովորութեանն արտաքոյ.
Եւ խընդրէր պատասխանի. « Մեծագոյն գործ մի բարի
Լինիցի, ասէ Սոկրատ, 'ի՝ տգնապող յայսմ հարկի
Զարծաթ ժողովել 'ի մթէր գանձուց աշխարհին։
Ո՞չ արդեօք զել և մուտս յարդարեսցես նախ անդէն,
Ըզհասս ածեցուսցես, ըզծախս հատեալ կարճեսցես։
— Այդ անշուշտ իմ առաջին փոյթ խընամոց լինիցի։
— Հարկ է շատ ժողովել, և նուազագոյն ծախս առնել։
Ըզմեր հանդամանս անշուշտ արկեալ 'ի հաշիւ,
Զաղբիւրս ճոխութեանցն Աթենացւոց քննեցեր.
Եւ ուստի եկամտից մերոց եցէն հասք՝ գիտես։
— Ոչ յոյժ քաջ. անտեղեակ եմ յոլովիցն յայնցանէ։
— Յարուեստ զինուորական կարծեմ եցես հրմտագոյն։
— Վեց ամիս առ Պերիկլէաւ եղէ զինուոր ինքնակամ։
— Այլ ասա մեզ տեսանել զի մեծապանծ խորհրդովք
Սարդենիս պատրաստեսցես պատերազմող մեր քաջաց։
Թէ որով օրինակաւ կազմին բանակք, գիտիցես.
Ո՛ր խնամոց եցեն պէտք 'ի կիրթ նոցուն հրահանգաց։
— Մանուկդ հանդամանաց չունիմ՝ 'ի միտս ըզպատկեր։
— Այլ կայցեն առ քեզ գրաւոր տեղեկութիւնք զայդ ցանկ.
Անշուշտ եմ։ — Ոչ ընաւ։ — Զիմիրդ. մարթ էր ինձ զայնս ընթեռնուլ,
Եւ օգտել 'ի նոցանէ։ Գոնեայ կարող ես ասել
Զի տրւեալ բաւական պարգևս ընդ մեր վաստակոց,

Կարիցէ բաւել 'ի մնունդ բնակացն յոգունց Աստիկէ։

Հարկ է յայդմ ըղդուշութիւն. զի անխորհուրդ ինչ սրխալ,
Վատթար իմն օրէնք՝ ընդնուազութիւն ածիցեն,
Ի՞բր եղեր յառաջատես ըղկարեւոր այդմ իրաց։
— Ապաքէն, ով Սոկրատ, չէ մարթ գիտել զամենայն։
— Հնմ ապա զամենայնէ ճառեալ ուրեմն խօսիս։
Ես այր եմ սոսկական և անհրմուտ խմաստից.
Սակայն կա՛լ 'ի մըտի զայս իմ խրատս օգտակար.
Յերաց ինչ գիտութիւն՝ արժան է զայն ուսանել։
Զարուեստս խորագնին ըղվարչութեան աշխարհաց
Մարթիցի՞ ըստանալ առանց վարժից և փորձոյ։
Որ խօսին զամենայնէ՝ յաճախ յանդէսելս խօսի.
Կարծեցեալըն ոչ երճախօս՝ է շաղակրատ ոք շաղփաղի։
Ե՛րթ զանձնդ կրթեսջիր, և դուցէ օր եկեսցէ
Զի լեցես մեզ իշխան »։ Գլաւկոն գիտաց զանձին չափ.
Եղև ըզգօնամիտ, և յայնմ օրէ և յառաջ
Առաւել լըսող եղև քան խօսեցաւ նա, ասէն։
Առքաղցրախօս Քսենոփոնի, աշակերտին Սոկրատայ,
Մըտերմին և վերժխընդրի նորա յԱթէնս ապառուամ՝
Զայդ ըստոյգ ընթերցայ, և թարգմանեմ զայն առ քեզ։
Իցիւ թէ խրատէին սուլաւ Գլաւկոնք մեր այժմեան»։

ԱՆՏՐԻԷՕ.

Հեգնութիւնն՝ որ սովորաբար կատակի և զուարճաբանութեան լեզու է, կունայ նաև բարկութեան, արհամարհանաց, կատաղութեան կամ յուսահատութեան ժամանակ գործածուիլ։ Կիկերոն և Մասիլեոն սաստիկ կրեց մինոց շատ անգամ կը գործածեն զայն. բայց շատ չեն երկնցըներ, և կը փութան նորէն ծանր զուրցուածքին դառնալ, որ հեգնութենէն վերջը աւելի ազդոյ կ'ըլլայ։ Մասիլեոն՝ դարձն ուշացընելուն վրայ քարոզելով, այսպէս կը խօսի այն մարդկանց, որ

այն ատեն զԱստուած կը մոռանան, երբ ա՛լ աշխարհքիս վրայ չեն կրնար մոռանալ.

« Զմեռացո՞ղդս ուրեմն և զաւելորդս ախտից և կենաց ձերոց միայն պահէք դուք առ Տէր. և երբ այն թէ ասիցէք իմն առ նա. — Տէր, ցորչափ բաւական գտանիցիմ՝ 'ի վայելս հաճոյից և աշխարհի, մի սպասեր յինէն թէ առ քեզ դառնայցեմ և. խնդրեցեմ ինչ զքեզ. ցորչափ սիրեսցէ զիս աշխարհ, անմարթ է ինձ յօժարել 'ի սէր քոյ. իսկ յորժամ նա սկսցի 'ի մոռացօնս արկանել զիս և յինէն 'ի բաց խուսափել, յայնժամ դարձայց ես առ քեզ և ասացից. աւասիկ եմ. և աղաչէցից առ քեզ ընդունել զսիրտ՝ յաշխարհէ 'ի բաց մերժեալ, և թախծեալ ընդ խիստ հարկն նուիրելոց զանձն առ քեզ։ Բայց մինչև ցայնժամ մի այլ խմբ ակն կալցիս յինէն՝ բայց համակ անփութութեան և կատարեալ մոռացութեան։ Ապաքէն յայնժամ միայն 'ի դէպ է ծառայել առ քեզ, յորժամ ոք անպիտան առ ամենայն ինչ գտանիցի. դէթ կայ վստահութիւն թէ մարթի միշտ գտանել զքեզ. և նոյն են առ քեզ ժամանակք ամենայն։ Իսկ ասասէն յաշխարհի՝ յեռ ժամանակի ինչ կենաց, ոչ ևս այլ կարող է մարդ. հարկ է փութալ վայելել՝ չև այնր 'ի բաց խուսափեալ, և մինչ կայցէ դեռ ժամանակ։— Ո՛վ անձն անարժան խոստովանութեան ողորմութեանն Աստուծոյ, զոր այդպէս անարդես թշնամանօք։ Կարծիցես թէ յայնժամ ընդունելի եղիցի պաշտօն մեծարանացդ զոր առ հարկի և 'ի նախատինս փառաց իւրոց մատուցես առ այն՝ որ ընդ կամաւոր պատարագս հաճի միայն, որ անկարօտն է մարդկան, և շնորհս իմն արարեալ համարի՝ յընդունել անդ անգամ զսրբամաքուր մաղթանս և զանկեղծ մեծարանս նոցին »։

Երբ մարդս վերջին ասպիճանի թշուառութեան կը հասնի. և ամբողջապէս իր խեղճութիւնն բացատրող բառ մը չի գտնար, հեգնութեան ձեռք կը զարնէ, դրեթէ, կ'ըսէ Լահարբ, ինչպէս որ երբ մարդս սաստիկ

ցաւի մէջ կը գտնուի, վայրկեան մը խելքը կը կորսընցնէ, և արցունք չկրնալով թափել, անոր տեղ սոսկալի ծիծաղ մը կը յաջորդէ։ Այսոր օրինակ մը ունինք Որեստի այն սքանչելի կտորին մէջ, ուր Երմիոնէայ հաճոյ ըլլալու համար զՊիւռոս սպաննելէն վերջը կ'իմանայ որ Երմիոնէ անոր մահուընէն ետև չուզելով ապրիլ՝ ինք զինքն սպաններ է.

« Շնորհք Երկնից. թըշուառացայ քան որչափ ոչն յուսայի.

Ո՛վ Երկին. գովեմ՝ ըզքեզ զի ցարդ կացեր անսասան».

Եւ այս սոսկալի տողովս կը վերջացնէ.

« Քա՛ջ է արդ. գոհ մեռանիմ, և վերճարեալ է զինէն».

Այս խօսքս՝ Գոհ մեռանիմ, կատաղութեան վսեմ կէտն է։

Ցաղագս զուարճաբանուրեան.

Երբ գովեստ մը պարսաւանաց ձևով ծածկուած կ'ըլլայ, այն տեսակ հեգնութիւնն կ'ըսուի զուարճաբանութիւն, որ ճարտար շողոքորդներու սովորական գործածած հնարք մըն է։ Պուալոյ անուղղակի կերպով Լուդովիկոս չորեքտասաներորդի գովեստը կ'ընէ, մեղկութիւնը խօսեցընելով, և անոր բերնէն զինքն ամբաստանելով։

« Ո՛չ ևս է այլ քաղցրիկն այն դար. երկինք անգութ անկարեկիր,

Յաթոռն բազմեցոյց ըզթագաւոր ժիր և անխոնջ,

Որ ըզվայելս իմ քամահէ, և անընդող կայ բարբառոյս,

Ի շունդն իւր հանդիսից զարթուցեալ զիս հանապազոր »։

Ցաղագս չափազանցուրեան.

Ճարտասանից շատ անգամ գործածած հնարք մըն է ճոխանալ քանի մը մասանց վրայ, զորոնք գիտմամբ քան ինչ որ են աւելի բարգելով կը մեծցընեն. զոր օրինակ այս բացատրութիւնս « Իբրև զմրրիկ կառք նորա, աբագադոյն քան զարծուիս երիվարքն նորա », չափազանցօրէն զուրցուած խօսք մըն է։

Այլ և այլ օրինակք։ Ի Յովհան Իմաստասիրէ. « Գոյ հնար թուել զկիրճս հեղեղատի, և զաւազ ծովու, և զչիթս անձրևի, և ոչ զստեղծեալն առ'ի քէն նորագիւտ բանս և իրս »։

ՅՈսկեբերանէ. « Արդարև իսկ բազում աշխարանաց արժանի եմք, բազում ողբոց. եթէ ամենայն աշխարհս ձայն առնուցու, զողբս հարկանիցէ, և քարինք և փայտք և ծառք և երկք և թռչունք և ձկունք, և ամենեքին ամենայն տիեզերքք համօրէն 'ի ձայն ելն և ողբիմ աշխարանաց աշխարիցեն, ոչ ինչ արժանի աշխարելոյն աշխարիցեն »։

Յեղիշէէ. « Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց 'ի կեանս իւր, և ոչ մնաց 'ի մեծամեծ չարեացն, որ ոչ անցին ընդ նա 'ի մահուան իւրում »։

Ի Սարգսէ. « Բազում անգամ է տեսանել զգազանս վայրենիս, զարջ զլնձ զգայլ զառիւծ հանդարտացեալս դարմանելով և մարգասէրս, իսկ զբարկասիրան և ոչ երբեք։ Բազում անգամ և զծով տեսանեմք հանդարտացեալ յալեաց և ցածուցեալ 'ի վայրենութենէն. իսկ զբարկացողն և ոչ բնաւ։ Հանապազ 'ի գազանութեան կայ, միշտ 'ի վայրենութեան, յար 'ի տմարդութեան, համակ յալեկոծութեան »։

Ի Նարեկացւոյն. « Զի եթէ զլիճ մի 'ի ծովուց 'ի յո-

ըակութիւն դեղոյ յեղեղեցից, և զդաշտս ասպարիզաց բազմաց սահմանեալ՝ 'ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից, և զպուրակս յոգունց անտառաց շամբից եղեգանց 'ի հաստուածս գոյութեան գրչաց կազմեցից, և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել»:

Ոասինի Իփիգենեայն մէջ Ոդիսևս համոզելու համար զԱգամեմնոն որ իր աղջիկը զոհէ, այսպէս կ'ըսէ իրեն.

«Դու միայն կորզեալ ըղմեզ 'ի ծոցոյ նոր սիրելեաց,
Եռուր մեզ լաքանել զորդեակիս մեր և զկանայս:
Եւ մինչդեռ 'ի կողմանց կողմանց յայս վայր դումարեալք՝
Վրիժուցն քոց պարծանք փայլէ ևեթ յաչս մեր,
Մինչդեռ Հելլենաստան տրեալ քեզ զկուր հաճութիւն,
Ճանաչէ զքեզ առաջնորդ համբաւատենչ հանդիսիս,
Եւ արքայքն՝ ոյց դոյր ընդ քեզ կալ 'ի հենգնող ըղպատուոյդ,
Պատրաստ կան 'ի քո սպաս հեղուլ զարիւնն համօրէն,
Միայն Ագամեմնոն յանձն ոչ առեալ զյաղթութիւն՝
Ոչ իշխէ սակաւ արեամբ գընոց առնուլ զայնքան փառս.
Եւ անդէն 'ի սիրղբան յահէն եղեալ սրբատաթափ՝
Հրամատաբ ոչ կայ Յունաց, բայց յանդրէն յեռս արձակել»:

Այս խօսքերուս մէջ գրեթէ բառ մը չկայ որ չափազանց չըլլայ. վասն զի ըստ ինքեան տրովիական պատերազմը միայն Ագամեմնոնի պատճառաւ է, այլ Յունաց հասարակաց շահուն համար, որոնք Մենելաւոսի հետ մէկտեղ նախատինք կրած էին. ամենայն թագաւորք, մանաւանդ Ոդիսևս՝ պատրաստ չէն իրենց աբեան վերջին կաթիլը թափելու. Ագամեմնոն չմերժեր ամենեին յաղթութիւնը, և Յունաց անոր համար հրա-

մանատար եղած չէ որ զիրենք եռ դարձընէ. Ոդիսևս գիտէ որ ասոնք ամէնքն ալ բարդեալ խօսքեր են, և խորամանկութիւն կը բանեցընէ՝ արքայից արքային փառասիրութիւնն գրգռելու համար: Այս ձևս կ'ըսուի չափազանցութիւն:

Յաղագս նուազեցուցման.

Բան մը մեծցընող ձևոց քով բնականապէս զայն նուազեցընող ձև մը կը գտուի: Վերը յիշուած չափազանցութեանց մէջ նուազեցուցման ասանկ ձև մը կայ.

«Միայն Ագամեմնոն յանձն ոչ առեալ զյաղթութիւն՝
Ոչ իշխէ սակաւ արեամբ գընոց առնուլ զայնքան փառս»:

Աղջկան մը արիւնն՝ ոչինչ բան մը կը նկատէ:

Յաղագս կսխման.

Ճարտարախօսն կը սիրէ երբեմն մեր հետաքրքրութիւնն շարժել, անակնկալ դարձուածքներով ըսելիքն ուշացընելով, վերջէն աւելի որոշ հասկցնելու համար, և խօսքին խորհրդաւոր կերպ մը տալ, լուծումը վերջը ձգելով. այս է կսխման ձև ըսածը: Ոսկեբերան շատ գեղեցիկ կերպով այս ձևս կը գործածէ, խեղկատակութեան վրայ խօսելով.

«Եւ ուր է՝ զի չէ ախտն այն. արդ և յեկեղեցի ևս եմուտ, և 'ի գիրս ևս մեսեցաւ: Ասացից ինչ, զի ցուցից զչարեացն առաւելութիւն. ամաչեմ, բայց սակայն ասացից. քանզի կամիմ ցուցանել թէ ուրչափ տարածեցան չարիքն, զի մի կարծիցիմ եթէ վասն ընչին իրաց սուտ խօսիցիմ, այլ զի գոնեայ այնպէս կարացից մեր-

ժեալ զձեզ 'ի պատրանացն։ Եւ մի ոք համարիցի եթէ 'ի մոռաց ինչ կարկատեմ, այլ զոր ինչ լուայն՝ զայն ասեմ։ Եմուտ ոմն 'ի տուն աւագայ, թէպէտ և ծաղու բանք են, սակայն ասացից։ Իբրև սկուտեղ խորտկօք առաջի եդին, ասէ. ընկալարուք զխրատ, զի մի բարկասցի ո-րովայն »։

Դարձեալ ուրիշ տեղ. « Հաւատայցէք արդեօք եթէ եղև ջրհեղեղ, եթէ առանցելոց ինչ բանք թուիցին ձեզ, ուր և լերինքն յորս տապանն դադարեաց՝ վկայեն. զՀայոց լերանցն ասեմ։ Այլ ևս յաճախութեամբ, և յայլ ևս քան 'ի նոյն յայտնագոյն ածիցէ բանս. երթեալ ուրուք ելցէ ձեր 'ի պաղեստինացւոց աշխարհն։ Այսուհետև ոչ ևս բանս, այլ արդիւնս իսկ ասեմ. թէպէտ առաջինքն քան զարդիւնքն յայտնագոյնք են. զի զոր գիրք ասեն, և քան զաչաց տեսիլ հաւատարմագոյնք են։ Երթեալ ուրուք ելցէ ձեր 'ի պաղեստինացւոց աշխարհն. զինչ ոք 'ի ձէնջ վկայեսցէ ինձ, որոց զտեղիսն իսկ տեսեալ ելցէ. քան զԱսկաղոն և քան զԳազա 'ի վերոյ՝ անդ իսկ 'ի սպառուածի Յորդանան գետոյ վայրքն ինչ բաղումք են և ամենալիցք, մանաւանդ թէ էին, քանզի այժմ ոչ է նոյնպէս, որ երբեմն իբրև զդրախտ Աստուծոյ էին »։ Վերջը Սոդոմայ կրակին հետևանքը կը նկարագրէ։

Յովսեպոս այս ձևս ճարտար կերպով կը գործածէ, երբ այն կնոջ գիպուածը կը պատմէ, որ սոլոյն պատճառաւ իր որդին խորովեց ու կերաւ. և Հրէից սաստիկ սոլոյն ժամանակ վահանաց կաշինէրն ու ցամաք խոտ ուտելն յիշելէն ետև կ'աւելցնէ.

« Բայց զինչ պիտոյ է մեզ զչարութիւն սոլոյն յանշունչ կերակրոցն ցուցանել. զի ունիմ ես ցուցանել գործ մի, որ նման նմա ոչ 'ի մէջ Յունաց և ոչ բարբարոսաց պատմի թէ գործեցաւ. զի գողումն և սոսկումն է պատմել, և լսելեաց գժուարին է հաւատալ։ Արդ կամակար անփոյթ առնէի ես անցանել զայսու թշուառութեամբ, զի մի ստել երևեցայց յեռաւոնացացն, եթէ ոչ բաղում վկայս ունէի. և թերևս շնորհս ինչ դուշնաբեայ ընդ որդիս Ժողովրդեան իմոյ առնէի ես, խնայելով զայն ինչ՝ զոր արդեամբք պաշտեցաւ »։ Վերջը պատմութիւնը կը յարէ։

Պոսիւէ, Բրիտանիոյ թագուհւոյն՝ Հենրիկէի վրայ խօսելով կ'ըսէ.

« Ֆանիցս անգամ գոհութիւն մատոյց նա աստ 'ի տեղւոջս յայսմիկ Աստուծոյ խոնարհաբար՝ 'ի վերայ երկուց մեծամեծ շնորհաց. մի՝ զի արար զնա քրիստոնեայ, և միւս՝ զինչ ակն ունիք, տեսրք. թերևս զի պատրաստեաց զկրս որդւոյն իւրոյ արքայի։ Ո՛չ, այլ զի եդ զնա դշխոյ թշուառական »։

Կախման գեղեցիկ օրինակ են Լապրիւյերի այս Պալմիրայ թագուհւոյն ուղղած խօսքերն.

« Աղմուկք խռովութեանց որք զաշխարհս պատուութեանդ վրդովին, ովՁենոբիա, և պատերազմունք, յորս զկնի մահուան առն քո արքայի՝ ընդդէմ հզօր աղգի դիմագրաւես առնապէս, ոչ նուազեցուցանեն ինչ 'ի քումմէ փառաւորութենէդ։ Քան զամենայն կողմանս առաւել ընտրեցեր զափունս Եփրատայ, առ 'ի կանգնել անդանօր զշենուած հոյակապ, ուր առողջարար և բարեխառն են օդք, և տեսիլ վայրացն ծիծաղագէզ. և անտառ նուիրական հովանացեալ կայ յարևմտից։ Զէր մարթ աստուածոյն Աստրոյ, որք է երբէք զի բնակեն յերկրի, գեղեցիկ քան զայն ընտրել բնակութիւն. շուրջանակի դաշտավայրն խռնեալ է 'ի մարգկանէ, որք գան և գնան, հերձանեն և հատանեն, և թաւալեցուցեալ տանին սայլիւք զփայտս Լիբանանու, զսղջնձ և զպորփիւր. ճախարակք և մենքենայք ընդ օգս ճնչեն, յուսացուցեալ զորս ճանապարհորդեն յԱրաբիա՝ զի 'ի դառնալն այսրէն 'ի տունս իւրեանց, տեսանիցեն զշենուած ապարանիցդ աւարտեալ պայծառ շքեղութեամբ, որով զարդարել զայն ցանկայք դու և որդիք

քո իշխանազունք, չէ հաստատեալ անդէն զընակու-
թիւն։ Մի խնայեր խմիք, դշխոյդ մեծապանծ.՝ի գործ
արկ զսկի և զկոյակապ ճարտարացն արուեստ.՝ի ձե-
ղուանս անդ և՝ի յատակս՝ հանդէս արասցեն խմաս-
տութեան իւրեանց Փիդիասն և Զեւսքիս ժամանակիդ.
անկեալքիր դրախտս ընդարձակս և հեշտալիս, և այն-
պէս սքանչելիս, մինչև չերևել թէ լցեն ձեռագործք
մարդկան։ Ծախեսջիր զգանձս քո և զճարտարութիւն
՝ի ձեռակերտդ աննման. և յորժամ՝՝ի կատար հասուս-
ցես զայն, ով Զենոբիա, ՝ի հովուաց ոք բնակելոց յա-
ւաղուտս մեռակայս Պալմիրայ, ՝ի մաքսից դեռոյդ
փարթամացեալ, գնոց առնուցուս յաւուր միում պատ-
ուաստական արծաթով զոսունդ ալբայական, և զար-
դարեսցէ զայն, և առաւել ինն արժանաւոր տեղի ինն-
քեան և իւրոյ մեծութեան արասցէ »։

Յաղագս ուղղութեան.

Երբ խմաստ մը բացատրելէն ետև, յանկարծ կը ձգենք
աւելի չափաւորելու կամ անոր տեղ ուրիշ աւելի պատ-
շաճ սեպած խմաստներս դնելու համար, այս ձևս հռետո-
րականին մէջ ուղղութիւն կը կոչուի։

Օրինակ՝՝ի Լամբրոնացւոյն. « Այս է քո պանծալի
աստուածաբանութիւնդ, մանաւանդ թէ յիմարու-
թեանդ ցոյցք, զնիւթս զայս յաւէժակից ասել արար-
չական զօրութեանն »։

Ի Խորենացւոյն. « Աստանօր ամաչեմ ասել զճշմար-
տութիւն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամպարշ-
տութիւն ազգիս մերոյ, զմեծի ողբոց և արտասուաց
արժանի սոցա զգործս »։

Ի Սարգսէ. « Զայսոսիկ լսելով, եղբարք, հայեսցուք
՝ի մեզ և սթափեսցուք յահագին արբեցութենէս, եթէ

արբեցութիւն պարտ է անուանել զմերս, և ոչ խելա-
գարութիւն և կամ գիւաբաղխութիւն »։

Յոսկեբերանէ. « Աստ աղբիւր հրեղէն հոգևոր բղխէ
՝ի սեղանոյս, և քո զայս Թողեալ՝՝ի Թատրն ճեպիս...
Թողեալ զՔրիստոս՝ որ նստի առ աղբիւրս, քանզի և
այժմ առ աղբիւրն նստի, ոչ ընդ Շամրատացւոյն միայն
խօսի՝ այլ ընդ համօրէն քաղաքիս։ Բայց թերևս և այժմ
ընդ Շամրատացւոյն. քանզի չէք ոք և այժմ առ նմա
մօտ. այլ ոմանք մարմնով միայն, և այլք անձամբ իսկ
մեկուսի »։

Դարձեալ՝՝ Յոսկեբերանէ. « Անդ իսկ՝՝ի սպառուածի
Յորդանան գետոյ վայրքն ինչ բազումք են և ամենալցք,
մանաւանդ թէ էին, քանզի այժմ ոչ է նոյնպէս, որ ճբ-
բեմն իբրև զդրախտն Աստուծոյ էին »։

Ֆոնդընէլ՝՝ Պետրոս առաջին կայսեր Ամդերտամի
նաւարանի մը մէջ նաւ շինելու արուեստը սորվելուն
վրայ խօսելով կ՚ըսէ.

« Եւ դրեալ զանձն՝՝ի դասս հիւսանց, ընդ անուամբ
Պետրոսի Մեքայելովայ և ոչ Պետրոսի Մեքայելովիչի,
որով արժան էր նմա վարել՝՝ի պատճառս հաւուն իւ-
րոյ. քանզի՝՝ի Ռուսացն բարբառ այդ զանազանութիւն
վերջաւորութեան յայտ առնէ զգռեհիին լինել ուրուք
կամ զաղնուականութիւն. և չկամիր նա թէ մնասցէ
նշանակ ինչ գերամբարձ մեծութեանն, զոր ամենեքին՝՝ի
մոռացօնս էր արկեալ. կամ մանաւանդ թէ ոչ երբեք
այնպէս քաջ կապեալ էր յուշն, զմոռաւ ածելով զն ճշ-
մարիտ մեծութիւնն հաստատեալ կայ առաւել՝՝ի գործս
օգտակարս ժողովրդեան, քան՝՝ի շուք պայծառութեան
և՝՝ի փառաւորութեան, որք կցորդակիցք են ընդ
այնմիկ »։

Յաղագս յառաքեալն.

Շատ անգամ կ'ըլլայ որ փոխանակ ըսած խօսքերնիս ուղղելու, յանկարծ կ'ընդհատենք զայն և կը թողունք որ այլք մեր չըսածն դուշակեն: Այս յանկարծական ընդհատումն, և այս խորհրդաւոր լռութիւնն՝ բուն ըսելիքէն աւելի բան կը հասկըցնեն:

Օրինակ յԵղիշէայ. « Զի՞ մի մի թուիցեմ. այլ զամենայն անարժանս յառաջ մատուցաներ, և զամենայն արժանաւորս յետոյ տանէր »:

Ի Լամբրոնացւոյն. « Որ մեղանչէ, օրինազանց է. իսկ որ զօրէնս լուծանէ, զի՞նչ անուն է նորա. ես պատասխանիմ ասել, մանաւանդ թէ երկնչիմ. զի մի աղէ կեղ բժըշկութեամբս վասն 'է խոր հարմանս զդեղ բանիս՝ երևեցայց թշնամի »:

Ի Սարգսէ. « Զորս վասն Կռոնոսի և Արամազդայ պատմութիւնք լցեն՝ ամաչեմ ասել. ոչ սակս նոցա՝ որ արժանի են ամենայն պարսաւանաց, այլ խնայեմ 'ի լեզու իմ, զի մի ժանտասցի յիշատակաւ պղծութեան նոցա »:

Ի Շնորհալւոյն. « Զպտուղն՝ որ նախ քան զայս 'ի միաշնչութեանն և մինչդեռ 'ի տաճարին խաղաղութեան էաք՝ տայր աշխարհ, ձեզ թողումք խմաստասիրել քան թէ բանիւ զանձառն ճառել »:

Կիկերոն՝ Պոմպէոսի համար գրած ճառին մէջ կ'ըսէ. « Ոչ ինչ ասացից, Կուիրացիք, որչափ նա 'ի գլուխս տարաւ 'ի քաղաքի և 'ի բանակի, ընդ ցամաք և ընդ ծովքանզի և կամաց նորա ոչ քաղաքացիք ևեթ հաւանդատան, նա և դաշնաւորքն հպատակեցին, թշնամիքն հնազանդեցան, այլ և հողմք և մրրիկք յաջողեցին նմա »:

Փեդրայի մէջ Արիկիա կը գործածէ այս ձևս, վախցընելու համար զԹեսէոս, որ Ենոնեայ զըպարտութիւն ներէն գրգռուած, իր որդւոյն վրայ ծուռ կարծիքներ ունեցեր էր.

« Ընդդէմ լինիցիր, տէր. անյաղթելի քո բաղուկք
Յանհամար ճիւաղաց ապրեցուցին ըզմարդիկ.
Բայց դեռ ոչ վըճարեցեր, զի մին մընայ կենդանի...
Տէր, որդիդ արդեւլուս յառաջ ըզբանքս իմ վարել:
Առ քեզ մեծարանացն իւրոց գոլով խելամուտ,
Զամենայն չիշխեմ ասել. զի տըրտմեսցի յոյժ ընդ այն:
Յերեսաց քոց խուսեմ, պատկառելով ընդ նըմա,
Զի մի ըստիպեցայց ըզլըռութիւն հատանել »:

Յաղագս շնորհման.

Ճարտասանն կը շնորհէ երբեմն, կամ կը կեղծէ շնորհել հակառակորդին բան մը՝ զոր կրնար ժխտել, որպէս զի իր ճառին ուրիշ կողմի մը վրայ աւելի սաստիկ պնդելու իրաւունք ունենայ:

Այս ձևով կը խօսի Առաքեալն առ Հռովմայեցիս.

« Իսկ արդ ասիցես. ոսաքն փչրեցան, զի ես պատուաստեցայց: Բարւոք է. անհաւատութեամբն փչրեցան, և դու հաւատովք հաստատեցար. մի հպարտանար, այլ երկիր. զի եթէ Աստուած 'ի բուն ոստսն ոչ խնայեաց, գուցէ երբեք և 'ի քեզ ոչ խնայեսցէ »:

Օրինակ 'ի Լամբրոնացւոյն. « Բայց համարեաց՝ թէ 'ի հաւատոցն թիւրեցան. 'ի կարդացն ոչ աղագաւ. զի այլ է հաւատոյն բան, և այլ է աւանդութիւն կրօնից :— Դարձեալ թիւր՝ մի ազգն կամ երկուսն. երեք ազգ քրիստոնէից, և որ ընդ նոքօք բազմապատիկ ազինք հաստատուն աշխարհօք և աթոռովք՝ զիարդ վրդովեցան 'ի ճշմարտութենէ, և առ յեղյեղեալ և տատանեալ ազգս մեր նոցն միայն մեաց հաստատուն »:

Դարձեալ 'ի Լամբրոնացւոյն. « Գեղեցիկ դատիմք 'ի ձէնջ, եղբարք. քանզի գրեալ է, մի փոխեսցես զսահմանս զոր եդին հարքն քո. և որ քակէ զցանկ, հարցէ զնա օձ: Բայց ասա, զի՞նչ խոստովանիս դու հարս քո. եթէ զառաքեալսն և զհայրապետսն՝ որք աստուածաշունչ բանիւք դեռ ևս կենդանի են 'ի միջի մերում, և առ ամենայն ճշմարտութիւն առաջնորդեն, և ես եմ նոցա ջատագով, և առ 'ի նոցանէ վարժեալ և աշակերտեալ: Ապա թէ այլս ոմանս, որոց ոչ անուն երևի 'ի միջի մերում, և ոչ արձանագրութիւն բանից՝ վկայ իւրեանց ուղղութեանն, զնմաստասիրութիւնն պարսիմք յայսմ վայրի 'ի գործ արկանել, և ընտրութեամբ ճանաչել, մի գուցէ լեցին մեզ մոլորեցուցիչք 'ի սրբոցն հետոց, որպէս ծերք Իսրայելի 'ի Մովսիսէ »:

Մահ Կեսարու ողբերգութեան մէջ, Բրուտոսի և ուրիշ դաւաճանաց ըրած գործն ժողովրդեան մէջ հասարակապետական ոգին արծարծելու պէս կ'ըլլայ, և այն միջոցին որ կեցցէ ազատութիւն՝ կը կանչէն, Անտոնիոս մէջ տեղ կ'երևայ՝ դիկտատորին վրայ գովեստ խօսելու համար: Եթէ խօսիլ սկսէր՝ սպանողաց գիտաւորութիւնն պախարակելով, զայրացած՝ խօսքը կը կտրէին: Ի՞նչ կ'ընէ ուրեմն: Իբրև վարպետ ճարտասան, կը ջանայ դաւաճաններն արդարացընել. և ժողովուրդն այս առ երեսս չափաւորութենէն խաբուած, ուշադրութեամբ և սիրով մեկալ խօսքերն մտիկ կ'ընէ.

« Զուն՝ եմ ինչ ասել ըսպանողացն հակառակ.
Յաշխարհին ծառայութիւնն՝ զիրարսի սիրտ նոցա մեծ:
Ըղձեր իշխանապետն 'ի կողս հարին կարեվէր.
Երախտեօք իւրովք լցցեալք, յարիւն նորին ներկեցան:
Ի դըրդեալ ըզՀռոմն 'ի դըժպըհին այն հարուած
Կեսարու յանցաւոր լինել արժան էր անշուշտ:
Վըկայեմ. սակայն ե՞րբ ուրեք երբեք ինչ Կեսար
Զիւրոյ իշխանութեան ըզբեռն 'ի ձեզ ծանրացոյց »:

Յաղագս զանցառութեան.

Շատ անգամ բան մը կ'ըսենք, բայց չենք ուզեր երբեցընել թէ զայն կը զուրցենք. կամ նիւթոյ մը վրայօք հարեւանցի անցնիլ կը ձեւացնենք, մինչդեռ գիտաւորութիւններս է զայն լաւ մը բացատրել: Այս ճարտասանական հնարքս կ'ըսուի զանցառութիւն:

Շնորհալին իր ժամանակին մարդկանց անկարգութիւններն շարեալն ետև կ'աւելցընէ.

« Թողից ասել զևս դժնդակագոյնսն այսր ժամանակի արանց գործ. զի և բաղում անարգանաց և տուժից տանին յայլազգեաց, ոչ յաղագս աստուածային օրինացն, որպէս առաջին սուրբքն, զի այն երանութեան էր արժանաւոր. այլ վասն մնոտի փառացն յուսոյ »:

Պոսիւէ այս ձևս գործածած է Օռլէանու դշխոյին դամբանական ճառին մէջ.

« Գոյր ինձ յուշ արկանել ձեզ՝ զի այնպէս քաջահմուտ էր գեղոյ յօրինուածոց ճարտարութեան, մինչև համարեալ 'ի կատարումն արուեստին հասեալ՝ եթէ միայն գիտաց զի հաճոյ սիկնոջս լինել. գոյր ինձ և յաւելուլ, զի հանճարեղք և փորձք զարմանային ընդ աշխոյժ և խորազգաց միտն, որ անաշխատ հասանէր կայր 'ի վերայ մեծամեծ գործոց արքունի, և շահիցն ծածկելոց լինէր խելամուտ: Այլ զի՞ է ինձ երկարել զճառս, ուր մարթի ինձ միով բանիւ ասել բովանդակ »:

Յաղագս հաղորդակցութեան.

Երբեմն Ճարտասանն կարծէս թէ իր ունկնդրաց հետ մէկ կ'ըլլայ, անոնց հետ կը համաձայնի, և իր ըսելիքին վրայ անոնց խորհուրդ կը հարցընէ. բայց ասիկայ ուրիշ բանի համար չէ, բայց եթէ որպէս զի աւելի ապահով կերպով զիր ենք իր դիտած նպատակին հասցընէ, և վերջն աւելի զօրաւոր կերպով անոնց սրտին վրայ ազդէ: Այս ձևս կը կոչուի հաղորդակցութիւն:

Օրինակ Ոսկեբերանէ. « Արդ ասա. եթէ յանկարծ կոչ լինիցի 'ի քաղաք ուրեք արքունի, որք ոչ դրաստուս ինչ կարօտ լինիցին, ոչ պատանեաց, ոչ կօշկաց, և ոչ այլ ինչ կահի և կազմածոյ, այլ զհացեկն միայն և զջուրս յաղբերացն բաւական համարիցին. և այլքն ասիցեն, եթէ ոչ կառս կազմիցէք, և ոչ կակուղ անկողինս պատրաստիցէք, չկարեմք երթալ. եթէ ոչ բազում սպասաւորս ունիցիմք, և սահպ հանդէրձ հասանիցէ, և նժոյգ ևս և կարճութեան վանս և այլ ինչ բազում պէտս, չկարեմք երթալ. և ընդ ո՞յս արժան է զարմանալ, ընդ նոսա՞ թէ ընդ սոսա. յայտ է թէ ընդ սոսա, որք ոչ ինչ իւրք ունէք բուռն լինին: Նոյնպէս և յաշխարհիս Ճանապարհի ոմանց բազում պէտք են, և ոմանց չափ ինչ. որպէս զի աղքատութեամբն, եթէ պարտ ինչ էր, 'ի դէպ էր մեծամտել »:

Ի Սարդիսէ. « Արդ ասա, ո՞ր է արժանահատուալն. բա՞նքն եթէ արդիւնքն. զի բանք չՃարեն ինչ 'ի հաւատոց սակս, բանիւ զԲրիստոսին կրեալ զանուն, և գործով զսատանայն, զի լի և լի է այնպիսին անհաւատութեամբ »:

Մասամբ մը այս հնարից արդիւնք պէտք է սեպել

Մասկլեռնի Յաղագս սակաւութեան ընտրելոց անուանի քարոզին ըրած ազդեցութիւնը.

« Արդ հարցանեմ առ ձեզ, և հարցանեմ՝ հարեալ սարսափմամբ, և չարկեալ խոսիր ընդ իս և ընդ ձեզ, և փափաքելով զնոյն ունել ձեզ կիրս որով զդածեալս եմ այժմիկ. հարցանեմ ուրեմն առ ձեզ. եթէ երևէր Յիսուս 'ի տաճարիս 'ի դատել զմեզ, և առնել զահաւորն ընտրութիւն ընդ օգիսն և ընդ այծիս, համարիցիք արդեօք զի բազմագոյնքյորոց ասաս կայցեն՝ դասեալ լինէին ընդ աջմէ. համարիք թէ գոնեայ հաւասար երկոքին կողմանքն լինէին. կարծիցէ՞ք թէ դատանէին գէթ արդարքն տասն, զորս տէր չկարաց դատանել երբեմն 'ի հնդեսին քաղաքն միանգամայն: Հարցանեմ, և ոչ գիտէք. չգիտեմ և ես իսկ զվասովն »:

Յաղագս հարցման.

Ճարտասանն շատ անգամ զօրաւոր ու բազմապատիկ հարցմունքներ կ'ընէ իր հակառակորդին կամ ունկընդրաց, առաջուց գիտնալով ինչ պատասխան որ իրեն կընայ տրուիլ կամ չտրուիլ: Եթէ իրօք գիտնալու համար հարցընէր, այն ատեն ոչ ձև կ'ըլլար և ոչ հարցում, ինչ մտքով որ հաւատոցը զայն անուանած են:

Ոսկեբերան փոխանակ ըսելու թէ՝ ա՛լ չեմ կրնար համբերել, խօսքին աւելի զօրութիւն մը կուտայ ասանկ հարցականով. « Մինչև ցայդ վայր համբերիցեմ՞»:

Օրինակ 'ի Լամբրոնացւոյն. « Ընդէ՞ր աչս ունելով և ականջս՝ ոչ տեսանեմք և ոչ լսեմք: Փանի՞ ասպարէզ է 'ի բերանոյ մինչև ցունկն, զի զբարբառ սորին ոչ ներեմք ունկանն լսել և տեղի տալ: Այսքան է՞ր խաւարեցուցաք զպայծառութիւն եկեղեցւոյ վասն մնոտի յուսոյ »:

Դարձեալ 'ի Լամբրոնացւոյն. « Զինչ պտուղ յայն-

ժամ եռուն աշխարհի. զինչ այլ, բայց եթէ երկիրս երկին եղև, և փառքն՝ որ 'ի բարձունս էր Աստուծոյ՝ և յերկիրս տարածեցաւ »:

Յեղիշէ. « Իսկ արդ չմբ արժան էր ասել Թագաւորին. քա՛ւ, ես ոչ ասեմ. այլ խրատ 'ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ »:

ՅՈսկեբերանէ. « Զինչ ծանր հրաման առաք առնել. զսաքս հատանել անցանել, թէ ընդ օդս թռչել, թէ ընդ բնութիւն համատարած ծովուն ցամաքաթեւս սլանալ: Եւ ոչ երբեք. այլ այնպէս գիւրին է առաքինութիւն, մինչև այնպիսի գործոյ մի ինչ կարօտանալ, այլ միայն ողջոյն և գթոյ: Զո՛ր գործի ունէին առաքեալքն՝ որ զայնպիսի ուղղութիւնս արարին. ոչ միաձորձք և բոկք շրջէին, և ամենեցուն յաղթեցին: Զինչ դժուարին 'ի հրամանաց էր: Մի, ասէ, առներ զոք թշնամի, մի ատեար զոք. մի չար զումեքէ խօսիր: Սոցին հակառակք են դժուարինք, և ոչ սոքա »:

Կլիմենտեսարայ առ հայրն Իփիգենեայ ուղղած սաստիկ յանդիմանութեանց մէջ հարցման ասանկ դեղեցիկ օրինակ մը կը գտնենք.

« Ա՛յ խուժադուժ, ա՞յս էր ուրեմն այն ցանկալի պատարագ՝

Զոր խրնամքդ հանդերձէին խորամանգեալ արուեստիւք:

Զինչ. սոսկումն 'ի ձեռնադրելդ յանագորոյն յայն հրաման,

Ի դրծել անդ նորին ըղձեալն քո չարգելինչ:

Զի՞ էր քեզ առ աչս մեր 'ի սուտ թախիծ ձևանալ.

Համարիս թէ արտասուաք ըղքոյդ դորով յայտնիցես:

Ո՞ւր լցեն պատերազմունք մղեալք 'ի քէն վասն իւր.

Զո՞ր արեանց ուխս հեղեղեալ վասն նորա գնացուցեր.

Ո՞ր նախճիրք ասատնօր խօսին ըզքո մաքառմանց,

Ո՞ր դաշտ գիակուտեալ 'ի լքուութիւն ցիս հարկէ »:

Յաղագս տարակուսութեան.

Ճարտասանն նաև ինչ ըսելիքը և իր մտածութեանցն ինչ կարդ գնելիքը չգիտնալ կը կեղծէ, որպէս զի աւելի վստահութիւն մը աղդէ ունկնդրին և իր ճառին աւելի պարզ և բնական կերպ մը տայ: Պուրտալու՝ Յաղագս Ծննդեան քարոզ մը ասանկ կը սկսի.

« Աւետարանեմ զերկիս խոնարհ և աղքատ. այլ աւետարանեմ զայն աւագաց և մեծատանց աշխարհի: Զինչ ուրեմն, ո՛վ տէր, ասացից առ նոսա, և որո՞վք բանիւք վարեցայց՝ 'ի կարգել առաջի նոցա զխորհուրդ խոնարհութեան քո և զաղքատութեան: Ասացից թէ մի ինչ երկիցեն ամենեքին. այլ այնպիսի իմն տեսանեմ գնացս 'ի նոսա, զի զայդ ասելով խաբեցից զնոսա: Ասացից թէ երկիցեն. այլ հեռացեալ գտանիցիմ 'ի մտաց խորհրդոյն՝ զոր կատարեմք, և 'ի քաղցր ակնկալութեանցն՝ զոր աղդէ այն և աղդեսցէ 'ի սիրտս մեծամեղ յանցաւորաց: Ասացից արդեօք զի տրտմեսցին, մինչ յուրախութեան կայ համբրէն աշխարհ հաւատացելոց: Ասացից զի մխիթարեսցին, մինչդեռ բաղում պատճառք գոն նոցա տրտմութեան 'ի տեսիլ Փրկչին, որ գտատարտ առնէ զամենայն խորհուրդս նոցա »:

Կիկերոն յաղագս Հռոսկիոսի Ճառն այսպէս կը սկսի.

« Եւ զինչ բողոք կալայց 'ի սկզբան, կամ ուստի յառաջ խաղացից, ո՞ գատաւորք. կամ զինչ և կամ յորոց օգնութիւն խնդրեցից, 'ի գինն արդեօք անմահից, 'ի ժողովրդեանէն Հռովմայ, կամ զձերոյն հաւատարմութիւն մաղթեցից, որ 'ի ժամանակիս ընդ ձեռամբ դրաւեալ ունիք զծայր իշխանութեան »:

Սուրբն Կղեմէս իր առ Կորնթացիս Թղթոյն մէջ սոյն հնարքս կը բանեցընէ, ցուցընելու համար թէ մարդս չկրնար Աստուծոյ աչքէն փախչիլ.

« Յո՞ երթայց, տէր. յո՞ փախեայց յերեսաց քոց. թէ
ելանեմ յերկինս, դու անդ ես. թէ դնամ 'ի ծագս եր-
կրի, և անդ զքո ձեռն գտանեմ: Թէ լցանեմ 'ի խորս
անդնդոց, անդ է հոգի քո: Յո՞ թաքեայց կամ ո՞ւր փա-
խեայց 'ի քէն՝ որ դրաւեալ ունիս զամենայն »:

Օրինակ յՈսկերերանէ. « Եւ արդ ուստի՞ հաւանե-
ցուցից զձեզ, ոչ գիտեմ. զայն ասացից՝ թէ որդն նոցա
ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի, թէ զմիւսն որ ասիցէ՝
թէ երթիցեն 'ի հուրն յաւիտենից: Եթէ զմեծատուն-
ածեալ կացուցից առաջի, և տակաւին ասիցէք թէ
վասն սպառնալեաց ասացեալ է: Եւ արդ ուստի՞ հաւա-
նեցուցից զձեզ: Սատանայն միտք են այդ, անօգուտ
շնորհ շնորհեալ՝ որ ամենևին ծոյլս կազմէ. և արդ ուս-
տի՞ բառնայցեմք զայն 'ի միջոյ. որչափ և ասիցեմք 'ի
գրոց, ասէք՝ վասն սպառնալեաց է: Այլ զայլոց զհան-
դերձելոցն թերևս մարթիցէ ոք ասել. զանցելոցն և 'ի
դլուխս ելելոցն՝ ոչ ևս: Լուարուք զքրիստոնէիսն, մի թէ
այն վասն սպառնալեաց ինչ ասացաւ, և չեղև, և չի՞ 'ի
դլուխս »:

Ի Բարսղէ. « Հիացեալ զարմանամ մտօք, և ոչ գի-
տեմ ուստի՞ պարտ և պատշաճ եցէ առնել սկիզբն ճա-
ռիս »:

Ի Նարեկացւոյն. « Եւ արդ ո՞ւր արդեօք զդարշա-
պարս ոտին կառուցից, և կամ յո՞ր վստահութիւն զաչս
իմ յառնեցից: Զի եթէ 'ի ձեղուն բարձրութեան երկնի,
անտի անձրևեաց հուրն Սոդոմայ. իսկ եթէ 'ի յատակս
խորութեան երկրի, սա եբաց զկոկորդն ըմբռնողական
և եկուլ զԴաթան բանական Աբիրոնի: Եթէ 'ի համա-
տարած օդոյն պարզութիւն, այն եղև եգիպտացւոցն
խաւար շօշափելի: Այլ դու ամենազօր արարիչ բնաւից,
և ինձ ողորմեա կրկին գթութեամբ »:

Ի Լամբրոնացւոյն. « Ոչ գիտեմ ուստի՞ զայս օրէնս
դտեալ մեր. 'ի նախնեացն ոչ ունիմք, զի ահա ցուցաւ
վերագոյն. և յայլ ազգս ոչ տեսանեմք. և նոր առաքեալ

ոչ յայտնեցաւ մեզ, որ խախտեաց զառաքելոցն սահ-
ման: Ցայտ է թէ ունիմք յանիմաստութենէ և յարհա-
մարհութենէ օրինացն Աստուծոյ »:

Իմաստից ձևոց մէջէն դուրս ձգուած են քանի մը
ձևեր զորոնք հռետորը կը դնէն սովորաբար. ինչպէս են
անէջ, աղէրսանք, որոնք պարզ խմաստը կ'արտայայտեն
առանց նոր զարդ մը աւելցնելու. և ինչպէս խորհրդա-
ծութիւնն ու երկիմաստութիւնն ձև չեն՝ նոյնպէս նաև
ասոնք ձև չեն: Մենք այն ձևերն ընտրեցինք որոնք ի-
մաստին մատնաւոր ոյժ մը և վայելչութիւն մը կու-
տան:

Այս ձևերս, զորոնք հռետորականին ուսումը տեղին
համեմատ դնել և արուեստով պատրաստել կը՝ սորվե-
ցընէ, բնութիւնն կը թելադրէ նաև այն մարդուն որ
բոլորովին ոգէտ է խօսելու արուեստին: Մարմնդել
ղուարճութեան համար գրեթէ բոլոր ձևերն մէկտեղ
բերելով, ընտանեկան ոճով զանոնք իր կնկան դէմ բար-
կացած հասարակ մարդու մը բերանը կը դնէ.

« Թէ ես ասեմ՝այո՛, ինքն ասէ՝ ոչ. քրթմնջէ յառա-
ւօտն և յերեկոյն, զտիւ և զգիշեր (հակադրութիւն): Ինաւ
և ոչ երբեք լիցի խաղաղութիւն ընդ նմա (երկնաբանու-
թիւն) Շամբուշ ոմն է դա և ոգի դիւաշունչ: (շփոթան-
գութիւն): Այլ աղէ ասա՛ ինձ, ո՛վ եղկելի, զինչ արարի
քեզ (հարցումն): Ո՛վ երկին. ո՞ր այն անմտութիւն էր իմ,
յորժամ ածի զքեզ 'ի հարսնութիւն (բացագանչութիւն):
Ընդէ՞ր հեղձամահ չեղէ մանաւանդ: Ոչ մեղադրեմ ինչ
զքեզ՝ թէ քանի ծախուց պատճառք ինձ լինիս, և ո՞րքան
աշխատութիւն հասուցանես ինձ 'ի հայթայթել քեզ
զայն (զանցառութիւն): Բայց աղաչեմ և պաղատիմ առ քեզ,
թոյլ արա ինձ աշխատիլ հանդստեամբ, ապա թէ ոչ՝
մեռայց, թէ դամ մի . . . Դողացիր, և մի՛ 'ի ծայրն ա-
ծեալ ձգեր զիս (զանցառութիւն): Յարատասուս լուծանի. ո՛վ բա-
բեսեր հոգւոյն. անշուշտ ես ինքն անիրաւ գտանիցիմ:
(հեգնութիւն): Քաջ է. համարիմ թէ այդ այդպէս եցէ.

այո՛ յոյժ բուռն ոք եմ և նեղասիրտ (ընդհոռոմ)։ Բիւր անգամ ցանկացայ թէ անգեղեայ ոք լինէիր. նզովեալ առեցի զաչսն նենգաւորս, և զնաբեբայ տեսիլ երեսաց, յորոց ըմբռնեալ յիմարեցայ (ղՁարՁաՁանուՌիւն)։ Այլ աղէ ասա, ոչ լաւ էս էր արդեօք ամենքեալ զիս քաղցրութեամբ (հաղորդակցուՌիւն)։ Որդիք մեր և բարեկամք և դրացիք և ամենայն մարդիկ տեսանեն զմեր տարադէպ կենցաղ ամուսնական. լսեն նոքա զաղաղակս քո և զտրտունջս և զթշնամանս որովք զանձն իմ վարակեալ տագնապես. տեսին զքեզ՝ յորժամ ՁարպՁոց զակամբդ եկեալ, և հրացայտ դիմաք և հերարձակ գլխով զհետ իմ սլնդեալ՝ սպառնացար առ իս. սարսափմամբ խօսին զայնմանէ. դայ հասանէ դրացին, և պատմեն նմա զայն, ունկն եդեալ անցորդին, երթայ յեղբեղել զայն այլոց (ԽՁարՁագրուՌիւն)։ Կարծիցեն նոքա զի անզգամ և վայրենամիտ ոք եցեմ, զի քանեմ զքեզ պակասեալ յամենայնէ, և հարկանեմ զքեզ և սպանանեմ։ Սակայն ոչ. դիտեն նոքա զի սիրեմ զքեզ, և զի սիրտ բարի է յիս, և ցանկամ տեսանել զքեզ հանդիստ և հաՁ և հաւան (ուՁղղուՌիւն)։ Մի՛ ինչ երկմտիր. արդարադատ է աշխարհ, և կեղտ անիրաւին մնայ միշտ առ նմա։ Աւաղ զինև. մայրդ եղկելի բազում անգամ յուսացոյց զիս թէ նմանեսցես դու նմա։ Արդեօք զի՞նչ ասասցէ. և զի՞նչ խսկ ասէ այժմիկ, որ զեղեալսն զամենայն տեսանէ։ Այո՛, ակն ունիմ զի ունկն մատուսցէ առ իս. և լսեմ խսկ զի կշտամբէ նա զքեզ՝ եթէ պատՁառք խնդոյս աղէսից։ Ո՛հ, ասէ, փեսայդ իմ եղկելի, լաւագոյն բախտ էիր դու արժանի (դիմառնուՌիւն)։

Բ.

Յաղագս բառից.

Ինչուան հիմա միայն խմաստներէ ՁեւացաԾ գրութեան ոՁոյն վերաբերեալ Ձեւոց կէսը դեռ քննեցինք. կը մնայ զանոնք բացատրելու համար եղած միջոցներուն, այսինքն բառից և խօսից կազմութեան վրայ խօսիլ։ Հոս ալ ընականապէս հարկ կ'ըլլայ բառից համար նոյն բաժանումնքն ընել, ինչ որ խմաստից համար ըրինք. և այս բաժանման մասերն են, ա. Ընդհանուր յատկութիւնք խօսից. բ. Խօսից իրարու հետ ունեցած յարակցութիւնքն. գ. Բառից մասնաւոր կերպերն կամ ՁեւերնՁ։

Ա. Յաղագս ընդհանուր յատկութեանց խօսից.

Յաղագս բացայայտութեան.

Խօսքի մը՝ ինչպէս նաև խմաստի մը գլխաւոր յատկութիւնը՝ բացայայտութիւնն է։ Մատենագիր մը յստակ կ'ըմբռնէ ինչ որ կ'ուզէ զուրցել, բայց խրթին և մութ կերպով կը բացատրէ զայն։ Ռասինի մէջ Աղեքսանդր խօսելով Պորոսայ վրայ, կ'ըսէ.

« Մինչդեռ էս զանազան պատերազմք կարծէի
Ցիս ՁեթՁ ըզհամօրէն աշխարհի զաչքս Ձրգտել,
Տեսի զի ծաւալեալ հրդեհակ քաջին արութեանց՝
Մէտ 'ի կախ ըզհամբաւ կացոյց ընդ իս և ընդ նա.
Եւ պէՁեալ ըզբաղկին սոսկումն հասեալ ընդ բընաւս,
ԻնՁ գոգցես Հընդիին հորդեաց արժանաւոր ասպարէզ »։

Հոս խմաստը պարզ, բայց բացատրութիւնն մութ է. և այն խօսքը « տեսեալ զբազկին սոսկումն հասեալ ընդ բընաւս, » որ Աղեքսանդրի կը յարաբերի, կարծես թէ հընդկին ալ կը յարաբերի: Բացայայտ ըլլալու համար՝ անանկ կերպով մը բառերը պէտք է դասաւորել, որ անոնց իրարու հետ ունեցած կապակցութիւնքն շուտով հասկըցուին: Անոր համար պէտք է բայը անանկ մը դնել, որ բացայայտ տեսնուի թէ ո՞վ է գործողութիւնն ընողն և որո՞ւ վրայ կ'ըլլայ. և անցեալներն, ածականներն ու մակբայներն ճշգրութեամբ իրենց պատշաճեալ բառերուն հետ դնելու է: Նոյնպէս նաև ածական դերանուններն շատ ընտրողութեամբ պէտք է գործածել. վասն զի այս բառերս եթէ ըստ տեղւոյն չդրուին, մի և նոյն միջոց շատ մը գոյականաց յարաբերելով, ամբողջ խօսքը մթութեան մէջ կը ձգեն:

Յաղագս ուղղախօսութեան.

Խօսքի մը համար բացայայտութեան հաւասար կարևոր յատկութիւն մըն է ուղղախօսութիւնն. և շատ դժուարին է որ խօսք մը բացայայտ ըլլայ և միանգամայն ուղիղ չըլլայ: Ուղղախօս է մատենագիր մը՝ երբ խօսուած լեզուին յատուկ բառեր և դարձուածքներ միայն կը գործածէ, և խժական զուրցուածքէ և քերականական սխալէ կը զգուշանայ:

Մէկուն զուրցուածքը խժական կ'ըլլայ, երբ հնարեալ կամ խանդարեալ բառեր կը գործածէ, և բառերուն 'ի սովորութենէ ստացած իմաստէն օտար իմաստ մը կուտայ:

Կայ նաև յոգնաբերեան ոճոյ, որ տարբեր է քան զուղղախօսութիւն, և կը պահանջէ բաւական չսեպել միայն քերականական կանոններն ճշգիւ պահելն, այլ նաև այն

բառերն և այն դարձուածքներն փնտռել՝ որ համաձայն են լեզուին ոգւոյն, և ընտրելագոյն մատենագրաց գործածութեամբն ընդունելի եղած են: Բայց ասոր մէջ չափազանց երկիւղածութիւնն՝ սեթևեթութեան կը տանի:

Պէտք է նաև գործածուած բառին և անոր արտայայտել ուզած իմաստին մէջ կատարեալ կապակցութիւն մը ըլլայ: Յատուկ բացատրութիւնն ամէն անգամ ինքնիրեն գրողին մտայն առջև չէլլեր. պէտք է համբերութեամբ փնտռել զայն. և որչափ դժուարութիւն ալ պատճառէ, պէտք է ջանալ վերջապէս գտնել զայն: Շատ քիչ կը գտնուի որ լեզուի մը մէջ երկու բառ մի և նոյն նշանակութիւնն ունենան. և լեզուագիտութեան մէջ հմուտ եղող անձ մը՝ երկու հոմանիշ երևցած բառերից մէջ անգամ տարբերութիւն կը գտնէ:

Որչափ աւելի բառից բուն իմաստն գիտնանք, և զանոնք իրարմէ զանազանող բարակ տարբերութեանցն ուշ դնենք, այնչափ աւելի ուղիղ կը գրենք կամ կը խօսինք: Գաղղիացւոց մէջ յայտմ մասին շատ նշանաւոր է Պիւֆոն, որուն գրուածոցը մէջ շատ դժուարին է գտնել անորոշ զուրցուածք մը, կամ անմտագրութեամբ բառ մը ուրիշ բառի տեղ գրուած. ամենայն իմաստքն ճշգրիտ են, և միշտ յարմար բացատրութեամբ յառաջ բերուած:

Իմաստի մը պատշաճագոյն բացատրութիւն փնտռելու ժամանակ՝ զգուշանալու է նուազաստ և հասարակ զուրցուածքներէ. վասն զի ինչպէս Պուալոյ շատ լաւ կերպով կ'ըսէ.

« Հեռակայ խօսքից անգամ է միշտ վրսեմ ինչ պերճութիւն »:

Այս սկզբունքս պէտք է ընդունիլ՝ առանց չափազանցութեան:

Յաղագս համառօտութեան.

Խօսքի մը բացայայտ և անսխալ ըլլալն միայն բաւական չէ. այլ նաև պէտք է ըլլայ համառօտ: Արդ համառօտութիւն է՝ որ և է աւելորդ բան դուրս ձգել, պէտք եղածն միայն զուրցել, և պէտք եղածէն դուրս բան մը չաւելցնել: Զատաւոր մատենագիրք չեն կրնար համառօտախօսութիւն պահել: Ոմանք կը կարծեն թէ դրած առաջին բառերնին բաւական չէ իրենց մտածութիւնն լաւ մը բացատրելու. անոր համար երկրորդ մը, վերջը երրորդ մ'ալ կ'աւելցնեն, և այսպէսով կէտի մը չորս կողմն անդադար կը դառնան, առանց երբեք զայն գտնելու: Ոմանք ալ մոլութիւն մը ունին մի և նոյն բանն երկու կամ երեք բառով բացատրելու. և կը կարծեն որ այդ երեւակայեալ հոմանիշներն խռկելով, և աւելորդ խօսքերով պարբերութիւններ կազմելով իրենց գրութեան ոճոյն ուժը կ'աւելցնեն, մինչդեռ ըրածնին ուրիշ բան չէ բայց եթէ իրենց խմաստներն խրթնացընել և ընթերցողը ձանձրացընել: Յունաց մէջ Դիմոսթենէս, և մեր մէջ Խորենացին իր պատմական դրոցը մէջ՝ օրինակ են համառօտութեան:

Յաղագս ներդաշնակութեան.

Խօսքին ընդհանուր յատկութեանց ամենէն վերջինը ներդաշնակութիւնն է: Խմաստից ճարտարութեան մէջ ինչ արդիւնք որ կայ, նոյնը քաղցրաձայնութեան մէջ չկայ. բայց և այնպէս մտադրութիւն կը պահանջէ: Ներդաշնակութիւնն բնական կերպով մարդուս վրայ մեծապէս կ'աղդէ. լեզուի մէջ ալ կրնայ տեսակ մը քաղցրութիւն ըլլալ՝ որով աւելի ախորժելի և զօրաւոր կերպ մը կ'առնու:

Ներդաշնակութեան մէջ երկու դիտելու բան կայ. մէյմը բացատրութեան կերպէն զատ՝ պարզ ձայնից քաղցրութիւնն, և ընդհանուր էլէնքն. մէյմ'ալ ձայնից անանկ կերպով դասաւորութիւնն՝ որ խմաստն ճիշդ բացատրէն: Ներդաշնակութեան այս երկրորդ մասը կ'ըսուի նմանաձայն ներդաշնակութիւն:

Նմանաձայն ներդաշնակութիւնն զարդ մըն է՝ զոր բանաստեղծք ստէպ կը գործածեն: Բագրատունին՝ պար մը ստորագրելու համար կ'ըսէ.

« Կայթս հարեալ ոսքն տրոփեն 'ի ծաղկաՃեմ դաշտ դալարի »:

Ուրիշ տեղ մ'ալ լճի մը մէջ լողացողաց նկարագրութիւնն ընելով՝ անանկ բառեր կը դնէ, որ կարծես թէ լողացողաց ջրոյն հետ խաղալով հանած ձայնն կը լսենք.

« Մխիրճ հարեալ'ի լոգարանս ականակիտ պարզեալ աղբերց,
Եւ'ի ձիգս ոսկի ծրղեաց և'ի շողշող բարձից դոփիւն
Թիւնդս առեալ կայտառն ընդ ուխս, եռան զեռան 'ի վեր 'ի վայր,
Խաղս առնելով պէս պէս ջուրց, ցանել զմիմեամբք առատ վրտակ,
Եւ զնիրեարս 'ի մակուկաց մրզել յանդունդս յալեաց ճողփիւն »:

Այս տեսակ ճարտար ու գեղեցիկ նմանաձայն ներդաշնակութեան օրինակներն խիստ շատ են Հայկ Դիւցազն քերթուածին մէջ. մենք բաւական սեպենք մէկքանին հոս դնելը, այն տողերն առնելով, որոնց մէջ բանաստեղծն զօրաց, ձիոց, զինուց, քամիի և ալեաց ձայնն յարմար բառերով կը բացատրէ.

« Իբրև ծով ծըփեցան դղըրդեալ կոհակք ըսպասակոյսք.
Սուսերը և տեգ ընդ ասպարսըն շիահելով'ի շռինդ ահեղ.
Եւ վերջին ծայրք արևուն 'ի փայլուն զէնսըն զեռացեալ.
Զերդ անդաստան ոսկեդիսակ վէտ վէտ քըմնեալ ծածանէին »:

« Վահան Հայկին ըսկըսաւ նորանըշան Թըրթռեալ Թընդիւք.
Զիոց խըրխինջք՝ դափը ոտից զերկին զերկիր դղըրդէին.
Կայր Յոլակըն բոցաշունչ դափը հատանէր սանձակոտոր,
Ոտնատրոփ յահեղ խըրխինջ տայր ընկերաց պատասխանի:
Ոտն ածեալ ոտանոյր 'ի նիւս դիւցազնըն զէնս'դ ասպար շիահեալ,
Շիահէին զայդ զօրագլուխք և խրոխտաձայն կըցէին փողք,
Ծընծղայ սրինդ դափեալ Թըմբկաց, արուեստականքըն Յոբաղայ . . . »:

« Պըղինձք շողան, գոռան ոգիք, լանջք ընդ հագագս ըղբոց շընչէն,
Ի հրաշունչ 'ի փըրփրերաս երիվարաց դոռոթեալ դրընդիւն,
Յատակք երկրին դղըրդին, Թընդան դողան սանդարամեաք,
Եւ մրբրիկ փոշւոյն ելեալ՝ ամպ մըթագին պատի զնոքօք »:

« Ասպիճանեալ տեսանէ հանդէպ գօտի մեծ ահաւոր
Մրբրիկալից ամպրոպային և շանթային խրոխտ գաղթանց,

Որ որոտայիւրեանց 'ի ծոց, փայլատակունքս թաւալէն,
Եւ զայսոց ասսի անտի մընչիւն յոխորտ 'ի թաւ մայրիս,
Եւ զանդընդոց հեծութիւն 'ի վիհ մըռայլ խոր անձաւաց »:

Նաև Ճարտասանք և արձակախօս մատենագիրք աղդութեան համար երբեմն նմանաձայն ներդաշնակութիւն կը դործածեն: Եղիշէ՝ պատերազմի մը մէջ զէնքերուն հանած ձայնը նման բառերով կը ստորագրէ. « Կոփիւնք վահանաւորացն և Ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առհասարակ խլացուցանէին»:

Ուրիշ օրինակ 'ի Մակաբայեցւոց. « Անդ էր լսել Թնդիւն վահանաց, շիահիւն աղեղանց, շողիւն սուսերաց, շաչիւն նշանաց, շառաչիւն նետից »:

Ի Յովհ. Կաթողիկոսէ. « Եւ'ի տրոփական դոփմանէ ոտիցն Թնդեալ տանիքն և 'ի վայր փլուզեալ »:

Բայց սակայն այս տեսակ ներդաշնակութիւնն այնպիսի զարդ մըն է, որ բանաստեղծութեան մէջ պէտք է չափով դործածել. իսկ արձակի մէջ կրնայ բոլորովին աւելանց ըլլալ: Խօսքի մը վայելչութեան համար կարևորն՝ ձայնից ընդհանուր ներդաշնակութիւնն է, որ բառից տեսակէն և անոնց շարուածքէն կը կախուի: Բառից տեսակին նկատմամբ՝ հարկ չէ հոս լեզու մը կազմող սկզբնական տառերն ու ձայներն մէկիկ մէկիկ քննել. բայց այս ստոյգ է որ ականջի ամենէն աւելի ախորժելի բառերն՝ քաղցր ու դիւրասայթաք ձայներով ձևացածներն, և ձայնաւորաց ու բաղաձայնից վայելչահիւս խառնուածով բաղադրուածներն են: Ձայնաւորք քաղցրութիւն կուտան բառից. իսկ բաղաձայնք անոնց ոյժ մը կ'աղդեն: Ընդհանրապէս միավանկներէն աւելի՝ երկայն բառերն ականջի անոյշ կը հնչեն, և աւելի ախորժելի կուգան. վասն զի այլ և այլ ձայներէ կը բաղկանան, և անոնց աւելի ներդաշնակութիւն տուողն ոչ այնքան

երկայն և սուղ վանկերն են, որչափ երկուքին ճարտար բաղադրութիւնն։

Ներդաշնակութեան մէջ երկրորդ նկատելի բանն՝ խօսքի մը բառից և անդամոց պատշաճ դասաւորութիւնն է։ Այս կէտս խիստ կարևոր է. վասն զի ենթադրելով, որ բառերն ամենայն կերպով քաղցրահնչիւն և ընտիր ըլլան, եթէ լաւ դասաւորուած չեն, խօսքն անախորժ կուգայ ականջի։ Ըսածնիս աւելի զգալի ընելու համար դնենք երկու այլ և այլ օրինակներ. մէկը Պիտոյից գրքէն, մէկալը Եղիշէէն. զորոնք իրարու հետ համեմատելով, ներդաշնակութեան ինչ ըլլալն աւելի որոշ կ'ըմբռնենք։

Պիտոյից. « Բայց բէր աղէ փորձեսցուք բանիւս և յարտաքինն նորա հայել մեծութիւն, զոյս շուրջ զնուրև 'ի բոլոր աղգացն հաւաքեալ նուրուն համբարէր աղդի. առաւելապէս նմն կամեցեալ երևեցուցանել փառացիս առ ընաւ աղգաջ, փոխանակ թշուառագոյն աղքատութեան։ Եւ յայտ 'ի խորանին կազմութենէն է, ոյք զանազան գեղեցկութեամբ յարուցեալ կանգնեցին նիւթովք պատրաստութեանն՝ յայնմանէ 'ի նորայն մթերից ստոյգ արդարև հրաշակերտ աստուածային կոչեցեալ խորանն»։

Եղիշէ. « Վասն գիւրութեանս՝ որ դու հրամայեցեր առնել մեզ, էր մեր իշխանութիւն անդրէն յաշխարհին մերում չանկանել մեզ 'ի ձեռս թագաւորիդ, որպէս և այլքն՝ զի ապրեցան յայսպիսի փորձանաց։ Այլ որպէս կամաքն և յօժարութեամբ եկաք, երբև թէ գիտէաք զվնասն՝ ոչ ինչ զանգիտեցաք յայսպիսի ճգնանց, սոյնպէս՝ կամիմք զի և այլ ևս ծանրացուսցես 'ի վերայ մեր, մինչև քո չարութիւն կամացդ յագեսցի 'ի մեզ»։ Մտադիր ընթերցողն ինքնիրեն կը տեսնէ այս երկու օրինակաց տարբերութիւնն՝ թէ ըստ քաղցրաձայն բառից, և թէ ըստ պարբերութեան անդամոց հանգստեցը։

Ցուցընելու համար թէ նիւթոյն համեմատ բառից

հնչմունքն յարմարցընելովինչպէս խօսքն գեղեցկութիւն ու շնորհք մը կ'առնու, Եղիշէէն օրինակ մը դնենք, յարուամ Յեփթայեայ արիւնահեղ զոհը կը նկարագրէ.

« Փութացաւ Յեփթայի, և եհան զսուրն վաղվաղակի, կափոյց զաչս մտացն յանտեսութիւնն, մինչև աղիքն գալարէին 'ի գութ խանդաղատանաց, թէպէտ սիրան 'ի բերանն էր, հարաւ սուրն 'ի փողս դստերն և կարեաց։ Առ 'ի գոչիւն հեղման արեանն, և 'ի հռնչիւն կոկորդին, և 'ի շարժումն բոլոր մարմնոյն, առ հասարակ ամենայն բաղմութիւն բոլոր մարդկանն միաբարբառ ճչեցին, երբ թէ երկինք և երկիր լային զմահ միամրն »։

Բայց ներդաշնակութեան մէջ զգուշանալու է չափազանց երկիւղածութենէ։ Իմաստին վայելչութեանն համար հարկ կ'ըլլայ երբեմն որ բառ մը խօսքին սկիզբը կամ վերջը դրուի։ Կան մասնեակներ որ աւելի կը նային բառերն իմաստին հպատակեցընել. ականջաց հաճոյ ըլլալ չեն փնտռեր, այլ բաւական կը սեպեն չխայթել զայն։

Բ. Յաղագս ընդ իրևարս յարակցուրեան խօսից.

Իմաստից կապակցութենէն եռաւ ընականօրէն խօսից կապակցութիւնն կուգայ. և որչափ իմաստից հիւսուածքն ամփոփ ըլլայ, խօսքերն ալ այնչափ աւելի իրարու հետ լաւ կը միանան։ Բայց այսչափս բաւական չէ. ինչ իմնամբ որ իմաստից միութեանն համար կը տանինք, նոյնը նաև խօսից կազմութեան ու շարակարգութեան համար տանելու է։ Գոնեակալեաք կ'ըսէ թէ խօսքերն իրարու հետ լաւ կապակցեալ ըլլալու համար, բոլորը մէկ ամբողջութիւն մը կազմելու են. երբեմն ալ զատ զատ ըլլալու են. բաւական է որ մէկն ընտրութիւն ընել գիտնայ։ Անպիտան կ'ըլլայ գրութիւնն՝ երբ ուր

որ խօսքը շատ մասն բաժնելու է, մէկ ամբողջութիւն մը կը կազմուի. կամ ուր որ մէկ ամբողջութիւն մը պէտք է կազմել, շատ մասն կը բաժնուի: ԵԹԷ երկու իմաստք զիրար պիտի բացայայտեն, պէտք է զանոնք միացընել. իսկ եԹէ զիրար պիտի չբացայայտեն, պէտք է զատել զանոնք:

Յաղագս շարակարգութեան խօսքից.

Իմաստին պահանջելուն համեմատ իրարմէ զատ խօսքերն պէտք է իրարու յաջորդեն, և մէկմէկու հետ կապուած ըլլան, ինչպէս Պօսիւէի այս հատուածին մէջ.

« Նախ առաջին Եգիպտացիք իմաստնացան 'ի գիտութիւն օրինաց վարչութեան: Վաղագոյն ծանեաւ ազգն այն հանճարեղ և զգաստ՝ ճշգրիտ նպատակ քաղաքավարութեան զանգորութիւն կենաց լինել և զերջանկութիւն: Եւ անփոփոխ օգք երկրին զմիտն անփոփոխս և հաստատունս գործէին: Եւ քանզի խարխսխ միաբանութեան մարդկան առաքինութիւն է, այնմ խնամով պատկառ կացին: Բայց 'ի վերջ քան զամենայն յերախտագիտութիւն առաքինացան, որով և քան զամենայն մարդիկ ցուցան ընտրելասէրք »: (Խօսք 'ի Վեպս ազգաց:)

Բաղդատենք այս գեղեցիկ կերպով միայար խօսքերն Բեղլսոնի հետևեալ հատուածին խուկած, կցկտուր, դանդաղ և շփոթ խօսքերուն հետ.

« Մարիտանացւոցն վերջք առաւել մահացուք էին. քանզի շատանային լուանալ զայնս 'ի ջուր ծովային, և առակաւոր իմն խօսիւք, և ըստ իւրեանցն հայրենի զրուցաց ասէին՝ Թէ որ էան զնոսին Աստուած, նոյն և փարատեսցէ զայնս 'ի նոցանէ. բայց զայս ոչ այնչափ

առ քամահանաց, որչափ առ անգիտութեան դեղոցն դարմանոց. քանզի յետոին չար ուրացող ոք համարեալ էր առ նոսա մի միայն իւրեանց վիրաբոյժ, առ որ այլանդակ իմն խեալց խորհրդովք, ըստ մէն միոյ նշանաւոր առն խոցելոյ, որ 'ի նորա ձեռն վախճանէր, տային թուով հարուածս դաւաղանի, 'ի պատուհասել զնա առաւել կամ նուազ՝ ըստ պայմանի առն Մարիտանացւոյ. յետոյ և նոյնչափ դրամս ուԹից դահեկանաց, 'ի մխիԹարել զնա և յորդորել զի լաւագոյնս յապայսն վարեսցի »:

Այս խօսքերս ինչպէս որ գրողին միտքն եկած են՝ անանկ իրարու քով դրուած, և խիստ խեղճ և անկարգ կերպովիրարու հետ կապուած են: Գոնտիլլէաք իր գրոց մէջ այս օրինակս յիշատակելով՝ կը զգուշացնէ անոր հետևելէն. և իրաւացի է իր ըսած այն խօսքն Թէ ոչ միայն ընտիր կազմուԹիւններէ՝ այլ և անպիտան կազմուԹիւններէ կրնայ մարդ բան սորվիլ. վասն զի գրուԹեան արուեստն՝ հետևելու օրէնքներն և խորշելու ԹերուԹիւններն միանգամայն կը պարունակէ:

Յաղագս պարբերութեան.

Երբ իմաստներն փոխանակ զատ զատ խօսքերով բացատրելու, միայն մէկ հատի վերածելով՝ ներդաշնակաւոր ամբողջութիւն մը կը ձևացընենք, անիկայ կ'ըսուի պարբերութիւն: Ըստ սահմանին Արիստոտելի՝ պարբերութիւնն սկիզբն և վախճան և սահմանաւոր մեծութիւն ունեցող խօսք մըն է:

Պարբերութիւնն երկու մասերէ կը բաղկանայ, որ են անդամ և հատած:

Անդամը նախադասութիւն մըն է որ իր մէջը իմաստ մը կը պարունակէ. բայց անկատար է և պարբերութեան մէկալ մասերէն կախու�ունի:

Հատածն՝ անդամին մէկ մասն է. և ինքն ալ իր մէջն իմաստ մը կը պարունակէ. և կրնայ անդամ մը ձեւացընել, եթէ առանձինն ըլլալու ըլլայ. բայց թէ որ մէկ ամբողջութիւն մը կազմող մասանց հետ մէկտեղ է, ա-նոնց հետ կը միանայ՝ մէկ անդամ մը կազմելու համար։

Պարբերութեան օրինակ մը դնենք Եղիշէէն.

«Գիտէք դուք ամենեքեան (հոպոյ), յառաջ ժամանակաւ հասեալ ձեր 'ի գործ պատերազմի, թէպէտ և էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապազորդել 'ի մէջ բանակիս (դոբյեալ հոպոյ), 'ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ 'ի նոցանէ աղօթիւք՝ յամուր տեղւոջ ուրեք թողուիք զնոսա (անդամ). իսկ այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք, սաղմոսերգողք և գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ, իբր վառեալք զինու և պատրաստեալք 'ի պատերազմ (հոպոյ), կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամին Ճշմարտութեան» (Երէրոդ անդամ և պարբերութիւն)։

Դնենք նաև Յ. Մ. Ռուսոյի այս տունը.

«Թէ էք սիրողք Տեառն օրինաց,
Թէ երկընչիք 'ի սուրբենէ,
Արդարութիւն եթէ տիրէ
Սըրտից ձերոց զոյդ ընդ շրթանց,
Օ՜ն ասացէք որդիք մարդկան,
Հիմանուրէր քէն ոխութեանց

Դիրդէ ըղձեալ առնել զինէն դատաստան»։

Անհաւասիկ երկանդամ պարբերութիւն մը. Թէ էք սիրողք Տեառն օրինաց, և այլն։— Օ՜ն ասացէք որդիք մարդկան, և այլն։ Առաջին անդամն երեք հատածէ կը բաղկանայ. Թէ էք սիրողք տեառն օրինաց, — Թէ երկընչիք 'ի սուրբենէ, — Արդարութիւն եթէ տիրէ, և այլն»։

Դնենք դարձեալ իբր օրինակ երկանդամ պարբերութեան՝ Վրնէյի այս վայելչաշար խօսքը.

«Մինչդեռ սիրոյն զարուեստս ճարտարութեանց

խիստ ինն թուի տեսանել զի Աղէքսանդրիա զսիւնս պալատանց սղոցեալ, չինեն նոքօք երկանաքարս և աղօրիս, — իմաստասէրն՝ յետ առաջնոյ կրկնոյ ուղղմանն ընդ կորուստ որոց և է ջնաղակերպ իրաց, չկարէ արդէլուլ զժպիտ իւր ընդ դաղտնի դատաստան արդարութեան բախտին, որ զամենայն ինչ՝ յոր ժողովուրդն բազմադէմ տաժանմամբք երբեմն վաստակեցաւ՝ անդրէն միւսանգամ դարձուցանէ առնա, և 'ի նուաստագոյն պիտոյիցն գործածութիւն զանօգուտ շռայլութեան պերճանան մատուցանէ»։ (Վոլնէյ, Ռուէնորոնիոն, Եգիպոս)։

Կան պարբերութիւնք որ եռանդամ են. զոր օրինակ Ալղիրա ողբերգութեան մէջ Զամորի այս խօսքս.

Առաջին անդամ.

Յետ փառաց յաղթութեան չիք ինչ բընաւ ընդ երկնաւս
Քան ըզմահ փառաւոր՝ մեծապատիւ իրաւամբք.

Երկրորդ անդամ.

Սակայն՝ 'ի նախատինս և յանարգանս մեռանել,
Եւ թողուլ 'ի մեռանելն ըզհայրենիս իւր յերկաթս,
Առանց վրիժուց դընալ, և կորընչել 'ի ձեռաց
Սրիկայիցն Եւրոպայ, և սպանողացս այսոցիկ,
Որ արեամբ արբեցեալք 'ի գանձս մեր չարակնոջք,
Աչխարհիս վրտարելոյ նենգախոշոշ աւերիչք,
Լքինեցան զիս մատնել նախատակոծ տանջանաց՝
Ի խըլել ինչքս յինէն և քան զնոսին արհամարհս,
Ընկենուլ 'ի գերեզման քաղաքացիս սիրելիս,
Ըզհատոր հոգւոյն թողուլ բըռնաւորացս այսոցիկ,
Լքանել զԱլզիրա՝ իւրեանց անարգ մղութեան,

Երրորդ անդամ.

Ա՛յս մահ է սոսկալի, և քըստմընեալ տայ յահէն»։

Կան նաև քառանդամ պարբերութիւնք. զոր օրինակ Գոթողնայի մէջ քահանայապետին առ Աստուած խօսքն մանկահասակ Յովասայ ապագային վրայ.

Առաջին անդամ.

« Մե՛ծդ Աստուած, թէ տեսանես՝ զի իւրում տանն անարժան՝
Իշ աւղացըն Դաւթի խոտորելոց է ստերիւր,

Երկրորդ անդամ.

Եղեցի որպէս պըտուղ՝ի բողբոջին կոճոպեալ,
Կամ հողմով խոլշակի խամրեալ անդէն՝ի ծաղկին.

Երրորդ անդամ.

Իսկ թէ սոյն այս համբակ՝ պատուիրանաց քոց հըլու,
Գործի է լենելոց քում խորհըրդոցըդ պիտոյ.

Չորրորդ անդամ.

Ա՛խ՝ զի դաւաղանն հասցէ յարդար պայազատն։
Ի ալկաը ձեռս իմ մատանեա զՀըզօրացեալ ոսոխս իւր,
Զանօրէն դըշխոյն յամենի արա՝ի հնարս հանճարոյն։
Հաճեաց, Տէր իմ, հաճեաց, և՝ի Մաթեան և՝ի նա
Հեղուլ ըզհոգի անմըտութեան և զմոլար՝
Զաբքայիցըն կործանման ըզբօթաբեր սուրհանդակ»։

Հենրիկոս Նավարացին իր կուսակցութեան գլխաւոր իշխանաց հետ խորհրդակցելով, գիտնալու համար թէ

արդեօք պէտք է դաշնաւորաց դէմ նորէն զէնք առնուլ, քառանդամ պարբերութեամբ մը իր հրապարակական խօսակցութիւնն կը սկսի.

Առաջին անդամ.

« Թէ այնպէս իմն համարեալ կարծէի, ո՛վ բարեկամք, թէ յառաջիկայս հասեալ իրք՝ իմոյ գլխոյս և էթ ի ցեն ինասաբերք, և թէ կորստեամբ ընչիցս, բայց ոչ և պատուոյս, և զրկելով՝ի շահուցս և յորոց սիրեմն՝ի վերբ քան զամենայն՝ ունիցիք ժառանգել զանդորը և զաներկեանն վաստահութիւն,

Երկրորդ անդամ.

Բնաւ և ոչ մի ինչ իրաց տեղեակս կացուցանէի զձեզ. այլ խորհրդով և օժանդակութեամբ իմոց սեփհական ծառայից, եդեալ զգլուխս՝ի կշիռս, խափանէի արդեօք զընթացս թշնամեաց.

Երրորդ անդամ.

Այլ քանզի յաղագս պահպանութեան կամ կորըստեան համարէն եկեղեցեացն բարեկարգելոց են իրընդելք, որով և յաղագս փառացն Աստուծոյ.

Չորրորդ անդամ.

Խորհեցայ սահմանել ընդ ձեզ զիրացդ՝ որ՝ի շահ ձեր հային »։

Պարբերութեան դժուարութիւններէն մէկը՝ անոր զանազան մասունքն իրարու հետ միացընող շաղկապից և ածականաց գործածութիւնն է։ Ռասին և Մասիլեոն բաղմաթիւ պարբերութիւններ ունին, որոց մէջ էր-

կրորդական մասանց յաձախութիւնն փոխանակ խօսքը մթնցընելու, ընդհակառակն անոր աւելի կենդանութիւն և ոյժ մը տուած են։ Ահաւասիկ օրինակ մը Մեհրդատ ողբերգութենէն.

« Վա՛հ, թէպէտ և ձանապարհ ընդշմարէի հարթ և հորդ՝
Յասպարէզ ինքանելոյ նոր երկրակալ մըրցանաց,
Թէ և բաղդն ոխերիմ ընկենոյր զիս յեւ՛ի վայր,
Պարտեալ, հալածեալ, անապատէն, անիշխան,
Մոլորեալ ծովէ՛ի ծով, հէն մնաւանդ՝ քան արքայ,
ԶՄեհրդատն անուն պահեալ փոխան բոլոր ձոխութեանց,
Ուսիր քաջ, զի զիտառաւոր անունդս զայս զհետ ձգեալ,
Անդէն զսիեղերաց աչս ողջոյն յիս միապիշ։
Եւ չէ՞ք ոք թագաւոր, թէ արժանի են լինել,
Որ նըստեալ՛ի գահոյս՝ ընախանձիցին, ո՛ գիտէ
Ընդ շքեղ քան զիտուս իւրեանց նաւրեկութիւն բարձրագոյն,
Զոր Հըռոմ և քառասուն ամք հաղիւ հազ հանին յանդ »։

Երբ բանաստեղծ մը կարող կ'ըլլայ այսպէս խօսքին մէջէ մէջ դարձուածքներուն և միանգամայն տաղաչափութեան դժուարութեանցն յաղթել, ևս առաւել ձարտասանն անանկ պէտք է ընէ որ իր ամենէն երկայն պարբերութիւնքն՝ ամենապարզ նախադասութեանց պէս յստակ ու բացայայտ ըլլան։

Գ. Յաղագս ձևոց բառից.

Բաց՝ի այն ընդհանուր յատկութիւններէն՝ զոր թէ իւրաքանչիւր խօսք առանձինն, և թէ իրարու հետ կապուած խօսքերն պէտք է ունենան, բառից ոյժն աւելցընելու համար ընելու երկու բան կայ. մէյմը՝ բառից բնական նշանակութիւնն պահելով հանդերձ՝ այնպիսի կերպով մը զանոնք գործածել և դասաւորել, որ խօսքն աւելի ախորժելի ու զօրաւոր ըլլայ. երկրորդ՝ բառից նշանակութիւնն փոխել և անոնցմով փոխակերպութիւններ կազմել։ Հետևաբար բառից երկու տեսակ ձևք կ'ըլլան. ձևք պարզ բառից, և ձևք՝ փոխակերպութիւն ըսուած բառից։

Ա. Յաղագս ձևոց պարզ բառից.

Յաղագս զեղչման.

Երբեմն կը վերցուին մէկ կամ շատ մը բառեր՝ զոր ունք քերականական կազմութիւնն կը պահանջէ որ դրուին. այս ձևս կ'ըսուի զեղչումն։ Զեղչումը այն ատեն կանոնաւոր է, երբ խօսքին աւելի ոյժ մը կուտայ, առանց խրթնութիւն պատճառելու, և վերցուած բառերն անանկ բնական կերպով մոքերնուս մէջ կը ծնանին, որ կարծես թէ զանոնք իրօք կը կարդանք կամ կը լսենք։

Լամբրոնացին ասանկ զեղչում մը կ'ընէ. « Բարկութիւն ամենահօրն զինքս՝ի հաշտութիւն, զի՝ի մէնք խաղաղութեան պատարագն»։ Ուր զեղչուած է հոգոյս բառը։

Դարձեալ. « Յետ տեսանելոյ զնա յարուցեալ, և շշափելոյ ձեռամբ Թովմայի, զի՞նչ »։ Այսինքն՝ տակաւին յետ այնորիկ զի՞նչ առնէին առաքեալքն։

Ասանկ է նաև Բասքալի այս խօսքը. « Սահմանաւորն չքանայ առաջի անսահմանին. այսպէս միտք մեր չքանան առաջի Աստուծոյ, այսպէս և արդարութիւն մեր՝ առաջի աստուածեղէն արդարութեանն »։ Ուր զօրութեամբ կը հասկցուի. Արդարութիւն մեր չանայ։

Պոսիւէ՝ Կարոլոս առաջնոյն վրայ խօսելով՝ կ'ըսէ. « Ոչք միանգամ տեսին որով դիմաք եցոյց նա զանձն 'ի սրահ Վէսմինդրի և 'ի հրապարակն Վիդեալոյ, դիւրին է նոցա իմանալ մտաք՝ քանի աներկիւղ էր նա 'ի դէմս բանակաց, և քանի վեմ և մեծաշուք՝ յասպարանն և յարքունիս »։

Զեղչման ձև մը կայ այս հռչակաւոր խօսքիս մէջ. « Զ Դարեհի պարգևան ընդունէի, թէ Աղեքսանդր լինէի։ — Եւ ես իսկ, թէ Պարմենիոն էի »։ Զօրութեամբ կը հասկցուի. Ընդունէի զայն։

Շատ անգամ յիշատակուած է Անդրոմաքայ այս տողը՝ իբրև օրինակ զեղչման.

« Յողդողդ էիր՝ և սիրեցի. թէ աննենդ, զի՞նչ չառնէի »։

« Քերական մը, կ'ըսէ Գոնտիլէաք, դիտողութիւն կ'ընէ թէ այս զեղչումը խիստ սաստիկ է. բայց և այնպէս կը խոստովանի թէ Ռասինի հասակին բանաստեղծի մը կրնայ ներուիլ ատիկայ. սակայն խորհուրդ չտար երիտասարդի մը առանկ յանդուգն զուրցուածքներ գործածել. իբրև թէ աղէկ գրել կարենալու համար հարկ ըլլար ծերացած ըլլալ »։ Բայց թէ քերականն և թէ Գոնտիլէաք կը մոռնան որ Ռասին քսանևութ տարեկան էր երբ Անդրոմաքը շարադրեց։

Յաղագս ուղղադրութեան.

Երբեմն ալ փոխանակ խօսքին կազմութեանն կարևոր եղող բառերն վերցընելու, ուրիշ բառեր կ'աւելցուին, որոնք ըստ ինքեան կրնային չգրուիլ. ինչպէս. « Դու, որ զամենայն ինչ չարիսդ խորամանգեցեր... դու ոչ ապրեսցիս »։ Դարձեալ. « Ես իրաց և գործոց առնն իմանալ ինչ ես ոչ կարեմ »։

Կամիլլա իր անիծաբանութեան մէջ Հռոմը յիշատակելով՝ կ'ըսէ.

« Ո՛ տայր ինձ՝ խմէ՛ս այդ դիպել զանկումն շանթին »։

Պոսիւէ ալ տեղ մը կ'ըսէ. « Ենջեցէք զքուն ձեր, մեծամեծք երկրի »։

Այս ձևս, որ ինչպէս կը տեսնենք՝ խօսքին ոյժ մը կուտայ, առանց բուն իմաստին վրայ բան մը աւելցընելու, կ'ըսուի աւելադրութիւն։ Սովորաբար կրնայ մէջ կը գործածուի. վասն զի մարդս կիրք եղած ժամանակ բնական կերպով բառերը կը բազմապատկէ։ Բայց այս ձևս ամենայն զգուշութեամբ պէտք է գործածել, վասն զի ծայրը շատխօսութեան կ'երթայ, ինչպէս որ զեղչումն ալ կրնայ մթութիւն պատճառել։

Յաղագս արտուղղութեան.

Արտուղութիւն է՝ պարզ շարադրութեան բնական կարգէն դուրս ելլել. ինչպէս. « Այնու ևս այսպէս լինէր եթէ 'ի ծառայութեան և 'ի հնազանդութեան կայ ամենայ առաքելոյն սատանայ »։ — « Գոնէ յօժարութիւն յորժամ այսր ժողովեցիմք՝ ցուցանիցեմք »։ Այս ձևս,

որ խօսքին աւելի աշխուժութիւն ու կենդանութիւն մը կուտայ, բանաստեղծից համար խիստ սովորական ձև մըն է: Կամիլլա կ'ըսէ իր եղբօրը.

« Հռովմ՝ ում ֆռ ղէնին յէռֆ զանձին իմոյ զսիրելին »:

Փոխանակ ըսելու, Ռ-մ յէռֆ ֆռ ղէնին. որ աւելի տկար կ'երևայ: Մալերպ՝ Թագաւորաց մեռնելուն վրայ խօսելով կ'ըսէ.

« Եւ անկանին ընդ նոսա զանկումն հանուրց'ի բաժին
Ամենեքեան զորս հարկ բախտին
Արար նոցին երկրորպագուս »:

Արձակախօս մատենագրաց մէջ ալ այս ձևոյս օրինակներ կը գտնուին: Շագոպրիան, որ շատ անգամ իր արձակին բանաստեղծական կերպ մը տուած է, իր Նաչէց ըսուած գրուածոյն մէջ կ'ըսէ. « Ոչ այնչափ երագընթաց է ծիծառն՝ զերեսօք ջուրցն քերեալ, և ոչ այնչափ թեթև՝ փոշի եղեգան'ի բաց տարեալ'ի մըրրկէ »:

Մոնդենեը այլ և այլ անգամ արտուղութիւն բանեցուցած է իր խօսքն աւելի ազդոյ ընելու, և գլխաւոր բառին վրայ մտադրութիւն ընել տալու համար, ինչպէս Կիկերոնի վրայ ըրած այս խորհրդածութեանը մէջ. « Իր նա լաւ քաղաքացի. բայց մեղկութիւն և ամբարհաւաճ մտափառութիւն յիրաւի էր'ի նմա կարի իմն շատ »:

Արտուղութիւնն որչափ աւելի արագութիւն և աղդութիւն կուտայ Պոսիւէի մեծին Գոնտէի համար ըսած այս խօսքին. « Այսպէս սրակնեայ էին աչքն, այսպէս աշխոյժ և բուռն յարձակումն, այսպէս հզօր և անզերծանելի ձեռք իշխանին Գոնտէի »:

Դարձեալ Պոսիւէի այս կտորը մեծ ոյժ մը առած է արտուղութեամբ. « Ո՛վ գիշեր աղետաբեր, ո՛վ գիշեր ահաւոր, յորում հնչեաց յանկարծահաս իբրև զշունդն Ճայթելոյ որոտման այս բօթ սոսկալի. Տիկինն ահա մեռանի, տիկինն մեռաւ »:

Յաղագս կրկնութեան.

Իմաստ մը բացատրելու համար սահմանուած բառերն կրկնելով, անոր աւելի ոյժ մը կը տրուի: Այս ձևս Սարգիս այսպէս կը կազմէ.

« Մեք եմք որ փախեաք յաշխարհակիր ցանկութեանց գիտութեամբքն Քրիստոսի, և յերկնաւոր բարեացն Ճաշակեցաք, և որդեգրութեամբ հօրն երկնաւորի պատուեցաք: Մեք եմք որ խրախանամք աստուածային գրոց վարդապետութեամբ, և ուղղափառութեամբն զուարճանամք: Մեք եմք որ խորհրդոցն Աստուծոյ խորհրդազգածք եմք և վկայք: Մերկացաք ըզփառս աշխարհիս. մերկացաք զհեթանոսակիր ցանկութիւնս. մերկացաք զդաղանիս ամբոյն: Մի դարձեալ վերստին զգեցցուք պատրանօք աշխարհականօք. մի դարձեալ շաղախեսցուք'ի սմա, զի մի լինիցի վերջինն մեր չար քան զառաջինն: Վասն նորին վաստակիմք, վասն նորին հրաժարեցաք'ի գաղտնեաց ամբոյն, և վասն նորին զվայելչականս կենցաղոյս աղբ անպիտան վարկանիմք: Վասն նորին ճգունք աղդի աղդի, արտասուաց և ողբոց »:

Ուրիշ օրինակ դարձեալ'ի Սարգսէ. « Լուր նմին Աստուծոյ, զի՞նչ ասէր առ մեղուցեալ և թաքուցեալ մարդն. Ադամ, ո՞ւր ես: Մի թէ ո՞չ գիտէր թէ ո՞ւր էր, մի թէ ո՞չ տեսանէր ամենատես ակն, մի թէ տգիտանայր արարիչն. քա՛ւ լիցի: Ադամ, ո՞ւր ես: Տրամաբանեան էր ձայնն, տարակուսանաց բարբառն: Որպէս հովիւ զի կորուսանիցէ ոչխար'ի հօտէն, և արտամաբանեամբ ձայնիւ ընուցու զանտառն, նոյնգունակ և արարիչն զդրախան: Ադամ, ո՞ւր ես. ընդէր թաքչիս յերեսաց արարչիս, հիմ ամբոյվ լցեալ ես և երկիւղիւ: Ոչ

վան այդորիկ ստեղծի զքեզ, զի փախստական լինիցես յինէն, ոչ վան այդորիկ փառաք զարդարեցի զքեզ, զի ամաչէիր յինէն. այլ զի 'ի գերկս քո և 'ի հոգի ընդունէիր զիս: Ադամ, ո՞ւր ես. յորպիսի՞ անարգանս, յորպիսի՞ զաղբալի տեսակս, յորպիսի՞ ամօթ երեսաց, յորպիսի՞ խեղճ մտաց, յորպիսի՞ ալիս տարակուսանաց: Լուայ, ասէ, զձայն գնալոյ քո 'ի դրախտի աստ, և երկեայ. քանզի մերկ էի, և թաքեայ: Վասն էր երկեար, ո՛վ Ադամ. մի թէ ահաւորը ձևով երևեցայ քեզ. մի թէ պակուցանող և ահարկու ձայնիւ վարեցայ առ քեզ: մի թէ սաստեցի կամ յանդիմանեցի. մի թէ ոչ որպէս յերեկին և յեռանդն երևեցայ քեզ իմ ընտանի փառաքն, իմ քաղցրահայեաց աչաք, իմ խոնարհ և հեզ գնացիւք: Այո, ասէ. բայց ես մերկ էի և թաքեայ: Արդարև ստուգապէս մերկ. ոչ 'ի հանդերձից միայն, այլ և յարդարութենէ և 'ի սրբութենէ և 'ի բարեգործութենէ, և յամենայն առաքինասէր վարուց»:

Յելից. «Հողմով սրմտութեամբ քով պատառեցան ջուրք. պաղեցան որպէս պարիսպ ջուրք, պաղեցան ալիք 'ի մէջ ծովուն. մինչև անցցէ Ժողովուրդ քո, Տէր, մինչև անցցէ Ժողովուրդ քո այս, զոր ստացար»:

Ի Դատաւորաց. «Լերինք շարժեցան յերեսաց տեառն Ելովայ Սինայի, յերեսաց տեառն Աստուծոյ Իսրայելի: Յաւուրցն Սամեգարայ որդւոյ Անաթայ յաւուրս Յայելի՝ պակասեցին թագաւորք և գնացին ընդ շաւիղս, գնացին ընդ ճանապարհս կամակորս: Պակասեցին վարազունք բնակեալք 'ի մէջ Իսրայելի, պակասեցին մինչև յարեաւ Դեբովրա, մինչև յարեաւ մայր Իսրայելի:... Զուր խնդրեաց, և եհան կաթն. դաշխուրանաւ զորաւորաց մատոյց կոգի: Զձեռն իւր ձախ ձգեաց 'ի ցեղն, և զաջ իւր 'ի սպառսպուռ ջախջախանս՝ անպիտանացուցանել, և վախճանեցոյց զՍիսարա. վարսեաց ընդ ծամելս նորա, և անցոյց ցեղ ընդ գլուխս նորա, և սատակեաց: Ի մէջ ոտից նորա անկաւ ծանրացեալ, և

ներհեցոյց 'ի մէջ ծնդաց իւրոց, յորում կորացաւ՝ մինչև զգետնեցաւ, անդ անկաւ չուառականն»:

Լուսինեան այսպէս կ'ասէ առ Զայիրա.

«Դուստր իմ, անուշակ պըտուղ վըշտացս իմ յեռանոց,
Տէս աղէ, տես գէթ զարիւնն որ յերակունսըդ խաղայ.
Աչքայից բաղմաց արիւն՝ քրիստոնէից իբրև զիս,
Դիւցազանց է այն արիւն՝ ախոյանաց հաւատոյս,
Վրկայից արիւն է այն»....

Շաղկապներու կրկնութիւնն իմաստին մեծութիւն մը կուտայ, ինչպէս Ասսինի այս տողին մէջ.

«Կայ 'ի քուն ճամբար զորուն և Պոսիդոն և հողմունք».

և Պուալոյի այս տողերուն մէջ.

«Տապալէ ինքն միայն և ըզԳիբեոն և ըզԿրասէ,
Եւ զԿորիոն ըստուարաձայն և ըզԿրանտէնն նըրբաձայն,
Եւ զԺերվէ ախորժելն, և ըզԿերէն ցուրտ և անհամ».

և կամ Լապրիյէրի այս խօսքին մէջ. «Այր անմիտ՝ ոչ ելանէ և ոչ մտանէ, ոչ բաղմի և ոչ յառնէ, ոչ լռէ և ոչ 'ի վերայ սրուն՝ կայ իբրև զայր մտացի»:

Իգնատիոս ասանկ կրկնութեան ձև մը կը գործածէ.

«Որ տիրեացն՝ մեծաւ բանութեամբ կապեաց. և կուրութիւնն զդուռն փակեաց, և անդիտութիւնն զճանապարհն կորոյս, և հիւանդութիւնն զմտաստութիւնն ելոյծ, և թմրութիւնն զխորխորատն ծածկեաց, և կամքն զտեսութիւնն կապեաց»:

Ուրիշ օրինակ 'ի Յովհ. Կաթողիկոսէ «Ամենայն պատերազմող մարտիկ զոչք անցեալք 'ի հանգիստ, զմի սիրտ առ հասարակ յինքեանս բերէին, և զմի զնուորութիւն զնուորէին, և զմի զրահ ճշմարտութեան ագանէին, և միագաւեալ քաջագործ պնդէին զմէջս. և զմահ իւրեանց իբրև զանշուշտ կեանս 'ի վրէժխնդրութիւն թագաւորին համարէին»:

Ի Նարեկացւոյն. « Եղեալ երկիր անձնական՝ բանական բուսոյն, և զգայական անդաստան կենացն հացի, և վառարան բորբոքման անշէջ կայծական, և վայր դալարաբեր՝ հայրական ծոցածէն ծաղկին, և ծառ երկնուղէշ անթարշամ խնձորին. և գործարան գոյութեան ըուսատու մարգարտին, և լեառն արձանունակ՝ երկրաքիր վիմին »:

Ի Լամբրոնացւոյն. « Միայն քնդ մաքսաւորսն ճաշակեցի, և 'ի ճանապարհս վաստակեալ քրտնեցի, և 'ի սուգ սիրելեացն լացի. և զմարմինս բնական կրիւքն արդար պահեցի: Միայն 'ի խաչն չարչարանս դիմեցի, և յերկիւղէ մահուն սարսեցի, և կամաւ զնոյն կրեցի. և զիշխան աշխարհի երաւամբք դատապարտեալ արտաքս ձգեցի »:

Կրկնութիւն կ'ըլլայ նաև երբարու մօտ գնելով երկու բառ, որոնց արմատը նոյն՝ բայց վերջաւորութիւնն իրարմէ տարբեր է. ինչպէս Լամբրոնացւոյն այս խօսքին մէջ. « Անդանօր Ժողովեալ օրհնեցան յամենօրհնեալ աջոյն պանծանօք »:

Մոլեբերի այս տողին մէջ.

« Անձանձրոյթ ընթերցողք տաղից իւրեանց ձանձրալեաց ».

և Ռասինի այս տողին մէջ.

« Ջանիրաւ իւր ճոխութիւն իրաւապէս ժառանգէ». Նաև Պուալոյի այս տողերուն մէջ.

« Ծաղր առնել զայր զուարթաբան՝ որ չըգիտէն զըւարթ առնել...

Հարկ է քեզ արտասուել, զի ինձ զարտօսր հեղուլ տացես »:

Երբեմն ալ ընդ հակառակն վերջաւորութեան նմանութիւն կամ՝ նոյնայանգութիւն կ'ըլլայ, խօսքին աւելի ձև մը տալու, և զայն աւելի հաստատուն կերպով մտաց մէջ տպաւորելու համար, ինչպէս. « Անգիտացեալ տգիտաբար զառ 'ի յապայն որ գալոց էր ձաղանս և ձաղկանս »: Եւ Սարգսի այս խօսքին մէջ. « Զիք ինչ ոչ ընութեամբ և ոչ ժամանակաւ. եթէ բարիք եցեն, չեն բարիք. և եթէ կարիք՝ ոչինչ այնպէս անհնարինք »: Բայց այս տեսակ զարդերն շատ զգուշութեամբ պէտք է գործածել. վասն զի ծայրը բառից խաղերու և աւելաբանութեան կ'երթայ, որոնց համար խոալացի հեղինակներէն ոմանք պարսաւելի եղած են:

Յաղագս շրջաբանութեան.

Իմաստ մը փոխանակ պարզ ու ընտանի ոճով զուրցելու, այլ և այլ դարձուածքներով կը բացատրուի, որ կ'ըսուի շրջաբանութիւն: Ինչպէս Իմաստութեան գրոց մէջ կէս գիշերն ասանկ գեղեցիկ շրջաբանութեամբ մը բացատրուած է. «Մինչդեռ խաղաղութեանն պատեալ էր զամենայն, և այն ինչ գիշերն իւրով արագութեամբ ընդմիջէր »:

Յովհան Կաթողիկոս փոխանակ էրբ՝ գարուն եղ՝ ըսելու, ասանկ այլ և այլ շրջաբանութիւններ կ'ընէ.

« Իբրև 'ի բաց եդաւ ձմեռնային ձիւնախառաղ սառնամանեաց ցրտութիւն, և գարնանային հարաւահողմն շնչեաց: — Իբրև գարնանային հարաւահողմն զձմերայնոյն ժամանակ ցրտութեանն 'ի բաց մերկանայր: — Իբրև գրուանք գարնայնոյն բացան, և աւուրքն ջերմաք զտեղն փոխարերեցին: — Իբրև ձմեռնային սգաւորութիւնն 'ի գարնանային բարեխառնութիւն օդոց յեղանակէր զփոփոխումն »:

Դարձեալ փոխանակ ըսելու էրբ՝ այգ լինէր, ասանկ կը բացատրէ.

« Եւ իբրև լոյսն զգիշերն մերկանայր. — Իբրև խաւար գիշերին 'ի բաց եղեալ, և լոյս առաւօտին ծագեցաւ »:

Եւ Մակաբայեցւոց մէջ. « Այն ինչ կամէր առաւօտն 'ի գիշերոյն մերկանալ: — Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր »:

Ագաթանգեղոս այս խօսքս, « Մինչև էր մեռեալ », ասանկ կը դարձընէ.

« Մինչդեռ ջերմ ոգիքն 'ի ծոցոյն չև էին թափեալ, և շունչ վախճանին չև էր հասեալ »:

Մակաբայեցւոց մէջ. « Մինչ դեռ յոգւոցն ոլորղէլ ապաստան կայր »:

Լամբրոնացին Խօսէ բայը այլ և այլ ձարտար դարձուածքներով կը բացատրէ.

« Պետրոս, որ 'ի Կափառնաումն նեալ, լսեմք զի ընդ Հռովմայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ. և Փիլիպպոս, որ 'ի Բեթսայիդա գալիլեացւոց՝ արաբացւոց բարբառովն զնոսս իւր յօդէ. Յովհաննէս, որ 'ի Նազարէթ նեալ, զնարդ Կիլիկեցւոց ձայնիւն զմեզ հարցանէ. Թադէոսն այն տխմար տեսէք ո՞րքան վայելուչ մեծաց Հայոց բառիւքն զբանս իւր յօդէ »:

Պոսիւէ կ'ուզէ հասկրցնել թէ Անգլիոյ նորաձև եկեղեցեաց մէջ ամենևին խոստովանարանք չկայն. « Զարմացեալ կայն որդիքն Աստուծոյ, զի ոչ և սա տեսանէին ոչ սեղան, ոչ նըվիրան, ոչ դատարանս ողորմութեան՝ արդարացուցիչս խոստովանողաց »:

Պուալոյ իր տաներորդ թղթոյն մէջ կ'ըսէ.

« Բայց քանզի եկեալ հասեալ այսօր ուրեմն ծերութիւն,

Ընդ խարտեաշ և սեթևեթ ծամիւքս համակ ծածկեալ ալեօք՝

Ծանրաշարժ մատամբք իւրովք էարկ գըլխոյս իմ 'ի վերայ

Մեռասան հընդեակս ողջոյն, երեակ ամաց յաւելուածով. . . »:

Այս յարգարուն և վայելչահիւս առղերն կ'իմացընեն որ ինքը կեղծ մազ դրած է, և յիսուն և ութ տարին անցած է:

Տըլիլ հետագայ տողերուն մէջ ձարտար շրջաբանութիւն մը կը գործածէ: Կ'ուզէ խահուէն փխրելու, ա-

ղալու, եփ հանելու, գիրան իջեցնելու, գաւաթին մէջ լեցնելու և շաքար գնելու ամենէն հասարակ գործողութիւններն բացատրել. և այս տնական աշխատութեանց մանրամասն հանգամանքներն հանձարեղ շրջաբանութեամբք կը նկարագրէ: Խօսքը կ'ուղղէ առ խահուէն, զոր կը նկատէ իբրև ներշնչող աղբիւր արդի բանաստեղծութեան.

« Ինձ յոյժ քաղցր է հանդերձել ըզքեզ, ազնիւ ըմպելի.

Յառաջնին անոյշ հոգոյդ ոչ ոք քեցէ զիս 'ի բաց:

Ըզհրաբաց կրակեռեղբն անձամբ ըզհատսըդ շրջէալ,

Զերանդգ ոսկեռեսիլ փոխեմ 'ի գոյն սեւագորշ.

Ես ինքնին ըզքեզ յանիւ երկաթակուռ ատամանց

Երբ լեսում, դառնահամ պըտուղգդ հանեն ճարճատիւն:

Ի բուրմանցդ ըզմայլեալ, և ես ինքնին արկեալ ջուր,

Ըզփոշիդ բարեբեր 'ի կրակարանն իմ եփեմ.

Եւ փոփոխ ըզպըզպըջակսըդ զինքուցեալ և յուզեալ,

Ըզթեթև քո յորձանս աչքք դիտեմ մըտագիր:

Մըրուր ծորանացդ ապա մեղմով հանդարտեալ

Ծըխաշունչ անօթոյն ինքնէ գայ 'ի յատակ.

Բաժակն իմ և քոյդ նեկտար ամերիկեան մեղերն հոյզ,

Զորյեղեգանցն հիւթոց քամեաց ափրիկեցւոց ժողովուրդ.

Պատրաստեալ համբրէն, դընիս յանօթն Յափոնաց,

Եւ դու սոսկ խառնես 'ի մի ըզտուրս երկուց աշխարհաց »:

Շրջաբանութիւնն երբեմն հասարակ նիւթ մը ստորագրելէն աւելի կարևոր բանի կը գործածուի. ճարտասանն կամ մատենագիրն կ'իմացընէ անով իր կարծիքն այնպիսի բանի մը վրայ՝ որուն անունը չուզեր տալ, բայց այլ և այլ կերպերով անոր վրայ դատատան կ'ընէ: Ասանկ է Պոսիւէի այս խօսքը հոգեփոխու-

թեան վրայ. «Զինչ ասացից զնոցանէ որք հոգւոցն տե-
ղափոխութեան հաւատս ընծայէին, յածեցուցեալ
զնոսա յերկնից 'ի յերկիր, և ապա յերկրէ 'ի յերկինս,
յանասնոց 'ի մարդիկ և 'ի մարդկանէ յանասունս, յե-
բանութենէ 'ի թշուառութիւն և 'ի թշուառութենէ
յերանութիւն, առանց ամենևին փոփոխմանցդ այդո-
ցիկ ունելոյ զվախճան և զկարգ ինչ սոցդ»։

Պարզ բացատրութիւնն գրեթէ միշտ ընտրելագոյն
է քան զչրջաբանութիւն։ Իրաւամբ պարսաւուած են
Մայնարտի այս տողերն որ աղջիկը կորսնցնող հօր
մը վրայ գրած է.

«Ճեպեա զնմ մահ, ում անողորմ կաս խափան.
Ատեամ զաշխարհ, յորմէ այլ ոչ ինչ հայցեմ։
Դրստերս էր անկ՝ առնել 'ի յիմ գերեզման
Զոր ինչ ես արդ ըղտասանաւ իւր առնեմ»։

Ասով ըսել կ'ուզէ թէ ինքն իր աղջկան գերեզմանին
վրայ կուլայ, մինչդեռ աղջիկը պէտք էր իր գերեզմա-
նին վրայ լալ։ Ողբմելին աւելի լաւ կ'ընէր եթէ պար-
զապէս զուրցէր զայն, վասն զի, ինչպէս շատ լաւ կ'ըսէ
հեղինակ մը, չրջաբանութիւնն՝ զգացման խմաստն օտա-
բացընելու և անոր տեղ խորհրդաւոր զուրցուածք մը
դնելու համար գործածել չըլլար։

Յաղագս մեղմաբանութեան.

Խորշելի կամ անախորժ խմաստ մը կ'անցընենք բա-
ռով մը, որ ինքզ յատուկ բառն չէ, բայց մտածու-
թիւնը մեղմացընելով մը կը բացատրէ, և այս կ'ըսուի
մեղմաբանութիւն։ Կիկերոն, Կատիլինայի կուսակցաց
սպաննուելէն ետև, հասարակաց հրապարակին մէջ
անոնց բարեկամներէն ոմանց հանդիպելով, ըսաւ ի-
րենց. Անոնք ալ երբեմն կենդանի էին։ Պլուտարքոս

կ'ըսէ թէ ասիկայ զուրցուածքի կերպ մըն է, զոր
Հռովմայեցիք երբեմն կը գործածեն՝ երբ չեն ուզեր
այդ դժուարալուր և խիստ խօսքը զուրցել թէ՝ մեռաւ։

Երկու վերջին ձևերն, որոնց վրայ խօսեցանք, չրջա-
բանութիւնն և մեղմաբանութիւնն կրնային խմաստից
ձևոց կարգին մէջ դրուիլ. որովհետև առջինով փոխա-
նակ մէկ գլխաւոր խմաստի մը՝ շատ մը երկրորդական
խմաստներով բան մը կը բացատրենք. իսկ երկրորդով
անախորժ մտածութեան մը տեղ մեղմագոյն խմաստ մը
կը դնենք։ Բայց սովորաբար բառից ձևոց մէջ կը դրուին,
որովհետև երկուքին ալ նպատակն է փոխանակել բառ
մը զոր կ'ուզենք զանց ընել։

Բան մը մեծցընելու կամ պզտիկցընելու համար խօս-
քին ինչ աստիճանի զօրութիւն ունենալուն մի միայն
ապացոյց մըն է ինչ որ Արիստոտէլ Սիմոնիդէսի համար
կը պատմէ։ Կ'առաջարկուէր բանաստեղծին՝ մտատակ ջո-
րեաց ոլիմպեան խաղուց մէջ ըրած մէկ յաղթութիւնն
երգելու որ այնպիսի մեծ հանձարոյ մը շատ արժանա-
ւոր նիւթ մը չէր։

Երկար ժամանակ անօգուտ տեղ իրեն աղաչեցին.
բայց ետքն այնպիսի մեծ գումար մը խոստացուեցաւ,
որ վերջապէս հաւանեցաւ, և ասանկ կանչեց. «Ողջոյն,
թեւաւորացն ոտիւք ճայկացըն դրստերք»։

Կրնար զերենք դստերք ըսելոց անուանել. բայց բա-
նաստեղծներբողչաց սովորական ոճն բանեցընելով, իր
նիւթոյն պայծառ կողմը կ'երևցընէր, և մնացածը մթու-
թեան մէջ կը թողուր։

Բ. Յաղագս փոխակերպութեանց.

Փոխակերպութեանց ծագումը լեզուին սկզբնաւորութեան ժամանակն սկսած է։ Մինչ մարդկային ընկերութիւնն դեռ հազիւ ձևացած էր, շատ անգամ կը հանդիպէր որ մարդիկ փոխանակ նոր իմաստ մը բացատրելու համար նոր բառ մը ստեղծելու, ծանօթ բառի մը նշանակութիւնը կը փոխէին և անոր ինչուան այն ատեն չունեցած ուրիշ նշանակութիւն մը կուտային։ Այսպէս տեսնելով որ ամբողջ ընտանիք մը ճարճատող բոցոյն չորս կողմն առած կը տաքնան, ըսեր են նախ. կրակը կ'այրէ. յետոյ այրել բառը մարդուս հոգին տագնապող այլ և այլ կրից սեփհականեր են։ Մէջ բառը սկզբան գործածեր են, տեղւոյ մը հետ մարդուս բնական յարաբերութիւնն բացատրելու համար. ետքէն գործածեր են, բախտի և հոգւոյ հանդամանաց հետ մարդուս ունեցած բարոյական յարաբերութիւններն բացատրելու համար. և ըսելէն վերջը թէ՝ տան ջրոյն մէջ ինկաւ. ըսեր են. Մարդս երջանկութեան մէջ է, թշուառութեան մէջ է, ուրախութեան մէջ է, տրտմութեան մէջ է։ Վերջէն հռետորք դիտողութիւն ընելով, այս նոր իմաստով բառերն փոխաբերութիւն անուաներ են։

Փոխակերպութիւնք թէպէտ առ կարօտութեան մտած են լեզուի մէջ, բայց այնպիսի զարդ մը դարձած են, որ անկարելի է զանոնք գրութեան ոճոյն մէջէն վերցընել։ Եւ իրաւցընէ խօսքի մը ազդեցութիւնն չափաւոր կ'ըլլայ, եթէ մէկն ուզենայ որ և իցէ ձևաւոր բառ գուրս հանել մէջէն։ Տարակոյս չկայ որ պէտք է չափով գործածել փոխակերպութիւններն. վասն զի եթէ շատ առատութեամբ գրուելու ըլլան, պարզութիւնն կ'աւրուի, և ինչպէս հեղինակ մը կ'ըսէ, ճշմարտութիւնն իսկ կը վերնայ՝ եթէ բուն իրէն աւելի կամ նուազ բան մը զուրցուի. իսկ եթէ կիրթ ախորժակով գործածուելու ըլլան, լեզուին աղդուսութիւն մը կուտան։ Այս տեսակ կենդանի բացատրութիւնք բանաստեղծութեան ոգին են, և զգացմունքներն ու մտածմունքներն կը մարմնացընեն. ճարտասանն իր գրութեան ոճն անոնցմով կը զարդարէ. և նոյն իսկ խմաստասէրն երբեմն առանց իր փնտռելուն ասանկ ձևաւոր բառեր կը գտնէ, որոնցմով իր պատճառաբանութեանց ցամաքութիւնը կը ծածկէ։ Շատ անգամ առանց մեր գիտնալուն կը գործածենք փոխակերպութիւններն, որոնք մեր մտածութեանց բնական օժանդակներն են։ Եւ ինչպէս շատ անգամ դիտուած է, բառերն ու վանկերն անդամ կշռող մատենագրէն սկսեալ ինչուան ոչխարներն արածող ու առանց կանոնի խօսող հովիւն, ամէն մարդ-քիչ շատ փոխակերպութիւն կը գործածէ, իր խօսքին աւելի զարդարուն կերպ մը տալու համար։

Յաղագս փոխաբերութեան.

Փոխակերպութեանց ամենէն գործածականը փոխաբերութիւնն է. և ընդհանուր փոխակերպութեանց համար զուրցուածներն մանաւորապէս ասոր պէտք է պատշաճեցընել։ Փոխաբերութիւնն, որ կրնայ համառօտ բաղդատութիւն մը ըսուիլ, նախ և առաջ մէկ իր մը նշանակելու համար գործածուած, և ետքէն առաջինին հետ յարաբերութիւն ունեցող երկրորդ իրի մ'ալ սեփհականուած բառ մըն է։ Ինչպէս, քաջ պատերազմողի մը վրայ խօսելով, այն առիւծն կ'ըսենք. գրութեան ոճն է այդ պաշտօնեայն, փոխանակ ըսելու թէ տերութեան հաստատութեանն համար կարևոր անձն մըն է. աչքը կը կոչենք լեռ լուսոյ, բամբասողն՝ որոմնացան,

ծովը՝ Խպոռպակ դաշտ։ Փոխաբերական բացատրութիւնն քան զլաբրդ բացատրութիւնն աւելի վայելչութիւն և ոյժ մը ունի։

Եթէ ուզենանք Մարկելլոսն իր քաջութեամբն, և Փաբիոսն իր խոհականութեամբն առ Հռովմ մատուցած ծառայութիւնքն մէկ խօսքով բացատրել, կրնանք նախնի պատմագրաց հետ զուրցել թէ Հռովմայ ուրն էր Մարկելլոս, և Փաբիոս անոր Վահանն էր։

Ինչո՞ւ համար այնչափ գեղեցիկ են խմաստնոյն մահուան վրայ Լափոնդէնի այս տողերն.

« Երբ 'ի կէտ իւր մերձենայ, և թողու զայս բնակութիւն,
Անպըղտոր վերջին իւր ժամ՝ է զուարթ աւուր երեկոյ »։

Վասն զի շատ մը փոխաբերութիւնք երարու կը յաջորդեն. և նախ ասանկ կը սկսի. Երբ 'ի կէտ իւր մերձենայ։ Այդ մարդը, Աստուծոյ արդարութեանը վրայ վստահացած, մահը ուրիշ բան չնկատեր, բայց եթէ իրրև կենաց կէտ մը. իր բոլոր մտածութիւններն հոն կը գիմեն, ինչպէս նեռ մը աղեղնաւորին ձեռքէն շիտակ գէպ 'ի նպատակը կ'երթայ։ Եւ ուղղ պայս բնակութիւն. երկիրս իրեն համար բնակութեան տեղ մըն է, և ինքը երկնից համար եղած է։ Անպըղտոր վերջին իւր ժամ. այս կտորը կը յիշեցընէ մեզի յատակ ալիք մը, որ բնաւ չըպղտորիր։ Է զուարթ աւուր երեկոյ. կենաց վերջին վայրկենին յարմար գեղեցիկ և սրտաշարժ պատկեր մըն է։ Զնաւորը զուրցուածքով մը բանաստեղծը մահուան պատճառած տրտմութիւնն կը քաղցրացընէ։ Զենք տեսներ գերեզմանին բացուիլը, խմաստունն ընդունելու համար. այլ արև մըն է, որ պայծառ երկնքէն կը քաշուի կ'երթայ, դարձեալ առաւօտեան ժամուն կենդանանալու համար։

Երբ Պոսիւէ կ'ուզէ Գոնտէի եշխանին զինուորական հանձարն բացատրել, այսպէս կ'ըսէ. « Արժիւն այն, թէ

ընդ օդս սաւառնիցի, թէ 'ի ծագս ուրեք ապառաժի հանդիպիցէ, տեսանեմք զի զարահայեաց բիբն ընդ ամենայն կողմանս արձակեալ՝ սլանայ անսխալ 'ի վերայ որսոյ իւրոյ, և չիք ճողոպրել 'ի մագլցայ իւրոյ որպէս և յաչացն »։

Փոխաբերութիւն մը կազմելու ատեն երևակայութիւնն կ'ախորժի երկու բան իրարու հետ բաղդատել, անոնց իրարու հետ նմանութիւն ունեցող մասերն գտնել, և ինչ յարաբերութեամբք իրարու հետ միանալնին ըմբռնել. այս թեթև աշխատութիւնս մտաց համար կրթութիւն մըն է, առանց յոգնեցընելու զայն, և միանգամայն իր ճարտարութիւնն ցուցընելու առիթ մը։

« Պէտք է, կ'ըսէ Լահարբ, որ փոխաբերութեան արտայայտած յարաբերութիւնն այլ և այլ և բնականէ դուրս չըլլայ։ Զկայ անանկ անախորժ բան մը, ինչպէս ձև մը՝ որուն մէջ համաձայնութիւն չկայ, և իրաւամբ ծաղրելի եղած են Ռուսոյի այս տողերն.

« Նորեկ զեփիւռք 'ի ջերմախառն իւրեանց շունչ,
Լոծին ըզջուրցն ելեալս։

Հոս կան երկու խմաստք, որ իրարու հակառակ կ'ելլեն. կեղևը չըլլուծուիր։

Յայտմ մասին տոգտանելի է նաև Յովհ. Կաթողիկոս որ մէկ խօսքի մէջ շատ մը փոխաբերութիւն կը խառնէ, որոնք իրարու հետ կապակցութիւն չունին. ինչպէս այս կտորիս մէջ.

« Յայնմհետէ ապա նիւթ հրաբորբոք դառնութեան մտաց գտեալ ոստիկանին զայնպիսի յաղթութիւն, հրբկիզութիւնս բաղումս սփռեալ տարածանէ ընդ ոլորտս երկրի մերոյ. և 'ի միջօրէի իբրև գիշերի մութ և մգոտ և մառախուղ և խաւար աղջամղջին պատեալ պաշարէր զաստանազեանս աշն. և 'ի լծակս կշռոց եդեալ զերկունս տագնապ տարակուսանաց, հակամտեալ կուտեալ գտանէին 'ի վերայ մեր ծանրատաղտուկ անուր Հադարու,

առաւել քան զքարինս ձորոյն Նաքովբայ։ Վասն զի նեռք հինից և տէգ տեառն տեղացին 'ի մեզ. քանզի արմատ դառնութեան, զոր երբեմն խլեաց տէր 'ի տա-նէս Թորգոմայ, կրկին շառաւիղեալ տնկեցաւ յիմանալի այգեստանս մեր, 'ի փշահեղձ մացառս վերընձիւղեալ յեղծումն և յապականութիւն »։

Պէտք է նաև որ փոխաբերութիւնն ըստ տեղւոյն ըն-ալայ, այսինքն քան զյատուկ բառն աւելի զօրութիւն ունենայ. ապա թէ ոչ՝ յատուկ բառն աւելի ընտրելի է։ Փոխաբերութիւնն ուրիշ բանի համար եղած չէ, կ'ըսէ Հանձարեղ կերպով Կուինտիլիանոս, բայց եթէ պարապութիւն մը լեցընելու համար. և առաւելու-թիւն մը ունենալու է, որ կարենայ պարզ բառին տեղը բռնել։

Պէտք է դարձեալ փոխաբերութիւնն պատշաճեալ ըլլայ նիւթոյն, և սաստիկ անհամեմատութիւն չըլլայ այն մտածութեանց մէջ, զորոնք լռելեայն կերպով մը երարու հետ կը բաղդատէ։ Անոր համար իրաւամբ սադտանելի եղած է հեռաւեալ տողը, որուն մէջ խօսե-լով կառավարի մը վրայ՝ որ իր ձիերն կը հնազանդեցընէ սանձին, այսպէս զուրցուած է.

« Ընդ պերուիեամբ սանձին ըզձիսն արկանէ »։

Ձիու սանձի մը համար շատ մեծ է տէրութեան դա-զափարն։ Պէտք է զգուշանալ նաև ցած ու անարգ բա-ներէ փոխաբերութիւն առնելէ։ Որատիոս կը սադտանէ Մարկոսի այս տողերը.

« Ի լեառն Ալպեայ բարձրագիտակ
Եթուք Հերմէս ձիւն ըսպիտակ »։

Վերջապէս որչափ աւ փոխաբերութիւնն՝ ամենայն պահանջեալ յատկութիւններն ունենայ, պէտք չէ չա-փազանց առատութեամբ գործածել զայն. վասն զի այն ատեն արուեստակութիւն և միակերպութիւն կը մտնէ, որոնք որ և է տեսակ գրութեան մէջ մեծամեծ թերութիւնք են։

Յաղագս այլաբանութեան.

Երբ փոխաբերութիւն մը կ'երկրննայ, այլաբանու-թիւն անունը կ'առնու։ Փոխաբերութիւնն մէկ բառով մը միայն կ'ըլլայ, և միայն մէկ պատկեր մը կը ներկա-յացընէ. իսկ այլաբանութիւնն կ'ընդարձակէ զփոխա-բերութիւն, և մի և նոյն խմբատն շատ մը բացատրու-թիւններով կը ճոխացընէ։ Շնորհալին իր եղբօրը՝ Գրի-գոր Կաթողիկոսին վախճանիլը ասանկ այլաբանու-թեամբ մը կը բացատրէ.

« Ինքն նաւու հաւատոյ ընդ ծով աշխարհիս՝ հողմով Հոգւոյն ուղղակի նաւապետեալ ճշմարտութեամբ և առաքինութեամբ, եհաս անվնաս յանբոյթ և առանց ա-լեաց նաւահանգիստն »։

Գեղեցիկ է Հոլիսիմեանց շարականին մէջի այս այ-լաբանութիւնը.

« Խորհուրդք հոգևոր յըղութեանցն յայտնէր,
Եւ երկունք փրրկութեան աշխարհի ճեպէին.
Քանզի կամքք վերին հրամանին քաղցրացեալք,
Իջուցին 'ի վերուստ ըզպարգևս փրրկութեան։
Ծընան կուսանք ազգքս բաղումս,
Եւ մարքք մանկունք ըզհրապարակքս ծերոց.
Ի գիրկքս սրբութեան աղօթից և պահոց
Ճաճեցին հաւատովք զարգացեալք 'ի Քրիստոս »։

Սարգիս այլաբանաբար մեղքէ ազատ եղողն այսպէս կը խրատէ.

« Եւ թէպէտ յանբոյթ նաւահանգիստ հասեալ լցես, և 'ի ներքս մտեալ, մի յանհոգս կայցես 'ի մրրկածին հողմոցն խռովութենէ. զի առ նաւահանգստին առա-ւել գիտէ այնպիսի հողմ ալիս յարուցանել և ընկղմել զնաւն։ Վասն զի զինչ այլ է եկեղեցի, եթէ ոչ նաւա-հանգիստ արդարոց և մեղաւորաց »։

Լամբրոնացին վայելուչ այլաբանութեամբ Հոգւոյն սրբոյ ընդհանց աղդեցութիւնը կը բացատրէ.

« Այս ցող քաղցրութեան զուարթացոյց զբոյսս բանին Քրիստոսի, և օրհնեալ պտակեաց զամս անօրինական իւր գործոցն : Վասն որոյ աղաղակէ եկեղեցի. ձմեռն էանց, այգիք մեր ծաղկեցան, և եռուն զհոտ անոյշ: Յայսմ առաւօտու հայեցաւ հայրն երկնաւոր 'ի յերկիր. արբոյց զսա յորդառատ դեռով սուրբ Հոգւոյն. և փթթեալ ծաղկեցոյց զանազան բոյսս առաքինութեան 'ի բազմապատիկ անկոց արմատոց, որպէս և վայելեաց մարգարէն »:

Խորենացին՝ Հայոց աշխարհին վրայ ըրած ողբոցը մէջ ասանկ այլաբանաբար կը խօսի.

« Զի ոչ որպէս 'ի հնումն Ժողովրդեանն, այլ առաւելու մերս Թշուառութիւն. վասն զի Մովսէս բարձեալ լինի, և Յեսու ոչ յաջորդէ առաջնորդել յերկիրն աւետեաց: Բոբոլամ մերժեցաւ յիւրմէ Ժողովրդենէ. և փոխանորդեաց որդին Նաբատայ. և զայրն Աստուծոյ ծախեաց՝ ոչ առիւծ, այլ կատարումն ժամանակի: Եղիա ամբարձաւ, և Եղիսէոս ոչ մնաց կրկին ոգւով օծանել զՅեհու, այլ և Ազայել հրաւիրեցաւ կոտորել զԻսրայել. 'ի գերութիւն վարեցաւ Սեդեկիա, և Զորաբաբել ոչ ուրեք երևէր, որ զպետութիւնն նորոգէր: Անտիոքոս բռնադատէ Թողուլ զօրէնս հայրենի, և Մատաթիա ոչ ընդդիմակէ: Պատերազմ զմեզ շուրջ պաշարէ, և Մակաբէ ոչ փրկէ: Այժմ մարտք 'ի ներքուստ, և արտաքուստ »:

Շատ գեղեցիկ է նաև Սաղմոսաց մէջ այդպէս այլաբանութիւնն.

« Այդի յԵգիպտոսէ փոխեցեր, հաներ զհեթանոսս և զնոսա տնկեցեր, և առաջնորդեցեր նմա: Հատատեցեր զարմատս նորա, և ելից զերկիր. ծածկեաց ըստուերինս հովանի նորա, և բարուտակ նորա զմայրս Աստուծոյ: Զգեաց զորթ իւր մինչև 'ի ծով, մինչև 'ի գետս

են շառաւիղք նորա: Ընդէր քակեցեր զցանկ նորա. կոթեն զնա անցաւորք ճանապարհի: Ապականեաց զնա խոզ անտառի, և երկ վայրի արածեցաւ 'ի նմա: Աստուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից, և տես. այց արա այգւոյս այսմիկ, և դարման տար սմա՝ զոր տնկեաց աջ քո »:

Ինչպիսի գեղեցկութիւն և վայելչութիւն կայ Լաֆոնդէնի գործածած այս այլաբանութեանը մէջ, որով արքունեաց վտանգներն ու դարանակալութիւններն կը բացատրէ.

« Նաւեալ ոք լի առագաստիւք ընդ ծովք այդ,
Կարծէ ունել զաստեղս և զհողմն 'ի նպաստ.
Յոյժ գրժուարին է գընել չափ ըստ ինքեան,
Ներհակ ուշին անգամ՝ վրստահ 'ի զեփիւռ »:

Լահարբ կ'ըսէ թէ Հենրիկանի մէջ այլաբանութեան օրինակ մը կայ տասը տող երկայնութեամբ, որուն մէջ ամենուին չերևար ոչ բռնաբռնութեամբ մը և ոչ շնդութեան դէմ պակասութիւն մը: Հարկ էր նկարագրել զՀենրիկոս երրորդ, որ դաշնաւորաց իրեն դէմ դլուխ վերցընել սկսած ժամանակ՝ կը ջանայ քիչ մը առեն անհոգութիւնն մէկդի թողուլ. բայց իր օդուտն չճանչնալով, և ինչ վտանգներու մէջ դտնուիլն չկարենալով տեսնել, քիչ մը վերջը կը մոռնայ ամէն բան, և զուարճութեանց ու մեղկութեան մէջ կ'ընկղմի: Բուն խնասն այս է. տեսնենք հիմայ ասոր ձեւաւոր բացատրութիւնն.

« Հենրիկոս ըսթափեցաւ յարբեցութեան թմբիրութենէն.
Համբաւն և հանդերձանք և մեծալուտ վրտանգին ձեալ՝
Վայրկեան մի բացին զաչս նորին ըղձանրացեալս.
Այլ 'ի թանձրը լուսոյն ակամողիք իւր չըլացեալք
Ոչ տեսին ամենևին 'ի սասակութեան անդ մրրրկին
Ըզչանթիան ըսպառնալիցս որք ըղդրլխովքն դառային.

Եւ նեղեալ վաղվաղակի 'ի վայրկենի արթնութենէն,
Խոնջ վաստակաբեկ անկեալ անդրէն 'ի գիրկ քնոյն,
Ի մէջ սիրելեացն և հեշտալեացն գրրդանաց,
Նիրհեաց հանդարտիկ՝ մօտ առ եղերբք դահաւանդին »։

Ահաւասիկ կատարեալ պատկեր մը, որուն մէջ դոյներու աստիճանաւոր դասաւորութիւն մը կայ, և ամենայն բարակ մասունքն որոշ կերպով իրարմէ կը զանազանին։ Այս կտորս, « Խոնջ վաստակաբեկ անկեալ անդրէն », մեղկացեալ տկարութեան թուլութիւնը կը ցուցընէ։ Իսկ վերջն տողն այն խօսքը. « Նիրհեաց հանդարտիկ », անհոգութենէ պատճառեալ թմբրութիւնն կ'իմացընէ։

Այս օրինակաց վրայ աւելցընենք նաև Պոսուէի այս վեմայլաբանութիւնը.

« Իբրև զճանապարհ իմն են կեանք մարդոյ, որ սպառուած հայիյանդունդս ահագին։ Յայսմ սրատիմք անդրանոն յառաջին քայլափոխիս. այլ տուան օրէնքն, յառաջել հարկ է անդուլ։ Անդրէն դառնալ ախորժեմք, յառաջ, յառաջ։ Բեռն անվերկանդ և բուռն զօրութիւն վարեն զմեզ, և յանդունդս անդր հարկ է փութալ։ Բիւր խէթ և խութք և բազմաբիւր ցաւք պարտասեն զմեզ և տագնապեն յուլոյ։ Իցիւ թէ էր ինչ և այնպէս ճողոպրել յահագին անդնդոցն. ոչ, ոչ. հարկ է յառաջել, ընթանալ պիտի։ Այսպէս սրամբ են ամք։ Այլ քերեալ մերթ ընդ մերթ առ հեզասահ վտակօք և առ ծաղկամբք որ անցանեն՝ մխիթարիմք նոքօք։ Ախորժեմք անդ առնուլ զտեղի. յառաջ, յառաջ։ Եւ ահա թաւալի'ի թիկանց մերոց ամենայն ընդ որ անցաք. կործանումն ահեղ, բեկումն մեծ։ Խնդամք փոխանակ զի ածեմք ընդ մեզ փունջ ծաղկանց քաղելոց զճանապարհայն, զորս յառաւօտ յերեկոյ տեսանեմք թառամեալս 'ի ձեռին, և և միրգս՝ զորս սպառեմք ճաշակմամբ։ Ցնորք, պատրանք։ Ցանկ քաշեալ մերձիմք 'ի վերն ահագին։ Ամենայնի

ոչինչքն լինի նսեմանալոյ. պարտէզք կարձեն զծաղիկս, ծաղկունք զփայլ գեղոյն և զերանդոյն կենդանութիւն. մարդագետինք ոչ այնպէս ծիծաղախիտք, ջուրք ոչ նոյնպէս ականակիտ. աղօտանայ ամենայն, ամենայն ինչ նսեմանայ։ Ընդառաջեն ստուերքք մահու, և դուշակեմք զանձինս հուպ 'ի բերան անդնդոցն մահաւիթ. այլ անհրաժեշտ է գնալ յեղերան։ Քայլ մի և՛ և ահա քստմունք գնան ընդ անգամ, ցնորին միտք, տչք մթագնին։ Ցառաջել պէտք են։ Ցօժարիմք այսրէն դառնալ. չկք հնար. ամենայն ինչ կործան, ամենայն ինչ անհետ, ամենայն ինչ փախստական »։

Ցաղագս պիտակորհնան.

Կայ տեսակ մը փոխաբերութիւն, որ կը գործածուի առ կարօտութեան։ Երբեմն նիւթ մը բացատրելու համար յատուկ բառն կը պակսի, և հարկ կ'ըլլայ ձեւաւոր բացատրութիւն մը գործածել։ Ինչպէս ախ բառով, որ աչք կը նշանակէ, կը հասկընանք այն տեղն՝ ուր կեց ջուրը կը բղխէ, զանիկայ նշանակող յատուկ բառ մը չունենալով։ Նոյնպէս և երէս բառը՝ որ դէմք կը նշանակէ, շատ անգամ որ և իցէ իրաց մակերևութի տեղ կը գործածուի. վասն զի կ'ըսենք՝ երեսք ջուրց, երեսք երկրի և այլն։ Այս կերպ գործածութիւնն կ'ըսուի պիտակութիւն։

Յաղագս փոխանունական.

Բանի մը անունն ուրիշ բանի մը անուան տեղ կը դրուի, երբ այս երկուքին մէջ այնպիսի կապակցութիւն մը ըլլայ, որ միտքն բնական կերպով մէկէն մէկալն անցնի և զանոնք գրեթէ իրարու հետ շփոթէ։ Այս ձևս կը կոչուի փոխանունութիւն։ Շատ տեսակ փոխանունութիւնք կան.

ա. Գործոյն տեղ պատճառը կը դրուի. ինչպէս, «Եւ ընթացաւ Փիլիպպոս. լսեր զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ». այսինքն Եսայեայ գրած մարգարէութիւնը։ «Տժգոյն երկիւղիւ զդէմսն նկարեաց». հոս գործոյն տեղ՝ որ է տժգունութիւն, գրուած է պատճառը, որ է երկիւղ։ «Բարկութեան Տեառն համբերից, զի մեղայ նմա»։ Ուր բարկութեամբ կը հասկցուի անոր եռեւէն եկող պատիժն կամ իրատն։

«Զեռացրն վաստակովք տածեն զիւրեանցն ծերութիւն».

Հոս յեռացրն վաստակովք իրենց աշխատութեամբ վաստակածն կը հասկցուի։

բ. Պատճառին տեղ գործը կը դրուի. ինչպէս լերան մը համար խօսելով կ'ըսուի. «Ի լերինն այնմիկ չկայ հովանի». փոխանակ ըսելու թէ այն լեռը ծառ չկայ։ «Որպէս զոխրութիւն գիշերոյ աստեղքք, և զիարայէլ բազմութեամբ մարգարէիցն մխիթարէր». ուր տխրութիւնն փոխանակ մթոյն գրուած է. վասն զի մութն է տխրութիւն պատճառողն։ «Հնազանդեցուցանէր զամբարտաւան և զբիրտ ապստամբութիւն նոցա». այսինքն զապստամբ մարդիկն։

գ. Գործիքն կը դրուի փոխանակ զայն գործածող անձին, ինչպէս Պուալոյի այս տողերուն մէջ.

«Նըկարող փափուկ գրիչն ճարտարութիւն ախորժելի
Իրաց այլանդակաց տայ կերպարանս հաճոյական»։

Հոս գրիչն՝ նկարչին տեղ գրուած է։

դ. Ասոր բոլորովին հակառակ ձևով, գործոյն տեղ՝ զայն գործածելու գրգռող կիրքն կը դրուի. ինչպէս Գոռնէյլի այս տողերուն մէջ.

«Տեսի 'ի գիշերիս ըզԱեւերսան այն թըշնաւառ,
Ի յԷրին վրէժխնդրութիւն, աչք եռացեալ բարկութեամբ»։

է. Կը դրուի պարունակողն փոխանակ պարունակելոյն. ինչպէս, «Ըմպել զբաժակն ցմրուր» կ'ըսուի փոխանակ բաժակին մէջ պարունակեալ ըմպելւոյն։ «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ». այսինքն զՀայոց ազգն։ «Սարսեր երկիրս ամենայն առաջի նորա». այսինքն բոլոր երկրիս վրայ բնակող ազգերն։ «Ասքայիա, Եղիադա, Մակեդոնիա, Թեւակոխեալ առ Ասիաւ, առաքելովքն վարժեալք, 'ի Պողոսէ առոգեալք և արմատացեալք». հոս Ասքայիա, Եղիադա և Մակեդոնիա աշխարհներն՝ իրենց բնակիչաց տեղ գրուած են։

Ոտսին ըսել կուտայ Պիւռոսի.

«Կարի իմն՝ Հելլենատան վասն իմ հոգովք վարանի»։

ե. Նշանակեալ իրին տեղ անոր նշանն կը դրուի. ինչպէս գահն կամ գաւազանն, որ թագաւորութեան նշաններն են, անոր տեղ կը դրուին. գահն՝ հովուական կենաց տեղ, և խաչ՝ քրիստոնէութեան տեղ։

«Գանի ծանր է գաւազանն ընդ մշտանեղն 'ի շիրիմ»։ Տիւոի։

«Սաղաւարտ եդեալ այսօր, իսկ 'ի վաղիւն արկեալ կընդուղ»։ Պուալոյ։

է. Գրուածի մը տեղ՝ անոր հեղինակին անունն, կամ ուրիշ առարկայի մը տեղ՝ անոր խնամք տանող և պաշտպանութիւն ընող անձին անունը կը դրուի. ինչպէս ամէն օրուան խօսակցութեանց մէջ կը զուրցուի Հոմե-

բոս, Վէրգիլիոս, փոխանակ Հոմերոսի և Վերգիլիոսի գրուածոցը։

« Անդ-Յերկիր տապալի Տերենտիոս առ Կոռնիլիայ.

Անդ ընդ օգս հարկանի Լաւէր ընդդէմ Պինդարոսի»։

Ճարտարութեան արուեստից մէջ՝ նոր գիւտերն և զանազան ձեռագործներն շատ անգամ հնարողին կամ շինողին անունը կ'առնուն։

Կ'ըսուի նաև Սոբրին Պեպրոս Հռովմայ, Սոբրին Պօղոս Լոնտրայու, այս սրբոց նուիրեալ տաճարներն իմացը-նելու համար.

ը. Ձգացման մը տեղ, զայն պարփակող գործարանն կամ մարմնոյն մասն կը գրուի. ինչպէս Ռասինի մէջ Թեսէոս կ'ըսէ իր որդւոյն.

« Սիրէի ես ըզքեզ, և իմանամ զի այժմէն

Վասըն քո աղիս յուզին, թէպէտ ցուցեր ինձ չարիս»։

Յաղագս խնդամտռքեան.

Կայ տեսակ մը փոխակերպութիւն, որով բան մը առանց կատարեալ բացատրելու, աւելի կամ նուազ բացայայտ կերպով մը կը հասկցնենք. այս ձևս կ'ըսուի խնդամտութիւն, որ շատ տեսակ է.

ա. Բոլորին մասը կը գրուի փոխանակ բոլորին. ինչպէս « Ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո'ի դրան, հանցեն և զքեզ »։ որպէս փոխանակ երիտասարդաց գրուած է։ « Զեռն Իսմայելի սպառասցուս առաւել քան զկար 'ի վերայ մեր ծանրանայր »։ այսինքն Իսմայելացիք ծանրանային։ « Վասն որոյ զամենայն բերան գովութեամբ ստացար քեզ օրհնաբանս անձկով տարփման, սուրբ աստուածածին »։ այսինքն զամենայն մարդիկ։ — Իպպոլիտ կ'ըսէ առ Թերամէն.

« Հեռացեալ 'ի հօրէս քան զվեց ամիսս աւելի,

Թէ զինչ սիրեցելոյ գբաւոյն եղև՝ չգիտեմ»։

Հոս գլուխն գրուած է փոխանակ անձին։ Նոյնպէս կը զուրցուի յարի, սեամ փոխանակ տան, հարիւր առաքասուք փոխանակ հարիւր նաւուց, հաշուեալ գարուանս վեցասան, փոխանակ վեցտասան տարեաց։

բ. Բոլորն կը գրուի փոխանակ մասին. զոր օրինակ. « Միանգամայն ամենայն մարմնոյ էին պարծանք »։ այսինքն ամենայն մարդկան։ « Պարթևն արբցէ զԱրաբիս »։ փոխանակ ըսելու, 'ի ջրոյ Արաբիս գետոյն։

գ. Սեռը կը գրուի փոխանակ տեսակին, ինչպէս մարդկանց վրայ խօսելով կ'ըսուի մահկանացուք, և կենդանի՝ անանանց մանաւոր տեսակի մը վրայ խօսելով։ « Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ, զի տէր խօսեցաւ »։ այսինքն ամենայն մարդ, որ է տեսակ սեռական անուանս՝ մարմին։ Տալիլ պատմելով Բելշասարի և իւր սարդին պատմութիւնն, կ'աւելցընէ.

« Յուզեցաւ դիջաք 'ի գութ, մարդն ցուցաւ վայրենագոյն »։

Հոս սեռի անունն դիջաք գրուած է փոխանակ սարդին, որ է տեսակ միջատին։

դ. Տեսակը կը գրուի փոխանակ սեռի. ինչպէս գարնան վրայ խօսելով կ'ըսուի՝ ամրան վարդեր, փոխանակ զուրցելու, ամրան ծաղկանց։ Կ'ըսուի նաև թէ այդ մարդը կարօտ է հաղի, փոխանակ զուրցելու թէ կենաց կարևոր բաներու կարօտ է։ « Մի լինիք որպէս զձիս և զջորիս, զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն »։ այսինքն իբրև զանբանս։

է. Յոգնականին տեղ եղականն կը գրուի, ինչպէս Պաւաղոյի այս տողերուն մէջ.

« Խափանեալ ըզքարոն զի մի 'ի կուր իւր մահաւիթ

Հաւասար ընդ հոգւոյն ըզխաղաւորն առեալ տարցի...»։

Եւ ուրիշ բանաստեղծի մը այս տողերուն մէջ.

Վայրենի ամբիկիանն է միշտ գազան անհամբոյր,

Որ մանչեալ խածանէ զըսարբկութեանցն շրուշակ»։

« Զկնի ամ մեր ապա Թշնամւոյն պատնէշ պաշարմամբ պատեցաւ շուրջանակի զամրոցաւն» . հոս Ընդամենոյն դրուած է փոխանակ Թշնամեաց : « Տկարն խրախուսեսցէ Թէ հզօր եմ ես , հանդարտն պատերազմող ելցի » . այսինքն տկարք խրախուսեսցեն , հանդարտքն պատերազմողք ելցին : « Սատակել զքեռացին և զամրվհացին » . այսինքն զքեռացիս և զամրվհացիս :

Ը. Նոյնպէս նաև եղականին տեղ յոգնականն կը դրուի . ինչպէս Պուալոյի այս տողերուն մէջ .

« Ոչ բաղում անգամ տեսաւ զի զանգիտող մահկանացուք

Սարսէին յոտքս կապկին՝ յիւրեանց սեղանսն բազմելոյ .

Եւ յեղերս անդ Նիլոսի ամբոխ ազգաց անհանճարեց ,

Խընկանոց 'ի ձեռին՝ ըզտիսեռունսն խընդրելն » :

Հոս ամբոխ ազգաց մէկ ազգի մը համար դրուած է . որովհետև խօսքը միայն եգիպտացւոց ժողովրդեան վրայ է :

Է. Փոխանակ երին՝ զայն կազմող նիւթոյն անունը կը դրուի : Երկաթն և պղինձն՝ անոնցմով շինուած զենուց տեղ կը դրուին : « Վասն այսորիկ և չնչին փայտին հաւատան մարդիկ զանձինս իւրեանց » . այսինքն՝ նաւուն : « Այլ ես հող եմ և մոխիր » . այսինքն եղեալ 'ի հողոյ : « Գիտէ վանել արծաթն ծառայեցուցիչ՝ որով խրոխտանան » . այսինքն ինչք : « Զոմանս 'ի պատուական ազատաց բազմախողխող երկաթոյն ասային կերակուր » . այսինքն սրոյ : Գոթոզիայի մէջ Ազարիաս կ'ըսէ առ քահանայապետն .

« Արդ երդնումք մեք աւասիկ 'ի մեր անուն՝ և յեղբարցս ,

Ամբաւանալն ըստուգանել զՅովաս յաթոռ հարցն իւրոց .

Մի ղերիսին մատուցեալ 'ի ձեռաս մեր՝ ամիտոփել ,

Զև 'ի բնաւ Թըշնամեաց իւրոց ըզվրէժ իւր խընդրեալ » :

Պուալոյ ալ կ'ըսէ .

« Փըղոնիրեայն 'ի շատ Հեղեալ՝ երկիցս 'ի գլուխըն բեկեալն » . այսինքն փղոնիրեայ ոսկերն :

Ը. Թանձրացելոյն տեղ վերացեալն , և տեսանելւոյն տեղ անտեսանելին կը գործածուի , այսինքն փոխանակ առարկայ մը իր սեփական յատկութեամբն բացատրելու , յատկութիւնն կը դրուի առանց առարկային , ինչպէս բանաստեղծի մը այս տողերուն մէջ .

« Խօսեցան յաղթականքն , և գերութիւնքն լըռեցին

Բարբառոյ նոցա անսայ 'ի լայնալիր քաղաքիս » :

Գերութիւնն դրուած է փոխանակ գերեալ ժողովոցեալ : Ռասին Գոթոզիային մէջ կ'ըսէ .

« Նըկրրոսի գաղանութիւն իւր այժմ ըզքեզ սատակել » . փոխանակ ըսելու դիւոյն գաղանամիտ . և Իֆիգենիի մէջ .

« Արքայ մի՝ որ ոչ շատեալ ահաբեկել ըզմարդիկ՝

Ոչ մինչև յայրեցաւերս ըզվտանս իւր սահմանէ ,

Արտասուաց հարսին ներէ քաղցրախառնել դայլութիւն » :

Յաղթութիւնն դրուած է փոխանակ յաղթողին : Այս օրինակներէս կը տեսնենք Թէ վերացեալ բացատրութիւնն որչափ խօսքին ազդեցութիւնն և վայելչութիւնն կ'աւելցնէ :

Թ. Ընդհանուր իրաց տեղ մասնաւոր իրի մը յատուկ բառն կը դրուի . ինչպէս մարդկանց վրայ խօսելով , փոխանակ ըսելու դիտուն և արդարակորով պաշտօնեայք , մեծ Հարատասան մը , կ'ըսուի Սէ-ւէրէ կամ Գոլբէր , Դիմոսթենէս մը կամ Պոսիւէ մը :

Պուալոյ կ'ըսէ .

« Օգոստոս ոմն հեշտեաւ կարէ Վէրգիլս յարուցանել . .

Սոֆոդ եկեալոց յապայս՝ տանջանքս պատրաստել » :

Հոս Օգոստոս և Վէրգիլք անուններով դպրութեանց պաշտպան իշխանազունքն և մեծամեծ բանաստեղծներն կը հասկցուին . իսկ Սոֆոդք դրուած է փոխանակ մեկնչաց՝ որ հեղինակաց միտքն կը պարզաբանեն : Նաև

տեղեաց վրայ խօսելով կ'ըսուի. Տէմոսթէնէս հովանի, ֆիլոսֆէն էրիֆէ, ռէթորիկէն արա, հելլէնիզէն պէսարան, փոխանակ ըսելու հոլասուն հովիտ, պարզ երկինք, կիզանող օդ, և գեղեցիկ տեսարան։

Ծ. Երբեմն ընդ հակառակն փոխանակ մասնաւոր իրի մը յատուկ բառն գործածելու, ինչ դասի որ կը պատկանի՝ անոր անունն կը դրուի. ինչպէս մարդկանց վրայ խօսելով, փոխանակ ըսելու Աքիլլէս, Մենտոր, Կալքաս, կ'ըսուի՝ դիւցազն, ծերն, փահանայն։ Ռասին՝ Փէդրայի մէջ կ'ըսէ.

«Որ մեռեալ կարծէրն արքայն՝ երևեցի աստանոր»։ Արքայն դրուած է փոխանակ Թէսէոսի։ Նոյնպէս նաև տեղեաց վրայ խօսելով կ'ըսուի գէրն, վառոն սուրբ, փոխանակ ըսելու Տիբերիս և լեառն Սինայ։ Հիներն կ'ըսէին, ֆաղֆն, ֆէրդոն, արքայից արքայն, փոխանակ ըսելու Հռովմ կամ Աթէնք, Հոմերոս և Թագաւոր Պարսից։

Գ.

Յաղագս զանազան տեսակաց ոճոյ.

Հիներն զանազան ոճերն երեք գլխաւոր տեսակի կը վերածէին, որ են պարզ ոճ, բարձր ոճ, և այս երկուքին մէջտեղը երրորդ տեսակ մը, որ է միջակ կամ զարդարուն ոճ։ Առաջնոյն պաշտօնն, կ'ըսէ Կուինտիլլիանոս, սորվեցընել է, երկրորդինը՝ սիրտ շարժել, երրորդինը՝ զուարճացընել։ Բայց նոյն ինքն Կուինտիլլիանոս կ'ընդունի որ լաւ խօսելու արուեստն միայն այս երեք տեսակ ոճերով չկազմուիր. հապա զատնք իրարու կապող դեռ շատ մը մասեր կան, ինչպէս քնարի մը սկզբնական ձայներէն զատ երկրորդական ձայներ ալ կան՝ որ միջանկեալ տեղերը կը լեցընեն։

Մենք ալ Կուինտիլլիանոսի ըսածին հետևելով և երեք տեսակի բաժանումը իբրև կէս մը ինքնահնար բան մը՝ զանց ընելով, բաւական սեպենք ոճոյ գլխաւոր տեսակներն դնել, և առանց զանոնք որոշեալ տեսակներու վերածելու՝ ջանանք աստիճանաւ մը դասաւորել։

Ա.

Յաղագս պարզ, բնական և ընտանեկան ոճոյ.

Պարզ ոճն՝ առանց բան մը աւելցընելու՝ ամենայն տեսակ շարադրութեան կարևոր եղող ընդհանուր յատկութիւններն պէտք է բովանդակէ։ Մաքուր, յստակ և բացայայտ ըլլալու է. զարդ ամենևին չվերցըներ, իսկ եռանդուն կրնայ զուրցուածք՝ ամենաքիչ. և եթէ ներդաշնակաւորութիւնն ալ տալ հարկ ըլլայ, աւելի ականջը չխայթելու համար քան եթէ զուարճացընելու համար գործածելու է զայն։ Պարզ ոճ ունենալու համար ուրիշ բան պէտք չէ ընել, բայց եթէ իր մտածութիւնն բացատրել. և Ֆենելոնի ըսածին պէս, խօսքն անանկ գործածելու է, ինչպէս անպատճառ մարդ մը զգեստը կը գործածէ, անոր անհրաժեշտ պէտք ունենալուն համար։ Ինքն իսկ Ֆենելոն կրնայ օրինակ ըլլալ պարզութեան ոճոյ։ Իր Տելեմաքայ ինանուտասներորդ գրոց մէջ ասանկ կը բացատրէ թագաւորութեան պարտքերն և անոր վտանգներն.

«Աւաղ, քանի խաբուսիկ է թագաւորութիւն, մածութիւն ևեթ և փառք և բերկրութիւնք նշմարին 'ի նմա 'ի հեռուստ, այլ 'ի մատոյ փչալից է համակ։ Առն սոսկականի մարթ է առանց պարսաւանաց անձնդիւր և անշան վարել կենցաղ. այլ ոչ է մարթ թագաւորի պարապել անպարսաւ յանձնդիւր և յանդորձ կեանս՝

անտես արարեալ զտաժանաւոր պարտս տեսչութեան։ Պարտի նա զանձն իւր Ժողովրդեան, և չէ օրէն նմա կեալ անձին. դուշնաքեայք իսկ թերութիւնք մեծ են յոյժ 'ի նմա, զի ածեն աղէտս 'ի վերայ Ժողովրդեան, է զի և տեսական իսկ ընդ դարս բազում։ Պարտ է նմա սանձահարել զստահակութիւն չարաց, ձեռն տալ անմեղութեան, և ցրել զզրպարտութիւն։ Զէ բաւական թէ չգործիցէ ինչ չար, այլ և բարիս պարտ է նմա որչափ մարթ իցէ յօգուտ աշխարհին գործել»։

Եղիշէի պատմութեան գրոցը մէջ շատ տեղ, մանաւանդ յառաջաբաններուն մէջ ոճոյ պարզութեան գեղեցիկ օրինակներ կան, որոնցմէ մէկքանին հոս դնենք.

« Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարիսն՝ որ անցք անցին անդէն 'ի կարաւանին ընդ գունդն Հայոց, սակայն և ոչ լռել կամիմք ծածկելով զվնաս նեղութեանն. այլ ասասցուք փոքր 'ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ՝ որք դառնապէս զմեզ ողբային. զի և դու իբրև լուիցես, ոչ սակաւ արտասուս հեղուցուս 'ի վերայ աղէտին թշուառութեան»։

« Մինչև ցայս վայր ոչ ինչ կարի զանգիտէի պատմել զհարուածս աղէտիս մերոյ, որ յարտաքին թշնամեաց ՀՀմարտութեանն չարաչար յարեան 'ի վերայ մեր. որք սակաւագոյնք հարին զմեզ, և յոլովագոյնք հարեալ դատան 'ի մէջ. քանզի դեռ ևս միաբանք և հաւասարք էաք։ Թէպէտ և ոմանք 'ի ծածուկ ունէին զերկմտութիւն նենդութեանն, սակայն յաչս արտաքնոցն ահաւոր երևէր միաբանութիւնն։... Արդ յայսմհետէ և անդր, ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն 'ի նեղբս, ընդ քակել միաբանութեանն՝ և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ, և անձնընտիրք լինելով՝ յոյժ բազմանայ լալումն ողբոյս»։

« Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ, իբրև զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդստին 'ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում անգամ 'ի բազումս տեղիս։ Մարդիկ՝ որ սիրոմբ Աստուծոյ իբրև զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանդիտելով, իբրև անարի գոլով վատասիրտք, կամ 'ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից կամ 'ի խողխողումն սիրելեաց, կամ 'ի գերութիւն ընտանեաց, ելանել 'ի հայրենի երկրէն և անկանել 'ի սարկութիւն յօտարութեան. առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի 'ի նմանէ միայն մի գերի ելցեն»։

Բնական ոճն՝ մասն մին է պարզ ոճոյն. սակայն անկից կը զանազանի ասով՝ որ աւելի խմաստից պարզութիւն կը պահանջէ, մինչդեռ պարզ ոճն մասնաւորապէս բառից պարզութեան վրայ կեցած է։ Մարմնոգել ասանկ կը սահմանէ զայն. « Բնականութիւնն է տեսակ մը ախորժելի միամտութիւն, անպարզութիւն և անկեղծութիւն, զորոնք մէկու մը վրայ տեսնելով, անոր քով աւելի առաւելութիւն մը ունեցողն պէս կ'երևանք. տեսակ մը տղայական պարզութիւն մին է՝ զոր կը սիրենք, և այս բնաւորութեամբ անձ մը երբեմն այնպիսի բացատրութիւններ կ'ընէ, զոր մենք մեր խոսակցութեանցը մէջ կը ջանանք պատրուակել. չենք կրնար առանց ժպտելու ուրիշներուն բերանը զանոնք լսել»։

Լաֆոնդէն շատ անգամ յիշատակուած է իբրև օրինակ բնականութեան։ Հետևեալ հատուածին մէջ ասանկ կը սորոգրէ կաթնավաճառ կինն, որ քաղաքը վաստակելիք ստակին վրայ առաջուց հաշիւներ կ'ընէր.

« Արդէն հաշուէր 'ի մտի
Զողջոյն ըղչահ կաթին, զարժանթն ծախէր.
Զուս գնէր հարիւր և թուխս հանէր երբակի.
Զեռնարկ գործոյն խնամոտ ջանիւքն յաջողէր։
Հէշտեաւ, ասէ, կարեմ ես
Ըզտամբս խմով սընուցանել ձագս հաւու.

Ճարտար գլուցի յոյժ աղուէս,
Եթէ ըղձող մի ինձ պահել չըթողու,
Որ պարարակ լիցի թեփով սակաւու։
Յորժամ առի, էր բաւական մարմնով յոյր,
Զոր վաճառեալ՝ գայցէ արծաթ ինձ շահու.
Դիւրին լիցի կարդել՝ի մեր անդ մըսուր,
Ըստ տանելոյ գլնոյն ըղկով և ըղհորթ,
Զորոյ տեսից ընդ հօտն առնուլ վաղս ընդոստ։
Ինքն իսկ Բերէդ անդէն կայթէ առ խընդին.
Կաթնըն թափի, հորթ կուլ խոզ թուխս չիք լինին»։

Բնականութեան օրինակ է նաև Խորենացւոյն այս կտորը.

« Էր երբեմն (Շապհոյ և Աթոմայ) զհետ երամակաց ցուցց յանդգնագոյնս արշաւել ընդ խորտաբորտս և վիմուտ տեղիս, յորմէ կասել սկսաւ Շապուհ։ Իսկ Աթոմայ մոկացւոյ եպերեալ զնա, ասէ. Գնա, գնա, ասուածորդեդ Պարսից, եթէ այր իցես։ Եւ նա ասէ. Դու երթիջիր, զի 'ի քարինս գիւաց է շահատակել։ Դարձեալ յայլում ժամու գիպեցաւ 'ի շամբս՝ կինձս որսալ հրով. և Շապհոյ ոչ համարձակեալ 'ի թաւուն քաջարշաւ լինել, մինչև շրջապատեր հուրն և նորա զհայեցուածսն յերկուս բաժանեալ, այսր անդր բերեալ լինէր երիվարաւն։ Միւսանգամ ասէ Աթոմ. Ասուածորդեդ Պարսից, ահա հայր քո և աստուած, ընդէր զանգիտես։ Իսկ Շապուհ ասէ. Թողեալ զկատակերգ՝ յանցանել ընդ հուրդ դարձո զքեզ, որ և ես զկնի քո. քանզի յառաջէն՝ ձիս իմ խրաչի։ Յայնժամ այպանեաց զնա Աթոմ ասելով. Մի թէ և այդ քարինք իցեն, զի ես յառաջեցից. և արդ եթէ դու զմոկացիս կոչես գիւազգիս, ես զսասանեանսդ կոչեմ կնամարդիս։ Եւ մտրակեալ զերիվարն երբև ընդ հովիտ ծաղկանց անցանէր ընդ հուրն՝ զերծուցանելով զՇապուհ»։

Ընտանի ոճն սովորական խօսակցութեան և ընտանեկան ըսուած նամակաց ոճն է. քան զպարզ ոճն նուազ

յղկեալ է, բայց աւելի բնական և աշխոյժ է։ Մոլեռեր ամենայն էջերն օրինակ են այս տեսակ ոճոյ. գիտէ ընտանութիւն գործածել առանց իջնալու անոր հակառակ թերութեան մէջ, որ է նուաստութիւն և խեղկատակութիւն։ Դնենք հոս Յակոբոս անունով ծառայի մը խօսքերն առ Աբրահամ, որ անհրաժեշտ կ'ուզէ գիտնալ թէ թաղին մէջ իր վրայօք ինչ կը խօսուի.

« Եւ զի զայդ կամիս, ասացից քեզ համարձակ զի ընդ ամենայն տեղիս զքեզ ծաղր առնեն, և զամենայն ինչ պատմեն զքումմէ կծծութենէդ. և 'ի քոյ պատճառս՝ պէսպէս կատականս կուտեն զմեզ։ Ոմն ասէ զի տաս մանաւորս ինն տպագրել օրացոյցս, յորս կրկին յաւելուս զերեքօրեայ պահն և զայլ ծոմապահս, զի շահեսցիս ինչ յայնցանէ, 'ի նոյն և զամենեսին սուիպեալ. այլ ոմն, թէ կաս միշտ պատրաստական 'ի պայքար ընդ ծառայիդ մոանել՝ 'ի ժամանակս պարգևատրութեանց, կամ յորժամ արտաքս ուրեք ընդ քեզ երթայցեն, զի գտանիցես պատճառս չտալոյ ինչ առ նոսա. այլ ոք պատմէ զի անդամ մի յատեան կոչեցեր զկատու ուրուն 'ի քոյոց դրացեաց, վասն զզտին խոյոյ զմնացորդն ուտելոյն. միւս ոք ասէ թէ զգիշեր մի ըմբռնեցար երբ դու ինքնին զվարսակ ձիոց քոց 'ի բաց տանէիր, և նախորդն իմ կառավար եմ քեզ 'ի մթան չգիտեմ քանի հարուածս դաւազանի, զորմէ չկամեցար բնաւ խօսս արկանել։ Ի վախճանի, կամիս զի ասացից քեզ. չէ մարթ երթալ ուրեք ուր ոչ խաղ առնիցեն զքեզ թըշնամանօք. յառակ նշաւակի կաս ամենայն մարդկան. 'ի խօսելն զքեզն՝ կոչեն միշտ զքեզ ագահ և մանրակծծի, ճղճիմ և ռիշդ վաշխառու »։

Ծանր նիւթերու մէջ անդամ ընտանեկան բացատրութիւնն խմաստին ուժը կ'աւելցնէ։ Պոսիւէ՝ մահուան վրայ գրած քարոզին մէջ այս ոճով կը խօսի.

« Անդադար ահաւոն մարդկեղէն ազգի, զսերունդս զաւակացն ասեմ եկելոց 'ի ծնունդ, ըստ զարգանալ

իւրեանց և յառաջել՝ գոգցես ուսովք խթեալ ընկրկեն զմեզ յետս, ասելով. 'ի բաց կացէք, մեզ անկ է արդ փոխանակել զձեզ: Այսպէս, զոր օրինակ զայլոցն տեսանեմք անցանել զառաջեաւ, նա և այլք զմերս տեսանելոցն անցանել, որ և ինքեանք իսկ եկեղոցն զկնի իւրեանց զնոցն տեսել արասցեն յանդիման: Ասացից անգամ մի ևս, ո՛վ տէր. և զի՞նչ լինիցի մեզ: Եթէ հանդէպ ինձ արկանեմ զակն, որպիսի վայր անսահման՝ ուր չկամ ես. իսկ եթէ յետս անդրէն դարձուցանեմ, որպիսի ամբոխ սոսկալի՝ յորում ոչ ևս գտանիմ. և քանի դուզնաքեայ գրաւեմ վայրս յայդ անբաւ անդունդ ժամանակաց: Ոչ ինչ եմ ես. և փոքու այդր անչքեսէսի անմարթ է զատանել զիս յոչնչէն. 'ի ընուլ զթիւ առաքեցոյ միայն, որ և յայն իսկ չէի ինչ պիտանացու. և մարթէր արարուածոյ խաղուն գալ 'ի հանդէս, թէ և յետկոյս տեսլարանին կացեալ մնայի» :

Յաղագս զարդարուն ոճոյ.

Զարդարուն ոճն՝ առջիններուն պէս անշուք չէ. այլ նոյն իսկ բարձրագոյն նիւթերու մէջ ախորժելի կերպ մը կ'ունենայ: Ասոր մէջ յաջողելու համար, կարուկ և արագաթռիչ զուրցուածքներ, խօսքի ներդաշնակաւոր և զանազան տեսակ դարձուածքներ և ուրիշ ամէն կերպ բանեցընելու է, առանց ընակիր ախորժակի պարզութեան և փափկութեան դէմ բան մը ընելու: Բաւիղ ընտրութեան մէջ սաստիկ զգուշաւոր ըլլալու է. և ամէն անգամ յատուկ բացատրութիւնն բաւական չսեպելով, կերպով մը գործածական եղած բառից ծաղիկներն միայն առնելու է, և շատ անգամ ընտանեկան բառի մը տեղ՝ հանճարեղ շրջաբանութիւն գտնելու է: Ոսկեբերանի մէջ զարդարուն ոճոյ շատ գեղեցիկ օրինակներ կան, որոնցմէ մէկ հատ մը հոս դնենք.

« Աղէ ասա, 'ի պէտս բնակութեան սիւնք բազումք և խոյակքն ախաւեղադէսք, և ազգի ազգի դիմակք պատկերացն, և ոսկի խառնեալ ընդ նկարս որմոյն, և այլ ևս համապայծառ գոնակք երանդոցն, և ազգի ազգի դեղքն ընդ միմեանս 'ի ճամուկսն մտեալ, զի՞նչ օգուտ ելցէ, այլ հպարտութեան և պարծանաց և յօրանալոյ պատճառք են և աւելորդ անմտութեան: Ամենայն ուրեք կարևորաց պէտք են՝ որով կարօտ լցեմք, և զպէտսն վճարիցեմք: Տեսանեմ զի միաս է և ոչ օգուտ, և աւելորդ և անշահ. զի թէ աւելի պէտս ինչ չտայցէ, և ոչ վայելչութիւն երեսաց: Բանզի յորժամ ժամանակ 'ի վերայ անցանիցէ, յագի ակն, և չթուի ինչ վայելուչ, և յայտ է թէ չէ ինչ, բայց միաս միայն, այլ չտայ զայն իմանալ սնապարծութիւնն: Պաւղոս և զոր շահն կարծէր, զայն միաս համարէր վասն Քրիստոսի: Մինչև ցե՞րբ ընդ երկիր բևեռիմք, մինչև ցե՞րբ չնայիցիմք ընդ երկինս: Զտեսանիցէ՞ք զծերացեալն, զնարդ և ոչ զմիոյ ինչ զախորժելոցն յիշէն. չտեսանիցէ՞ք զվախճանեալսն, զմանս 'ի ծերութեան, զմանս 'ի մանկութեան. չտեսանիցէ՞ք զբազումս իսկ կենդանւոյն զրկեալս յընչեցն. զի՞ այնչափ ծնդիցիմք ընդ էրկայսս և չմնալիս. ընդէ՞ր այդչափ կապեալ լցեմք ընդ միասակարս. մինչև ցե՞րբ ոչ հարկանիցեմք բուռն զկայիցն և զմնացելոց »:

Այս ոճով և Եղիշէ նահատակեալ նախարարաց երանելի կանանց վիճակը կը նկարագրէ.

« Բազումք ամերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան

նոքա, և ոչ մի տունք տարեկանաց ոչ ածին զնոսա 'ի հեռաստանէ. 'ի Ճաշատեղս նոցա հայեցան և արտասուէցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ 'ի նոսա: Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միաք նոցա, ոչինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն: Սրտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և ջարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրոմբ: Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ Ոք 'ի հեռասստանէ, եթէ Երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին խղճք աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ 'ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրոմբ »:

Նոյն ինքն գարձեալ իր երկրորդ գրոց յառաջաբանն այսպէս կը սկսի.

« Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի և յամենայն բանէ խռովի և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին 'ի կեանս իւրում, և յանգիւտ կորուսան յուղարկի 'ի մահուան իւրում: Որպէս և ասաց ոմն 'ի հնումն. Մահ ոչ խմացեալ՝ մահ է, մահ խմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի 'ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի 'ի նմանէ: Եւ այս ամենայն չարիք մոռանին 'ի միտս մարդոյ յանուսումնութենէ: Կոյր զրկի 'ի Ճաւագայթից արեգական, և ոգիտութիւն 'ի կատարեալ կենաց. լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք: Որպէս մեծ է հոգի քան զմարմին, այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ »:

Պլուտարքոս իր ընդհանուր զարդարուն ոճոյն համար նշանաւոր է: Հեռեւեալ հաւաճանձին նկարագրութեան մէջ՝ մանաւոր Ճարտարութեամբ մը ընտիր և գեղեցիկ բացատրութիւններ կը գործածէ:

« Բարինք և մեռաղք՝ ողորկեալք մերովս արուեստիս, չկարեն գալ 'ի կշիռ ընդ այսմ ականակալ զարդուս բնութեան, որ Ճոխացոյցն զնա ամենայն պարգևօքն իւրովք, մասն ինչ ևեթ յայնցանէ առ այլսն 'ի թըռչնոց պարգևեալ: Թեթևութիւն և երագութիւն, աշխոյժ ժրութիւն, վայելչութիւն և Ճոխ զարդուց պաճուճանք, ամենայնն վիճակեալ է 'ի բաժին մանրիկ անասնոցն սիրայնոյ: Զհանդերձիւքն փայլէ զմրուխտն և կարկեհան և տպազիոն. բնաւ չաղտեղէ զնոսին փոշւոմն որ յերկրէ, և 'ի կեանսն համակ օդայինս՝ հաղիւ ուրեք վայրկեանս ինչ մերձենայ 'ի գալար. կայ միշտ ընդ օդս, ծաղկանց 'ի ծաղկունս սաւառնելով. և նմանեալ նոցին՝ գեղոմբ և պայծառութեամբ, 'ի նոցա անուշակ հիւթոցն սնանի, և բնակէ 'ի գաւառան՝ ուր նոքա փթթեալ նորոգին անդադար »:

Յաղագս նուրբ կամ փափուկ ոճոյ.

Նուրբ կամ հանճարեղ ոճ ունենալու համար պէտք է մտածութիւնն քողարկելով մը ցուցընել, կամ անոր մէկ կողմը միայն երևցընել, ընթերցողն կամ ունկնդրին թողլով որ ծածկեալ իմաստն գուշակելով զուարճանայ. մանաւորապէս ակնարկութիւն, բաղդատութիւն, հակադրութիւն, կախումն և ասոնց նման ձևեր գործածելու է: Երբ Նրբութիւնն զգացման հետ կը խառնուի, այն ատեն կ'ըսուի քաղցրութիւն: Փափուկ զուրցուածքն, գարձուածքով մը բացատրուած սրատաշարժ իմաստ մըն է: Նրբութիւնն՝ մտաց հետ միայն կը խօսի. իսկ փափկութիւնն՝ կը խօսի մտաց և սրտի հետ միանգամայն: Ֆոնդընէլ օրինակ է նրբութեան, իսկ Ռասին՝ փափկութեան:

Ֆոնդընէլ իր Յաղագս Բաղմաստուրութեան աշխարհաց գրուածքն

քին մէջ, երկրիս և լուսընթագին մեծութիւնն իրա-
ւու հետ բաղդատելէ ետև կ'ըսէ։

« Եթէ առ լուսընթագ աստեղն այդչափ փոքր է երկիր, ինքն լուսընթագն տեսանիցէ՞ ինչ զմեզ։ Կասկածեմ թէ դուցէ անծանօթք իցեմք առ նա. հարկ է զի տեսանիցէ զերկիր ուրեմն անգամ առաւել փոքր քան զոր մեք տեսանեմքն զնա. այլ և այդ կարի սակաւ է, բնաւ իսկ չտեսանէ զայն։ Աւասիկ զոր ինչ մերովսանն կարեմք դուշակել կարծեօք։ Իցեն 'ի լուսընթագն աստեղագէտք, որոց աշխատեալ 'ի յօրինել հեռադէտս զարմանագործս, և զգիշերսն գեղեցիկս ընտրեալ 'ի դիտողութիւն, յայտ ուրեմն ածեալ իցեն ընդ երկինս մոլորակ մի՝ ոչ բնաւ տեսեալ յառաջագոյն։ Զառաջինն օրագիր գիտնոց աշխարհին խօսի զայնմանէ. ժողովուրդ լուսընթագին անդէտ կայ զզրուցացն, կամ 'ի ծաղր ընդ այն հատանի. և խմաստասէրք, որոց կարծեացն գրութիւնք եղծանին սովաւ, դնեն 'ի մոռ չընծայել հաւատս ինչ այնմիկ. յերկբայս կայ որեարն զգօնամիտ։ Դարձեալ գիտեն միւսանգամ, և անդրէն տեսանեն զմոլորակն փոքրիկ, և հաստատեն յանձինս իւրեանց թէ ոչ երևոյթ ինն իցէ այն. նա և սկսանին իսկ կասկածել թէ իցէ նորա շարժումն զարեգակամբ. և յետ բիւրուց դիտողութեանց՝ գտանեն տարբեր զշարժումն լինել. և հուսկ ապա, արդեամբք բովանդակ աշխատութեանց խմաստնոցն՝ ծանօթանայ 'ի լուսընթագին թէ երկիրս մեր կայցէ յաշխարհի։ Հետաքրքիրք գնան տեսանել զայն 'ի ծայր հեռադիտին, և տեսաւորութիւնն անգամ հալիւ բաւական լինի հասանել առ այն »։

Ռասլինի Խիւիգենեանցն իր կենացը խնայելու համար հօրը աղաչելու կերպին մէջ սքանչելի փափկութիւն մը կայ.

« Կեանք իմ քո են պարգեաք, կամիս առնուլ յետս անդրէն.

Գոյր առանց մեղմեխանաց ըզքո հրամանագ առնել յայտ։

Նովին գոհ ակնարկութեամբ, նովին հրլու լի սրրտիւ
Որով զայրն ընկալայ՝ զոր խոստացեալ էր քո ինձ,
Գիտացից, թէ պէտք իցեն, 'ի պատարագ հրպատակ
Կարկառեալ զանմեղ գրլուխս 'ի Կաքաստայն պողովատ.
Եւ սրրոյն առ 'ի քէն հրամայելումն ածեալ,
Նրվիրեալ քեզ զամենայն զարիւն զոր դու ետուր ինձ։
Բայց թէ այս մեծարանք, և եթէ այս հրլութիւն
Արժանի յաչսդ թրվին այլում իմք հատուցման,
Եթէ մեր ողբական ցաւեն քեզ վիշտք և տագնապք,
Ցանդգնիմ ասել քեզ ասա, թէ յորում եմ վիճակի,
Մեծամեծ պատիւք արդեօք շուրջ պատէին ըզկեանս իմ՝
Բաւական 'ի փափաքել զի մի առցի այն յինէն,
Եւ 'ի խիստ ճակատագրին յափրշտակել յինէն զայն,
Մի այսպէս հուպ 'ի ծրնունդ իմ լինիցի վախճան իւր »։

Եւրիպիդէսի ողբերգութեան մէջ Իփիգենի՝ մահուան իր հոգւոյն վրայ աղդած սարսափն, և կեանքը թողլուն համար զգացած ցաւն ասանկ կը յայտնէ.

« Հայր, զծնդովքդ փարիմ. առ ոտդ տեսանես ըզդուսաբ, զոր դու սիրեցեր. մի հաներ յինէն զկեանս, յոր դեռ այն ինչ վայելել սկսանիմ։ Արդարև քաղցր է տեսանել զլոյս տուրընչեան։ Մի 'ի գիշերն յաւիտենական արկաներ զիս տարաժամ. . . Առաջին 'ի բարեաց՝ կեանքն են առ մարդիկ. քան զմահ գեղեցիկ՝ առաւել լաւ է կեանք տառապանաց »։

Այս կտորս Ռասլինի կտորին քով բերելով, ամենայն կերպով կ'երևնայ թէ պարզութիւնն յորմէ կը տարբերի 'ի փափկութենէ։ Ինչ որ առաջինն առանց իր գիտնալուն կը յայտնէ. երկրորդն թափանցիկ քօղով մը կը ծածկէ զայն։

Հանճարէդ ոճն՝ թէ մտածութեանց և թէ զգայուն

իմաստից համար գործածելու առեն, ինչպես Ֆոնդը-նելի հատուածին և Ռասինի տողերուն մէջ տեսանք, ոչ երբեք սաստիկ տառտուրեամբ՝ այլ ըստ պատշաճին գործածելու է։ Մատենագիր մը կ'ըսէ թէ օր մը մարդկային սրտի բաւական ճանաչողութիւն ունեցող մարդու մը՝ ներկայացուելիք խաղու մը վրայօք իր կարծիքը հարցուելով, պատասխանեց թէ այդ խաղին մէջ այնպիսի հանճարեղ ոճ մը կայ, որ անոր յաջողելուն վրայ կը տարակուսի։ Եւ իրաւցընէ նուրբ, հանճարաւոր և փայլուն իմաստներն յոռի ճաշակի զարդ մըն են, երբ ուղիղ մտածութեան կամ կրից լեզուն կը պակսի։

Յաղագս համառօտ և պարզերական ոճոյ.

Համառօտ ոճն որչափ որ կարելի է քիչ բառերու մէջ կը պարփակէ իմաստը։ Ճշգրտութիւնն կը պահանջէ աւելորդ բան մը չդնել. իսկ համառօտութիւնն անկեց աւելին կը պահանջէ, այսինքն կարելուն անգամ վերցընել, և միայն իմաստին բացայայտութեանն համար անհրաժեշտ հարկաւոր եղածն պահել։ Համառօտախօս ըլլալու համար հարկ չէ զարդերը մէկդի ձգել. կրնայ նաև ձևեր ալ գործածուիլ, բայց ոչ այնչափ շարադրութեան վայելչութիւն մը տալու, որչափ զայն աւելի ազդոյ ընելու համար։ Ոչ երբեք մէկ իմաստ մը երկու անգամ կրկնելու է, և այնպիսի զօրաւոր ու ամփոփ զուրցուածքներ գտնելու է որ կերպով մը իրենց բացատրածին աւելի իմաստներ ընթերցողին մտացը հայթայթեն։ Այս տեսակ ոճը մանաւորապես կը յարմարի բարոյական խորհրդածութեանց և առածից, որոնք որչափ կարճ ըլլան, այնչափ աւելի միտք կը պահուին. զոր օրինակ Լապրեյէրի այս խօսքերն.

« Երեք պատահարք են մարդոյ. ծնունդ, կեանք և մահ. ծնանիլ յանզգայս, մեռանիլ նեղութեամբ, և կեայ մոռացութեամբ »։

« Բաղումք 'ի մարդկանէ անցուցանեն զառաջին կէս կենաց իւրեանց յաղէտս թշուառութեան կիսոյն երկրորդի »։

« Երկու ինչ հակառակք միապէս կանխեալ գրաւեն զմեզ, նորութիւնն և սովորութիւն »։

Ռոշֆուքոյ իր մտածութիւններն մեծաւ մասամբ այնպիսի համառօտութեամբ մը կը բացատրէ, որ աւելի ազդութիւն մը կ'առնուն։ Ասանկ են անձնասիրութեան վրայ ըսածներն.

« Զոր ինչ բարի և ասասցէ ոք զմէնջ, ոչ նոր ինչ ուսուցանէ առ մեզ »։

« Զորս ըստ մերոց կարծեացս խորհիցին, զնոսին ևեթ ուղղամիտս համարիմք »։

« Դժոխքմբեր լինի մեզ այլոցն մնափառութիւն, քանզի զմերն աղաղակեալ ընդ վայր հարկանէ »։

Մոնդեսքիէոյի մեծին Կարողոսի վրայ ըրած նկարագիրն օրինակ է համառօտութեան.

« Զօրութիւն հանճարոյ իմաստութեանն միաբանեաց զամենայն։ Մեծութիւն պետական գլխոյն կանգուն կալաւ զմիահեծան տէրութիւնն։ Մեծ էր ի չխնայն, այլ առաւել ևս էր մարդն։ Յարդարեաց կարգս զարմանալիս, և աւելի ևս արար, տուեալ 'ի գործ արկանել զնոսին։ Երևի յօրէնս իշխանին ոգի ի մեն յառաջատեսութեամբ, և անընդդիմակ զօրութիւն։ Պատճառք զանցառութեան պարտուց հատան 'ի միոյ, ուղղեցան անհոգութիւնք. բարձան անկարգութիւնք, կամ կարգեցան հնարքք ունելոց զառաջս նոցին։ Գիտէր նա պատուհասել, և գիտէր ներել մանաւանդ։ Այնուհետև էին խորհուրդք մտացն, զորս անփառունակ ի մեն պարզութեամբ 'ի կատարումն ածէր. ոչ ոք երբեւ զնա գտաւ հնարիմաց և յաջողակ 'ի մեծամեծս, և 'ի գժուարինսն պատրաստական »։

Պարբերական ոճն՝ հոմառօպ ոճոյն հակառակն է։ Պարբերական ոճ է փոխանակ խմաստ մը մեկ խօսքով զուրցելու, զանազան ձևերով բացատրել զայն. փոխանակ բովանդակելու, մանր քննել, և խմաստը պարզել, ոչ թէ կարուկ և պարզ խօսքերով, այլ մէջէ մէջ դարձուածքներով, և պարբերութեան գլխոյն մէջ դրուած կերպերով։ Նմանցուցած են զայն գետի մը, որ փոխանակ շիտակ ճամբով իր ընթացքն ընելու, երկայն շրջաններ կ'ընէ։ Մասնչեռն օրինակ է պարբերական ոճոյ.

« Եթէ ընդ մեզ վախճանել պարսի ամենայն, եթէ յետ կենացս ակն ունել խմբ չկայցէ ինչ մարդոյ, և եթէ ասասէն խցեն հայրենիք մեր և ծագումն և յուսացեալն առ 'ի մէնջ երանութիւն, վասն էր ապա չեմք երջանիկք յաշխարհի։ Եթէ միայն առ 'ի վայելս զգայութեանց ծնանիմք, ընդէր ոչ շատացուցանեն զմեզ, և միշտ թողուն 'ի սիրոս մեր զհետս ինչ տաղտկութեան և թախծութեան։ Եթէ չկցէ մարդոյ 'ի վերոյ ինչ քան զկենդանիս, ընդէր չանցուցանէ զաւուրսն իբրև զնոսա՝ առանց իրիք հոգոց և խռովութեան, առանց տաղտկութեան և տրտմութեան՝ վարելով կեանս երանաւէտս 'ի բերկրանս զգայութեանցն և մարմնոյն։ Եթէ արտաքոյ քան զժամանակաւորն չկայցէ այլ երանութիւն՝ յոր յուսասցի մարդ, ընդէր չգտանէ զայն ուրեք 'ի վերայ երկրի։ Զի՞ է զի տագնապեն զնա ճոխութիւնք, պատիւքն վաստակեցուցանեն, վայելք հաճոյեցն տաղտկացուցանեն, գիտութիւնք չիոթեն զնա, և փոխանակ հանդարտելոյ՝ և ևս զհետաքննին միտն գրգռեն. համբաւն նեղէ զնա և 'ի վարանս արկանէ. և այս ամենայն միանգամայն չկարէ ընուլ զանբաւութիւն սրտի նորա, և դեռ թողու ինչ որում փափաքէ »։

Յաղագս ազդողական ոճոյ.

Ազդողական ոճն ոչ այնչափ բառերով, որչափ սիրտ շարժող և արծարծող խմաստից ընտրութեամբ կ'ըլլայ։ Բացագանչութիւն, բացագարձութիւն, դիմառնութիւն, և ամէն կիրք բացատրող և բառից զօրութիւնն աւելցնող ձևերն, ինչպէս կրկնութիւնն, փոխաբերութիւնն և ուրիշ տեսակ փոխակերպութիւններն, ազդողական ոճոյն կարևոր մասունքն են։ Այս ոճով Գոռնէյլի ողբերգութեան մէջ Ծերունին Ռոդրատոս իր որդին կը պաշտպանէ.

« Սարդենիք, ուղեցքդ սուրբք, որ արդ դարձիք 'ի փոշի,
Որ ըզդլուխս իւր պահպանէք 'ի կայծականցն շանթից,
Մատնիցէք ուրեմն ըզնա 'ի սայր անարդ երկաթոյն՝
Որ ձեռաք դահճին տապաստ ըզչարագործն արկանէ։
Թողուցո՛ք, Հռովմայեցիք, զի զենուցուն ձեզ զայր մի,
Որ թէ չէր, այսօր Հռովմ՝ ոչ ևս այլ բնաւ լինէր Հռովմ,
Զի Հռոմոբ հնարեսցի ըզծաւորել ըզհամբաւ
Ֆաբի առն՝ որով բընաւք ժառանգեցին ըզպարծանս։
Ե՛կ ասա մեզ, Վաղեր. թէ ընդ կորուստ իւր ցանկաս,
Ո՞ր ընտրել ըզտեղի պատուհասին խորհիցես.
Պարըսպացս 'ի նեղքոյ՝ ուր բիւրաւոր բարբառովք
Հրուշակք քաջարութեանց իւրոց հընչեն տակաւին.
Արտաքո՞ց պարըսպացս՝ և 'ի տեղիսն յայնոսիկ
Որք ծրնեն տակաւին 'ի Կուրատեանցն արենէ.
Ընդ շիրիմն երեսին և յասպարէզ անդ փառաց,
Որք վրկայք քաջութեանն և մեր բաստիցս կացին։
Ի պարիսպսն և արտաքոյ՝ բընաւք զիւր փառսըն պատմեն »։

Ինչպիսի՞ ազդողական կերպով Ռուսոյ կը խրատէ յիմար պատանի մը, որ կ'ուզէր ինքզինքն սպաննել.

« Օրէն եկէ քեզ ուրեմն գագարէ՛ի կենաց: Ապաքէն դիտէլ կամիս թէ արդեօք սկսաւ կեալ: Իսկ զնաւդ. կարգեցար դու յերկրի, զի ոչ ինչ գործիցես: Զեռուն քեզ երկինք զոյգ ընդ կենաց և պարտս ինչ՛ի կատարել: Եթէ յառաջ քան զերեկոյն վճարեցեր զաշխատութիւնդ, իշխանութիւն է քեզ՛ի մնացուածս աւուրն հանդչել. այլ բեր զվաստակդ տեսցուք: Զի՞նչ ասցես պատասխանի առ դերագոյն դատաւորն, որ համարս զժամանակեդ պահանջեսցէ առ՛ի քէն: . . . Ո՛վ հեք չուառական. գիտ ինձ զայր արդար՝ որ պարծիցի եթէ եկեաց բաւական. ուստայց՛ի նմանէ զնա՛ւդ արժան եկէ զկեանս վարել, զի զայն լքանելոյ երաւունս ունիցիմ:

« Քա՞ղ իսկ՛ի դէպ է քեզ իշխել խօսել զմահուանէ, մինչդեռ՛ի պէտս նմանեաց քոց պարտիս զկեանս վարել: Գիտասջիր զի խորհեալն՛ի քէն մահ այդպիսի՝ ամենաթալից է և դաղտամեռտ. և մարդկան ազգի ժառանգութեանն գողութիւն: Զև թողեալ զմարդիկ, հատո՛ նոցա զվոխարէնն զորոց ընկալարն՛ի նոցանէ: Բայց ես, ասես, թափուր եմ յամենայնէ. . . և անպէտ յաշխարհի: Ո՛վ երկիւղանդ իմաստասէր. մի թէ ոչ դիտիցես, զի չկարես փոխել յերկրի և ոչ զքայլ մի ոտին, ուր ոչ դատանիցես զպարտս ինչ առ՛ի ընուչ. և զի ամենայն մարդ, այնու զի կայ՝ օգտակար է մարդկութեան:

« Լո՛ւր ինձ, պատանեգ անհանճար. սիրելի ես ինձ, և կարեկից ընդ մեղորութիւնդ լինիմ: Եթէ կայցէ՛ի խորս սրտիդ խուն ինչ ազդումն լաւութեան, էկ ուսուցից քեզ սիրել զկեանս: Եթէ դամ մի հասանիցէ քեզ փորձութիւն ելանելոյ յաշխարհէ, ասա՛ ցանձն քո. գործեցից և գործ մի բարի, մինչև մեռեալ իցեմ: Ապա եթէ խնդրել զայր աղքատ՝ որում ձեռնտու լինիցիս, զտառապեալ ոգի՝ առ. որ մատուցցես մխիթար.

զզրկեալ ոգի՝ որում պաշտպան լինիցիս: Եթէ այդ մոտածութիւն պինդ ունի զքեզ այսօր, պինդ կալցի և զվաղուն, և զմիւս վաղուն, և զբովանդակ կեանս քոյ: Իսկ եթէ չկալցի զքեզ, մեռիր ապա. զի այր անզգամ ես »:

Յաղագս վանմանի.

Մատենագրական գրութեանց մէջ ՀԷՄ կոչուածն ուրիշ բան չէ, բայց եթէ պարզ ոճով վսեմ իմաստից բացատրութիւն: Լոնգինոս կ'ըսէ թէ վսեմ են այն իմաստներն որոնք զհոգին ինքիրմէ դուրս յափշտակելով, ուրախութեամբ և զարմանքով կը լեցընեն զայն:

Աստուծոյ գաղափարն, մարդուս ըմբռնած գաղափարաց ամենէն վսեմն է. վասն զի ամբաւ կարողութեան պէս մարդկային տկարութեան աւելի հակառակ բան մը չկայ: « Իսկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար՝ի վերայ անդնդոց. և հոգի Աստուծոյ շրջէր՝ի վերայ ջուրց: Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս: Եւ եղև լոյս »:

Ասին, սուրբ գրոց այս խօսքերէն ներշնչեալ, ասանկ կը բացատրէ Աստուծոյ ամենակարողութիւնն.

« Լոկ բարբառովն երկինք գոյան, ծով խուսէ.
Զողջ տիեզերս իբրև զչինչ նրկատէ.
Եւ տկար մարդիկ, սին խաղալիկք օրհասին,
Են առ նրմա՝ որպէս թէ բնաւ իսկ չէին »:

Աստուծմէ ետքը աշխարհիս վրայ ամենէն վսեմ բանն մարդուս մտաց հաստատութիւնն է՝ որով ճախողութեանց դէմ կը դիմանայ: Վսեմէ Մարիոս, երբ Սէքստիլիոսի պատգամաւորին կ'ըսէ. « Գնա զուրցէ բդեշխի փոխանորդին որ Մարիոսը Կարթեգոնի աւերակացը վրայ նստած տեսար »: Յուլիոս Կեսար ծպտեալ նա-

ւարկելու ժամանակ՝ սաստիկ մրրիկ մը եկաւ, որ նաւը վտանգի մէջ էր. և երբ նաւավարն կը ջանար նաւը նորէն դէպ 'ի ցամաք դարձընել. « Զի՞ երկնչիս, կ'ըսէ, զկեսար տանիս »։ — Երբ Պորրոս Հնդկաց Թագաւորն մեծ պատերազմի մը վերջը անձնատուր կ'ըլլար Աղեքսանդրի, հարցուց իրեն Աղեքսանդր. « Իբրև որո՞ւ հետ վարուիմ հետագ ». ան ալ պատասխանեց. « Իբրև Թագաւորի մը հետ ». — Վահան մամիկոնեան, Նիխորոյ՝ Պարսից մարզպանին բանակը մոնելու ժամանակ, հրաման տուաւ իրենելուն որ փող զարնեն, որ օրենքի դէմ էր։ Եւ երբ Նիխոր խմացուց իրեն թէ այդ բանն Արեաց սպարապետէն զատ ուրիշի մը չէր կրնար ընելու, ըսաւ Վահան. « Նախ արա զիս ծառայ Արեաց տեառն, և ապա գիտեմ ես զԱրեաց աշխարհի զկարգ և զարժանն »։ — Նոյնպէս երբ Թաթիոյ՝ Հայոց զօրավարին ձին պատերազմին մէջ վիրաւորուելով, և ինքն ալ դէրի բռնուելով, Տուղսկայ՝ պարսից Թագաւորին առջև տարուեցաւ, և Թագաւորն իրեն ըսաւ որ եթէ իրմէ վերաւորած պարսիկ նախարարի մը որդին մեռնելու ըլլայ, ինքն ալ կը սպաննէ. իսկ եթէ ապրի, ինքն ալ կ'ապրեցընէ, պատասխանեց Թաթուլ. « Թէ իմ է զարկածն, չէ կենաց »։ — Գոռնէյլի ողբերգութեան մէջ Մէդէա Թշուառութեան վերջին ծայրն հասած, ինքիրմէն ջոյնահատիր.

« Զի՞նչ յաղէտս այդ ահագին՝ մընայ քեզ այլ։ — Ե՛ս ինքնին,

Ե՛ս, ասեմ, և շատ է այն »։

Ինք զինքը զոհելու և իր անձը նուիրելու գաղափարն վսեմ է, վասն զի քան զմարդկային կարողութեան սահմանն կ'անցնի։ Վսեմ է այն մարդն՝ որ հասարակաց բարւոյն համար իր անձնական յօժարութիւններն կը զոհէ.

« Ընդդէմ երից զի՞նչ կամիր թէ առնէր։ — Թող մեռանէր »։

Դահճաց ներելը, անիրաւ պատժոյ մը առանց տրտունջալու համբերելը՝ առաքինութեան կարգէ դուրս ճիգն մըն է. անոր համար ինչ խօսքեր որ պղատոն Սոկրատայ մահուան ժամանակ անոր բերանը կը դնէ, չկայ անոնց մէջ բառ մը որ վսեմ չըլլայ։

Ժամանակակից բանաստեղծ մը (Ռայնուար) տաճարականաց տանջանքն պատմելու ատեն՝ ասանկ վսեմ ոճ մը կ'առնու.

« Ոչ ևս այլ երևէին. այլ նոցին ձայնքն արիականք
Երգէին ըղձաւերժին զօրհնեցդութիւնսն ըսքանչելիս.
Ըստ բոցոյն վերանալ՝ և ձայն երգոցն աղօթական
Բարձրանայր ընդ նրմին և ընդ երկինս վերանայր։
Երևեալ հրեշտակ քոյին, աղաղակէր. . . անհուն ամբոխ
Ընդ նրմին աղերսելով ըղգթութիւն քո հրաշափառ,
Անդէն առ պատժարանն երթեալ գիմէր վաղվաղակի. . .
Բայց այլ չէր ժամանակ. . . ձայնք օրհնութեանցն էին լըռեալք »։

Վսեմ ոճով բացատրութեանց շատ օրինակներ կան մարգարէութեանց և Սաղմոսին մէջ. հոս քանի մը հատը միայն յիշենք.

« Վախճանաւ և շարժմամբ է ճանապարհ Տեառն. հողմ երիվար նորա, և ամպ՝ փոշի ոտից նորա. սաստէ ծովու, և ցամաքեցուցանէ զնա. լերինք շարժեցան 'ի նմանէ և բլուրք. խաւարեցաւ երկիր յերեսաց նորա, և համօրէն ամենայն բնակիչք նորա »։

Վսեմէ Յովբայ վախի վրայ ըրած բացատրութիւնն. « Արհաւիրք և բոմբիւնք գիշերականք, հասեալ ահ 'ի վերայ մարդկան, դողումն և սոսկումն պատահեցին ինձ, և մեծապէս զոսկերս իմ շարժեցին։ Եւ էին հողմ 'ի վերայ երեսաց իմոց, քամեցին հերք իմ և մարմինք։ Կանգնեցայ՝ և ոչ գիտացի. տեսի և ոչ էին կեր-

պարանք առաջի աչաց իմոց, բայց միայն օդ և սոսափիւն լսէի »։

Նոյնպէս և ձիուն սորագրութիւնն. « Որոտայ 'ի դաշտի և դափր հատանէ. ելանէ 'ի դաշտ զօրութեամբ. 'ի պատահելնեսից՝ արհամարհէ, և ոչ դարձցի յետկաթոյ։ Ի վերայ նորա շողան աղեղն և սուսերը, և շարժիւն վահանի և նիզակի. և բարկութեամբ ապականէ զերկիր. և ոչ հաւատայ մինչև փող հարկանիցի, և երբև փող հարկանի, նա վաչ վաչ կարդայ. 'ի հեռաստանէ առնու զհոտ պատերազմի, վազս առնելով և փռնչելով »։

Այսպէս Իմաստունն կը նկարագրէ զԱհարոն, որ մեռելոց և կենդանեաց մէջ կեցած, կ'ելեցընէ Աստուծոյ բարկութիւնը, երբ ժողովուրդը կը ջարդէր. « Փութացեալ ոյրն անարատ, մատեաւ յառաջ 'ի կռիւ իւրով պաշտաման զինուն, աղօթիւք և խնկօք ուղերձեալ զքաւութիւնն. եկաց ընդդէմ բարկութեանն, և արար վախճան հարուածոցն, յայտ արարեալ թէ քո ծառայ է։ Յաղթեաց բազում ամբոխի, ոչ զօրութեամբ մարմնոյ, և ոչ զինուց ազդեցութեամբ, այլ բանիւ զտանջիչն հնազանդեաց։ Զերդմունս և զդաշինս հարցն յիշատակեալ, շեղջաշեղջ դիականցն անկելոց առ միմեանս կացեալ 'ի մէջ դադարեցոյց զբարկութիւնն, և եհերձ ճանապարհ ընդ մէջ կենդանեաց և մեռելոց։ Բանզի 'ի պճնաւոր հանդերձին էր ամենայն աշխարհ, և փառք հարցն՝ 'ի չորեքկարգեան ականն քանդակեալս, և մեծութիւն քո՝ 'ի վերայ թագի գլխոյ նորա։ Յայնց խորշեցաւ սատակիչն, և 'ի նոցունց զարհուրեցաւ »։

Նոյնպէս երբ Աստուծոյ արդարներն պաշտպանելը կը նկարագրէ.

« Բայց արդարք յաւիտեան կեցցեն, և 'ի տեառնէ վարձք նոցա, և խնամք նոցա 'ի բարձրելոյն։ . . Զի առջով իւրով հովանի լեցի նոցա, և բազկաւ իւրով վերա-

կացու լեցի նոցա։ Առցէ սպառազինութիւն զնախանձ իւր, և վառեսցէ զարարածս առ 'ի խնդրելոյ վրէժս 'ի թշնամեաց։ Զգեցցի զարահս զարդարութիւն, և դիցէ սաղաւարտ զդատաստանն անաչառ։ Առցէ վահան՝ զսրբութիւն անվրկանդ, և սրեսցէ զհատու բարկութիւնն 'ի սուսեր։ Պատերազմեսցի խառն ընդ նմա և աշխարհս առ անզգամս. դնասցեն նեռք կորովիք փայլատակաց, և իբրև 'ի լայնալեռ աղեղանէ յամպոցն ոստիցեն 'ի նպատակս, և 'ի քարընկէց բարկութենէ լիով թափեսցի կարկուտ. զայրագնեսցի 'ի վերայ նոցա ջուր ծովու. և դեռք ողողեսցեն յանխնայ. 'ի դիմի հարցի նոցա հոգմ բռնութեան, և իբրև զմրրիկ հոսեսցէ զնոսա։ Աւերեսցէ զամենայն երկիր անօրէնութիւն, և խարդախութիւն կործանեսցէ զաթոռս բռնաւորաց »։

Ո՞րչափ վսեմ ու ահաւոր է Սաղմոսին այս նկարագրութիւնը.

« Խռովեցաւ և դողայ երկիր, և հիմունք լերանց սասանեցան և խռովեցան. զի բարկացաւ 'ի վերայ նոցա Աստուած։ Ել ծուխ 'ի բարկութենէ նորա, և հուր յերեսաց նորա բորբոքեցաւ, և փայլատակունք հատան 'ի նմանէ։ Խոնարհեցոյց զերկինս, և էջ. և մէգ 'ի ներքոյ ոտից նորա։ Ել 'ի քրովբէս և թռեաւ, սլացաւ նա 'ի թևս հողմոց. եդ զխաւարն 'ի ծածկոյթ իւր, և շուրջ զնովաւ են յարկք իւր, և խաւարային ջուրք մինչև յամպս օդոց »։

Վսեմ է և Ամբակումայ այս խօսքը. « Եկայ, և շարժեցաւ երկիր. հայեցաւ, և հալեցան ազգք. լերինք խորտակեցան ընդունութեամբ, և բլուրք յաւիտենականք հալեցան »։

Յայսմ մասին սքանչելի է Հոմերոս. քերդողներէն ոչ ոք իմաստից վսեմութեան և միանգամայն խօսքերու պարզութեան մէջ իրեն կը հաւասարի։ Շատ վսեմ կերպով տրոյական պատերազմին ժամանակ աստուածոց դղրդիւնը կը նկարագրէ.

« Իսկ յորժամ'ի դուռմարտակն արանց հասին Ոլիմ-
բականք,
Հեռ սաստիկ ամբոխագոյթ յարեաւ, գոչէր անդ
Աթենաս
Կացեալ մերթ առ փոսոյն՝ որ ըստ պատնէշն'ի դուրս
հատեալ,
Եւ մերթ՝ առ բազմագոչ ծովուն ափունս ուժգին
գոռայր:
Կանչէր անդուստ և Արէս՝ խաւարակուռ մրրկի
դունակ,
Մեծառձայն 'ի քաղաքին գղեկէ գբրդեալ ըղարո-
վացիս,
Եւ երբեմն առ Սիմոյեաւ'ի Գեղասար գիմեալ բը-
ղուր:
Զերկոսին այսպէս կողմանս յորդորեալ գիքն երջան-
կաւէտք՝
Արկին 'գիրեարս, և չարաշուք բրդեցին անդր 'ի մէջ
գուսպար:
Որոտաց ահեղաձայն և աստուածոց հայրն և մարդ-
կան
Ի բարձանց, իսկ Պոսիդոն դղղրդեցոյց'ի ներքուստ
Զերկիր անվայրափակ և զսարաբերձ լերանց կա-
տարս:
Համբէն ուղխապարար Իդայ հիմունք տատանէին
Եւ գագաթունք, և տրովեանց քաղաքն և նաւք աբա-
յեցւոց:
Զահի հարաւ և յանդունդս Այիդոնեւս սանդարա-
պետ,
Սոսկացեալ՝'ի գահէն 'դոստեաւ, փութընչեաց, գուցէ
զերկիր
Ի վերուստ պատառեսցէ գեանագղղորդքն Պոսի-
դոն,
Եւ կայեանք փեռեկեսցին՝ մահկանացուաց և ան-
մահից

Ահաւորք, խրրթնատեսիլք, յորոց աստուածք իսկ
քրստմընին.
Այնպիսի թընդէր բոմբիւն՝ դիցն'ի գուսպար շահա-
տակել »:
Յովհաննէս Մկրտիչ Ռուսոյ ալ Սաղմոսին խմաստնե-
բէն առած՝ այս վսեմ ոտանաւորը շինած է.
« Ի բարբառ ձայնի իմոյ երկիր համբուն զարթիցէ.
Ունկընդիր լերուք, տրքայք. առէք'ի միտ, ժողո-
վուրդք.
Լուռ լիցի աշխարհ ողջոյն, բանիւ իմոյ լուիցէ:
Զուգաձայն երգք իմ հընչէն իմոյ քնարիս քաղցրաղի.
Սուրբ հոգին 'ի ծոց իմ էջ, որ զիս վառեալ յորդորէ՝
Ըզպատգամս անբստերիւրս հընչել մարդկան ա-
կանջաց:
Երկրածինն'ի զօրութիւն բաղկին ըզյոյս իւր եդեալ,
Արբեցեալ'ի մեծութիւնս, 'ի ճոխ մրթերսրն գան-
ձեալս,
Ի շողիւն յողդողդ բաղդին ունայնութեամբ փրքա-
նայ:
Բայց ով զարհուրելի վայրկեան, ով օր սոսկալի,
Յորում մահ յափրշտակէ զեղեռնաւորն ընչաւէտ,
Կաշկանդեալ'ի մեղսալից իւրոց կենացըն չըղթայս:
Զինչ յայնժամ, ով ճոխք երկրի, պատասխանի տուք
ապէ,
Զինչ յայնժամ լիցին արարք, յոր հաստատէքդ ըզ-
յոյս ձեր,
Եւ պարծիք խրոխտալով'ի նոցին չեղջ մեծապանծ:
Հըպատակք և բարեկամք և ազգականք չիցեն ինչ.
Եւ յահեղ յաւուրն յայնմիկ մարդ մարդոյ չէ ապա-
ւէն.
Եւ ոչ ընդ ընկերին ոք տայ փրկանս առ Աստուած:
Տեսէք ըզգերապատառ գըլխոցն յերկիր անկանել.
Եւ իցէք տակաւին անդէպք, ով խօլք և յիմարք՝
Եթէ տալ անհրաժեշտ պարտիք ըզհարկըն մահու:

Ո՛հ ո՛չ, ոչ. ամենայնն անցցէ ընդ անցս այս ահեղ։
Մեծատունն և աղքատ, և մշտաւորն և անմիտ
Ընդ նովին օրինօք կան, և 'ի նոյն բախտ վիճակին։
Ընչաքաղց օտարականք, առ խընդութեանն յիմարեալք՝
Կողոպտեն զամենայն ըզճոխութեանցըդ մրթերս,
Զագարակս և զապարանս՝ անուամբ ձերով պերճացեալս։
Իսկ ձեզ զի՞նչ 'ի յետին ահեղ վայրկեանն այն մընայ.
Տըխուր գերեզման, յոր անուանք ձեր, դուք ինքնին
Անկեալ թաղեսջիք յաւիտենից 'ի գիշեր»։

Այս օրինակներս դնելէն ետև՝ այս ալ յայտնի զուրցելու է որ պարզ հռետորական արուեստին զօրութեամբ անկարելի է վսեմ իմաստներ ստեղծել։ Ցայսմ մասին անկարող է արուեստն. և ասոր պէտք է համզուինք, յիշելով վերջին դարու մատենագրի մը այս գեղեցիկ խօսքն թէ «Մեծամեծ իմաստներն սրտէն կուգան»։

Յաղագս ոճոյ պատկանելոյ զանազան տեսակաց շարադրութեան.

Ինչ տեսակ նիւթոյ վրայ որ կը խօսուի, անոր համեմատ հարկաւ ոճն ալ կը փոխուի. ինչպէս բանաստեղծն և ճարտասանն, պատմագիրն և փիլիսոփայն մի և նոյն ոճով չէն գրեր. վասն զի ինչ նիւթոց վրայ որ կը պարապին, անոնց մէջ զգալի զանազանութիւն մը կայ։ Ըրածնիս մատենագրութեան ընթացք մը չըլլալով, աւելորդ է հոս իւրաքանչիւր մատենագրական գրութեան յատուկ ոճոյն սահմանն տալ։ Միայն հարկ է բացատրել թէ շարադրութեան գլխաւոր տեսակներուն ոճն, այսինքն բանաստեղծական, ճարտասանա-

կան, պատմական, և փիլիսոփայական կամ ուսումնական ոճն ինչպէս պիտի ըլլայ։

Յաղագս բանաստեղծական ոճոյ.

Տողից չափէն և անոնց կազմութենէն զատ, որոնց վրայ տեղը չէ հոս խօսիլը, բանաստեղծական ոճն ունի իր մասնաւոր յատկութիւններն։ Բանաստեղծին ոճը բնական կերպով վառվռուն, կտրուկ և ձեւաւոր է. կը սիրէ զվոխաբերութիւն, և որ և է բառից բնական իմաստն այլայլող փոխակերպութիւններն։ Լեզուին ոգւոյն ներելուն համեմատ՝ հակադարձութիւն կը գործածէ. մակդիրներն ու բաղդատութիւններն կը յաճախէ. կենդանի նկարագրութիւն, բացագանչութիւն և գիմառնութիւն իր ախորժած ձեւերն են։ Երբեմն զմարդ բնութեան զանազան առարկայից հետ կը բաղդատէ, և երբեմն անկենդան իրաց՝ մարդկային կիրքեր և զգացմունքներ կուտայ։

Ի՞նչ աւելի բանաստեղծական բան կրնայ ըլլալ՝ քան սուրբը գրոց այս խօսքը. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»։

Ռասին ասանկ ըսել կուտայ Եսթերայ, որ Հրէից կուսորածն կը նախատեսէր.

«Ո՛վ երկինք, ծագեցէք ըզլոյս յահեղն 'ի նախձիր.
Ըզբնութիւն և ըզհասակ երկաթն ինչ ոչ խըտրեսցէ»։

Երկաթն ինչ ու խարբեոյն գեղեցիկ և յանգուշն բացատրութիւն մըն է։ Հոմերոս դեռ աւելի նորօրինակ զուրցուածքով մը կ'ըսէ.

«Երկաթ զնուռորին ցանկայ խոցել զանձն ոսոխին»։

Սաղմոսերգուին այս բանաստեղծական բացատրութիւնն՝ «Արկաւ զլոյս որպէս զօթոց, և շրջիս 'ի վերայ թեւոց հողմոց...» Ռասին Եսթերայ պարու մը մէջ անցուցած է այսպէս.

« Աստուած, պսակեալ 'ի փառաց,
Աստուած՝ համակ լուսազգեաց.
Թագաւոր 'ի թագս հողմոց,
Եւ զբարութիւնք բարձեալ զաթոռդ տանին »:

Վոլդեռի ոճն ոչ երբեք այնպէս բանաստեղծական եղած է՝ ինչպէս առ տիկինն Շադլէ գրած թղթոյն մէջ, յորում Նեւտոնի գիւտերն, Թաւալման օրէնքն և լուսոյ վերլուծութիւնն կը յիշատակէ.

« Վայրքն տարած, Աստուծոյ անբաւութեանքն պարփակիչ,
Դիտէ յիւր ծոցն ըղթաւալ սահմանաւոր տիեզերաց,
Որ լայնատարը երևեալ մերոց աչացքս տրկարաց,
Ի հիւլէ մի ևեթ, կամ կէտ 'ի մեծ տարածութեան:
Աստուած բարբառի. ցերուի թոհ բոհն 'ի ձայն նորին.
Եւ բերի ամենայն 'ի կենդրոն հասարակաց:
Հրաշքն այն զօրութիւն, ոգի բոլոր համադոյից,
Կայր թաղեալ 'ի խաւար նրսեմասուեր մութ գիշերոյ,
Կարակին Նեւտոնի ըղձիեղերքս չափելով,
Եւ բարձեալ ըղքօղքն մեծ, երկինք բացեալ դան 'ի տեսիլ:
Արուեստիւ ճարտար ձեռին պարզէ աչացս իմ յանդիման.
Զաստեղն եղանակաց ըզպատմուճան լուսաճաճանչ.
Զմրուխտն և կապուտակն և կարկեհան ընդ ծիրանւոյն՝
Ցօրինեն զանմահ կիտուած իւրոց ձորձոցքն լուսափայլ:
Մէն միյիւր ճառագայթից, յանխառն և պարզ իւր էութեան,
Ցինքեան զերանգսքն բերէ՝ որովք բնութիւն գունագեղի.
Ույց խառնեալ 'ի միասին՝ լուսաւորեն զականողիս.

Զաշխարհ շընչաւորին, լրցեալ զերկինս բովանդակ:
Մըտերիմք Բարձրելոյն, դոյացութիւնք յաւերժական,
Որ վառեալք 'ի հրոյ նորին՝ թեւապարփակ կայք հովանի
Աթոռոյն՝ ուր 'ի ձերում միջի ձեր տէրն անցեալ բաղմի,
Ասացէք, ոչ նախանձընդդէմ կացէք մեծին Նեւտոնի»:

Յաղագս ճարտարասանական ոճոյ.

Դժուարին է ճարտասանական ոճն որոշակի սահմանել. և իրաւացընէ ճարտասանն մի և նոյն կերպով միշտ չխօսիր. հարկ կ'ըլլայ ոչ միայն իր դատին, այլ անոր իւրաքանչիւր մասին պահանջածին համեմատ՝ ամէն կերպ առնուլ: Փաստաբան մը, ատենական դատի մը և քաղաքական խնդրոյ մը մէջ մի և նոյն ոճով չխօսիր: «Ճարտասանն, կ'ըսէ Կուինտիլիանոս, պէտք չէ որ յառաջաբանին, պատմութեան, փաստից և վերջաբանին մի և նոյն կերպը տայ »: Փոփոխակի պարզ, յանկուցիչ, ախորժելի, ծանր, խիստ, աշխոյժ, երանգուն և աղդոյ կերպ մը առնելու է. և քերդողաց ըրածին պէս, կիրքն ինչուան անկենդան բաներն անձնաւորելու աստիճանն հասցընելու է: Կիկերոն՝ ատենակալաց ժողովոյն առջև Կատիլինայի դէմ խօսած ճառին մէջ՝ հայրենեաց բերնէն կը խօսի:

Պոսիւէ իր Յաղագս արդարութեան քարոզին մէջ կը սկսի բացատրել ճառին նիւթը ծանր պարզութեամբ մը, որ կամաց կամաց կը սաստկանայ.

« Յանուանէն անդ զարդարութիւն, իմանամ զայն նուիրական իմն շաղկապ միութեան մարդկան, կարևոր սանձ ապերասան համարձակութեան, միակ հիմն հաս-

տատուութեան անդորը հանդստեան, արդար չափաւորութեան և քաղցը նեցուկ հպատակութեան: Յորժամ արդարութիւն թագաւորէ, անդ յայնժամ դոյ տեսանել 'ի դաշինս հաւատարմութիւն, 'ի տուրեւառս ապահովութիւն, 'ի գործառնութիւնս ուղղութիւն, և յօրէնս քաղաքայինս կարգաւորութիւն. յանդորրութեան կայ երկիր, և գոգցես երկինք խակ ինքեանն առաւել գեղեցիկ եմն յաչս մեր պայծառանան, և քաղցրագոյն աղդեցութիւնս ներգործեն 'ի մեզ»:

Այս հանդարտ ոճը կը փոխուի վերջէն, և կ'ըլլայ բուռն և եռանդնալից, երբ կ'ուզէ խայտառակել ղպալատականներն, որոնք զԹագաւորն կը խոտորեցընեն յարդարութենէ.

«Յետ միանգամ յանդիման կացուցանելոյ եթէ քանի կարևոր է աշխարհահոգ մարդկանն խնդրել զճշմարտութիւն, որպիսի սաստկութեամբ և որով բարբառով չլցէ մեզ արժան հակառակ ելանել այնոցիկ՝ որ ստայօդ քսութեամբքն զայն աղօտացուցանել ջանայցեն: Եւ թմ խմիք ակնկալեալ կայցէք, չուառականք. և զի՞նչ այդ հնարք ձեր լցեն: Կամիցի՞ք ուրեմն բառնալ յաշխարհէ զլոյս, և խաւարաւ պատել զորս պարտինն լուսաւորել զերկիր: Երկնէք խորհուրդս չարութեան, խաբէութիւնս նիւթէք, զմիմեանս նենդեալ խարդաւանէք, և ոչ շատ համարեալ խորհել զայդոսիկ 'ի սիրտս ձեր, յականջս խակ արքայի հասուցանել յանդգնէք: Աղէ ածէք զմտաւ՝ զի սուրբ են լսելիք նոցա, և գործովք այդուիկ չարաչար պղծէք զնոսին, արկեալ 'ի նոսա զկոյր քինախնդրութեան բարբանջանս, կամ զինասակար նենդութիւնս կեղծաւորեալ նախանձու, կամ զչարարուեստ հնարագիտութիւնս ծածկեալ մախանաց: Ապականել զականջս իշխանին մեծագոյն և սա եղեռն է՝ քան զհասարակաց աղբիւրս թունաւորել և քան զդանձս աշխարհին գողանալ. քանզի ճշմարիտ գանձ պետութեան՝ ճշմարտութիւնն է 'ի սիրտս իշխանաց»:

Ճարտասանն կը գործածէ երբեմն բաղդատութիւններ, որոնք քերթողական ոճոյն սովորական զարդն են: Վերոյիշեալ քարոզին վերջը՝ Պոսիւէ կ'ուզէ ցուցընել թէ մարդկային արդարութիւնն, աստուածային արդարութեան պէս՝ պէտք է գթութեամբ բարեխառնի.

«Միայն 'ի լուր անուանն գթութեան՝ գոգցես առաւել քան դիւր ընկալեալ կազդուրին մարդիկ. և անմարթ է ինձ լուել աստանօր զոր թագաւոր ոմն մեծ ասէ զայնմանէ. Ի զուարթութեան երեսաց թագաւորի՝ կեանք, ասէ իմաստունն Սողոմոն, և գթութիւն նորա՝ իբրև զանձրև անագան: Ըստ նկարագրական մտացն արժան է իմանալ զի այնքան քաղցր է առ մարդիկ գթութիւն, որքան անձրևն եկեալ ընդ երեկոյս 'ի մեղմել զտօթ տուընջեանն և զովացուցանել զերկիր՝ ցամաքեալ 'ի տապոյ արեգական»:

Յաղագս պատմական ոճոյ.

Կիկերոն իր Յաղագս ճարտարախօսի գրուածքին մէջ պատմական ոճոյ համար կանոններ կ'աւանդէ: «Պատմութիւնն, կ'ըսէ, դիւրընթաց, պերճ, և մանաւանդ միշտ միակերպ քաղցր ոճ մը կը պահանջէ»: Սակայն պատմական ոճն ամէն տեղ նոյն կերպն չունենար. պատմական գրութեանց մէջ աշխոյժ, շտապող և յափշտակիչ ըլլալու է. բարուց նկարագրութեան մէջ՝ զարգարուն և համառօտ, և մարդկային գործոց պատճառներն քննելուն մէջ հանճարեղ և թափանցող:

Կարողս երկոտասաներորդի պատմութիւնն՝ հեղինակին իբրև գլուխ գործոցը և պատմական ոճոյ օրինակ կը համարուի: Շուէտացի գիւցազին այլազգեաց բանակին դէմ ըրած անհաւատալի կռիւն շատ բնական և աշխոյժ ոճով կը պատմէ,

« Այլազգիք ասսի և Թաթարք անսի, 'ի նեղ արկանեն առ վայր մի զսակաւաձեռն բանակ Կարողոսի երկոտասանեարորդի։ Հազիւ արք քսան 'ի Շուրեսաց մերկացին զսուր. երեքհարիւր զինուորքն՝ շուրջանակի պաշարեալք՝ գերի վարեցան, ոչ ինչ եղեալ դիմակաց։ Թագաւորն հեծեալ 'ի ձի, կայր ընդ մէջ տանն և բանակին, ընդ իւր ունելով զզօրագլուխսն զՀորտ, զՏարտոքի և զԱբար. և յորժամ ետես յանդիման աչացն զամենայն զոյսն ձերբակալ եղեալս կամովին, ասաց անխրոով առ սպայսն երեսին. Օն երթիցուք պաշտպանել զտունն։ Եւ ապա յաւել ժպտելով. Մարտ եղեալ կռուեսցուք 'ի վերայ տանց և բաղնաց։

« Անդէն 'ի տունն արշաւեալ ընթանայ ընդ նոսա, ուր կացուցեալն էր 'ի պահ ծառայս իբր քառասուն, և որչափ մարթէրն՝ զտեղին ամրացուցեալ։

« Զօրավարքն այնոքիկ, թէպէտ ընդ աներկիւղ քաջասրտութիւն տեառն իւրեանց սովորեալք, չկարէին արգելուլ զզարմանս իւրեանց, տեսեալ զնա զի անվրդով և զուարթ բանիւք կամէր պաշտպանել զանձն ընդդէմ տասանց հրազենուց և ողջոյն բանակի զօրաց. և գնացին զհետ նորա, հանդերձ պահապանօք և սպասաւորօք ոմամբք, որ և լինէին քսան արք ընդ ամենայն։

« Այլ յորժամ հասին 'ի դուռն, գտին զայն 'ի տաճիկ զօրացն պաշարեալ. և ահա այլազգիք կամ Թաթարք իբր երկերիւր՝ ընդ պատուհանս ուրեք 'ի ներքս մտեալ էին և ամենայն յարկացն տիրացեալք, բաց յընդարձակ դահլճէ միոջէ, ուր ծառայք արքայի ամրացեալ էին։ Դահլիճն այն ըստ բախտի գտանէր մտս առ դուռնն, ընդ որ կամէր մտանել արքայ՝ փոքրու գնդաւն արանց քսանից. 'ի վայր իջեալ կայր յերիվարին, հրացանակն և սուսեր 'ի ձեռին. զնոյն արարեալ էր և արանցն որ ընդ նմա։

« Զօրք այլազգեաց յարձակին 'ի նա յամենուստ, սրբոտասնդեալք խոստմամբն եղելով առ նոսա 'ի նախարա-

րէն՝ տալ դահեկանս ուրթ առ մէն մի 'ի նոցանէ, որք միայն 'ի հանդերձս նորա մերձենայցեն, զի հնար լիցի ըմբռնել զնա։ Իսկ նա հարկանէր սատակէր զամենեսին՝ որ մտս առ ինքն հասանէին։ Այր մի յայլազգեաց խոցեալ 'ի նմանէ, հաստատեաց յերեսս նորա զհրացանն լայնափող. և եթէ չէր խախտեալ բազուկ այլազգւոյն 'ի դղրդելոյ անտի ամբոխին՝ որ դայր և գնայր հանդոյն կոհակաց, օրահաս մահու հասեալ կայր արքայի. գնտակն առ ունդամբքն սահեալ, զծայր ունկանն 'ի բաց տարաւ, և ջախջախեաց զբազուկ Հորտայ զօրավարին, որուամ վիճակեալ էր միշտ ընդունել վէրս առ երի տեառն իւրոյ։

« Եւ մեռեաց արքայ զսուր իւր 'ի կուրծս այլազգւոյն. և անդէն ծառայիցն արգելելոց 'ի մեծի դահլճին բացեալ զդուռնն, մտանէ արքայ 'ի ներքս իբրև զնետ, ինքն և փոքրիկ գունդն ընդ նմա. իսկ և իսկ փակեն զայն անդրէն, և զոր ինչ գտանէրն՝ բերեալ զամենայն, ածեն պատնէշ զնովաւ։ Եւ ահա Կարողոս երկոտասանեարորդ կայր 'ի դահլճի անդ, արգելեալ իւրովքն ամենեքումբք, որոց թիւ պակաս էր քան զվեթասուն, հանդերձ սպայիւք, պահապանօք, ատենադպրօք, սենեկապանօք և ծառայիւք յամենայն կարգէ։

« Զօրք այլազգեաց և Թաթարաց աւար հարկանէին զկապուտ տանն, և 'ի յարկսն խուժեալ խռնէին։ «Հապա, ասէ, երթիցուք վանեսցուք զխուժադուժդ 'ի տանէս». և 'ի գլուխս իւրոց արանցն կացեալ, ինքնին եբաց զդուռնն՝ որ հանէր 'ի սենեակն անկողնոց. և մտեալ 'ի ներքս, հուր 'ի վերայ աւարառուացն տեղայր։

« Այլազգիք ծանրացեալք աւարաւ, և պակուցեալք ընդ յանկարծ երևումն արքայի, յորմէ պատկառել ընաւորեալ էին, 'ի բաց զգէնսն Թողեալ, ոսանուն արտաքս ընդ պատուհանն և կամ յշտեմարանն անկանին ապաստան. անդ արքայի զնոցա չփոթ խառնակութեանն

պատեհ իւր առեալ, և իւրքն յաջողութեամբն սրտա-
պնդեալք, հալածական վարեն զայլազգիսն սենեկէ 'ի
սենեակ, և զորս ոչն փախչին՝ սպանանեն կամ վիրաւո-
րեն, և 'ի քառորդ մի ժամու սրբեն զտունն 'ի թշնա-
մեաց:

« Ի սաստկութեան անդ կռուոյն Եռեսս արքայ զեր-
կուս արս յայլազգեաց ընդ անկողնովն թաքուցեալս.
և սպան զմին 'ի նոցանէ 'ի մի հարուած սուսերի. իսկ եր-
կրորդն ընդերուն հայցեաց, պաղատելով զգթութիւն:
Շնորհեմ առ քեզ զկեանս, ասէ արքայ առ այլազգին,
եթէ միայն երթեալ նախարարին քում զոր տեսերն
պատմեսցես ճշդիւիւ: Մտադիւր խոստացեալ այ-
լազգւոյն զկնդիրն, թոյլ եղև նմա իբրև զայլն ընդ
պատուհանն ոստնուլ:

« Շուեռաց հուսկ ուրեմն տիրացեալ տանն, ան-
դրէն զպատուհանն փակեալ ամրացուցին: Զպակա-
սէին նոցա զէնք: Զի սենեակ մի ներքնայարկ, լի հրա-
ցանօք և վառօդով, զերծեալ էր 'ի խառնաշփոթ խու-
զից այլազգեաց: Ի դէպ իսկ վարեցան նոքօք Շուեռք,
որոց ընդ պատուհանն զամբոխս այլազգեաց հարեալ
չէշտակի, 'ի նուազ քան զկէս քառորդի ժամու՝ արս
երկերիւր սպանին 'ի նոցանէ:

« Հրազէնն ռումբս ընդդէմ տանն տեղայր. բայց
քարանցն կակուղ յոյժ գոլով, ծակոտեր ևեթ զայն,
առանց ինչ քանդելոյ:

« Ինչանն Թաթարաց և նախարարն, որք կամէին 'ի
ձեռս ածել զարքայ կենդանւոյն, ամօթահարք ընդ կո-
րուստ զօրացն բազմաց և ընդ վաստակ կռուոյ համա-
գունդ բանակի ընդդէմ վաթսուն արանց, 'ի դէպ դա-
տեցան հուր 'ի տունն արկանել, զի հարկեսցի արքայ
լինել անձնատուր: Եռուն արձակել նեռս պատա-
տ եալս պատրուգօք վառելոյք 'ի վերայ տանեացն, և
ընդ դէմ դրանցն և պատուհանաց. և անդէն 'ի վայր-
կենի պատեցաւ տունն բոցով: Տանիքն հրատոչոր մերձ

էր անկանել 'ի վերայ Շուեռաց: Անխռով հրաման եռ
արքայ չելջուցանել զհուրն: Եւ գտեալ կարաս մի փո-
քրիկ, ինքնին առնու զայն, և օգնականութեամբ եր-
կուց ոմանց 'ի Շուեռաց արկանէ 'ի տեղին, ուր առա-
ւել սաստիկ էր հուրն: Ըստ պատահման լցեալ էր կա-
րասն օղեաւ. սակայն խուճապն՝ անմեկին յայդպիսի
չփոթից, չէտ նմա խորհել առ այն: Սաստկացաւ յայն-
ժամ բռնութիւն հրդեհին. սենեակն արքայի հրոյ ճա-
րակ լեալ էր, և դահլիճն մեծ, ուր Շուեռքն կային,
լցեալ սոսկալի ծխով խառն ընդ հրոյն յորձանաց 'ի
ներքս մտելոց ընդ դրունս մծաւոր սենեկացն: Կէս
տանեացն փլուզեալ էր 'ի ներքս 'ի տանն, և կէսն ան-
կանէր արտաքոյ՝ ճարճատեալ 'ի մէջ բոցոյն:

« Ոմն 'ի պահապանաց, Վալդերկ անուն, 'ի վերջին
վտանգին իշխեաց դոչել թէ հարկ է լինել անձնատուր:
Եւ ասէ արքայ. Ո՛վ այր յետսամիտ, որ համարի թէ
չկրէ առաւել գեղեցիկ՝ 'ի հուր տոչորիլ քան գերի ըմ-
բռնիլ: Այլ ոմն 'ի պահապանացն Ռոզէն անուն, հա-
մարձակեալ ասաց թէ տանիք գիւանին, որ հեռի էր
անտի քայլս քառասուն, քարաշէն են և յերեսաց հրոյն
անվտանգ, և թէ հարկ է ելանել արտաքս, խաղալ
գնալ 'ի տունն, և անդ պաշտպանել անձանց: Ահա ար-
դարև այր Շուեռացի, գոչեաց արքայ. և գիրկս ար-
կեալ պահապանին, անդէն 'ի տեղւոջն կացոյց զնա
գնդապետ: Հապա, բարեկամք, ասէ. առէք ընդ ձեզ
վառօդ և կապար ըստ իւրաքանչիւր բաւականի, և
սուսերս 'ի ձեռին 'ի գիւան անդր գիմեսցուք:

« Իսկ այլազգիք, որոց շուրջ պատեալ էր զտունն
համակ հրդեհաբոց, տեսանէին զարմացեալք և երկիւ-
ղալիցք զի չելանէին արտաքս Շուեռք. սակայն ահա-
գին էս եղև զարմացումն նոցա, յորժամ տեսին զբա-
նալ դրանն, և զդիմել արքայի և իւրոցն 'ի վերայ նոցա
յուսահատ մոլեգնութեամբ: Կարողս և գլխաւորք 'ի
սպայիցն իւրոց զինեալք էին 'ի սուր և 'ի հրացանակ.

և ընդ բանալ դրանն՝ իւրաքանչիւր 'ի նոցանէ կրկին հարուածս արձակեաց միանգամայն. և 'ի քթթել ա-կան 'ի բաց զհրացանական թողեալ, և մերկացեալ զսու-սերս, աւելի քան զքայլս յիսունյեաս ընկրկեցին զայլազ-գիս։ Բայց յետ սակաւու միոյ՝ գունդն այն փոքրիկ պատե-ցաւ շուրջանակի. և արքայն, որ ըստ սովորութեանն արկեալ էր զիշխիկս, արդեալս 'ի խթանացն և անկաւ. քսան և մի արքայալազգեաց դռոհ տան 'ի նա, որ յօդս զսուրն արկանէ, զն մի յաւելցին 'ի նմա ցաւք թողլոյ զայն 'ի ձեռս նոցա։ Եւ բարձեալ տանին զնա այլազգիք 'ի բանակ նախարարին, ունելով զնա կիսոցն ընդ սրու-նիւք, և այլոցն ընդ բազկօք, որպէս թէ տանիցին զհի-ւանդ զրք զգուշութեամբ, զն մի ինչ նեղիցի։

« Եւ տեսեալ արքայի թէ ըմբռնեցաւ, սաստկու-թիւն կրից ոգւոյն և կատաղութիւնն յոր երկարատև և սոսկալի կռիւն վառեալն էր զնա, առ ժամայն 'ի քաղցրութիւն և 'ի հանդարտութիւն փոխեցան։ Զել ընդ շրթունս նորա և ոչ բան մի նեղսրտութեան, և չեցոյց յայտն զհայեցուած բարկութեան։ Հայեր ժըպ-տելով ընդ զօրս այլազգեաց, որք բարձեալ տանէին զնա զԱստուած կարդալով, զայրագնեալք և պատկառեալք միանգամայն։ Անդէն և սպայիցն ձերբակալեալ, կապ-տեցան յայլազգեաց և 'ի Թաթարաց »։

Պատմական ոճն աւելի բարձր կերպ մը կ'առնու, երբ հարկ կ'ըլլայ տերութեանց մեծութեան և անկման պատճառներն յառաջ բերել։ Յայսմ մասին կը դերա-զանցէ Պոսիւէ, ուսկից օրինակ մը դնենք.

« Իբրև տեսանիցես յանգիման աչաց քոց 'ի միում վայրկեան ժամանակի ոչ միայն զթագաւորս և զինքնա-կալս, այլ և զմեծազօր պետութիւնս որ դողացուցին զաշխարհ, զթագաւորութիւնս հին և նոր Ասորեստա-նեայց, զՄարաց, զՊարսից, զՅունաց և զՀռոմոց մի ըստ միոջէ տապալեալ անկանել իբրև 'ի վերայ միմեանց, զի՞նչ այլ ապաքէն յահագին թնդիւն խորտակման իւ-

բեանց հնչեսցեն յականջս քոյ, բայց զն չիք ինչ հաստա-տուն 'ի մարդկայինս, և կորստականութիւն և չկա-յութիւք են բաժին նոցա։ Բայց ևս շահեկանագոյն և քաղցր եղեցի քեզ տեսարանդ, եթէ ոչ միայն զբարձ-բանալ և զանկանել թագաւորութեանց զմտաւ ածցես, այլ և զպատճառս որով մեծացանն, և դարձան կործա-նեցան։ Քանզի Աստուած ամենակալ՝ որ արար զկաղ-մած տիեզերացս, և կամեցաւ զն զմիմեանց ուսեցին մասունք մեծի շինուածոյս, որպէս զն անխախուտ պա-հեսցի կարգն, նոյն կամեցաւ զն և մարդկայնոցս երաց կարգ իցէ և չափ։ Կամք են ինձ ասել՝ եթէ ազգք և այր իւրաքանչիւր այնպիսի բարուց էին հանդիպեալ, որ պատշաճեալն էին իւրաքանչիւր իշխանութեանցն յոր սահմանեցան. և եթէ թողուցումք լիշել զանակնկալ հարուածսն՝ յորս կամեցաւ տէր ակն յանգիման ցու-ցանել զզօրութիւն բազկի իւրոյ, այլ ամենայն շփոթք և աղմուկք և խռովութիւնք որ եղեն 'ի դարս իւրաքան-չիւր՝ անդստին յառաջին ժամանակաց կալան սկիզբն »։

Յաղագս փիլիսոփայական կամ ուսումնական ոճոյ.

Փիլիսոփայական և ուսումնական ոճն իր բացատրած նիւթոց պէս պարզ և անզարդ ըլլալու է։ Մանաւորա-պէս կը պահանջուի վերջին ասպիճանի յստակութիւն, ճշգրիտ բացայայտութիւն, խմաստից կապակցութիւն և բացատրութեան ճշգութիւն։

Զևաւոր խօսքերն, և բանի մը այլ և այլ կերպարանք տուողք եղուի կերպերն պէտք է զգուշութեամբ գոր-ծածել. սակայն երբեմն բնական զարդեր, և նաև 'ի սիրոյ ճշմարտութեան շարժեալ կիրք ալ կրնայ բանե-ցուիլ։ Ըստ Պոսիւէի, տրամաբանական ձեռնարկու-թիւնքն և ուսումնական ծանօթութիւնքն իբրև ոսկոր-

ներ և ջղեր են, որոնց վրայ ճարտասանութիւնն մարմին, հոգի և շարժումն կ'աւելցընէ:

Տէքարդ կ'ուզէ ապացուցանել թէ Աստուծոյ գաղափարն, միայն անով որ մեր սրտին մէջ կայ, Աստուծոյ գոյութեանն ստոյգ ապացոյց մըն է.

«Գոյս գաղափարն Աստուծոյ: Անուամբն Աստուծոյ իմանամ գոյացութիւն իմն անբաւ, անվախճան, անփոփոխ, ինքնիշխան, ամենագէտ, ամենակարող, յորմէ ես և այլ ամենայն ինչ որ կանս՝ ստեղծան և յառաջ եկին: Արդ կատարելութիւնքդ այդոքիկ այնպէս մեծք են և գերազանցք, զի ոչքան մտադիր քննեմ զնոսին, այնքան նուազ հաւանիմ թէ գաղափարն զոր ունիմ զայնմանէ, յինէն միայնոյ զսկիզբն իւր ունել կարասցէ: Որով'ի հարկէ արժան է հաստատել եթէ գոյ Աստուած: Զի թէպէտ և այնու իսկ զի եմ գոյացութիւն, կայցէ յիս գոյացութեանն գաղափար, սակայն զանսահման գոյականութեան իրիք զգաղափար անմարթ էր ունել ինձ՝ որ էակ եմ սահմանաւոր, եթէ չէր եդեալ յիս զայն գոյացութիւն իմն ճշմարտապէս անսահման:...

«Մնայ ինձ քննել որով եղանակաւ զգաղափարդ ստացայ. քանզի չընկալայ զայն 'ի ձեռն զգայութեանց, և ոչ իսկ ամենևին ցուցաւ ինձ յանկարծոյն, զոր օրինակ սովոր է լինել 'ի գաղափարս իրաց զգալեաց, յորժամ յանդիման լինին և կամ թուին լինել արտաքին գործարանաց զգայութեանցն. նա և ոչ իսկ պարզապէս մտա ցս ծնունդ և կամ կեղծիք ինչ է. քանզի ոչ է յիմումս կարողութեան յաւելուլ ինչ յայն կամ նուազեցուցանել. որով և չմնայ այլ ինչ ասել բայց զի գաղափարդ այդ, զոյդ ընդ իմոյ էութեանս գաղափարի՝ ընդ իս ծնեալ է և յառաջ եկեալ: Եւ արդարև իսկ ոչ է պարտ օտարոտի իմն համարել եթէ յստեղծանէն զիս Աստուծոյ անկեալ իցէ զայն 'ի ներքս 'ի յիս, զի լիցի իբրև դրոշմն արուեստագործին՝ յարարածն իւր տպաւորեալ. և չէ իսկ հարկաւոր զի դրոշմդ այդ այլազգ ինչ քան զարա-

րուածն լինիցի. այլ սոսկ այսու իսկ զի ստեղծ զիս Աստուած, կարի հաւատալի իմն է եթէ օրինակաւ իւրիք 'ի պատկեր իւր և 'ի նմանութիւն, յորում գաղափարն արար զիս Աստուծոյ պարփակեալ գտանի. և զոր ճանաչեմ կարողութեամբն որով և զանձն իմ ճանաչեմ: այս է ասել, զի յորժամ մտախոհ զանձնէս լինիմ, ոչ միայն իմանամ լինել զիս անկատար ինչ և թերի և 'ի ներքոյ այլում անկեալ, լաւագունի իմիք և մեծագունի քան զոր իցեմս ցանկանալով անդադար, այլ իմանամ միանգամայն զի զնմանէ կախեալ կամ, և զի մեծամեծքդ այդոքիկ ամենայն, որոց ցանկամս և զորոց գտանեմ յիս զգաղափարն, են 'ի նմա ոչ անորիշ իմն եղանակաւ և միայն իշխանութեամբ, այլ արդեամբք իսկ վայելէ 'ի նոսին իսկապէս և անչափապէս, որպէս 'ի դէպ է Աստուծոյ: Եւ բովանդակ հաստատութիւն պատճառացն՝ որովք վարեցայ ստանօր 'ի ցուցանել զգոյութիւնն Աստուծոյ, հիմնեալ կայ յայն, զի հաւանեալ եմ թէ անմարթ էր բնութեանս լինել զոր ինչ էն, այս է ունել յիս զգաղափարն Աստուծոյ, եթէ ոչ գոյր Աստուած ճշմարտիւ »: (Տէքարդ):

Մեծ երկրաչափն Լաբլաս օրինակ է ուսումնական ոճոյ: Իր Հաւանական կարծեաց գնողական վերդապետութեան գեղեցիկ յառաջաբանին մէջ կը ցուցընէ թէ ինչպէս ուսմանց յառաջադիմութիւնն՝ ատեն մը բնութեան քանի մը երևութից պատճառած անապաշտական վախերն անհետ ըրած է.

« Յանցեալ ժամանակն, և յաւուրսն դեռ ոչ յոյժ հեռաւորս, սաստիկ իմն անձրև կամ երաշտութիւն, աստղ մի՝ լայնատարած ոստուն զհետ իւր արկեալ, խաւարմունք և հիւսիսայոյք, և առ հասարակ ամենայն անսովոր երևոյթք՝ համարեալ էին իբր մեն մի նշանակք աստուածեղէն բարկութեան: Մաղթանս առ երկինս առաքէին մարդիկ՝ առ 'ի բաց փարատել զնոցա վնասակար ազդեցութիւնս: Ոչ հայցէին երբեք զդադա-

բուն ընթացեալ մոլորակաց և արեգական, զի մարթ էր 'ի ձեռն դիտողութեանն տեսանել անդէն զհայցուածոցն անշահութիւն: Բայց քանզի այն երևոյթք, երկայն ժամանակաց անջրպետութեամբք երևեալք և անհետացեալք, զկարգ բնութեանն խանգարել թուէին, այնպէս թմն համարեալ լինէր, եթէ երկինք ըստ կամս յառաջ ածիցեն զայնս և վոփոխիցեն՝ 'ի պատուհաս չարեաց երկրի: Այսպէս երկայնաձիգ տուն մոլորակի հազար չորս հարիւր յիսուն և վեց տարւոյն լցոյց արհաւրօք զնեռոպէ, զզարհուրեալն երագ յաջողութեամբ այլազգեացն, որոց տապալեալ էր զարևելեանն ինքնակալութիւն: Ասողն այն, յետ չորից բոլորմանցն, այլազգ թմն միտս զարթոյց 'ի մեզ: Ծանօթութիւնք օրինաց գրութեան աշխարհի՝ ընդ այս միջոց ժամանակաց ստացեալք, փարատեցին զկասկածս երկիւղին՝ հնարեալս յանգիտութենէ կցորդութեանց մարդոյն ընդ տիեզերաց, և Հալլէյի հասու եղեալ թէ մոլորակն այն նոյն լցէ ընդ երևեալն յամին հազար հինգ հարիւր երեսուն և մի, և 'ի հազար վեցհարիւր և եօթն, և 'ի հազար վեցհարիւր ութսուն և երկու ծանոյց զառաջիկայ վերադարձ նորին 'ի վերջ կոյս հազար եօթնհարիւր յիսուն և ութ տարւոյն կամ յսկիզբն հազար եօթնհարիւր յիսուն և ինն ամին: Դասք գիտնոց երկայնամտեալ սպասեցին այսմ վերադարձի, որով լինելոց էր հաստատութիւն միոյ 'ի մեծագոյն գիւտից ուսմանն գիտութեանց, և լրումն կանխատացութեանն Սենեկայ, որ ասաց 'ի Ճառել անդ իւրում զբոլորմանց աստեղացն, յանբաւ հեռաւոր վայրաց հասելոց. « Եկեսցէ օր, զի անընդհատ պարապմամբք դարուց յողովից, ծածկեալքն 'ի ներկայումս՝ յայտնութեամբ երևեսցին. և ազգք հանդերձելոց զարմացցին ընդ պայծառ Ճշմարտութեանցն Թաքնութիւն առ 'ի մէնջ »: Յայնժամ սկսաւ Ֆլերոյ ընդ մանր քննութեամբ արկանել զխառնակութիւնն յուզեալ 'ի մոլորակին՝ յազգ-

մանէ երկուց մեծամարմին մոլորակացն Արամազդայ և Կռոնոսի. յետ անբաւս հաշուելոյ, սահմանեաց զառաջիկայ անցս նորին 'ի կէտն արևամերձ երբ 'ի սկիզբն ապրիլի, յամին հազար եօթն հարիւր յիսուն և ինն, զոր և գիտողութիւնն ոչ յամեաց Ճշմարտել հաւաստեաւ: Կանոնաւորութիւնն, զոր 'ի ձեռն աստեղագիտութեան 'ի շարժմունս մոլորակացն տեսանեմք, յամենայն երևոյթս գտանի աներկբայ: Որ ինչ 'ի շրջանս մոլորակաց կարգաւոր Ճշդութիւն, նոյն և 'ի կորութեան անդ նուրբ ինչ մասին օդոյ կամ գոլշեաց երևի. չիք այլ խաւար զանազանութեան 'ի նոսա, բայց զոր մերս արկանէ տգիտութիւն »:

Գ.

Ցաղագս սեփհականորևան ոձոյ.

Հռետորական արուեստն կրնայ լաւ խօսիլ սորվեցընել, բայց ոչ և սեփհական կերպով խօսիլ կամ գրել: Ոձոյ սեփհականութիւն տուողն՝ Ճարտարախօսին կամ մատենագրին իր գրուածքին մէջ բանեցուցած հոգին է. և այս տեսութեամբ կրնանք Պիւֆոնի հետ ըսել թէ ոճն՝ ինքն իսկ մարդն է:

Մինչև մատենագիրք ամէնքն ալ իրարու կը նմանին, և իրենց մտածութիւնքն մի և նոյն կաղապարով ձուլուածի պէս են: Սակաւաթիւ հեղինակաց միայն տրուած է՝ ուրիշներէն բոլորովին տարբեր մասնաւոր կերպ մը ունենալ: Այս տեսակ անձինքն՝ հասարակաց լեզուէն առած բառերնուն և դարձուածքներնուն վրայ իրենց դրոշմը կը տպաւորեն, և նոյն իսկ ամէն մարդու մոռացած բանն ըսելու ժամանակնին՝ այնպիսի

կերպով մը կը բացատրեն, որ կարծես թէ իրենք հնարած են զայն։ Ո՛ր և է քաջ մատենագիր իր առանձին լեզուն ունի, որ դիւրաւ կը ճանչցուի, ինչ կերպով որ Միքէլ Անճելոյի մը կամ Ռափայէլի մը ոճը կը ճանչցուի։

Գաղղիացւոց մեծամեծ արձակախօս մատենագրաց մէջ չկայ մէկը, որուն ոճոյ սեփհականութիւնն այնչափ զգալի ըլլայ, ինչպէս է Սէն-Սիմոնի ոճն։ Ոչ ոք իրմէ աւելի յատուկ զուրցուածքներու մէջ ճոխ եղած է։ Ըսածներս հաստատելու համար բաւական է բանալ աղնուական դքսին Յիշատակարաններն։ Մէկ էջ մը միայն յառաջ բերենք, յորում Գուլիէլմոս Երրորդի մեծ դաշնաւորութիւնն հաստատելուն և անոր մահուանը վրայ կը խօսի.

« Եկեալ հասեալ էին ժամանակք, յոր 'ի միտ առնէր Գուլիէլմոս զի մեծագոյնք 'ի մարդկանէ իբրև զփոքրագոյնսն վախճանին, և տեսանէր զայս էթէ ունայնութիւն են զոր ինչ աշխարհ մեծաշուք վիճակս անուանէ։ Զգնայր դեռ երբեք երբեք հեծեալ յերիվար, և համարէր դիւր անձին դասանել. սակայն առ ծիւրութեանն և տկարութեան չունելով այլ ևս հաստատուն կալոյ զօրութիւն, թաւալեալ անկաւ զանկումն, որ զվախճանն փութացոյց։ Որպէս ընդ բովանդակ ընթացս կենացն, նոյն և 'ի կատարածին չարար ինչ փոյթ զկրօնից։ Կարգաւորեաց զամենայն, և խօսեցաւ առ պաշտօնեայսն և առ մտերիմս այնպիսի ելմն զարմանալի հանդարտութեամբ և մտաց արթնութեամբ, որ մինչև ցվայրկեանն յետին ոչ եթող զնա։ Առանց ցաւոց զկատարած կենացն ետես, խնդամիտ ընդ ելս իրաց մեծի դաշնաւորութեանն, ոչ ինչ խիթացեալ թէ զկնի մահուանն պառակտմունք 'ի ներքս անկանիցին, և զուարճացեալ յուսով յաջողութեան մեծամեծ ձեռնարկութեանցն, զրոս խորհեալն էր ընդդէմ Գաղղիացւոց։ Այս խորհուրդ, որ 'ի մահուն անգամ բերկրեցոյցն

զնա, եղև նմա 'ի սփոփումն բովանդակ. սփոփումն անոտի և խաբուսիկ չարաչար, որ իսկոյն մատնեաց զնա անանց ճշմարտութեանցն նշաւակ »։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս արտասանութեան.

Օր մը կը հարցընէին Դիմոսթենէսի թէ ո՞րն է ճարտասանութեան գլխաւոր մասն։ — « Արտասանութիւնն է, ըսաւ։ — Երկրորդը։ — Արտասանութիւնն։ — Իսկ երրորդը։ — Արտասանութիւնն և դարձեալ արտասանութիւնն »։ Որովհետև աթենացի ճարտարախօսն հասարակաց հրապարակին մէջ եղած պայքարներուն մէջ դիտեր էր, ինչպէս Կիկերոն ալ վերջէն դիտեց, որ առանց արտասանութեան, այսինքն առանց ձառ մը կարդալու արուեստին, քաջ ճարտասան մը կրնայ ինչուան յետին կարգի ճարտասան մը սեպուիլ, մինչդեռ չափաւոր ճարտասան մը այն արուեստով կրնայ ճարտարագունից անգամ յաղթել։ Ինքն իսկ Դիմոսթենէս՝ ճարտասանական արուեստին այդ մասին մէջ կը գերազանցէր, ինչպէս որ իր հակառակորդին Եսքինէսի ըսած նշանաւոր խօսքէն կը տեսնուի։ Եսքինէս հաղար դրամակշռ տուգանք վճարելու դատապարտուած ըլլալով, և չկարենալով հատուցանել, գնաց Հռոդոս հաստատուելու և հոն ճարտասանութեան դաս տալ սկսաւ։ Օր մը Դիմոսթենէսի դէմ խօսած ճառը կարդաց, և ամէնքն հիացան։ « Ի՞նչ պիտի ըլլայիք, կանչեց

Եսքինէս, եթէ բուն իսկ այն առիւծուն մունչէին լսէիք»։

Ըստ դիտողութեան Կիկերոնի, արտասանութիւնն բնութեան ամէն մարդու սորվեցուցած ընդհանրական լեզու մըն է. զօրութիւն մըն է, որ ազիտաց, ռամկին և նոյն իսկ օտարաց վրայ կ'ազդէ։ Ճառի մը ազդեցութիւնն զգալու համար, պէտք է Ճարտարախօսին խօսած լեզուն գիտնալ. շատ անգամ բարակ իմաստներն առանց հասկըցուելու կ'անցնին կ'երթան, թէ որ ունկնդիրն հաւասարապէս մտաց բարակութիւն չունենայ. բայց արտասանութիւնն, որ հոգւոյն կրքերն ամենուն իմանալի նշաններով կ'արտայայտէ, ամէն մարդ կարող է հասկընալ։

Արտասանութեան մէջ երեք բան կայ դիտելու. Ա. յիշողութիւն. Բ. առոգանութիւն. Գ. ձեւք։

Ա.

Յաղագս յիշողութեան.

Ճառ մը լաւ արտասանելու համար Ճարտասանին կարեւոր առաջին յատկութիւնն յիշողութիւն է. այս բնական կարողութիւնս աշխատութեամբ կը զարգանայ և կը զօրանայ։ Կան հանդէսներ, որոնց մէջ սովորութիւն եղած է Ճառը կարդալ՝ փոխանակ բերանոց զուրցելու։ Բայց ուր որ հարկ է յափշտակել և համոզել, և երբ Ճարտասանն բեմին վրայ և քաղաքական կամ դատաստանական առենի մը առջև կը ջանայ խօսքին մեծամեծ ազդեցութիւններն ուրիշներու վրայ տպաւորել, այդ կերպ կարդացմունքն ծանր անպատշաճութեանց ենթակայ է։ Վասն զի Ճառախօսն չկրնար արտասանութեան ամէն հնարքներն գործածել. կը ստիպուի թերեթէ միշտ անշարժ բռնել, Ճառը բռնելու ըզբաղած ըլլալով. աչքերն, որոնցմով պէտք է խմաստներն բացայայտ և թափանցող կերպով հասկըցնել, թըզթոյն վրայ կպած կը մնան. նոյն իսկ ձայնը, որչափ ալ հնչող և խաղուն ըլլայ, միակերպ եղանակ մը կ'առնու, և այն ազատ ու անբռնաղբօս խօսակցութեան յատուկ եղող փոփոխութիւնն և բնականութիւնն կը կորսընցընէ։

Հռովմայեցի Ճարտարախօսին Անտոնիոսի համար պատմուած մէկ դիպուածն խիստ յարմար կերպով այս մեր ըսածն կը հաստատէ։ Անտոնիոս կը պաշտպանէր Ակուիլլոս անունով մէկու մը դատը, որ պատերազմի ժամանակ տերութեան ծառայելէ ետև, իր առանձնական կեանքովն ինքզինքն անպատիւ ըրած էր։ Ճարտարախօսն անոր պաշտպանութեան համար ինչ փաստ որ կրցեր էր ժողովէ՝ զամէնքն ալ մէջ բերեր լմնցուցեր էր. բայց չկրնալով մէկն ալ համոզել, և դատաւորաց աչքերուն մէջ ամբաստանելոյն դատապարտութիւնն գրուած տեսնելով, Ճառը ըմբոնցնելէն առաջ կը սկսի իր պաշտպանելոյն ըրած քաջագործութիւններն յիշատակել. ունկնդրաց երեսակայութիւնն կը փոխադրէ այն պատերազմի դաշտին վրայ՝ ուր կռուեր էր Ակուիլլոս. և դատաւորաց միտքն ուշադրութեամբ այս փառաց և քաջութեան յիշատակներով զբաղած միջոցին, ինքը յանկարծ կ'ելլէ հինաւուրց զինուորին կուրծքը կը բանայ, անոր բազմաթիւ վէրքերն կը ցուցընէ, և Ճառը կը վերջացընէ՝ Ակուիլլոսի այն ժողովրդեան համար առած վէրքերուն վրայ խօսելով, զոր ատեանին ներկայ եղող ժողովուրդն զարմացած կը դիտէ։ Ասանկ էտի մը մէջ ինչ ազդեցութիւն կրնար ունենալ Ճարտասանական եռանդուն խօսակցութիւնն, եթէ Անտոնիոս սովորութիւն ըրած ըլլար իր ջատագովութիւնները կարդալով արտասանելու։ Երեսակայենք զատե-

նախօսն որ կ'աշխատի իր ձեռագիրն կարդալու և միան-
գամայն իր պաշտպանելոյն զգեստը կը բանայ, և այդ
կրկին գործողութեան պատճառած շփոթութենէն՝
խօսքերն խառնափընդոր կերպով կ'արտաբերէ, և հա-
զիւ թէ վերջապէս Ակուիլեոսի կուրծքը կրնայ մեր-
կացընել։ Եթէ այդ տեսարանն ինչպէս որ պէտք է 'ի
գործ չդրուէր, ունկնդրաց պատճառ պիտի ըլլար
փաստաբանին և ամբաստանելոյն դէմ պոռալ կանչելու
և տրտնջալու. փոխանակ զարմացման աղաղակներու՝
բարձրաձայն ծիծաղներու ձայներ պիտի լսուէին, դա-
տաւորը պիտի դառնայն իրենց քննելիք դատաստանին
վրայ մտածէին, և խեղճ զինուորն իւր զգեստն շտկելէն
ետև դատապարտութեանը վճռուը պիտի լսէր։

Ուրեմն յիշողութիւնն զօրաւոր և համոզիչ արտա-
նուիէն կարևոր միջոցն է. բայց զայն գործածելու շատ
կերպեր կան։ Կրնայ ճառ մը ճիշդ ինչպէս որ գրուած
կամ առաջուց մտածուած է՝ բառ առ բառ միտք պա-
հուիլ. բեմբասաց ճարտարախօսք սովորաբար ասանկ
կ'ընեն։ «Բանի չգար, կ'ըսէ քահանայն Մորի, համո-
զելու և սիրտ շարժելու ձիրքն 'ի բնութենէ ընդու-
նած ըլլալդ. ընդունայն է կանոնաց պարապմամբ քու
տաղանդդ կատարելագործելդ, ընդունայն է նաև ճար-
տասանական սճով գրելդ, և ոչ երբեք բաղմութեան
առջև իրաւցընէ պերճախօս ատենաբան մը կ'ըլլաս, եթէ
ճառերդ արտասանելու ժամանակ տարտամ և ան-
հաստատ յիշողութեամբդ խօսքդ ստէպ ընդհատես»։
Երբ որ Մասիլեոնի հարցուցեր էն թէ ո՞րն է իր լա-
ւագոյն քարոզն. «Ամենէն լաւ տրված» պատասխա-
ներ է։

Ճառ մը առաջին բառէն ինչուան վերջին բառը նիւ-
թապէս սորվիլը պարզ մեքենական աշխատութիւն
մըն է։ Այս տեսակ սովորութիւն ստանալը կրնայ վը-
տանգաւոր ըլլալ. վասն զի եթէ մէյմը յիշողութիւնն
սխալի, խօսքին թելը կը կտրուի, և միտքն՝ բառերը

գտնելու զբաղելով, չկրնար նոր խմաստներ յարմարցը-
նել որ պակասներուն տեղը լեցընէ։ Ասոր միակ դար-
ման կրնայ ըլլալ եռեռը յուշարար մը ունենալ, կամ իր
ձեռագիրը քովը պահել, որ պէտք եղած ժամանակ
աչքին առջևն ունենայ։ Ուստի լաւագոյն է խորհրդա-
ծելով սերտել, և ոչ այնչափ բառերն որչափ անոնց
բացատրած խմաստներն, և մանաւանդ այն խմաստներն
իրարու հետ կապող մասերն միտք պահել, որպէս զի եթէ
մեր պատրաստած խօսքերն մոքերնէս ելլեն, կարե-
նանք մէկէն ուրիշ խօսքեր գտնել, և կերպով մը արտա-
սանելու ժամանակ նորէն ճառը շարադրել։

Նաև միջոց կ'ըլլայ որ կը հարկադրուինք մեր մտա-
ծած խօսքերն փոխելու։ Քաղաքական ժողովոյ մը մէջ՝
կրնայ ըլլալ մեզմէ առաջ խօսող ատենաբաններն անանկ
կերպով մը մի առ մի մեր փաստերն եղծանեն, որ դեռ
բերաննիս չբացած մեր ամբողջ ճառն հերքուած ըլլայ։
Դատաստանական ատենի մէջ անկարելի է նախատե-
սել թէ երկրորդ անգամ պատասխանելու ժամանակ
ինչ պիտի զուրցենք։ Անոր համար յիշողութիւնն պէտք
է որ մասնաւորապէս նիւթոյն հիմնական մասին, անոր
յարակից ընդլայնմանց և անկից յառաջ եկող հանգա-
մանաց ուշ դնէ։ Նոյնպէս պէտք է քայլ առ քայլ
հակաճառութեան եռեռն երթալ և անոր ամէն պա-
ռագայներն ճշդիւ միտք պահել, այնպէս որ ինչուան
խօսիլ սկսելու վայրկեաններս կարենանք միակերպ մեր
փաստերն ուղղագրել։ Այն ատեն որչափ ալ նուազ
ուշ դնենք բառերուն, այնչափ աւելի դիւրաւ մոքեր-
նիս կուգան, վասն զի ճարտասանն իր նիւթոյն վրայ
համոզուած և անոր խորը թափանցած ըլլալով, ուզա-
ծին պէս զանոնք կը գործածէ։ Յիշողութեան ամենէն
գեղեցիկ ճարտարութիւնն՝ յանպատրաստից խօսիլն է։

Բ.

Յաղագս առոգանութեան.

Ձայնը՝ բնութեան տուրք և Ճարտասանին գործին է, որուն միջոցովը իր նմանեաց սիրտը կը թափանցէ և իր կրից յուզմունքն անոնց կը հաղորդէ: Բայց ինչպէս մարդկային ամէն կարողութիւններն, ձայնն ալ կրնայ աշխատութեամբ կատարելագործուիլ: Գիտենք ինչպիսի երկայնմտութեամբ Դիմոսթենէս կրցաւ իր ձայնն շտկել, և անով կարող եղաւ Ժողովրդեան աղմկալից յուզմանց դէմ կռուելու:

Առոգանութիւնն պէտք է յստակ և բացայայտ ըլլայ, այսինքն հարկ է իւրաքանչիւր բառին ամէն մէկ վանկերն որոշակի լսել տալ, անոնց բնական շեշտն պահել, առանց արուեստակութիւն բանեցընելու. վասն զի այս մասին մէջ, ինչպէս ուրիշ բաներու մէջ, թէ արուեստակութիւնն և թէ անհոգութիւնն հաւասարապէս անախորժ են: Մանաւորապէս պէտք է խորշիլ օտար հնչմունքներէ և հարազատ ազգային առոգանութենէ դուրս արտաբերութենէ:

Առոգանութեան երկրորդ յատկութիւնն է կանոնաւոր Ճչգութիւն, այսինքն պէտք չէ ըլլայ ոչ շատ բարձր, ոչ շատ ցած, ոչ շատ երագ և ոչ շատ դանդաղ. և ինչպէս Կուինտիլիանոս կը պատուիրէ, պէտք է ըլլայ երագ բայց ոչ շտապող, և չափաւորեալ՝ բայց ոչ դանդաղ: Ասոր համար էր որ Կայիոս Գրակքոս երբ բաղմութեան առջև կը խօսէր, ետևը դաղտուկ Ճարտար երաժիշտ մը կը կեցընէր, որ ձեռքը փղոսկրեայ սրինգ մը՝ ուշ կը դնէր Ճարտարախօսին ձայնի աստիճանն տալու, որպէս զի նուազած ժամանակը ուժգնցընէ, և չափազանց սաստ-

կացած ատենն իր առջի աստիճանն առնու: Մեզի համար այդ սրինգի ձայնակցութիւնն, որ Ճարտասանին հրապարակաց մէջ երգող գուսանի կերպ մը կուտայ, շատ տարօրինակ բան մը կ'երևի. և Կիկերոնի ըսածին պէս՝ պէտք է սրինգահարն իրեն տեղը թողուլ, և բեմին վրայ քաղցրաձայնութեան այնպիսի ներքին զգացում մը հետը տանիլ, որ չթողու սահմանեալ չափէն խոտորելու:

Վերջապէս պէտք է որ առոգանութիւնն խօսուած նիւթոյն և բացատրուած զգացման համաձայն ըլլայ: Իւրաքանչիւր կերք, իւրաքանչիւր յոժարութիւն իր բնական բացատրութիւնն, կերպն և ձայնն ունի: Ցայնին հնչմունքն, երաժշտական գործուոյն թելերուն պէս, իրենց գպչող և շարժուն տուող կրից կը պատասխանեն: Բարկութեան համար մանաւոր ձայն և ելևէջ կայ, որ պէտք է ըլլայ եռանդուն, շտապող, և ընդհատեալ. ցաւոց և ողբոց համար ուրիշ ձայն կայ, որ սրտաշարժ, միակերպ ընդհատեալ և հեծեծագին կ'ըլլայ. վախի համար ալ ուրիշ ձայն կայ, որ մեղմ, տարտամ, ցած և տկար կ'ըլլայ. բարկութեան ձայնն շտապող, բուռն, սպառնական և կատաղի է. զուարթութեան ձայնը քաղցր, գորովական և անարուեստ. յուսահատ ցաւն դաժան, խիստ և միակերպ ելևէջ մը կ'առնու:

Իւրաքանչիւր կրից յատուկ ձայնի աստիճանն տալու ժամանակ, պէտք է գիտնալ չափէն անդին չանցնիլ, և Շէքսպիրի ըսածին պէս՝ նոյն իսկ կրից բուռն սաստկութեանը միջոց անանկ չափ մը պահելու է, որ անոր ըրած ազդեցութիւնն մեղմացընէ: Ասկից զատ, ով որ բնական զգացմունք մը չափազանց կերպով կը բացատրէ, և փոխանակ շեշտակի հարուած մը տալու սաստիկ հարուած կուտայ, ուրիշներուն կասկածել կուտայ, թէ ինչ որ դիմացիններուն հաղորդել կ'ուզէ, զայն ինքն չէ զգացած. վասն զի, ինչպէս Լապրիւյէր կը խորհրդածէ, լեզուի մէջ արուեստակութիւնն տեսակ մը անզգայութիւն է:

Գ.

Յաղագս շարժուածոց մարմնոյ.

Զայնի որ և է եղևէջ պէտք է իրեն յարմար ձևն ունենայ: Շարժուածոց մէջ կ'երթան դէմքի փոփոխութիւնն, նայուածքի ուժն, մարմնոյն կեցուածքն, դլխոյն, թևոց և ձեռաց շարժմունքներն:

Դէմքն՝ արտասանութեան ոյժ տուող դլխաւոր միջոցներէն մէկն է. ուստի դժուարին է ըմբռնել թէ հին դերասանքն դիմակով խաղացած ժամանակնին ի՞նչպէս կրնային հանդիսականաց վրայ ազդել: Դէմքն կարող է յայտնել ուրախութիւն կամ տրտմութիւն, վհատութիւն կամ հպարտութիւն, սպառնալիք կամ աղաչանք, զարմանք կամ բարկութիւն: Շատ անդամ դիմաց կիրքն աւելի բան կը զուրցէ քան թէ պերճախօս ճառ մը: Սակայն Կիկերոն կը պատուիրէ դիմաց ազդեցութիւնն չբռնաղբօսել: « Պէտք չէ, կ'ըսէ, չափէն աւելի կիրք տալ դիմաց և անդադար փոփոխել. վասն զի վտանգ կայ ծաղրական կամ տգեղ կերպ մը առնելու »:

Դիմաց զբօսութիւնն մասնաւորապէս աչաց մէջն է, որոնք բացատրելու զգացման համեմատ պէտք է ըլլան կենդանի, հանդարտ, թափանցող և վառվռուն: Այս մասին մէջ դլխաւոր խորշելու թերութիւնն է՝ աչքերը գոց չպահել. « Սակայն, կ'ըսէ Կուինտիլիանոս, ասկայ անանկ խոշոր պակասութիւն մըն է որ և ոչ կ'արժէյիշէցընել »: Զգուշանալու է զանոնք մէկ առարկայէ մէկալը պտրցընելէ, կամ մէկ բանի մը վրայ անշարժ սևեռելէ: Թէոփրաստ կ'ըսէր որ դերասան մը, որուն աչքերուն մէջ շարժմունք և փոփոխութիւն չկայ, իր մասն ձևացընելու ժամանակ կռնակն հանդիսականաց դարձուցածի պէս է, և ամենևին ազդեցութիւն մը չընէր:

Դէմքէն և նայուածքէն ետև մարմնոյն կեցուածքն և շարժմունքն կուգան: Ճարտարախօսին կեցուածքն ազնուական և պարզ պէտք է ըլլայ. դլուխն բարձր և բնական դրից մէջ, բաց 'ի այն միջոցէն՝ երբ այլ և այլ կրքեր բացատրելու համար հարկ կ'ըլլայ զայն վեր բարձրացընել դարձընել և խոնարհեցընել: Թևոց և ձեռաց շարժմունք կը ծառայեն ժամանակ, թիւ, տեղ, անձինք և ասոր նման բաներ ցուցընելու, կամ նշաններով նոյն իսկ խօսքին իմաստն հասկըցընելու, և կամ ճարտարախօսին սիրտն յուզող զգացմունքներն բացատրելու: Այս զանազան տեսակ շարժուածոց մէջ մէկ չափ մը կայ՝ զոր կիրթ ախորժակն և վայելչութիւնն կրնան սորվեցնել: Ճարտարախօսին շարժուածքն՝ դերասանին շարժուածքէն չափաւոր ըլլալու է, և պէտք է առանց իւրաքանչիւր բառ ձևով ներկայացընելու, խօսքին ընդհանուր իմաստն հասկըցընելու օգնէ: Սանլէք անունով մատենագիր մը շարժուածոց վրայ քերթուածի մը մէջ հետևեալ տողերով դլխաւոր խորշելու թերութիւններն ասանկ կը համառօտէ.

« Մի մանաւանդ ծաղրալից մարդոյն այնմիկ նըմանեսցես,
Ոյր թոյլ բազուկ անդադար բերի հանդոյն ճօճանակի:
Մի ըզքեզ ամենևին ընդ մէջ մատանցըդ ցուցաներ,
Մի հանդոյն քարողեր 'ի խօսարանսն խօսողաց:
Առ այժմու դերասանս՝ է նորագիւտ իմն շարժուած՝
Ի լուլ անկանել յաւարտ խօսից իւրաքանչիւր:
Առ այլն 'ի համբակաց ախորժական իմն համարի
Թէ ոք ընդ օդըս գըրէ, և 'ի խօսէն անդ նըկարէ:
Կէսք թըւին միով ձեռամբն առ ժողովեալսն արկանել խուռնկ,
Իսկ այլոց թէքեալ մատունք՝ իբր 'ի ցըրտոյ էն բըրատացեալք:

Են ոմանք որք զուարճանան ըղմերկ բազուկսըն ցու-
ցանել,
Եւ են՝ որք իբր այն թէ զդահեկանսըն հաշուիցեն։
Այսպ բազուկն հաշմանդամ ոչ ինչ պարզն ամենևին,
Անդ մատունքն անջատեալք՝ ձևանան կիցք ճանա-
պարհաց։
Յաճախ ընդ իմաստս իմոց ճառիցս ըսքանչացեալ,
Զանձն իմ ևս գովեմ ինքնին և հարկանեմ ծափ ըղ-
ծափի։
Զըկամիմ բազում անգամ թէ վերջ խօսիցս հասա-
նիցէ,
Մինչև ցայն զի ըղծունկըս բախիցեմ իբր 'ի նըշան։
Է ուրեք զի յորժամ միտքս ըստեղծանել ինչ չը-
կարեն,
Ըղդըլխարկս՝ որ կայր հաստատ՝ 'ի վայր բերեալ է-
ջուցանեմ.
Այլ երբեմն արձակեալ որոտագոչ ձայն բարբառոյ,
Առ եղերբք կացեալ բեմին՝ վարեմ ըղդործ թըմբ-
կահարի »։

Շարժուածոց կանոնաւոր վայելչութիւն անդիմա-
դրելի զօրութիւն մը կուտայ խօսքին։ Երբ Տիբերիոսի
մահուընէն եաև Կայիոս Գրակքոս կը պոռար. «Յո՞ եր-
թայց չուառականս. ո՞ւր իցէ ինձ գտանել վայր ա-
պաստանի. 'ի Կապիտո՞լ. ներկեալ է այն յարենէ եղբօր
իմոյ։ Ի տո՞ւն մեր. այլ տեսից անդ զմայր մեր թշուառ՝
ողողեալ յարտասուս և առ ցաւոցն ընչասպառ. . .» ոչ
այնչափ իր Ճարտասանութիւնն և եռանդուն ոճն, որ-
չափ աչքերն՝ ձայնն՝ շարժուածքն, վերջապէս բովան-
դակ արտասանութիւնն էր որ իր վրայ կարեկցութիւն
կը շարժէր. նոյն իսկ իր թշնամիք, կ'ըսէ Կիկերոն,
չէին կրնար դիմանալ և արցունք կը թափէին։

Շարժուածքն՝ ոչ միայն Ճարտասանութեան գեղե-
ցիկ զարդ մըն է, այլ երբեմն անոր պակասն ալ կը
լեցընէ։ Միրապոյ թէ իր շարժուածոց և նայուածքին

ազդեցութեամբն և թէ խօսքերուն զօրութեամբն հա-
ւասարապէս սահմանադրաց ժողովն իրեն կը յափշտա-
կէր։ Օր մը ժողովականք յոգներ էին երկայն և խառ-
նաշփոթ հակաճառութենէ մը, որ որոշ վախճան մը
չէր ունեցած։ Յանկարծ այն վայրկենին որ իրարմէ
պիտի բաժնուէին, Միրապոյ՝ որ նոյն օրը իր աթոռին
վրայ լուռ նստեր էր, ոտք կ'ելլէ և խօսելու հրաման կը
խնդրէ։ Բոլոր աչքերն իրեն կը դառնան. այն ատեն
այս իր հնարքովն ամենուն ցուցցած մտադրութիւնն
յարմար առիթ գտնելով, մանր քայլեր առնելով, աչ-
քերը գետինն տնկած և իբր թէ իր մտածութեանցը
մէջ ընկղմած, բոլոր սրահը կը կտրէ կ'անցնի, և 'ի
բեմն երթալու համար խել մը վայրկեան կ'անցընէ.
հոն հասած ժամանակը, բոլոր ժողովականք խորին
լռութեան մէջ ընկղմած կը մնան, ուշադրութեամբ
Ճարտարախօսին բերանը կը նային, և դեռ բառ մը
չխօսած, ըսելիքներուն առաջուց կը հաւանին։

Համբակաց շատերն արտասանութեան շարժուա-
ծովք ատանկ մեծ ազդեցութիւն մը ընելու առիթն
չեն ունենար, բայց լաւ է գիտնալնին թէ ինչով կ'ըլ-
լայ այն, որոնք են անոր կանոններն և հնարքներն, որ-
պէս զի լսած Ճառախօսներնին կարենան աւելի լաւ
դատել։ Միանգամայն յայտ մասին, ինչպէս նաև հռե-
տորական արուեստին ուրիշ մասանց մէջ կրնայ մէկն
շատ բաներ ընդհանուր կերպով իր անձին ծառայեցը-
նել։ Եթէ պարագայներն ստիպեն զմեզ բազմութեան
առջև բան մը խօսելու, պէտք է որ ոչ մեր կեցուածք-
ին, ոչ ձայնին մէջ և ոչ դիմաց վրայ այնպիսի բան մը
երևայ՝ որ ընտիր ախորժակի և վայելչութեան դէմ
ըլլայ, և եթէ սովորական ընկերութեան մէջ ալ գըտ-
նուինք, և նոյն իսկ պարզ բարձրաձայն ընթերցմունք
մը կամ ընտանեկան խօսակցութիւն մը ըրած ժամա-
նակնիս, պէտք է դարձեալ մեր ձայնին աստիճանն և
շարժուածքներն կանոնաւորել գիտնանք։ Կարդաց-

ման մէջ, ինչպէս նաև գրութեան ոճոյն մէջ պէտք է մանաւորապէս սեթևեթեալ կերպերէ զգուշանալ, և փոփոխութիւն և մանաւանդ բնականութիւն մտցընել:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐԹՈՒԹԻՒՆՔ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ի՛նչ կերպով համբակաց միտքն կրնայ շարադրութեան պատրաստուիլ.

Երբեմն գանգատ կ'ըլլուի թէ համբակաց շարադրութիւնքն՝ թէպէտև անսխալ և դաշնակաւոր, սակայն ցամաք և առանց խմաստից են: Նոյն իսկ աշակերտք, երբ իրենց շարադրելու բան մը կը տրուի, շատ անգամ մտքերնին կը դնեն թէ ըսելու շատ բան չունին. և չեն գիտեր ուսկից բան մը առնուն որով իրենց տրուած շարադրութեան տողերը լեցընեն: Իրաւ թէպէտև խմաստներն՝ յիշողութեան, փորձառութեան և խորհրդածութեան արդիւնքն ըլլալով, աւելի այն հասակին կը պատկանին, յորում միտքն աւելի առարկայ տեսած ըլլալով, աւելի բան ամբարած կ'ըլլայ, և խոհական մտածութիւնն իր բնական թեթևամտութիւնն շտկած կ'ըլլայ, բայց այսու հանդերձ չկայ հասակ մը որ բոլորովին մտածելու անկարող և յիմաստից զուրկ ըլլայ: Եթէ երբեմն համբակաց երևակայութիւնն ցամքած կ'երևնայ, դրեթէ միշտ իրենց անհոգութիւնն

և անմոռոգութիւնն է պատճառ. շատերը չեն գիտեր երբենց մտացը կանոնաւոր կարգ մը դնել, աչքերնուն առջևը եղող առարկայներն ուշադրութեամբ դիտել, ինչ այլ և այլ գիտութիւններն որ սորված են՝ անոնցմէ օգտակար միտք պահելու բաներ քաղել, և առաջուց կարևոր տեղեկութեամբը հմտանալ, որպէս զի առթին մէջ կարենան զանոնք գործածել: Գրելու և խօսելու համար՝ հռետորական արուեստին կանոնաց գիտութիւնն չբաւեր, պէտք է հիմ մը ունենալ, որուն վրայ կարենայ շէնքն շինուիլ: Ուստի արուեստասիրութեան տեսական մասն աւարտելէ ետև, աշակերտաց մտացը կատարելութիւն տուող հռետորական արուեստին այլ և այլ կրթութեանց վրայ խօսելու ժամանակնիս, պատշաճ կը համարինք ցուցընել նախ թէ շարադրութեան համար ինչ նախապատրաստութիւն պէտք է տեսնել, և որոնք են իմաստ ամբարելու գլխաւոր աղբիւրներն:

Առաջին աղբիւրներն են ընթերցումն և խօսակցութիւն: Մեծ զգուշութեամբ պէտք է ընթերցման պարապիլ: Գրքերն՝ բարեկամներու կը նմանին. քանի մը հատ բաւական է. պէտք է մէկ քանի ընտիր հեղինակներ ձեռքէ չձգել, զանոնք երբեն ընտանեցընել և կերպով մը իւրացընել: Անոնք որ ամէն գրոց վրայէն վեր 'ի վերանց մը կ'անցնին, ամենևին պտուղ մը չեն քաղեր. և Սենեկա երբեմն անոնց միտքն ծառի մը կը նմանցընէ, որ շատ անգամ տեղէ տեղ փոխագրութեամբ կը տկարանայ: Պէտք է միայն պատուական գրքերն կարդալ. այսինքն այնպիսի պատմական գրուածքներ, որոնք երկրիս վրայ մեզմէ առաջ ինչ գիպուածներ և մարդիկ որ եղեր են՝ զանոնք ճանչնալ կը սորվեցընեն. ընտիր քաղուածոյ պատմութիւններ, որոնց մէջ ճշմարտութիւնն և բացայայտութիւնն հաւասարապէս կը փայլին, և զմարդ կը փոխագրեն այնպիսի աշխարհներ, զորոնք թէ բնաւ երբեք տեսնելու առիթ պիտի չըլլայ. բարոյական գրքեր, որոնք կը ճանչցընեն աշխարհս

և անոր վտանգներն, զմարդիկ՝ և անոնց կրքերն. պարզաբան և յարմարակարգ ոճով գրուած խմաստասիրական գրքեր, որոնք կը ցուցընեն թէ ինչ է մարդուս սահմանն երկրիս վրայ, ինչ վախճանի համար եղած է, ինչ հիմանց վրայ հաստատուած են տերութեանց օրէնքներն, ինչպէս թագաւորութիւնք կը բարձրանան ու կը կործանին. որոնք են անհատից, ազգաց և ամբողջ մարդկութեան հարստութեան և երջանկութեան աղբիւրներն: Կրնայ նաև բանաստեղծութիւնն երբեմն փիլիսոփայից ծանր պատուէրներէն և պատմութեան միակերպութենէն յոգնած երևակայութիւնն իր ախորժելի առասպելներովն և հրահանգիչ կեղծիքներովն սթափեցնել: Պէտք է պարապով կարդալ այն ճարտասանական գերազանց ճառերն, որոնցմով ատենախօսք 'ի խաղաղութիւն կամ 'ի պատերազմ յորդորեր է, զմարդիկ, ազատութիւն կամ դատապարտութիւն որոշել տուեր են, և ժողովուրդներն խռովեր կամ հանդարտեցուցեր են: Վերջապէս պէտք չէ փախչիլ հաստատախոհ գրքերէ. անձին յայտնապէս օգուտ բերող շահուն համար մնոտի զուարճութիւն մը զոհելու արիութիւնն ունենալու է. ընթերցման մէջ փնտռելու է՝ չէ թէ ժամանակն անցընելու հնարք մը, այլ ամբողջ կենաց կրթութիւն մը. այնպիսի զգօն և օգտակար հեղինակներով մնանելու է, որոնք սրտին մէջ խոր հետք մը կը ձգեն, և միտքն կատարելագործելու և լեզուն կոկելու կրկին առաւելութիւնն ունին: Վիպասանութենէ կամ փուճ պատմութենէ մը ինչ կը մնայ, անպտուղ և անհաստատ յիշատակ մը միայն. մինչդեռ Բասքալի մտածութիւն մը, Ֆենելոնի խօսք մը, Գոռնէյլի տող մը, Մոնդէյնի և ասոնց նման հին և նոր մատենագրաց իմաստ մը ամբողջ օր մը հետերնիս կ'ընկերէ, և մերյիշողութեան մէջ անջնջելի կը տպաւորէ համառօտ, ազդոյ կամ պարզ ոճով զուարցուած ուղիղ մտածութիւն մը և վսեմ զգացմունք մը:

Նոյն խրատն կրնայ տրուիլ նաև նկատմամբ խօսակցութեան, որ ընդհանրապէս ընթերցման օգուտը չունի, և անով ստացուած ծանօթութիւնքն ալ անկատար ու վեր 'ի վերանց են։ Այն որ իր մտածութեանց մեծագոյն մասն խօսակցութեամբ ստացած է, կը նմանի այն հողերուն որ հաստատուն կ'երևան, և որոնց վրայէն պէտք է առանց կանգ առնելու անցնիլ երթալ։ Պէտք է զգուշանալ ամէն բան լսելէ, ինչպէս նաև ամէն բան կարդալէ։ Աշխարհիս մէջ կան մարդիկ որ անպիտան գրոց կը նմանին. ոմանք տեսակ մը ցուրտ և միակերպ նոյն զգացմունքներով խռնեալ վիպասանութիւններ են. ոմանք՝ հինցած պատմութեանց և անախորժ զուարճաբանութեանց հաւաքածոյք. ոմանք ալ կրկնք լեցուած պարսաւագիրք, ձանձրալի յիշատակարանք, կամ առանց ընտրութեան և առանց ոճոյ քաղուածոյք։ Կուրին մէկն օր մը իր սրահին մէջ մարդու մը ճոռոմաբանութեամբ սովորական բաներու վրայ խօսիլն լսելով, կէս ձայնով մը իր քովն եղողներուն կ'ըսէ. Զուրցեցէք պարոնին որ գոցէ այդ անպիտան գիրքը։

Կայ տեսակ մը կրթութիւն, որով ընթերցման օգուտ և խօսակցութեան զուարճութիւնն մէկտեղ կը խառնուին, որ է կարդալ՝ բայց ոչ միանգամ, այլ այնպիսի անձի մը հետ որ կարող ըլլայ գրքին գեղեցկութիւններն և պակասութիւններն զգալ և տպաւորութիւններն գիմացինին հաղորդել։ « Ընդհանրապէս կարդալը կը սիրեմ, կ'ըսէ Ռոշֆուքոլ. բայց ամենէն աւելի սիրածս այն գրոց կարդացմունքն է, որոնց մէջ միտք կատարելագործող և հոգին զօրացնող բան մը գտնուի։ Մանաւանդ վերջին ասոիճանի ախորժ մը կը զգամ, երբ խելացի մարդու մը հետ կարդալու որ ըլլամ. վասն զի այս տեսակ կարդացման մը վրայ անդադար խորհրդածութիւն կ'ըլլուի, և եղած գիտողութեամբք շատ զուարճալի և օգտակար խօսակցութիւն մը կը ձևանայ »։

Ընթերցմանէ և խօսակցութենէ եռա՝ մեր չորս կողմը եղող ամէն առարկայք, և բնութեան ամենայն մասերն մէյմէկ աղբիւրներ են, որոնցմէ կրնանք մտածութիւններ հանել։ Տարակոյս չկայ որ այս մասերէն իւրաքանչիւրն ինչպէս որ պէտք է ճանչնալու համար բոլորը կեանքն անոր ծախելու է. և ամէն վայելուչ խօսիլ և գրել ուզողներէ չկրնար պահանջուիլ որ խորունկ կերպով բնագիտութիւն, բնաբուծութիւն, բնական պատմութիւն և աստղաբաշխութիւն սորվին. բայց կրնայ այս զանազան նիւթոց վրայ նախնական տեղեկութիւններ ստացուիլ։ Այս ընդհանուր ծանօթութիւնքն, որ Կիկերոն կը պահանջէր ճարտասանէն, նոյն իսկ հասարակաց առջև չխօսող անձանց ալ օգտակար կրնան ըլլալ, և անոնց սովորական խօսակցութիւն և ծանրութիւն մը տալ։

Սակայն առանց իսկ գիտութեան սահմանն մտնելու, նիւթական բնութեան գեղեցկութիւնքն պէտք է որ աչք ունեցողն մը լեզուն ոգեւորէն։ Գրութեան ճարտարութեան ուսանող պատանիք՝ առանց աստղաբաշխական ուսման ընթացքն ըրած ըլլալու կրնան ճարտասանական կամ բանաստեղծական ոճով մը նկարագրել « այն մեծամեծ լուսաւոր մարմիններն՝ որ մեր գլխուն վրայ կախուած են, և եթէ կարելի է այսպէս ըսել, մեր մտաց անհասանելի և անսահման տարածութեանց մէջ կը լողան » (Մասիլեոն)։ « այն մաքուր լոյսն, որ արևելքէն ինչուան արևմուտք ծաւալելով, երկրիս կիսագունտներն հետզհետէ կ'ոսկեզօծէ» (Պիւֆֆոն)։ « այն աղօտ փայլմունքն որ աստղներէն կը կաթեն» (Գոռնեյլ)։ կամ « գիշերաց թագուհին, որ կամաց կամաց դէպ 'ի երկինք կը բարձրանայ, մերթ կապուտակ ասպարիզին մէջէն իր ընթացքն առաջ տանելով, և մերթ ձիւնապատ լերանց բարձր կատարաց նման ամպոց կոյտերուն վրայ հանդչելով » (Շատոպրիան)։

Աշակերտք առանց մասնաւոր կերպով տնկաբանու-

թիւն կամ երկրագործութիւն սորված ըլլալու՝ կը-
նան երկրիս երեսն զարգարող ծառերն ու բոյսերն
նկարագրել։ Մէջերնէն անոնք որ առիթ ունեցած էն
ճանապարհորդութիւն ընելու, պէտք է իրենց գրու-
թեանցը մէջ ցուցընեն որ առարկայքն առանց սրտեր-
նուն մէջ հետք մը թողլու աչքերնուն առջևէն անցած
չեն. պէտք է ստորագրեն ինչ որ իրենց հայրենի եր-
կրին մէջ կամ հեռաւոր աշխարհներ տեսած կամ զգա-
ցած են։

Ընդհանրապէս լաւ կ'ըլլայ որ համբակք կանուխ վար-
ժին աւելի տեսածնին քան թէ կարդացածնին ստորա-
գրելու։ Անոր համար երբ շարադրութեան մը մէջ բը-
նութեան տեսարան մը կայ նկարագրելու, ինչպէս փո-
թորիկ մը, գարնան օր մը, արևու մուտք մը, գեղե-
ցիկ գիշեր մը, փոխանակ իրենց հեղինակներն թղթա-
տելու որ նկարագրութիւն մը գտնեն և զայն ասդին
անդին ագուցանեն, լաւ կ'ընեն եթէ իրենց յիշողու-
թեան և զգացման հետ խորհրդակցելու ըլլան։ Գիր-
քերու այն ատեն պէտք է դիմեն, երբ մոքերնին բան
մը չգար ամենևին։ Երբ մէկն անձամբ տեսածը կը նկա-
րագրէ, լեզուն բնականութիւն և կենդանութիւն մը
կ'առնու. մինչդեռ ուրիշէն առնուած նկարագրու-
թեան մէջ միշտ ոգին և կորովը կը պակսի։

Պատանիք բնական բերմամբ նկարչութեան, արձա-
նագործութեան, ճարտարապետութեան և երաժշտու-
թեան գեղեցկութիւններն զգալու հակումն ունին։
Եթէ կարելի ըլլար, առանց ուսմունքնին խափանելու՝
արուեստից սկզբունքն սորվէին, կամ դէթ անոնց
հրաշալեաց ինչ ըլլալն ըմբռնէին, այս ծանօթութեանց
և զուարճալեաց նոր աղբիւրն կրնայ իրենց բաղձն ուղ-
ղել և երևակայութիւնն վառել։

Փափաքելի էր նաև որ երբեմն իրենց ծնողաց կամ
վարժապետաց առաջնորդութեամբն երթային տես-
նէին արուեստանոցներն և գործարաններն, և հոն ա-

ռուեստից ճգունքն և արդիւնքն դիտէին։ Նախ որ աշ-
խատութեան օրինակն անոնց սրտին վրայ օգտակար
ազդեցութիւն մը կ'ընէ. եռքը՝ օր ըստ օրէ գտնուած
և կատարելագործուած հնարագիտութեանց և մեքե-
նայից բացատրութիւնն անոնց հետաքրքրութիւնն կը
շարժէ, և մոքերնուն մէջ յիշատակներ կը թողու՝ ո-
րոնցմով կրնան իրենց շարադրութիւնքն ճոխացընել։

Վերջապէս գրութեան արուեստին մէջ վարժիլ
ուզողներու համար կարևոր գաղափարաց ամբողջու-
թիւնն ըմբռնելու համար, պէտք է որ համբակք ինք-
զինքնին դիտեն, սրտերնուն խորը մտնեն, և հոն իրենց
ինչ ըլլալն հետազօտեն, իրենց մտաւոր կարողութիւնքն
և գաղափարաց ծագումը քննեն, մտիկ ընեն ինչ որ
կ'ըսէ մտաց խիղճն, այն անմահ ու երկնաւոր ձայնն,
որ ազատ և սահմանաւոր՝ բայց խելացի և ազատ էակի
մը իբրև առաջնորդ և անսխալ դատաւոր բարոյ և
չարի, կ'արգելու մեզի մեր նմանեաց վնաս մը չհասցնե-
լու, և կը պատուիրէ մեր ձեռքէն եկածին չափ աշխա-
տելով ամենուն երջանկութեանն ձեռնտու ըլլալ։
Պէտք է մանաւորապէս կրօնական սկզբունքներով
իրենց հոգին սնուցանեն, բարձրանան մինչև աննիւթ,
անփոփոխ և անհուն էակի մը գաղափարն. մտածեն այն
գեղեցկութեան՝, արդարութեան, սիրոյ և իմաստու-
թեան յաւիտենական աղբեր վրայ, այն գերագոյն
պատճառին վրայ, որ լոյսը, իմաստնոց միտքն, գիւցա-
զանց հոգին և մարց սիրան ստեղծեց։ Զկայ աւելի
վսեմ և բերկնաւոր գաղափար մը քան զծածկեալ Ա-
ստուծոյ գաղափարն, որ մեր զգայութեանց անհասա-
նելի է, բայց մտքով կ'ըմբռնենք։ Պէտք է գարձեալ
այս անձուկ կենաց սահմանն թողուն և հանգերձեալ
կենաց ակնկալութիւններն մտածեն. զբաղեցընեն մտ-
քերնին հաւատոյ այն բնական և օգտակար սկզբունք-
ներով, որոնք մեր յօժարութիւններն դէպ 'ի անապա-
կան և խաղաղական աշխարհ մը ուղղելով, մնոսի հա-

ձոյքներէ, ինչպէս նաև ընդունայն փափաքներէ կը հեռացընեն զմեզ, և մեր լաւութեանն պատճառ ըլլալով, այս երկրիս վրայ աւելի երջանիկ կ'ընեն։ Անոնց մով կրնան գտնել մոռածութեանց և զգացմանց առատ աղբիւր մը, որոնք իրենց խօսակցութեանց և գրութեանցը վրայ մեծ շնորհք մը և վայելչութիւն մը կը ծաւալեն։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս զանազան տեսակ կրթութեանց.

Մէյմը որ աշակերտը լաւ մը ըմբռնեն հռետորական արուեստին կանոններն, և միանգամայն ընթերցմամբ, խօսակցութեամբ, արտաքին գիտողութեամբ և խորհրդածութեամբ մտքերնին խել մը խմաստներով ճոխացընեն, այն ատեն պէտք է իրենց մոռածութիւններն ընդլայնելու վարժութիւն ընեն. որովհետևլաւ խօսելու արուեստն ալ ուրիշ ամէն արուեստից պէս է. այն ատեն մէկն լաւ կը գիտնայ զայն, երբոր մանաւոր վարժութեամբ կը սորվի։

Առաջին ընելիք կրթութիւնն պատմութիւնն է։ Համբակք վարժելու են դէպքերն լաւ գիտելու, անոնց ամբողջութիւնն և մանր պարագայներն ըմբռնելու, և բացայայտու ախորժական ոճով մը զանոնք պատմելու։ Ոչ ինչ նուազ կարևոր ուրիշ կրթութիւն մ'ալ բանախօսութիւնն կամ ընդլայնելի մտածութիւնն է։ Այս տեսակ աշխատութեամբ աշակերտը կը սորվին փորձառութեամբ և ուղիղ մոռածութեամբ հաստատուած քանի

մը ճշմարտութիւններ լաւ հասկընալու, ըմբռնածնուն չափ զանոնք բացատրելու, և խորհրդածելով անոնցմէ հետևութիւններ հանելու։ Վերջապէս պատմելու և խորհրդածելու շատ մը վարժութիւններ ընելէ ետև, ճառի կրթութիւնն սկսելու է, ուր որ պէտք է մանաւորապէս հռետորականին ամենայն հնարքներն բանեցընել, և համոզելու արուեստին կանոններն 'ի գործ դնել։

Ա.

Յաղագս պատմութեան.

Պատմութիւն է դէպք մը հանդերձ իր ամենայն յարակից հանգամանքներովն յառաջ բերել։ Հոս պատմութիւն ըսելով չենք հասկընար զայն որ ճառի մը կարևոր մասը կը կազմէ. բայց որչափ ալ զատ տեսակ գրութիւն մը կը սեպուի, և առանձին շարադրութիւն մըն է, սակայն քիչ շատ ճարտասանական պատմութեան կանոնաց տակ կ'ինկնայ։

Երբ աշակերտը իրենց ընդլայնելիք նիւթն աչքերնուն առջև կ'ունենան, առաջին ընելու աշխատութիւնն է մտքերնին ամփոփել և նիւթերնին ըստ իրեն ամենայն հանգամանացը քննել, որով գործն կերպով մը իրենց գիտցը անցածի պէս կ'ելլայ, և ընդլայնմունքներն խուռն իրենց երևակայութեան առջև կ'ելլեն։ Նիւթ մը՝ որ թեթև մտքի մը համար ցամաք ու սահմանաւոր էր, մոռածողի մը համար անսպառելի աղբիւր մը կը դառնայ։ Շատ պատմութեանց մէջ, կրնայ մէկը բաց 'ի իր մոռածութեամբն գտած խմաստներէն, նաև պատմական գրքերէ մանր պարագայներ և կարևոր տե-

ղեկութիւններ առնուլ։ Աշակերտն պէտք է իր քոյին ունեցած գրոց մէջ փնտռէ հանդիպած դիպուածին տեղւոյն ստորագրութիւնն, գլխաւոր անձին և երկրորդական անձանց բարուցը նկարագիրն, և պատմելիք դէպքին նախընթաց, յարակից և հետևորդ հանգամանքներն։ Կը մնայ դեռ երրորդ հնարք մը, որ է միտք բերել գրելու նիւթոյն հետ ուղղակի կամ անուղղակի յարաբերութիւն ունեցող ընտիր խմաստներն, զանոնք մտքին մէջ յեղյեղել, կամ եթէ մէկն չտիշեր ամբողջապէս, նորէն զանոնք կարդալ։ Հանճարն՝ ուրիշի հանճարոյն կը զարթնու. և հանճարաւոր օրինակի մը ազդեցութիւնն՝ էլեկտրական կայծին նման՝ դեւակիրթ մտաենագրին մտացը վրայ կը ներգործէ։

Այս նախապատրաստութիւններն ընելէն ետև, մէյմը որ աշակերտն մտածելով և պատմական գրքերն կարդալով՝ խմաստներ հաւաքած է, և իր նիւթոյն նման օրինակ ընտիր գրուածքի մը վրայ միտքը պարապեցընելով իր աշխոյժը վառած է, պէտք է իր պատմութեան զանազան մասունքն կարգի վրայ առնու։ Այս երկրորդ աշխատութիւնս ամենայն մտադրութիւն կը պահանջէ. վասն զի պատմութեան մը բացայայտութիւնն և ազդեցութիւնն մեծաւ մասամբ դասաւորութենէն կը կախուին։ Լաւ մը կարդ դնելէ ետև, գրիչը ձեռք առնելու է, ուշ դնելով գրութեան ոճոյն, որ ըստ նիւթոյն պէտք է ըլլայ պարզ, զարդարուն, ընտանի, սաստիկ և այլն։

Ընտիր պատմութիւն մը պէտք է ըլլայ

Ա. Բացայայտ. Ամենայն խօսքի և ամենայն գրութեան գերագոյն օրէնքն այս է։ Աւելորդ տեղը մէկն գրելու կ'աշխատի, երբ չուզեր հասկանալի ըլլալ։ «Պատմութիւնն բացայայտ կ'ըլլայ, կ'ըսէ Կիկերոն, եթէ անսխալ և յստակ ոճ մը բանեցուի, եթէ դէպքերն բնական և ժամանակագրական կարգաւ յառաջ բերուին, և աւելորդ զարտուղութիւններէ և յաւելուածներէ զգուշացուի »։

Բ. Ճշմարտանման. Պատմութիւնն ճշմարտանման կ'ըլլայ՝ եթէ իրական պարագայ մը դուրս չթողուի, և ջանացուի ճշմարիտ կամ դէթ հաւանական չեղող պարագայ մը չաւելցընելու։ Նոյն իսկ կեղծ պատմութեանց մէջ տեսակ մը ճշմարտանմանութիւն մը կայ, ուսկից պէտք չէ զարտուղել։ Անոր համար մէյմը զարմանալեաց գործածութիւնն մոցընելէ ետև, առասպելէ կամ ուրիշ որ և է զարմանալի պատմութենէ առնուած նիւթոյ մը մէջ՝ ինչ կերպարանք որ սկզբան կը տրուի անձանց և իրաց, նոյնը պէտք է ինչուան վերջը անփոփոխ պահել։ Ճշմարտանման չըլլար եթէ Հոմերոս զԱստղիկ Պարիսի թշնամի և կամ զԱթենաս Հելենայ բարեկամ երևցընէ։

Գ. Մանրամասն. Պատմութեան մէջ պէտք չէ աւելորդ բան դնել. բայց և պէտք չէ դուրս ձգել ինչ որ նիւթոյն հետ իսկական յարաբերութիւն մը ունի։ Երբոր մեզի բան մը կը պատմուի, կ'ուզենք իմանալ ոչ միայն գլխաւոր գործն, այլ և անոր հետ կապակցեալ ամէն պարագայներն. կ'ուզենք գիտնալ անցած դիպուածոյն ժամանակն ու տեղը, և ինչ անձանց վրայ որ կը խօսուի՝ անոնց բարքն, խօսակցութիւնն, և երբեմն ինչուան անոնց դիմացը նկարագիրն. կ'ուզենք դարձեալ անոնց հոգւոյն մէջ թափանցել, և անոնց գործոցը պատճառներն հասկընալ։ Պէտք է որ աշակերտն այս ամէն մասանց վրայ մեր հետաքրքրութիւնն գոհ ընէ. բայց այսչափ զանազան մանր հանգամանքներ աւելցընելու ժամանակ՝ պէտք է զգուշանայ չափազանց առատութենէ, և պատմութեանը մէջ բան մը պակաս չթողու՝ առանց սաստիկ մանրակրկիտ ըլլալու։

Դ. Անորոշելի. Պատմութիւն մը կրնայ ըլլալ բացայայտ, ճշմարտանման և մանրամասն, բայց միանգամայն խիստ ձանձրանալի։ Արուեստ մըն է պատմութեան մը զանազան մասերն ասպիճանաւ մը շարելն, ազդեցութիւնն նուազեցընել և սաստկացընելն, անակնկ-

կալ դէպքերով ուշադրութիւնն արթնցընէն, և իրաց կարևորութիւն տուող խորհրդածութիւններ աւելցընէն, և վերջապէս ասնցմով պզտի զուարճալի կամ ծանր թատերախաղ մը կազմէն, որոյ նախաշաւիղն ըլլայ բացայայտ, հանգոյցն ախորժական, և լուծումը բնական, և առաջին բառէն մինչև վերջինն մեր սիրտն շարժէ կամ զուարճացընէ:

Պատմութիւնն երեք տեսակ կը բաժնենք, որ են՝ պատմութիւն ճարտասանական, վիպասանական և ընտանեկան:

Այս երեք տեսակ պատմութեանց օրինակներ դնենք. և լաւ մը ցուցընելու համար թէ հեղինակաց ճարտարութիւնն նիւթոյն հիմանը վրայ ինչ կրցեր է աւելցընել, պատմութիւններէն առաջ դնենք անոնց բովանդակութիւնն որ քիչ բառով ընդլայնեալ դիպուածոց համառօտութիւնն կը պարունակէ:

Ա. Ճարտասանական պատմութիւն.

Ճակատամարտն Ռորքռայ.

Բովանդակութիւն.

Պատերազմին նախընթաց գիշերն Լշխանն խաղաղ քուն եղած էր:

Հազիւ բանակին գլուխն կ'անցնի, մեկէն թշնամեաց զօրացը կարգերուն մէջ սարսափ մը կը ձգէ:

Սակայն սպանիական հեռաւակ զօրաց գունդն կ'ընդդիմանայ. Անկիւնի դուքսն իր հաստատութեամբն և քաջասրտութեամբ կը վանէ զայն:

Այն միջոցին որ յաղթութիւնն ապահովցած կ'երևէր,

Սպանիացիք նորէն կը սկսին յամառութեամբ կռուիլ. Գաղղիացիք կատղած զարհուրելի ջարդ կ'ընեն:

Մեկէն Լշխանն իր զօրքերը կը հանդարտեցընէ, և յաղթելոց ներելէն ետև, ըրած յաղթութեանն համար Աստուծոյ շնորհակալութիւն կը մատուցանէ:

Պատմուրիւն.

« Ձգիշերն՝ զոր հարկ էր անցուցանել դէմ յանդիման թշնամեացն, իբրև հսկող զօրավար, հուսկ յետոյ ամենեցուն 'ի քուն եմուտ, այլ ոչ այլ ուրեք առաւել խաղաղ ննջեաց: Յառաջնմէ անտի ցայգոյ աւուրն ահեղի, և յետ առաջնոյ ճակատուն՝ անխռով կայ, այնպէս 'ի բնակաւոր իւրում պայմանին դտանի. և գիտեմք իսկ զի 'ի վաղիւ անդր 'ի ժամանակեալ ժամուն՝ զարթուցանել հարկ եղև 'ի խոր քնոյ զերկրորդս զայս Ալէքսանդրոս: Տեսանէք՞ որպէս սլանայ 'ի յաղթութիւն կամ 'ի մահ: Իբրև ընդ կարգս ռազմի ճակատուն տարաւ զեռանդն իւրոյ հոգւոյն՝ անդէն վազվազակի, գոգ 'ի նմին ժամու, տեսաւ զի վանէր վկանդէր զաջակողմ թևին թշնամեաց, զօրացուցանէր զմերն խախտեալ, ժողովէր պնդակազմ զգալլիացին մերձ 'ի պարսուրթիւն, փախստեայ տանէր զյաղթական սպանիացին, արկանէր ահ ընդ ամենայն, և փայլակնացայտ աչքն պակուցանէր զվախուցեալն 'ի ձեռաց իւրոց:

« Մնայր սոսկալի հեռաւակազօր սպանիական բանակին, որոյ թանձրախուռն ստուար դումարտակք, 'ի նմանութիւն աշտարակաց, բայց աշտարակաց՝ որ դիմտեցեն խրամակարկառ առնել զնոսա իւրեանց, կային անսասան 'ի միջի անդ ամենեցուն բեկելոցն, և հուր տեղային յամենայն կողմանց: Երկոս գուն գործեաց յաղթող պատանին խորտակել զաներկիւղ ռազմիկան,

վանեցաւ Երիցս 'ի քաջակորով կոմսէն Փոնթենեան, զոր կառընթաց տեսանէին, և ամենայն տկարութեամբքն հանդերձ՝ յայտ լինն զայն արարեալ, զի ոգի պատերազմարար՝ տէր է մարմնոյն յոր ընդէ. հարկ է սակայն հուսկ ուրեմն տալ տեղի: Ի զուր ընդ անտառս այրուձիոին իւրով նորով՝ ձեպէ տագնապաւ զարշաւան իւր Պէդ գալ անկանել՝ 'ի վերայ զօրուն մերոյ պարապելոյ. կանխեաց յառաջեաց զնոսաւ իշխանն, գունդքն փլուզեալք պաղատին գթութիւն. բայց սեպհին Անկիեանի քան զմարսն ահագին լինելոց է յաղթութիւնն:

« Իբրև աչալուրջ երեսաք խաղայր գնայր ընդունել զնոստուն որերոյն այնորիկ քաջն, սոքա միշտ 'ի խեթի զդուշութեան կասկածեալնոր լին յեղակարծ յարձակումն, հրձգութեամբ զմերսն 'ի մոլեգնութիւն գարձուցանեն, և այլ ոչինչ տեսանի՝ բայց նախձիրք կոտորածի. արեան ճաղատիկք սրարբեցուցանեն ըղձականն, մինչև մեծի իշխանին չհանդուրժեալ տեսանել զառիւծունսն զայնոսիկ խողխողեալս իբրև ոչխարս վատասիրս, ցածոյց զբորբոքեալ սիրտսն, և 'ի հեշտութիւն յաղթութեանն յաւել և զներելոյ թողութեանն: Զի՞նչ հիացումն կալաւ յայնժամ զհինաւուրց զօրականն և զարիական սպայս նոցին, իբրև տեսին թէ չեք նոցա փրկութիւն բայց միայն 'ի գերկս յաղթողն, որոյ ակամբ հայեին յիշխանն պատանի՝ զորոյ զպերճ ճոխութիւնն պանծացուցաներ յաղթանակ, և գեղնորատեսիլ փայլեր 'ի նմա գթութիւնն: Ապրեցուցաներ նա մտագիւր և ջիւանս քաջն կոմսին Փոնթենեան. բայց դաւաւ նա անկեալ ընդ հաղարաւորս վիրաւորաց, զորոց սգայ տակաւին զկորուսան Սպանիա: Կրկնեաց ծուներ իշխանն, և անդ 'ի ճակատուն տեղւոջ մատոյց Աստուծոյն զօրութեանց զփառսն զոր առաքեր նա առնա. անդ տնեցաւ Ռոքռոայի փրկութիւն, և ահագին սպառնալեաց թշնամւոյն՝ գարձ ամենալից 'ի գլուխս նորին, հաստատութիւն վարչութեան խնամակալին,

հանգիստ Գալլիոյ, և այսպիսի յաջող հմայիւք սկիզբն արքայութեանն՝ որում հասեալ էր լինել այսչափ հրաշակերտ »: (Պոսիէ, Ճառ դամբանական իշխանին Դոնպէի):

Ի՞նչպէս պատմութեանս ամենայն մասունքն գեղեցիկ կերպով դասաւորուած են, և վերջն աստիճանի ազդուութիւն մը կուտան անոր: Կարծես թէ գիւցազնն յաղթութեամբ կը սկսի պատերազմը. « Իբրև ընդ կարգս ռազմի ճակատուն տարաւ զեռանդն իւրոյ հոգւոյն, անդէն վաղվաղակի, գոգ 'ի նմին ժամու տեսաւ զի վանէր վկանդեր զաջակողմ թևին թշնամեաց, զբացուցանէր զմերն խախտեալ, ժողովէր զնդակազմ ղգալլիացին մերձ 'ի պարտութիւն, փախստեայ տանէր զյաղթական սպանիացին, արկանէր ահ ընդ ամենայն, և փայլակնացայտ աչքն պակուցանէր զփախուցեալսն 'ի ձեռաց իւրոց »: Պատերազմն արդէն լինցած կը կարծենք. բայց յանկարծ ճարտարախօսն առջևնիս սոսկալի արգելք մը հանելով, փոխանակ առջև ակնկալութեան, վախ մը տիրել կուտայ. « Մնայր սոսկալի հեռեակազօր սպանիական բանակն, որոյ թանձրախուռն ստուար գումարտակք, 'ի նմանութիւն աշտարակաց, բայց աշտարակաց՝ որ գիտիցեն խրամակարկատ առնել զմոռս իւրեանց, կային անսասան 'ի մէջ անդ ամենեցուն բեկելոցն, և հուր տեղային յամենայն կողմանց »: Ինչ որ Անկիեանի դուքսն ըրած էր՝ պարապը գացած կ'երևայ. սպանիացին յաղթանակելու վրայ է. գաղղիացւոց վիճակն վախ կ'ազդէ. « Երիցս գուն գորգեալ գաղղիացւոց զիճակն վախ կ'ազդէ. « Երիցս գուն գործեաց յաղթօղ պատանին խորատակել զաներկիւղ ռազմիկն, վանեցաւ Երիցս 'ի քաջակորով կոմսէն Փոնթենեան»: Այս խօսքս հոս բանաստեղծական թեթև զուրցուածք մը չէ, այլ գործողութեան իբրև հանգոյցն է, և ըրած ազդեցութիւնն խիստ մեծ է: Բայց դարձեալ գործն կերպով մը որոշ կերպարանք մը կ'առնու. « Գունդքն փլուզեալք պաղատին գթութիւն »: Այս անգամ Անկիեանի դուքսն յաղթող է, և Գաղղիացիք

վանդէն կը խաչբոլն։ Սպասենք տեսնենք ինչ պիտի ըլ-
լայ. « Իբրև աչալուրջ երեսաք խաղայր գնայր ընդու-
նել զնոստուն որերոյն այնորիկ քաջի, սոքա միշտ
'ի խեթի զգուշութեան կասկածեալ նոր իմն յեղա-
կարծ յարձակումն, ահագին իմն հրձգութեամբ ըզ-
մերսն 'ի մոլեգնութիւն դարձուցանեն »։ Այսպէս ահա
պատերազմը նորէն կը սկսի, և մինչ ամենայն ինչ լռեն-
ցած կ'երևար, ահաւասիկ դարձեալ վախի և յու-
սոյ մէջ կ'ելնանք. « Այլ ոչինչ տեսանի՝ բայց նախնիքը
կոտորածի. արեան ճաղպախիք սրարբեցուցանեն
զզօրականն »։ Տես ինչպէս այս խօսքով Ճարտասանն
մեր անհամբերութիւնը կ'աւելցընէ, եղածն փուշոյ և
արեան ամպոյ մը մէջէն միայն ցուցընելով մեզի։ Եւ
այսպէս երկայն ատեն զմեզ անստուգութեան մէջ
ձգելէ, և իրարու հակառակ զգացմունքներով սաստիկ
տագնապեցընելէ ետև, յաղթութիւնն և պատերազմին
վախճանն կը ծանուցանէ, և մեր սրտին անհանգստու-
թեանն վերջ կուտայ. « Յածոյց զբորբոքեալ սիրտն, և
'ի հեշտութիւն յաղթութեանն յաւել և զներելոյ թո-
ղութեանն »։

Այս պատմութեան դեռ աւելի գեղեցկութիւն
տուողն՝ ոճոյն ազնիւ և պերճ պարզութիւնն, և այս
կենդանի և բնական ձևերս են. « Թանձրախուռն ստուար
գումարտակք, 'ի նմանութիւն աշտարակաց, բայց աշ-
տարակաց՝ որ գիտիցեն խրամակարկատ առնել զնոսա
իւրեանց։ — « Արեան ճաղպախիք սրարբեցուցանեն
զզօրականն »։ — « Մեծի իշխանին չհանդուրժեալ
տեսանել զառիւծունն զայնոսիկ խողխողեալս իբրև
ոչխարս վատասիրտս »։ Գեղեցիկ է և այս խօսքերուն
երգգութիւնն. « Տեսանի՞ք ո՛րպէս սլանայ 'ի յաղթու-
թիւն կամ 'ի մահ »։ — « Կանխեաց յառաջեաց զնովաւ
իշխանն. գունդքն փլուզեալք պաղատին գթութիւն »։
մանաւանդ այն Ճարտասանին սրտէն բխած մտածու-
թիւններն և խմաստներն զորոնք իր պատմութեանը

մէջ կը խառնէ. « Յառաջնմէ անտի ցայգոյ աւուրն ա-
հեղի, և յետ առաջնոյ ճակատուն՝ անխառով կայ. այն-
պէս 'ի բնակաւոր իւրում պայմանին գտանի »։ — « Քա-
ջակորով կոմսն Փոնթենեան, զոր կառընթաց տեսա-
նելն, և ամենայն տկարութեամբքն հանդերձ՝ յայտ
իմն զայն արարեալ, զի ոգի պատերազմափորձ՝ տեր է
մարմնոյն յոր չնչէ »։

Այս այն անմահական պատմութիւնն է, յորում Պո-
սիւէ կերպով մը ինքզինքը բանաստեղծ և պատերազ-
մական անձ մը երևցուցած է, առանց ճարտասանա-
կան հանճարն և քրիստոնէական ոգին կորսնցընելու։

Բ. Վիպասանական պատմութիւն.

Մահ սրբոյն Պրեսեքստատայ.

Բովանդակութիւն.

Սուրբն Պրեսեքստատ, Ռուանայ եպիսկոպոսն, ա-
տելի եղած էր Փիլպերիկոսի և Փրեդեգոնդայ, որով-
հետև իր սանին Մերովէի պաշտպանութիւն ըրած էր,
և Սիկեբերդոսի Բրունհոլտ այրոյն հետ ամուսնու-
թիւնն օրհնած էր։ Պրեսեքստատ քանի մը տարի աք-
սորանք քաշելէն ետև՝ նորէն Ռուան դարձաւ և եպիս-
կոպոսական աթոռն նստաւ։ Բայց Փրեդեգոնդ իրեն չէր
ներած ամենևին, և զինքը մեջտեղէն վերցընելու համար
միաբանեցաւ Մելանսիոսի հետ, որ Պրեսեքստատայ
աքսորանաց ժամանակ ապօրինաւոր կերպով եպիսկո-
պոսի պաշտօն վարեր էր։ Առաջնորդն իր եկեղեցւոյն
մէջ՝ եպիսկոպոսական վիճակին մէջ ծառայող սպասա-
ւորէ մը սրով զարնուեցաւ։ Տուն տարին զինքը՝ մահուան

գուն հասած. Փրեդեգոնդ կեղծաւորաբար իրեն ցաւակցութեան գնաց: Իսկ եպիսկոպոսն դեռ հոգին չանդած իրեն դէմ բողոքեց՝ ըսելով թէ ինքն է զմարդասպանն գրգռողն:

Ռուանայ կալուածոց տէրերէն մէկին այսպիսի չարագործութեան մը վրայ զայրացած, ուղեց փրանգաց առենին ձեռքով դատել տալ զՓրեդեգոնդ, և համարձակեցաւ անոր դատաստանի կանչուած ըլլալուն լուրն տանիլ: Հոն Թագուհին իրեն ըմպելիք մը հրամցընել տուաւ. ինքն ալ ընդունեցաւ խմեց, և քանի մը վայրկենէն ինկաւ մեռաւ:

Պայէյի եպիսկոպոսն Լեգովալդ, աթոռոյն պարապութեան ժամանակ եպիսկոպոսական եկեղեցւոյն կառավարիչ դրուելով, յանցաւորներն գտնելու և զանոնք պատուհասելու համար եկեղեցական ատեան մը կարգեց. բայց Թագուհին ամբաստանեալները իր պաշտպանութեան տակ առաւ, և զիրենք ամէն խուզարկութենէ խալբսեց:

Գոնտրան, Պուրկոնեի Թագաւորն, գործուած չարութեանն համար փուչ տեղ Նեւսարլոյ ատեանէն արդարութիւն պահանջեց, ըրած յորդորներն և սպառնալիքներն բանի տեղ չդրուեցան:

Փրեդեգոնդ՝ զեպիսկոպոսն սպաննող ծառան անոր եղբօրորդւոյն ձեռքը մատնեց, որ զչարագործն տանջանքով չարչարելէ ետև, իր ձեռքովն սպաննեց:

Անոնք որ մարդասպանին ձեռքը զիներ էին, մարդկային արդարութենէն փախան. բայց Ռուանի ժողովուրդն լացաւ իր եպիսկոպոսին վրայ, զանիկայ իբրև մարտիրոս մը սեպելով, և անոր քաղցր յիշատակն յաւիտեան պահեց:

Պատմութիւն.

«Ի քսաներորդ չորրորդ աւուր ամսեանն Փետրուարի, յամին հինգ հարիւր ութսուն և վեց, կանխաւ ընդառաջաւոն եկ գնաց յեկեղեցին եպիսկոպոսն Ռուանայ, որոյ եղեցն արտաքս անդատին 'ի ծագելոյ արեգականն դարանեալ սպասէր մարդասպանն: Եւ երթեալ նըստաւ 'ի տեղին իւր սովորական, քայլս ինչ հեռի յաւագ խորանէն, յաթոռ մի զատուցեալ առանձինն, և յանդիման նորա եդեալ կայր պատուանդան: Իսկ այլ կղերականքն կալան զբազմոցս զետեղեալս 'ի դաս եկեղեցւոյն. և եպիսկոպոսն սկսաւ եղանակել ըստ կարգի սովորութեանն զառաջին տուն երգոց առաւօտին պաշտամանն: Եւ մինչ երգեցողքն կցեալ 'ի նոյն, զնուագ սաղմոսացն յառաջ վարէին դասակցութեամբ, ծունր եդ Պրետեքստատ, յեցեալ զձեռան և խոնարհեալ ըզդլուխն 'ի պատուանդանն՝ որ կայր զառաջեաւ: Այլ դիր մարմնոյն, յոր եկաց նա հարուստ մի ժամանակ, պատրաստեաց մարդասպանին սղոսկելոյ 'ի յետուստ զպատեհն, զոր յառաւօտ անտի ըստեսէր նա: Դիպող գտեալ զժամն՝ յոր եպիսկոպոսն յաղօթս տարածեալ, չտեսանէր զոր ինչ զիւրեն գործէր, մեղմով ինն այնչափ մօտ առնա մերձեցաւ, զի կարէր բաղկաւն հասանել 'ի նա, և հանեալ զդանակն կախեալ զգօտւոյն, ընդանթռուն եհար զնա: Պրետեքստատ զդացեալ խոցոյն, զաղաղակ արձակեաց. բայց առ չարակամութեան և կամ առ վատութեան՝ ոչ զքյորոց անդն կային ընթացաւ առ նա յօգնութիւն, և մարդասպանն եգիտ ժամանակ փախչելոյ: Այսպէս ծերունին թողեալ անօգնական, կանգնեցաւ յոսն միայնակ, և զերկոսին ձեռան 'ի վերայ խոցուածոյն եդեալ՝ եկ գնաց 'ի սեղանն կոյս.

և էր նորա դեռ ևս զօրութիւն 'ի վեր ընդ աստիճանսն
ելանելոյ։ Անդր հասեալ, տարածեաց զբազուկսն ա-
րիւնազանգս, առնուլ 'ի վերուստ սեղանոյն զանօթն
ոսկեղէն՝ կախեալ շղթայիւք, յորում կայր խորհուրդն
սրբութեան, պահեալ 'ի հաղորդել զմերձեցեալսն 'ի
մահ։ Եւ էառ մասն մի 'ի սրբագործեալ հացէն և հա-
ղորդեցաւ. և ասպա դոհացեալ զԱստուծոյ զի տուաւ
նմա ժամանակ ընդունելութեան սրբոյ թոչակին, ան-
կաւ նուաղեալ 'ի գիրկս հաւատարիմ ծառայիցն, որք
բարձեալ տարան զնա 'ի սենեակ նորին։

« Փրեդեգոնդայ զանցս իրացն 'ի հասարակաց համ-
բաւոյն կամ ինքնին իսկ 'ի բերանոյ մարդասպանին ի-
մացեալ, ցանկացաւ վայելել զսոսկալի զուարճութիւն
'ի տեսիլ թշնամւոյն մերձ 'ի վախճանն հասելոյ։ Եւ
ջոգաւ ճեպով 'ի տուն եպիսկոպոսին, առեալ ընդ իւր
զդուքսսն Անսովալդ և զՊեբոլէն, որք անդէաք էին
երկոքեան թէ զինչ մասն էր նորա 'ի գործն չարու-
թեան, և որովհետև նորանչան տեսլեան հասանէր նոցա
լինել ականատես։ Պրեսեբստատ կայր 'ի մահճին, զա-
մենայն նշանս մոտալուտ օրհասին 'ի դէմն բերելով,
բայց զվիտան և զարթնութիւն պահելով տակաւին։
Դշխոյն զկրեալն 'ի սրտին զուրախութիւն պատրուա-
կեալ, և սիրալիր ինն կերպարանօք զդէմն արքայական
պերճութեան յանձին բերելով՝ ասէ առ օրհասականն.
« Դառն է մեզ ապաքէն և ամենայն ժողովրդեանդ, ով
սուրբ հայրապետ, զի պատկառելոյ գլխոյդ արկածդ
պատահեաց։ Տայէ Աստուած, զի յայտնեսցի այրն որ
'ի սոսկալի գործդ իշխեաց մտաբերել, որպէս զի ըստ
արժանի չարութեանն պատիժս տանջանաց կրեսցէ »։

« Այցելութեամբն այնուիկ կասկածք ծերոյն հաս-
տատեալ, էլ կանգնեցաւ 'ի մահճին ցաւոց, և զաչսն
'ի Փրեդեգոնդ կառուցեալ՝ ետ պատասխանի. « Եւ ո՛
այլ ոք զհարուածն էտ, եթէ ոչ ձեռնն՝ որ սպան զԹա-
դաւորս, որ բազում անգամ էհեղ զարիւն անմեղաց, և

այնչափ չարիս գործեաց յաշխարհիս »։ Ի դէմն դշխո-
յին չերևեցաւ ամենևին նշանակ խռովութեան. և որ-
պէս այն թէ անիմաց լինէին նմա այն բանք, և սոսկ 'ի
մտացն դանդաչելոյ բարբառեալք, կրկնեաց անդրէն
հանդարտ և գորովալիր ձայնիւ. « Են առ մեզ բժիշկք
ճարտարիմացք, որք զվերս զայդ կարող են բուժել,
անսա զի եկեսցեն տեսանել զքեզ »։ Ընդ այնքան անա-
մօթ լրբութիւնն ոչ ևս այլ հանդուրժեալ եպիսկոպո-
սին ժուժկալել, և զայրացեալ բարկութեամբ՝ մինչև
ուժոյն սպառելոյ. « Իմանամ, ասէ, զի կամք են Ա-
ստուծոյ կոչել զիս յաշխարհէ աստի. բայց դու, որ առ
'ի բառնալ զկեանս իմ զոճիրդ զայդ խորհել և նիւթել
իշխեցեր, լեցիս դու 'ի նզովս դարշութեան յամենայն
դարս յաւիտենից, և աստուածեղէն արդարութիւնն
'ի գլուխ քո զվրէժ արեանս թափեսցէ »։ Փրեդեգոնդ
չասաց բան մի, և էլ մեկնեցաւ, և յետ սակաւու միոյ
Պրեսեբստատ աւանդեաց զշունչն վերջին։

« Ի շնչնդն համբաւին, ամենայն քաղաքն պատեցաւ
արհաւրօք. քաղաքացիքն առ հասարակ, առանց խըտ-
րութեան ազգի, հռովմայեցիք և փրանկք թաղծու-
թեամբ և սոսկմամբ զդածան...։ Եւ էին 'ի շրջակայս
քաղաքին բազումք ցեղապետք, յազգէ փրանկք, որք 'ի
խնդիրս կարևորս բազմին դատաւորք, և ցուցանէին
զանձինս վրէժխնդիրս իրաւանց իւրեանց, որպէս և
վաղնջուց սովորութեանց և հայրենի կարգացն նախան-
ձաւորս։ Եւ էր 'ի նոսա այր մի վեհանձն և սիրե-
լի, որ բերէր յանձին ծայրագոյն ինն համարձակու-
թիւն անվեհեր, իբր սեփհական առաքինութիւն ազ-
գին իւրեանց առ յաղթօղն Կեղտաց համարեալ։...
Սորա զմանս 'ի բարեկամացն և 'ի գրացեաց իւրոց առ
ինքն ժողովեալ, հաւանեցոյց զնոսա՝ համարձակ ձեռն
'ի գործ արկանել և գնալ ծանուցանել Փրեդեգոնդայ՝
յանդիման լինել առնի։

« Ամենեքին հեծան յերիվար, և մեկնեցան 'ի տեղ-

ւոյն որ չէր կարի 'ի բացեայ 'ի Ռուանայ, գնալ 'ի տուն դշխոյին 'ի Ներքս 'ի քաղաքին։ Ի հասանել նոցա անդր, մի ոք միայն 'ի նոցանէ՝ որոյ խորհուրդն տուեալ էր ելանել յանդիման Փրեդեգոնդայ, ընկալեալ եղև մտանել առ նա, որ յօրէ անտի ոճրագործութեանն 'ի ըղգուշութիւնս յաւելեալ, խնամով կայր 'ի պահպանութիւն անձինն։ Այլքն ամենեքին կացին մնացին 'ի դահլըճին կամ 'ի կամարակապ սրահին։ Հարցեալ դշխոյին թէ զինչ խնդրեցէ, առաջնորդ հրեշտակութեանն ասաց առ նա ձայնիւ բարբառոյ առն զայրագնելոյ դառնապէս։ « Բազում չարիս գործեցեր 'ի կեանս քոյ։ բայց վերջինն զոր արարեր՝ ահագին է քան զամենայն, հրաման տուեալ սպանութեան քահանայի Աստուծոյ։ Հաճեսցի Աստուած երևել ընդ հուպ վրէժխնդիր արեանն անմեղի։ Այլ արդ լիցի մեզ ամենեցուն քննել զոճիրն և 'ի խնդիր անկանել մեղսպարտին, որպէս զի մի այլ ևս կարասցես գործել զայդպիսի գործս դաժանութեան »։ Զբանսդ սպառնալեաց խօսեցեալ Փրանկին, եկ արտաքս, թողեալ զդշխոյն խռովեալ մինչև ցխորս սրտին 'ի բանից անտի յայտարարութեանն։ զի հաւանական եղեալ իրացն էին նմա վասանդաւորք, գոլով նորա 'ի վնճակի այրութեան և միայնութեան։

« Փրեդեգոնդ զնուր յանդգնութիւնն 'ի ձեռն առեալ, խորհեցաւ 'ի գործ անվրէպ։ առաքեաց զմի 'ի ծառայիցն ընթանալ զհետ Փրանկ իշխանին և ասել ցնա եթէ դշխոյն հրաւիրեր զնա 'ի ճաշ։ Առ այդ հրաւէր՝ ըստ արժանի իւրումն պատուոյ արարեալ պատասխանի՝ 'ի բաց մերժեաց զայն Փրանկն, որ հասեալ էր առ ընկերակիցս իւր։ Տարեալ ծառային զպատասխանին, ընթացաւ այսրէն աղաչել զնա, զի թէ կալ մնալ յընթրիսն չկամիր, գոնեայ հաւանեսցի ընդունել ինչ, և մի անպատուեսցէ զտուն արքայական, 'ի բաց գնալով անտի առանց ինչ ճաշակելոյ։ Սովոր էին յայնժամ մարդիկն ընդունել զենդիր մի այդպիսի։ ուստի սովորութիւնն և կենցաղավարութիւն ըստ այնր ժամանակի կարգացն յաղթեցին զայս նուազ կրիցն բարկութեան, և Փրանկն՝ որ պատրաստեալ կայր ելանել յերիվարն, եկաց մնաց 'ի գաւթին հանգերձ իւրովքն մտերմաք։

« Յետ վայրկենի միոյ ելին ծառայքն 'ի վայր, բերելով լայնալիր տաշտս լցեալս օշարակաւ, զոր մարդիկն վայրենի ազգին ախորժանօք ըմպէին արտաքոյ քան զժամն կերակրոց։ և էր այն գինի, և 'ի նմա օշինգր խառնեալ։ Եւ պաշտեալ մատուցաւ նախ առ Փրանկն, որոյ ընկալեալ էր զհրաւէրն 'ի դշխոյէն։ Եւ առեալ անդէն յանխորհուրդս դատարկեաց այրն զբաժակ օշարակին համեմելոյ։ այլ այն ինչ զվերջին կաթիլն արբեալ, և ահա ցաւ չարակսիծ և մրմնջուն 'ի ներքուստ՝ ազդեաց նմա եթէ կլեալ էր նորա զժանտադոյնն 'ի դեղոց։ Յաղդմանէ անտի չանթակէզ ցաւոցն վայրկ մի կացեալ անբարբառ, մինչ եռեալ զընկերակիցսն պատրաստականս հեռուէլ իւրումն օրինակի և պատուէլ զդինին օշընդրի, ձայն բարձեալ գոչեաց առ նոսա։ « Մի հուպ լինիք յըմպելիդ, փախերուք չուառականք, փախերուք, զի մի ընդ իս մատնիցիք և դուք 'ի կորուստ »։ Ի բանից ասել հարան Փրանկին յանկարծական երկիւղիս։ կասկած դեղմտութեան, որ խիթալին էր յայնժամ զոյգ ընդ կախարդութեան և ընդ գիւթութեանն խարդաւանաց, որպէս և անյայտ վասանդ մնալուստ՝ զոր անմարթ էր սրով 'ի բաց փարատել 'ի փախուստ ձեպեցոյց զարան պատերազմողս, ոչ նահանջէին արդեաք 'ի ճակատ պատերազմի։ Ամենեքինյերիվարս իւրեանց ընթացան։ զնոյն արար և որ արբեալն էր զդեղ մահուն, և կարաց յերիվարն հեծանել։ այլ աչքն մթագնեալ և զօրութիւն բազկացն պակասեալ, չզօրէր պինդ զերասանական ունել։ Ածեալ յերիվարէն՝ զոր չկարէր այլ ևս վարել, և որ ձեռընթաց զհետ այլոցն տանէր զնա, գնաց այնպէս հարուստ մի քայլափոխս և անկաւ մեռեալ։ Համբաւ դիպուածոյն

արկ'ի հեռաւորսն զսոսկումն անդոհական. և'ի տեարս անդ կալուածոց վիճակին Ռուանայ այլ ևս չարաբ ոք խօսս եկակոչ առնելոյ զՓրեդեգոնդ՝ երևել յանդիման մեծի առենին արդարութեան, որ մասնաւոր ինն ա-նուամբ գումարեր զեթ երկիցս 'ի տարւոջ:

« Ի ժամանակի անդ պարապութեան աթոռոյն, վարչութիւն արքեպիսկոպոսական եկեղեցւոյն վիճակեր Լեւտովղոսայ՝ եպիսկոպոսին Պայեցի, իբր գլխաւոր օգնականի: Գնացեալ սորա 'ի մայրաքաղաքն, առաքեաց անտի պաշտօնական գրով առ ամենայն եպիսկոպոսունս գաւառին զանցս պատմութեան բռնական մահուն Պրեոեքստատայ, և ապա զամենայն երէցս քաղաքին գումարեալ 'ի ժողով հանրական, ըստ խորհրդոյ ժողովոյն այնորիկ հրաման արար զի փակեսցին ամենայն եկեղեցիք Ռուանայ, և մի կատարեսցի 'ի նոսա պաշտօն, մինչև հրապարակաւ քննութիւն արարեալ՝ գլխաւորքն և գործակիցք ոճրագործութեանն 'ի յայտ եկեսցեն: Արք ոմանք 'ի Կեղտաց աղգէն և 'ի ռամիկ մարդկանէն, զորոց էին կարծիք կասկածանաց, ըմբռնեալ մատուցան 'ի հարցափորձ. բայց դշխոյին զամենայն ամբաստանեալսն ընդ իւրով պաշտպանութեամբ արկեալ, համարձակ հայթայթեաց նոցա զհընարս խուսելոյ 'ի դատաստանական քննութենից, փախստեամբ և զինու զօրութեամբ հակառակ ընդդիմացեալ...:

« Համբաւ անցեալն անցելոց տակաւ ընդ համբրէն աշխարհն Կեղտաց տարածեալ, եհաս առ Թագաւորն Կոնթրամ, որ բնակէր 'ի Շալոն առ Սաւոնայ...: Իմացեալ սորա զկրկին ոճիրսն սպանութեան և ամբարշտութեան, յոր ըստ զրուցաց Ժողովրդեանն՝ այրին եղբօր իւրոյ յանցաւոր ամբաստանէր, զդաժան արդար բարկութեամբ, և իբրև տանուտէր տոհմին Մերովեանց, համարեցաւ զանձն վիճակեալ 'ի գործ մեծի նահապետական արդարութեան: Եպիսկոպոսունս ե-

գիս առաքեաց դեսպանութեամբ առ իշխանն, որք յանուն որդւոյն Իլպերիկեայ վարէին զնամակութիւն 'ի Փարիզ: Ընկալեալ դեսպանացն յատեան խորհրդոյ, ցուցին զպատգամն հրեշտակութեանն, առաջի արարեալ հաստատութեամբ զմեծութիւն ահագին չարութեանն, զորոյ արքայն Կոնթրամ պահանջէր ըստ վրէժս պատուհասին: Եւ քանզի տուեալ լինէին նոցա անստոյգ պատասխանիք. « Գիտասջիք, ասէ մի ոմն 'ի հրեշտակացն, զի եթէ որ զչարիսդ գործեաց՝ ոչ յայտնեսցի և ոչ գայցէ յերեւան, խաղաղացէ արքայն մեր բանակաւ զօրու, 'ի հուր և 'ի սուր զերկիրդ գատել: Քանզի այս ինչ յայտնի է, զի որ զՓրանկին եբարձ զկեանս խարդաւանօք, նոյն ինքն և զեպիսկոպոսն սպան սրով»: Ի սպառնալեաց աստի ոչ ինչ տագնապեցան Նեւստրացիք, գիտելով չափ զի արքայն Կոնթրամթեբանայր միշտ 'ի կամն, յորժամ հասանէր ժամանակ՝ ձեռնամուխ 'ի գործն լինելոյ: Վասն որոյ եպիսկոպոսունքն վախման արարին անօգուտ բանակցութեանն, կանխաւ ընդդէմ բողոքեալ վերստին հաստատութեանն Մելանտիոսի յարքեպիսկոպոսական աթոռն Ռուանայ: Բայց այն ինչ դարձ արարեալ նոցա առ Թագաւորն Կոնթրամ, և ահա Մելանտիոս հաստատեցաւ յիշխանութեանն, պաշտպանութեամբ դշխոյին և զօրութեամբն՝ զոր նա անդրէն 'ի ձեռս ածէր չարանենգ խաբէութեամբ և ահ արկանելով: Այրս այս, ձեռնասուն արժանաւոր Փրեդեգոնդայ, ընդ ամս աւելի քան զչնգետասան երթայր յամենայն աւուր աղօթս 'ի տեղւոջն մատուցանել, ուր հեղաւ արիւն Պրեոեքստատայ:

« Այդքան յաջողութեամբքն սնքացեալ դշխոյին, պատկեաց զգործն վերջին իմն ժպիրհյանդգնութեամբ 'ի ցոյց անհաւատալի արհամարհութեանն՝ որով վարէր առ ամենայն որ կայր նմա հակառակ: Եւ ըմբռնել յայտնապէս և ածել զառաջեաւ զծառայն հողա-

գործ, որում ինքն իսկ տուեալ էր վարձս 'ի գործել զեղեռնն չարութեանն, և որում ցայն վայր ձեռնտու լեալ էր 'ի խուսել յամենայն խուզից խնդրակաց. և ցուցեալ 'ի վերին երեսս զմեծասաստ բարկութիւն, ասէ առ նա. « Դո՛ւ ուրեմն լցես այրն որ հարեր սրով զՊրեռեբստատ, զեպիսկոպոսն Ռուանայ, և ամբաստանութեանցն հուչակելոց զինէն՝ լցես պատճառք »: Եւ ապա յանդիման աչաց իւրոց տուեալ զնա դան հարկանել, մատնեաց զայրն 'ի ձեռս աղգականաց եպիսկոպոսին. ոչ ինչ զելս իրացն 'ի միտ արկեալ, որպէս թէ չգիտէր ինչ այրն զդաւաճանութենէն՝ որում գործակիցն լեալ էր: Եղբօրորդի Պրեռեբստատայ, այր բուռն բնաւորութեամբ, իբրև զմի 'ի Կեղտաց անտի՝ որոց զհետ կրթեալ Գերմանացւոցն բարուց, 'ի խնդրել ըզվրէժ անձանց իւրեանց էին միշտ պատրաստակամք, և իբրև զիրանկան գնային զինեալք, ձեռն արկ յայրն եղկելի, և 'ի տան իւրում մատնեաց զնա 'ի հարուածս տանջանաց: Յայնժամ մարդասպանն ոչ յապաղեաց առնել զպատասխանիսն և զխոստովանութիւնս. « Ես ինքն, ասէ, եմուռ զհարուածն. բայց առ 'ի տալ զայն, ընկալայ հարիւր դահեկանս ոսկւոյ 'ի դշխոյէն Փրեդեգոնդայ, յիսուն յեպիսկոպոսէն Մելանտեայ, և յիսուն այլ յաւագ սարկաւագէ քաղաքին. բաց ասել, ինձ և կնոջ իմում խոստացան զազատութիւն »:

« Որչափ և ստոյգ էին վկայութիւնքս այսոքիկ, սակայն և այն յայտնի էր զի չէր հնար այնուհետև վճարել ինչ նոքիմբք: Այնուհայն ընկերական իշխանութիւնք ժամանակին վայրապար ջանացան 'ի գործ զզօրութիւն իւրեանց արկանել յայդ անցս զարհուրելի դիպուածոյն. աղնուականք և քահանայք և ինքն իսկ Թագաւորն անկարողք գտան առ 'ի զբուն յանցաւորսն ըզբռամբ արկանել: Եղբօրորդւոյն Պրեռեբստատայ հաստատեալ 'իմոի զի բաց 'ի զօրութենէ բազկին չմնայը նմա այլ առեան արդարութեան, վախճան արար ամենայնի՝ զգործ արժանի վայրենւոյ գործեալ. բայց թերևս յայն դրդեալ զնա դաղանութեանն զայդ ընդյուսահատութեան: Մերկեալ զուսերն՝ յօշ յօշ պատառեաց զգեստն, արկեալ առաջի նորա իբրև զորս: Զի որպէս սովոր էր պատահել միշտ յանկարգութեան ժամանակին, մի միայն դարման գործեցելոյ ոճրաբարձութեանն եղև ոճիր մի գաղանական: Ժողովուրդն միայն ոչ վերջացաւ 'ի սիրոյ եպիսկոպոսին իւրոյ սպանելոյ. այլ մանաւանդ վկայական անուամբ մեծարեաց զնա. և մինչ պաշտօնական եկեղեցին զմի զոք 'ի մարդասպանացն յաթոռն նստուցանէր, քաղաքացիք Ռուանայ կարդային յաղօթս իւրեանց զանուն սպանելոյն, ծունր զնորա դերեզմանաւն արկեալ: Սովին շքով մեծարանաց ժողովրդեանն՝ դարուց 'ի դարս յաւերժաց յիշատակ սրբոյն Պրեռեբստատայ, պատուեալ յարգանօք 'ի հաւատացելոց, որք զնորա զանուանն միայն գիտէին: Եթէ ինչ մարդկօրէն կենաց պատահաքք՝ հանդերձ ձախողութեամբքն և թերութեամբք՝ զփառս սրբոյն նուազեցուցանել թուիցին, այլ անշուշտ սիրելի ընծայեցուսցեն զնա իբրև մարդ: Փանդի ոչ ապաքէն գոյ խանդաղատեցուցիչ ինչ իմն 'ի նկարագիրս անդ կենաց ծերոյն, որ մեռաւ վասն կարի իմն սիրոյն առ նա՝ զոր կալեալն էր յաւազանն մկրտութեան, սովաւ արդիւնացուցեալ զմտաւորն հայրութիւն հոգւոր, զհաստատեալն 'ի ձեռն քրիստոսական կրօնից» : (Թիէրի ; Մերովէան ժամանակացն վէպք :)

Գ. Ընտանեկան պատմութիւն.

Ժանոյ և Գոլէն

Բովանդակութիւն.

Ժանոյ և Գոլէն, Օվերնեայ Իսոար քաղաքին մէջ մէկ տեղ դպրատուն կ'երթային. Ժանոյ՝ Ջորեաց համբաւաւոր վաճառականի մը զաւակ էր. իսկ Գոլէնի հայրն՝ քաղաքին շրջակայներէ աղքատ երկրագործ մըն էր:

Ժանոյի հայրն քիչ առեւնուան մէջ անքաւ հարստութիւն ձեռք բերելով, աղնուականի պատիւ ստացաւ, Ժանոդիէր անունն կրելով. որդին դպրատունէն հանեց, և Փարիզ աղնուական ընկերութեանց մէջ մտուց: Պատանի իշխանն հպարտութեամբ լեցուեցաւ, և մոռցաւ զԳոլէն:

Դաստիարակ մը տրուեցաւ իրեն, որուն երևոյթն աղնուական էր, բայց գիտութիւն ամենևին չունէր: Մօրը կամացն համեմատ, և Ժամանակին գեղացիներէն մէկուն խորհրդոյն տպան չտրվեցաւ ոչ լատիներէն, ոչ աշխարհագրութիւն, ոչ աստղաբաշխութիւն, ոչ պատմութիւն և ոչ երկրաչափութիւն. այլ բաւական դատուեցաւ միայն պար սորվեցընել:

Իր ախորժելի ձրկին համար ընտանեաց մէջ ընդունելութիւն գտած ըլլալով, աղնուական և գեղեցիկ այրուց մը հետ ամուսնանալու պատրաստուած Ժամանակ, յանկարծ հօրը և իր ստացուածքն՝ իրենց ըրած յիմարական ծախուց պատճառաւ բոլորովին փճացան:

Այս բանիս վրայ այն որ հետն պիտի ամուսնանար և բոլոր կարծեալ բարեկամներն որ հօրը ինչքն վատնելու գործակից եղեր էին, զինքը բոլորովին երեսէ ձգեցին:

Մինչդեռ յուսահատած մնացեր էր, դիպուածով տեսաւ զԳոլէն, իր մանկութեան բարեկամն, զոր յաջողութեանը Ժամանակ մոռցեր էր, և որ ճախորդութեան մէջ անոր միակ նեցուկն եղաւ: Ժանոյ դարձաւ նորէն իր երկիրը, Գոլէնի քոյրերէն մէկն իրեն կին առաւ, և աշխատութեան ու չափաւոր կենաց մէջ երջանկութիւնն գտաւ:

Պատմութիւն.

« Բազմայ Ճշմարտահաւատ անձանց տեսեալ է զԺանոյ և զԳոլէն 'ի դպրոցն Իսոարայ քաղաքի Օվերնիոյ: Երկոքին ևս շնորհալից էին յՕվերնիացիս, և զսէր առ միմեանս ցուցանէին: Ժանոյ էր որդի համբաւաւոր վաճառականի Ջորեաց. իսկ Գոլէն՝ էր զաւակ ժրաջան հողագործի շրջակայ վայրացն, որ չորիւք ջորեօքն վարէր զերկիր, և յետ հատուցանելոյ զչարին և զբաժ, զտուրս և զմաքս աղի, զդահեկանն ըստ կշռոյ, զդլխահարկն և զքսանեռորդն, 'ի վախճան տարւոյն չմնայր տէր մեծափարթամ Ճոխութեան:

« Ժամանակ ընթացից ուսմանց իւրեանց մերձ յաւարտումն էր հասեալ, և ահա դերձակ ոմն եկեալ երբեր առ Ժանոյ եռագոյն զգեստ մի կերպասեայ, հանդերձ բարեձև բաճկոնակաւ Լիոնի, և ընդ սոսա թուղթ մի առ Լաժոնագիէր: Գոլէն սքանչացաւ ընդ հանդերձն, բայց չեղև ընդ այն նախանձաբեկ: Իսկ Ժանոյ կերպարանս իմն մեծութեան երբեր յանձին, որ տրամեցոյց զԳոլէն: Ի ժամէ անտի Ժանոյ դադարեաց յուսանելոյ

ԼՅ, պշուցեալ հայեցաւ 'ի հայելւոջ, և արհամարհեաց զամենեսին: Ժամանակ ինչ 'ի վերայ անցեալ, սենեկապան ոք հասանէ ձեռով, բերելով միւս այլ գիր առ իշխանն Լաժոնագիեր, յորում իշխանազն հայր նորա պատուէր տայր ածել զիշխանազն որդին 'ի Փարիզ: Եւ էլ ժանոյ 'ի թեթևընթաց կառան, աջ կարկառեալ առ Գոլէն, և ազնուական ինն պերճութեան ժամիտ 'ի դէմսն նկարեալ: Յայնժամ խելամուտ եղև Գոլէն իւրումն նուաստութեան, և եկաց: Եւ մեկնեցաւ ժանոյ մեծաշուք փառաւորութեամբ:

« Որ ոք յընթերցողացն տեղեկանալ կամիցի, պարտի նա գիտել զի հայրն ժանոյ վաղ ընդ փոյթ ստացաւ 'ի տուրևառս զմեծագանձ ճոխութիւն, և ընդ հուսկ կոչեցաւ Լաժոնագիեր. և յետ վեցից ամսոց գնոց առեալ զանուն մի պատուոյ, եհան զիշխանազն որդին 'ի դպրոցէն, և եմոյծ զնա 'ի դասս ազատանուոյն Փարիզու:

« Գոլէն, խանդակաթեալ միշտ սիրով, գրեաց գիր մեծարանաց վաղեմի ընկերակցին, 'ի տոզան անդ զիսընդակցութիւն իւր յայտնեալ: Մանուկ իշխանն չարար ինչ պատասխանի. և Գոլէն խօթացաւ առ վշտին:

« Հայր և մայր դեռահասակ իշխանին կարդեցին նմա նախ զդաստիարակ զոմն, զայր արտաքնայարդար, բայց ոգէտ ամենևին, որ և չկարաց ուսուցանել ինչ համբակին: Իշխանին կամք էին ուսանել որդւոյն զլատիներէն, և տիկինն չէր հաճեալ ընդ այն: Եւ ընտրեցին դատաւոր զմատենագիր ոմն, որ ախորժելի գրուածոքն նշանաւոր էր 'ի ժամանակին: Աղաչէցին զնա դալ 'ի ճաշ առ նոսա: Գլխաւոր տանն այսպէս զբանն սկսաւ. « Եւ քանզի գիտես դու զլատիներէն. և գոլով 'ի գրանիկ մարդկանէն... — Ես զլատիներէն, Ոչ գիտեմ և ոչ մի բան, յաւել այլն թեթևամիտ, և գոհ իսկ եմ ընդ այն. յայտ իսկ է զի լաւ ևս խօսի ոք զլեզու իւր, յորժամ ոչ և զպարապմունս օտար լե-

զուացն ընդ այնմ խառնեսցէ: Տես զտիկնայս մեր համբրէն, յորս քան զարանցն ախորժագոյն է հանճար, և նամակք նոցա բիւր անգամ առաւել շնորհալից են գրբեալք. և պատճառք քան զմեզ առաւելութեան նոցա այն են, զի չգիտեն զլատիներէն »:

« Ուրեմն չէ՞ն իմ իրաւունք, ասէ տիկինն: Կամիմ զի որդին իմ եղիցի այր մտացի և յաջողեսցի յաշխարհի. և տեսանես քաջ զի եթէ գիտէր նա զլատիներէն, վճարեալ իսկ էր վասն նորա: Աղէ ասա, մի թէ լատիներէ՞ն խոզայցեն զկատակերգութիւն և զերգս գուսանութեան: Խօսիցի՞ ոք լատիներէն, յորժամ վարեսցէ դատ ընդ ումեք »: Ի պատճառաց աստի յապուշ միտս զառածեալ իշխանին, անսայ դատավճռոյն, և անդէն սահմանեցաւ մի ժամավաճառ լինել իշխանազն մանկանն՝ դեգերելով 'ի մատեանս Կիկերոնի, Որատիոսի և Վիրգիլեայ: « Իսկ զի՞նչ ուրեմն ուսանիցի. զի հարկ իսկ է թէ գիտիցէ ինչ. ոչ մարթ իցէ առաջի առնել նմա սակաւիկ ինչ զուսումն աշխարհագրական: — Եւ յի՞նչ օգտիցէ նմա այն, եւ պատասխանի դատաւորակն. յորժամ իշխանազնն յերկիր կալեսածոցն երթալ հասանիցէ, մի՞թէ չգիտիցէ՞ն զճանապարհն սուրհանդակք. չիք երկիւղ թէ խոտորեցուցեսցեն զնա յուղղոյն: Զէն ինչ պէտք քառորդի բոլորակի 'ի ճանապարհորդել, և յոյժ հեշտին է գնալ 'ի Փարիզայ Օվերնիա՝ առանց կարօտանալոյ գիտութեան թէ ընդ որոմ լայնութեամբ ոք գտանիցի: — Եւ կարի իսկ քաջ, կրկնեաց հայրն. սակայն իմ լաւեալ է խօսել զդեղեցիկ ինն ուսմանց, զոր կարծեմ աստեղագիտութիւն անուանեն: — Ով թշուառութեանս, ած թափեաց անդէն դաստիարակն. մի թէ աստե՞ղք առաջնորդեն մարդոյ յաշխարհի. և հարկ ինչ իցէ իշխանազնն 'ի հաշիւս իրիք խաւարման տաժանել, մինչդեռ ճշգրիտ նշանակեալ գտանէ զայն 'ի տումարին, որ և ուսուցանէ նմա զտոնսն շաբաթականս, զա-

ուրս լուսնի և զամն կենաց համբրէն իշխանուհեացն Եւրոպայ »։

« Տիկինն ամենևին 'ի կարծիս դաստիարակին զի-ջեալ խոնարհեցաւ։ Մանուկ իշխանն ուրախանայր տարապայման խնդութեամբ. իսկ հայրն վարանէր անստոյգ, և ասէր. « Զի՞նչ ապա արժան իցէ ուսուցանել զաւակիս։— Լինել սիրելի, պատասխանեաց այրն յորմէ հարցեալ լինէր խորհուրդ. և եթէ գիտէ զսի-րելութեանն հնարս, գիտասցէ նա զամենայն. և է այն արուեստ զոր առ ոտս մերն լեցի նմա ուսանել, առանց և ոչ դոյզն ինչ երկոցունց նոցա աշխատ լինելոյ »։

« Ընդ այս բան ժամանելով տիկնոջն առ ոգէտն քաղ-ցրապատիր, ասէ առ նա. « Քաջ իսկ տեսանի զի իմաստ-նագոյն ես քան զամենայն մարդիկ. որդին իմ զիւրն բովանդակ կրթութիւն քեզ եղիցի պարտական. սա-կայն թուի ինձ եթէ լաւ լիցի ուսանել նմա սակաւ մի պատմութիւն։— Ո՛հ տիկին, արար նա պատասխանի. և զի՞նչ օգուտ իցէ նմա այն։ Ապաքէն չիք ինչ ախորժելի և օգտակար քան զժամանակիս պատմութիւն. իսկ հնոցն պատմութիւնք ամենայն, որպէս ոմն 'ի մերոց հանճարեղ արանցն ասէր, ոչ այլ ինչ են բայց պաճուճեալ առասպելք. իսկ արդեսցս վէպք պատմութեանց անդունդք են խաւնակութեան՝ զոր չիարկ ոք պարզել։ Զի՞ փոյթ է որդւոյդ եթէ մեծն Կարոլոս հաստատեալ իցէ զկարգ երկոտասան ատենակալացն Գաղղիոյ. և թէ պայազատ նորին կակազոտ ոք լեալ իցէ։

— « Կարի իսկ քաջ ասացեր, գոչեաց անդէն դաստիարակն. ընդ բեռամբ անօգուտ ծանօթութեանց զմիտս մանկանցն հեղձուցանեն, բայց ըստ իմոցս կարծեաց՝ անհեղեղն քան զամենայն գիտութիւնս, և կարող 'ի չքացուցանել զամենայն ազգս հանճարոյ, երկրաչափութիւնն է։ Ծաղրելի ուսմանդ այդորիկ նիւթեն երեսք մարմնոց, գիծք և կէտք՝ որք չգտանին բնաւ ուրեք 'ի բնութեան։ Անցուցանեն մտօք բիւր իմն գիծս

կորացեալս ընդ մէջ բոլորակի և ուղիղ գծոյ՝ որ զայն շօշափէ, թէպէտև իսկապէս և ոչ շիղ մի կարէ ոք ընդ այն անցուցանել։ Ցիրաւի ոչ այլ ինչ է երկրաչափութիւն, բայց եթէ վատթար իմն խեղկատակութիւն »։

« Իշխանն և տիկինն ոչ քաջ իմանային զոր ինչ դաստիարակին կամք էին ասել. բայց կարծեաց նորա հաւանեցան ամենևին։

« Առն ազատի, որպիսի ոք իշխանաղին է, յաւել նա ասել, ոչ է պարտ անօգուտ ուսմամբք զուղեղն ցամաքեցուցանել։ Եթէ յաւուր միում ունիցի պէտս երկրաչափի՝ վասն զծրագիր կալուածոցն յօրինելոյ, արծաթով լիւրով տացէ չափել զնոսին »։ Ի վախճանի ընդ քննութեամբ արկեալ զզօրաւորն և զտկարն 'ի գիտութեանց, սահմանեցաւ ուսանել իշխանաղինն զկայթս պարուց։

« Բնութիւնն պարգևեալ էր նմա զձիրս երգելոյ գեղեցկապէս զտաղս դուսանականս, յորում վաղ իսկ զարմանալի յաջողութեամբ զարգացաւ։ Այլ նորա ոչ այնու շատացեալ, եդ 'ի մտի յօրինել և ինքն զայնպիսիս. բայց քանզի միշտ 'ի տաղսն աւելի իմն կամ նուազ քան զչափն դատանէր, տայր ուղղագրել զնոսին, առ մէն մի 'ի նուագացն տասն դահեկանս ոսկւոյ վճարեալ։ Իշխանուհի մայրն համարեցաւ յայնժամ զինքն մայր լինել հանճարեղ զաւակի, և յընթրիս հրաւիրեաց զդաստ հանճարեղացն Փարիզոյ։ Պատանւոյն միտք վաղվաղակի եղծեալ խանգարեցան. ստացաւ զարուեստ խօսիլ՝ առանց իմանալի լինելոյ, և կատարելապէս ընդելացաւ 'ի լինել անպիտան առ ամենայն։ Արար ծախս մեծամեծս, մինչ ծնողք նորա չար ևս քան զնա զդոյսն վատնեալ սպառէին, վարելով կեանս ըստ մեծաց իշխանաց։

« Դեռահասակ այրն մի, իւրեանցն գրացի, որոյ էր ստացուած չափաւոր, կամեցաւ ջանալ յապահովի կա-

ցուցանել զինչս մեծամեծս իշխանին և զսիկնոջն Լա-
ժոնադիերի, յինքն դրաւեալ զայնոսիկ, և փեսայա-
ցուցեալ ինքեան զիշխանն պատանի։ Յինքն զսիրտ նորա
յարեցուցեալ, յուսացոյց հարսնանալ նմա 'ի մեռոյ։
Առաջի արարաւ ամուսնութիւնն 'ի ձեռն ուրուսն խա-
բեանցն բարեկամի, և ծնողացն ընդ փառաւորութիւն
այնպիսի խնամութեանն սքանչացեալ, յանձն առին
զխնդիրն ուրախութեամբ։

« Մինչ յաւուր միումիկայր իշխանն 'ի տան խօսեցե-
լոյն, և ահա սենեկապան ոմն իշխանուհւոյ մօրն հա-
սանէ խառնեալ և ասէ. « Համբաւ նորալուր բերեմ
առ ձեզ. զկարասիս տան իշխանին և զսիկնոջն 'ի բաց
տանին ոստիկանք. պարտատէրքն դրաւեցին զամ-
նայն. բանք լինին զկալանայ, և ես երթամ ջանալ ըզ-
վարձս իմ առնուլ։ — Աղէ տեսցուք գամ մի, ասէ իշ-
խանն, զինչ դիպուածդ այդ իցէ։ — Այո, ասէ այրին,
փութա երթ պատուհասել զանզգամդ զայդոսիկ »։
Ընթացեալ հասանէ 'ի տունն. հայր նորա արկեալ իսկ
էր 'ի բանս. ծառայք իւրաքանչիւր այսր և անդր խու-
ճապեալ, և ընդ իւրեանս տարեալ՝ զոր կարացեալն
էին։ Մայր նորա կայր անդ միայնակ, անօգնական, ան-
մխիթար և յարտասուս ողողեալ. միայն յիշատակ մե-
ծութեանն և սխալանացն և անմիտ շուայլութեանցն
մնայր առ նմա։

« Հարուստ մի ժամն ընդ մօրն լացեալ որդւոյն, ա-
պա ասէ առ նա. « Մի՛ յուսահատ ինչ լիցուք. դեռա-
հասակ այրին այն սիրէ զիս խանդաղակաթ. մեծ է
վեհանձնութիւն նորա քան զընչեցն ճոխութիւն. ես
երաշխաւոր եղէց վասն քոյ, և այժմ՝ իսկ տարայց զքեզ
առ նա »։ Եւ դառնայ 'ի տուն նորա. « Զիարդ, ասէ
նա. դո՞ւ ինքն իցես, ո՛վ Լաժոնադիերդ. զի՞նչ գաս առ-
նել ստանօր, և ընդէր զմայրդ թողեր։ Երթ դատ-
նել զկինն եղկելի, և ասա ցնա զի միշտ ընդ բարին նորա
ցանկամ. պէտս ունիմ սենեկապան կնոջ, և եթէ չիցէն

նորա այլ հնարք հայթայթանաց, քան զայլս արարից
զինքն նախամեծար »։

« Իշխանն հատեալ յափշտութիւն և զայրագնեալ 'ի
սրտին, չոգաւ դատանել զվաղեմի դաստիարակն, և 'ի
սիրտ նորա զցաւս հասեալոյ վշտացն հեղեալ, եհարց
խորհուրդ 'ի նմանէ։ Սա խրատ ետ նմա լինել որպէս
զինքն դաստիարակ մանկուանոյն։ « Ա՛հա՛, ոգէտ եմ
բնաւին. և դու ոչ ինչ ուսուցեր ինձ, և գլխաւոր պատ-
ճառք աղէտիցս կացեր »։ զայս ասէր և հեկեկայր։
« Վէպս յօրինեսջիր, ասէ ցնա մատցի ոք՝ որ կայրն
անդ, յոյժ մեծաշահ արուեստ է այդ 'ի փարիզ »։

« Թշուառ պատանին դրեա թէ զնոյն եղիս ընդունե-
լութիւն յամենայն բարեկամաց աւուրցն բարեկեցու-
թեան. և քան յայլ ժամանակս կենացն՝ լաւ ևս 'ի կէս
աւուր ծանեաւ զմարդիկ։

« Մինչ կայրն 'ի տագնապ անյուսութեան ընկղմեալ,
ետես զի մերձենայր դեսպակ մի երկանիւ, ըստ հնոցն
ոճոյ. ազգ իմն սայլի ծածկելոյ շուրջանակի, հանդերձ
մաշկեղէն վարագուրօք. և զհետ գայնն ջրոք սայլք մե-
ծամեծք, աղխաղխեալք բեռամբք։ Եւ էր 'ի դեսպակին
երիտասարդ մի խոշորահանդէսք, այլ գեմաք առոյգ և
կայտառ, և 'ի նմա քաղցրութիւն և զուարթութիւն
նկարեալ. փոքրահասակ կին իւր թխամորթ կայր առ
նմա՝ սարսռելով յընթացից դեսպակին, որ ոչ երթայր
հանդոյն սրձնասիրացն կառաց։ Ճանապարհորդն գի-
տեաց մտադրութեամբ՝ զիշխանն կացեալ անշարժ և 'ի
վիշտս ցաւոյն խորասոյզ։ « Ո՛վ տէր, գոչեաց նա, կար-
ծեմ թէ ժանոյ է դա »։ Յայդ անուն՝ իշխանն զաչս 'ի վեր
ամբառնայ, և կառքն դադարէ յընթացից. « Ժանոյ է
դա, ինքն իսկ ժանոյ »։ Անդէն այրն նկնահասակ՝ 'ի կա-
ռացն 'ի վայր վազեալ ընթանայ գիրկս արկանել վա-
ղեմի ընկերակցին։ Ժանոյ ծանեաւ զԳոլէն. ամթի և
արտասուք զերեսսն ծածկեցին. « Դու՞ քաջալեր զոլէր
զես, ասէ Գոլէն. բայց որչափ մեծ իշխան ոք և իցես,

սակայն միշտ սիրեցիր ես զքեզ »։ Ժանոյ՝ ամենապարտ և խանդաղատեալ, պատմեաց հեկեկանօք զանցս պատմութեանն 'ի մանկէ։ Եւ ասէ Գոլէն. « Եկ յօթեւանն իմ ուր բնակեմ, և անդ զմնացորդն պատմեսցես. գիրկս արկ տիկնոջ իմում, և գնասցուք 'ի միասին 'ի Ճաշել »։

« Եւ երթան երեքին հետիոտս, և աղեալք իւրեանց զկնի։ « Եւ զի՞նչ եղեալ այդ կաղմածդ ամենայն. մի թէ քոյ եղեն։ — Այո, իմ են և կնոջ իմում։ Գոմքս երկիրս մերմէ. և ես կամ 'ի գլուխս գեղեցիկ գործարանի երկաթոյ գրուագելոյ և պղնձոյ։ Այլ ինձ կնութեան զգուստս մեծատան ուրումն վաճառականի կահուց կարևորաց 'ի պէտս մեծաց և փոքունց։ Բաղումս վաստակիմք, և օրհնէ զմեզ Աստուած. զկնճակ մեր ոչ փոխեցաք ամենևին, և եմք բարեբաստք. մատուսցուք նպաստս բարեկամին մերում Ժանոյի։ Ի բաց թող զկշխանական պատիւ. ամենայն մեծութիւնք աշխարհի ոչ արժեն զբարեկամ մի բարի։ Եկեսցես ընդ իս յերկիր մեր. և ուսուցցից քեզ զարուեստն իմ, որ չէ ինչ դժուարին. կացուցից յառանձինն տեղւոջ և կեցցուք զուարթութեամբ յանկեան աշխարհին յորում ծնեալս եմք »։

« Ժանոյ այլ յայլմէ եղեալ, զդայրյանձին զցաւս խառն ընդ ուրախութեան, գորովանաց և ամենոյ. և ասէր ընդ միտս իւր. « Մատն եղեն ինձ ամենայն բարեկամք իմ առ երեսս պերճապայծառք. իսկ Գոլէն՝ որում ոսկենհար եղէ, դայ հասանէ ինձ յօգնութիւն։ Որպիսի՞ իրատ »։ Լաւութիւն ոգւոյն Գոլէնի զարգացոյց 'ի սրտին Ժանոյի զբողբոջ ընդաբոյս բարւոյն, զոր չէ ևս հեղձուցեալ էր աշխարհ։ Եւ խելամուտ եղև նա 'ի սրտի իւրում զի չէր նմա մարթ լքանել զհայր իւր և զմայր։ Եւ ասէ Գոլէն. « Խնամ տարցուք մեր քում. իսկ յաղագս պարզամիտ հօր քոյ, որ կայ 'ի բանտի, տեղեակ եմ սակաւ մի կենցաղական իրաց. տեսեալ պարտատերացն թէ չէք ինչ նորա, զինչանիցն շա-

տանալ սակաւուք. յիմ վերայ հոգդ այդ ամենայն»։ Եւ այնչափ արար Գոլէն մինչև յաջողեցաւ հանել զհայրն 'ի բանտէն։ Ժանոյ դարձաւ անդրէն յերկիր իւր ընդ ծնողաց իւրոց, որք վերստին ձեռն արկին յիւրեանց արուեստն նախկին։ Եւ էառ նա կնութեան զքոյր Գոլէնի, որոյ հանգոյն եղբօրն ունելով բարս, բարեբաստ յոյժ արար զնա։ Եւ հայրն Ժանոյ, և մայրն և որդին տեսին թէ ոչ 'ի մնոտի պերճութեան եգեալ կայ երջանկութիւն »։ (Վոլդէռ, Վէպք Խաղաղութեան)։

Բ.

Յաղագս Բանախօսուրեան կամ ընդդայնկի մտածուրեանց.

Պատմութեան կրթութիւնն շատ յարմար է համբակաց երեւակայութիւնն զարգացընելու, սորվեցընելով անոնց զմարդիկ և զառարկայս նկարագրելու կերպն։ Բայց պատմէն բաւական չէ. պէտք է խորհրդածել ալ գիտնալ, և իր խորհրդածութիւնքն ուրիշներու հաղորդել։ Այս կրթութիւնս աւելի ծանր է, բայց պատմութեան հաւասար կարևոր է։

Աշակերտք մեծ օգուտ կրնան քաղել, եթէ վարժին իրենք իրենցմէ ընդլայնելու այնպիսի ուղիղ մտածութիւններ և հաստատուն սկզբունքներ, զորոնք կարենան օր մը գործածել, և իրենց պատմութեանցը մէջ փիլիսոփայական և բարոյական գլխաւոր ճշմարտութեանց վրայ բանախօսութիւններ աւելցընեն։ Նիւթ տրուի իրենք

բենց օրինակի համար՝ որ բացատրեն ստեղծող և մտաւոր պատճառի մը էութիւնն ցուցընող բնական երևոյթներն, մարդս իրեն կեանք տուող անձը սիրելու և յարգելու ինչ պարտականութիւն ունի, ինչ է մտաց խիղճն և որո՞նք են անոր մեր վրայ դրած պարտաւորութիւններն, ինչ բան է բարի գործոց իբրև վարձք մը եղող նեղբին հաճութիւնն, և չար գործոց պատիժ եղող խղճի խայթ։ Աշակերտաց այս ծանր նիւթերով աշխատեալ միտքն սթափեցընելու և միանգամայն ամէն տեսակ նիւթոց վրայ խօսելու վարժեցընելու համար, կրնայ նաև գիտութեանց, արուեստից կամ մատենագրութեան վրայօք խորհրդածութիւններ ընել տրուիլ իրենց։ դարձեալ կրնայ նիւթ տրուիլ որ բնութեան քանի մը երևոյթներն նկարագրեն և բացատրեն։ կամ քննադատութեամբ ցուցընեն թէ արդեօք դպրութիւնք՝ տերութեանց բարեկարգութեան և զարգացմանն ի՞նչ օգուտ կը բերեն։ որ ժամանակներն աւելի նպաստաւոր են արուեստից։ ի՞նչ է բանաստեղծութեան, ճարտասանութեան և պատկերահանութեան ոգին, և անոնց յառաջադիմութեան միջոցներն որո՞նք են։

Ցիշողութիւնն և խորհրդածութիւնն կրնան այս խնդիրներս լուծելու համար իրենց նիւթ մատակարարել։ վարժապետն ալ իր փորձառութեամբն անոնց առաջնորդելով, կարող է որ և իցէ նիւթ մը տալու միջոց՝ կարևոր տեղեկութիւնք աւելցընել։ Այսպէսով առանց իրենց միտքն խիստ բարձր տեսութիւններով աշխատցընելու, շուտով կը սկսին շատ մը օգտակար մտածութիւններ իրենց ընտանեցընել, և միտքերնին կը վարժի ճիշդ խորհրդածելու, առանց իրենց հասակին բնական աշխուժութիւնն և վայելչութիւնն կորսնցընելու։

Ը՛տիր բանախօսութիւն մը պէտք է ըլլայ,

Ա. Բացայայտ։ Այս յատկութեանս վրայ չենք երկընցներ։ արդէն շատ անգամ՝ անոր վրայ խօսած ենք։

Բ. Սահմանաւոր։ Կրօնական կամ բարոյական խմաստ մը, կամ նոյն իսկ բանասիրական հակաճառութիւն մը պէտք չէ նկատել իբրև նիւթ մը, զոր մէկն կարենայ ուղղածին պէս ընդարձակել։ Վիճաբանութեան միջոց պէտք է չափ դնել երևակայութեան, և ինչպէս ուրիշ տեղ զուրցեցինք՝ գրուած սկզբունքներէն ճշդիւտ կերպով հետևութիւններ յառաջ բերել։

Գ. Ճոխ։ Ընտիր բանախօսութիւն մը պէտք չէ աւելորդ ընդլայնմունք պարունակէ, այլ միայն նիւթոյն կարևոր եղածն պարփակէ։ Ճոխաբան ըլլալու համար պէտք է գրելէն առաջ՝ խնդրոյն վրայ լաւ մը մտածած ըլլալ, խնամով քննած ըլլալ զայն, անոր իւրաքանչիւր մասունքն պրպտած ըլլալ, և իր փատաւ ին ալէկ կարգաւ մը դնելէն եաև, անոնց դէմ ըլլուելիք առարկութիւններն կանխատեսել և առաջուց զանոնք հերքել։ Սակայն այս մասին մէջ, ինչպէս նաև պատմութեան մէջ, կիրթ ճաշակն մեզի կը սորվեցընէ ճոխաբան ըլլալ՝ առանց երկայնաբան ըլլալու։

Դ. Եռանդուն։ Բանախօսութիւնն պէտք չէ ըլլայ պարզ փիլիսոփայական, այլ պատճառաբանութիւնքն այնպիսի ճարտասանական ձևերով զարդարուած պէտք է ըլլան, որ անոնց չէ թէ աւելի ճշդութիւն մը, այլ աւելի յանկուցիչ և ախորժելի կերպ մը տան։ Գալաղլեցի հեղինակ մը ասանկ կ'ըսէ։ « Նայէ որ սասիկ նուրբ խմաստներն մարմնաւորես, ճշմարտութեան խստութիւնն զգայուն խօսքերով մեղմացընես, և այս ամէնը մեր զգայութեանց ըմբռնման ասիճանն ինչեցընես։ Կ'ուզենք որ առարկայք մեր աչաց առջև գան։ կ'ուզենք ճշմարտութիւն մը որ սկիզբէն զմեզ գրաւէ, և մեր հոգին լուսով և ջերմութեամբ լեցընէ։ Փիլիսոփայութիւնն կիրթ ճաշակով գրուած ըսուելու և մեզի ախորժելի ըլլալու համար պէտք է երևակայութեան զարդարուն վայելչութիւն, ներդաշնակութեան քաղցրութիւնն և կրից կենդանութիւնն առնու։

Ինչպէս պատմութեան համար ըրինք, դրած սկզբունքներնիս օրինակներով հաստատենք. ընտրենք չորս բանախօսութիւն, առաջինը՝ կրօնից վրայ, երկրորդն՝ բարոյականի վրայ, երրորդն՝ ուսումնական նիւթոյ մը վրայ, և չորրորդն՝ մատենագրութեան վրայ, իւրաքանչիւրին սկիզբն անոր բովանդակութիւնն դնելով։ Այս միջոցով աշակերտք կը սորվին աղէկ զանազանել նիւթոյն խսկութիւնն անոր վրայ աւելցընելիք ընդլայնումներէն։ Պոսիւէ այս ոճն կը բանեցընէր, երբ իր աբբայարն աշակերտին հռետորական արուեստն կը սորվեցընէր. « Աւելի օրինակներու վրայ աշխատած ենք, կ'ըսէր, քան թէ վարդապետութեանց վրայ. և աղդոյ ու սրտաշարժ [Ճառեր կարդացած միջոցնիս՝ սովորութիւն ունէինք վերցընելու անոնց մէջէն ձևերն և ուրիշ զուրցուածքի զարդերն, որոնք անոնց երբև մարմնին և մորթն են. միայն պատճառաբանութիւններն կը ձգէինք, որով դիւրին կ'ըլլար տեսնել թէ այս դրութեանց մէջ տրամաբանութիւնն ի՞նչ կը գործէր, և հռետորական արուեստն անոնց վրայ ի՞նչ կ'աւելցընէր »։

Ա. Կրօնական բանախօսութիւն.

Զգացումն աստուածորդական.

Բովանդակութիւն.

Աստուածութեան զգացումն միայն կրնայ աղդաց զօրութիւն և մեծութիւն տալ. պատմութիւնն այս սկզբունքս կը հաստատէ։ Անով միայն իւրաքանչիւր անձին անդորրութիւնն և երջանկութիւնն կրնայ ապահովիլ։

Գիտութեանց, մատենագրութեան և արուեստից մէջ բարձրագոյն մտածութեանց և վսեմագոյն ներշնչումնց աղբիւրն անիկայ է։

Անով աղքատն և տարագիրն մխիթարութիւն կը դտնեն, և մեր հոգւոյն ամենայն զգայութիւնքն անպատմելի քաղցրութիւն մը կը զգենուն։

Կրօնասէր մարդն ամէն տեղ, բնութեան առարկայից մէջ, տերութեանց աւերակացը մէջ, բայց ամենէն աւելի՝ առաքինական գործոց մը և անձնանուիրութեան առթի մը մէջ իր Աստուծոյն զգացման ազդեցութիւնն կ'իմանայ։

Բանախօսութիւն.

« Ընդ աղդման աստուածութեանն ամենայն ինչ մեծ է և աղնուական և անյաղթելի յանձկագոյն սահմանս անդ կենաց. առանց այնորիկ ամենայն ինչ անզօր է և անախորժ և դառն 'ի վայելս անգամ մեծութեանց։ Նա լինքն ետ Սպարտայ և Հռովմայ զվիահեծան տերութիւն, երևեցուցեալ զաստուածն իբրև խնամակալս և քաղաքակիցս բնակչաց նոցա առաքինեաց և չքաւորաց։ Ընդ անհետ լինել այնորիկ՝ զառածան նոքա յախտս և 'ի դանձուց ճոխութիւն, որով և անկան ընդ դերութեամբ, յորժամ բաց յոսկւոյն և 'ի հեշտութեանց չտեսին այլ աստուածս յաշխարհի։ Այսրսպարկուսէ զնւրև մարդն զբարութիւնս բախտի. ընդ բառնալ աղդմանս'ի սրտէն, տիրէ 'ի նմա տաղտուկ և ձանձրութիւն. և որքան 'ի նմանէ հեռացեալ գտանի, անկանի'ի թաղծութիւն, և առա 'ի մաղձալից տրամութիւն, և յետոյ ուրեմն յանցոյս վհատութիւն։ Մարդկային կեանք, հանդերձ իւրովքն պերճութեամբք և զուարճութեամբք, ոչ ևս այլ երևին նմա կեանք, յորժամ ոչ ևս երևի նմա այն անմահ և աստուածեղէն։

Որպէս զինչ և որերոյ Ժամանակիս ապականութիւնքն լցեն, երկնատուս աղդումնդ այդ սիրելի է միշտ որդւոց մարդկան։ Արկանէ եռանդն յոգիս արանց հանճարեղաց, յաւերժական նշանակօք երևեալ առ նոսա։ Յանդիման առնէ աչաց երկրաչափին զանպատումսահմանս անբաւութեան, երաժշտին՝ զքաղցրայարմար դաշնակութիւնս զմայլեցուցչս, և պատմաբանին՝ զանմահ ստուերս արանց առաքինեաց։ Կանգնէ 'ի տեսիլ քերթողաց զՊառնասոս, և դիւցազանց զՈլիմպոս։ Իդառնաղէտ աւուրս Ժողովրդոց զլոյս իւր ծագէ. տայ անձանց թշուառաց զհայրենիս, և զկարօտ՝ որոց չիցեն ինչ կոչուսեալ։ Ծաւալէ զնանձարրօք մերովք զանուշակ վայելս անմեղութեան, և զգերեզմանօք հարց մերոց ըզյոյսն անմահութեան։ Դագարեալ հանդչի 'ի միջի անդ մերոցս ալմկալից քաղաքաց, յապարանս արքայից մեծամեծաց և 'ի մեծաշուք տաճարս կրօնից։

« Բնակէ յաՀախ յամայիս անապատաց, և 'ի Ժայռս անձաւաց ածեալ ձգէ զմեծարանս հանուր աշխարհի։ Այսպէս զշուք մեծապայծառ յաւել նա 'ի ձեզ, աւերակքդ Յունաստանի և Հռովմայ, և 'ի ձեզ խսկ, խորհրդաւոր երդունքդ եգիպտականք։ Յանհանգիստ հոգս մերոցս զբաղմանց զնա խնդրեմք անդադար։ Այլ յորժամ հանդիսանայ այն յանակնկալ ինչ գործ առաքինական, կամ 'ի պատահման իրիք՝ զոր դիպուած երկնառաք անուանեմք, կամ 'ի վեհ և յանպատում կիրս եռանդան, զորս կոչեմքն առաւելապէս հանդէս սրտեռանդն հոգւոյ, առաջին աղդումն է նորին՝ ներդործել 'ի մեզ զսաստիկ կիրս ուրախութեան, և երկրորդն՝ տալ հեղուլ զարտասուս։ Ընդ փայլումն աստուածեղէն լուսոյդ հրաշայեալ զուարճանայ հոգին, նշմարելով զերկնաւոր հայրենիսն, այլ և տխրի միանգամայն՝ ընդ տարամերժիլն յայնմանէ» ։ (Պերնարդէն դը Սէն Բիէր, Դիպուածք Բնութեան)։

Բ. Բարոյական բանախօսութիւն.

Սէր հայրենեաց.

Բովանդակութիւն.

Նախախնամութիւնն ամէն մարդու իր ծննդեան երկիրն սիրելու բնական բերում մը աղդած է։ Ամենէն աւելի անբեր և տխուր նահանգաց բնակիչքն՝ կերպով մը մեծամեծ առաւելութիւններ ունեցող դաւառաց բնակիչներէն աւելի իրենց հայրենեացը հետ կապուած են սրտով։ Իր երկրին մէջ բնակող Եսքիմացիէն աւելի երջանիկ մարդ չկայ։ Կրնայ դեռ ասոր ուրիշ օրինակներ ալ յառաջ բերուիլ։

Մանաւորապէս երբ մեր բնիկ երկրէն կը հեռանանք, այն ատեն աւելի կը զդանք զմեզ անոր հետ կապող սէրն։ Բաղմաթիւ օրինակք կը հաստատեն նաև այս ճշմարտութիւնս։ Այսպէս Անդրոմաքէ, ինչպէս որ Վիրգիլիոս զինքը կը ներկայացնէ, Եպիռոսի մէջ ինքզինքը կը մխիթարէ, իր աքսորանաց տեղւոյն տրոփական անուններ դնելով։

Եթէ այս բնածին բերման աղբիւրն երթալու ըլլանք, թերևս մեծ կարևորութիւն մը չունեցող կարծուած, և սկզբան անտարբեր երևցող պարագայներ կը դտնենք. բայց նախախնամութեան կամքն՝ այսմանր հանդամանքներն ամենէն աւելի քաղցր զդացմանց և երբեմն դիւցազնական մեծամեծ գործոց սկիզբնապատճառն կ'ըլլան։

Բանախօսութիւն.

« Ի բոլոր բնակիչը աղգմունս անկեալս 'ի մարդն՝ չէք ինչ առաւել դեղեցիկ և բարեվայելուչ քան զսէր հայրենեաց։ Եթէ մշտակաց իմն սքանչելեօք օրէնքդ այդ չէր պահեալ հաստատուն, և եթէ որպէս այլոց բաղմաց՝ նոյնպէս և այնմ չլինէաք մոռացիր, ձեռեալ դնային մարդիկ 'ի բարեխառն կողմանս աշխարհաց, զմնացորդ մասն հողագնոցս Թողեալ ամայի։ Մարթ է տեսանել մեզ քանի՛ աղէտք չարեաց 'ի վերայ հասանէին արդեօք 'ի ժողովելոյ մարդկան աղգի 'ի մի եւթ մասն երկրիս։ Առ 'ի վերջ լինել յաղէտից ասի, աստուածախնամ տեսչութիւն դոգոյս անյաղթելի իմն զօրութեամբ զոսս իւրաքանչիւր մարգոյ ընդ հողոյ հայրենի երկրին կապեալ կաշկանդեաց։ Սառամանիք Իսլանտիոյ և հրատոչոր աւազուտք տիրիկեցւոց աշխարհին չմնան երբեք թափուրք 'ի բնակչաց։

« Ի և այս դիտելոյ արժանի, զի որչափ և հող երկրի իրիք ամուլ իցէ, և օդք վայրացն խստաշունչք, կամ որ նոյն է ասել, ըստ առաւելութեան չափոյ զրկանացն կրելոց անդէն յաշխարհին, նոյնչափ ևս քաղցր է մեզ այն և ցանկալի։ Արդարև նորանշան և գերաշխարհիկ իմն է՝ զի ձախողութեամբ կապեացին սիրտք, և որ միայն զտաղաւար մի կորոյս, նոյն և կարօտագոյնս առ հայրենի յարին սրտակաթ լինիցի։ Անսովոր իրացդ այն են պատճառք, զի 'ի փարթամանալս մերում յառատ պտղաբերութենէ երկրի՝ որ յոյժ արգաւանդն իցէ, եղծանի յայնժամ պարզութիւն շաղկապիցն հաստատելոց 'ի հարկէ մերոցս կարօտութեանց։

« Զճշմարտութիւն դիտողութեանդ հաւատամ ամենայն։ Առաւել սիրէ զհիւղ իւր վայրենին, քան իշխանն զյարկս ապարանից իւրոց։ և լեռնորդեայն առաւելագոյն վայելս յիւրում լերինն գտանէ, քան յակօս իւր՝ դաշտացն բնակիչ։ Հարց աղէ ցհովիւն սկովտիացի եթէ կամիցի՞ զվիճակ իւր ընդ վիճակի առաջին իշխանին երկրի փոխանակել։ Ի սիրելի աղգէն իւրմէ կացեալ բացական, զնորա յիշատակն պահէ 'ի սրտի։ ամենայն ուրեք զնաչենան և զհեղեղատս և զամպսն խնդրեալ հարցանէ։ ոչ այլ ինչ ցանկայ, բայց ուտել զդարեհացն և ըմպել զկաթն այծից և երգել 'ի հովտին զտաղս նուագացն, զոր հարք իւր երբեմն երգէին։ Հիւծեալ սպառի, եթէ յերկիր ծննդեանն չդառնայ վերստին։ Տունկ իմն է բուսեալ 'ի լերին։ հարկ է զի արմատք իւր կայցեն յապառաժին։ և ոչ ուռճանայ, եթէ ոչ 'ի հողմոց և յանձրևաց կոծեսցի։ իսկ հող և հովանի և արև դաշտավայրին մեռուցանեն զնա։

« Ո՛վ օք կայցէ առաւել երջանիկ քան զեսքիմացին յահագնատես աշխարհին, զինչ իցեն նմա ծագկունք մերոցս գաւառաց առ սառնամանեօք կողմանցն Լապրատորայ, և ապարանք մեր առ իւրովն ծխամած փապարաւ։ Ի գալ գարնանի մոռանէ 'ի նաւակ ընդ ամուսնոյն, գնալ ընդ սառոյցս ուրեք ծածանուտ։ և վարեալ 'ի յորձանաց յառաջէ յանդունդս ծովուն, յաթոռ անդր Աստուծոյն մրրկաց...։

« Այսպէս վերին նախախնամութիւնն կապեալ ըստիրտ մեր ընդ հայրենեաց, արդարացուցանէ միշտ զճանապարհս իւր, որով բիւր պատճառք ընդ առաջ եղանեն մեզ սիրելոյ զաշխարհ մեր հայրենի։ Արաբացին չմոռանայ երբեք զգուվթ ուղտոյն, զվիթն և մանաւանդ զնժոյգն, զընկեր իւրոցն արշաւանաց։ Հնդիկն յիշէ միշտ զտնակ իւր, զդամաթզենին և զհետս շաւղաց վադերաձիոյն և փղին։

« Պատմեն եթէ ծառայ ոմն նաւասաի Անգղիացի այնպէս իմն կապեալ էր 'ի սէր նաւուն ուր ծնեալն էր, մինչև չհանդուրժել նմա բաժանել անտի և ոչ մի վայր-

կեան։ Կամեցեալ պատուհասել զնա, սպառնային ա-
ռաքել 'ի ցամաք. յայնժամ փութայր նա թաքչել 'ի
յատակս նաւուն, և զաղաղակս արկանէր։ Եւ ուստի
էր այդ սէր նաւասուէյն առ փայտն հողմակոծ. ան-
շուշտ ոչ էր սոսկ 'ի տեղեացն կամ 'ի ընութեանն հան-
գամանաց։ Մի թէ կայ՞ն ինչ կցորդութիւնք շաղկա-
պեց ընդ վեճակ մարդոյն և նաւափայտին. կամ թէ
գոնանի՞ արդեօք վայելս ինչ քաղցրութեան, յորժամ
զուրախութիւն իւր և զվիշտ 'ի խանձարուրսն անդ
ժողովէր միանգամայն։ Ի բնէ քաղցր է սրտի ամփո-
փել 'ի ներքս յինքեան. որչափ սակաւ ցուցանէ զինքն
արտաքոյ, նոյնչափ ևս նուազ տեղի վերոյ առնէ յան-
դիման. վասն որոյ որք կարի խիտ զդայունքն ելցեն, որ-
պէս թշուառքն առ հասարակ, ախորժեն յանձուկ դա-
դարս ընակել։ Զոր ինչ զդացումն ժառանգէ զօրու-
թեամբ, զնոյն կորուսանէ յընդարձակէն մեծու-
թեամբ։ Մինչ հռովմէական հասարակապետութիւնն
յանգէր ցլեառնն Աւենտին, որդիք նորա կամակար
խնդութեամբ 'ի վերայ նորա զկեանսն դնէին. այլ վեր-
ջացան 'ի սերոյ նորին, յորժամ սահմանք իւր մինչև
ցԱլպիս և ցՏաւրոս ձգեցան։

« Յորժամ 'ի հայրենի երկրէն հեռացեալ գոանիմք,
յայնժամ մանաւանդ զդամբ յանձինս զազգուն ընա-
կան, որ կապէ զմեզ ընդ նմա։ Ի պակասել անդ իրա-
կանին, հնարիմք տածել 'ի մեզ զանրջական ցնորս ան-
դաձմանց. Ճարտար իսկ է սիրան 'ի պատրանս խա-
բէութեան, որոց միանգամ 'ի գիրկս կնոջ ածեալ և
սնեալն ելցեն, արբեալ իսկ է նոցա զբաժակ մոգացածին
խորհրդոց պատրողականաց։ Ի ուրեք զի մարդն ըստ
ձևոյ հայրենի տանն զտաղաւար իւր յարդարէ. և է
զի զանտառ մի, կամ զհովիտ կամ զբլուր ըստ քաղցր
անուանց բնիկ աշխարհին յորջորջէ։ Անգրոմաքէ տայ
վտակի միոյ զանուն Սիմոյիս։ Եւ որպիսի սրտառուչ
ճշմարտութիւն գտանի 'ի վտակն փոքրիկ, որ զմեծ

գետն հայրենի յիշեցուցանէ։ Հեռացեալք յափանց՝ որ
մերոյ ծննդեանս ականատեսք կացին, իբր նուազեալ
ինն տեսանեմք զընութիւն, և որպէս ընդ ստուերս այ-
նորիկ զոր կորուսաքն, այնպէս հայիմք ընդ նա։

« Եթէ ոք հարցանիցէ եթէ զինչ ուրեմն ելցեն շաղ-
կապքդ զօրաւորք, որովք ընդ տեղւոյ ծննդեանս կա-
պիմք, դժուարին ելցէ մեզ առնել զպատասխանին։ Ելցէ
թերևս ժամի մօր կամ հօր և կամ քեռ. թերևս յիշատակ
սնուցողին զմեզ դաստիարակին ծերունւոյ, և ման-
կանցն համատոյց աւուրցն տղայութեան. կամ թերևս
խնամքն ընկալեալք 'ի դայեկէն կամ 'ի բաղմամեայ ծա-
ռայէն, որք մասն են տանն կարևոր. վերջապէս՝ հան-
գամանք երբայ դուշնաքեայք այլ և կարի խիտ սովորա-
կանք. շուն մի՝ որ հաջէր զիլէրն 'ի դաշտին, սոխակն որ
ամի ամի դարձ 'ի մրգաստանն առնէր, բոյն ծիծառանն
առ պատուհանաւ, զանգակատուն եկեղեցւոյն՝ զբար-
ձամբք ծառոյն 'ի վեր երևեալ, գեղձն գերեզմանաց և
տապանն 'ի ձև գոթացի. բայց ամենայն այդ պատ-
ճառքդ դուշնաքեայք ցուցանեն հաւատի եթէ գոյ
վերին տեսչութիւն, և թէ անմարթ է լինել այնոցիկ աղ-
բիւր սիրոյն հայրենեաց, և մեծամեծ առաքինութեանցն
'ի սիրոյ անսկ յարդիւնս եկեղց, եթէ գերագունի
իրիք կամաց էր զայն այնպէս սահմանեալ։ (Շատ-
պրիան, Ոգի դրիսպոսական կրօնից)։

Գ. Ոռոշմնական բանախօսութիւն.

Ամռանը երկրի.

Բովանդակութիւն.

Գետք և վտակք իրենց ծագումը կ'առնուն լերանց գլուխն ինած ջրերէն, հոն տեղուանք թանձրացող գոլշնեերէն կամ ջուր դարձող ձիւներէն:

Երբոր ձիւնք կը հալին, և սաստիկ անձրևք կը թափին, ջրերն կարգէ դուրս արագութեամբ մը գահավիժելով, բարձր հովտաց կողերն ծածկող քարի կտորուանքներն իրենց հետ միատեղ կ'առնուն կը տանին:

Այս կտորուանքներն նախ իրարու շփուելով կը մաքրուին և կը յղկին. վերջը վտակին ընթացքն մեղմանալով և իր յատակն աւելի ընդարձակելով, խոշոր կտորներն եղերքը կը մնան, իսկ մանրերն աւելի վար կը նստին: Իսկ վտակին ընթացքովն ինչուան իրեն բերան տարուած տղմի մասունքներն հոն կը կենան, եղերքներն կը դիզուին, և ծովուն աւազին հետ խառնուելով, նոր երկիրներ կը ձևացընեն, որոնք մշակութեամբ քիչ ժամանակէն հարուստ և արդաւանդ հողեր կ'ըլլան. բնախուզից առմունք երկրի ըսածն այս է:

Բանախօսութիւն.

«Ջուրքն հոսելէ՝ 'ի կատարաց և 'ի բարձանց լերանց, կամ գոլշնէ խտացեալք անդանօր, և կամ ձիւնք անհամար վտակօք ընդ երկայնութիւն զառ 'ի թափ կողից նոցին եկեալ ելանեն, և յերկրէ անտի մասունս ինչ 'ի բաց տարեալ, յանցս իւրեանց ակօսս մանուանս գործեն: Վտակքն այնոքիկ ժողովին ընդ հուպ 'ի խոռոչս առաւել խորափորս, որովք ծակոտեալ են երեսք լերանց. և ընթանան 'ի հովիտս խորաձորս, զստորոտս նոցին 'ի բաց պեղելով, և դնան տպա կազմել գետս և հեղեղատս, որք անդրէն զջուրսն՝ զորս մթնոլորտն առեալ էր 'ի ծովէ, միւսանգամ անդր տանին:

«Ի հալել անդ ձեանց, կամ յորժամ տեղատարափ անձրևի հասանէ 'ի վերայ, զանգուած ջուրց լերանց աճեցեալ յանկարծօրէն, սաստիկ ինն երագութեամբ յորդադէմ ընդ զառ 'ի թափսն բերի. և ջուրքն երթեալ բախին սաստկութեամբ ընդ փլուզելոց կտորացն ստորոտս, որք զհամբրէն կողս բարձրաբերձ հովտացն ծածկեն. և առեալ տանին ընդ իւրեանս զբեկորս բոլորշիս, յորոց կատարքն այնոքիկ ձևացեալք են. և զնոսա շփմամբն և ևս յղկեալ ողորկեն. բայց ըստ հասանել նոցա 'ի լայնագոյն յատակս, ուր մարթ է նոցա ծաւալանալ, զստուարագոյնս 'ի քարանցն՝ զորս յընթացսն թաւալէին, յեղերսն արկանեն. մանրագոյնքն 'ի բեկորոցն 'ի ջրոյն խորս ելանեն, և միայն կարի յոյժ մանր մասունք և կամ տիղմն անտեսանելի 'ի մեծագոյն փոսս գետոյն հասեալ ժամանեն: Եւ է իսկ յաճախ զի ընթացք ջուրց, չև զկոնարհագոյն զմեծ հեղեղատն կազմեալ, հարկաւորին անցանել ընդ լիճ ուրեք լայնածիր և խորայատակ, ուրանօր տիղմ նոցին 'ի վայր ելա-

նէ, և անոմ եղանեն արտաքս ականակիտք։ Բայց խոնարհագոյն հեղեղատքն և առուակք՝ 'ի ցածագոյն լերանց կամ՝ 'ի ելքոց բխեալք, գրեթէ զոր ինչ յորձանք ուղխից բարձրաբերձ լերանց՝ զնոյն և ինքեանք ընդ իւրեանց անցեալն տեղիս գործեն։ Ի թանձրատարափ անձրևաց ուռուցեալք և 'ի հողխատն կամ յաւազուտ ելքոց ատորոտս՝ որոց յընթացս իւրեանց պատահեն՝ վազեալ յորդախաղաց, զբեկորս նոցին առեալ տանին 'ի խոնարհագոյն վայրս՝ զորս ողողանեն, և որք ըստ իւրաքանչիւր ողողմանց և սքան զևս կուտակագեղ բարձրանան։ Յետոյ ուրեմն յորժամ հեղեղատքն 'ի լիճս մեծամեծս և կամ՝ 'ի ծով հասանեն, և սրարշաւ ընթացքն՝ որ ձգեալ տանէր զմասունս տղմոյն՝ դադարէ բոլորովին, մասունքն այնոքիկ զնստին զեղերօք վայրացն, ուր գետախառնունքն լինին, և 'ի վախճանի անդանօր կազմեն զվայրսն՝ որովք երկայնին ծովեզերք։ և եթէ եզերքն եցեն այնպիսիք, զի ծովն անդր զաւալն արկանիցէ, և 'ի ծաւալումն նոցին նպաստ լինիցի, այնուհետև գաւառք և ողջոյն թագաւորութիւնք 'ի վեր երեին, բազում անգամ՝ քան զամենայն գաւառս արգաւանդք, և ապա ընդ հուպ քան զայլ կողմանս աշխարհի փարթամագոյնք, եթէ վարչութիւնք պետութեանց թոյլ տացեն ճարտարութեանց բարգաւաճել անդանօր 'ի խաղաղութեան »։ (Գիւ-Լիէ, Խօսք յաղագս յեղափոխութեանց երեսաց հողագնդոյս)։

Դ. Մատենագրական բանախօսութիւն

Յաղագս մատենագրական հետազօտութեան յետքին տասներորդ դարու.

Բովանդակութիւն.

Մարդս հետաքրքրութեան բնական բերմամբ կը ծնանի. ամենայն մարդիկ, ամենայն դարք, իրենցմէ առաջ եղողներուն հետևելու հակամիտութիւն մը ունեցած են. որով և արդի դպրութիւնք հարկաւ քիչ կամ՝ շատ հետաքրքրութեան գրոյցն կ'ունենան. բայց գերակատար գործոց հետաքրքրութիւնն այս առաւելութիւնս ունի՝ որ գեղեցկին և ճշմարտին անեղծական կերպարանքն կ'առնու, մինչդեռ անարուեստ գործոց հետաքրքրութեան մէջ ճշմարիտ գեղեցկութիւնն կը պակսի։

Լուդովիկոս չորեքտասաներորդի դարուն մեծամեծ մատենագիրքն սաստիկ եռանդեամբ, բայց առանց չափազանցութեան երթալու նախնեաց գրոցը վրայ աշխատեցան. օտար երկրի մը և ուրիշ ժամանակի մը յատուկ կերպերն գործածելով հանդերձ, միշտ արդի և գաղղիացի մնացին մտածութեամբ։

Ռասին, Ֆենելոն, Պոսիւէ, Մասիյլեոն, Ֆլեշիէ, Լապրիւյեր և նոյն իսկ Սեվինեէ՝ Յունաց կամ Հռոմայեցւոց մէջ զանոնք կ'ընտրէին, որոնք իրենց հանճարոյն աւելի նմանութիւն մը ունէին, և գիտէին հետաքրքրել, առանց իրենց առանձին սեփականութիւնն կորսընցնելու։

Բանախօսութիւն.

« Անագան ուրեմն եկաք մեք յաշխարհ, և չէմք կարող զյառաջագոյն քան զմեզ կացելոց դարուց զվիճակն զարթուցանել. բայց 'ի դարուցն յայնցանէ կէսք քաջափայլ հանդիսացան յերևակայութեան մոտաց և յեռանդն աշխուժից, և կէսք կացին անհարթք և անմշակք: Համարիցի՞ք եթէ այսօր մատենագրութիւնն, որ հնարել 'ի խժդժութեան դարուց նշխարս և 'ի դիպուածոյ պատահարս զմոտացն աշխոյժս գտանել, առաւել իմն պարզ և ճշմարտատիպ իցէ քան զայն որ 'ի նախնեացն գործոց պայծառութեան սքանչելի փայլս վառեալ արծարծանէր: Փոխելով ոք զնիւթն՝ որում 'ի նմանութիւն կրթի, 'ի նմանողութեանն օրինաց ոչ ազատանայ: Ինքն իսկ անարուեստութիւնն օրինակ իմն է նախատիպ: Արուեստագէտն պարապով զՊելլեռերայ Ապոլոնն կամ զՆդկայ զանկերպարան ատուածն զընեալ, օտարս իմն յինքենէ ազդեցութիւնս ընդունի. և հայեցուածովքն զմտածութիւնսն կարգաւորեալ, նմանող լինի: Բայց գերակատար գործոց նմանողութեան առաւելութիւն այն է, զի զմեր միտս ամբառնայ 'ի գեղջ և վայելչութեան խմանալի պատկերն, որ յարուեստս ճարտարութեանց ինքն իսկ ճշմարտութիւնն է: Աղատ իմն աշխատութիւն է մոտաց գերակատար գործոցն նմանողութիւն կամ մանաւանդ նախանձաւորութիւն, որ ընդ մեծութեան և գեղեցկութեան անանցական պատկերին միացեալ խառնի. և յայնժամ միայն ճշմարիտ է, յորժամ նոր իմն ստեղծուած մոտաց լինիցի. և յայս միտս մարթի ասել զի 'ի կատարելութեան անդ իւրում և հետք անդամ նմանողութեան չերևին 'ի նմա: Իսկ անարուեստութեանն

նմանողութիւն՝ գործ է նիւթական, անդէն 'ի սկզբանն պակասեալ 'ի ճշմարտութենէ, և յուղիղ հանճարոյ մոտաց թերացեալ:

« Լուդովիկեայ չորեքտասաներորդի դարուն մատենագիրք մեծամեծք՝ 'ի նախընթաց դարէ անտի զպարապելոյ 'ի գործս նախնեաց զօրինակն առեալ էին. բայց փոխանակ տարապայման իմն տենչանաց առ հրմտութիւն, սաստիկ եռանդն ընտիր ախորժակաց յաջորդեաց 'ի նոսա: Անեաքք 'ի կենցաղ քաղաքականութեան, որ օր քան զօր զարգացեալ պայծառանայր, ոչ զմիտս իւրեանց բոլորովին 'ի հռովմայեցւոց յիշատակսն և 'ի վէպս դեգերեցուցին, որպէս երբեմն արք ոմանք դերակատարք արարեալն էին, յիւրեանց ժամանակակցացն անարուեստ ոճոյ ճանձրացեալք. ընդ հակառակն բոլորովին նորք էին մտածութեամբ, զիւրեանց ժամանակին զկարծիս և զմտածութիւնս զգեցեալ. միայն երևակայութիւն մոտաց նոցա ճոխացեալ էր այլոց ժամանակաց երանգօք և քաղաքականութեամբ, կրօնիւք և կենցաղով՝ որ արդեացս դարուց չէին ինչ նմանք: Յերբայեցւոցն, 'ի Յունաց և 'ի Հռովմայեցւոց գիրսն դեգերելով, օտարաձև իմն կերպարանս բերէին յանձինս, և զաղատ և զպերճ՝ շնորհս, որ ընդ դաղղիական ոգւոյ ընկէ սեփհականութիւնն խառնեալ միաւորէր: Ըստ իւրաքանչիւր հանճարոյ մանաւոր ախորժակացն՝ այլ և այլ դարուց նախնեացն զանազան երանգք փայլէին 'ի նոսա: Ռասին և Ֆենելոն ոչ յայլ ինչ նկրտէին, բայց 'ի վայելուչ յստակութիւն և 'ի քաղցրայարմար դաշնակութիւն գեղեցիկ աւուրցն Աթենացւոց. նա և 'ի Հելլէնն իսկ անգամ առնէին ընտրութիւն, բերելով յինքեանս զախորժակ և զոգին Վիրգիլեայ: Պոսիւէ, առաւել լայնածաւալ և քաջայանդուգն հանճարով, 'ի մի խառնէր զՀոմերի զառնացի պարզութիւն, զերբայեցւոց մարգարէիցն զվսեմ եռանդն, և զբուռն աշխոյժս մոտաց քրիստոնեայ պեր-

ՀԱԽՍՈՍԱՑ ՀՈՐՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ, ՈՐՈՑ ՀԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅՆ ՀՆՉԵԱԼ ԷՐ 'Ի ՀԱՌԱՋՄՈՒՆՍ ԱՆԴ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ, ԵՎ ՅԱՂՄՈՒԿՍ ՔԱՂԱՔԱԺՈՂՈՎ ԴԱՍՈՒՑ ՄԱՐԴԿԱՆՆ ԱՆԿԵԼՈՅ ՀՆՉԱՍՍԱՌ: ՄԱՍԻՍԼԵՈՆ ԿՐԵՐ ՅԱՆՁԻՆ ԶԼԱՅԵՂՋՈՒԹԻՒՆ ԵՎ ԶԼԵՐՁՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՅԱԿԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՈՅ ԴԱՐՈՒՆ ԱՒԳՈՍՏԵԱՅ: ՖԼԷՇԼԵ ԿՐԹԵՐ 'Ի ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՆՁԱՐԵԼ ԱՐՈՒԵՍՏԻ ՀՌԵՈՐԱՅՆ ՆԱԽՆԵԱՅ, ԵՎ ԼԱՊԼԻՏԷՐ ՄԱՆ ԻՆՉ 'Ի ՀՈԳԻՈՅՆ ՍԵՆԵԿԱՅ ՍԵՓՀԱԿԱՆԷՐ ԻՆՔԵԱՆ: ՏԻԿԻՆՆ ՍԵՎԻՆԵԷ 'Ի ՏԱԿԻՄՈՍԻ ԳԻՐՔՆ ՊԱՐԱՊԷՐ. ԵՎ ՓԱՓՈՒԿ ԵՎ ԹԵԹԵՎ ՁԵՌՆՆ ԱՅՆ, ՈՐ ԿԵՆԴԱՆԻ ԵՎ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԴԱՐՁՈՒԱԾՈՎՔ ԲԱՆԻՑ ՁԱՐՔՈՒՆԵԱՅՆ ԱՌՕՐԵԱՅ ԱՂՄՈՒԿՍ ԳԻՏԷՐ ՆԿԱՐԱԳՐԵԼ, ԶԼԵՐՁԱԽՍՈՍՈՒԹԵԱՆ ԵՎ ԶԼԱՏՄՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԱԳՍ 'Ի ՁԵՌՆ ԱՌՆՈՅՐ՝ ՎԱՆ ՁՊԻՒՐԵՆԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆ ՊԱՏՈՒԵԼՈՅ: ԷՐ ՈՒՐԵՔ ԶԻ ԱՌ ՆԱԽՆԻՆ ԱՆՅԱՅՏ ԻՆՉ ՄԻԱՑԵԱԼ ՄՈԱԾՈՒԹԻՒՆ՝ ԱՆՄԱՀԱԿԱՆ ԻՐԻՔ ԳՈՐԾՈՅ ՀԻՄՆ ԼԻՆԷՐ: ՊՈՍԻԷ 'Ի ՄԱՏԵԱՆՍ ՍՐԲՈՅՆ ԱՒԳՈՍՏԻՆՈՍԻ ԵՎ ՊԱՒՂՈՍԻ ՈՐՈՎՍԱՅ ՆՇՄԱՐԵԱՑ ԶԻՒՐՈՅ ԽՈՍԻՑՆ 'Ի ՎԵՊՍ ԱՂԳԱՅ ԶՍԿԻԶԷՆ ԵՎ ԶՄԻՉՈՅ ԵՎ ԶԸՆԴԱՐՁԱԿ ԴԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ. ԵՎ ԶՅԱՅՏՆԵԱԼՆ ՅԱՆԱՐՈՒԵՍՏ ԴԱՐՈՒՆ ԶՄԵԾՆ ԶՅՆ ՄՈԱԾՈՒԹԻՒՆ ԻՆՔԵԱՆ ԻՒՐԱՑՈՒՑԵԱԼ, ԱՄԵՆԵՑՈՒՆ ԱՉԱՑՆ ԷԱԾ 'Ի ՏԵՍԻԼ, ՀԱՆԴԵՐՁ ՅՍՏԱԿ ԵՎ ՎԵՀ ՊԵՐՁԱԽՍՈՍՈՒԹԵԱՆՆ ԼՍԵՄՈՒԹԵԱՄԲ: ԵՒ ԱՅՍՊԷՍ ԶԱՆԿԱՐԴ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԼԵՐՁ ՓԱՅԼԵՑ, ԵՎ ԶՄԱՐԴԿԱՆ ԲԱՐԵԿԻՐԹ ԴԱՍՈՒՑ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆՆ ՀՈՒԼ 'Ի ՄԻՍԻՆ ԶՈՒԳԱԴՐԵԼ, ԶԳԻՄՍԹԵՆԵԱՅ ԵՎ ԶՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՎ ԶՏԵՐՈՒՂԼԱՆՈՒ ԿԵՐԿԱՐԱՆՍ ՄԻԱՆԴԱՄԱՅՆ ԲԵՐԵՐ ՅԻՆՔԵԱՆ, ԿԱՄ ՄԱՆԱՒԱՆԴ ԻՆՔՆ ԻՍԿ ԶԼՍՈՎԻՆ ՆՈՐ ՈՄՆ ԵՐԵՎԵԱԼ ՀԱՆԴԻՍԱՆԱՅՐ. ԵՎ ՅԱՌԱՏԱԲՈՒԼԻՍ ԱՂԵՐԱԿԱՆՑ ԱՆՍԻ, ՅՈՐՈՑ ԶՀԱՆՁԱՐ ՄՈԱՅՆ ՀՈԼԱՑՈՒՑՍՆԷՐ, ԶՔՈՒԼՍ ԵՐԿՆԻՑ ԵՎ ԶՅՈՐԾԱՆՍ ՈՒՂԼԻՑ ԼԵՐԻՆ 'Ի ՄԻ ԺՈՂՈՎԵԱԼ, ԲՂԼԵՑՈՒՑԱՆԷՐ ԶԳԵԱ՝ ՈՐ ԶՆՈՐԱ ԱԵԹ ԶԱՆՈՒՆՆ ԿՐԷՐ »: (ՎԷՐԷՆ, ՀԱՌ ԽՈՍԵԱԼ 'Ի ՀԱՆԴԷՍ ԱՅԼԲԻՆԱՍՈՐՈՒԵԱՆ ՈՍՈՄԱՆՑ ԳԻԱՂԷՈՒԱՆ ՊԵՐՁԱԽՍՈՍՈՒԵԱՆ, ՅԱՄԻՆ 1824):

Գ.

Յաղագս Ճառի.

ՃԱՌՆ՝ ՀՌԵՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ ԱՄԵՆԷՆ ԱՒԵԼԻ ԿԱՐԵՒՈՐՆ ԵՎ ԱՄԵՆԷՆ ԱՒԵԼԻ ԴԺՈՒԱՐԻՆՆ Է: ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՄԱՆԱՒՈՐԱՊԷՍ ԶԵՐԵԱԿԱՅՈՒԹԻՒՆՆ ԿԸ ԶԱՐԳԱՑՐՆԷ. ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆՆ ՄԻՍՔԸ ԿԸ ՀԱԿԷ. ԻՍԿ ՃԱՌՆ ԱՅՍ ԵՐԿՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱԼ ՄԻԱՆԴԱՄԱՅՆ ԿԸ ԿՐԹԷ, ԲԱՅՑ ԿԻՐՔ ՀԱՐԺԵԼՈՒ ՄԱՂԱՆԴ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ. ՈՐՈՎ ՈՒՐԻՇ ԱՄԷՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԷ ԱՒԵԼԻ ԱՒԻԹ Կ'ԸՆԴԱՅԷ ԼԱՒ ԽՈՍԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ 'Ի ԳՈՐԾ ԴՆԵԼՈՒ:

ՀԱՄԲԱԿԱՑ ՀԱՐԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊՐՈՒԱԾ ՃԱՌԻ ՆԻՒԹԵՐՆ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԱՌՆՈՒԱԾ Կ'ԸԼԼԱՆ, ԵՎ ԻՐՕՔ ԱՀՆԻՒԹԵՐՆ ՄԱՆԱՒՈՐԱՊԷՍ ԱՅՍ ԱՂԲԻՒՐԷՆ ՊԷՏՔ Է ԱՌՆՈՒԼ: ԲԱՅՑ ՈՐՊԷՍ ԶԻ ԴԵՌԱԿԻՐԹ ՃԱՐՏԱՍԱՆՔՆ ԱՒԵԼՈՐԴ ՃԱՄԱՐՏԱԿՈՒԹԻՒՆ ԸՆԵԼՈՒ ԱՒԻԹ ՉՈՒՆԵՆԱՆ, ՊԷՏՔ Է ՈՐ ՆԻՒԹՆ ՀԱՄԱՃԱՅՆ ԸԼԼԱՅ ՄԻՆՉ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՈՒԹԵԱՆ: ՊՈՒԼԻՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԴԵՌ ՉՍԿՍԱԾ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ԱՒԳՈՍՏՈՍ ԽՈՍԵՑԸՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ, ՊԷՏՔ ՉԷ ԴՆԵԼ ԲԵՐԱՆԸ ՅԱՅՆ ՃՈՌՈՄ ԽՈՍՔԵՐՆ, ԶՈՐ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԷՆ ՇԱՏԵՐՆ ԱՅՆՊԷՍ ԱՆՅԱՐՄԱՐ ԿԵՐՊՈՎ ԻՐԵՆ ԽՈՍԵԼ ՏՈՒԱԾ ԵՆ: ԶՄԵԾՆ ԿԱՐՈՂՈՍ ՄԷՋ ԲԵՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ, ՊԷՏՔ ՉԷ ՓԱՐԻԶՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԿԱՄ ԳԱՂԼԻՈՅ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱԱԵՆԱԿԱԼԱՑ ԱՌՋԼԻ ՃԱՌԱԽՈՍԵԼ ՏԱԼԻՐԵՆ. ՎԱՆ ԶԻ ԱՅՆ ՄԵԾԱՀՌՉԱԿ ԿԱՅՍԵՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՈՉ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԿԱՐ ԵՎ ՈՉ ԱՄԵՆԱԿԱԼԱՑ ԺՈՂՈՎ: ԴԻՊՈՒԱԾՈՅ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՅԱՄՈՒԼ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՄԲ ՊԱՀԵԼՈՒ Է. ԵՎ ՃԱՌԻ ԿԸԸՐԻՆ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՄԲ ՊԱՀԵԼՈՒ Է.

թուիւնն՝ աշակերտներն գատարկ և ճոռոմ զուրցուածքներու չվարժեցընելէ զատ, պէտք է իրենց ստացած պատմական ծանօթութեանցը ճարտասանական ձև մը տալ տրվելցընէ։

Ճարտասանին նպատակն է համոզել. համոզելու համար պէտք է ապացուցանել, զուարճացընել և սիրտ շարժել. հետևաբար որ և է ճառի համար երեք անհրաժեշտ յատկութիւնք կարևոր են։

Ա. Աղէկ ճառ մը պէտք է բան մը ապացուցանէ։ «Ապացոյցն, կ'ըսէ Արիստոտէլ, բուն իսկ ճառին էութիւնն է. մեկալ բոլոր մնացածն երկրորդական մասն կը սեպուի»։ Այս ստոյգ է որ ամենէն աւելի ներդաշնակաւոր զուրցուածքներն և գողտր բացատրութիւններն անգամ չեն կրնար պատճառաբանութեան տեղը բռնել. ճոխ զարդարանքներ են և յարգ ունին միայն՝ վասն զի ջղտ և կայտառ մարմին մը կը ծածկեն։ «Ճարտասանն, կ'ըսէ Տակիտոս, իւր առաջին և աղնուականագոյն պարտքն կատարած կ'ըլլայ ուրիշին միտքն լուսաւորել, կրթել, համոզել և ունկնդրաց աչաց առջև այնպիսի կենդանի և պայծառ լոյս մը ընծայել, որ անոնց անկարելի ըլլայ այս վսեմ երևութով ճշմարտութեան ներկայութիւնն չտեսնել»։

Բ. Ճառն պէտք է ախորժելի ըլլայ։ Ճարտասանին խօսքերուն մէջ պէտք է այնպիսի բան մը ըլլայ, որ ունկնդրաց սիրտն իրեն ձգէ, և զանոնք համոզուելու տրամադրէ։ Արդ այս անյաղթելի քաղցր ազդեցութիւնն՝ առանց որոյ չկայ ճարտասանութիւն, առաջ կուգայ խօսողին հոգիէն և բնաւորութենէն, իր ունեցած կամ ունենալ երևցուցած յատկութիւններէն, և վերջապէս հռետորաց էսթ ըսած հանգամանքէն։ Այս բոլոր ճառին վրայ վայելչութեան իբրև անոյշ բուրմունք մը ծաւալողյատկութիւններն են չափաւորութիւն, պարկեշտութիւն, բարեսիրութիւն, խոհեմութիւն, սէր ազատութեան և արդարութեան, սէր հայրենեաց և մարդկութեան։ Համբակք երբ հնոց կամ արդի ժամանակաց մեծամեծ մարդիկն կը խօսեցընեն, պէտք է ջանան անոնց բերանն դրուած խօսքերուն մէջ դուրս ցայտեցընել այն սրտի և մտաց բարձր կատարելութիւններն, որոնցմով անոնք երբեմն զօրաւոր եղան, և որոնց յիշատակը պատմութեան մէջ մնացած է։

Պատշաճ վայելչութիւնն՝ տեղւոյն, ժամանակին և մանաւանդ ճարտասանին ասոնցմէ ամենքն կը փոփոխի։ Սոկրատ թերևս իր կեանքն ազատած կ'ըլլար, եթէ ջանալու ըլլար իր դատաւորներն շահել և հակառակորդաց ամբաստանութիւններն հերքել։ Բայց այս տեսակ պաշտպանութիւն Սոկրատայ պէս մարդու մը չէր վայելեր։ Երբ Լիւսիաս, ժամանակին հրաշակաւոր ճարտասանն՝ եկաւ իրեն ներկայացուց ջատագովութիւն մը զոր առաջուց գրեր էր, և որուն մէջ իմաստասիրին անմեղութիւնն ցուցընելով ջանացեր էր դատաւորաց միտքը փոխելու, Սոկրատյանձն չառաւ անով ինք զինքն պաշտպանել։ Այն ճառն ազուոր գրած, բայց իր անձին անպատշաճ կը համարէր։ Կուինտիլիանոս ասկից կը հետևցընէ թէ ճարտասանութիւնն միշտ համոզելու համար եղած արուեստ մը չէ. վասն զի Սոկրատ իր ջատագովութեանը մէջ ցցուց իր ճարտասանութիւնն, սակայն կարևոր չսեպեց դատաւորներն համոզել։ Բայց Կուինտիլիանոսի ըսածին կրնայ այս պատասխանս տրուիլ որ Սոկրատ միայն քանի մը ցնորեալ Աթենացւոց չէր խօսեր. և փոյթ էր ըներ թէ իր վրայ ինչ դատաստան պիտի կտրուի։ Արդէն իսկ իր կեանքն նուիրած, ճշմարտութենէ զատ ուրիշ բան չէր մտածեր, որուն քարոզողն եղած էր, և որուն համար պիտի նահատակուէր։ Իր վսեմ անշահախնդրութեամբն Աթենքի և Յունաստանի սահմաններէն վեր բարձրանալով, իր խօսքը բոլոր դարերու և բովանդակ մարդկութեան կ'ուղղէր. ասոնք էին իր դատաւոր-

նելն՝ զրոնք համոզել կ'ուզէր, ինչպէս որ համոզեց
ալ. որովհետև ջնջեցին Աթենացւոց առած վճիռը, և
Պլատոնի վարժապետն՝ մարդկային ազգի մեծ բարե-
բար հրատարակելով, անոր անուան փառքն անմահա-
ցուցին։

Գ. Ճառն պէտք է գողտր ըլլայ։ Ճարտասանու-
թիւնն բոլորովին պատճառաբանութեան վերածելն,
զայն կրճատել ըսել է։ Տարակոյս չկայ որ մարդկային
բնութեան ամենէն աւելի ազնուական բանը միտքն է.
բայց զգացողութիւնն ալ մեր էութեան մասն մըն է,
և Ճարտասանն պէտք է որ բովանդակ մարդոյն հետ
խօսի։ «Հաւանեցընելու համար, կ'ըսէ Տակէսոյ, բա-
ւական է միայ հետ խօսիլ. իսկ համոզելու համար
պէտք է ինչուան սիրտն երթալ։ Հաւանութիւնն կը
ներգործէ իմացականութեան վրայ, իսկ համոզմունքն
սրտին վրայ. մէկը ճանչնալ կուտայ զբաբին, միւսը՝ սի-
րել զայն. առաջինն միայն պատճառաբանութեան ոյժը
կը գործածէ, երկրորդն անոր վրայ զգացման քաղ-
ցրութիւն կ'աւելցընէ. և եթէ մէկը մտածութեանց
վրայ կը տիրէ, միւսն նոյն իսկ գործոց վրայ իր իշխա-
նութիւնն կը բանեցընէ»։ Կրնայ ըսուիլ մինչդեռ միայն
կրնայ Ճարտասանութիւնն մեծամեծ յաղթանակներ
կանգնել, ժողովուրդներն իրեն կամացը հպատակեցը-
նել, կամ մեծամեծ ժողովներն կառավարել. վասն զի,
ինչպէս վերոյիշեալ մտաւորականն կ'ըսէ դարձեալ, ա-
մենայն սիրտք կարող են սիրելու, բայց ամէն միտք կա-
րող չեն խորհրդածելու և ըմբռնելու։

Այս սկզբունքներս դնելէն ետև, Ճարտասանու-
թեանս սկիզբը սահմանած երեք հանգիսից, այսինքն
բաղխոհական, տաճենական և կացրդական հանդիսից
երեք այլ և այլ օրինակներ տանք համբակաց։

Ա. Ճառ բաղխոհական հանդիսի.

Միրապոյ առ Ժողովն սահմանադրական.

Բովանդակութիւն.

Ժողովականք 1787ին գումարուած էին՝ երկրին ձա-
խորդութեանց և մանաւանդ տէրութեան գանձուց
անկարգ վիճակին դարման մը մտածելու համար։ Պաշ-
տօնեայն Նեքէր առաջարկեց Ժողովոյն որ արտաքոյ
կարգի տուրք մը սահմանուի՝ իւրաքանչիւր քաղաքա-
ցւոց հասութեան քառորդն առնելու։ Երեսփոխանաց
շատերն կ'ուզէին որ պաշտօնէին առաջարկութիւնն
մանրամասն քննութեան առնուի։ Միրապոյ բեմը կ'ել-
լէ, և որոշել կուտայ անյապաղ զայն գործադրելու։

Ճարտարախօսն նախ կը ցուցընէ թէ տէրուա-
գանձուց վիճակն շուտով դարման մը կը պահանջէ, և
թէ երեսփոխաններէն ոչ ոք կարողութիւն ունի պաշ-
տօնէին ըրած առաջարկութեանն հակառակ ուրիշ նոր
առաջարկութիւն մը ընելու։

Կ'ապացուցանէ որ եթէ առաջարկուած տուրքն մեր-
ժուելու ըլլայ, ընդհանուր սեղանաբեկութենէ զատ
ուրիշ մինչդեռ մը չկայ, և կը ցուցընէ որ այդպիսի մի-
ջոցի մը դիմելն օրէնքի ամօթալի և վտանգաւոր կրնայ
ըլլալ։

Ազգային պատիւն, հայրենեաց սէրն և ամէն մար-
դու անձնական շահն մէջ բերելով կը ցուցընէ թէ տէ-
րութեան մը ունեցած պարտաւորութիւններն սրբա-
զան են, և թէ ամենայն ոք պատրաստ պէտք է ըլլայ
իր ընչից մէկ մասն տէրութեան պիտոյից համար զո-
հել

հելու, և թէ սեղանաբեկութիւնն՝ հասարակաց եկամտից հետ մեկտեղ առանձնականաց ստացուածքն ալ կը փճացընէ։ Ճարտարախօսն կը յորդորէ զԺողովն՝ որ հայրենեաց կարօտութիւնը տեսնելով պէտք չէ վարանիլ։

Ճառ Միրապոյի.

Յայդքան աղմկալից բանակռուութեանց պայքարս չկարեցէմ ուրեմն հաւանեցուցանել զձեզ առ՝ի սահմանել զսերկեանս խնդիր, սակաւս ինչ պարզագոյն՝ հարցուածս արկեալ առաջի։ Հաճեցարուք, տեարք, առնել ինձ պատասխանի։ Ո՞չ պաշտօնեայն գանձուց աշխարհիս զառաջնակայ վիճակիս զսոսկալի պատկերն կացոյց ձեզ յանդիման. ո՞չ արդեօք ասաց նա զի ամենայն յապաղումն՝ և իս զվտանգն ծանրացուցանէ. զի օր մի, ժամ մի, կամ վայրկեան մի միայն կարէ առնել զայն մահաբեր։ Եւ եցէ՞ մեր այլ առաջարկութիւն, զոր ընդ նորայումն փոխանակել կարեցեմք։ (Այո՛, յայնէաց ոչ անդէն։) Աղաչեմ զայրն որ զայն պատասխանէ՝ ածել զմտաւ զի զոր ինքն առնէ առաջի, ոչ ծանօթ ինչ է ուստեք. և ժամանակի պէտք են առ՝ի պարզել զայն, ՝ի քննել և զհաստատութիւն նորին ցուցանել. և թէպէտ աստ առաջի գնիցի մեզ այն՝ ի սահմանել, սակայն մարթի սխալեալ գոլ որում խորհեցաւն զայն, կամ թէ և յամենայն սխալանաց ազատ իսկ եցէ, մարթ է կասկածել թէ ոչ այնպէս ինչ եցէ։ Ուր ոչ ումեք իրաւունք եցեն, անդ ամենեցուն են իրաւունք. որով կարէ լինել զի որ հնարեցաւն զնոր զայդ խորհուրդ, հանդերձ զնրաւունս իսկ ունելով, յաչս ամենեցուն անիրաւ դատիցի. քանզի առանց հասարակաց կարծեացն հաւանութեան, քան զբնաւսն իսկ հանճարով մեծն

այր՝ չզօրէ դիպացն հանդամանաց յաղթող հանդիսանալ։ Նա և ես իսկ զնեքերայ հնարսն ոչ որպէս արժանն է լուսադոյնս ինչ համարիմ. սակայն մի արասցեն երկիւղք, զի յայսմ՝ ի գժուարին վիճակիս՝ նորայոցն հակառակ ինչ կացուցանիցեմ զնմանն, զորս վայրապար եցէ ինձ նախապատիս ինչ. քան զնորայն վարկանել։ Ապաքէն չէ գործ մի դիւրին՝ ՝ի պայքար մրցութեան եղանել ընդ զարմանալի անուան, մեծամեծ վաստակովք ժառանգեցելոյ, ընդ բազմաժամանակեան փորձոյ, ընդ դերապանծ և հանճարեղ գործակալութեանն համբաւոյ, և եթէ արժան եցէ զբովանդակն ասել, ընդ վիճակի կենաց՝ որ ոչ ումեք՝ ՝ի մահկանացուաց այնպիսի ինչ անկաւ՝ ՝ի բաժին։

« Հարկ է ուրեմն այսրէն՝ ՝ի Նեքերայ խորհուրդն դալ։ Այլ եցէ՞ մեր ժամանակ քննելոյ զայն, խուզելոյ զհիմունս հաստատութեանն և զհնարս հայթայթանացն հաւաստելոյ։ Փա՛ռ ոչ, և ամենևին իսկ ոչ։ Որ ինչ՝ ՝ի պահուս կարողանայցեմք առնել, ոչ այլ ինչ եցեն՝ բայց աննչան հարցուածք, յանդուգն կարծիք և անհաստատ վարանմունք։ Զինչ ապա լինիցի՝ եթէ զորոշումդ յապաղիցեմք. վայրապար զպատեհ ժամն կորուսանիցեմք, և զմեր անձնահաճ կիրս գրգռեցեմք՝ ՝ի փոփոխումն առնել յառաջարկութեան, որում և ոչ՝ ՝ի վերայ հասեալ է մեր, և յանխորհուրդս մեջամուխ լինելով նուազեցուցանիցեմք զզօրութիւն ազգեցութեան պաշտօնէին, որոյ գործակալութեանն հուչակ համբաւոյ քան զմերս մեծագոյն է, և պարտի իսկ լինել։ Տեսքը, չեք՝ ՝ի գործդ իմաստութիւն և ոչ կանխատեսութիւն. այլ կայցէ՞ գոնեայ մտաց ուղղութիւն։

« Ո՛հ, եթէ ակներև յայտարարութիւնք ոչ հաւաստի ցուցանէին զմեր մեծարանս առ կարծիս բազմութեան և զսոսկումն՝ ՝ի սեղանաբեկութեանն անարգանուանէ, համարձակեմ արդեօք հետազօտել զծածկեալսն՝ և թերևս, աւա՛ղ, զառ՝ ՝ի մէնջ իսկ անծանօթ

պատճառան, որք 'ի ժամ սահմանելոյ զինքնանուէր կամաց զգործն մեծ՝ այդպէս յանխորհուրդս զմեզ յեռս կասեցուցանեն։ Այսէի ցայնոսիկ՝ որոց զանդիտեալ մի դուցէ քան զչափն առաւել զանձանց զշահն զոհիցեն, կամ՞'ի հարկաց երկուցեալ՝ զմիտն հաւանեցուցանեն թերանալ՞'ի պարտուց աշխարհին, ասէի առ նոսա. Զի՞նչ ուրեմն իցէ սեղանաբեկութիւն, եթէ ոչ հարկ իմն քան զամենայն առաւել դժնդակ. և ամբարիշտ և անկարգ և ինասակար. . . . : Ո՛վ սիրելիք, անսացէք և ասացից բան մի, զբան մի միայն։

« Կրկին դարձ յափշտակութեանց և հարստահարութեանց փորեցին զխորխորատն, յոր պետութիւնս մերձ հասեալ կայ անկանել դահավէժ. հարկ է զզարհուրելի խորխորատդ ընուլ։ Ինչ է ուրեմն. աւադիկ ցանկ համարոյ մարդկանն, որ տեարք են սատցուածոց՝'ի Գաղղիա. ընտրեալ կալարուք զորս՝'ի նոսա առաւել փարթամագոյնքն իցեն. որպէս զի քաղաքացեացն տոյժքնուաղ լինիցին, այլ սակայն ընտրեցէք. քանզի ոչ ասպաքէն արժան է սակաւուց ոմանց կորընչել, զի ամենոն բազմութեանն փրկեսցի։ Հապա, աւադիկ ձեզ երկու հաղար ազնուականք, որոց գոն սատցուածք՝'ի ընուլ զպակաս գանձուց պետութեանս. յելեմուտս ձեր վերսանն հաստեցէք զկարդ, և յաշխարհիս մերում զխաղաղութիւն և զբարեկենդանութիւն. հարեք և զենեք անխնայ զսպանդն ողորմելիս. հոսեցէք զնոսա՝'ի խորս անդնդոց, որ ահա փակեսցի անդրէն. . . : Այլ զի՞ է զի յեռս ընկրկիք զարհուրեալք։ Ո՛վ արք թիւրք, արք կարճամիտք։ Եւ ոչ իսկ տեսանիցէք զի վնասելովդ զսեղանաբեկութիւն, կամ որ ևս դժնդակագոյնն է, առանց իսկ վնասելոյ՝ անձամբ զանձինս յայն անհրաժեշտ վտանգն արկանելով, արատաւորիք զանձինս գործովք որ է բիւր անգամ առաւել ինասասարտ, և որ անհան է մնաց, առանց իրիք պատճառաց ինասասարտ։ Ապաքէն գովն սոսկալի տուժիւք մարթի

զպակաս գանձուցն լրացուցանել։ Բայց կարծիցէք՝ զի ոչ հատուցանելով ինչ, ոչ ևս ինչ բնաւ իցէք պարտական. կարծիցէք զի հաղարք և բիւրք բիւրուց մարդկան, որոց յահաւոր արկածս անդ և՝'ի չփոթս՝ որ յայնժամ՝'ի վերայ հասանիցեն, '՝ի վայրկեան ժամանակի կորուսեալ զամենայն՝ որ՝'ի մխիթարութիւն էր անձանց նոցա և թերևս մի միայն նպաստք զկեանսն հայթայթելոյ, թողուցուն ձեզ յոճիր յանցանացդ վայելել՝'ի հանգստեան։ Անխռով հանգիստեսքդ անթուելի չարեաց, զոր աղէտքդ այդ կուտեսցեն՝'ի Գաղղիա, անձնասէրքդ անկարեկիրք, որոց եգեալ է՝'ի մոլ եթէ այդ տագնապք յուսահատութեան և տառապանաց՝ հանդոյն այլոցն բազմաց անցանիցեն, և ըստ սաստիկ բռնութեանն՝ և ևս սակաւատեք լինիցին, իցէք ինչ վստահք յանձինս ձեր, զի այդքան մարդիկ՝ կարօտեալք հացի՝ թողուցուն ձեզ հանգստեամբ ճաշակել զհամադամդ, զորոց զյաճախութիւն և զփափկութիւն չկամեցայք նուազեցուցանել։ Ո՛չ այդպէս. կորուստ հացէ ձեզ՝'ի վերայ. և՝'ի համաճարակ հրայրեացս անդ՝ զոր լուցանէքդ աներկիւղ, զրկիցիք՝'ի պատուոյդ՝ և ոչ զմի ինչ՝'ի ձերոց առելի զուարճութեանցդ առ ձեզ պահելով։ Տեսէք ուրեմն ուր դիմեալ ընթանամք. . . : Լսեմ խօսել զհայրենասիրութենէ, զվառելոյ՝'ի նախանձ հայրենասիրութեան, և զաղերսելոյ յանուն հայրենասիրութեան։ Ո՛հ, մի զհայրենեաց և զհայրենասիրութեան անուանս յայդ անարգութիւն իջուցանէք։ Մեծ մեծն վնհանձնութիւն իցէ ուրեմն՝ երբ ոք վասն զամենայն զդոյսն զերծուցանելոյ, յանձն առնուցու զիւրոցն հասից զմասն ինչ տալ։ Տեսարք, աստանօր պարզապէս հաշիւք համարոյ եգեալ կան առաջի. և որ տարատամեալ վարանիցի ոք, ոչ այլով ինչ զայլոցն ցածուսցէ զզայրոյթ, բայց եթէ ըստ իւրոյ անմտութեանն յինքն զարհամարհանս ձգելով։ Այո, տեարք, զբնաւ իսկ հասարակ խոհականութիւն, զսովորական իմաստութիւն

և զվերջին իսկ շահս անձանց ձերոց յուշ առ ձեզ արկանեմ։ Զասեմ որպէս երբեմն՝ եթէ դուք առաջինք լինիցիք յընծայել զզգաց զտեսիլ Ժողովրդեան դումարելոյ 'ի դրժել հաւատարմութեանն 'ի պարտս աշխարհին։ Ոչ ևս այլ ասեմ թէ Ո՞ր իրաւունք իցեն ձեր յազատութիւն, և ո՞ր այլ հնարք մնայցեն ձեզ 'ի պահել զայն հաստատուն, մինչ յառաջին քայլափոխն անտի զանցուցանէք զվատթարութեամբք պետութեանց քան զընաւս ապականելոց։ Այլ ասեմ. Ամենեքին առ հասարակ յայն համաշխարհական կործանումն վարեալ անկանիցիք. և դուք էք առաջինք, որոց շահքն պահանջեն փոյթ տանել 'ի հնարս դարմանոյն՝ զոր պետութիւնս խնդրէ առ 'ի ձէնջ։

« Սահմանեցէք ուրեմն զնպաստդ զայդ արտաքոյ քան զսովորականն, և իցէ թէ և այն իսկ լիներ բաւական։ Սահմանեցէք զայն. քանզի եթէ և իցեն ձեր տարակոյսք զհնարիցն, տարակոյսք տարտամք և կարծողականք, բայց ոչ և զկարևորութենէ նորին և զանբաւականութենէ մերմէ 'ի փոխանակել զայն ընդ այլում. սահմանեցէք զայն. քանզի հանդամանք իրաց աշխարհիս չներեն այլ ևս յապաղել, և համարս տալոց էք զորոց և իցէ դանդաղանաց։ Մի լիցի ձեզ խնդրել զժամանակ. ձախողութիւնն ոչ շնորհէ զայն առ ձեզ։ Տեսուք, 'ի գրգռել անդ երբեմն ծաղրական իրիք աղմկի Աբբուանական ապարանիցն, և 'ի յուզել ծաղրալից խռովութեանն՝ որ սոսկ 'ի միտս տկարաց և 'ի կամակոր խորհուրդս արանց ոմանց նենդամտաց արար ազդեցութիւն, լուայք զմոլեգին զայդ բարբառ եթէ « Առդուրս հասեալ կայ Կատիլինա, և մեք բանակռիւ լինիմք »։ Ապաքէն յայնժամ չէին 'ի միջի ոչ Կատիլինա, ոչ վտանգք, ոչ հերձուածք և ոչ իսկ Հռոմ։ Իսկ այսօր սեղանաբեկութիւն, ժանտ այն սեղանաբեկութիւն հասեալ կայ 'ի վերայ և սպառնայ ծախել սպառել զձեզ և զտացուածս ձեր և զպատիւ, և դուք նստեալ 'ի պայքար քննութեան մտանէք »։

Ճարտարախօսն կատարեալ յաղթանակեց, Ճարտարութեամբ հնարքներն, ապացոյցներն և ազդոյ խմաստներն աստիճանաբար յառաջ բերելով, և աքանչելի կերպով իրարու հետ խառնելով կրից յուզմունքն, նկարագրութիւններն և պատճառաբանութիւններն, որոնցմով Ճշմարիտ Ճարտասանութիւնն կը ձևանայ։

Բ. Ճառ ատենական հանդիսի.

Զատագովութիւն Ֆուքէի 'ի Բելլիսոնէ.

Բովանդակութիւն.

Մաղարէն ծիրանաւորին մահուընէն ետև, երբ Լուդովիկոս ջրերբաստանեորդ սկսաւ անձամբ կառավարել, Ֆուքէ՝ դանձուց վերակացուն՝ ամբաստանուեցաւ իբրև հարստահարող և տերութեան դէմ յանցաւոր։ Թագաւորն ջուզեց որ զինքը խորհրդարանն դատէ, և դանձապահներն քննելու համար նոր հաստատուած ատեանի մը առջև հանեց։ Բելլիսոն, որ պաշտօնէին գործակալն եղած էր, յանձն առաւ զինքը Լուդովիկոս ԺԴի առջև պաշտպանել։

Նախ կը սկսի բացատրել թէ ինչ պատճառներու համար որոշեց ուղղակի թագաւորին խօսելու, և յառաջ կը բերէ մէկ կողմանէ այնպիսի մեծ իշխանի մը համար զգացած զարմանքը. և մէկալ կողմանէ խեղճ վերակացուին իրեն պատճառած գութն։ Կը յայտնէ թէ համարձակ՝ բայց ակնածութեամբ պիտի խօսի։

Դուրս կը ցատքեցընէ Ֆուքէի դէմ եղած դատաստանին անկանոնութիւնն, յիշեցընելով գաղղիական հին օրէնքներով հաստատուած հիմնական սկզբունքն՝ թէ

ոչ ոք իր սովորական դատաւորներէն դուրս ուրիշ օտար դատաւոր կրնայ ունենալ։ Ժողովուրդն՝ դիտնոց հետ միաձայն կը դատապարտէ սովորականէ դուրս եղած մասնական Ժողովներն. որոնք ամենևին երաշխաւորութիւն մը չեն ընծայեր ամբաստանելոյն, և անոնց տուած վճիռներուն պատճառած ատելութիւնն՝ զի-բենք ընտրող իշխանին վրայ կ'իյնայ։

Ջատագովն չկարենալով բոլորովին զՅուբէ արդարացընել, կը Ջանայ անոր յանցանքներն մեղմացընել, մարդկային տկարութիւնն և իր ապրած ժամանակին Թուլութիւնն պատճառ բերելով։

Կը գովէ Լուդովիկոսի մեծամեծ մոռածութիւններն, որ կ'ուզէ տերութեան կառավարութիւնն կարգաւորել. բայց կ'աղաչէ որ անցեալոցն համար ներողութեամբ երթայ, և կը խնդրէ որ դանձուց վերակացուին համար իր արքայական դթութիւնն գործածէ։

Ճառ Բեկիսոնի առ Լուդովիկոս ԺԴ.

« Տէր արքայ, յերկուց զանազան՝ բայց ոչ'ի հակառակ երից յորդորեալ եղի 'ի մոլ խմում խօսել անձամբ առ տէրդ վեհափառ. 'ի Ճշմարիտ զարմանաց՝ զոր ազգէս յիս Թագաւոր մի մեծ և վեհանձն և յաղթող և բարեբախտ քան զամենայն մարդիկ. և յարդար կարէ կցուցանել՝ զոր յուզէ 'ի սիրտ իմ Թշուառագոյնն 'ի քոց ծառայից։ Ոչ Թէ սովորութեան և Թերութեան ժամանակիս են արդիւնք, զի պաշտպանք բազմաքոյժ գտանիցին Թշուառաց. և անշուշտ ոչ տաղտուկ ինչ վեհափառ Տեառնդ ածիցեն՝ որք խօսին այսօր յաղագս Ֆուքէի, որոյ կացեալ երբեմն ընդհանուր գործակալ, վերակացու դանձուց աշխարհիս, պաշտօնեայ պետութեան, զարմանալի այլոց և նախանձելի, իսկ այժմիկ

հաղիւ Թէ արժանի գրութեան համարի։ Ամենայն ոք լուէ, ամենայն ոք սասանի և ամենայն ոք պատկառեալ կայ յերեսաց բարկութեան տեառնդ արքայի։ Նա և ես իսկ քան զամենեսին պատկառէի արդեօք, և Թէպէտ հարկաւորեալ 'ի խօսել, լուէի երբև զայլսն զամենեսին, եթէ չէին իմ բանք կարևորք ասելոյ առ տէրդ վեհափառ, որք հային 'ի շահ ծառայութեանն որ առ քեզ, և զորս բաց յինէն այլ ոք չասասցէ առ քեզ։ Տացէ՛ տէրն սրտից և Թագաւորն Թագաւորաց, զի առ 'ի ճանաչել զնրացն ճշմարտութիւն և զկարևոր հանգամանս՝ Տէրդ վեհափառ երկայնամտեալ ընթեռնուցու զայնոսիկ մինչև ցվախճան. և 'ի ծախել անդ քում զայնքան ժամանակս յունկնդրութիւն գուշնաքեայ աղաչանաց քոյոցդ ծառայից, ոչ զանայցես զնուն մի արդար մտադրութիւն 'ի գործ մի այնպիսի՝ որ քեզ 'ի պարծանս լինիցի. և այնքան մեծ է և կարևոր, զի յաւուրս յայսմիկ Եւրոպա համարէն ակնկառոյց կայ ընդ այն։

« Խօսեցայց, տէր արքայ, ամենայն ազատութեամբ. իբրև զայր՝ որոյ չկամ ուստեք երկիւղ և ոչ ակնկալութիւն, բայց և ամենայն մեծարանօք և հպատակութեամբ հաւատարիմ ծառայի. և եթէ ըստ ձախողակի երկնք դիպուածոյ, զոր ինձ անմարթ է կարծել, եղցէ ընդ շրթունս իմ բան մի գուշնաքեայ՝ որ և գուն ինչ ստերիւրել Թուիցի 'ի կատարեալ հպատակութենէն և 'ի խորին մեծարանաց, զոր ընդ բովանդակ կեանս իմ պահեցից առ քեզ, մինչև գեռ գրեալ՝ 'ի ժամ ասի հերքեմ զայն և եղծանեմ, և խոնարհութեամբ մեծաւ աղաչեմ զՏէրդ վեհափառ՝ դնել 'ի մոլ իւրում, զի մարթ է ինձ դրչաւ և ձեռամբ սխալել, այլ ոչ բնաւ սրտիւ և մտածութեամբ։

« Տէր արքայ, ըստ կարգադրութեանցն Պլուայ և ըստ այլոց բազմաց հնադունիցն կարգաց՝ դարուց 'ի դարս նորոգելոց, նախնիքն քո Թագաւորք խոստա-

ցան ծառայից քոց հրապարակաւ՝ չկարդել բնաւ արտաքոյ քան զսահմանեալսն այլ ժողով մասնաւոր, այլ թողուլ սովորական դատաւորաց նոցա դատել զնոսին։ Այս կարգադրութիւնք են, տէր արքայ, զորս վերհաստատ տէրդ յաւուր օծութեան իւրոյ երդուաւ՝ի գործ արկանել. կարգադրութիւնք հիմնեալ՝ի վերայ ոգւոյ միաբանական տէրութեանս և՝ի վերայ ընդհանուր ձեռոյ վարելոյ զդատ արդարութեան՝ի Գաղղիա, որ ընդդէմ այդպիսի ժողովոց բողոքեալ յայտնապէս։ Եթէ դամ մի հարցանիցեմք զօրինացն զիմաստուն և զերկիւղած վարդապետս, որք զպատկանեալսն առ խնդ մտաց այնքան խնամով քննեցին, ասասցեն նոքա առ Տէրդ վերհատաստ՝ զի յորժամ թագաւոր ոք թողուցու սովորական դատաւորաց առնել դատաստան, յայնժամ յանհոգս յանդորրու զկատարածէ իրացն լինիցի. իսկ արտաքոյ քան զսովորականն կարգելով դատաւորս, որչափ և միաք իւր ուղիղ իցեն, թէ յանկարծ հասանիցէ առնել անիրաւ դատաստան, գէթ մարթի երկբայել թէ արդեօք չիցէ նա պարտական զանիրաւութենէ նոցին տալ համարս Աստուծոյ։ Եւ եթէ ձայնի ժողովրդեանն լսիցեմք, այնմ ձայնի, Տէր արքայ, որ բաղում անգամ ձայն է Աստուծոյ. ձայնին այնմիկ՝ յոր արդարև հաստատեալ կան փառք թագաւորաց, և որ այսօր ընդ ամենայն աշխարհ զմեծափառ Տեառնդ լաւութեանց խօսի պարծանօք, նոյն ինքն ասասցէ առ քեզ եթէ կասկածաւոր է նմա ամենայն, որ ոչ օրինաւոր և ոչ ըստ սովորական կարգաց ինչ իցէ. զի և անմեղ իսկ ոք՝ յատենէ խորհրդոյդ դատապարտեալ, միւս՝ի համար յանցաւորացն գրի. և յանցաւոր իսկ ոք՝ի ձեռն գործակալաց դատապարտեալ, միւս՝ի կարծիս ժողովրդեան և առ յապա եկելոց մարդկան արկանէ կասկածինչ անմեղութեան. և ամենայն աշխարհ առ հասարակ նկատէ զկրկին զայդ ազգ դատաւորացդ իբրև զերկուինչ բոլորովին աննմանս իրերաց. որում վկայէ և բան

պատասխանւոյ բարեկրօն միանձինն, զոր պատմութիւնն ոչ անարժան յիշատակութեան դատեցաւ։ Թագաւորն Փրանկիսկոս առաջին՝ նայեցեալ ընդ գերեզման տեսչապետի ուրուն՝ի Մարքուսի, որ՝ի ժամանակս միոյ՝ի նախնեացն թագաւորաց մատնեցաւ նշաւակ նախանձու արքունեացն և կրից դքսի ուրուն Պուրկոյնի, և մեծի իշխանին ասացեալ՝ թէ ցաւէր նմա ընդ մեռանել այնպիսւոյ առն՝ի ձեռն արդարութեանն առեալի. Տէր արքայ, պատասխանեաց միանձին համարձակ անկեղծութեամբ, զայդ ոչ առեանն արդարութեան՝ այլ գործակալքն արարին։

« Սակայն, Տէր արքայ, որ զինչ և խորհուրդս վասն իրացդ հաճեսցի ազգել՝ի քեզ Աստուած, զայս ինչ յուսամ աներկբայ, զի եթէ տէրդ վերհատաստ չառաքէ զՄուքեզ առ դատաւորսն օրինաւորս, և եթէ ոչ շնորհիցէ զոր միանգամ իմաստուն և առաքինի մայրն, և զոր ուռապետալ ընտանիք եղկելոյն այնքան արտասուօք հայցեցին. եթէ հարկ իցէ զի թշուառագոյնն քան զամենայն տեսչապետս՝ իբրև զայր մի սոսկական և ողորմելի՝ ընդ դատաստանաւք առեալի արդարութեանն անկանիցի արդեամբք, գոնեայ Տէրդ վերհատաստ յիւրում անձինն պահեսցէ նմա զատեան իմն՝ գերագոյն քան զատեանն արդարութեան. զատեան մի, յորում ոչ զխստութիւն իւր ևեթ՝ի հանդէս կոչեսցէ, այլ և զբարութիւն իւր և զգթութիւն և զսիրտ իւր յիրաւի արքայավայել, գալ և ինքեանց առ՝ի տալ զիւրեանցն դատավճիռս։...

« Տէր արքայ, խորհուրդ բարեկարգութեանն Գաղղիոյ, քոյոյ մեծութեանդ արժանաւոր, բայց ոչ և դուզնաքեայ իմն է խորհուրդ։ Նուաճութիւն Սպանիոյ ոչ այնքան երկարատև եղև, և ոչ այնքան աշխատութիւն վերհատաստ Տեառնդ հասոյց։ Աղէ՛ւ զակն ընդ ամենայն կողմանս. ամենայն ինչ քոյոյ ձեռինդ կարօտացեալ, բայց քաղցր, մարդասէր և փրկարար ձեռին, որ

ոչ մեռուցանէ առ 'ի բժշկել, որ օգնական լինի և ուղղէ և դարմանէ զբնութիւն, պահելով զայն անեղծ և անապական։ Մարդիկ եմք ամենեքին, Տէր արքայ. ամենեքեան դառաք սխալեալ. աղէ բարութիւնդ արքայական հաճեսցի զկնքել զկնի տկարութեան և անհաստատ բնաւորութեան իւրոցն որդւոց։ Ոչ ծնաք մեք յընկերահաշտութեան անդ Պլատոնի, և ոչ իսկ յառաջին ժամանակս Աթենացւոց՝ յորս արեամբ դրեցան օրէնք. և ոչ յաւուրս անդ Լակեդեմոնացւոց, յորս արծաթ և աղնուականութիւն 'ի յանցանս համարէին, այլ 'ի ժամանակս ապականութեան և զեղխութեան, որ անմեկինն է 'ի բարեկեցութենէ պետութեանց, ներող քաղցրութեան գաղղիական աղգիս, և քաղցրահամբոյր միապետութեան, ուր ոչ միայն աղատութիւն, այլ և ապերասան համարձակութիւն յորդեալ ծաւալի։... Գալով արդ առ այսն՝ զորոյ բուռն հարեալ եմ զպաշտպանութենէն, ընդէ՞ր զայրասցի սրտմտութիւն վեհափառ Տեառնդ ընդդէմ չորացեալ և հողմավար տերևոյ. քանզի և առ ո՞ արդեօք 'ի մարդկանէ մարթ ելցէ առաւել 'ի դէպ պաշտաձեցուցանել զբանն՝ զորս նախախնամն համբերողաց և վշտադնելոց ասէր երբեմն առ Աստուած, եթէ ոչ առ այսն՝ որոյ պատահեալ բարկութեան երկնից և Տեառնդ արքայի, 'ի միում աւուր և իբր 'ի մի հարուած շանթից կայծական կորոյս զինչս սատացուածոցն, զպատիւ, զհամբաւ, զծառայս, զընտանիս, զբարեկամս և զառողջութիւն, զկիալ յամենայն մխիթարութենէ, և չունելով զայլ կենակից՝ բայց յորոց դանն առ նա 'ի հարցափորձ և 'ի դատախազութիւն։

« Զգիտեմ զինչ կամիցին և զինչ խնդրիցեն՝ որոց մեծաւն և ողորմելի թշուառութեամբ նորա տակաւին չիցեն շատացեալ. տակայն չէ ինձ մարթ անգիտանալ, Տէր արքայ, թէ զինչ ցանկան և այնոքիկ՝ որոց աչք 'ի Տէրդ վեհափառ յարեալ կան միայն, և բաց 'ի փառաց

քոց՝ չեք նոցա այլ շահ և փառասիրութիւն։ Օրէնքն իսկ ինքեանն, Տէր արքայ, որչափ և անողոք լցեն և անկարեկիր 'ի բնէ, և ոչ իւրովն ամբեալ զինքեանս կարիցեն, բերկրեալ ինն զուարճանան, յորժամ տեսանեն զինքեանս ամբեալս 'ի ձեռանէ՝ որ ամենազօր է իբրև զձեռն տեառնդ արքայի։ Իմաստունն այն և արդար քան զամենայն թագաւորս դոչէ դարձեալ առ Տէրդ վեհափառ, որպէս և առ ամենայն թագաւորս եթէ « Մի լինիք կարի անաչառք..»։ Աղէ Տէրդ վեհափառ դամ մի զմտաւ ածցէ զսիչտաակ մեծի և երևելւոյ աւուրն՝ զոր ցնծալից ուրախութեամբ ետես Գաղղիա, և յոր թշնամիք մեծաւ ցաւօք և ափշութեամբ հայեցան. զայնր աւուր, յոր պարգևեցաւ մեզ 'ի վախճանի թագաւոր մի մեծ, հեզլով 'ի գլուխ վեհափառ Տեառնդ զիւրն սրբութեան իջեալ 'ի յերկնից։ Յայնմ աւուր, Տէր արքայ, մինչ չև վեհափառ Տեառնդ զառատաւատեղէն օծութիւնն ընկալեալ, և զարքայական պատմուճանն արկեալ զանձամբ և չև առեալ 'ի սեղանոյ անտի, այս է 'ի ձեռանէ Աստուծոյ՝ զթագն, և զգաւազանն՝ զայնչ զայն արդարութեան, և զմատանին՝ 'ի հաստատութիւն անքակ միաւորութեան վեհափառ Տեառնդ ընդ իւրումն արքայութեան, և զսուրն մերկ և բոցաճաճանչ, զամենայաղթն ընդդէմ թշնամեաց և 'ի վերայ իւրոց հնազանդելոցն ամենակարող, տեսաք մեք յայնժամ և լուաք զի Տէրդ վեհափառ, շուրջ պատեալ յաւադաց և 'ի մեծամեծաց աշխարհիս, յազօթս անդ և յօրհնութիւնս երգոց. առաջի սեղանոցն և յանդիման երկնի և երկրի և հրեշտակաց և մարդկան ասաց նուիրական բերանովն զգեղեցիկ և զվսեմ բանն, արժանիս քանդակելոյ 'ի պղնձ, այլ մանաւանդ 'ի սիրտ մեծի արքայիդ. « Երդնում և խոստանամ պահել և տալ պահել զարդարութիւն յամենայն դատաստանս, որպէս զի բարեգութն և ողորմածն Աստուած հեղցէ զողորմութիւն իւր 'ի ձեզ և 'ի յիս »։

« ԵԹԷ լցէ ոք, Տէր արքայ, որ ողորմութեան և արքայական արդարութեանդ այդմիկ կացցէ հակառակ, զոր մեզ անմարթ է կարծել, մեք ոչ փափաքեմք ուստեք զանողորմ և զանիրաւ դատաստան. այլ աղաչեմք ցուցանել առ Ցուրբէ զքրիստոնդ գթութիւն, զոր ինքն ոչ միայն յաղերս անկեալ պաղատի, այլ և յուսայ յայն և հաստատութեամբ հաւատայ: Եւ որ այն աղէսաք թըշուառութեան զարդիւնս նորին խափանել կարիցեն. որ այլ զօրութիւն մեծ և ահաւոր յաշխարհ պետութեան մեծափառ Տեառնդ կայցէ, որ արդեաւ զքեզ զհետ գնալ հանդիսաւոր երդմանդ և փառաց և տենչանաց, որ համակ մեծք են և արքայականք, մինչդեռ կարօղ ես զայդոսիկ լաւութիւնս կատարել միանդամայն, առանց ինչ բռնադատութեան այնոցիկ և առ հպատակդ անիրաւութեան: Տէր արքայ, մարթ իսկ է բարեզարդ օրինաք այժմէն յառաջագոյն յարդարել և բարեկարգել զապագայն: Եւ ոչ իշխիցէ 'ի պարտուցն պակասել, մինչ իշխանն պատկառ կայ իւրոցն վայելչապէս: Մի լեցի ուստեք անմեղադիր զանձն կացուցանել. ոչ ոք անգիտանայ այժմիկ զի աչք տեսուն իւրոյ միշտ 'ի նա հային: Անդ ցուցցէ վերափառ Տէրդ զլաստութիւն իւր անդամ, եթէ արդարութիւն իւր ոչ բաւական լինիցի: Իսկ անցեալն, Տէր արքայ, գնացեալ էանց, ոչ ևս այլ դառնայ այսրէն և դարման սխալանացն տանի: Այլոց ձեռաց հաւատացեալ էր զմեզ Տէրդ վերափառ. և մեր 'ի մոլ եդեալ թէ ոչ այնչափ զմինչ խորհիցիս, և մեք իսկ նուազագոյնս խորհեաք 'ի քեզ. և գոգցես անգէտք էաք մերոցս յանցանաց, ընդ որ դու ոչ զայրանալ թուէիր: Այսպէս է, Տէր արքայ, արժանաւոր հանդէս, բուն իսկ և ճշմարիտ պատճառք և գեղեցիկ ասպարէզ քումդ գթածութեան և բարութեան »:

Այս պերճախօս աղաչանքներն չկրցան զՑուրբէ աղատել: Տերութեան դէմ յանցաւոր ըլլալն չհաստատուեցաւ, բայց իրաքանչիւր էր իբրև կաշառառու: Երեք տարիէ աւելի դատաստանէ վերջը, արդարութեան ատեանն զինքն ազատ դատապարտեց. իսկ թագաւորն այդ պատիժը մեղմելնաւոր արգելանի փոխեց. և ատենուան մը գանձուց վերակացուն Բինեբրոլայ դղեակն փակուեցաւ, ուր և մեռաւ 1680ին:

Գ. Ճառ կացրդական հանդիսի.

Խօսք Պիւֆոնի առ կաձառորդս գաղղիական ձեմարանի, յաւուր ընդունելութեան իւրոյ.

Բանիանդակութիւն.

Պիւֆոն նախ շնորհակալ կ'ըլլայ Ճեմարանին՝ զինքն իր կաշառոյն մէջ ընդունելով իբրեն ըրած պատուոյն համար: Ճառախօսութեանը նիւթ կ'առնու գրութեան արուեստին գլխաւոր կանոններն:

Ճառախօսն խնամով կը զանազանէ մարդկան բազմութիւնն՝ գրաւոր բնական ճարտասանութեան, և խօսակցայուն սրտերն զուարճացնող գրութեան և խօսակցութեան արուեստին մէջ եղած տարբերութիւնն:

Ճարտարախօսէն կամ մատենագրէն պահանջուած առաջին աշխատութիւնն է՝ խօսելու նիւթոյն վրայ լաւ մտածել, և անոր զանազան մասունքն դասաւորել:

Մէյմը ծրագիրն կազմելէ ետև, իմաստներն գիւրաւ եւեւէ եւև կուգան, բացատրութիւնն անաշխատ կը գտնուի, և ոճն բնականօրէն նիւթոյն համաձայն կերպ մը կ'առնու:

Պիւֆոն կը ցուցնէ թէ գրութեան մէջ զգուշանալի թերութիւնք են հանճարեղ իմաստից չարաչար գոր-

ծածու�թիւնն, արուեստական բացատրութեանց ա-
խորժակն, և ամէն տեղ նշանաւոր խօսքեր դնելու չա-
փազանց սէրն։

Կը ցուցընէ նաև թէ ոճոյ կատարելութեան հա-
մար ինչ տեսակ յատկութիւններ պէտք են. և կը հաս-
տատէ թէ միայն սղէկ դրուած երկասիրութիւնքն
կրնան ինչուան ապագայից հասնել։

Մատենագրութեան իւրաքանչիւր ճիւղին յատուկ
ոճերուն վրայ խօսելէ ետև, համառօտ մը կը բացա-
տրէ թէ որոնք են բանաստեղծական, պատմական և
իմաստասիրական ոճոյն սեփական յատկութիւններն։

Ճառ Պիւֆոնի.

« Տեսարք, մեծապատիւ մեծարեցեք զիս ձերովք առ
իս հրաւիրանաւ. սակայն փառքն յայնժամ միայն պար-
գեւք են բարեաց, յորժամ ոք արժանաւոր գտանիցի
այնմիկ. և ես չկարեմ հաւանել, զի շարագրածք ինչ՝
յորս բաց 'ի բնութեանն զարդուց չիք այլ զարդ և ա-
ղուեստ, իցեն պատճառք բաւականք, մինչև համար-
ձակել յակումբ վարժապետաց արուեստին, և 'ի դասս
հոյակապ արանց, որք զպայծառութիւն գալրու-
թեանցն Գաղղիոյ յանդիման կացուցանեն, և որոց ա-
նուանքն հուչակեալք այսօր 'ի լեզուս ազանց, հնչեսցեն
յետոյ փառօք 'ի շրթունս սերնդոցս առ յապա եկե-
ղոց։ Անշուշտ, տեսարք, այլ իմն պատճառք եռուն ձեզ
արկանել զանն առ իս. կամեցայք ընծայել նոր իմն
ցոյցս մեծարանաց առ հոյակապ կաճառն, յորոյ 'ի բազ-
մաց հետէ մատնակցութեանն վայելեմ 'ի պատիւ։ Շնորհ-
հակալութիւնս իմ՝ ընդ այլոցն խառնեալ, ոչ ինչ
նուազ մեծ եղիցի։ Բայց զնաւրդ իցէ ինձ ընուլ զհարկ
պարտուցս՝ զոր այսօր ստիպիմ հատուցանել։ Ոչ ունիմ,

տեսարք, այլ ինչ, բայց եթէ զձերդ սեփական պարգև՝
'ի նուիրել առ ձեզ։ Իմաստս ինչ յաղագս ոճոյ գրու-
թեան 'ի ձերոց գրոցդ քաղեցի. և ընդ մատեանս ձեր
յածեալ և սքանչացեալ ընդ նոսին՝ երկնեցի զայսոսիկ,
որոց զլոյս իմաստութեան ձերոյ ունելով առաջնորդ,
յաջողութեամբ իւիք եկեսցեն 'ի հանդէս։

« Յամենայն ժամանակի եղեն արք՝ որ զօրութեամբ
ճարտարախօսութեան գիտացին իշխել այլոց. սակայն
քաջ մատենագիրք և քաջ ճարտարախօսք 'ի ծաղկեալ
ևեթ դարս կացին։ Ճշմարիտն ճարտարախօսութիւն
չյաջողէ առանց կրթութեան հանճարոյ և իմացականին
հրահանգաց. զի խոկը մեծ է ընդ այս և ընդ բնականն
այն գիւրութիւն խօսելոյ, որ ձիրք ևեթ բնութեան է,
առաւեալ որոց զօրաւոր են կիրք, հլու զգայարանք,
և աշխոյժ երևակայութիւն։ Սոքա զգան սաստկապէս,
ըմբռնեն ոչ ինչ նուազ, բացատրեն ազդողաբար, և
գործնական ևեթ ապաւորութեամբ ներգործեն յայլս
զհիացումն մտաց իւրեանց և զզգայմունս։ Մարմին առ
մարմին խօսի անդ, շարժմունք և նշանք առ հասարակ
գործակից լինին 'ի նոսն։ Ի՞նչ շարժի ամբոխն և ձգի
զհետս. ի՞նչ առաւելագոյնք 'ի մարդկանէ յողդողդին և
համոզին. սաստիկ իմն կամ ողորմ բարբառով, ազդու
և սաեպ շարժուածով, արագ արագ և քաջաշարակի
բառից հնչմամբք։ Այլ սակաւուց այնոցիկ՝ որոց ան-
յողդողդ են միտք, կիրթ ախորժակք և փափուկ զգա-
յութիւնք, առ որս ոչ գնան յեղյեղմունք ձայնի, շար-
ժուածք և սնոտի բառից հնչմունք, պարտ է գիտել
ըստ օրինի կարգաւ և կապակցութեամբ ընծայեցու-
ցանել նոցա զբանն. չէ բաւական բաղխել զունկն նոցա
և զաչս գրաւել. պարտ է յոգիս նոցա ազդել, և շար-
ժել զսիրտս՝ առ միտս նոցա խօսելով։

« Զոր ոճն ասեմք, ոչ այլ ինչ է՝ բայց կարգ և յեղ-
յեղումն իմաստից, որ եթէ իցեն քաջ կապակցեալ և
կուռ զհետս միմեանց ածեալ, ասի ոճ ազդու, զօրաւոր և

հակիրճ. իսկ եթէ յամբ յաջորդեն խմասաք, և 'ի ձեռն բառից ևեթ կցորդեն, որչափ և ընտիրք լցեն, ասի ոճ ճապաղ, թոյլ և դանդաղ:

« Յառաջ քան զկարգն որով ունիմք յանդիման առնել զնորհուրդս, պարտ է միւս այլ կարգ հանրագոյն և հաստատագոյն ունել գլխաւոր տեսութեանց և խորհրդոց, սահմանելով ըստ այսմ գլխաւոր կարգաւորութեան զտեղի նոցա՝ յորում առաջարկութեանն պարտ է բովանդակել, և ընդարձակութեան նորա գալ 'ի յայտ: Զայս նախկին գծագրութիւն յար 'ի մտի ունելով, յաջողէ սահմանել ըստ չափու զմիջոցս եկամուտ և յարակից խմասցից՝ որ ունին ընդ զայնս: Զօրութեան հանճարոյ է յանդիման առնել զայս ամենայն հանրական և զմասնական խմասս ամենայն ըստ իւրեանցն ընդիկ տեսութեան: Ամենանուրբ ընտրութեամբ պարտ է զանազանել զստերջ խմասս 'ի բեղնաւորաց. և խելամտութիւն՝ զոր վարժիւք մատենագրութեան է ստանալ՝ գուշակէ զարգասիս այսր ամենայնի գործողութեան մտաց: Եթէ առաջարկութիւնն փոքր մի ինչ ընդարձակ իցէ կամ բազմամասնեայ, դժուարին է միով ակնարկութեամբ տեսանել զայն, կամ համարէն 'ի վերայ կալ այնոցիկ նախկին միով ճգամբ հանճարոյ. և յետ զմտաւ իսկ քաջ ածելոյ՝ դուն ուրեք յաջողէ ըմբռնել զամենայն մասունս նորա: Ապա չէ մարթ ըստ արժան բաւականին պարծել յայն. և այսուիկ ևեթ է հնար հաստատել, ընդարձակել և ամբառնալ զնորհուրդս. և որչափ յաւելուցու ոք տալ մտածութեանցս այսոցիկ ոյժ և հաստատութիւն, նոյնչափ գիւրագոյն լեցի ապա իրացուցանել զայնոցիկ բացատրութիւն:

« Սակայն կարգաւորութիւնս այս ոչ է ոճ, այլ խաբիսխ նորին՝ որ 'ի վեր ունի զայն, վարէ և ուղղէ ըզչարժմունս նորա և նուաճէ զայն ընդ օրինաք. առանց այսորիկ մոլորի և քաջ մատենագիր, գրիչ նորա խաղայ առանց առաջնորդի, և տիպս բանից անկանոնս և ձևս

տարադէպս ըստ դիպուածոյ անճահագրէ: Որչափ և պայծառք իցեն երանգք ըստ 'ի կիր առնու, որչափ և գեղեցիկ զմասունսն յօրինեսցէ, եթէ բոլորն խիստ իցէ և հաղիւ զդալի, ոչ է քաջ մատենագրութիւնն: Այսր աղագաւ որք հանգոյն խօսիցն իւրեանց մատենագրեն, թէպէտ և կարի քաջ խօսողք իցեն, այլ չեն բարւոք մատենագիրք. և որք առաջնումն բոցոյ երևակայութեան հպատակին, չկարեն պահել զայն անշէջ. որք երկնչին թէ գուցէ անկցին 'ի մտաց նոցա խմասաք անկցորդք գիւրասահք, և որքայլ և այլ ժամանակս գրեն հատուածս այլ և այլ, չկարեն երբեք զոգել զայնոսիկ ընդ իրեարս առանց բռնաբռնս ձևոց անցմանց: Եւ համառօտ ասացեալ, են իսկ յոլով ճառք կարկառունք, այլ սակաւք յոյժ միաձոյլք:

« Սակայն ամենայն առաջարկութիւն մի ինչ է, և որչափ իսկ իցէ ընդարձակ, մարթ է ամփոփել զայն 'ի մի ճառ: Ընդէ՞ր գործք բնութեանն ամենակատարք են. զի իւրաքանչիւր յայնցանէ է մի ինչ ամբողջ, և գործէ ըստ մշանջենագիր առաջարկութեանն անխլիրտ: Պատրաստէ նա լուսեղէն զսերմանս արգասաց. յօրինէ միով ներգործութեամբ զնախագիծ բնաւից էից, հանէ զնոսա 'ի լոյս, կատարեալգործէ 'ի սահմանեալ ժամանակի յարատև չարժմամբ. հիացուցանէ գործն, այլ դրոշմ ասուածային զորոյ բերէ նա յինքեան զտիպ՝ առնէ զհիացումն զայն: Միաք մարդկեղէն չկարեն ստեղծանել մինչ, և ոչ ածել ինչ 'ի լոյս, բայց բեղնաւորեալ 'ի փորձոյ և 'ի խորհելոյ. սերմանք արգասաց նորա են հըմտութիւնք իւր: Եթէ նմանողն լինի նա բնութեան յերկս և 'ի վաստակս իւր, եթէ ամբառնայ հիացմամբ 'ի զնին գերբակայ ճշմարտութեանց, եթէ կցորդէ զայնս և կազմէ ի մի ինչ և միակարգ, կանգնէ խելամտութեամբ 'ի վերայ անսասան հիմանց արձանս անմահականս:

« Այս թերութեան առաջարկութեանն, և վասն ոչ բաւականապէս խելամտելոյ երին՝ զորմէ ճառէ, գտա-

եթէ յաւէլցի փափկութիւն և ախորժակ, քաջընտրութիւն բացատրութեանց, և զգուշութիւն՝ հասարակաց անուամբք զերս իւրաքանչիւր անուանելոյ, եղանի ոճն ընտիր. իսկ եթէ յաւելցի և անվստահութիւն ընդ նախկին շարժումն, արհամարհութիւն վայելման, և անողոքելի ընդդիմութիւն զուարճախօս երկդիմութեան, եղանի ոճն ծանր և մեծավայելուչ: Ի վերայ այսոցիկ եթէ ոք մատենագրեսցէ որպէս խորհի, և իցէ հաւանեալ յոր ինչ զայլս կամի համոզել, այս հաւատարմութիւն ընդ անձին՝ որ վասն այլոց գործէ զպատշաճն վայելչութիւն և զճշմարտութիւն ոճոյ, տացէ նմա ընդունել զամենայն արդասիս ճառին...:

« Քաջ մատենագրութիւնք այնոքիկ եւեթ են, որ մնան յաղէ՛յաղ. անբաւ հմտութիւն, անլուր իրք, և գիւտք իսկ նորանորք ոչ երաշխաւորեն զնոցայն անմահութիւն: Եթէ զմտնունց իրաց իցեն ճառք, և առանց կիրթ ախորժակաց գրեալ, առանց ազնուականութեան և հանճարոյ, կորիցեն. զի զհմտութիւնս, զգործս և զգիւտս գիւրին է բառնալ առնուա՛ւ կիր ածել, և բարւոք ևս ճարտարագոյն գրչի մարթ է զայնոսիկ մատենագրել: Այս ամենայն արտաքոյ են մարդոյ, իսկ ոճ՝ յինքեան իսկ՝ ի մարդումն է, և չէ մարթ բառնալ զայն՝ ի նմանէ, ոչ ածել այլուր, և ոչ այլայլել: Եթէ ուրուք բարձր է ոճ, ազնուական և վսեմ, գովեսցի նա յամենայն ժամանակի. զի ճշմարտութիւն եւեթ է տեղ և յարակայ: Այդ ոճոյ գեղեցկութիւն յանբաւ ճշմարտութեանցն է՝ զորս բարձեալ բերէ յինքեան: Իմանալի գեղեցկութիւնք առ հասարակ՝ որ են՝ ի նմա, և համեմատութիւնք՝ յորոց կազմի, են ճշմարտութիւնք շահաւէտք, թերևս և պատուականագոյնք մարդկեղէն մտաց քան զօգտութիւնս պատճառաց ճառիցն:

« Վսեմութիւն՝ ի բարձրագոյն պատճառս եւեթ ճառոյ կարէ կալ: Բանաստեղծութիւն, պատմութիւն և իմաստասիրութիւն, երեքին իսկ զնոյն իրաց ճառեն,

և իրքն մեծ յոյժ, ասեմ՝ իսկ զմարդ և զհամագոյս: Իմաստասիրութիւն նկարագրէ զհամագոյս, իսկ բանաստեղծութիւն նկարէ և գունագեղէ, նկարէ նա զմարդ և մեծացուցանէ զնա, և գեր՝ի վերոյ ամբառնայ, գիւցազունս և գիս՝ ի մարդկանէ ստեղծանէ: Պատմութիւն զմարդ եւեթ նկարագրէ, և նկարագրէ զնա որպէս և էն, և ըստ այսմ՝ յեղանակ պատմագրին ոչ երբեք եղանի վսեմ, բայց՝ ի նկարագրել զաւագագոյնս՝ ի մարդկանէ, և՝ ի յանդիման առնել զմեծամեծ գործս նոցա, զմեծամեծ արութիւնս, զմեծամեծ յեղափոխութիւնս. իսկ այլ ամենայն ուրեք շատ է՝ զի իցէ ծանր և մեծավայելուչ: Յեղանակ իմաստասիրին՝ մարթի իսկ գոլ վսեմ՝ ի ճառել նորա զօրինաց բնութեան, զհամագոյից, զանսահման համապարփակ վայրէ, զնիւթոյ, զաշարժմանէ և զժամանակէ, զհոգւոյ, զմարդկեղէն մտաց, զզգայութենէ և զկրից. իսկ այլ ամենայն ուրեք շատ է՝ զի իցէ ազնուական և բարձր: Այլ յեղանակ ճարտասանին և քերդողի՝ ուր զմեծամեծ իրաց խօսին՝ միշտ իսկ պարտի գոլ վսեմ. զի՝ ի ձեռս նոցա է յաւելուլ՝ ի մեծութիւն իրացն երանգս, յեղյեղմունս և երևոյթս որչափ և հաճոյ իցէ նոցա. և զի դարձեալ հասանէ նոցա նկարագրել միշտ և մեծացուցանել զիրս՝ զորոց խօսին, պարտ է նոցա ամենայն ուրեք՝ ի կիր արկանել զամենայն զօրութիւն, և հանդէս առնել ամենայն ընդարձակութեան հանճարոյ իւրեանց»:

Պատանի համբակաց համար բաւական չէ որչափ ալ մտածելու ըլլան այս ճառիս իւրաքանչիւր բառիցը վրայ, որ այնպէս լաւ կերպով գրութեան արուեստին հիմնական կանոններն կը բովանդակէ, և տուած պատուէրներն միանգամայն մէյմէկ ճարտար օրինակներ են:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ ՀՈՒԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Հանտորական արուեստն ինչ զանազան պէտքերու կրնայ ծառայել.

Սովորաբար ինչ որ պատանեկութեան ժամանակ կը սորվեցուի, կենաց մնացած մասին համար իբրև օգուտ մը չունեցող բան մը կը համարուի: Կը կարծուի թէ առաջին տարիներն՝ անցնելու համար եղած ժամանակ մըն են, և թէ ուսմունքներն պէտք է յարգել միայն իբրև սովորութեամբ հաստատուած կարգ մը. բայց մէյմը դպրոցէն ելլելէն կամ դաստիարակին հսկողութենէն ազատ ըլլալէն ետև, գիտութեան վերջն հասած է, և ուրիշ բան չմնար, բայց եթէ գրքերն այրել, բոլորովին նոր ասպարէզ մը մտնելու համար: Այս ծուռ կարծիքն բոլորովին հակառակ է առաջին հասակին ուսմանց նպատակին: Ինչ որ ուսումը մեզի կ'ուզանդէ, պէտք է որ պատանեկութենէ ելլելէ վերջը գալիք զբաղանաց հետ ուղղակի յարաբերութիւն ունենայ. և ինչ որ իրական կենաց պիտի չծառայէ, պէտք է դաստիարակութեան կարգէն դուրս հանել: Ագեսի-

ղայոս իր Ժամանակն ըսած է Լակեդեմոնացւոց. Տղոց և պատանեաց սորվեցընելու է ինչ որ մարդ եղած ժամանակնին գիտնալու և գործադրելու պէտք պիտի ունենան:

Դասագրքին մէջ ջանացինք լաւ խօսելու արուեստին գլխաւոր սկզբունքներն աւանդել. ցուցցինք թէ ինչպէս կարելի է մտածութիւններ գտնել, ինչ կարգաւ պէտք է զանոնք դասաւորել, և ինչ կերպով բացատրելու է: Այս երեք այլ և այլ հրահանգներէ եռև, զանազան տեսակ կրթութիւններ դրինք, որոնց վերնանն է՝ առիթ մը տալ աշակերտաց իրենք իրենցմէ հռետորական արուեստին կանոններն գործածելու: Կը մնայ վարժապետին՝ բացատրութեան կարևոր կետերն պարզել, և այն մասերն, որոնց վրայ հարեւանցի կերպով մը խօսուած է, ընդարձակօրէն բացատրել, և առնով դասագրքին պակասն լեցընել: Կրնանք ուրեմն ենթադրել որ դասախօսութեանս ընթացքն ընող աշակերտք բաւական տեղեակ պիտի ըլլան խօսելու արուեստին, թէ ըստ տեսական և թէ ըստ գործնական մասին: Պիտի կարենան զանազանել ալեկ դրուած իմաստ մը, այսինքն յստակ, եռանդուն և դաշնակաւոր իմաստ մը, մթին՝ ճապաղ և ականջի անախորժ իմաստ մը: Բայց այս գիտութիւնս իրենց ինչքանի պիտի առաջնորդէ. իրենց ապագայ ընթացքին մէջ, և իրենց կենացը բովանդակ ժամանակին մէջ ինչ արդիւնք պիտի ունենայ: Ասիկայ հարցմունք մըն է՝ որ կրնան իրենք իրենց ընել, և որուն պատասխանն այս երրորդ մասիս մէջ պիտի տանք:

Հոս չենք ուզեր խօսիլ թէ հռետորական արուեստն ինչ օգուտներ կ'ընծայէ այն անձանց, որոնք իրենք զիրենք թէ խօսքով և թէ գրով իրենց նմաններն լուսաւորելու աղնուական արուեստին նուիրած են, և ընկերութեան մէջ մէյմէկ փառաւոր բացառութիւններ են: Չենք ուզեր խօսիլ նաև այն ստորին վիճակի

անձանց համար, որոնց համար բաւական է նախնական կրթութիւն մը, և հետևաբար կրնան զանց ընել հռետորական արուեստին ուսումը: Խօսքերնիս միայն դասու մարդկանց համար է, այսինքն այն բազմաթիւ անձանց համար, որոնք դպրոցներէն ելլելէն եռև, քաղաքական կեանց մէջ զանազան արուեստներու պիտի զբաղին: Ոմանք ճշգրիտ գիտութեանց եռևէ կ'ըլլան և յետոյ իրենց ստացած տեսական ծանօթութիւններն արուեստից կամ հասարակաց ծառայութեանց օգտակար ընելով, ճարտարապետաց և մեքենագիտաց կարգը կ'անցնին. ոմանք իրաւագիտութեան ուսման կը պարապին, և զայն ոչ իբրև փաստաբան, այլ շատերն իբրև դատաւոր, նոտար կամ իբրև պաշտօնական դատասաց՝ իրենց պէտքին կը ծառայեցընեն. շատերն ինքզինքնին բժշկութեան արուեստին կուտան. սակաւաթիւ կ'ըլլան զինուորական վիճակն յանձն առնողներն, շատերն ալ վաճառականութեան եռևէ կ'ըլլան. կը գտնուին նաև այնպիսիք, որոնք 'ի բնութենէ սահմանուած են գեղարուեստից փառքն պայծառացընելու, և օր մը պատկերահան, արձանագործ, ճարտարապետ կամ երաժիշտ ըլլալու: Ասոնք ամենքն ալ իբրև քաղաքացիք՝ հասարակաց գործոց մէջ մասն կ'ունենան: Հռետորական արուեստն կրնայ ուրեմն անոնց օգտակար ըլլալ, թէ իրենց առանձնական յարաբերութեանցը մէջ, և թէ քաղաքական պարտուց կատարմանը մէջ: Նոյն իսկ կանանց համար շահաւոր է լաւ խօսելու արուեստն մշակելը. վասն զի անով ընկերութեան մէջ մեծ ազդեցութիւն կրնան ունենալ. և որ և է անձ՝ որ իր նմանեաց հետ ստէպ հաղորդակցելու սահմանեալ է, պէտք է ինչուան աստիճան մը գիտնայ իր մտածութիւններն կարգով մը դասաւորել, զանոնք արուեստով ընդարձակել և վայելչապէս բացատրել:

Հռետորական արուեստին գործնական մասը երեք գլխաւոր ճիւղ կը բաժնենք. Ա. Հրապարակական. Բ. Նամակագրական ոճ. Գ. Խօսակցութիւն:

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս հրապարակական ճառի.

Բազմութեան մը առջև խօսելու առիթ ունենալու համար հարկ է որ մէկն քաղաքական ժողովոյ մը անդամ, վիճաբան, դասատու կամ քարոզիչ ըլլայ: Դիպուածոց այնպիսի յարմարութիւններ կ'ըլլան, որ ամենէն աւելի աննշան անձն և ամենէն աւելի առանձնակեաց քաղաքացին կը հարկադրեն աւելի կամ նուազ բազմաթիւ ունկնդրաց առջև բան մը խօսելու: Ըսենք թէ մէկն իր քաղաքին կամ նոյն իսկ իր թաղին խորհրդոյ ժողովոյն անդամ ընտրուած ըլլայ. եթէ չկարենայ քանի մը խմաստ իրարու քով բերել, և իր բացատրութեան կերպովն անոնց ոյժ և յստակութիւն տալ, չկրնար երբեք ժողովոյն որոշողութեանց վրայ ազդեցութիւն մը ունենալ, և իր կողմանէ իր քաղաքակցաց ծառայութիւն մը ըրած ըլլալ: Միայն իր պաշտօնակիցներն մտիկ ընելու և լռութեամբ քուէ ձգելու սահմանուած, ինքն ալ բան մը խօսել չկարենալուն վրայ շատ անգամ պիտի ցաւի, և թերևս իր նուաստացեալ անձնասիրութիւնն իրեն հրաժարել պիտի տայ պատուաւոր պաշտօններէ, զորոնք թերակատար կերպով պիտի կատարէր: Ո՛ր և իցէ վիճակի մարդկանց հարկ կ'ըլլայ դատի մը մէջ դատաւորի պաշտօն կատարել: Իսկ արդ եթէ մէկն վարժութիւն ըրած չըլլայ իր մտածութիւններն ճիշդ և որոշ կերպով բացատրելու, վախն ալ աւելի արգելք կ'ըլլայ խօսելու, և ամբաստանեալին հարցումներ ընելու, որոնք կրնան անակնկալ կերպով խնդրոյն նոր լուսաւորութիւն մը տալ: Շատ անգամ կը

տեսնենք որ կանայք իսկ ատեանի առջև վկայութիւն տալու կը կանչուին, և գործոյ մը վրայ ընդարձակօրէն տեղեկութիւն տալու կը հարկադրուին: Եթէ յանկարծ իրենց տգիտութիւնն՝ անսովոր դարձուածք մը կամ հասարակ բացատրութիւն մը հանել տայ բերաններէն, իրենց խօսքերն ծանրակաց դատաւորաց ծիծաղը կը շարժեն, ունկնդրաց ծաղրածութեան առիթ կ'ըլլան, և երկրորդ օրն լրագիրք զանոնք բառ առ բառ ընթերցողաց չարամտութեանն նիւթ կը հայթայթեն:

Այս և ասոր նման ուրիշ շատ առիթներու մէջ՝ որ չկրնար նախատեսուիլ, հարկ է ճարտարանական մեծ տաղանդ մը ունենալ. բայց գիտնալու է քանի մը իմաստ մէկտեղ միացընել, որչափ կարելի է բնական և պարզ կարգաւ զանոնք դասաւորել, և զանոնք բացատրելու ատեն զգուշանալ կրկնութիւններէ, հասարակ ղուրցուածքներէ և խառնակ իմաստներէ: Այս ամէն կէտերուս վրայ հռետորական արուեստն շատ մը պատուէրներ կուտայ, զորոնք պէտք է ամենևին արհամարհել:

Երբ անձ մը որ հռետորական արուեստն իրեն սովորական պարապմունքն ըրած չէ, և կը հարկադրուի ժողովքի մը, ատեանի մը մէջ, կամ ուրիշ որ և իցէ ակմբի մը առջև բան մը խօսելու, առաջին 'ի գործ դնելու կանոնն է՝ ճշդիւ զուրցել ինչ որ խիղճն իրեն կ'ազդէ: Մարդ չկրնար երևակայել թէ ներքին համոզմունքն ինչ ասոնցմանի զօրութիւն կուտայ մեր խօսքերուն, և նոյն իսկ հանճարոյ պակասութիւնն կը լեցընէ: Մինչև մտադրութեամբ և նաև ախորժով մը մտիկ կ'ըլլուի այն անձն, որ ինչ որ կը մտածէ՝ զայն կը զուրցէ, և երբև թէ հոգին իր շրթանցը վրայ կը կրէ: Անոնք որ ճարտարախօսութիւնն իրենց արուեստ ըրած են, երբեմն իրենց կարծեաց հակառակն ըսելու ամօթալի սովորութիւնն կ'ունենան, և առերևոյթ յաջողութեամբ մը կը փայլին. բայց ով որ խո-

սելու արուեստին մէջ շատ վարժութիւն չունի, ամէն բանէ առաջ պէտք է ճշդութեամբ ըլլայ. ապա թէ ոչ՝ ըսածներն ցուրտ կերպով մը կ'առնուն, և չկրնար ուրիշներն համոզել բանի մը՝ որուն ինքն համոզուած չէ: Պէտք է նաև ամենայն կերպով իր նիւթոյն սահմանին մէջ մնայ. որովհետև Ճարտասանական արուեստին ամենայն նրբութեանցն տեղեակ չըլլալով, իր նիւթէն մէյմը դուրս ելլելէն վերջը՝ չկրնար նորէն Ճարտարութեամբ հոն դառնալ. և եթէ մէյմը անկեց զարտուղի, ա՛լ իրեն համար խաղըսում չկայ. մէկ խոտորմունք մը ուրիշ խոտորմունք մը յառաջ կը բերէ. և այսպէս խոտորմունքէ խոտորմունք կնալով, իր նպատակէն այնչափ կը հեռանայ, որ չկրնար մէյմ՛ալ հոն դառնալ: Վերջապէս այսպիսի պարագայից մէջ՝ զուրցուածքին ոճն պէտք է կարգէ դուրս պարզութիւն ունենայ. Ճարտարախօսին թողուլ է այն Ճոխ ընդլայնմունքներն, ներդաշնակաւոր պարբերութիւններն և ուրիշ ամէն զարդարուն կամ եռանդուն ձևերն, զոր հռետորական արուեստն իրեն կը մատակարարէ: Այն որ մի անգամ մը միայն դիպուածով բազմութեան առջև պիտի խօսի, դիւրաւ կրնայ չափէն անդէն անցնիլ, և պերճութիւնն սեթևեթութեան հետ, կամ աղդողութիւնն՝ չափազանցութեան հետ շփոթել: Իր խօսակցութեան նիւթերն սովորաբար շատ պարզ ըլլալով, նաև ոճն ալ ընտիր կ'ըլլայ, թէ որ իր մտածութիւններն յստակ կերպով բացատրէ:

Նոյն իսկ Ճարտարախօսք պէտք է զգուշանան պարզ բաներն Ճոռոմ կերպով զուրցելէ: «Հարկաւոր չէ, կ'ըսէ նշանաւոր հեղինակ մը, որ մէկն Արիստոտէլ, Կիկերոն և Կուինտիլիանոս կարդացած ըլլայ, որպէս զի կարենայ ըմբռնել թէ ծաղրելի է այն փաստաբանն, որ պատի մը վերաբերեալ խնդրոյ մը համար՝ պերճյառաջաբանով մը իր Ճառն կը սկսի. և սակայն մինչև եօթնեւտասներորդ դարուն կէսերը այս թերութիւնս դատաստանական ատեաններու մէջ կը՝տիրէր: Կը զուրցեն թէ հանճարեղ փաստաբան մը, տեսնելով որ հակառակորդն Տրոյիոյ և Սկամանդրի վրայ կը խօսէր, խօսքը կտրեց՝ ըսելով. «Ատեանը պէտք է դիտէ որ այն անձն որուն համար այս դատաստանս կ'ըլլայ, ոչ թէ Սկամանդր այլ Միշոյ կը կոչուի»:

Պատմութեան մէջ շատ մը օրինակներ կան պարզաբան Ճարտարախօսութեան, զոր ամենայն կրթեալ մարդ պէտք է առթին մէջ գործածէ: Հենրիկոս Դ իր կեանքն հռետորաց դրուածքներուն մէջ թարթափելով անցուցած էր. Պէառնայ լերանց մէջ ինքզինքը պատերազմական աշխատութեանց տալու սկսած ժամանակէն ինչուան այն ժամանակն, որ առանց դրամոյ և գրեթէ առանց ուրիշ օգնութեան մը, բայց եթէ իր սրտին և քանի մը բարեկամներով իրեն դէմ միաբանած բազմութիւն իշխանաց յաղթեց, և ամբողջ իր թագաւորութիւնն նորէն ձեռք բերաւ, Հենրիկոս աւելի դրծելու քան խօսելու վարժութիւն ըրած էր: Սակայն կրթութիւնն իր մարմնոյն պատերազմական կենաց վարժեցընելու ատեն՝ նաև միտքն ալ անմշակ չէր թողուցած. տեղեակ էր ազգային լեզուին, և զայն ընտիր ոճով կը խօսէր. ասկէ զատ՝ հանճարեղ և խորագէտ էր, և բնական ու համարձակ կերպ մը ունէր: Պատերազմի դաշտին վրայ շատ անգամ ըրած է այն տեսակ Ճառախօսութիւններ, որոնք զինուորին հոգւոյն վրայ պատերազմական երաժշտութեան հաւասար ազդեցութիւն մը կ'ընեն: Բայց իր Ճարտասանութեան ամենէն աւելի նշանաւոր կտորն՝ իշխանաւորաց ժողովոյն առջև խօսած Ճառն է: Այն անձն, որ քանի մը ազնուականաց գլուխն անցնելով իր հայրենի թագաւորութիւնն ձեռք բերաւ, և հաշտեցուց կամ գէթ լռեցուց ամէն կուսակցութիւններն, զերծնք 'ի բարեկարգութիւն, 'ի բարեկեցութիւն և 'ի խաղաղութիւն յորդորելով. այն իշխանն, որ իր ապրած դարէն շատ աւելի

բարձրագոյն քաղաքականութեան և կատարելութեան հնարքներ կը մոռնէր, խոնարհ կերպով մը իր հպատակաց առջև կը ներկայանայ, և փոխանակ անոնց հրամաններ տալու, խորհուրդ կը հարցնէ, այնպիսի բարեսրտութեամբ մը՝ որ իր աստիճանին մեծութենէն բան մը չպակսեցներ, և խօսուածքի այնպիսի պարզութեամբ մը, որ միանգամայն սէր և զարմացումն կ'ազդէ։ Այս ճառախօսութիւնս, որ 1596ին, Նոյեմբերի 4ին Ռուանի մէջ ըրած է, կրնայ մինչև ցայսօր իբրև օրինակ յառաջ բերուիլ։

« Եթէ ինչ զճարտարախօսսն անուն Ժառանգել կամեցեալէր իմ, ուսանէի արդեօք զդեղեցիկ ինչ և զերկարաձիգ ճառս, և զայն մեծաւ պերճութեամբ խօսէի առ ձեզ։ Այլ սակայն, տեսլիք, եղէք սրախօյժարեցուցանեն զիս Ժառանգել զկրկին պայծառագոյն և անուանս, այս է զի փրկիչ և նորոգող տերութեանս կոչեցիմ։ Եւ ահա խմբեցի զձեզ այսր, զի յայն յաջողել մարթացայց։ Ապաքէն գիտէք և դուք ձերովքդ վնասուք, որպէս և ես՝ իմովքս տուժիւք, զի յորժամ էա ինձ Աստուած զթագս արքայութեան, դոն զԳաղղիա ոչ միայն իբր 'ի կործանումն հասեալ, այլ և ամենեին իսկ կորուսեալ վասն գաղղիական սերնդոց։ Աստուածեղէն շնորհիւն, աղօթիւք և բարեսէր խրատուք իմոցս ծառայից՝ արտաքոյ զնուորական կարգին եղելոց, և սրով քաջարի և մեծանձն ազատանուցն, յորոց ոչ զատեալ որոշեմ և զդասս իշխանաց, որք յիրաւի 'ի գեղեցիկ պարծանս են մեզ, այլ և իմովքս քրտամբք և աշխատութեամբք զերծուցի զաշխարհս 'ի կորստենէ. զերծուցուք այժմ 'ի կործանմանէ։ Ո՛վ ծառայքդ սիրելիք, աղէ որպէս յառաջինն՝ նոյն և յերկրորդս այս փառս պարծանաց լերուք ինձ կցորդք։ Ոչ կոչեցի զձեզ, զի զկամս հրամանաց իմոց տայցեմ հաստատել, որպէս նախնիքն իմ առնէին. այլ գումարեցի զձեզ այսր՝ յընդունել խրատս առ 'ի ձէնջ, անսալ այնոցիկ և զհետ երթալ. և

հակիրճ ասացեալ, ընդ ձերովդ խնամակալութեամբ արկանել զիս։ Յօժարութիւն այդպիսի դուն ուրեք ծնանի՞ 'ի սիրտս թագաւորաց, սպիտակախառն ալեաց և յաղթողաց։ Բայց մեծագոյն սէրն՝ որով առ հպատակս իմ բերիմ, և անհնարին տենչ փափաքանաց զոր ունիմ 'ի յաւելուլ զկրկին գեղեցիկ անուանդ պարծանաց 'ի վերայ անուանն թագաւորի, դիւրին և փառաւոր երևեցուցանեն ինձ զամենայն։ Դպիրն իմ յիշատակաց լիապոյս զկամս իմ տացէ ձեզ գիտել »։

Ինչպիսի եռանդն արծարծած պիտի ըլլայ այդպիսի բանախօսութիւն մը. և եթէ ժողովոյն մէջ գեռ քանի մը հին և յամառեալ դաշնաւորք ալ կային, զանոնք ալ անշուշտ զինաթափ ըրած, և խոնարհեալ տուած է թագաւորի մը ոտքը, որ այդպէս վերհանձնութեամբ ժողովուրդն իր իշխանութեանը մասնակից կ'ընէր։ Այս անկեղծ զգացմանց և հանձարեղ եռանդեան աղդոյ և արդարախոհ բացատրութիւններն լսելով՝ կարծես թէ կենդանի կը տեսնենք զՀենրիկոս Դ. հանդերձ իր աշխոյժ և քաջոյր նայուածքովն, վսեմ և անոյշ կերպարանքովն, իր ժամանակին հագուստովն, խորշխորշան փողակապովն և կախուած մօրուքովն։ Իվրիի դաշտաց վրայ պատերազմող հինաւուրց բարեկամներն իր չորս կողմը կ'առնուն, քովն ալ Սիւլլի կեցած՝ վայրկեան մը աչքն անկէց չհեռացներ, և կարծես թէ անոր անմահական խօսքերն լսելով, պարծենալով մը իր տէրն և բարեկամը կը դիտէ. իշխանաւորք գորովանօք և պատկառանօք զդածուած՝ կը փափաքին Հենրիկոս Դին ոտքն ելնալ և աղաչել որ իր միտքն յայտնէ, որպէս զի կարենան անոր խորհուրդներն գործադրել, և արքայական հրամաններն կատարել։ Քաղաքական հանդէսն՝ ընտանեկան տօնախմբութեան կը փոխուի։ Ահաւասիկ պարզ, բնական և ներքին համոզման վրայ հիմնեալ ճարտասանութեան մը յաղթանակն։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս նամակագրական ոճոյ.

Ամենեն պարզ թղթակցութիւնն ալ առեթ մըն է գրութեան արուեստին ընդհանուր կանոններն 'ի գործ դնելու։ Սակայն դժուարին է նամակագրութեան ոճոյն մասնաւոր կանոններ սահմանել. վասն զի որ և իցէ նամակի կարևոր յատկութիւնն է՝ բնական ըլլալ, և ամենազարդ ոճով մը մտածութիւններն յաջորդաբար յառաջ բերել։ Եթէ Սեվինեէի գիրքը բանալու ըլլանք, կը տեսնենք որ կերպով մը ամէն կանոններն և պատուէրներն ուղածին պէս անխոսիր կը գործածէ, ճարտար արագութեամբ մէկ նիւթէ մէկալը կ'անցնի, իր զգացած աշխոյժ զուարթութիւնն մեզի ալ կը հաղորդէ, կամ աչքերնէս արցունք թափել կուտայ. մէյմը սեւեռած կը կենայ իմաստի մը վրայ, և բնաւ չթողուր զայն. մէյմ'ալ ծանր և նորանոր նիւթոց վրայէն սահելով մը կ'անցնի, և հաղիւ թէ անոնց վրայ խօսք մը ղուրցելով, նորէն իր հարիւր անգամ ըսածին կը դառնայ։ Զենք կրնար զինքը թողուլ. ինչ կիրք որ մեզի ազդել կ'ուզէ՝ անով կը զգածուինք. իր ամէն ըսածքնայ մտածութեանցը ետեւէն կ'երթանք. իր աշխոյժ և բնական դարձուածքներն, պարզ և տեղւոյն յարմար բացատրութիւններն զմեզ կը զուարճացընեն, սրտերնիս կը շարժեն և կը յափշտակեն։ Կարելի բան չէ այդպիսի հանճար մը կանոնաց տակ ձգել, և զայն իբրև հետեւելու յարմար օրինակ մը ամենուն առջև դնել. վասն զի ան ատեն հարկ կ'ըլլայ ըսել որ ամէն մարդ պէտք է Սեվինեէի հանճարն ունենայ, մինչդեռ ոչ ոք կրնայ ուրիշին հանճարն իրեն սեփականել։ Ամէն բանէ աւելի նամակի մը մէջ պէտք է ինքզինքն մոռնալ և թող տալ որ սիրտն խօսի, առանց ամենևին ուրիշի մը հետեւելու։

Ուստի նամակագրական ոճոյ նկատմամբ առաջին սկզբունքն այս բառերուս մէջ կը բովանդակուի. բնական և ճշդիւտախօս ըլլալ։ Պէտք է մէկն ինչ որ կը մտածէ՝ պարզաբար ղուրցէ, առանց մեռոի ընդլայնմունքներ և անյարմար զարդեր փնտռելու։ Տիկին մը ուզելով ուրախակցութիւն մը ընել իր բարեկամաց մէկուն, որ թագաւորէն շնորհք մը ընդուներ էր, փոխանակ պարզ կերպով իր սրտին զգացմունքն բացատրելու, արիւն քրտներ էր՝ չորս մեծամեծ էջեր ճոռոմ ղուրցուածքներով և աւելորդաբանութեամբք լեցընելու համար։ Կիրթ ճաշակ ունեցող մարդուն մէկն, որուն կարծիքն ուզեր էր իր նամակին համար, հարցուց իրեն թէ այդ երկայն ճառով իր բարեկամին ինչ կ'ուզէր հասկցնել. «Կ'ուզեմ, պատասխանեց, իրեն հասկցնել որ ոչ ոք ինծմէ աւելի ուրախութիւն զգացած է վերափառ թագաւորին անոր ըրած արդար վարձատրութեանն համար. և թէ իր այդ նոր պաշտօնն զինքն ասկից հեռացընելով՝ պէտք չէ իր բարեկամներն մոռցընել տայ. և ես արժանի եմ որ զիս յիշէ, որով հետև իր յաջողութեանն միշտ փափաքող եղած եմ։— Տիկին, կրկնեց խորհրդակիցն, միայն այս խօսքերս իրեն գրէս՝ բաւական է. և ասանկ նամակ մը անհամեմատ աւելի լաւ է քան թէ բոլոր այդ կարդացածս»։

Իրաւացի է այն խօսքն՝ թէ նամակն՝ գրաւոր խօսակցութիւն մըն է։ Ուստի նամակագրութիւնն՝ լաւ խօսող անձանց սովորական խօսակցութիւնէն աւելի բան մը չպահանջեր։ Հարկաւոր չէն անանկ երկայն պարբերութիւններ, որ բազմաժողով ակումբի մը մէջ մեծ ազդեցութիւն կ'ընեն, բայց թէ որ մէկ հոգւոյ մը ղուրցուելու ըլլան՝ ձանձրութիւն կը պատճառեն. պէտք չէն այն տեսակ պարապ մակդիրներ, որոնք խօս

քը կը ծանրաբեռնեն, առանց խմաստը բացայայտելու։ Ձևաւոր բացատրութիւններն այն ատեն կրնան նամակի մը մէջ տեղի ունենալ, երբ ամենայն կերպով նիւթոյն յարմարին, և եթէ թէ իրենք իրենցմէ գրողին գրչին տակն եկած ըլլան։

Ինչնիւթոյ վրայ որ կը խօսուի և ինչ անձի որ խօսքն կ'ուղղուի, անոր համեմատ նամակին կերպն ալ կը փոխուի։ Եթէ գրենք մէկու մը՝ որ իր ասպիճանաւն, հասակաւն, ձիրքերովն կամ առաքինութիւններովն մեզմէ վեր է, մեր ոճն ալ պէտք է ըլլայ ցածուն և զգուշաւոր. մանաւանդ պէտք է համառօտախօս ըլլալ, և որչափ կարելի է քիչ խօսքի մէջ շատ իմաստներ բովանդակել. վասն զի որուն որ կը գրենք՝ անոր վայրկեաններն չարաչար գործածելու իրաւունք չունինք. Մոնդոզիէ կ'ուզէ Լուդովիկոս չորեքտասաներորդի անդրանիկ որդւոյն ուրախակցութիւն ընել՝ Փիլիպսպուրկայ առմանն համար. երկայն բարակ անհամ խօսքերով թուղթը չլեցներ, այլ քանի մը տող միայն կը գրէ, որոնցմէ կ'երևի իր սրտին աղնուութիւնն և ինչ մեծ սէր ունենալն պատանի եշխանին վրայ, որուն դաստիարակն եղած էր.

« Վեհաղն Տէր,

« Ոչ մատուցանեմ ինչ առ քեզ զբերկրանաց իմոց մեծարանս՝ յաղագս առմանն Փիլիպսպուրկայ. զընտիր ընտիր բանակս զօրաց, զգերաղանց անօթս պատերազմականս և զՎոպան ունէիր առքև. նա և ոչ իսկ յաղագս հանդիսից քաջարութեանցն և անվեհեր աներկիւղութեանն՝ զոր ցուցեր. լաւութիւնք են այդոքիկ՝ քոյոյ զարմիդ սեփականք։ Բայց խնդակից լինիմ քեզ վասն քոյոյդ աղնուական, վեհանձն և մարդասէր բարուց, որով զքոյ վաստակդ 'ի մոռացօնս արկեալ, զայլոցն մեծացուցանես։ Վասն այսր ահա զբերկրանաց իմոց մեծարանս առ քեզ մատուցանեմ»։

Եթէ Մոնդոզիէ գիտէր պատկառոտ համարձակութեամբ մը խօսիլ, նաև Հենրիկոս Դ, ոչինչ նուազ սակաւագիտ ձիրք մը ունէր. անանկ ճարտար էր իր հպատակացը ազնուական ընտանութեամբ մը գրելու կերպին մէջ, որ ինքզինքն կը սիրցնէր իբրև մարդ, առանց իր արքայական պատուոյն նուաստութիւն մը բերելու։ Կրնայ վկայել այս պզտի նամակս, զոր պատերազմի մը նախընթաց օրն գրած է Պաց եշխանին, որ իր հաւատարմագոյն հպատակներէն մէկն էր.

« Հնձողք իմ 'ի դաշտս խազմից, տուր թեւապարել քաջագունին 'ի քոյոցդ նժուգից։ Ասացի ցՄոնդեսբան՝ պայթուցանել զլուրն։ Զվասն երն վաղիւ գիտասցես 'ի Ներաք։ Փութա, ընթացիր, եկ և սրացիր. այս հրամանն է տեառն քոյ և աղերս մոերմիդ»։

Անկիւքիչ ժամանակ վերջը՝ երբոր Պաց վերաւորուեցաւ Գուդրասայ կռուոյն մէջ, թագաւորը զինքը մխիթարելու համար ասանկ գրեց.

« Յոյժ ցաւէ ինձ ընդ չապաքինել քոյ տակաւին 'ի վիրացդ առելոց 'ի Գուդրաս, որ արդարև վերս 'ի սիրտ իմ գործէ»։

Ինչպէս խօսակցութեան մէջ, նոյնպէս նաև նամակի մը մէջ պէտք է զգուշանալ իր ըրածներուն վրայ խօսելէ։ Զափաւոր մոքերու գործ է իրենց մեծ բան մը սեպած պզտի անցքերն ախորժով մը պատմելն. մեծ մարդիկ իրենց ամենէն փառաւոր գործերն ալ պարզութեամբ կը պատմեն։ Տիւնի պատերազմին իրիկունն Թիւրէն իր յաղթութիւնն այսպիսի թղթով մը իր կնոջն կը ծանուցանէր.

« Թշնամիք յարձակեալք 'ի վերայ մեր՝ հարեալ խորտակեցան. օրհնեալ է Աստուած։ Զօրն ողջոյն փոքր 'ի շատէ աշխատ եղէ. մաղթելով քեզ զհանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել, երթամ՝ 'ի ննջել»։

Արտաքին գործոց վերաբերեալ նամակաց մէջ պէտք է համառօտ և սեղմ ոճ մը բռնել, ուղղակի գործոյն վրայ խօսելով, առանց յառաջաբանի և անօգուտ ընդ-

լայնմունքներու. ուշ դնելու է իմաստից կանոնաւորութեանը և բացայայտութեան, և մանաւանդ զգուշանալու է հանճարաբանութիւն գործածելէ. գործոց վերաբերեալ նամակի մը մէջ հանճարաբանութիւնն աւելորդ զարդ մըն է, ուսկից պէտք է խորշին, և ուղիղ դատողութիւնն բաւական սեպել:

Ուսոց, որ սովորաբար խորհրդածող և կրակոտ ոճ մը ունի, իր ամբողջ երկասիրութեանց տպագրութեան խնդրոյն համար առ Բէյրու դրած նամակին մէջ գործառնութեանց յատուկ ոճ մը կը բանեցընէ.

« Խօսեցայց առ քեզ զգործոյն իմմէ, որովհետև կամիս հոգ յանձին ունել զշահուց անձին իմոյ... : Յարմարեալ զամենայն հանգամանս գործոյն, և եդեալ թէ լեռվին յաջողեսցէ ինձ ամենայն, համարիմ եթէ բերցէ ինձ այն զանթերի շահ հարիւր հազար փրանկաց: Այլ աստանին իսկ նուազեցուցանել կամեցեալ զգինն՝ վերածցուք զայն 'ի յիսուն: Կարծեմ թէ առանց ինչ անիրաւելոյ կարեմ իշխել պահանջել զքառորդ մասն արծաթոյն. մանաւանդ զի գործդ այդ հարկեցուցանէ զիս ընդ երիս կամ ընդ չորս ամս վաստակել անդադար, որով կար զօրութեան իմոյ սպառեսցի բովանդակ, և առաւել աշխատութիւն լեցի ինձ 'ի պատրաստել և յուղղադրել զթերթն՝ քան որչափ չեղէն ինձ 'ի շարադրել անդ զնոսին:

« Զայս այսպէս ածեալ զմտաւ, և ոչ ինչ հայեցեալ 'ի շահ արծաթոյն, այլ միայն 'ի կարեւոր պէտս իմ, տեսանեմ զի 'ի քսան ամաց հետէ և այսր, այլ և այլ ծախք իմ սովորականք՝ են վաթսուն դահեկանք ոսկւոյ 'ի տարւոջ: Ծախքդ այդ նուազ լինիցին, յորժամ ազատացեալ գլխովին 'ի մարդկանէ՝ ոչ ևս այլ նեղեցայց 'ի վարձուց տանելոյ և բերելոյ նամակաց և յայցելութեանց, որք վասն պատշաճի օրինաց ասպնջականութեան հարկ առնեն ինձ ունել սեղան պատրաստական առ յանկարծահաս եկաւորսն 'ի տուն:

« Զիրքդ հաշուդ արկեալ 'ի համար, դամ 'ի սահմանել զոր ինչ կարեւորն է ինձ յանցուցանել զմնացուածս աւուրց կենաց իմոց խաղաղութեամբ: Յայս խորհուրդ մտաց 'ի բազմաց հետէ հաստատեալ կամ, յորմէ ոչ կասեցայց երբեք, որ զնչ և հասանիցէ 'ի վերայ:

« Համարիմ ունել ինձ 'ի բաժին զգումար արծաթոյ տասն կամ երկոտասան հազար դահեկանաց. և չառնում իսկ յանձն ձեռնամուխ 'ի գործն լինել, եթէ երբեք հարկ լիցի շատանալ նուազագունիւ քան զայն արծաթով. քանզի չորեքամեայ գերութեամբդ այդուիկ՝ զմնացեալ աւուրցս անգորրութիւն միայն գնել փափաքեմ:

« Եթէ արքդ այդոքիկ կարէն հատուցանել առ իս զգումար արծաթոյն, 'ի մոի ունիմ կարգել զայն ինձ 'ի հասոյթ մշանջենական. և զի հոգ յանձն առնուս 'ի կատարումն իրացդ, տացի արծաթն 'ի ձեռս քոյ, որով և վճարեսցի ամենայն: Միայն արժան է զի յապահովութիւն իրացն՝ հատուսցի ամենայնն, չև սկսեալ տպագրութեան վերջնոյ հատորոյն. քանզի իմ չիք ժամանակ սպասեալ մնալոյ վաճառման գրենոյն՝ յապահովել զվիճակ կենաց իմոց:

« Այլ քանզի այդքան գումար պատրաստական արծաթոյ՝ մարթի թերևս յանձնառուսց գործոյն հասուցանել նեղութիւն, հայելով 'ի բազում արծաթն կանխաւ վճարելի՝ որում ունիցին նոքա պէտս, առաւել ընտրեսցեն անշուշտ կարգել ինձ զհասոյթ, որ թերևս շահաւէտ ևս լինիցի նոցա, 'ի պատճառս հասակիս և առողջութեանս վիճակի: Ուստի առաջի արարեալ նոցա երաշխաւորութիւնս, ընդ որս հաճ և հաւան գտանիցիս, յանձն առից յայնժամ զհասոյթն հանապազորդեան. բայց միայն տացեն ինձ զգումար ինչ արծաթոյ պատրաստական՝ 'ի սկսանել անդ տպագրութեանն. և միայն թէ արծաթն այն չլինիցի նուազ քան զքսան դահեկանս ոսկիս, շատացայց նովաւ. 'ի բաց հատեալ 'ի դրամոց գլխոյն՝ զոր ինձ կարգեսցեն 'ի հասոյթ:

« Աւադիկ քեզ այլ և այլ պայմանք, զորոց թողուի առ նոսա զընտրութիւն, եթէ բերան 'ի բերան խօսէի ընդ նոսա. այլ քանզի մարթ է թէ սխալեցիմ և կամ կարի ինն շատ պահանջեցեմ, կամ կայցէ այլ հնար լաւագոյն՝ որ շահաւոր վասն իմ և վասն նոցա իցէ, չկամիմ տալ քեզ ասել պատուէրս, յորս ունիցիս կալ հաստատուն՝ 'ի գործ բանակցութեանն: Փոյթ տարցես վասն իմ՝ իբրև զբարի խնամակալ վասն իւրումն սանու. բայց մի դիցես 'ի վերայ արանցդ պայմանս դաշանց՝ որ նոցա ծանրաբեռն լինիցին »:

Կան նամակներ՝ որոնց մէջ կրնայ մէկը իր ամէն մտածութիւններն դնել, և թող տալ որ սիրտն խօսի բոլորովին. այս տեսակ նամակներն բարեկամաց և սիրելի եղող ազգականաց կը գրուին: Հոն ամէն տեսակ նիւթ և ամէն կերպ զուրցուածք ներելի են. որոնք որ զանոնք պիտի կարդան, ինչ որ ըլլայ ախորժով կ'ընդունին. երեսագիրն որուն ըլլալն ճանչնալուն պէս, առաջուց կը պատրաստուին ամէն բանի հաւնելու: Այն ատեն պէտք չէ վախնալ երկայն գրելէ. սիրելի անձանց թղթերն միշտ կարճ կ'երևան: Բայց մէկալ կողմանէ ընթերցողաց ներողամտութեանը վրայ սաստիկ վստահանալ, և անոնց բարեկամութիւնն չարաչար գործածելն ալ լաւ բան մը չէ: Եթէ իրենք պարտաւորութիւն մը կը համարին զմեզ չպարսաւելն, մենք ալ պէտք է մտածենք անոնց ախորժելի ըլլալ. և որչափ իրենք մեզի ներողամտութիւն կը ցուցընեն, մենք ալ այնչափ աւելի պէտք է խիստ ըլլանք մեզի հետ: Պէտք չէ ամէն մտքերնիս եկածն անխտիր գրենք, այլ ընտրենք մեր իմաստներն, և անանկ լաւ կարդաւ մը զանոնք շարենք, որ աւելի ոյժ մը ունենան, և ամէն առջևնիս եկած բառերն և դարձուածքներն անխտիր չգործածենք: Եւ որովհետև բնականութիւնն և պարզութիւնն նամակի մը անհրաժեշտ կարևոր բաներն են, ոմանք կը կարծեն թէ մեծ սխալմունք մը ըրած կ'ըլլան, եթէ վայրկեան

մը ինչ ըսելիքնին մտածելով փնտռելու ըլլան: Մեր բնական ծուլութիւնն այս սկզբանս դիւրաւ կը հեռուի, և շատերն զայն արդեամբք 'ի գործ կը դնեն: Բայց ասոր հետեւանքն ինչ կ'ըլլայ: Այն կ'ըլլայ որ 'ի բաց առեալ քանի մը անձինք, որոնց բնութիւնն զարմանալի դիւրութիւն և մտաց պատրաստական ու անսխալ ընտրողութիւն մը տուած է, մեծագոյն մասն կցկտուր և ճանձրալի թղթեր կը գրեն, զորոնք և ոչ կ'արժէ որ մարդ կարդալու համար ժամանակ անցընէ:

Մտերմաբար գրուած նամակաց նիւթերն սովորաբար երեք տեսակ են. այսինքն կամ անցած դէպքերն պատմել, կամ խնդրոյ մը վրայ վիճաբանել, և կամ սրտի զգացմունքներն բացատրել: Բան մը պատմելու ժամանակ, փոխանակ խեղ մը կարդ և կարևորութիւն չունեցող դէպքեր խառնելու, պէտք է հետաքրքրութիւն բերող դէպքերն ընտրել, և զայն գոհ ընող ոճով մը զանոնք յառաջ բերել: Այս բանս տիկնին Սեվինեէ զարմանալի արուեստով, կամ մանաւանդ բնական ազդմամբ մը կը գործադրէ: Տեսանք ուրիշ տեղ իր Թիւրենի մահուան վրայ գրած ճարտասանական նամակն. հիմայ լսենք ինչպիսի աշխոյժ զուարճաբանութեամբ արքեպիսկոպոսի մը ճամբայ ընելու ժամանակ պատահած դէպքն կը պատմէ.

« Ահա որ ինչ անցք անցին ընդ արքեպիսկոպոսն, մինչ յերկիր դարձ առնէր շատապաւ 'ի Սենժերմենէ: Գնայր նա ըստ սովորութեանն իբրև զմրրիկ փոթորկացեալ, և դոփեալ դունդմամբ անցանէր ընդ մէջ Նանդերայ: Պատահի առն հեծելոյ, և «'ի բաց կաց, 'ի բաց» կարդայ: Տեղի տալ կամի այրն եղկելի, բայց երիվար իւր ոչ կամի. անդ յայնժամ կառքն և երիվարքն վերցեալքն՝ զայրն հէք հանդերձ երիվարաւն տապալեալ, անցանեն զնովաւ այնպէս սաստկութեամբ, զի կառքն շրջեալ թաւալին: Ի նմին ժամու այրն և երիվար իւր փոխանակ կալոյ մնալոյ անդէն, և ընդ անուօքն ճմլելոյ, սքանչելեօք ելն

'ի վեր յառնեն, հեծանեն և փախչին, և դեռ ևս ընթացեալ երթան, մինչ սպասաւորք և կառավար արքեպիսկոպոսին, այլ և ինքն իսկ արքեպիսկոպոսն ձայն բարձեալ գոչեն. «Կալարուք, կալարուք զանզգամն զայն. տացի նմա հարիւր հարուած գաւազանի». և արքեպիսկոպոսն 'ի պատմել իւրում զայս՝ «Եթէ, ասէր, ըմբռնեալ էր իմ զստահակն զայն, խորտակէի զբազուկս նորա և զականջսն կտրէի»:

Ինչպիսի կրակոտ աշխուժութիւն և երագութիւն. շունչ առնելու ժամանակ չըլլար. անանկ ոՀ մըն է, որ զմարդ կ'ափշեցընէ, մըրկի կամ արքեպիսկոպոսին կառաց նման կը վազէ կ'անցնի: Բայց այս ծիծաղաշարժ և զուարճալի դէպքն լսելէն յետոյ, դարձընենք ուշադրութիւնդիս ասոր հակառակ պատմութեան մը վրայ, և որչափ առջինն զուարճալի էր, ասիկայ ալ այնչափ տխուր է: Սեվինեէ կ'ուզէ ստորագրել մարդկային սրտին զգացած ամենէն մեծագոյն ցաւն, ինչպէս մօր մը իր որդւոյն մահն լսելով ինչ ցաւ զգալը.

«Տիկնին Լոնկվիլ մտրմտքեցուցանէ զսիրա, ըստ որում ասեն: Ես չտեսի զնա. բայց ահա զոր ինչ գիտեմ: Օրլեորդն Վէրդիւշ դարձ արարեալ էր յերկուց աւուրց հետէ 'ի Բոր–Ռուաեալ, ուր գրեթէ կայ միշտ: Գնացին ոմանք գտանել զնա ընդ Ամնոլտայ, առ 'ի տալ տիկնոջն զլուրն սոսկալի: Օրլեորդին Վէրդիւշի շատ էր երևելն միայն. դարձն այն ձեռըշտասյ՝ շատ իսկ ալիտաւոր ի մն գուշակէր: Եւ արդարև իսկ անդէն ընդ երևել նորա. «Ո՛հ օրլեորդ, ողջոյն ինչ եղբօրն իմոյ». զայս ասաց, և չիշխեաց յառաջ ևս զմիտն տանել: «Ողջոյն է, տիկին. և տակաւ ապաքինի 'ի վերայ իւրոց:—Իսկ որդեանն իմ»: Ոչ տուաւ նմա պատասխանի. «Վա՛հ, օրլեորդ. ազէ տուր ինձ պատասխանի, մեռա՞ւ իսկոյն որդեակն իմ, որդեակն իմ սիրեցեալ. չեղի՞ նորա և ոչ վայրկեան մի միայն: Ո՛հ, Աստուած իմ: որպիսի զոհ». և անդէն անկանի զմահ ձօքն: Եւ զգաց նա յանձին զամենայն՝ զոր կարէ ազգել

ցաւ դառնակսկիծ, հանդերձ ստնգալով և թալկանալով և մահագուշակ լռութեամբ և հեղձամղձուկ ձչիւք, և դառն արտասուելով և 'ի վեր յերկինս ձգտելով և սրտառուչ աղիողորմ ողբով աշխարելով»:

Որչափ ալ այս երկու հատուածոց նիւթերն իրարմէ շատ տարբեր են, տարակոյս չկայ որ գիւրաւ կը ճանչցուի մի և նոյն հեղինակի գործ ըլլալն. մի և նոյն կենդանի երևակայութիւնն է միշտ՝ որ թեթև պարագայ մըն ալ զանց չըներ, և զանոնք յառաջ բերելու ամենէն յարմար և ճիշդ բացատրութիւններն կը գտնէ. մի և նոյն պարզութիւնն և ոճոյ աշխուժութիւնն է: Ոչ թէ նամակ մը կը կարդանք, այլ դէպքերն ինքնին աչքերնուս առջևը կ'անցնին, և ականատես կ'ըլլանք, Լոնկվիլ տիկնոջ զգացած ցաւոցն, ինչպէս քիչ մը առաջ արքեպիսկոպոսին պատահած ձախորդ դիպուածին եղանք:

Ճանապարհորդութիւնք ընդարձակ նիւթ կը մատակարարեն նամակագրութեան, բայց շատ մը զգուշանալու անպատեհութիւնք կան: Ճանապարհորդք սովորաբար մեծ բերմունք մը ունին իրենց հանդիպած ոչինչ բաներն իբրև մեծամեծ դէպքեր նկատելու: Ինչ որ կը տեսնեն և ինչ որ կը լսեն, ամէնն ալ հաւատարմութեամբ իրենց օրագրին մէջ կ'անցընեն, և եղբը ձոխաբար իրենց թղթակցութեանցը մէջ կը դնեն: Ամէն բան զուրցելու մոլութենէն՝ զանց չեն ըներ զուրցելու թէ ձին կաղէր՝ կառավարը գինով էր կամ թէ կերակուրը համով չէր: Մեծ բարեբախտութիւն համարելու է՝ թէ որ պատմածնուն կէսը իրենց երևակայութենէն չստեղծեն, և անհամ պարագայներու հետ իրենց քովէն հնարած պատմութիւններ չխառնեն: Պէտք է այս կրկին թերութիւններէն զգուշանալ, և ըլլալ համառօտախօս և մանաւանդ ճշգրտախօս. ախորժելի ըլլալու միակ հնարքն այս է: Եթէ տեղեաց ստորագրութիւն կ'ընենք, պէտք է մեծ խնամքով նկարագրութեան վրայ աշխատինք: Դիւրին չէ գրուածքով տեղւոյ մը ճշգրիտ

գաղափարն տալ, և ամենէն տկար վրձինն անգամ աւելի լաւ կերպով կրնայ բնութիւնն ներկայացընել, քան թէ ամենէն վարժ գրիչն։ Բայց ասով պէտք չէ վհատիլ. համբերութեամբ աշխատելով, կրնանք մեր աշխոյժն վառող տեսարան մը բառերով կենդանագրել։ Առաւօտյեց հետ մեկտեղ՝ անոնց մեր վրայ ըրած տպաւորութիւնն պէտք է նկարագրենք, և բացատրենք թէ ինչ զգացմունք ունեցանք, երբ բարձր լերան մը կատարն հասնելով, տեսանք հեռուէն քաղաքներ, գեղեր, դեռեր, լճեր, և ուրիշ լեռներ՝ որոնք մերինին առջև կը խոնարհէին, և մենք զարմանքով յափշտակուած՝ առջևնիս տարածուած ընդարձակ դաշտաց տէր կը կարծէինք զմեզ։ Պէտք է պատմենք թէ ինչ քաղցր զգացմունք ունեցանք, երբ աւելի սահմանափակ, բայց աւելի սիրուն տեղ մը առջևնիս բացուեցաւ, և ինչ զգացինք երբ ինքզինքնիս խաղաղ հովտի մը մէջ փակուած գտանք, ինչպէս որ մէկն ամբոխալից ընկերութենէ մը ելլելէ ետև, ընտանի կենակցութեան մը քաղցրութիւնն մեծ հաճութեամբ կը վայելէ։

Նամակի մը մէջ հակառաջութիւն ընելու առեն, պէտք է նայինք ամենայն կերպով անկեղծ ոգւով խօսելու. զգուշանալու է ցամաք ոճով խօսակցութենէ, և ջանալու է համոզելու ժամանակ միանգամայն զուարճացընել։ Կրնանք մեր կարծիքն զարդարուն ոճով մը յառաջ բերել, բայց չափով. և այն առեն նոյն իսկ մեր ըսածին չհաւատացողներուն ախորժելի կ'ըլլանք։ Զգուշանալու է մանաւանդ վարդապետող և վճռական կերպէ, մտածելով որ գրածնիս նամակ մըն է. եթէ մեր գրածն կարդացողը մեր կարծիքէն չէ, այդպիսի խլնական կերպ մը կրնայ անոր անձնասիրութեանն դպչիլ. ինքն ալ խիստ ոճով մը կը պատասխանէ, և երթալով վիճաբանութիւնն կռուի փոխուելով, մեր ունեցած բարեկամութիւնն կ'աւրուի։

Երբ զգացման մը մէջ գտնուած ժամանակնիս, և հա-

կառակութեան կամ բարեկամութեան, բարկութեան կամ սիրելութեան ոգւով վառուած առեննիս բան մը կը գրենք, պէտք է միշտ կրքէ զգուշանանք. այս մըն է որ կ'այրէ փոխանակ լուսաւորելու։ Առաջին գրուած նամակի մը վրայ պէտք չէ վստահանալ, և զայն խառրելու փութալ։ Թողլու է որ ձեռքերնիս գրիչ առնելու դրդող կրից բորբոքման վրայ գիշեր մը անցնի. և երկրորդ օրը՝ երբ քնէն և մեր ամէն կարողութեանց խաղաղելէն պատճառած հանգարտութեամբ և պաղարեամբ մեր գրածն կարդալու ըլլանք, կը զարմանանք անշուշտ նամակներնուս մէջ գտնուած խառնակութեան և չափազանցութեան վրայ, և զայն կրակը նետելով, այնպիսի չարեաց առաջքն կ'առնունք՝ որ թերևս անդարման կրնար ըլլալ։ Խօսքերն մարդուս սրտին վրայէն կը սահին կ'երթան, և թերեւ ուշիմ տպաւորութիւն մը միայն կը թողուն. մինչդեռ նամակ մը, մէյմը որ մէջտեղ հանուելու ըլլայ, յաւիտենական արձան մը կ'ըլլայ՝ զոր կրնայ մէկն մեր դիմացը դնել. չենք կրնար մէջէն բան մը փոխել. մեր մտածութիւնն ուրիշին յատուկ ստացուածք մը եղած կ'ըլլայ։ Ուրեմն գրելէն առաջ, և նոյն իսկ գրելէն ետև պէտք է մտածել և զգուշանալ ուրիշի ձեռքը զենք տալէ, զոր կըրնայ մեզի դէմ գործածել։

Մէնդելսոն սիկինն կարծես թէ այս սկզբունքն միշտ աչքին առջևն ունեցած է։ Իր բոլոր թղթոցը մէջ թերևս և ոչ երկու տող կը գտնուի, զոր ուզենար աւրել։ Սէվինեէի չքեղ և ախորժելի կերպը չունի. բայց պատճառաբանութեամբ խօսելու, և յանդիմանութիւն կամ խրատ մը ճարտար կերպով դարձընելուն մէջ կը գերազանցէ։ Գնենք օրինակի համար ինչ նամակ որ գրած է իր քրոջ աղջկանը, որ իր վրայ սաստիկ կը պարծէր։ Կը յորդորէ զինքը պարզութեան և խոնարհամտութեան վարժելու։

« Վասն կարի ինձ առ քեզ սիրոյս չկարեմ լռել զձըշ-

մարտութիւն. զնոյն առնեմ և առ օրիորդն որ ենն 'ի Սէն – Սիր: Եւ զիարդ լցէ ինձ անփոյթ առնել զքէն, յոր իբրև 'ի դուստր իմ հայիմ: Ոչ գիտեմ դո՞ւ լցես որ ազդես 'ի նոսա զբարձրամտութիւնն երևեալ առ նոսա, թէ նոքա տպաւորեն 'ի քեզ զհպարտութիւնն զայն՝ զոր ցուցանես դուք յանձին: Որ զինչ և լցէ, դժոխքքեր եղիցես՝ եթէ չզգէնուս զխոնարհութիւն: Զէ վայել ամենևին իշխանականդ այդ մեծութիւն զոր բերես'ի քեզ:

« Մեծ ինչ ոք համարիցես զքեզ, վասն զի սնանիս 'ի տան, ուր զոր ամենայն գնայ թագաւորն: Ի վաղորդեան աւուր վախճանի նորա, յաջորդ նորին և ամենեքին նոքա որք դգուենն զքեզ, ոչ հայեսցին ինչ 'ի քեզ և ոչ'ի Սէն – Սիր: Եթէ յառաջ քան զամուսնանալդ վախճանեսցի արքայ, հարսնացիս ազատի առն գաւառականի, ունելով ինչս սակաւս և հպարտութիւն բազում: Յորժամ ոչ ևս լցեմ ես, այնչափ մեծարեսցէ զքեզ այրն՝ ընդ որում՝'ի կենդանութեան իմում ամուսնանայցես, որչափ հաճոյասցիս դու նմա. և ոչ այլով իւիք հաճոյ նմին լինիցիս, բայց միայն հեզ քաղցրութեամբ, զոր չունիսդ ամենևին: Ոչ եթէ 'ի նուաստ կարծիս ինչ լցեմ զքէն. բայց տեսանեմ'ի քեզ զանհընարին հպարտութիւն: Գիտես 'ի բերան զաւեստարանն. բայց զինչ շահ այսի, եթէ ոչ ըստ նորա խրատուցն գնայցես:

« Զմոռաւ ած զի միայն բարիք բախտի մօրաքեռ քոյ հայթայթեցին հօր քումդ ալոզողութիւն, և քեզ իսկ հայթայթեսցեն, և ծաղր արա զմեծարանն պատուոյ զոր մատուցանենն առ քեզ: Կամիցիս իմն և զիս իսկ դէլ. մի խաբիր ամենևին. ապաքէն դուզնաքեայ ինչ եմ, իսկ դու գլխովին ոչ ինչ իսկ ես:

« Խօսիմ առ քեզ իբրև առ օրիորդ ոք յառաջացեալ հասակաւ. քանզի է իսկ 'ի քեզ այդր հասակի կարողութիւն. բայց ես մոռգիւր յանձն առնուի թէ նուաղ

ելմն լինէր այն 'ի քեզ, միայն թէ 'ի բաց թողուիր զմեծամտութիւնդ զայդ՝ ծաղրալից առ մարդկան և մեղանչական առ Աստուծոյ: Եթէ 'ի դարձին իմում գտանիցեմ զքեզ ցածուն, քաղցր, երկիւղած և հեզ, առաւել ևս սիրեցից զքեզ: Գիտես իսկ քանի ծանր է ինձ կըշտամբել զքեզ, և քանի՞ քաղցր՝ արկանել'ի սիրտ քոյ զքաղցրութիւն »:

Սելվենեէն և Մէնդընոնէն բերած օրինակներնէս կ'երևայ թէ ինչպէս կանայք նամակագրական ոճոյն մէջ կը գերազանցեն: « Այս սեռը, կ'ըսէ Լապլիյէր, այս տեսակ գրութեան մէջ քան զմեզ աւելի յառաջադէմ է »:

Մէնդընոնի գրիչն կարողէր տնական ամենէն նուաստ պարագայներուն իմնալու, և զանոնք կատարեալ պատշաճութեամբ բացատրելու: Օրինակի համար դնենք ընտանեկան մատակարարութեան վրայ առ Օլինիկ տիկնին գրած նամակն, որ միանգամայն Եօթնեւտասներորդ դարուն ընկերական սովորութեանց և վաճառաց դնոյն վրայ հետաքրքրական տեղեկութիւններ կը պարունակէ.

« Պարտ է քեզ դնել'ի մտի, քոյրդ իմ սիրեցեալ, զի լաւ քան զքեզ ճանաչեմ ես զփարիզ: Սովին մտաք ահա առաջի առնեմ քեզ զհաշիւ ինչ ծախուց, զոր ես 'ի գործ արկանէի, եթէ արտաքոյ արքունեաց գտանէի:

« Էք դուք ոգիք երկոտասան թուով. իշխանն և տիկինն, կանայք երեք, չորս սպասաւորք, երկու կառավարք և ծառայ մի սենեկապան:

Հնգեռտասան լիտր մսոյ,
հնգից փողոց լիտրն. 3 դր. 15 փող.

Երկու բաժինք մսոյ խորովելոյ .	2դ,	10փ
Հաց	1,	10
Գինի	2,	10

Փայտ	2դհ.	10փ.
Պտուղ	1,	10
Մոմ	1,	10
Ճրագ	1,	8
	14դհ.	13փղ.

« Հաշուեմ չորս փողս 'ի ծախս գինւոյ վասն չորեցունց սպասաւորացդ և կառավարացն երկոցունց. զայս տայ իւրոցն տիկինն Մոնդէսքան: Եթէ դոյր ձեր գինի 'ի մառանի, և ոչ երից փողոց լինէին ծախք: Փողս վեց վասն սենեկապանին դնեմ, և քսան վասն ձեր երկոցունց որ ոչ ըմպէքդ զգինի երից իսկ փողոց:

« Դնեմ լեսր մի Ճրագի առ օր, թէպէտև կէսն միայն բաւական լցէ: Տասն փողս վասն մոմեղենի դնեմ. են յայդցանէ՝ որոց վեցք կշռեն լեսր մի, և արժեն տասն փողս և զերիս աւուրս տևեն:

« Երկուս դահեկանս դնեմ վասն փայտի. բայց զերիս ամիս տարւոյն միայն վառէք դուք զայն, և շատ են ձեզ երկու կրակարանք:

« Դահեկան մի և տասն փողս դնեմ 'ի գինս պտղոյ. շաքարոյ գինք՝ մետասան փողք են առ լեսրն, և քառորդ մի լեսր բաւական է 'ի յօրինել զշաքարամիրդ:

« Դնեմ երկուս բաժինս մսոյ խորովելոյ. մարթի խնայութիւն առնել միոյ մասինն, յորժամ իշխանն կամ տիկինն յընթրիս կամ 'ի ճաշ ուրեք երթայցեն 'ի քաղաքին:

« Մոռացայ և զհաւ մի խարշեալ վասն արգանակի:

« Ապաքէն խելամուտ եմք իրաց անարարութեան: Կարես իսկ, առանց ունցանելոյ անդր քան զհնգետասան դահեկանս, ունել 'ի սկիզբն անդ կերակրոց մերթ զերշիկ խոզենի, մերթ զլեզուս խոյի կամ զընդերս որթոց, և մերթ զպարզ զկստ ոչխարի, զբրգաձևան յաւերժականս, և զշաքարամիրգն՝ որ այնքան սիրելին է ախորժակացդ քոց:

« Զայս այսպէս եդեալ, և ըստ որումս ուսանիմս յարքունիս, դուստր իմ սիրեցեալ, ծախք քոյ չպարտին անցանել անդր քան զհարիւր դահեկանս յեօթնեկի, որ առնեն չորս հարիւր դահեկանս յամսեան: Դիցուք հինգ հարիւր, որպէս զի մի լիցի տրտունջ զմնոտեաց, իբր թէ զանց արարեալ զնոքօք, ակիրաւ ինչ գործիցեմ: Հինգ հարիւր դահեկանք յամսեանն՝ առնեն վեց հազար դահեկանս 'ի տարւոջ:

Վասն ծախուց ուտելեաց	6000 դհ.
Վասն զգեստուց.	1000
Վասն վարձուց տան	1000
Վասն ռոճկաց և զգեստուց ծառայից .	1000
Վասն զգեստուց, թատերաց և հանդիսից շքոյ իշխանին	3000
	12000 դհ.

« Այդ ամենայն չիցէ՞ արդեօք չափաւոր. և մնացորդ հասից քոց չկարիցէ՞ բաւել 'ի ծախս ինչ անսովորս, զորս ոչ է մարթ գուշակել կանխաւ, կամ աղատ յայնցանէ լինել, որպիսի ինչ են մեծահաց կոչունք, պահեստ երկուց կառաց, և մանուանց պարտեաց հատուցումն:

« Ողջ լեր, դուստր իմ. սիրելջիր զիս, որպէս ես սիրեմս զքեզ »:

Վոլդեռ, որ արձակի մեջ անանկ բնական և պարզ կը գրէր, նամակագրական ոճոյ լաւագոյն օրինակներէն մէկն կրնայ ըսուիլ: Իր բազմահատոր թղթերէն յառաջ բերենք այս նամակ, զոր գրած է օրիորդի մը՝ որ իրեն խորհուրդ կը հարցնէր թէ ինչ գիրք պէտք է կարդայ.

« Այր ծեր և հիւանդոտ եմ, ովլ օրիորդ. և հարկ իսկ էր գտանել ինձ 'ի կարի իմն գժուարակիր վիճակի, որովհետև չկարացի վաղագոյնս պատասխանել թղթոյդ՝ որով պատուէսդ զիս, և փոխան գեղեցկահիւս տողիցդ՝

արձակ բանս առաքեցի առ քեզ։ Խորհուրդ հարցա-
նես յինէն. կիրթ ախորժակ քոյ լեցի քեզ բաւական։
Պարապով յիտալական բարբառն դեգերեալ, և ես ա-
ճեցուսցես զընդաբոյսն 'ի քեզ զախորժակ ընտիր, զոր
ոչ այլ ոք կարէ քեզ տալ։ Դասսոյ և Արիոսդոյ առա-
ւել քան զիս հարկանիցեն քեզ սպաս. և ընթերցումն
քաջագունիցն մերոց քերդողաց լաւ ևս է քան զամե-
նայն խրատս վարդապետութեանց։ Այլքանզի հարցա-
նելոյ լինձ խորհուրդ համարիս զիս արժանաւոր, յորդոր
լինիմ քեզ ընթեռնուլ միայն զմատեանսն՝ որք 'ի վաղուց
հետէ ախորժելի լեալ իցեն բազմաց, և որոց համբաւն
աներկեան իցէ։ Այսպիսիք սակաւ են թուով բայց ա-
ռաւել օգուտ քաղէ ոք ընթերցեալ զնոսին, քան եթէ
զյոռի մատեանսն դուզնաքեայս՝ յորդեալս զմեօք։ Քաջք
'ի մատենագրաց՝ ունին զհանճար մոտաց զկարևորն՝, ա-
ռանց 'ի խնդիր այնմ անկանելոյ. խորհին ուղիղ, և յըս-
տակութեամբ զմիտսն արտայայտեն։ Թուի իմն զի
այժմ խորհրդաւոր իմն ոճով գրիցեն ամենեքին. չէք
ուրեք պարզութիւն, այլ սեթևեթեալ է ամենայն. յա-
մենայնի խոտորին 'ի ընութենէ, և ձախողակի իմն խոր-
հրդով լաւագոյնս ինչ քան զմեր վարժապետսն առ-
նել մտաբերեն։

« Կալջիր քեզ միայն, օրիորդ, զոր ինչ ախորժականն
է 'ի նոսա։ Թերութիւն իմն է և դուզնաքեայն իսկ սե-
թևեթ։ Զկնի Դասսոյի և Արիոսդեայ՝ յայնժամ խորթա-
ցան Իտալացիք, յորժամ առաւելագունց իմն հանճարոյ
զհետ կրթեցան. 'ի նմին պայմանի և զԳալղիացիս է
տեսանել։ Հայեաց ազէ որպիսի բնիկ պարզութեամբ
տիկին Սեվինեէ և այլք 'ի տիկնայցն գրեն. համեմա-
տեա զայն եղանակ գրութեան ընդ խառնակ ասացուա-
ծոյ մերոցս մանուանց վիպասանութեանց։ Զգիւցաղնա-
յեալսն իմն յաղգի քում յիշատակեմ ասասնօր, զի 'ի
նմանութիւն նոցին թուիս վիճակեալ։ Գոն Տեզուվեէ-
բայ տիկնոջն շարագրածք՝ որոց ոչ ոք 'ի մատենագրաց

աւուրցս կարող է հաւասարել։ Եթէ կամք լցեն քեզ
զի 'ի մէջ և զարս բերիցեմ, տես քանի պարզութեամբ,
քանի յստակութեամբ զմիտսն արտայայտէ միշտ մերս
Ռասին։ Այր այրընթեռնուլ անդ զգիրս նորին, կաբ-
ծէ իմն կարել ասել յարձակ բան՝ զոր ինչ ասաց նա 'ի
չափս տաղից. գիտասջիր զի որ ոչ այդպէս յստակ և
պարզ և վայելուչ ինչ իցէ, ոչ արժէ ինչ ամենևին։

« Պարապմունք մոտաց քոց, ով օրիորդ, ուսուցցեն
քեզ կարի առաւել քան զոր կարիցեմն ասել ինչ զայդ-
ցանէ։ Տեսանիցես՝ զի ընտիրքն 'ի մերոց մատենագրաց,
Ֆենելոն, Պոսիւէ, Ռասին և Տէսբրէյ միշտ զընկեկ բառն
'ի վար արկանէին։ Ընդելանայ ոք 'ի բարբոք խօսել՝
ստէպ վերծանութեամբ քաջացն մատենագրաց, և սո-
վորութիւն իմն լինի պարզութեամբ և աղնուականու-
թեամբ զմտաստն բացայայտել։ Ոչ է աշխատութիւն և
ոչ իսկ գործ դժուարին՝ ընթեռնուլ զոր լաւն ինչ իցէ,
և զայն միայն ընթեռնուլ։ Վարժապետ իւրաքանչիւր՝
հաճոյք իւր են և մոտացն ախորժակ։

« Ներեսջիր, օրիորդ, յերկարաբան խորհրդածու-
թեանցս, միայն հրամանաց քոց հպատակութեանս
գրելով զնոսին »։

Զկայ աւելի անմեղ և պատանեաց պատշաճագոյն
զուարճութիւն մը, և միանգամայն աւելի օգտակար
կրթութիւն մը, ինչպէս մտերմական թղթակցութիւն
մը, յորում պատանիք կրնան խօսել ազատաբար, բայց
առանց անհոգութեան, և յորում անխարդախ և ծած-
կեալ արուեստի մը հետ միատեղ իրենց մտածութեանց
ազատ բացատրութիւնն կը պահեն։ Ախորժելի պա-
րապմունք մըն է, որ զմեզ կ'զբաղեցընէ առանց յոգնե-
ցընելու։ Ո՛րչափ մոքերնուս մէջ չփոթ մնացած մտա-
ծութիւններ՝ բարեկամի մը գրելու ժամանակնիս բա-
ցատրելով կը պարզենք։ Ճանապարհորդութեան մէջ
ինչ որ կուզենք որ չմոռնանք, պէտք է զանոնք մեր նա-
մակներուն մէջ դնենք. տեսարան մը կամ հոյակապ չի-

նուածք մը որ խնամքով ստորագրած ենք, ոչ երբեք մոքերնէս կ'ելլէ։

Նամակի մը մէջ կրնայ ընդլայնմունքներ ըլլալիլ, զոր խօսակցութիւնն չվերցըներ. նոյն իսկ մէկու մը հետ ընտանեբար խօսելու ժամանակ, մոքերնիս այնչափ մոտածութիւնք կուգան, զորոնք չենք գիտեր ինչ ընենք, և երբեմն լուռ կը կենանք, մոքերնուս մէջ կարգ մը գնելու ժամանակ չըլլալով։ Մեր մոտածութեանց համապատասխանող յստակ և ճշդիւոր բացատրութիւնն չենք կրնար միշտ մոքերնուս մէջ պատրաստ ունենալ, և միջոց չենք ունենար զայն փնտռելու։ Շատ անգամ յանդուգն բացատրութիւն մը կրնայ ընտանեկան խօսակցութեան մը պարզութեանը խիստ երևոյթ մը տալ։ Իսկ նամակն գիմացէ գիմաց խօսակցութենէն աւելի գիւրութիւններ ունի. առանց շտապելու ժամանակ կ'ունենանք յատուկ բառն գտնելու, և որ և իցէ զարդարուն կամ անզարդ, պարզ կամ վսեմ բառ կրնանք գնել, միայն թէ բնական ըլլայ։ Ասկից զատ, գրելու ատեն այն վախն չունինք որ ինչ անձի հետ որ կը խօսինք՝ անիկայ ամէն վայրկեան իր պատասխաններուն մեր խօսքն կտրատէ։ Այս տեսակ յանկարծական ընդհատութիւններն մեր մոտածութեանցը կարգը կը խանգարեն, և մեր գտուած կէտէն զմեզ կը հեռացընեն, և երբեմն ինչ որ սկզբան կ'ուզէինք ըսել, անոր գրեթէ հակառակը զուրցել կուտան։ Իսկ նամակի մը մէջ մէկն իր նիւթոյն տեր է. ուզածին պէս կը կարգաւորէ զայն, կ'ընդարձակէ, կը համառօտէ և կը յապաւէ։

Այնոր համար նամակագրութիւնն մեծ զուարճութիւն մըն է այն անձանց համար, որոնք կ'ախորժին իրենց զգացմունքներն և մոտածութիւններն լիովին բացատրելու։ Վեր 'ի վերանց խօսակցութիւնն երկընալով կը յոգնեցընէ առանց շատ բան մը սորվեցընելու. մինչդեռ նամակագրութիւնն մոտց աւելի գոյացական մնունդ մը կը մատակարարէ։ Զգաւել տիկինն կը պատ-

մէ որ երբ Փարիզէն քառասուն մղոն հեռու տեղ մը քաշուած, քանի մը մտերիմ և կիրթ անձանց հետ օրերն կ'անցընէր, բոլորովին նոր տեսակ թղթակցութեամբ մը ձանձրութեան դէմ մեծ հնարք մը գտած էր։ «Կերակրէն ետև, կ'ըսէ, մոտածեցինք որ ամենքնիս ալ կանանչ սեղանատախտակի մը չորս կողմը նստինք, և փոխանակ խօսելու՝ թուղթ գրենք իրարու։ Այս նամակներն երթալ գալով այնչափ զմեզ կը զուարճացընէին, որ անհամբերութեամբ կը սպասէինք ելլալու այն ստոլն քովէն ուր որ խօսակցութեան կը բռնուէինք, որպէս զի երթանք թուղթ գրենք։ Եթէ դիպուածով օտարականներ գալու ըլլային, մեզի անտանելի կ'երևար մեր թղթակցութիւնն ընդհատելը, և մեր պզտի թղթատարութիւնն, զոր այսպէս կը կոչէինք, անընդհատ կը շարունակէր։ Տեղացիք այս նորօրինակ կերպին վրայ քիչ մը կը զարմանային, և անոնց իբրև իմաստակութիւն մը կ'երևար. մինչդեռ այս զուարճութիւնն ուրիշ բան չէր՝ բայց եթէ առանձնութեան միակերպութեանը դէմ հնարք մը։ Օր մը շրջակայներէն ազնուական մը, որ բոլոր կեանքն որսորդութեամբ անցուցեր էր, եկաւ որ իմ տղաքս առնու իր անտառներն տանի. քիչ մը ժամանակ մեր գործունեայ և լուռ ստոլն քովը նստաւ։ Ռէքամիէ տիկինն իր ձեռքովն թուղթ մը գրեց որսորդին, որպէս զի այն խմբին մէջ բոլորովին օտարի մը պէս չերևնայ. անիկայ չուզեց ընդունիլ, պատճառ բերելով որ չկրնար ճրագի լուսով ձեռագիր կարդալ. ասով մեր բարեկամուհւոյն անմեղ մարդահաճութեան պարապը ելլալն մեզի բաւական խնամալ պատճառեց»։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս խօսակցութեան.

Իմաստակութիւն կ'ըլլայ եթէ մէկն ուզենայ խօսակցութեան կատարեալ կանոններ սահմանել. ուղիղ դատողութիւնն և խորհրդածութիւնն առանց մեր իմանալուն զանոնք մեզի կը սորվեցընեն: Բայց որովհետև լաւ խօսիլն միշտ արուեստ մըն է, և նոյն իսկ ամենէն սակաւաթիւ ընկերութեան մը մէջ խօսելու համար՝ իմաստներ և զանոնք բացատրող բառեր պէտք են, հռետորական արուեստն կրնայ նաև յայտմ մասին նպաստել, և աշխարհքի ընկերութեան մէջ մնող համբակայ՝ խօսելու վրայօք, եթէ ոչ հաստատուն կանոններ, այլ գէթ քանի մը խորհուրդներ տալ:

Խօսակցութեան նկատմամբ պատանեաց տալիք առաջին խրատն է՝ լռել գիտնալ: Ընդհանրապէս աւելի նուազ արժէք կը տրուի անոնց խօսածին քան թէ չխօսածին. և եթէ կարենային ըմբռնել ինչ որ կը շահին քիչ խօսելով, շատերն գոնէ անձնասիրութեան համար զգուշաւոր և լուռ կ'ըլլային: Թող տալու է անոնց խօսիլ, որոնք իրենց կենաց կէսն արդէն անցուցած ըլլալով, յաջող և ձախող բախտին փորձն առած են, և ըսելու շատ բան ունին, վասն զի շատ բան տեսած են: Խօսելու աղատութիւնն՝ յառաջացած հասակին առանձնաշնորհութիւն մը, և իր ըրած կենաց կորստեանն իբրև հատուցմունք մըն է:

Եթէ առաջին սկզբունքն է լռել, երկրորդն է մոռիկ ընել, զոր խիստ քիչ մարդիկ 'ի գործ կը դնեն: Նոյն իսկ անոնք որ լռութիւն պահելու կը հարկադրուին,

մոռիկ ընել չեն կրնար: Շատ անգամ այսպիսի անձի մը հետ խօսելու ատենն կը տեսնես որ իր ցրուեալ կերպոնն և անհանդարտ կեցուածքոնն կը ցուցընէ որ խելքը միտքը բոլորովին ուրիշ տեղ է, և կամ մոռիկ ընելու ժամանակ յայտնի կ'երևցընէ որ պատասխան տալ կ'ուզէ, իր ըսելիքին վրայ կը մտածէ, և առաջուց իր ծախելու հանձարոյն վրայ ուրախանալ կը սկսի: Բաւական չէ՝ որչափ ալ համբակաց յանձնուելու ըլլայ, որ այդ անհեգեդութեան մէջ խնալէ զգուշանան: Եթէ գիտնային թէ որչափ սիրելի կ'ըլլայ մէկն, երբ մտադրութեամբ ուրիշներուն խօսածը մոռիկ կ'ընէ, անտարակոյս չէին դանդաղեր այդ թեթև ծանրութիւն յանձն առնելու: 1802ին, այն ատենները որ Ոֆին Էրիսոնէոռիան հրատարակուեր էր, Շատոպրիան առաջին հիւպատոսին ներկայացաւ: Պոնաբարդ՝ կրօնական զգացման վրայօք քանի մը տաք խօսքեր ըսաւ, զորոնք յարգանօք մոռիկ ըրաւ երիտասարդ մատենագիրն: « Անկից քանի մը օր վերջը, կ'ըսէ Շատոպրիան իր Յիշատակարանացը մէջ, պարոն Ֆոնդան և Պաչիոքի տիկինն ինծի իմացուցին որ հիւպատոսն շատ ախորժեր էր իմ խօսակցութենէս. մինչ գեռ ես և ոչ բերանս բացեր էի »:

Երբ բան մը կը խօսինք, պէտք է այնպիսի նիւթոյ մը վրայ ըլլայ՝ որուն լաւ տեղեկութիւն ունենանք: Զգեստեւինք անոնց որոնք մասնաւորապէս այն նիւթերն կ'ընտրեն, որ բոլորովին իրենցմէ դուրս բաներ են: Կը գտնուին մարդիկ՝ որոնք կրնային գիտութեանց և արուեստից վրայ ընտիր բաներ զուրցել, և կ'ելլեն մասնաւոր մտադրութեամբ մը որսոյ և ձիերու վրայ կը խօսին: Կան ուրիշներ ալ, որոնք գրեթէ բոլոր կեանքերնին ձիու վրայ և անտառներու մէջ անցուցած են, և կը յանդգնին վերացեալ խնդրոց մէջ ընկղմիլ, կամ գիտութիւն ծախել կ'ուզեն: Ոմանք ալ կ'ուզեն ամենագէտ երևնալ. և այս պատճառաւ ուրիշները կը ձանձրացընեն, և խոշոր խոշոր սխալներու մէջ կ'իյնան.

վան զի չկրնար ըլլալ որ մէկն իր ճանչցած երկրին մէջ քալէլ ուզենայ և չմոլորի։ Երբ տեղ մը ժողվուած կը գտնուինք, պէտք է խօսինք ինչ բանի վրայ որ լաւ տեղեկութիւն ունինք, և զայն մեր ամէն օրուան զբաղմունքն ըրած ենք։ Հմուտ մարդ մը, ինչ ընկերութեան մէջ որ գտնուի, կրնայ պարզ և կանոնաւոր ոճով մը անոր հաղորդել նորանոր գիւտերն, և գիտութեանց ըրած յառաջադիմութիւնն, որոնց վախճանն է զմարդիկ կրթել և զանոնք երջանկացնել։ Նոյնպէս ալ ատրուեստագէտն, փաստաբանն և բժիշկն կրնան իրենց ըրած անձնական գիտողութեանցը մէջէն քաղել այն բաներն, որոնք ամենուն հետաքրքրութիւնն կը շարժեն։ Այսուչէնք ուզեր ըսել թէ չկրնար մէկն երբեմն երբեմն իրմէ դուրս ճիւղերու մէջ թարթափիլ. բայց փափաքելն է որ մարդ ընդհանրապէս իր գիտցածին և տեսածին վրայ խօսի, առանց գիմայիններն սասթիկ իր վրայ զբաղեցնելու, որ աննեբելի թերութիւն մըն է։

Բաց 'ի այն նիւթերէն՝ որոնց վրայ մէկն իր արուեստին և կենացը վիճակին համեմատ կրնայ իր տեսութիւններն հաղորդելուրիշներու, կան ընդարձակ նիւթեր որոնց վրայ ամենայն ոք կրնայ խորհրդածել. ինչպէս արդարութեան, օրինաց և բարոյականի նիւթերն, որոնց վրայ ընկերութիւնն հաստատեալ է, և զորոնք պէտք է որ քաղաքացիք իրենց սովորական խօսակցութեանցը մէջ անդադար յիշեցնեն. արուեստական գիւտերն, որոնք մեր օրական կենաց պէտքերն և գիւրութիւններն կը հայթայթեն. գեղարուեստներն և մատենագրութիւնն, որ ընկերական կենաց պերճութեան զարդն, և հասարակաց շաղկապն են, ամէն տիճանի մարդիկ իրարու կը մերձեցնեն և անոնց մտացը մաքուր և խաղաղ զուարճութիւններ կը պատրաստեն։ Հասարակաց գործերն ալ բնականապէս ամենուն կարևոր եղող նիւթոց կարգն կրնային մտնել, եթէ մարդիկ խօսելու ժամանակ՝ փոխանակ իրենց շահուց

և կրից հետևելու, իրենց մտացը խղճին և ուղիղ դատողութեան ետևէն երթալու ըլլային։

Մեծ սխալ է կարծելն թէ խօսակցութեան ոյժ տուողն թեթև նիւթերն են. ընդ հակառակն կը ջնատեն զայն. և միայն հաստատուն մտածութիւններն են որ անոր տևական կեանք մը կուտան։ Այս մնունդը մէյմը որ պակսելու ըլլայ, կատր մը ժամանակ իբրև արուեստական հնարքով մը առաջ կ'երթայ. բայց շատ չանցնիր, կ'լմնայ կը մարի. վասն զի նոյն իսկ իր թեթևութիւնն պատճառ կ'ըլլայ անոր տկարանալուն։

Տեսակ մը թեթևութիւն է նաև հեռաւորաց վրայ դէշ խօսիլը. և կ'երևայ թէ ասիկայ շատ առատ նիւթ մըն է խօսակցութեան, որովհետև կան անձինք՝ որ ամենևին չեն դադրիր չարախօսելէ։ Ամենէն անպիտան խօսակցութիւնն ասիկայ է. մարդուս բնաւորութիւնն կը խստացընէ, սիրտը կը ցամքեցընէ, և իր ետևէն չթողուր յիշատակ մը, որ խղճի խայթի և ցաւոց յիշատակ մը չըլլայ։ Պատանիք պէտք է խորշին այդպիսի հնարքէ մը, որ դատարկութենէ, նախանձէ և խօսելու անսանձ բերմանէ առաջ եկած հնարք մըն է. պէտք է մտքերնին դնեն որ չարախօսներն ատելի կ'ըլլան, և վախ կը պատճառեն նոյն իսկ անոնց զորոնք կը ղուարճացընեն. որ և իցէ պարսաւանաց խօսք մը ուղղակի մարդուս երեսին զուրցելու է. վատութիւն է մութ տեղ հարուած տալ անձի մը, որ կարող չէ ինք զինքն պաշտպանել։ Հոս խօսքերնիս ընկերութեանց մէջ եղած թեթև զրոյցներու և չարախօսութիւններու համար է, և ոչ թէ այն ազգոյ և զրաւոր գանգատանաց խօսքերուն համար, որոնք բնականապէս մէկտեղ եկած դասմը մարդկանց մէջ նենգութեան, անիրաւութեան, ստութեան և ամէն բարոյականի հակառակ գործոց վրայօք կ'ըլլան։

Մասնական խօսակցութեանց մէջ ամէն անգամ առջևնիս ընդարձակ ասպարէզ մը չենք ունենար։ Երբեմն

ալ այնպիսի անձի մը հետ խօսելով, որուն հետ պէտք է ակնածութեամբ և յարգանաք վարուինք, կը ստիպուինք ինքզինքնիս աւելի անձուկ սահմանի մը մէջ ամփոփել։ Այն ատեն ընելու լաւագոյն բանն է, ոչ թէ մեր անձին վրայ՝ այլ մեզի հետ խօսողին համար անձնական կարևորութիւն ունեցող բանին վրայ խօսիլ։ Ռասին իր անդրանիկ որդւոյն այս խորհուրդս կուտար. « Մի կարծեր, կ'ըսէր, որ եթէ բոլոր արքունեաց առջև սիրելի եղած եմ, գրած ոտանաւորներուս համար է. Գոռնէյլ իմիններէս հարիւր անգամ աւելի աղուոր ոտանաւորներ կը շինէ, և սակայն երեսը նայող չկայ. միայն իր դերասանաց բերնին մէջ կը սիրեն զինքը. մինչդեռ ես առանց յոգնեցընելու, պատմելով անոնց իմ ըրած աշխատութիւններս, որոնց վրայ չեմ խօսիր ամենևին, բաւական կը սեպեմ անոնց զուարճալի խօսքեր զուրցել, և զուարճացուցիչ բաներով. անոնց միտքն զբաղեցընել։ Իմ ճարտարութիւնս այն չէ որ անոնց իմացընեմ թէ խելք ունիմ, այլ հասկընել թէ իրենք խելք ունին։ Անոր համար, դու որ շատ անգամ իշխանաղն դքսին ինծի հետ ամբողջ ժամեր անցընելը կը տեսնես, կը զարմանայիր՝ եթէ ներկայ գտնուէիր և տեսնէիր որ շատ անգամ քովիս կ'ելլէ առանց իմ չորս խօսք մը զուրցելու. բայց ես կամաց կամաց իրեն խօսելու յօժարութիւնն կը գրգռեմ, և շատ աւելի իր վրայ քան թէ իմ վրաս գոհ եղած գուրս կ'ելլէ »։

Լաֆրիւյէր իր Նկարագիրք ըսուած գրոցը մէջ՝ խօսակցութեան վրայ ընտիր խրատներ կուտայ։ « Այլ և այլ կերպ խօսիլներ կան, կ'ըսէ. կայ լաւ խօսիլ, գիւրաւ խօսիլ, ճիշդ խօսիլ և ըստ պատշաճին խօսիլ։ Անոնց մէջ վերջինին հակառակ ըրած կ'ըլլայ, ով որ իր կերած փառաւոր ճաշի մը վրայ կը ճոխանայ այնպիսի անձանց առջև, որոնք իրենց օրուան հացին խնայողութիւն ընելու վիճակի մէջ են. ով որ հիւանդի մը առջև իր առողջութեանը վրայ մեծ մեծ կը խօսի. ով որ եկամուտ կամ տուն չունեցող մարդու մը հետ իր հարստութեանց, եկամտից և կահ կարասեաց վրայ կը խօսի. վերջապէս՝ ով որ թշուառաց առջև իր երջանկութեան վրայ կը խօսի։ . . . Մարդավարութեան դէմ պակասութիւն է, այն անձանց առջև՝ որոնց երբեմն կամ գործիք մը զարնել կը տրուի, նոյն բանին յարմարութիւն ունեցող ուրիշ անձ մը չափազանց գովելը. ինչպէս նաև իրենց քերդուածն մեզի կարդացող անձանց առջև ուրիշ բանաստեղծի մը գովեստն ընելը »։

Նիւթոց ընտրութեան և խորհելի թերութեանց վրայ խօսելէ յետոյ՝ կը մնայ զուրցել թէ լեզուին ինչ կերպ պէտք է տալ, և ինչպէս պիտի ըլլայ այն ոճն՝ զոր կրնանք ոճ խօսակցութեան անուանել։

Պէտք է նախ ճշգրտախօս ըլլալ, և բառ մը չարտաբերել որ բուն նեբքին համոզմամբ զուրցուած չըլլայ։ Ընկերութիւնը թատր մը չէ, ուր իւրաքանչիւր ոք կարենայ իրեն յարմար երևցած կերպարանք առնուլ։ Պէտք է նաև մենք մեզի հետ համաձայն ըլլանք, և շարունակ հակասութիւններով մեր խօսքերուն յարգը չնուազեցընենք։ Տկարամտութեան նշան է՝ երբ մէկն իր ըսածներուն ամենևին կարևորութիւն մը չտար, և բան մը մէյմը կը պաշտպանէ և մէյմը անոր դէմ կը խօսի, և օրուան մէջ քանի անգամ ինքն իր ըսածը սուտ կը հանէ։ Նոյն իսկ խօսակցութեան մէջ պէտք է մտաց հաստատութիւն մը ցուցընել։ Շատ անգամ անձ մը բերնէն հանած մէկ խօսքէն կը չափուի։

Որչափ որ վախնալու է հակասութենէ, բայց և պէտք չէ միակերպութեան մէջ իյնալ։ Խօսակցութեան մէջ միակերպութիւնն մեծ տգեղութիւն է։ Ընկերութեան մէջ կը գտնուին մարդիկ՝ որ կարծես թէ յարատև տխրութեան մը մէջ են։ Եթէ այդ տխրութիւնն բուն իրենց սրտին մէջը կայ, այն ատեն պէտք է անոնց արգահատիլ և զիրենք մխիթարել. բայց շատ անգամ սովորութիւն մը ըրած են զայն, և իրենց մտածուա-

թեանցը կամաւորապէս այդպիսի կերպարանք մը կու-
տան. այս ալ տեսակ մը պակասութիւն է, ուսկից
պէտք է խորշիլ: Այսոր հակառակ և աւելի սովորական
պակասութիւն մըն է՝ առանց պատճառի զուարճաբա-
նել, ամէն առեն ծիծաղիլ և ամէն բան ծաղրածութեան
և հեգնութեան տանիլ: Այդ շարունակ զուարթու-
թիւնն շատ անգամ հաստատուն մտածութիւն չունե-
նալու և ցամաք սրտի նշան մըն է, կամ դէթ այնպիսի ե-
րևոյթ մը կուտայ: Եւ երբեմն այդ զուարճաբանու-
թիւն ընող անձինքն, որ միակերպ ուրիշներուն ծիծաղը
շարժելով կեանքերնին կ'անցընեն, իրենց նեբքին ա-
ռանձնական վարմանցը մէջ անտանելի ընաւորութիւն
մը կ'ունենան, և այդ զմարդիկ զուարճացընող անցողա-
կան զուարթութեան ետեւն իրենց ընտանիքն կը կրեն:
Զգուշանանք այս երկու ծայրայեղ թերութիւններէն:
Կեանքը՝ ցաւոց և վայելից, աղէկ և գէշ օրերու խառ-
նուրդ մըն է, մենք ալ ըստ այնմ մեր խօսակցութեանը
մէջ փոփոխական ըլլանք. նիւթոյն կամ պարագային
համեմատ զմեզ մէյմը ուրախ, մէյմը ծանր և մէյմը
զուարթ երևցընենք:

Նայինք որ խօսքերնուս մէջ պարզութիւն ըլլայ և
ամենևին արուեստակութիւն չերևնայ: Մեծ մեծ բա-
ռերէ և զուրցուածքներէ խորշինք. ընկերութեան մէջ
մանկ չեն ըլլուիր անոնք՝ որոնք գրքի մը պէս խօսելու
դժբաղդութիւնն ունին, և ինչպէս Լապրիւյէր կ'ըսէ,
անսովոր և ձանձրացուցիչ ոճով մը կը խօսին: Ուղիղ
խօսելու ուշ դնելու առեն՝ նայինք որ սեթևեթեալ
յատակաբանութեան մէջ չեմնանք: Ինչ անկանոնու-
թիւններ որ ընտանեկան լեզուն նոյն իսկ բարձր ոճոյն
մէջ մուցած է, զանոնք չափազանց խստութեամբ
չընդունիլը՝ ճարտասանութեան մէջ պակասութիւն է,
իսկ խօսակցութեան մէջ՝ ծաղրելի է: Այս թերու-
թեանս մէջ անոնք կ'իյնան, որոնք ուզելով ցուցընել
թէ լաւ կը խօսին, յայտնի կ'ընեն թէ չեն գիտեր ինչ

բան է բացատրութեանց պարզութիւնն և բնականու-
թիւնն, որ ուսեալ և կիրթ անձանց խօսակցութեան
յատուկ նշաններէն մէկն են, և լեզուին աղնուական
մտան կը սեպուին, ինչ որ էր առեն մը Աթենքի մէջ
ատտիկեցի լեզուն: Կուինտիլիանոս կը պատմէ թէ ա-
թենացի բանջարավաճառ կին մը Թէոփրաստի համար
դրսեցի օտարական մըն է ըսաւ. և երբ իրեն հարցու-
ցին թէ ինչէն իմացաւ. «Վասն զի, ըսաւ, չափազանց
ընտիր կը խօսի»:

Դարձեալ պէտք չէ եռեռէ ըլլալ բնութեան մեզի
տուածէն աւելի հանճար ունենալու: Չկայ բան մը որ
այնչափ զզուռնի և խղճալ բերէ, որչափ այն մարդիկն՝
որոնք կը ջանան ամէն բանի համար խօսք մը գտնել,
զոր իրենք հանճարեղ խօսք կ'անուանեն: Ամենէն ան-
տարբեր բանն ալ չեն կրնար զուրցել՝ առանց անոր
մանաւոր դարձուածք մը տալու, և անհրաժեշտ պէտք
է որ ոչինչ խօսքի մը մէջ ալ հանճարաբանութիւն մտցը-
նեն: Իրենց խորամանկ նայուածքներէն և շարունակ
խարդախ կերպով մը ժպտելէն կը տեսնուի թէ ինչ-
պէս տագնապի մէջ են որ չըլլայ թէ տկարամիտ երևան
և ինչպէս իրենց անձին մեծութեան երևոյթ մը տալ
կը ջանան: Դիմբաղդաբար այդ ոզորմելիներն իրենց
ձգտանց վարձքն չեն ընդունիր. որովհետև հանճարեղ
խօսքն կանչելով չգար, եռեռէն խնոցներէն կը փախչի.
և անոր տեղը բռնածն չարագոյն է քան զանիմաստաբա-
նութիւն:

Գաղել տիկինն, որ խօսելու մեծ յարմարութիւն
ունէր, կ'ըսէ թէ «Խօսակցութեան մէջ յաջողելու
համար պէտք է ուշադրութեամբ գիտել թէ մեր շրջ-
կողմն եղողներուն վրայ իւրաքանչիւր վայրկեան ինչ
տպաւորութիւն կ'ազդենք, ինչպիսի է անոնց ծածկել
կամ չափազանց յայտնել ուզած զգացմունքն. ինչ աս-
տիճանի է ոմանց ցուցընցած հաճութիւնն և ուրիշնե-
րուն բռնաղբօսեալ ժպիտն: Ունկնդիրը իրենց ճակատն

վրայ կ'երևցընեն չհաւանելու անորոշ նշաններ, որոնց առջևը կրնայ առնուիլ, փութալով զանոնք փարատել քանի որ անձնասիրութիւնն դեռ չէ դրգռուած։ Եթէ հաճութիւն երևցընեն, պէտք է նայիլ որ երթալով աւելնայ, բայց առանց անոնց կամացը դէմ զլրենք առայն բռնադատելու։ Զկայ մրցարան մը՝ ուր մնափառութիւնն այնչափ զանազան կերպարանք առնու, ինչպէս խօսակցութեան մէջ։ Մարդ տեսած եմ՝ որուն վրայ գովասանքն այն աստիճան կ'ազդէր, որ երբ իրեն գովեստ մը կը արուէր, կը սկսէր ըսածներն չափազանցութեան տանիլ, և այն աստիճան կը ջանար իր ձեռք բերած յաջողութիւնն աւելցընելու, որ միշտ զայն կորսընցընելով կը լմնցընէր։ Զէի համարձակեր զինքը գովելու, վախնալով որ չըլլայ թէ իրեն սեթևեթութեան պատճառ ըլլամ, որով իր միամիտ անձնասիրութեամբն ծաղրելի ըլլայ։ Ուրիշ մը այնչափ կը վախնար մեծ ազդեցութիւն ընելու փափաք երևցընելէ, որ անհոգաբար և արհամարհոտ կերպով մը բաւերը բերնէն կը հանէր, և իր այդ կեղծեալ անփութութեամբն ուրիշ դիտաւորութիւն մը ունենալն, այսինքն բնաւ դիտմունք մը չունենալ և ձևացընելն յայտնի կ'ընէր։ Երբ մնափառութիւնն ինքզինքը կը յայտնէ, բարեսէր կերպ մը կ'ունենայ. իսկ երբ ինքզինքը կը ծածկէ, յայտնուելու վախն զինք կը դառնացընէ, անտարբերութիւն և տաղտկութիւն կը ձևացընէ, և ամէն կեղծ հնարք կը դործածէ, որպէս զի ուրիշներուն հաւատացընէ թէ ինքն անոնց պէտք չունի։ Այս զանազան հնարքներն զուարճալի են դիտողի մը համար, և միշտ զարմանք կը պատճառէ մեզի տեսնելը որ անձնասիրութիւնն՝ հաճոյանալու փափաքն բնական կերպով խոստովանելու, և անոր հասնելու համար՝ որչափ որ կարելի է վայելչութեան և ճշմարտութեան հետևելու պարզ ճամբան չբռնեցըներ »։

Լեզուի մէջ ճշդութիւն, բնականութիւն և պարզութիւն պահելը բաւական չէ. պէտք է նաև խօսելու համար իր կարգին սպասել։ Կիկերոն կը պատուիրէ չտիրել խօսակցութեան, և զայն երբեք իրեն սեփական բան մը չսեպել։ « Պէտք չէ, կ'ըսէ, ուրիշներն զրկել, այլ սպասելու է որ ընտանեկան խօսակցութեանց մէջ, ինչպէս ուրիշ ամէն բանի մէջ, իւրաքանչիւր մարդու կարգը դայ, արդարութիւնն ասանկ կը պահանջէ »։ Եւ իրաւացընէ մարդիկ ընկերութեան մէջ կը մտնեն՝ գաղափարնին իրարու հաղորդելու, և ոչ թէ ճարտարախօս մը լսելու համար։ Մէկալ կողմանէ խօսակցութիւնն միայնախօսութեան դարձընելն անիրաւ ըլլալէն զատ, մինակ և երկայն խօսիլը ինքնակարութիւն մ'ալ ունի. ունկնդիրք ընելու ուրիշ բան մը չունենալով, խօսողը չարաչար դատել կը սկսին. ասկից զատ՝ միտքը խիստ շատ խօսելու զբաղելով կը հիւծի, կը տկարանայ և անկարող կ'ըլլայ աւելի բարձր աշխատութեան մը պարապելու։ Դիտուած է որ այն հանճարեղ անձինքն՝ որոնք սաստիկ կերպով իրենք զիրենք խօսակցութեամբ զուարճանալու տուեր են, անհոգութեամբ գրելու սովորութիւնն ստացած են։

Շատ և ստէպ խօսիլը ինքնակար է. առանց պատճառի և առանց օգտի իր գանձը վատնել մն է։ Երբ մէկը խօսակցութեան մը մէջ սաստիկ կը ճոխանայ, դէնուպարապութիւն և յոգնածութիւն կը զգայ. մինչդեռ լռութիւնն ու չափաւորութիւնը միտքը կ'ուժովցընեն և մտածութիւններն կը շատցընեն։ Մոլեռն իր ժամանակին ամենէն հանճարեղ մարդկանց մէջ գտնուած ատենն շատ անգամ լուռ կը կենար. և Ռուսսոյ՝ Պուֆէ ասպետին առջև ինչ ըսելիքը չէր գիտեր։ Երբեմն զօրաւոր մտքեր՝ յարմար խօսք մը, անյաղթելի պատասխան մը կը գտնեն այն միջոցին որ ալ ժամանակը չէ զուրցելու։ Նէքոր, Լուդովիկոս ԺԴի դարուն անուանի մատենագիրներէն մէկը, խօսակցութեան մէջ դժուարութիւն կը կրէր իր միտքը բացատրելու, և ըն-

կերուԹեան մէջ փայլող մարդու մը վրայ խօսելով, « Ամենեկին մէջ ինծի կը յաղԹէ կ'ըսէր. բայց հաղիւԹէ սանդուխին վարի ծայրը կը հասնի, զինքը կը յաղԹահարեմ »։

Ի՞նչ քաղցր է երևակայել այն տեսարանն, որ աչխարհիս վրայ երբեմն իրապէս տեղի կ'ունենայ, այսինքն տեսնել այնպիսի ազատ, հետաքրքրական և աչխոյժ խօսակցուԹիւն ընող անձանց խումբ մը, ուր ամէն մարդ համարձակ և անկեղծ ոգւով կը խօսի, առանց ուրիշ դիտաւորուԹիւն մը ունենալու, բայց եԹէ փափաք մը իրարու այլ և այլ օգտակար մտածուԹիւններ հաղորդելով իրարմով կրԹուելու։ Այս տեսակ ընկերուԹեանց մէջ այլ և այլ վիճակի անձինք կը գտնուին. ինչպէս նչանաւոր արուեստագէտներ և ուսումնականներ. խելքով և անարատ խղճով իրենց պաչտօնն փառաւորող գործակալներ կամ ատենակալներ. իրենց օրինաւոր չափաւորուԹեամբն և անխոնջ աչխատասիրուԹեամբն յարգելի վաճառականներ կամ ձեռագործներու եաւէ եղող անձինք. ընԹացքին լմընցուցած ծերունիներ, որոնք կենաց երբեմն հանդիսատեսք կը սեպուին, և իրենց ծերուԹիւնն ամենէն մեծարուած տեսնելով, տարեաց բեռան ծանրուԹիւնն զուարԹուԹեամբ կը տանին. կը գտնուին նաև լի եռանդեամբ և յուսով ասպարիզին մէջ առաջ նետուող երիտասարդներ։ Հոն ոչ չփոԹուԹիւն կայ և ոչ նախանձայուզուԹիւն. ով որ կ'ուզէ ազատ է խօսելու. և ոչ երբէք խօսակցուԹիւնը կը պաղի, վասն զի հաստատուն և իրական մտածուԹիւններ միշտ վառ կը պահեն զայն։ Իւրաքանչիւր ոք, իր անձին վրայ խօսելու ԹերուԹենէն խորշելով իր մտքէն և ունեցած ծանօԹուԹեանցը մէջէն ամենուն կարևոր եղող բան մը կը գտնէ։ Խօսք կ'ըլլայ նորանոր գիւտերու վրայ, գիտուԹեանց զարգացմանը վրայ, արուեստից յառաջ բերած ձեռագործներու վրայ, մատենագրական աչխատուԹեանց վրայ,

հասարակաց գործոց և այլ և այլ ազգաց սովորուԹեանցը վրայ։ Կարգաւ ամէն նիւԹոց վրայ՝ եԹէ ոչ խորունկ կերպով, բայց գէԹ ճչգուԹեամբ և պարզ կերպով կը խօսուի։ Ամէն անգամ միակերպ մի և նոյն նիւԹոց վրայ չգտնար խօսակցուԹիւն, բիւր պարագայներ խօսքը կ'ընդհատեն և կը փոփոխեն. վասն զի, ինչպէս կ'ըսէ Պաքոն, խօսակցուԹիւնն տուն տանող փողոց մը չէ, այլ բախտովին և զուարճանալով քալելու ճամբայ մը։ Խելացի խօսքի մը հանձարեղ զուրցուածք մը, և հանձարեղ զուրցուածքի մը խելացի խօսք մը կը յաջորդէ։ Մէկը համառօտ և սեղմեալ լեզուով մը իր միտքը կը բացատրէ. ուրիշ մը իր նուազ արտամաբանուԹեանը մէջ աւելի վայելչուԹիւն և բնականուԹիւն մը կ'ունենայ։ Ասիկայ երաց ծանր մասերն յառաջ կը բերէ. անիկայ զուարճալի մասերն։ Ամէնքն ալ կրցածնուն չափ ընդհանուր զուարճուԹեանն գործակից կ'ըլլան, և եղած հակառակուԹենէն իւրաքանչիւր վայրկեան այնպիսի կայծեր կը ցայտեն, որոնք իրենց փայլուն ուրիշներն կը լուսաւորեն։ Կ'ըլլայ որ խաԹունայք այլ մասնակից կ'ըլլան այդ վիճաբանուԹեանց, դատաւորի պաչտօն կատարելով, և այդ տեսակ մը գօտեկռուուԹեան հանդիսին մէջ ճարտասանուԹեան և իմաստուԹեան մրցանակին յաղԹողին տալով. կամ երբեմն իրենք ալ մրցողաց հետ խառնուելով և կարծիքնին բացատրելով, իրենց աչխոյժ և յստակ պատճառաբանուԹեամբն, և խօսուածքի դիւրին և մաքուր ոճովն՝ իրենց բնական խելքն և խնամտութիւն մտքուր ոճովն՝ իրենց բնական խելքն և խնամտութիւն դաստիարակուԹեան մը արդիւնքն կը ցուցընեն։ Այսպէսով նոյն իսկ զուարճուԹիւնն ամենուն կրԹուԹեան պատճառ մը կ'ըլլայ. վասն զի, ինչպէս Ադիսէ տիկինն կ'ըսէ, խօսակցուԹիւնն միայն անոր համար եղած չէ որ մարդ մտածածը մէկէն զուրցէ, առանց աչխատուԹեան գովեստ ընդունի, և ձայնով ձևով նայուածքով և ուրիշ ամէն կերպերով իր խելքն ցուցընէ, այլ նաև

մեաց համար օգտակար կրթութիւն մըն է. և ամէն մարդ դուրս ելլելով իր հեռը փոխանակ անձնասիրութեան յիշատակի մը, օգտակար բան մը ըսած կամ լսած ըլլալուն հաճութիւնն կը տանի:

Երանի թէ այն աշակերտներն որ այս դասերս կը սորվին, արժանաւոր դտնուէին օր մը այդպիսի ընկերութեան մը մէջ փայլելու: Ո՛ւր էր թէ միշտ իրենց խօսքից և դրութեանց մէջ ցուցընէին՝ որ կարող են լաւ խօսելու արուեստին տեսական մասն գործնական կերպով կատարել: Պէտք է որ այս երկու արուեստներն իրարու հետ խառնեն, և զանոնք ոչ թէ պատանեկութեան մը, այլ ամէն հասակի օգտակար գիտութիւն մը ճանչնան, և ոչ երբեք մոռնան Ֆենելոնի հետևեալ խօսքերն, որոնք հռետորական արուեստին ամենայն կանոններէն գերագոյն են, և զանոնք ամէնն իրենց մէջ կը բովանդակեն. « Մտիկ ընելու արժանի մարդն անիկայ է, որ խօսքը միայն մտածութեան համար, և մտածութիւնն միայն ճշմարտութեան և առաքինութեան համար կը գործածէ »:

ՎԵՐՋ

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐՈՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R.A. Публичная Библиотека
7/XI — 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ

Գլուխ Ա. — Սահման և բաժանումն հռետորական արուեստին 1
Գլուխ Բ. — Յաղագս գիւտի 4
Ա. Յաղագս իրաց 6
Բ. Յաղագս կրից 36
Գ. Յաղագս պատճառաբանութեան. . . . 43
Գլուխ Գ. — Յաղագս դասաւորութեան. . . 60
Ա. Յաղագս ճարտասանական դասաւորութեան 62
Բ. Յաղագս կանոնաց դասաւորութեան պատկանելոց ամենայն ազգի նիւթոց. . . 88
Գլուխ Դ. — Յաղագս ճոխաբանութեան. . . 91
Ա. Յաղագս իմաստից 94
ա. Յաղագս առանձինն իմաստից 94
Յաղագս յստակութեան իմաստից . . . 95
Յաղագս ճշգրտութեան իմաստից . . . 96
Բ. Յաղագս ընդ իրեարս յարաբերութեանց իմաստից 98
Յաղագս ընդ միմեանս համաձայնութեան իմաստից 98
Յաղագս անցման. 100

Յաղագս աստիճանաց խմաստից . . . 103
գ. Յաղագս ձևոց խմաստից 105
Նկարագրական ձևք 105
Կիրք շարժող ձևք 124
Կեղծիք ճարտասանականք 132
Բ. Յաղագս բառից 157
ա. Յաղագս ընդհանուր յատկութեանց խօսից 157
Յաղագս բացայայտութեան 157
Յաղագս ուղղախօսութեան 158
Յաղագս համառօտութեան 160
Յաղագս ներգաշնակութեան 160
բ. Յաղագս ընդ իրեարս յարակցութեան խօսից 165
Յաղագս շարակարգութեան խօսից . . 166
Յաղագս պարբերութեան 167
գ. Յաղագս ձևոց բառից 173
Յաղագս փոխակերպութեանց 186
Դ. Յաղագս զանազան տեսակաց ոճոյ . . . 202
Յաղագս պարզ, բնական և ընտանեկան ոճոյ 203
Յաղագս զարդարուն ոճոյ 208
Յաղագս նուրբ կամ փափուկ ոճոյ . . . 211
Յաղագս համառօտ և պարբերական ոճոյ . 214
Յաղագս ազդողական ոճոյ 217
Յաղագս վսեմին 219
Յաղագս ոճոյ պատկանելոյ զանազան տեսակաց շարադրութեան 226
Յաղագս բանաստեղծական ոճոյ . . . 227
Յաղագս ճարտասանական ոճոյ 229
Յաղագս պատմական ոճոյ 231
Յաղագս փիլիսոփայական կամ ուսումնական ոճոյ 237
Յաղագս սեփհականութեան ոճոյ . . . 241

Գլուխ Ե. — Յաղագս արտասանութեան . . . 243
ա. Յաղագս յիշողութեան 244
բ. Յաղագս առոգանութեան 248
գ. Յաղագս շարժուածոց մարմնոյ . . . 250

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՂԱԴՍ ԿՐԹՈՒԹԵԱՆՑ ՀՈՒՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ

Գլուխ Ա. — Ինչ կերպով համբակաց միտքն կըրնայ շարադրութեան պատրաստուիլ . 255
Գլուխ Բ. — Յաղագս զանազան տեսակ կրթութեանց 262
Ա. Յաղագս պատմութեան 263
Յաղագս յատկութեանց ընտիր պատմութեան 264
Յաղագս զանազան ազգ պատմութեանց . 266
ա. Ճարտասանական պատմութիւն. — Ճառ կատամարան Ռոքքուայ 266
բ. Վիպասանական պատմութիւն. — Մահ սրբոյն Պրեսբիտերոսատայ 271
գ. Ընտանեկան պատմութիւն. — Ժանոյ և Գոլէն 282
Բ. Յաղագս բանախօսութեան կամ ընդլայնելի մտածութեանց 291
Յաղագս յատկութեանց ընտիր բանախօսութեան 292
Յաղագս զանազան ազգ բանախօսութեանց 294
ա. Կրօնական բանախօսութիւն. — Զգացումն աստուածութեան 294
բ. Բարոյական բանախօսութիւն. — Սէր

Հայրենեաց 297
գ. Ուսումնական բանախօսութիւն. — Անմունք երկրի 302
դ. Մատենագրական բանախօսութիւն. — Յաղագս մատենագրական հետևողութեան յեօթնեւտասներորդ դարու . . 305
Գ. Յաղագս ճառի 309
Յաղագս յատկութեանց ընտիր ճառի . . 310
Յաղագս զանազան աղդ ճառից. . . . 312
ա. Ճառ բաղխոհական հանդիսի. — Միրապոյ առ Ժողովն սահմանադրական . . 313
բ. Ճառ ատենական հանդիսի. — Ջատագովութիւն Ֆուքէի 'ի Բելլսոնէ . . . 319
գ. Ճառ կացրդական հանդիսի.—Պիւֆոն առ կաճառորդս գաղղիական ճեմարանին . 327

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ

ԳԼՈՒԽ Ա. — Հռետորական արուեստն ինչ զանազան պէտքերու կրնայ ծառայել. . . 337
ԳԼՈՒԽ Բ. — Յաղագս հրապարակական ճառի . 340
ԳԼՈՒԽ Գ. — Յաղագս նամակագրական ոճոյ. . 346
ԳԼՈՒԽ Դ. — Յաղագս խօսակցութեան . . . 366

490

2013